



**ԷԴԻՑ  
ՊՐԻՆՏ**  
Իրատարակչություն

**HRANT ALEXANYAN**

**RESERVE ARMY  
OF THE CATHEDRAL**

**novel**

**ГРАНТ АЛЕКСАНИЯ**

**РЕЗЕРВНАЯ АРМИЯ СОБОРА**

**роман**

**Yerevan 2022**

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**ՏԱՃԱՐԻ  
ՊԼԱՆՈՒՑ ԶՈՐՔԸ**

Վեպ

Երևան 2022

ՀՏԴ 821.19-31 Ալեքսանյան  
ԳՄԴ 84(5Հ)-44  
Ա 296

**Ա 296**      **Ալեքսանյան Հրանտ**  
Տաճարի պահուց գորքը: Վեպ / Հ. Ալեքսանյան.- Եր.: Էդիթ  
Պրինտ, 2022.- 392 էջ:

Վեպի հերոսները պատերազմից շանթահար եղած երկրի մարդիկ են, ովքեր համառ ճիգերով ջանում են հաղթահարել զինադադարի բերած փորձությունը: Հեղինակը քննում ու պատկերում է նրանց՝ ետպատերազմյան առաջին քառասուն օրերի վարքը, ի ցույց հանում այն տառապանքը, որ ուղղված է մարդկայնությանն ու աստվածատուր տեսակին:

ISBN 978-9939-75-865-7

© Հրանտ Ալեքսանյան, 2022 թ.

# ՆԱԽԱԲԱՆ

Եվ որքան էլ փորձես օտարոտի աչքով նայել՝ հանգելու ես գանգուր ճաճանչներով նույն մտքին – չէ՛, գրողը տանի, մեր երկիրն ուրիշ է՝ անզուգական ու անփոխարինելի, նմանը չես գտնի արար աշխարհում, տիեզերքում՝ նույնպես: Եվ գիտե՛ս՝ ինչու. որովհետեւ այն քո՛ երկիրն է, քո՛ հայրենիքը՝ ծնողի պես անկրկնելի ու հարազատ, որի հետ անխզելիորեն կապված ես արյամբ, հոգով ու ճակատագրով: Եվ եթե նրա մատն անգամ փուշ է մտնում, կամ փոքրիկ մրսածություն է համակում նրան՝ անհանգստանում ու դողում ես, դռնեդուռ ընկնում, թե ինչ անես, որ ծնող-հարազատիդ կյանք ցավը շուտափույթ անցնի... Եվ միթե նման դեպքերում այդպես չի սրտմտում ֆրանսիացին իր հողի վրա կանգնած, ռուսը՝ իր, չինացին՝ իր, արաբն՝ իր, բարբադոսցին՝ իր...

Պատկերացրեք, թե ինչ է կատարվում մեզ հետ, երբ հանկարծ, լուսավառ ու գեղեցիկ մի օր շանթ ու որոտի տակ է ընկնում մեր միակը՝ անկրկնելին ու անփոխարինելին, մեր ծնող-հայրենիքը, երբ թվում էր, թե նրան այնպիսի սիրով ու հավատարմությամբ ենք պարուրել, որ ոչ մի չար ուժ չի կարող ահասարսուռ վտանգի մատնել... չէ՛, գրողը տանի, մենք դաժանորեն սխալվել ենք, մենք չենք կանխազգացել ու կանխատեսել – անողորմ չարիքն ընդունակ է այնպես անսպասելի ու հուժկու հարվածել մեզ, որ ուշքի գալու համար, ժամանակից ու ֆիզիկական տոկունությունից բացի, պահանջվի նաեւ նորոգված հավատ ու ոգի՝ առ մեր ինքնությունը, երկիրն ու պատմությունը: Առ մեր միասնական գալիքը: Եվ անակնկալ տեսնելու ենք, որ աղետն այդքան զարհուրելի եղավ, քանզի հարվածը ոչ միայն դրսից էր, այլև՝ ներսից...

Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի եւ Թուրքիայի համատեղ սանձազերծած երրորդ պատերազմը սկսվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան, շարունակվել քա-

ռասունչորս օր եւ վերջակետովել հայության համար կապիտուլյացիոն խայտառակ պայմանագրի ստորագրմամբ: Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորման ձգտող Արցախը կրկին մեկուսացվել է, այս անգամ՝ ռուսական խաղաղապահության ներքո: Արյունալի պատերազմում հայկական կողմը կորցրել է շուրջ հինգ հազար մարդ՝ զինվորական ու քաղաքացիական անձինք, անվտանգության գոտու հետ մեկտեղ՝ Արցախը կորցրել է նաեւ հայրենի Շուշիի եւ Հադրութի շրջանները: Հայկական երկու հանրապետությունների ցավագին պարտության հետեանքները դավադիր մշուշի պես պատել են ամբողջ հայոց աշխարհը: Պատերազմում պարտվելը ծանր է ընդհանրապես, կրկնակի ծանր է, երբ պարտվում ես Ազատության ու Անկախության, համազգային միասնության համար պայքարում, որ սրբազան լինելով՝ մեկեն հայտնվում է սառչումի եւ ճաքեր տալու սպառնալիքի տակ: Ինչպէս կարող է ապրող սերունդը հաղթահարել այդ մեծ աղետը, ինչպէս է փորձում վերգտնել իր մարդկային ու ազգային կերպն ու հավատամքը. այդ մասին է վեպը:

Կյանքն իր պրկման ու խտացման ուժով ծնում է հերոսներ ու հակահերոսներ, նրանց հարաբերակցությունից է կախված, թե որ կողմ կթեքվի կենաց ծառը, ինչ պտուղներ կտա: Վեպում հեղինակը կենտրոնացել է գերազանցապես մաքառող հերոսների՝ պայծառ ներաշխարհով օժտված անհատների վրա, իսկ հակահերոսներին անդրադառնում է թռուցիկ՝ ակնարկելով, որ նրանց սառը շունչը կորչելու է ինքնին: Ներկայացված բոլոր կերպարները մտացածին են, որոնք, սակայն, գործում են իրական միջավայրում եւ իրական համապատկերի վրա: Նրանք, այսպես կոչված, հավաքական կերպարներ են, որոնք վիպական հյուսվածքում գունավորվել են տարբեր նախատիպերի ուրվագծերից: Ընթերցողները կարող են իրենց նույնացնել հերոսներից ոմանց հետ՝ նկարագրվող խառնվածքների ինչ-որ հատկանիշներով, կենսագրական ինչ-ինչ փաստերով կամ բարոյական վարքագծի յուրահատկությամբ: Շատ իրական

մարդիկ են ներկա գրքում, բայց՝ գեղարվեստական պատկերավորմամբ: Նրանք հայկական նոր ժամանակաշրջանի բարեխիղճ պահնորդներն են, ճարտարապետներն ու շինարարները, նրանք առավելս գործում են երկրորդ պլանից՝ անհավակնոտ շարքային մարդու վեհությամբ, անաղմուկ ու ինքնանվեր. այդ մասին է վեպը:

Գրադատները, հավանաբար, մատուցվող երկը բնորոշեն որպես ազգային-գաղափարական, եւ չեն սխալվի. վեպի հերոսներն առավելապես ապրում, գործում, խոսում եւ խոհածում են հենց այդ ծիրում, բայց եւ ունեն իրենց ուրույն կյանքը, տառապանքը, որն ինչքան էլ անձնական է, դարձյալ եռեփվում է ընդհանուր ողբերգության ու դիմակայության ներքո: Վեպը հոգեբանական է նաեւ: Հերոսները եկեղեցական սպասավորներ ու մտավորականներ են, զինվորականներ ու հասարակ մարդիկ, որոնք բախտորոշ իրավիճակում իրար կողքի են հայտնվում եւ ձեռք մեկնում միմյանց, մեկտեղ՝ սատարում այլոց, այդպես իրենց եւ ուրիշների համար կանխագծում, որ վերածնությունը հնարավոր է, նախեստառաջ, մարդկայնության ու հոգետր-ոգեղեն միացյալ ջանքով: Նրանք հայրենի երկրի զտարյուն զավակներն են, բայց եւ զավակներն են աշխարհի, որի հետ հակադրություններ չեն փնտրում, այլ՝ ներդաշնակության շավիղներ: Նրանք հասկացել են, որ տեսակի պահպանումն ու արժանապատվությունը հնացած գոյականներ չեն, այլ՝ ամուր կռվաններ՝ աշխարհում քո դեմքով ու հոգով հարատեւելու համար,– ուստի ասպետաբար տեր են կանգնում հայրենական դավանանքին ու նկարագրին՝ ատելություն չտածելով այլոց հանդեպ: Նրանք հենց այն անպաշտոն նվիրակներն են, որ ունակ են կանխելու նոր աճյունների սփռումը, երկրի հանդեպ թշնամական հարձակումները, զորացնում են ազգային ներուժը եւ սրբագործում ներքին դաշտը: Այդ մասին է վեպը:

Ինչպիսի մարդիկ՝ նույնպիսի երկիր. այն չի կարող էապես տարբերվել իր տերերի տեսակից ու խառնվածքից: Երկրի մարդիկ կարող են մի պահ խաբվել ու ընկճվել, հիպնոսվել ու մեկուսանալ,

բայց մշտապես, երբեմն՝ ուշացումով, սթափվում եւ առույգանում են այն ավանդական ուժ ու ավյունով, որ նրանց կենսունակ է պահում սեփական հողի վրա ու արեւի տակ,– եւ հայրերի երկիրը նրանք վերստին միավորում ու լուսավորում են ըստ պատկերի յուրանց:

Մեղք է՝ չգրել այս վեպը, քանզի զմրուխտի պես փայլկտող փոքրիկ հայրենիքը անսպասելիորեն կարող եւ կորցնել՝ ուշքո՞ւ ակամա սեւեռելով մոտից ու հեռվից նենգորեն քեզ մատուցվող հրապուրանքների վրա. նաեւ գրո՞վ է հնարավոր անբաժան պահել ամենապանծալին: Եվ մշտապես առկա է մյուս խթանիչը. իսկապէս, մեր երկիրն ուրիշ է՝ անզուգական ու անփոխարինելի, նրա նմանը չես գտնի արար աշխարհում, նույնպես՝ տիեզերքում: Ինչպէս կարելի է չսիրել ու չփայփայել նման երկիրը, թեկուզեւ այդ սերն ընդամենը գա ու կոհակվի քո տարաբախտ ընտրյալի հանդեպ տաճած շողշողուն զգացմունքի մեջ: Սիրո մասին է վեպը:

Հ.Ա.

28 հունվարի, 2022թ.



# Գլուխ 1

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԶՈՆԵՐԻ ՊԵՍ

*Երանի թե իմ վիշտը լավ կշռվեր,  
ու ինձ հասած աղետն ամբողջով՛ջամբ  
կշեռքի վրա դրվեր:*

*Հորի գիրքը. 6*

...Եվ եղավ մի պահ, երբ ահագնացած դրոշյունը հասել էր այնպիսի ահռելի բարձրակետի, որ թվում էր՝ ահա ուր որ է կթնդա մի նոր ու ահեղ պայթյուն եւ իր սեւ ու անպարփակ հզորությամբ՝ տեսանելի ու աներեւոյթ, նկարագրելի ու անզգայելի ամենայն ինչ կխորտակի վիթխարի ու անհատակ վիհի մեջ: Գուցե հենց այդ պահից ու այդ կերպ պիտի սկիզբ առներ ունայնության հաջորդ դարաշրջանը, որի մասին իրենց ապաստարանում երկար ու անքուն խոսում էին քահանան ու նկարիչը: Բայց չսոված ու հիմնացունց պայթյունը չթնդաց, այլ՝ հանկարծակի իջավ ծանր ու սարսռալի լուռություն՝ մեկեն քարացնելով կյանքն ու ժամանակը. այդ մասին որեւէ հստակ դատողության ունակ չէին ապաստարանում պատսպարվածները, քանզի պատերազմական իրականությունը լոկ մտքի խեղումներով է գծագրվում՝ առնվազն այն պահերին, երբ ներկան լի է մահերով, ավերածությամբ, ծխով ու նախահարձակ շառաչով: Նրանք ընդամենը սպասում էին, որ կարճ դադարից հետո կվերսկսվի քաղաքի հրետակոծությունը, բայց անցավ տասը րոպե, իսկ սովորական դարձած որոտի ձայներն ասես միտք չունեին կրկնվելու:

Ի վերջո, կարմրաներկ աթոռից ելավ Տեր Միսաք քահանան, խաչակնքեց ու հայացքը դանդաղ սահեցրեց ներկաների վրայով, ապա պատգամաբերի զուսպ տոնով հայտարարեց.

– Զինադադար է, կարող եք հանգիստ շունչ քաշել:

Պատասպարվածների դեմքերից լարվածությունը չքացավ: Թեպետ նախորդ քառասունչորս օրերին հրադադարներ տեսել էին, սակայն այս մեկի ազդեցությունը կարծես այլ ուժ ու կարելորդություն ուներ. դա զգում էին ներքուստ, առանց ստույգ նշանների: Մարդիկ գուցե հոգնել էին եւ ամենափոքր հրադադարն անգամ նրանց համար դառնում էր գերնշանակալից: Բայց անխոտոր կասկածամիտ պարոն Սերոբը, որ նախկին ֆինտեսուչ է՝ հարկահավաք եւ շատ բծախնդիր արարած, արծագանքեց իր անփոփոխ հեզնանքով.

– Հա, մի երկու ժամ կլռեն, հետո նորից կշարունակեն դժոխքի թատրոնը: Հերթական կարճ խաբեությունն է:

– Չէ՛, ասում եմ ձեզ՝ զինադադար է, եւ այն երկար կտեւի... օրեր, ամիսներ, տարիներ,– հաստատական ասաց Տեր Միսաք քահանան:– Վաղվա մասին մտածելու ժամանակը եկել է:

– Հւմ... իսկապէս...– լսվեցին մի քանի անհավատ ձայներ:

– Դե, լավ էլի, Տեր Միսաք, որտեղի՞ց ձեզ էդ տեղեկությունը... Էնպես էլ անհերքելի ձեւով հայտարարում եք... Աստված է զանգել ու ասել...– չարախնդալու պես հարցրեց Սերոբն ու աչքերը պլշեց քահանայի վրա:

Տեր Միսաքը մարգարե ձեւանալու կարիք չուներ, շիտակ հոգեւորական լինելով՝ ջանում էր բավականին երկրային լինել իր ծառայության ու անձնական կենսակերպի մեջ: Դպրոցահասակ չորս երեխաների հայր է, հուսալի ու վստահելի մարդու համբավ ունի եւ իրեն երբեւէ թոյլ չէր տվել հավատացյալների եւ այլոց աչքին երեւալ Աստծո ողորմածի ու անօգնական գառան պես, տղամարդու կորովով հոգսի տակ էր մտնում եւ անմռունչ տանում ճակատագրի բեռը: Նա շփվող-հաղորդակցվող է, բազմաթիվ ծանոթ-ընկերներ ունի ամենատարբեր ասպարեզներում. սպասվող զինադադարի

Եւ բերդաքաղաքի ենթադրվող անկման մասին էլ նրան շշուկով հայտնել էր հին ծանոթներից մեկը՝ անվանի, բայց արդեն պաշտոնաթող գեներալ Սարո Օնանյանը, ով ուշացումով ներգրավվել էր պաշարված բերդաքաղաքի պաշտպանությանը, երբ այլեւս իրավիճակը շտկել անհնար էր:

Նախկին հարկահավաքի ու քահանայի բանավեճը սովորական էր դարձել անցած օրերին, ներկաների համար դա բավականաչափ զվարճալի էր, այնքան, որ առանձնապես չէին միջամտում, երբ Սերոբը երբեմն անցնում էր պատշաճության սահմանները եւ քահանային ուղղակի ծաղրում՝ մեղադրելով ոչ թե աստվածապաշտության, այլ՝ սնահավատության ու սնափառության մեջ: Իհարկե, քահանան հաջողությամբ պաշտպանվում էր՝ մեջբերելով սուրբգրային ասոյթներ, բայց հաճախ նեղսրտում էր եւ ներքուստ վիրավորվում, երբ ընդդիմախօսը նրանից պահանջում էր ապացույցներ Աստծո գոյության մասին: Այդ պահերին վեճին խառնվում էին նկարիչ Մովսես Մելիքյանը եւ պատմության նախկին ուսուցիչ Սիմոն Վարազյանը: Նրանք թոշակառու ֆինտեսուչին բարեկրթության ու զսպվածության կոչեր էին անում եւ ազդարարում, որ նա իր անհավատությամբ մնացել է նախկին կոմունիստն ու խառնակիչը: Այդ խոսքերը վիրավորական էր համարում պարոն, ավելի ճիշտ՝ ընկեր Սերոբը, բայց տեսնելով բանավիճող ուժերի հարաբերակցությունը ոչ իր օգտին, հաշտվողաբար գոչում էր.

– Դե, լավ, լավ, ոչ մեկիդ ինկվիզիցիայի չենք տանում, ասում-խոսում ենք էլի, որ էս զարհուրելի մղձավանջը հաղթահարենք:

Այդու վիճողներն ու ունկնդիրները հասկանում էին, որ բանավեճը վերջացած է եւ հարկ է անցնել ավելի հանգիստ թեմաների: Բայց այս անգամ նախկին հարկահավաքի հարցը խիստ զայրացրեց քահանային, եւ նա ջղային պոռթկաց՝ ջրի երես հանելով իր մեջ կուտակված ամբողջ վիրավորանքը:

– Հա՛, Աստված է հայտնել, դա քո ինչ հասկանալու բանն է, անաստված: Կարող է՝ զանգով է ասել կամ էլ ականջիս է շշնջա-

ցել... Էդքանը չես կարող ընկալել քո հիվանդագին կասկածամտությամբ... Դե, հերիք է հոգուս հետ խաղաս, հար-կա-հա-վաք:- Վերջին բառը Տեր Միսաքն այնպես բարձրաձայնեց վանկատելով՝ քամահրական ու խայթող ուժականությամբ, որ բոլորն ապշեցին նման կտրուկ ընդվզումից, մի ցասկոտություն, որն ընդհանրապես տեղ չպիտի գտներ նրա բնույթի մեջ: Մեղմասացությամբ փայլող քահանան հանկարծակի դարձել էր անզիջում, մարտնչող մի մահկանացու, ով այլևս չէր կարող ընդունել ոչ մի ծուռ հայացք ու խոսք՝ ուղղված իր տեսակին ու կոչմանը:

Ներկաները մի պահ կարկամեցին, քահանայից նման կոշտություն չէին սպասում, բայց եւ համոզված էին, որ արդար ու տեղին է վարվում. անցած քառասունչորս օրերին նա հաճախ էր կուլ տվել ֆինտեսուչի ակնհայտ թե քողարկված խայթոցները՝ համարելով, որ այդ ամենը նրա հոգեւոր տհասության մրուրն է: Տեր Միսաքը, սակայն, այնքան էլ համոզված չէր, որ իր խստաշունչ խոսելակերպը կարող է լավագույնս ներգործել պարոն (ընկեր) Սերոբի վրա, որ նա կճնշվի ու կխոնարհանա, ուստի սեւեռուն ու անհամբեր նայում էր ընդդիմախոսին՝ սպասելով, որ նա ուր որ է կհոխորտա ու հակահարձակման կանցնի: Բայց հին ու փորձառու հարկահավաքը, երկնչելով ու տեղի տալով, թե՛ վերջնականապես ըմբռնելով, որ քահանայի հետ չպետք է վիճել աթեիստաբար ու բռի տրամաբանությամբ, տեղի տվեց ընկրկելու պես, հնչյուն իսկ չարձակելով, եւ մեղավորաբար գլուխը կախեց: Նա թույլ ու խոցված զգաց իրեն, բայց եւ ըմբռնեց, որ երբ քեզ տեղին հարվածում է յուրային մարդը, նրա դեմ ըմբոստանալու կարիք չկա, դու պետք է վիրավորված ինքնասիրությունդ պաշտպանես միայն լռությամբ, համաձայնությամբ ու մեղքի պարզ գիտակցումով:

Հետո նկարիչ Մովսեսը կասի, որ այդ պահն ինքն առավել վճռորոշ ու բեկումնային էր համարում, քան վերահաս զինադարը, քանզի մարդկանց վերափոխությունն է հենց վճռում, թե ինչպես կգարգանան հետագա իրադարձությունները: Իսկ մանկա-

վարժ Սիմոն Վարազյանը, մտաբերելով քահանայի ու ֆինտեսուչի բախումը, կշեշտի, որ մարդիկ արագ են հասունանում պատերազմի օրերին, եթե անգամ գտնվում են ապահով ապաստարանում. քահանան նաեւ մարտիկի էր վերաձվել, իսկ անսասան թվացող հավատամերժ հարկահավաքն աննկատ դարձել էր քրիստոնյա՝ դեռեւս չմկրտված ու չճանաչված: Բայց դրանք ապագայում արձանագրվելիք մեկնություններ են, հիմա բոլորը կանգնել են շվարած, ասես կորցրել են իրենց կողմնորոշումը. լարված իրավիճակը ճշմարիտ լիցքաթափողի կարիք ուներ:

Նկարիչ Մովսեսը նկատեց, թե ինչպես են բռունցքվել Տեր Միսաքի ձեռքերը, դա շատերը տեսան, եւ այդ պահին ոմանք ցանկանում էին արագորեն հաշտեցնել մինչ այդ անհաշտ թվացող զույգին, քանի դեռ «կարմիր գծերը» երկուստեք չեն տրորել: Ուսուցիչ Սիմոնը արագ մոտեցավ եւ քահանայի ականջին կամացուկ ասաց.

– Տեր Հայր, զսպիր քեզ, կանցնի:

Գրեթե շուկով ասված խոսքը լսելի եղավ ամենքին: Հանկարծ Տեր Միսաքի մոտ վազեց խուլուհամր Մարիան՝ ապաստարանի գեղեցկուհին, առինքնող ու մաքուր հուզախոռովություն հարուցող այդ աղջիկը, ով ամենքի կարեկցանքի, սիրո ու հմայվածության առարկան էր անցած մոայլ օրերին: Նա ապաստարանում մնացած վերջին կինարմատն էր. սեռակիցներն օրօրի գնում էին՝ ենթարկվելով տղամարդկանց հորդորներին, որ կանայք պետք է հեռու մնան պատերազմական թատերաբեմից՝ երեխաների հետ միասին, որ պատերազմը տղամարդկանց հոգան ու պարտականությունն է: Մնացել էր միայն Մարիան՝ իր խաժաչ ու սեւահեր գեղեցկությամբ, հրապուրիչ տեսքով, բայց եւ անթաքույց թախիժ կար նրա հայացքում ու շարժումների մեջ: Ոչ ոք ճշմարիտ չգիտեր, թե ինչու է Մարիան մնացել անխնա ոմբակոծվող քաղաքում, այդ ցուրտ ու աղոտ ապաստարանում, երբ կարող էր մյուս կանանց պես հեռանալ կրակի մեջ հայտնված քաղաքից եւ ապաստանել Հայաստանի հեռավոր ու անաղմուկ բնակավայրերից մեկում, ինչպես վարվել են Ստեփանակերտի կա-

նանց մեծ մասը՝ իրենց երեխաների ու տարեց հարազատների հետ: Տարաբախտ աղջիկը որոշել էր մնալ եկեղեցու ապաստարանում, քահանա Տեր Միսաքի կողքին՝ խորապես զգալով, որ իր ապահովությունն այդպես առավել հուսալի է: Բայց ապաստարանում սկիզբ առած շշուկները չեն դադարում մինչ օրս, որոնք ակնարկում են, թե խուլուհամր գեղեցկուհին, այնուամենայնիվ, ունի իր առեղծվածը, որ գուցե այդպես էլ մնա անբացահայտելի:

Մարիան դողացնելով բռնեց քահանայի աջ ձեռքը, նրան տարավ Սերոբի մոտ, բռնեց նաեւ վերջինիս ձեռքը եւ աղերսալից հայացքով սկսեց նայել մերթ Տեր Միսաքին, մերթ հարկահավաքին, - որ ցասման ու վիրավորանքի վայրկյաններին չաղարտեն իրենց մարդկային նկարագիրը, որ խլացնեն ժայթքումի պատրաստ զայրույթը եւ խաղաղասիրաբար տրամադրվեն միմյանց նկատմամբ: Աննկատ նրանց մոտեցավ հաշմանդամ Վիգենը՝ ժպտուն հայացքը Մարիային հառած, ի ցույց դնելով իր անկասկածելի համախոհությունն ու զորակցությունը «հաշտարարին»: Գեղեցկուհու արարքը սրտառուչ ու տպավորիչ էր, ականատեսները միանգամից հասկացան, որ, բարեբախտաբար, արտառոց ոչինչ տեղի չի ունենա, կլինի հաշտություն եւ վիճողների, եւ տարածայնությունների մեջ խճճված մյուս ներկաների միջեւ:

Սերոբը թեքվեց Տեր Միսաքի կողմը եւ անլսելի ինչ-որ բան փսփսաց նրա ականջին: Քահանան թեթեւակի գլխով արեց. նրանք առաջին անգամ համամիտ էին մի հարցում, երեւի շատ կարետոր ու գաղտնախորհուրդ հարցում, քանզի երկար ժամանակ չէին ցանկանում այն բացահայտել ոչ Տեր Միսաքը, ոչ պարոն Սերոբը: Երկուսն էլ հետագայում հետաքրքրասերներին թռուցիկ պատասխանում էին, որ մարդու սուրբ գաղտնիքները ենթակա չեն բարձրաձայնման, դրանք պետք է հնազանդորեն ու անխոս կրել ներսում: Գեղեցկուհի Մարիան կարծես թե հասկացավ նրանց թաքուն երկխոսության իմաստը, նրա դեմքին թեթեւակի ժպիտ գծագրվեց, եւ այն է՝ պատրաստվում էր թողնել «կռվազաններին», երբ ապաստարան մտավ

փրկարար ծառայության կապիտան Մուրադ Բեկյանը, ով անցած քառասունչորս օրերին հաց ու ջուր էր հասցնում ապաստանյալներին, – մի երկվայրկյան լռելյայն կանգնեց մուտքի մոտ, ապա հայտնեց սպասված լուրը.

– Ժողովուրդ ջան, զինադադար է... Կարող եք գնալ ձեր տները, ոմբակոծություն էլ չի լինի:

Բայց փրկարարի ձայնում ուրախության նշույլ իսկ չկար, ավելի շատ գույժի էր նման հայտարարությունը, թեպետ նա ջանաց արտահայտվել զինվորավարի զուսպ՝ առանց հույզի եւ զգացական երանգների: Կատարված աղետն իսկույն կռահեցին քահանան, Մարիան, նկարիչը, ուսուցիչը, Սերոբը, պաշտոնաթող գնդապետ Ավետիք Վարդանյանը, Վիգենը եւ այլք, ովքեր փոքրիշատե տեղյակ էին ծավալվող ռազմական դրամայի բուն ընթացքին: Փրկարար Մուրադը լուրը հայտնելուն պես փութով հեռացավ՝ ետետում թողնելով տարակուսյալ մարդկանց մի բազմություն, որոնց համար ամենեւին միեւնույնը չէր, թե ինչ գնով է հրամցվելու զինադադարը. նրանք շատ էին տառապել իրենց փոքրիկ երկրի համար, տեղ գտնող կորուստները նրանց հոգիներում արձագանքվում էին խոր ու անվանելի ցավով:

– Հասկացմք, որ բերդաքաղաքն ընկած է... հանձնվել է թշնամուն, – մռայլորեն խոսեց պաշտոնաթող գնդապետը:

Ավելորդ հարց էր՝ հասկացան ամենքը, բայց ոչ ոք դրան հավատալ չէր ուզում. միթե սիրելի եւ անառիկ հոչակված լեռնային բերդաքաղաքը հնարավոր է հանձնել ռիսերիմ թշնամուն: Ինչ սատանա է այստեղ տնօրինել... Մարիան մի կողմ քաշվեց եւ սկսեց անձայն հեծկտալ, մյուսները կանգնել էին վշտահար, խոժոռ ու տարակուսած:

– Ողբալ պետք չէ...– դժվարությամբ, հանգուցյալի վրա կարգ կատարողի պես, ի վերջո, արտահայտվեց Տեր Միսաքը, – ելնենք դուրս, Աստված մե՞ծ է, նա մեզ չի լքի, – եւ շարժվեց դեպի ապաստարանի ելքը:

Առաջին անգամ քահանան չհավատաց իր ասածին, նրա մտքում դժգոհության մի կայծակ փայլատակեց Աստծո դեմ՝ որ թույլ է տվել մի ողբերգություն, ինչը խստագույն պատժի պես ծանրանալու է իր ժողովրդի վրա: Նա ապարդյուն համարեց այն անհամար ջերմեռանդ աղոթքները, որ պատերազմական օրերին, արթմնի թե երազում, տենդագին կրկնում էր առ Բարձրյալ՝ աղերսելով, խնդրելով ու պահանջելով արնահեղության սանձում, անվտանգ ու ամբողջական երկիր: Ջայրացած էր Տեր Միսաքը, անչափ զայրացած՝ իր ու Աստծո վրա: Նա այդ պահին տեսնում էր երկուստեք գործած մեղքի ուրվականներին:

Այնուամենայնիվ, դրսում խաղաղություն էր արդեն եւ հարկ է համակերպվել դրան. առայժմ մարդիկ եկեղեցու ստորգետնյա ապաստարանից դուրս էին գալիս զգեստնված հոգով ու մտքով, իսկը՝ խաղաղության զոհերի պես:

Նոյեմբերյան սառը, ամպոտ ու տրտմաշուք առավոտ էր. ապաստարանից ելածների համար հանդիպումը նոր օրվա, նոր իրականության ու նոր կյանքի հետ մորմոքուն ու հիասթափեցնող էր. նրանք Աբ. Աստվածամոր Հովանի հոյաշեն եկեղեցու բակում տարտամ ու անկիրք իրար էին խառնվել՝ դեռեւս երեսանց գիտակցելով, թե ինչ նոր ու խենթացնող փորձություն է սպասվում իրենց զինադադարի օրոք: Տուն գնալուց առաջ «փրկվածները» փորձում էին միմյանց սփոփել ու քաջալերել, սակայն ամենքն էլ զգում էին, որ ինքնախաբեությանը անկոտրում ու լավատես չեն դառնա, ոգեշնչում չես ծնի դատարկված հոգիներում: Ուստի շատերը շուտով միմյանց առողջություն ու խաղաղություն մաղթելով, ցրվեցին՝ մեկ-մեկ, երկու-երկու՝ թաքուն հուսալով, որ իրենց քառասունչորսօրյա անգեն մաքառումը եկեղեցու ներքնահարկում, քաղաքում եւ նրա սահմաններից դուրս, միեւնույն է՝ իր բարեհուսո հետքերն է թողնելու գալիք օրերի պաստառներին: Այնուամենայնիվ, փակ աչքերով անգամ տեսանելի էր, որ հպարտ ճախրող արծիվը մեկեն թեւատարած փռվել է գետնին...



Բակում մնացին Տեր Միսաքը, Մովսեսը, Վարազյանը, Վարդան-  
յանը, դպիր Արմանը, Մարիան ու Վիգենը՝ ողբացող հոգիների եղ-  
բայրության պես: Նրանք մերթ իրար էին նայում, մերթ Շուշիի կող-  
մը եւ չգիտեին, թե ինչ բացարություն կարող է լինել տեղ գտած  
աղետին: Տեղում անհանգիստ դոփում էր Վիգենը, ով իր կիսապրո-  
թեզե ձախ ոտքով եւ առողջ աջով կարողանում է ճկուն ու արագ  
շարժվել՝ ձեռնափայտն առավել օգտագործելով ոչ թե որպես հե-  
նակ, այլ՝ ճանապարհն ազատելու գործիք: Եվ ներքուստ, եւ ար-  
տաքուստ նա անդադար աճապարողի դերում է: Հենց այդ աճա-  
պարանքի հետեւանքով հաշմվեց, երբ բանակից զորացրվելուց  
երկու ամիս առաջ տենդագին փորձում էր ծառայակից ընկերնե-  
րին հանել վթարված մեքենայից. չորրորդին փրկելու պահին հսկա  
զինվորական «Ուրալը» շուռ եկավ եւ ճզմեց նրա ձախ ոտնաթաթը  
սրունքի կեսի հետ միասին: Երբ առիթ էր լինում, հանգիստ պատ-  
մում էր այդ ցավալի միջադեպի մասին, ավելի շատ նրա համար,  
որպեսզի մեկ անգամ եւս ափսոսա, որ երկու ծառայակից ընկերոջ  
այդպես էլ չհաջողեց փրկել: Նրա քսանհինգամյակն ապաստարա-  
նում բոլորեց, երիտասարդական զնգուն տարիք էր թեւակոխում,  
սակայն Վիգենը, հատկապես իր միութախառն դեմքի արտա-  
հայտությամբ, հասուն ու մտախոհ տղամարդու տպավորություն է  
թողնում, շարունակ միտված է լոկ իրեն հասու ինչ-որ նպատակի:  
Հիմա նրա նշանակետը խուլուհամր գեղեցկուհի Մարիան է, որին  
զգուշորեն հետամտում է անվիճելի երկրպագուի կամ ինքնակոչ  
թիկնապահի պես: Օրիորդը կանացի անխաթար բնազդով վաղ  
ըմբռնեց երիտասարդ տղամարդու առողջ հետաքրքրասիրու-  
յունն իր հանդեպ, բայց ամենեւին տրամադրված չէր արծագանքե-  
լու նրան, մտածելով, որ նորահայտ ասպետին դեռ երկար պետք է  
տնտղել՝ գնահատելու նրա վերաբերմունքի եւ հոգեկան բխումների  
իրական բնույթը: Չէ՞ որ ինքը «բարդ պերսոնա է», ինչպես կասեր  
իր լեզվանի ընկերուհի Մարգոն, խուլուհամր է՝ դժվարընկալելի մի  
էակ, որի հետ լուրջ ու հեռանկարային հարաբերությունների մեջ չի

մտնի ամեն հասարակ մահկանացու: Մարիան քսան տարեկան է, եւ արդեն հասցրել է ճանաչել մի քանի թռուցիկ սիրահարվածություն իր հանդեպ, երբ երիտասարդ, անգամ միջին տարիքի տղամարդիկ, մի կարճ ժամանակ հրապուրվել էին իր գեղեցկությամբ՝ տենչալով մարմնական շփումներ: Նրանց անմիջապես հեռու էր վանել իր քամահրանքով ու զայրոյթով... Ասում են՝ ծնվել է միանգամայն առողջ, սակայն վեց ամսական հասակում ինչ-որ անհասկանալի, չախտորոշված ծանր հիվանդություն է տարել եւ կորցրել լսողությունը, այդպես՝ դատապարտվել համրության: Մարիան անբիժ ու առաքինի է իր վարքուբարքում, տան մինուճար զավակը լինելով ու մատնվելով միայնության (մայրը մահացել է երկու տարի առաջ, իսկ հայրը վաղուց լքել է ընտանիքը՝ թեթեւսովիկ մի աղջկա հետ փախչելով Արգենտինա), խստակյաց կյանք է վարում՝ որպես հուսալի հենարան ու ապավեն ունենալով Տեր Միսաքին: Մարիան ամեն օր, երեկոյան կողմ, իր գործերն ավարտելուց հետո եկեղեցի էր գնում առավելս ոչ թե մոմ վառելու եւ աղոթելու համար (ինքն առանձապես մոլեռանդ հավատացյալ չէ), այլ հոգով ունկնդրելու Տեր Միսաքի վարած ժամերգությունը, որը նրան հույս, հավատ ու վստահություն էր ներշնչում:

Վիզենը Մարիային միանգամից չսիրահարվեց, դա տեղի ունեցավ հետզհետե. կենարար զգացմունքը փոքրիշատե ցուլուն տեսք առավ ապաստարանային շրջանի կեսին, երբ գիտակցեց, որ աղջիկն իր լռությամբ, գեղեցկությամբ եւ դեմքին դրոշմված թախիժով ոչ միայն հուզում է իրեն, այլեւ արդեն գլխավոր տեղ է գրավել իր զգացական ու մտային ոլորտում. հենց նրա կերպարի միջոցով էր երիտասարդ հաշմանդամն այդուհետ մեղմում արյունոտ ու սարսափազդու ժամանակի ծանր խոհերն ու ապրումները, նույնիսկ վանում դրանք, որոնց մեջ մահահոտ ու դժնի շատ տեսիլներ կային: Բայց Մարիայի հետ Վիզենը գրեթե չէր շփվում, դեռեւս պատրաստ չէր բացեփբաց մատուցելու իր անկեղծ հմայվածությունն ու գորովն առ սիրունիկ ու անխոս աղջիկը: Նաեւ, որ ինքը դեռեւս

չէր սովորել նրա անձայն լեզուն՝ այդ պլաստիկ մատնախոսությունն ու մնջախաղը, եւ չէր պատկերացնում, թե դրանցով ինչպես պետք է անսխալ ու ճշմարտորեն արտահայտեր իր հոգում շարունակ աճող սիրո զգացմունքը: Առայժմ ուշի-ուշով հետետում է աղջկան, այլեւս չթաքցնելով իր հետաքրքրվածությունն ու նրան պաշտպանելու պատրաստակամությունը: Հիմա Վիգենը կանգնել է «իր սիրուն լալիկի» (մտքում այդպես է նրան անվանում) կողքին՝ ունկնդրելով, թե ինչ է քննարկում ապաստարանի դեռեւս գործող «պաշտպանական խորհուրդը»: Իրականում նա սկզբնապես ցանկանում էր ճշտել, թե ինչ մտադրություններ ունի Մարիան, ինչ է պատրաստվում անել այսուհետ, երբ սպասվում են խաղաղ շաբաթներ, ամիսներ, գուցե՛ն՝ տարիներ:

– Մենք ուշացանք,– տխրալի ասում էր Տեր Միսաքը,– թանկարժեք շատ իրեր մնացին Ղազանչեցոց եկեղեցում ու թանգարաններում... *ազարները* դրանք կոչնչացնեն:

– Մի ելք պիտի գտնենք,– մտախոհ արծագանքել է պաշտոնաթող գնդապետ Վարդանյանը,– բայց ես չեմ կարա պատկերացնել, թե ինչ խելքով կարելի ա բերդաքաղաքը հանձնել թշնամուն... Ես համոզված եմ, որ մերոնք Շուշին պաշտպանելու ցանկություն ու կամք չեն ունեցել... Ախր մի հատ նայեք,– բորբոքված շարունակեց՝ ձեռքը մեկնելով դեպի ոչ հեռու բլրի վրա ծվարած բերդաքաղաքը,– միթե նման բարձրադիր տեղանքում գտնվող փոքրիկ քաղաքը պաշտպանելու համար շատ զորք ու տաղանդ ա պետք...

Բոլորը շրջվեցին հեռվում պատկերվող բերդաքաղաքի կողմը եւ միառժամանակ տրտմալից ու մտազբաղ նայեցին նրա մշուշոտ թաղամասերին, ուր արդեն թշնամին է՝ հաջողությունից լկտիացած եւ իր հաղթությունը ցինիկաբար տոնող: Եկեղեցու բակում գտնվողներն, այնուհանդերձ, չէին ցանկանում ստանձնել պարտվողի դերակատարությունը՝ այն համարելով անհարիր իրենց ոգուն ու իղձերին,– բայց եւ սթափվելու, ողջամիտ կեցվածքի պահանջն էր սավառնում օդում:

- Հա, նետ ու աղեղով էլ կարելի էր պաշտպանել բերդաքաղաքը... լավ՝ միայն ավտոմատներով, եթե ցանկանայինք. հերիք էր՝ շրջանաձեռ պաշտպանություն կազմակերպել, եւ ոչ մի թշնամի էնտեղ չէր ներխուժի... Ներքեւից եկողին խփելը հեշտ է, չէ... Մերոնք չեն ուզեցել քաղաքը պահել, պարոն գնդապետ, հանձնել են, ինչո՞ւ...- վիրավորված ինքնասիրությամբ, իր համար անգամ անսպասելի, խոսակցությունը սուր հարցականով շարունակեց Վիգենը: Նա ուզում էր իր տարակուսանքն ու տագնապը անկեղծորեն հայտնել «պաշտպանական խորհրդին», նաեւ՝ Մարիայի աչքին երեւալ որպէս ռազմական գիտելիքներով օժտված մարդ:

- Ապրես, տղա ջան, ես էլ եմ հարցնում՝ ինչո՞ւ...,- խիստ անդրադարձավ Վարդանյանը, ով իր գնդապետական կոչումը ստացել էր բերդաքաղաքը ազատագրելու համար, դրա հետ մեկտեղ՝ մի շարք մեղալիներ, քսանութ տարի առաջ:

- Սա դավադրություն է, իսկական դավադրություն,- կատարվածի իր գնահատականը տվեց մանկավարժ Սիմոնը:- Շուշին միշտ հանձնվել է դավադրաբար, դա է ցույց տալիս պատմությունը... Երբ մենք էինք ազատագրում բերդաքաղաքը, թշնամին էր իրենց համար դավադրաբար այն հանձնում մեզ, երբ նրանք էին մոլուցքով աչք դնում, մերոնք էին հանձնում... Սա է Շուշիի մութ առեղծվածը:

- Շուշիի անվամբ որքան հերոսներ, երեւի նույնքան էլ դավադիրներ ունենք,- հեգնանքով, թե՛ ցավով իր մեկնությունը տվեց նկարիչ Մովսեսը:- Թող արտառոց չթվա՝ պիտի ասեմ, որ մեզ սովետությունն է պակասում, էն հին ու ազնիվ սովետությունը, երբ հաշվի էին նստում սովորական ու անառարկելի ճշմարտությունների հետ: Մարդ ես՝ մարդկային եղիր, հող ունես՝ պահիր, երկիր ունես՝ կառավարիր, կոիվ է՝ կովիր անձնուրաց, տեղ չթողնելով կասկածամիտների, դասալիքների ու դավաճանների համար:

- Հայ ես, հայավարի ապրիր,- լրացրեց մանկավարժը:

- Հա... ահա էդպիսի սովետություններով ապրելու կարիքը

կա, հարազատներս: Մենք արհամարհում ենք պատմության դասերը, մենք հաճախ հաշվի չենք նստում ակնհայտ ճշմարտությունների հետ եւ պարբերաբար ժամանակի վիհերում ենք հայտնվում, իսկ դրանից անմիջապես օգտվում են թշնամիներն ու մեր քաղաքական դուրսալծուկները. սրանց համար հայրենի բերդաքաղաք հանձնելը հասարակ բան է՝ պատմական գեշ սովորույթի կրկնություն, ընդամենը...– Նկարիչը խոսում էր դժգոհ ու դառնագին շեշտերով, բայց եւ խորաթափանց զգայնությամբ: Նա տեսնում էր պատմության մռայլ ու ավելորդ գույները, հատկապես դատարկ տեղերում դրվելիք գույներն էր տեսնում:– Լավ, հիմա տեսաբանելու ժամանակը չէ, դա հետո էլ կանենք, եկեք հիմա խելք-խելքի տանք՝ տեսնենք, թե ինչպես փրկենք էնտեղ մնացած գորգերն ու կտավները... Կարո՞ղ ենք դա անել, թե՞ իսկապես արդեն ուշ է...

– Եվ Ղազանչեցոց եկեղեցու ու Կանաչ ժամի իրերի մի մասը... չմոռանանք,– հիշեցրեց Տեր Միսաքը, որ ականա դարձել էր Շուշիի եկեղեցական գույքի փրկության պատասխանատուն՝ անսալով թեմակալ առաջնորդի խնդրանքին:

Պատերազմի առաջին շաբաթավերջին էր, երբ վատառողջ ու ընկճախտի մեջ սուզված արքեպիսկոպոսը զանգեց Տեր Միսաքին ու ասաց, թե մտավախություն ունի, որ ուժգնացող ոմբակոծությունից կտուժեն Ղազանչեցոց տաճարն ու Կանաչ ժամը, «պետք է այնտեղից հանել մասունքներն ու տեղափոխել մի ապահով վայր»: Թեմակալ առաջնորդը չէր ուզում նման վտանգավոր ու կարետոր գործը վստահել այդ եկեղեցիների սպասավորներին՝ չմանրամասնելով բուն պատճառը: Բայց Տեր Միսաքը կռահում էր, ավելի ստույգ՝ գիտեր, թե ինչու պարտականությունների նմանօրինակ վերածեում է տեղի ունենում այնպիսի վտանգավոր պահի, երբ ինքը լիովին տարված է իր եկեղեցու ու ծխի հոգսերով, երբ հենց իրեն եւ Սբ. Աստվածամոր Հովանի տաճարի սպասավորական անձնակազմին է օգնություն պետք: Գիտեր՝ չգրված օրենք է՝ արտակարգ իրավիճակներում հենվում են բարեխիղճ ու համարձակ մարդկանց

վրա՝ խախտելով աստիճանակարգությունն ու հանձնառության շրջանակները: Տեր Միսաքը հետո ցավագին ափսոսանքով տեսել էր, որ այդ չգրված օրենքից չեն օգտվել երկրի պատասխանատու պաշտոնյաները, որոնք նախանձի, նեղմտության, թե՛ հիշաչարության ու նենգամտության թելադրանքով պատերազմական հրատապ գործերի մեջ չեն ներգրավել բազմաթիվ արժանավոր գործիչների՝ ռազմական թե քաղաքացիական, այդպես նվազագույնի հասցնելով երկրի պաշտպանունակությունը: Բայց այդ օրերին նա անձնապաստան մտքերի չէր տրվել, թեմակալ առաջնորդին աներկբա խոստացավ, որ կձեռնարկի՝ ինչ հնարավոր է, եւ Աստված թող օգնական լինի իրենց: Երկու անգամ նկարիչ Մովսեսի, դպիր Արմանի եւ Վիգենի հետ, վերջինիս սեփական հին «Տոյոտայով», պատերազմի ժամանակ թափանցել է Շուշի եւ այնտեղից տեղափոխել եկեղեցական որոշ իրեր, զորգեր ու նկարներ, այնքան, որքան հասցրել են այդ ժամերին, երբ անդադար հրետակոծվում էին Ստեփանակերտն ու Շուշին: Նրանք թանկագին բեռը տարել-տեղավորել են հրթիռակոծվող բնակավայրերից հեռու գտնվող Պատարա գյուղի ամրակուռ շինություններից մեկի նկուղային հարկում, ուր, ասում են՝ ոչ մի արկ ու ռումբ չի կարող մխրճվել:

– Բերդաքաղաքում հիմա ազարներն են... մենք դժվարին խնդրի առջեւ ենք կանգնած,– Տեր Միսաքի պես ազերիներին *ազարներ* կոչելով՝ իրավիճակային անելիքը ճշտելու փորձ արեց պաշտոնաթող գնդապետը:– Պետք ա հնարամիտ ձեւ գտնել բերդաքաղաք մտնելու եւ էնտեղ հաջող գործելու համար, կամ պետք ա սպասենք, մինչեւ որ ռուս խաղաղապահները լրիվ տեղակայվեն, հետո դիմենք նրանց օգնությանը... Ինձ ժամանակ տվեք՝ ես իմ պլանը կոնկրետացնեմ ու ներկայացնեմ ձեզ, մի քանի ժամ ա պետք...

– Ճիշտն ասած՝ ես չեմ կարծում, որ ռուս խաղաղապահները մեզ օգնության ձեռք կմեկնեն նման գործերում,– հռեւտեսորեն արտահայտվեց մանկավարժ Սիմոնը:– Նրանք կասեն, որ իրենք

զուտ անվտանգային հարցեր են լուծում, եւ հոգեւոր արժեքներ փրկելն իրենց գործը չէ:

– Դա դեռ կտեսնենք,– արագ արձագանքեց Վարդանյանը, ով միշտ, տեղի թե անտեղի, ի ցույց է հանում իր անսասան ռուսամիտությունն ու Ռուսաստանի հանդեպ եղբայրական զգացումները, որոնք, տարիների հոսքում, բավականաչափ բյուրեղացել էին: Պաշտոնաթող գնդապետը ժամանակին ծառայել էր խորհրդային բանակում, բազմաթիվ ռուս եւ այլազգի ծառայակից ընկերներ ունի ռուսաստանյան տարբեր քաղաքներում: Նրան սպասում էր զինվորականի հաջող վերընթաց վերակազմակերպվող ռուսական բանակում, բայց երբ սկսվեց Արցախյան առաջին պատերազմը, հապշտապ, 1992-ի հունվարին եկավ Ստեփանակերտ եւ ստանձնեց հրետանային դիվիզիոնի հրամանատարությունը: Ավետիք Վարդանյանն անվերապահ հավատում է ռուսների դաշնակցային առաքելությանը. այդ հավատը նրա ուժն ու թուլությունն է միաժամանակ:

– Հավաստիացնում եմ ձեզ, որ ռուսները չեն մերժի մեր հիմնավոր առաջարկություններն ու խնդրանքները, նրանք մեզ պաշտպանելու են եկել,– շարունակեց Վարդանյանն ու իսկույնեւեթ զգաց, թե ինչպես վերահաս մի տխրություն ու վիրավորանք անսպասելի խուժեցին իր՝ սառնասիրտ գործելաոճով հայտնի զինվորականի հոգին: Հանկարծ գիտակցեց, որ ինքը, անկաշառ ռուսասիրությամբ հանդերձ, խոցված է որպես հայկական բանակի սպա եւ որպես այս երկրի քաղաքացի. ինչպէս եղավ, որ հիմա ռուսները պետք է ապահովեն իր երկրի ու բնակչության անվտանգությունը, երբ դեռ երեկ սեփական զինուժն իսկական սարսափ էր թշնամու համար եւ Հարավային Կովկասում ուժեղագույնի համարում ուներ: Միթե հաղթական բարձրակետից մինչեւ պարտվողի անպաշտպան ստորադիրք՝ այդքան կարճ է տարածությունը...

– Մենք ինքնուրույն հիանալի պաշտպանում էինք մեզ, իսկ հիմա պետք է ռուսներին խնդրենք, չէ, ծնկաչոյք աղաչենք, որ հո-

գան մեր անվտանգությունը. արծիվ էինք՝ ճնճղուկ դառանք,– հեզնախառն ու անքողարկելի դառնությամբ ասաց մանկավարժ Սիմոնը, որի խոսքի դեմ այլեւ ոչինչ չունէր զտարյուն ռուսահարզ Վարդանյանը: Այդ պահին հենց մանկավարժի պես էր խորհում գնդապետը: Նա այդուհետ չի առարկելու արդեն հնամաշ կարծրատիպ թեզերը հերքողներին, հասկանալով, որ կյանքն անսպասելիորեն այնպես է շուռ եկել, որ պիտի հեղաշրջվես նաեւ ինքը՝ նույնիսկ փշրանքներ չթողնելով վաղուց քեզ առաջնորդող հավատամքից: Լուսատու գաղափարն էլ կարող է ցնդել թեթեւ օձանելիքի պես: Հիմա ինչ գաղափար պիտի կրի նախկին զինվորականը, առանց գաղափարի էլ ինչ զինվորական՝ լինես ներկա, թե նախկին: Բայց միանգամից հեղափոխվելը վտանգավոր է, ուստի ինքնիրեն վճռեց, որ այսուհետ հարկ է շարժվել ոսկե միջինի ճանապարհով՝ պահպանել առկա կամուրջները եւ ստեղծել ինքնապահպանության նոր համակարգեր:

– Մենք պետք ա լավ կողմնորոշվենք էս իրավիճակում, ծայրահեղականության, խուճապի ու հուսահատության չտրվենք... ճակատագրական սխալներ թույլ չտանք... կարող ա՝ ավելին կորցնենք,– համենայն դեպս, իր պարտքը համարեց ասել կյանքի կրակներում թրծված գնդապետը:– Մենք դեռ պիտի կարողանանք շատ բան ուղղել: Կարելորդ՝ որ ինքներս մեզ չկորցնենք:

– Աստված թող լսի ձեր ձայնը, գնդապետ,– հոգոց հանելով ասաց Տեր Միսաքը. նա արձակել էր սքեմի կոճակները, եւ տակից երեւում էր զինվորական համազգեստը, որ կրում էր պատերազմի առաջին օրերից: Դա ցուցամոլություն չէր, նման արատներից գերծ է քահանան, այդ քայլին էր դիմել առավելս իր համար՝ ինքն իրեն ոգի ներշնչելու, մարտիկ զգալու հույսով, քանզի կոփվը, նախ, մարտիկներ է պահանջում, ապա՝ մնացածը:

– Դե, քո Աստծուն ասա՝ թող ճիշտ հրամաններ տա մեզ,– հնազանդ զինվորի պես ասաց Վարդանյանը:

– Իսկ ո՞ր մնաց Քեռին,– հանկարծ վերհիշելով կարելոր մի



բան, ներկաներին տագնապով հարցրեց Տեր Միսաքը:– Նրան չի հաջողվել կապվել տղայի հետ կամ՝ լուր առնել ուրիշներից...

– Երեւի թե՛ ոչ, թե չէ կգար ու կասեր նորությունը,– արձագանքեց դպիր Արմանը:– Արդեն երկու օր է՝ չի երեւում... որդուն է փնտրում...

Տեղեկությունը գլխի շարժումով հաստատեցին մյուսները: Քահանան գրպանից հանեց հեռախոսը եւ փորձեց կապվել Քեռու հետ:

– Կապ չկա, մեր *տելեկոմի* ցանցը նորից խափանված է:

«Պաշտպանական խորհրդի» այդ հոտնկայս «նիստի» թերեւս ամենաուշիմ ունկնդիրը Մարիան էր, որ կանգնել էր քահանայի ու Վիգենի միջեւ եւ ակնդետ հետեւում էր խոսողներին, հատկապես՝ նրանց շրթունքների շարժումներին, որ ասվածն անթերի ըմբռնի: Լարվածությունից դեմքը մի փոքր կարմրել էր, թե՛ շառագունել էր ցրտից: Դա նկատեց Վիգենը եւ կիպ կանգնած լինելով «սիրուն լալիկի» կողքին, աննկատ բռնեց նրա ձեռքը՝ նրան ջերմություն, ուժ եւ տոկունություն հաղորդելու անկեղծ ցանկությամբ: Մարիան Վիգենից չէր սպասում նման հանդգնություն, դա իսկական ոտնձգություն համարեց իր կուսական էության դեմ, ուստի կտրուկ ետ տարավ ձեռքը եւ կշտամբանքով, զարմացած ու զայրացած նայեց իր պաշտպանին: Երիտասարդ սիրահարը ներողամիտ ժպիտով կախեց գլուխը, ապա կրկին լրջանալով, ասես սիրային ոչ մի, աննշմար թեկուզ, միջադեպ չէր եղել, դիմեց ծանրախոհության մեջ ընկղմված այրերին.

– Թողե՛ք՝ ես գնամ հետախուզության, տեսնեմ՝ ո՞նց ու որտեղից է հարմար մտնել բերդաքաղաք... հասնել Ղազանչեցոց ու թանգարան: Հետո իմ բերած տեղեկությունների հիման վրա թող «օպերացիայի» պլան կազմի պարոն գնդապետը,– անակնկալ առաջարկեց Վիգենը՝ խելամտորեն հոնքերը վեր բարձրացնելով:

– Հա, ճիշտ է ասում, ես էլ նրա հետ կգնամ,– Վիգենի առաջարկությանը միացավ դպիր Արմանը, ով թեպետ հիվանդոտ, գրե-

թե սմբաձ երիտասարդ է, ավելի շուտ հայտնի է իր կամքի ուժով ու բարեհոգությամբ: Նրա ընկերական պատրաստակամության մասին ապաստարանային ժամերին «լեգենդներ» է պատմել Տեր Միսաքը:

Պաշտոնաթող գնդապետը միառպահ մտածմունքի մեջ ընկավ:

– Բայց առանց արկածախնդրության, ոչ մի չմտածված քայլ,– խիստ հայացքը հառելով, նախ, Վիգենին, ապա Արմանին, ի վերջո համաձայնեց Վարդանյանը:– Հետախուզել միայն գիշերը:

– Այո, այո, գիշերով կանենք,– գրեթե միաբերան պատասխանեցին ինքնակոչ հետախույզները:

– Ագարները Շուշիի շուրջ դեռ լրիվ չեն ամրացել, պաշտպանական ճեղքեր ու բացթողումներ հաստատ դեռ կգտնվեն,– կանխատեսեց նախկին զինվորականը:– Պետք ա խելացի գործել ու ժամանակին:

– Իսկ գուցե դիմենք գեներալ Օնանյանին, հը՛, Տեր Հայր, նա կարող է օգնել... որ տղերքը,– միջամտեց մանկավարժ Սիմոնը՝ ցույց տալով Վիգենին ու Արմանին,– ավելորդ դիսկի չենթարկվեն:

– Գեներալը, ցավոք, արդեն մեկնել է Երեւան,– պատասխանեց Տեր Միսաքը,– երեւի բավարարվենք մեր սեփական ուժերով... Ռիսկ է, իհարկե, հետախուզության գնալը, բայց առանց դրա հաջող օպերացիա չես անի, չէ՛, պարոն գնդապետ...

– Ճիշտ այդպես,– հաստատեց Վարդանյանը զինվորականի հին սովորույթով:– Գրագետ ու տեղին հետախուզությունը երաշխավորում է հաջող օպերացիան:

– Ես էլ գնամ տղերքի հետ, տեղանքը հատակագծեմ, որ քարտեզի պես մի բան ունենանք բերդաքաղաք մտնելիս,– իր ծառայությունն առաջարկեց նկարիչ Մովսեսը:– Ես նման փորձ ունեմ. առաջին պատերազմի ժամանակ ինձ տանում էին Օմարի լեռնանցքի մատուցները, որ քարտեզագրեմ էդ տեղերը: Հետո գեներալ Վանյանն ասել է, որ իմ արած գծագրերը մեր զինվորականներին շատ են օգնել Օմարը գրավելիս:

– Կարիք չկա, վարպետ Մովսես,– հապճեպ պատասխանեց Վի-

գենը:– Ես իմ հեռախոսով կլուսանկարեմ տեղանքը:

– Ե՛ս կանեմ դա,– պատրաստական ասաց դպիր Արմանը:

– Երկուսով կանենք: Ես ամեն ինչ ունեմ հետախուզության համար՝ հեռադիտակ, սառը գենք, հրագեն...– ռազմական իր գաղտնիքը հայտնեց Վիգենը եւ նայեց Մարիայի կողմը՝ դարձյալ անկեղծորեն ցանկանալով նրան ցույց տալ իր կարողունակությունը: Ի վերջո, նա զուր չէր մեկուկես տարի ծառայել բանակի հատուկ նշանակության ջոկատներից մեկում, հիմա ճիշտ ժամանակն է, որ գործադրի յուրացրածը:– Չզորակոչեցին ինձ պատերազմի օրոք, հիմա գոնե մի բան կանեմ:

– Հա, քո նման տղաները որ շատ լինեին մեր կովողների շարքերում, մենք չէինք պարտվի,– ասաց ուսուցիչ Սիմոնը:

– Հաշմանդամներին չեն զորակոչում, ընկեր Վարազյան,– հիշեցրեց Վարդանյանը:

– Լավ է՛լի, ընկեր գնդապետ, եթե մարդ առողջ է, բայց կովել չգիտի կամ չի ուզում, ի՞նչ կստացվի... Տեսանք, չէ՛, թե ինչ է լինում նման դեպքում,– նեղսրտած առարկեց նախկին մանկավարժը, ով իր վեճն ունի գնդապետի հետ ապաստարանային առաջին օրերից. ոչ մի կերպ չէին համատեղվում ուսուցչի անկախ-ազգային հայացքները զինվորականի «հավերժ դաշնակցային ու ընկերավարական» գաղափարների հետ:

– Ես այսուհետ չեմ վիճելու քեզ հետ, ընկեր Վարազյան, թույլ տուր, որ հանգիստ ու խոհեմաբար վերանայեմ իմ որոշ հայացքներ ու սկզբունքներ, համաձայն եք,– բարեհոգաբար հարցրեց Վարդանյանը:

– Սիրով, սիրով, ընկեր գնդապետ: Դուք միայն ուշադիր նայեք, թե կյանքի քամին որ կողմն է փչում,– պատասխանեց փորձառու մանկավարժը՝ ցուցաբերելով շեշտված հանդուրժողականություն ու բարյացակամություն «հակառակորդի» հանդեպ:

– Բայց դուք էլ վերանայեք ձեր որոշ սկզբունքներ կամ գոնե մի փոքր սրբագրեք:

- Չեղավ,- աննահանջ պատասխանեց ուսուցիչ Սիմոնը՝ մերժելով գնդապետի բարեկամական առաջարկությունը:- Թողեք ես ինքնուրույն վարեմ իմ կառքը:

- Լավ, ինչպես կուզեք,- իր համար անսովոր մեղմությամբ արձագանքեց Ավետիք Վարդանյանը:

Հնչեց հեռախոսի զանգ, գրեթե բոլորը ձեռքերն ակամա տարան գրպանները. զանգում էր Տեր Միսաքի հեռախոսը:

- Այո, լսում եմ ձեզ... Աստված ձեզ օգնական... Ինչ... այո, այո... լավ, ժամը տասներկուսին,- խոսեց քահանան եւ հեռախոսը ետ դրեց սքեմի գրպանը:- Բանակի շտաբից է՝ փոխգնդապետ Հայրումյանը, ասում է՝ երեք զոհված զինծառայողի աճյուն են հողին հանձնելու եղբայրական գերեզմանոցում... պիտի գնամ հոգեհանգստյան կարգ կատարեմ... Թող Աստված լուսավորի տղաների հոգիները:

Բոլորը գլուխկախ լռեցին՝ ավելի ընկղմվելով տխրության ու վշտի մեջ. նրանք գրեթե վարժվել էին այդ պարբերական թաղումների, որ առօրեական դարձան պատերազմի առաջին իսկ օրերից, բայց, միեւնույն է, ամեն անգամ ապաստանյալները նորովի մղկտում ու խոժոռվում էին յուրաքանչյուր զոհյալի համար՝ անիծելով թշնամուն եւ իրենց ժողովրդին ստորացուցիչ պարտության հասցրած առաջնորդներին: Նրանք դեռեւս չգիտեին իրական ողբերգության ծավալները. զոհերի, անհետ կորած ու գերեվարված զինծառայողների իրական թվաքանակը դեռ երկար ժամանակ մշուշված է մնալու անհասկանալի ու վիրավորական ծածկադմբոցով ու խարդավանքներով՝ հիմնականում քաղաքական վերնախավից եւ զինվորական առանձին օղակներից ուղղորդվող, բայց արդեն նշմարվող կորուստների պատկերը շանթահարող ու սահմուկեցուցուցիչ էր ետպատերազմյան առաջին իսկ օրը: Աջ ու ահյակ մարդիկ խոսում էին, որ չափազանց շատ երիտասարդ զոհեր կան՝ գրեթե պատանի, եւ ողբերգական մյուս փաստը՝ որ Շուշիից բացի թշնամուն է հանձնվել նաեւ Հադրութը՝ հինավուրց Դիզակ շրջա-

նի այդ գեղատեսիլ կենտրոնը, արբանյակ գյուղերով հանդերձ: Բայց աղետը վերապրողներն իրենց էթնիկ բնագրով նախընտրեցին դիմակայել եւ շարժվել դեպի կենսադաշտի առկայծող հանգրվաններ, ուր կարող են վերգտնել իրենց մարդկային ու ազգային անեղծ նկարագիրը, որ լի է տառապանքով, նվիրվածությամբ եւ աշխարհի ու Աստծո հետ ուրույն լեզվով խոսելու ջանքով: Սակայն դա փոքր-ինչ հետո խմորվելիք պարտք էր, տվյալ պահին մարդիկ պարուրված էին վարանքով ու ցավով, նրանց համար «վաղը» եւ «ապագա» բառերը աղարտված էին խավարով ու ծաղրանքով:

– Ես հիմա ժամերգությունը կսկսեմ, եթե ցանկանում եք, կարող եք մասնակցել, եթե ոչ, գնացեք տուն ու հանգստացեք, երեկոյան կհավաքվենք ինձ մոտ... Եթե ցանկանում եք,– տխրամած հայտարարեց Տեր Միսաքը եւ շարժվեց դեպի եկեղեցու մուտքը: Նրան հետեւեցին Մարիան, Վիգենը, դպիր Արմանը: Հետո, կարծես մտափոխվելով, նրանց միացավ նկարիչ Մովսեսը: Գնդապետ Վարդանյանն ու մանկավարժ Վարազյանը ցածրաձայն զրուցելով հեռացան:

Եկեղեցի մտան ուրիշ այցելուներ եւս՝ ներագրված զանգերի դողանջից, որ չէին լսել քառասունչորս օր: Ժամերգություն էր սկսվում ցուրտ ու մռայլ մի պահի, երբ թվում էր՝ ժամացույցի սլաքները բրտորեն մի քանի պտույտով ետ էին տարվել, եւ կյանքը պիտի վերսկսվեր մութ ու անկումային մի կետից:

2020 թվականի նոյեմբերի տասն էր:

## Գլուխ 2

### ԿԱՐՄԻՐ ՈՒ ՍԵՎ ԽԱԶԵՐԻ ՔԱՂԱՔԸ

*Իսկ ես երեսս շրջելու եմ նրանցից,  
եւ նրանք պղծելու են Իմ սուրբ տեղը,  
քանի որ հափշտակիչներ են մտնելու այնտեղ...*

*Եզեկիելի մարգարեությունը. 7*

Նրանք շարժվեցին դեպի բերդաքաղաքի հյուսիսարեւելյան մատույցները, երբ արդեն սառը գիշերն էր իշխում տեղանքում. ոչ մի աստղ երկնքում չէր փայլում, լուսինը նույնպես աննշմարելի պահմտած էր խավար ամպերից վեր:

Վիզենը զինվորական համազգեստով էր եւ ուսապարկով, սպառազինությունն էր՝ հեռադիտակ, դաշույնակերպ դանակ ու ատրճանակ (վերջինս պաշտպանության նախարարից էր նվեր ստացել ցուցաբերած արիության համար, զորացրվելուց առաջ): Եվ նոր ձեռնափայտով էր՝ արծաթափայլ մետաղյա, այն հատուկ նշանակության էր՝ նմանօրինակ դեպքերի համար:

Դպիր Արմանը եւս զինվորի հագուկապ ուներ: Նա առաջին անգամ էր նման հանդերձով, եւ շատ ոգետրված էր. բանակում չէր ծանայել՝ չեն զորակոչել ֆիզիկական վտիտության եւ փոքր-ինչ կախ ընկած աջ ուսի պատճառով: Իր երեսուն տարվա մեջ նա բարդությամբ վորվել ու գերզգայուն էր դարձել, հիմա առաջին անգամ իրեն իսկական տղամարդ ու զինվոր էր զգում եւ պատրաստ էր հավասարի պես գործել Վիզենի հետ, տանել նույն վտանգները, իսկ եթե

հարկ լինի՝ «առաջին ջուրակի» դեր ստանձնել: Անզեն էր Արմանը, բայց համոզված էր, որ իր սուր տեսողությունն ու լսողությունը հիանալիորեն օգտակար կլինեն՝ լիակատար կողմնորոշվելու այդ վտանգավոր ճանապարհին, երբ սեականաձեռն երկինքն էր ծանրորեն կախվել, եւ կարող էին ականա հայտնվել թշնամու դեմ-դիմաց կամ ընկնել նրա սարքած ծուղակը: Սկզբում դողում էր Արմանը՝ Վիգենի աչքից աննկատ, բայց հիմա վախ չունեի, համակ զգոնություն էր եւ հուսալի զինակից, թեպետ անզեն էր ու ֆիզիկապես տկար, բայց ուներ արծաթե խաչ եւ իր համառ ոգին:

Իսկոտ մուր էր, այնուհանդերձ, նրանք ճանապարհին ու մերձակա տեղերում տեսնում էին ռմբահարումներից ջնջված ու մետաղակույտի վերածված զինտեխնիկա՝ տանկեր, զրահամեքենաներ, հրանոթներ, բեռնատարներ. ճակատամարտի ցցուն հետքերն անողորքաբար փռված էին այդտեղ, մի տանկից դեռեւս բարակ ծուխ էր ելնում: Շուտով հետախույզները տեսան զինվորական «Շտապ օգնության» խփված մի մեքենա, որի ձախ՝ ճմռթված դռան վրա երեւում էր կարմրագույն խաչանշանը. Վիգենը ցավագին ճիգով Արմանին մատնացույց արեց այն՝ ցանկանալով ակնարկել, որ խաչը չէր պաշտպանել մեքենայի մեջ գտնվողներին. գուցե նրա մեջ կային վիրավոր մարտիկներ՝ բժշկի ու սանիտարի հետ: Երեւի հենց այդպես էլ կար՝ իր համար որոշակիացրեց Վիգենը, թե չէ թշնամին հատուկ նշանառության տակ չէր առնի բժշկական մեքենան, որը ռազմական վտանգ չէր ներկայացնում, լոկ մարդասիրական առաքելության էր կոչված: Բայց դա հենց թշնամու վարքագիծն է՝ խփել հակառակորդի առավել զգայուն տեղերին՝ քինախնդրորեն շեշտելով, որ մարդասիրական գաղափարն իր համար առ ոչինչ է պատերազմի օրոք: Արմանը մի երկվայրկյան կանգնեց կործանված «Շտապ օգնության» մոտ, խաչակնքեց ու ձեռքը պարզեց վեր՝ «Ո՛վ գիտե Աստծո գործը»:

Նրանք ճանապարհամերձ բենզալցակայանից թեքվել էին ձախ ու բավականաչափ բարձրացել բերդի ուղղությամբ, Շուշիի հենց

այն բերդի, որի մեջ եւ որի շուրջ հյուսված պատմությունը, 18-րդ դարից ի վեր, առավելս աչքի է զարնում իր արյունոտ միտվածությամբ ու տարատեսակ բռնության դրվագներով. այնտեղ, վերջին հարյուր տարում, կալանավորներ են պահվել, այն բանտի էր վերածվել՝ ավելի մռայլ երանգ հաղորդելով իր անվանը: Բերդից վեր կազմավորված քաղաքը՝ քրիստոնեական ու մահմեդական շինվածքներով հանդերձ, որքան էլ խճողում է իր ծագումնաբանությունը եւ լղզում արնահեղությունների հետքերը, միեւնույն է՝ այդ ամենն ապարդյուն ջանքի է վերածվում. քաղաքի նախնի տերերը, ասես հանդերձյալ աշխարհից, ուրվականների պես պարբերաբար հայտնվում են այնտեղ եւ արծաթափայլ խաչով դատապարտում մեղսավորներին ու չարագործներին, բայց եւ թողություն տալիս նրանց եւ մղում ապաշխարելու: Մինչդեռ մեղսավորներն ու չարագործները դեռեւս նախահարձակ վարքի մեջ են պարտակվում եւ հերսոտված՝ վերստին ճգնում են զենքի ու բռնության ուժով հաստատել կիսալուսնի գերիշխանությունը մի քաղաքում, ուր Աստված վաղուց ցանել է հավատքի, հավատարմության ու ինքնապահպանության արդար ու կենսունակ սերմերը:

Երիտասարդ հետախույզները դանդաղորեն, աչքները չորս արած, բարձրանում էին լանջն ի վեր՝ իրար հետ հաղորդակցվելով հազիվ լսելի շշուկով ու ժեստերով: Բնավ հեշտ չէր կաղ ոտքով վեր ելնելը, թեկուզեւ ամուր ձեռնափայտով, բայց Վիգենն աննկատ ջանում էր վստահելի առաջնորդ լինել: Միաժամանակ պետք էր ուժերը բաշխել հավասարապես՝ դեռ երկար տարածություն ունեն անցնելու: Շուտով նա Արմանին նշան արեց, որ մի փոքր շունչ առնեն մասրենու հսկա թփի տակ, որը մթան մեջ իր կարմիր պտուղներով բոցկլտում էր: Նստեցին պաղ գետնին եւ լարված հայացքները հառեցին աչքի առաջ տրտմորեն՝ ասես գոց աչքերով փոված Ստեփանակերտին, որն իր առօրեական լուսավորությունը դեռ չէր վերստացել. թույլ առկայծող ճրագներն ու հատուկենտ էլեկտրական լույսերը հուշում էին, որ քաղաքը դուրս ընկած է բնականոն



վիճակից, վիրավոր է ու խամրած: Այդ պահին դեռ ոչ ոք չգիտեր, թե որքան ժամանակ ու ավյուն է պետք, որպեսզի կյանքն այնտեղ ծփա նախկինի պես՝ լի վստահությամբ ու ապահովությամբ, ազատությամբ ու երազանքներով, նաեւ՝ գիշերային շռայլ ու խայտաբղետ շողշողանքով: Պատերազմի հուժկու-ավերիչ ավիքը նոր էր անցել Արցախի եւ նրա մայրաքաղաքի վրայով, ուստի դեռ ամեն ինչ թաղված էր մշուշի, անորոշության, տագնապի ու հոռետեսության մեջ: Վիզենը նայում էր մթնշաղախ Ստեփանակերտին ու մտաբերում, թե դեռ երեկ որքան էր հրապուրվում իր լուսահեղ քաղաքով, հատկապես այն թուփերին, երբ, օրինակ, գիշերով իջնում էր Շուշիի բարձունքից կամ մոտակա Քռասնի գյուղի վերին ոլորաններից: Այդ պահերին նա սիրահարի աչքերով էր նայում հարազատ քաղաքին եւ հարյուր թե հազարերորդ անգամ կրկնում ինքն իրեն, որ աշխարհում Ստեփանակերտից ավելի հիասքանչ քաղաք չկա: Հիմա դա ասել չի կարող՝ նրա սրտում անպարտալելի շատ ցավ ու մրմուռ կա - անխնա հրետակոծված ու հրթիռակոծված քաղաքը նորից կույ չէր եկել բազում վերքերի մեջ: Սակայն հենց նոր զգաց, որ թեկուզ ժամ առաջ էր դուրս եկել այնտեղից, միեւնույն է կարոտում է սիրելի քաղաքը, սակայն՝ մեղավորության սիրտ ծակող զգացումով: Վիզենն արդեն քանի օր ներսույզ մտածում էր, որ եթե ինքը մասնակից լիներ պաշտպանական մարտերին, պատերազմն այդքան արյունալի չէր լինի հայրենակիցների համար. գուցե հենց իր բացակայությո՞ւնն է նաեւ եղել պատճառներից մեկը, որ իրենք անսպասելի ու ահռելի կորուստներ են ունեցել՝ խորհում էր նա սրտի սուր ճմլումով:

Վիզենն ու Արմանը պատերազմի օրերին էին զգացել, թե որքան խոր ու անկեղծ են սիրում իրենց քաղաքը, որը հանկարծ բաց թիրախ է դարձել թշնամական հեռահար ու օդային հարվածների դիմաց: Նրանք, ինչպես եւ շատերը, արագ հասկացան, որ քաղաքն անպաշտպան է օդից, մինչդեռ պատերազմից ընդամենն ամիսներ առաջ երկրի ղեկավարությունը հայտարարում էր, թե

Ստեփանակերտն այլեւս հուսալիորեն պաշտպանված է «օդային տանիքով»: Մոլեգնորեն հրետակոծվող եւ շենք առ շենք, տուն առ տուն վնասվող քաղաքը երիտասարդներին մեծ ցավ ու դառնութիւն էր պատճառում, եւ նրանք այդ զգացողության մասին բարձրաձայն, գուցեւ ավելորդ հուզականությամբ, արտահայտվում էին ապաստարանում...

Վիգենը ուսապարկից հանեց ջրով լի երկու պլաստիկե շիշ եւ անձեռոցիկի մեջ փաթաթված երկու բրդուճ, որ ինքն է՛մ պատրաստել այդ արշավի համար: Մի շիշ ջուրն ու բրդուճը տվեց Արմանին:

– Ուժ առ, մենք դեռ շատ էներգիա պիտի ծախսենք:

– Շնորհակալ եմ, եղբայր,– զգացված արծազանքեց Արմանը: Նա ընդհանրապէս մտահան էր արել, որ ճանապարհ գնացողը պետք է սնվելու եւ խմելու ինչ-որ պաշար վերցնի հետը:

Միառժամանակ լուռ ուտում եւ ջուր էին խմում: Կարծես նախապէս պայմանավորված՝ երկուսն էլ ջրի մեծ մասը թողեցին շշում, իսկ բրդուճի՝ կեսը, եւ դրանք խնամքով տեղավորեցին ուսապարկում: Ապա Արմանը մասուր քաղեց իրենց քսվող ճյուղերից եւ լցրեց գրպանը:

– Տե՛ր Միսաքը մասուրով թեյ շատ է սիրում, կտամ նրան,– բացատրեց:– Ժողովրդական խոսքը գիտե՞ս՝ մասուր ուտելը հավետ ա, հետույք քորելը՝ պատուհաս:– Քթի տակ թեթեւ խնդմնդալուց հետո հարցրեց.– Ուզո՞ւմ ես՝ քեզ համար էլ քաղեմ, Վիգեն:

– Չէ, ես մասուրով թեյ չեմ սիրում, այ, ուրցն ուրիշ է:

– Լավ, քեզ համար ուրց եմ խոստանում առաջիկա օրերին: Էս տեղերում էլ կա, նկատել եմ, բայց հիմա քաղելու ժամանակը չէ:

– Ապրես, ուշադիր ես ու ճիշտ ես կողմնորոշվում,– մեծավարի ասաց գլխավոր հետախույզը, որ ընկերոջից փոքր է մոտ հինգ տարով, բայց հմտորեն օգտվում է «աստիճանակարգությունից»:– Հեռախոսիդ ձայնն անջատել ես,– հանկարծ հարցրեց նա:

Արմանը հապճեպ ստուգեց գրպանի հեռախոսը եւ զարմանքով գոչեց.

- Օ՛ գրողը տանի, ճ՛շ,- ասաց ու փութով անջատեց հեռախոսը:
- Կամայ՛ց,- հանդիմանանքով շշնջաց Վիգենը՝ ցուցամատը շուրթերին դնելով:

Արմանը մեղավոր ժպիտով գլուխը կախեց եւ սպասեց Վիգենի հետագա հրահանգներին: Բայց գլխավոր հետախույզը պարուրվեց լուռությամբ, եւ մի պահ Արմանին թվաց, թե ընկերը մոռացել է իրենց հույժ անելիքը եւ անպատեհ սուզվել չգիտես թե ինչ խոհածության մեջ: Իսկ Վիգենը մտովի զրուցում էր Մարիայի հետ, նրան թվարկում այն փաստարկները, որոնք իրեն իրավունք են տալիս լինել նրա կյանքի ուղեկիցը՝ զինված սիրով ու հավատարմությամբ: Ինքը շատ արագ կտվորի խոստումների անծայն լեզուն, ընդունակ է՝ չի պարի, արդեն իսկ որոշ բան գիտի մատնախոսությունից ու դիմախաղից: Իր սերն էլ կխոստովանի, նախ, համր ժեստերով, ապա՝ բարձրաձայն:

- Արման, ի՞նչ գիտես Մարիայի մասին,- մեկեն հարցրեց Վիգենը:

- Նա հրաշալի աղջիկ է, գեղեցիկ, հմայիչ,- անմիջապես պատասխանեց Արմանը՝ հասկանալով, թե քիչ առաջ ինչ խոհերի մեջ էր թաղված ընկերը:

- Դե, էդքանը ես էլ գիտեմ, բոլորը դա գիտեն: Ուրիշ ի՞նչ կարող ես ասել,- հարցապնդման անցավ Վիգենը:

Արմանը կարճատեւ խորհեց:

- Նա մաքուր վարքի տեր, լրջմիտ աղջիկ է, ազնիվ հոգի ունի, բայց...- նա կծեց շրթունքը՝ աստուսալով բերանից դուրս թռած ավելորդ բառի համար: Դա մի «բայց» էր, որ հետո մտատանջելու է Վիգենին՝ երբեւէ չունենալով կասկածները հաստատող ոչ մի ապացույց:

- Ի՞նչ «բայց», - զգաստացավ Վիգենը:

- Դե, առանձնապես ոչինչ... Ուղղակի պիտի մի որոշ ճանապարհ կտրես նրան «յուրացնելու» համար: Նա ոնց որ թե... եթե-րային լինի՝ ինչ-որ անմատչելի գաղտնիքով քողարկված... Շատ է

կապված Տեր Միսաքի հետ, նրա հովանու տակ իրեն երջանիկ ու ապահով է զգում:

- Կամ էլ քահանայի պահապան հրեշտակի դերն է կատարում,- աննկատելի չարախնդությամբ հավելեց Վիգենը:

Արմանին անակնկալի բերեց ընկերոջ այդ «խանդոտ» կռահումը: Ինքն էլ երբեմն ենթագիտակցաբար խորհում էր, որ ավելի շուտ Մարիան է հովանավորում Տեր Միսաքին, եւ ոչ թե հակառակը: Բայց դա այնքան դժվար ապացուցելի ենթադրություն է: Արմանը չցանկացավ ընկերոջ հետ խորամուխ լինել այդ հարցի մեջ, մտածելով, որ դա կարող է մարդկային ճակատագրեր խճողել, ուստի փորձեց զրույցը թեքել առավել հաճելի ուղղությամբ:

- Արի Աստծո անիմանալի գործերին չխառնվենք, եղբայր: Մարիան իսկապես հրաշալի աղջիկ է, եւ լավ կանես՝ նվաճես նրա սիրտը... Դա քեզ կհաջողվի, Վիգեն, կասկած չունեմ,- ասաց ու ձեռքով թփթփացրեց ընկերոջ ուսին:- Միայն խոստացիր, որ հարսանիքիդ քավորը ես եմ լինելու:

Վիգենը մի պահ երկմտեց:

- Լավ, Արման, քավորը դու կլինես...- ի վերջո պատասխանեց նա:

- Հոյակնա՛յ... Աստված լսի ձենդ: Լավ նվեր կառնեմ հարսնացուիդ համար... ոսկե ապարանջան,- իր անելիքն իսկույն որոշեց Արմանը, ապա կամեցավ մի փոքր զվարճացնել ընկերոջը:- Որպես ամուսին շատ կշահես, Վիգեն... կինդ գեղեցիկ ու լավիկ...

Վիգենը մթության մեջ լայն ժպտաց՝ զսպելով փոթկոցը:

- Դե, լավ, արի «հոպ» չանենք առուն անցնելուց առաջ,- փորձելով լրջանալ՝ ասաց նա, ապա մտաբերելով գլխավոր հետախույզի պարտականությունները, ավելացրեց.- հերիք է երեխու պես բլբլացնենք, շարունակենք մեր ճամփան:

Երկուսով արագ ոտքի ելան: Վիգենը շտկեց հանդերձանքը, թափ տվեց իրեն եւ, ասես թե նոր հիշելով, որ մոտը հեռադիտակ կա, առավ աչքերին եւ մի քանի վայրկյան մտասույզ նայեց խավա-

րոտ Ստեփանակերտին: Նա ականա ձեռքը մեկնեց առաջ, կարծես ցանկանալով շոշափել հեռադիտակով մոտիկ հայտնված քաղաքը:

– Մեր շենքը հազիվ է երեւում... ձերն էլ... Լավ, գնացի՛նք,– ասաց Վիգենն ու առաջ ընկավ զառիվերով:

Արմանը փութով հետեւեց նրան՝ խաչակնքելով ու քրթմնջալով՝ «Աստված թող օրհնի մեր ճամփան, Տերը մեզ օգնական»: Լռելյայն ու վստահորեն բարձրացան եւս կես ժամ. Վիգենը, ըստ էության, նոր ճանապարհ չէր բացահայտում իրենց հետագա գործողությանների համար, նա Արմանի հետ պարզապես անցնում էր այն արահետներով, որ սերտաձ գիտեր դպրոցական տարիներից, երբ ամառային օրերին ընկերներով գալիս էին այս վայրերը ժամանցի համար: Մոտակա Կարկառ գետում լողանալուց հետո նրանք սովորաբար թափառում էին վայրի թփերով պատված այս լանջերին, քաղցրածոր ու խոշորահատիկ մոշ էին ուտում, հավաքում ծաղիկներ իրենց մայրերի, քույրերի եւ թաքուն սիրած աղջիկների համար:

– Չլուսանկարենք մեր անցած ճանապարհը, Վիգեն,– կամացուկ հարցրեց Արմանը եւ հանեց ձեռքի հեռախոսը:– Գուցե *վիդեո* հանենք...

– Չէ, չէ, պետք չի՛, ես անգիր հիշում եմ մեր անցած ճամփան,– շրջվելով՝ իսկույն առարկեց գլխավոր հետախույզն ու ընկերոջը նշան արեց, որ հեռախոսը դնի գրպանը: Արմանը հնազանդ կատարեց նրա հրահանգը:– Համ էլ լուսանկարելիս կարող են ազարները նկատել մեզ... Ես նկարիչ Մովսեսին հեռախոսի մասին ասել եմ, որպեսզի նա մեզ հետ չգա, շատ դժվար էր լինելու նրա համար՝ ծանրամարմին ու վաթսուն տարեկան մարդ է. էսպիսի տեղերը կարող են մազլցել մեզ նման ջահելները:

– Հա,– ուրախությամբ հաստատեց Արմանը՝ իր վտիտ մարմինը պատկերացնելով ուժով ու կենսունակությամբ լի:

Թեպետ ամպամած գիշեր էր, Վիգենը շատ բան էր նկատում իրենց ճանապարհին՝ զինվորական հագուստի կտորներ, պայթած

ու չպայթած արկեր, փամփշտակալներ, մոռացված, թե՛ դեն նետված ինքնաձիգ, սանիտարական պայուսակ, – եւ նա շնչոցով ու ժեստերով այնպես էր կառավարում իրենց ընթացքը, որպեսզի Արմանը պատերազմական այդ մնացուկների վրա ուշք չդարձներ. Վիգենը դեռ չգիտեր, թե իր եկեղեցական սպասավոր ուղեկիցը որքան ոգեկան արիություն ունի՝ անցնելու նման ճնշիչ վայրերով: Բայց այն, ինչ նա շուտով հայտնաբերեց, ցավոտ անակնկալի մատնեց գլխավոր հետախույզին. զինվորի մարմին էր ընկած մոտակա թփի տակ: Վիգենն ինքնաբերաբար բռնեց ընկերոջ ձեռքը եւ քարացավ տեղում: Նաեւ Արմանի աչքին զարնեց այդ սրտաճմլիկ պատկերը: Թեեւ երկուսն էլ այլայլված էին, փորձեցին վերգտնել սառնասրտությունը եւ մոտեցան ընկածին. յուրային դեմքով զինվոր էր՝ մոտ երեսուն տարեկան, զինվորական համազգեստի տակից երեսում էր քաղաքացիական շորը՝ ձեռագործ սվիտերը. ուրեմն կամավորական է՝ եզրահանգեցին հետախույզները: Վիգենը ծնկներում թուլություն, իսկ ներսում հեղձուկ զգաց, ակամա նստեց դիակի կողքին եւ գլուխն առավ ձեռնափերի մեջ: Արմանը կանգնած խաչակնքում էր՝ չշնչալով ոչ մի բառ:

Անցավ ծանր լռության մի քանի րոպե՝ հոգեհանգստյան չհայտարարված արարողության պես: Դպիրն առաջինը վերգտավ սթափությունը եւ տնտղեց ընկած զինվորի ծոցագրպանը. այնտեղից հանեց մուգ կանաչ զինգրքույկը, բացեց ու կարդաց՝ *Հովհաննես Սարգսի Մանուկյան, ՀՀ Գործիսի զինկոմիսարիապ: Զինգրքույկը դրեց գրպանը, ապա մի րոպեի չափ ակնդետ նայեց տարաբախտ կամավորականին. աչքերը փակ էին, դեմքն այնքան էլ գունատ չէր, եւ դա տարօրինակ թվաց Արմանին: Ինքը Տեր Միսաքի հետ հաճախ էր մասնակցում հուղարկավորությունների եւ մեռյալների դեմքերի մասնագետ է դարձել. դրանց նայելով՝ նա կարող է գրեթե անսխալ փաստել, թե հանգուցյալն ինչ խավից ու քանի տարեկան է, երբ է հոգին ավանդել, նույնիսկ՝ ինչ հոգեկան ու ֆիզիկական տվայտանքներ է տարել մահտարածամին: Դպիրը նայում ու*

տենդագին մտածում էր, որ գորիսցի կամավորականը կարծես թե նոր է հրաժեշտ տվել կյանքին՝ դեռ չխամրած կենդանություն էր նշմարվում դեմքին: Արմանը, նախ, ձեռքը դրեց զինվորի ճակատին՝ նրա ջերմությունը զգալու համար, ապա ստուգեց քներակը, հետո ականջը դրեց կրծքին եւ գլուխը տարակուսած տարուբերելով՝ կանգնեց: Մի երկվայրկյան էլ ակնդետ նայեց տարաբախտին եւ շնչաց Վիգենի ականջին.

– Ասես կենդանի լինի, նայի՛ր:

Վիգենը բացեց աչքերն ու նայեց ընկածին, ապա կրկին փակեց. զգաց, որ դեռ անպատրաստ է մարսելու մահվան տեսարանը: Բայց հավաքեց ամբողջ արիությունը, դանդաղ ուղղվեց եւ մոտեցավ զինվորին, նայեց նրա միրուքոտ դեմքին ու անշարժացավ: Հինվորը պառկած էր մեջքի վրա՝ գլուխը մի փոքր ձախ շեղած: Վիգենը զգուշորեն աջ կողմի վրա թեքեց նրա մարմինը, եւ հետախույզները նոր տեսան սպանվածի վերքը. նա խոցված էր ձախ թիակի ներքեւից, լերդացած արյուն կար վերքի տակ, կամավորականն այդ դիրքով ասես փորձել էր կասեցնել արնահոսությունը: Վիգենն առաջվա դիրքին վերադարձրեց զինվորի մարմինը եւ գլուխկախ ու զգաստ կանգնեց՝ պատվո հրաժեշտ տալու: Արմանը վարվեց նույն կերպ, բայց աչքը չէր կտրում զինվորից: Լռությամբ հարզանքի տուրքի մատուցման մեկ րոպեն անցավ ասես ժամի չափ՝ դա զգացին երկուսն էլ:

– Ինչ անենք,– հարցրեց Արմանը եւ կրկին մոտեցավ ընկածին:– Արտաքուստ սպանվածի պես է, բայց ես կենդանության նշույլներ եմ զգում նրա մարմնում:

Դպիրը մեկ անգամ եւս կռացավ խոցված կամավորականի վրա, սեւեռուն նայեց նրա կիսափակ աչքերին, շոյեց դեմքը, ապա մատները մոտեցրեց քթին ստուգելու՝ շնչառություն ունի, թե՛ ոչ:

– Նա կոմայի մեջ է,– ի վերջո ասաց Արմանը,– նա դեռ մեռած չէ, կարելի է փրկել:

– Համոզված ես,– կասկածեց Վիգենը:

- Հա՛,- վճռական պատասխանեց դպիրը:- Նրան պետք է շտապ տեղափոխել հոսպիտալ: Բայց, նախ, վերքը վիրակապեմ, որ ճանապարհին լրիվ չարյունազրկվի:- Ասաց ու գրպանից հապճեպ հանեց բինտ ու բամբակ, նաե՛լ յոդի սրվակը. վիրավոր զինվորից հեռացրեց բաճկոնը եւ ընկերոջ օգնությամբ արագ վիրակապեց նրան՝ հմուտ բուժակի պես:

- Դու լավ սանիտար կլինեիր բանակում,- գովեց Վիգենը:

- Դիմեցի ու խնդրեցի՝ չվերցրին. նայեցին արտաքինիս ու ասին՝ դու քեզ լավ պահիր՝ հերիք է... Հիմա վերցնենք մեր ընկերոջն ու շտապենք ներքե:

- Սպասիր, զանգեմ հոսպիտալ ու ասեմ, որ նրանք մեքենա ուղարկեն մեզ ընդառաջ:

- Հա:

Վիգենը գրպանից հանեց հեռախոսը եւ թվերն էր հավաքում, երբ մոտեցող շրշյուններ լսվեցին: Արմանը ձեռքը դրեց ընկերոջ հեռախոսին եւ նշան արեց, որ ականջ դնի: Երկուսով լռեցին, ապա տեսան, որ իրենցից քիչ հեռավորության վրա մեկն արագորեն իջնում էր: Ծանոթ կերպարանք էր երեւում:

- Քեռին է,- զարմացած շնչաց Արմանը, ապա փոքր-ինչ բարձրաձայն կանչեց.- Քեռի՛...

- Քեռի՛,- կրկնեց Վիգենը:

Ներքե փութացող տղամարդը կտրուկ կանգ առավ, թեքվեց կանչի ուղղությամբ եւ մի պահ անշարժ ու ականապիշ նայեց տղաներին. մութը խանգարում էր հստակ տեսնել նրանց, բայց իջնողն արդեն վստահ էր, որ իրեն կանչողները յուրայիններ են:

- Ովքե՛ր եք,- կամացուկ արձագանքեց Քեռին:

- Մենք ենք՝ Վիգենն ու Արմանը,- դպիրի ձայնն անթաքույց ուրախություն էր արտահայտում:

Քեռին անվարան մոտեցավ նրանց:

- Էս ի՛նչ եք անում էստեղ,- ճանաչելով տղաներին՝ զարմացած հարցրեց նա եւ գրկախառնվեց նրանց հետ:



Քեռու ցածրաձայն բասը, միեւնույն է, բարձր էր հնչում: Արմանը նշանացի հասկացրեց, որ նա ավելի կամաց խոսի: Քեռին ձեռքը թափ տվեց ազերիների կողմը՝ հասկացնելով, որ իրենց չեն լսի:

– Եկել եք աճյուն տեղափոխելու,– նկատելով ընկած զինվորին՝ խոսվածայն հարցրեց նորեկը:

– Չէ, Քեռի, դրա համար չենք էստեղ, բայց հիմա ստիպված ենք դա անել,– պատասխանեց Վիգենը եւ Արմանի ռեպլիկների ուղեկցությամբ կարճառոտ բացատրեց իրենց առաքելության նպատակն ու անակնկալ իրավիճակը: Ապա չհամբերելով՝ հարցրեց.– Իսկ դուք էստեղ ի՞նչ եք անում, Քեռի:

– Տղայիս՝ Տիգրանին էի փնտրում, գտա: Նա իր ջոկատով դեռ Շուշիում է, չի ուզում դուրս գալ, ասում է՝ գործ ունենք անելու... Բայց սա գաղտնի տեղեկություն է, չտարածեք:

Տղաները գլխով արին:

– Լավ, չուշացնենք, մեր վիրավոր տղային, իրոք, պետք է շտապ տեղափոխել... Ուրեմն վարվում ենք էսպես. ես վերցնում եմ նրան եւ հասցնում հոսպիտալ, իսկ դուք շարունակեք ձեր հետախուզությունը: Աշխատեք թթենու այգով մտնել քաղաք, բերդապարսպի ծախ կողքով, էստեղով հարմար է, ինքս գնացի-եկա էդ ճամփով:

– Բայց ձեզ համար մենակ դժվար կլինի, թող Արմանը օգնի ձեզ, Քեռի, ես մենակ կգնամ:

– Չէ, մենակ չես գնա, ընկերոջդ հետ կլինես,– հոգատար հոր խստությամբ ասաց Քեռին:– Հապա մի ինձ նայեք՝ էս հսկան ի՞նչ մի դժվարություն պիտի ունենա մեր էս նիհարոտ ջահելին տեղափոխելիս,– պարծենկոտաբար ասաց նա եւ տղաների ուշադրությունը բեւեռեց իր պարթեւահասակ մարմնի վրա:– Դե, շարժվեցինք, դուք՝ վերեւ, ես ու վիրավոր ընկերը՝ ներքեւ,– հրահանգեց Քեռին եւ հմտորեն ուսին առավ մահաքնի մեջ գտնվող կամավորականին:– Զգույշ եղեք եւ շուտ վերադարձեք, ավելորդ արկածախնդրություն չանեք,– ասաց ու սկսեց իջնել:

- Սպասիր, Քեռի,- նրա ետելից կամաց կանչեց Վիգենը,- զանգեմ հոսպիտալ ու ասեմ, որ սանիտարական մեքենան ձեզ դիմավորի «Մազե կամրջի» մոտ:

- Պետք չի, ինձ մեքենա է սպասում ներքեում, ժամանակին տեղ կհասցնենք,- առանց ետ շրջվելու պատասխանեց Քեռին եւ փութացրեց վարընթացը:

Վիգենն ու Արմանը սպասեցին այնքան, մինչեւ Քեռին իր թանկագին բեռան հետ անհետացավ խավարում:

- Գորիսցի մեր ընկերը նորից կյանք կառնի. Քեռին արագաշարժ եւ ուժեղ տղամարդ է, նրան շուտ հոսպիտալ կհասցնի... Մենք հազիվ թե կարողանայինք երկուսով ապահովել էդպիսի արագաշարժություն, ինչն էս պահին չափազանց կարետոր է,- մեխախոսելու պես ասաց Արմանը:

- Հա, ճիշտ ես, եղբայր, մեկս՝ կաղ, մյուսը՝ թուլիկ-մուլիկ,- ընկերոջ խոսքը չարաճճի տոնով հաստատեց Վիգենը: Ապա լրջորեն ավելացրեց.- Թող Աստված մեր վիրավորին նոր կյանք պարգևի:

- Տերը կտա էդ կյանքը,- հավատով ասաց դպիրը:- Քեռին լավ է տեսնում Աստծո մատնանշած ուղիները:

- Լավ, բարձրանանք,- ասաց Վիգենն ու եռանդուն շարժվեց առաջ, դարձյալ ցանկանալով ուղեկցին ցույց տալ, որ իր հաշմանդամ ոտքն առանձնապես չի խանգարում վերելքին: Քթի տակ ժպտալով՝ նրան անխոս հետեւեց Արմանը: Նպատակասլաց բարձրանում էին՝ ասես լիովին սեւեռված իրենց առաքելության վրա, բայց որոշ ժամանակ երկուսի մտքում էլ մահաթմբի մեջ հայտնված կամավորականն ու Քեռին էին:

Քեռին՝ Ռուբեն Բագրատյանը, ապաստարանի մարդկանց միացավ պատերազմի առաջին օրերին: Նա Երեւանից Արցախ էր եկել, իր բացատրությամբ, որդու կողքին լինելու համար, ով անմիջապես կամավորագրվել էր ու մեկնել ճակատ: Բայց պատերազմի բոցերով կրկին բռնկված երկրամաս գալու այլ, ոչ պակաս հզոր, պատճառներ եւս ուներ, որոնց մասին գերադասում էր լռել: Ռուբենը հին

ազատամարտիկներից է, մարտական բուռն ուղի անցած մարդ. Արցախյան առաջին պատերազմում երկու անգամ վիրավորվել է եւ աչքի ընկել քաջությամբ ու հնարամտությամբ: Խորհեց, որ այս անգամ էլ կարող է օգտակար լինել հայ մարտիկներին, եւ քանի որ կար նաեւ անձնական շարժառիթ, որոշեց գնալ-միանալ տղայի ջոկատին, նեցուկ լինել իր փորձով, այդպես՝ կրկին պարտք կատարել եւ քաջալերել որդուն. նա իր միակ զավակն է, իսկ մի-նուճարի համար ծնողները սովորաբար ավելին են անում՝ անմնացորդ տուրք տալով ցեղը շարունակելի դարձնելու հոգետոր ու կենսաբանական պահանջին: Որդին՝ Տիգրանը, երիտասարդ գիտնական է, երկու փոքրիկների հայր, եւ չունի զինվորական փորձի այն պաշարը, որը պետք է նմանատիպ անողոք կովում: Բայց նա հորը ջոկատում հանդուրժեց լոկ երկու օր, պատճառաբանեց, թե արդեն տարիքով է, սրտի նոպաներ է ունենում, ուստի պահանջեց, որ նա վերադառնա տուն, չէ՛, նրան պարզապես քշեց ջոկատից: Որդիական ու տղամարդկային պատվախնդրությունը Տիգրանին թույլ չէին տալիս, որ հանդուրժեր հոր մշտական ներկայությունը՝ ինքը հո պապայի բալա չէ: Ռուբենը հեռացավ ջոկատից, սակայն Երեւան չվերադարձավ... Նա Սբ. Աստվածամոր Հովանի եկեղեցու ապաստարանում լինում էր գերազանցապես գիշերները՝ մի փոքր հանգիստ առնելու համար: Քչերը գիտեին, որ նա դարձյալ զինվորագրվել էր: Բարեհոգի, մարդամոտ ու լավատեսություն ներշնչող մարդ լինելով՝ սիրվել էր տեղացիներից, նրա հետ հաճույքով շփվում էին բոլորը: Այստեղ էլ Ռուբենը կնքվեց Քեռի, եւ այդ անունը հետագա օրերին սիրով բարձրաձայնում էին ապաստանյալները՝ անկախ տարիքից: Այնուհանդերձ, գրեթե ամենքի մոտ տպավորություն կար, որ նա խորհրդավոր մարդ է՝ հայտնվում է անսպասելի եւ նույն կերպ անհետանում. Քեռին ասես հույժ գաղտնի առաքելության մեջ էր...

Հետախույզներն անարգել, գրեթե մի շնչով հասան բերդի հարեանությամբ փռված թթենու այգին: Վիզենն ուղեկցին նշան

արեց, որ մի փոքր հանգստանան իր մատնանշած ծառի տակ: Նստեցին ու մեջքները հենեցին հաստ բնին: Նրանք սկսեցին կամացուկ գրուցել շնչոցով ու ժեստերով:

– Էս ծառը շատ անգամ եմ բարձրացել թութ ուտելու, երբ ամառները մի քանի օրով գալիս էի Շուշի՝ հորաքրոջս տուն,– վերհիշեց Վիգենը:– Հորաքրոյրս ընտանյոք ապրում էր էստեղից մի հարյուր մետր հեռու, պապական հին առանձնատանը, այն էնտեղ,– եւ ձեռքով ցույց տվեց ձախ կողմը, բայց մթության մեջ որեւէ բան զանազանելն անկարելի էր:

– Դե ասա քո ծառն է, էլի,– հարեց Արմանը:

– Հա: Սրա վերելում մեծ փչակ կա, էնտեղ կրիա ենք պահել,– ասաց Վիգենն ու բութը վեր պարզեց՝ ցույց տալով փչակի տեղը:

Արմանը երեխայի հետաքրքրասիրությամբ վեր կացավ տեղից եւ տեսավ լայն փչակը: «Սա կարող է լավ բույն լինել նաեւ շան համար... իսկ ավելի շուտ՝ աղավնիների»,– մտածեց դպիրը եւ ձեռքը տարավ փչակից ներս. շատ խորն էր:

– Զգույշ,– ընկերոջ բաճկոնից քաշեց Վիգենը,– կարող է օձ լինել:

Արմանը վախեցած նստեց տեղում, բայց արագ վերգտավ իրեն եւ հանգիստ ասաց.

– Օձը ինձ չի սպանի, նրա թույնից պաշտպանվել գիտեմ:

– Էն յոգայի հնարքներով, որոնց մասին պատմում էիր ապաստարանում,– թեթեւ հեզնանքով հարցրեց Վիգենը:

– Չէ, ես թուրմ ունեմ պատրաստ,– ասաց եւ գրպանից հանեց թղթով ու ցելոֆանով պատված մի փոքրիկ փաթեթ:– Ահա, Տեր Միսաքի տված բաղադրատոմսով եմ պատրաստել:

– Համոզված ես, որ կօգնի:

– Հա, Աստված վկա,– հաստատեց Արմանն ու խաչակնքեց:– Հանգիստ եղիր, եթե քեզ օձը կծի, հակաթույն կտամ:– Ասաց ու ձեռքը դրեց ընկերոջ ուսին:

– Մխիթարեցիր... Լավ, մտնենք քաղաք: Շատ զգույշ եղիր եւ

ինձնից պոկ չգաս. ես քաղաքը լավ գիտեմ, հետեւիր ինձ ստվերի պես, եղամվ...

– Եղամվ, հրամանատար,– արձագանքեց դպիրը եւ ձեռքը տարավ քունքին՝ պատիվ տալով:

– Իրար հետ հաղորդակցվում ենք ժեստերով, ցածրաձայն խոսել միայն խիստ անհրաժեշտ պահերին,– հրահանգը լրացրեց գլխավոր հետախույզը՝ երկու ձեռքով օդում քառակուսի գծելով. այսինքն՝ այդ շրջանակից դուրս չեն գալիս:

– Լավ:

Վեր կացան եւ անաղմուկ շարժվեցին մոտակա շինությունների ուղղությամբ, որոնց մի մասը դեռ կիսավեր է նախորդ պատերազմի օրերից:

– Սպասիր,– շնչաց Վիգենը եւ Արմանին քաշեց մոտակա պատի տակ: Նա տաքատի գրպանից ինչ-որ բան հանեց:– Սրանք *ազարների* զինվորական տարբերանշաններ են, փակցնենք, որ նրանց անակնկալ հանդիպելիս յուրային ձեւանանք:

– Իսկ եթե մերոնց հանդիպենք... Քեռին ասաց, չէ՞, որ իր տղայի ջոկատը դեռ Շուշիում է,– ընկերոջը հիշեցրեց Արմանը:

– Ճիշտ ես, մոռացել էի,– կարճ երկմտանքից հետո ասաց Վիգենը:– Դե, թող գրողի ծոցը կորեն նրանց տարբերանշանները,– մտափոխվելով՝ ձեռքին եղածը նետեց գետնին:

– Չէ, կարող է եւ պետք գան... չփակցնենք հիմա, պահենք ու օգտագործենք ըստ իրավիճակի,– հեռատեսություն ցուցաբերեց դպիրը եւ վերցրեց նետված տարբերանշաններն ու խորթեց գրպանը:

– Ապրեն, հեռատես ես,– ընկերոջը գովեց գլխավոր հետախույզը:– Գնացի՞նք: Օրինիր, դպիր եղբայր, որ ամեն ինչ բարեհաջող անցնի:

– Ես արդեն օրինել եմ ճանապարհին, մասրենու թփի տակ, դու չես լսել ինձ... Աստված մեզ հետ է, եղբայր, գնանք: Հա, ի դեպ, չմոռանաս ցույց տալ ձեր շենքը:

– Անպայման:

Վիզենն Արմանին դեռ ապաստարանում էր պատմել, որ ինքը ծնվել է բերդաքաղաքում, 1995-ին, ծնողների երրորդ երեխան է երկու քույրերից հետո: Արցախյան առաջին պատերազմի ավարտից ամիսներ անց նրա հայրը պաշտոնի էր նշանակվել Շուշիի շրջանային վարչակազմում, եւ ընտանյոք ապրել Սբ.Ղազանչեցոց եկեղեցու հարեանությամբ գտնվող շենքերից մեկում, ուր ծառայողական բնակարան էին տրամադրել: Այստեղ էլ անցել է Վիզենի մանկության առաջին հինգ տարին: Հոր աշխատանքային նոր նշանակման պատճառով նրանց ընտանիքը վերադարձել է Ստեփանակերտ: Այդու ստեփանակերտցի է Վիզենը: Բայց այդ գիշեր նա համակված էր Շուշիի հուշ ու ոգով, եւ ներքուստ զգում էր, որ ժամանակն իրեն նախապատրաստում է մեծ փորձության: «Չկորցնես սառնասրտությունդ, եղբայր, յոթ կչափես, մեկ կկտրես»,– չգիտես՝ լոկ այդ օրվա՞, թե՞ ողջ կյանքի համար էր մտովի իրեն քաջալերում ու հորդորում տաքարյուն գլխավոր հետախույզը՝ դպիր ընկերոջն առաջնորդելով գիշերային բերդաքաղաքով, որ այլեւս զավթված ու անհյուրընկալ է: Իսկ ամենից առաջ նա ջանում էր առաջնորդել ինքն իրեն:

Լուսինը հանկարծակի շողաց ամպամած երկնքում գոյացած ընդարձակ բացվածքից՝ իր բոսորասպիտակով ու լրումով. անթերի ու գեղեցիկ լիալուսին էր, որ անակնկալ հայտնությամբ կարծես ցանկանում էր ինչ-որ ակնարկներ հղել երիտասարդ հետախույզներիին: Նրանք սկզբից բավական զգուշորեն էին տեղաշարժվում, բայց անակնկալ սփռված պայծառ ու անրջական լուսնալույսը տղաներին ասես արբեցրեց, եւ նրանք արդեն ավելի շատ փողոցով ու մայրերով էին քայլում, քան գաղտագողի՝ պատերի տակով: Դա իսկապես շատ վտանգավոր էր, ամեն բոլոր հետախույզների դիմաց կարող էին ցցվել ազերական զինյալները՝ ամեն անցորդի մեջ թշնամի փնտրելով, իսկ թշնամու, իմա՝ հայերի հանդեպ նրանք անողորմ են մոլեգնության չափ: Բայց այդ գիշեր, ինչպես

դպիրն է ասել՝ Աստված իրենց հետ էր, Տերը արկածախնդիր տղաներին հեռու էր պահում շուրջբոլորը ծիկրակող փորձանքից: Կար մի այլ իսկություն ես՝ խորշանք ու զայրույթ հարուցող. Շուշին գրաված ազերիները իսկական սատուռնատոն էին սարքել՝ անզուսպ խրախճանում էին ուր ասես, ինչպես ասես՝ մոռանալով զգոնության մասին: Հարբած ու հաբոգած ազերի զինվորականներն իրենց ախոյանների հասցեին հեռահար հայիոյում ու գոռգոռում էին, ընկնելով պարում ու երգում էին խոպոտածայն, ինքնաձիգներով անընդմեջ օդ էին կրակում, իսկ երբ հասավ գիշերվա ժամը 12-ը, նրանք իսկական հրավառություն սարքեցին. բերդաքաղաքը մի քանի րոպե, գրեթե լիովին, երեսաց իր վերահաս ճակատագրականությամբ՝ արդեն սկսված թալանի եւ առաջին օրվա ընթացքում իրագործված ավերի բազում օբյեկտներով: Ազերիների ցնծության աղաղակների ու աղմուկի ներքո էլ Վիգենն ու Արմանը շրջում էին՝ մերթ խռովահույզ հոգով ու արտասովախառն աչքերով, մերթ՝ ցասումնալից հայեցմամբ, երբեմն էլ սրտապատառ քնշանքով էին քայլում նվիրական ու խոշտանգվող վայրերով: Պետք էր պողպատյա նյարդեր ունենալ՝ չոստնելու վայրագորեն խրախճանող զավթիչների վրա: Վիգենը շարունակ իրեն ու ուղեկցին կամացուկ հրահանգում էր՝ սառնասրտությո՛ւն, սառնասրտությո՛ւն...

Նրանք, նախ, մտան քաղաքային պատկերասրահ, որի գեղեցիկ փայտաշեն դուռն ազերիներն արդեն հասցրել էին կտրել: Դպիրը բազմիցս եղել էր այդ հաճելի ու անդորրավետ հաստատությունում, որ վերանորոգված է ժամանակակից դիզայնով եւ կերպարվեստի գործերի լիարժեք ցուցադրության համար աչք շոյող պայմաններով: Այս շինությունում առաջնորդն արդեն Արմանն էր. նա Վիգենին, որ առաջին անգամ էր մուտք գործել պատկերասրահ, անխոս ու հիացած ցույց էր տալիս հարուստ հավաքածուն: Խախտելով զգուշության պահանջները՝ դպիր արվեստասերը, ընկերոջը՝ թեանցուկ, շրջում էր պատկերասրահի հարկերով, գրպանի հեռախոսով մեկ-մեկ լուսավորում առանձին նկարներ

ու քանդակներ, հենց այնպիսիք, որ ինքն առանձնապես շատ էր սիրում: Երբ հասան գծանկարների շարքին, կանգնեց ու Վիգենի ականջին շնչաց.

– Գառզուի նկարներն են, տես՝ ինչ գրաֆիկա է:

Սակայն Վիգենը պատրաստ չէր կիսելու դպիրի հիացմունքը՝ ինքը ոչ արվեստաբան է, ոչ էլ մի կարգին արվեստասեր, ինքն ընդամենը ավտոմեխանիկ է, այն էլ՝ առանց սեփական արհեստանոցի, առայժմ ուրիշի մոտ է աշխատում օգնականի կարգավիճակով: Բայց, քանի որ ընկերը հիացած էր խոսում այդ «խզբզած» նկարների մասին, մտածեց, որ, երեւի, դրանք արժեքավոր են, եւ նա մի պահ պարուրվեց Արմանի արվեստակրքով, ուշադիր նայեց նկարներն ու կամացուկ ասաց.

– Վարպետի գործեր են:

– Ապրես, նկարչությունից բան ես հասկանում:

– Բա ո՞նց...

Արմանը նկարներից մեկն իջեցրեց եւ մի քանի վայրկյան հրապուրված նայեց պատկերված՝ երկար պարանոցով, սիրունատես ու առինքնող երիտասարդ կնոջը:

– Ինձ միշտ թվացել է, թե ես նրա հետ մի ողջ կյանք եմ ապրել,– ցույց տալով նկարը, ասաց դպիրը:– Սա կտանենք մեզ հետ, իմ ամենասիրած Գառզուն է:

– Լավ ճաշակ ունես...– գնահատեց Վիգենը:– Հետդարձին կվերցնես գեղեցկուհուդ, դեռ շատ տեղեր պիտի մտնենք, ձեռքիդ կխանգարի:

– Լավ:– Արմանը նկարը զգուշորեն դրեց մոտակա աթոռին եւ անջատեց հեռախոսի լապտերիկը:

Նրանք դուրս եկան փողոց, մի պահ գննեցին շրջակայքը՝ ոչ ոք չկար, միայն բարձրագոյ ձայներ էին լսվում դիմահայաց շենքից, ուր դեռ վերջերս տեղական վարչակազմն էր գործում, իսկ հիմա այնտեղ զավթիչները գինարբուքի էին տրված: Հանկարծ բակում երեւացին ինքնաձիգներով զինվորականներ՝ ճոճվելով ու քրքջա-



լով. նրանք հարբած ու «ուռած» էին՝ մտովի արձանագրեցին հետախույզները: Ապա արագ ու անաղմուկ վեր «սահեցին» փողոցով՝ խուսափելով թշնամական զինյալների հետ հանդիպումից: Քիչ անց հասան մի հնաոճ շինության մոտ. նախշագարդ բարձրադիր դռան կողպեքը ջարդված էր հրազենային զարկով եւ փակված՝ մետաղալարով: Վիզենը հմտորեն ետ տարավ ժանգոտ մետաղալարը, եւ տղաները միակամ մտան շինության ներսը: Գորգերի թանգարանն էր: Այստեղ արդեն Վիզենն իրեն յուրային այցելուի պես էր զգում. անցյալ տարիներին մի քանի անգամ թանգարան էր ուղեկցել Երեւանից ու Ռուսաստանից ժամանած իր բարեկամներին ու ծանոթներին եւ նրանց առաջ պարծեցել արցախյան գորգարվեստով: Նա անգամ մի քանի բառով, տանելի գրագիտությամբ, անկարող է բնութագրել այդ գունագեղ ու մատնահյուս գործվածքները, բայց ենթագիտակցորեն ըմբռնում է, թե որքան հոգի, կամք, գեղեցկություն ու պատմություն է պարփակված դրանցում: Իսկ Արմանը, ինչպես եւ պատկերասրահում, այստեղ էլ կարող է գիտուն ցուցավար լինել: Նա իրեն գորգագետ է համարում, քաջատեղյակ է թանգարանի ամբողջ պարունակությանը:

Պատուհանից ընկած լուսնալույսի ներքո հետախույզները նկատեցին, որ բացակա բազմաթիվ գորգեր կան:

– Թալանն էստեղ էլ է սկսվել,– Արմանի ականջին անհանգիստ շշնջաց Վիզենը:

– Կարծես թե՛ ոչ...– շուրջը նայելով՝ արձագանքեց Արմանը:– Գորգերի կեսից ավելին թանգարանի տնօրինությունը հասցրել է տեղափոխել ապահով տեղ,– պարզաբանեց նա եւ կրկին ուշադիր զննեց ցուցասրահը:– Ինչ որ թողել են մերոնք՝ ոնց-որ թե լրիվ էստեղ է... ավելի քան հարյուր գորգ...

Կարեւոր բան հիշելով՝ դպիրը փութաց սրահի հեռավոր անկյունը. փառք Աստծո, այստեղ է նրա ամենասիրելին՝ 17-րդ դարի վիշապագորգը: Ընկերոջ օգնությամբ վար բերեց կախված մեծաչափ եւ աղոտ լույսի մեջ անգամ գրավիչ երեւացող հյուսվածքը, հմտո-

րեն ոլորեց ու տեղափոխեց մուտքի մոտ: Վտիտ Արմանն ասես վերածվել էր հաղթանդամ ատլետի:

– Սա էլ պիտի տանենք,– շշնջաց նա:

– Կարող ենք,– կասկածեց Վիգենը:

– Կարող ենք,– հնչեց կամացուկ, բայց վստահ պատասխանը:–

Աստված մեզ օգնական կլինի:

Հետախույզները մի երկու թույլ եւս շրջեցին ցուցասրահում՝ շոշափելով ու շոյելով թանկագին ստեղծվածքները, ապա անշուկ ելան դուրս՝ կսկծալի խորհելով, որ գորգերի մնացյալ հավաքածուն հազիվ թե հնարավոր լինի փրկել:

Նրանք աչալրջորեն շարժվեցին դեպի Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի, որ գորգերի թանգարանից կարճ հեռավորության վրա է: Տղաներն այդ տարածությունն անցան մեկ շնչով՝ ուշք չդարձնելով անգամ, որ ազերիների մի ջոկատ խելահեղ քեֆի մեջ է իրենցից աջ գտնվող մոտիկ տարածքում, ուր տեղակայված էր Արցախի թեմակալ առաջնորդի կեցավայրը: Հետախույզները եկեղեցի մտան այն պահին, երբ լիալուսինն իրենով փակել էր երկնասլաց գմբեթի վրա բացված մեծ անցքը: Առատ ու շոյիչ լույսով էր ողողված եկեղեցին, լույս, որն ասես անցյալի ու տիեզերքի ամենախոր անկյուններից էր առաքվել:

Տղաները դեռ պատերազմի օրերից գիտեին, որ մարմարափայլ սրբավայր-տաճարը երկու անգամ, գմբեթի գրեթե նույն տեղից, խոցվել է. թշնամական օդուժը հատուկ քինախնդրությամբ ու ստեղծությամբ էր իրագործել պետական բարձր մակարդակով հրահանգված այդ ոճիրը: «Բայց այդպես չես ոչնչացնի դավանանքը, ընդհակառակը, այդպես ճշմարիտ հավատը, սեփական հոգին ու մարմինը զորացնելու պահանջը եռապատկվում է»,– քստմնելի ոճրագործության մասին տեղեկանալով՝ ասել էր Տեր Միսաքը:

Եկեղեցու ընդարձակ սրահը, բեմն ու խորանը ծածկված էին փոշու, փշրված ապակիների, ծեփի ու քարակտորների խառնուրդով. կույրն անգամ կհասկանար միանգամից, որ այստեղ հայտն-

վել է վայրագը՝ իր դարավոր մոլութամբ ու ոռնոցով: Բայց բեմից վեր կախված խոշոր, ոսկեփայլ խաչը դեռ տեղում էր, – դպիրը ներքին գոհունակություն զգաց այդ փաստից եւ խաչակնքեց: Մի փոքր երկար նայելով խաչին՝ խորհեց, թե արդյո՞ք հնարավոր է այն իջեցնել ու տեղափոխել, բայց եզրակացրեց, որ այդ բարձրությունից երկուսով ոչինչ չեն կարող վար բերել, եւ փոխեց մտածումի ուղղությունը՝ թող մնա տեղում, եւ եթե *ազարները* պոկեն այն, ապա անիծված կլինեն հավիտյանս: Դպիրին անասելի ցավ էին պատճառում ընկած-վնասված սրբապատկերները, փլվածքների մեջ հայտնված բուրվառները, գրակալը, աշտանակները, ժամգիրքը, մոմավառոռության սեղանները, գանձանակը, նստարանները, ու թեպետ ցասում էր ալիքվում հոգում, նա ստոիկյան հանգստությամբ փորձեց հաղթահարել հարազատ հավատքի դեմ հասցված եղկելի հարվածը:

Վիզենն անխոս հետետում էր ընկերոջ շարժին ու ապրումներին, սակայն մտադիր չէր մխիթարել նրան. ինչ որ հիմա ցցված է աչքի առաջ, նա այդ ամենը համարեց անխուսափելի հետեանք իրենց միամիտ կեցվածքի: Վայրագի հետ պետք է հարաբերվել վայրագաբար՝ այդ պահին ինքնապաշտպանական կենսունակ միտքն էր վերաբորբոքում Վիզենը: «Եթե ինքներս մեղք գործած չլինեինք մեր իսկ հանդեպ, ոչ մի թշնամի չէր կարող ներխուժել մեր հողն ու մեր տաճարը»՝ խորհում էր նա: Գլխավոր հետախույզը կամեցավ իր մտայնությունը փոխանցել դպիր ընկերոջը, բայց իսկույնետեթ խուսափեց մտադրությունից, քանզի կասկած չուներ, որ Արմանն այնպես է իրեն առարկելու քրիստոնեաբար ու քաղաքակրթական վեհությամբ, որ ինքը չէր գտնելու անհրաժեշտ բառերը՝ նրան համոզելու անողոք կյանքի օրենքների ճշմարտացիության մեջ: Եվ, ընդհանրապես հիմա բանավեճի ոչ տեղն է, ոչ էլ ժամանակը՝ մտածեց Վիզենը եւ փսփսաց Արմանի ականջին.

– Ինձ էստեղ են մկրտել, երբ մեկ տարեկան դարձա:

– Լավ է, չգիտեի...– ուրախաձայն արձագանքեց դպիրը:

- Ուրեմն՝ ես կարգին քրիստոնյա եմ, չէ՞:
- Իհարկե, ոչ մի կասկած:
- Իսկ ավագ քույրս ասում է, թե ես անմիտ հեթանոսի եմ նման:
- Դե, նա կատակում է, մի հավատա:
- Լավ, քեզ կհավատամ... Գնանք:
- Սպասիր,- Վիգենին կանխեց դպիրը եւ սկսեց մրմնջալ խոսքեր, որ կարծես հենց նոր էին գրվել Ավետարանում, եւ դեռ ոչ ոք չէր հասցրել բարձրաձայնել: Բայց դրանք սուրբգրային հին խոսքեր էին՝ ցարդ միլիարդավոր անգամ ընթերցված ու հնչեցված:
- Կենդանի է Աստված, Ով իրավունքս մերժեց, եւ Ամենակալը, Ով հոգիս մաշեցրեց, որ քանի դեռ շունչս վրաս է, ու ռունգերիս մեջ Աստծո հոգին կա, շուրթերս անհրավություն չեն խոսելու, ու լեզուս նենգություն չի ասելու; Քավ լիցի, որ ձեզ արդարացնեմ, մինչեւ մեռնելս իմ շիտակությունը չեմ թողնելու: Հաստատ եմ բռնել իմ արդարությունն ու այն չեմ թողնելու, ու իմ կյանքի ոչ մի օրվա համար սիրտս երբեք չի հանդիմանելու ինձ\*...- մրմնջաց ու ծանր լռեց դպիրը: Վայրկյաններ անց հավելեց.- Տեր Աստված, թողություն տուր մեր մեղքերին:
- Քեզ ոչ ոք էլ չի հանդիմանելու, գնանք, եղբայր, ուշանում ենք,- կամացուկ հրահանգեց Վիգենը եւ թեթեակի քաշեց ընկերոջ թեւից:
- Սակայն առժամանակ դպիրը կանգնած մնաց տեղում, ասես ստուգում էր՝ տեղ հասնվ իր աղոթքը, թե՛ կորավ տաճարի փլվածքների մեջ՝ փոշու ու լռության վերածվելով: Մտածեց, որ միայնակ արտաբերած մրմունջները թույլ ու անձուկ են, ուստի ե՛ն անհասանելի Բարձրյալին: Նա հազիվ թե կարեւորի մի ընկճված մարդու սրտաճմլիկ աղաչանքը: Պետք է այլ կերպ գրավել Տիրոջ ուշքն ու հոգաճությունը: Եվ դպիրն ակնթարթորեն երեւակայեց, որ այս պահին միասնաբար, որպես մի վիթխարի երգչախումբ, ոգե-

\* Հոբի գիրքը, 27

շունչ աղոթքի են ելել մինչ այդ Ղազանչեցոց եկեղեցի մտած հազարավոր իր արնակիցներն ու հայրենակիցները եւ պահանջկոտ տոնով ոգում են. «Աստված, պահապան եղիր քեզ սիրող ազգին»: Երգեցիկ պահանջում են Տերունական շարականի ռիթմով: «Էսպես Բարձրյալը կլսի մեզ»՝ խոհածեց Արմանը եւ գոհունակ հայացքով շրջվեց Վիգենի կողմը: Վերջինս հասկացավ ընկերոջ մոտ տեղի ունեցած դրական հոգեշարժը, ուստի ավելի հանգիստ, բայց վճռական կրկնեց.

– Գնանք:

Այս անգամ դպիրը հնազանդ հետեւեց գլխավոր հետախույզին, բայց եկեղեցու մուտքին չհասած՝ նկատելով հատակին ընկած եռամատ մեծ աշտանակը, վերցրեց ու դրեց դռան մոտ:

– Հա, դա էլ կտանենք,– դպիրի միտքը կռահելով՝ շնչաց Վիգենը եւ խորհեց, որ շատ ծանրաբեռնված են հեռանալու բերդաքաղաքից:

Դրսում խրախճանային նույն ժխորի ձայներն էին հնչում՝ վայնասունի ու կաղկանձի պես: Դեռ եկեղեցու բակից դուրս չէին եկել՝ հետախույզները նշմարեցին փողոցի ներքեւից վերեւ բարձրացող երկու *ասկյարի*, ինչպես ազերի զինյալներին հաճախ կոչում էր Վիգենը: Նա Արմանի հետ անմիջապես պահմտվեց մուտքի մոտ գտնվող մոմավաճառքի կրպակի կողաետեւում: Ասկյարներն ամպագոռգոռ խոսում եւ քրքջում էին հաղթական տրամադրության մեջ: Իսկ երբ հավասարվեցին եկեղեցուն, կանգ առան, ինքնաձիգներով նշան բռնեցին եռահարկ զանգակատան վրա, սակայն նրանցից մեկն ինչ-որ բան ասաց, եւ, մտափոխվելով, միասին օդ կրակեցին: Ապա հայիոյեցին հայերի հավատը՝ թյուրքական լեզուն չիմացողի համար անգամ հասկանալի հոխորտանքով, եւ քինոտ բոռբոռալով, ի վերջո, մտան բակ: Ասկյարները կանգնեցին զանգակատան տակ, եւ հաճույքից արտաբխվող «ուխայներով» բավարարեցին իրենց բնական կարիքը:

Այդ կենդանական թատրոնին ուշի-ուշով հետեւում էին հետա-

խույզները: Վիզենն արագորեն վճիռ կայացրեց: Նա գրպանից հանեց խլացուցիչով ատրճանակը, եւ երբ «թեթեւացած» ասկյարները դուրս էին գալիս փողոց, ուրվականի պես դուրս սահեց թաքստոցից՝ մոռանալով կաղութիւնը՝ ուղղակի սուրաց եկեղեցին պղծողների վրա եւ գնդակահարեց երկուսին էլ. նրանք անձատուն փլվեցին գետնին: Վիզենը երկրորդ անգամ կրակեց հավատապիղծների վրա, այս անգամ՝ նրանց ճակատներին, բայց ոչ ցասումից, այլ՝ որպէս ստուգողական քայլ, մի գործողություն, որ նախկին հատուկչոկատայինը սովորել էր ծառայության օրերին: Հետո նա Արմանին կպարզաբանի, որ ատրճանակի խլացուցիչ հարմարանքը պատրաստել էին ինքն ու վարպետ Բագրատը՝ այդօրինակ իրավիճակների համար:

Իսկ այդ րուպէին դպիրը սարսափից ու ապշանքից քարացել էր տեղում, բայց շուտով վերգտավ իրեն եւ վազելով մոտեցավ Վիզենին ու տապալված ասկյարներին:

– Պիտի սրանց հեռացնենք էստեղից,– շնջաց Արմանը եւ ընկած ասկյարներից մեկին ճարակորեն քարշ տվեց եկեղեցու բակի կողքին տարածված բարձր ու չոր մուխտտերի մեջ: Մյուսին նույն տեղը քարշեց Վիզենը՝ ակամա խորհելով, թե վտիտ ու տկար դպիրին որտեղի՞ց են հանկարծակի հայտնվում թարմ ուժ ու արիություն: Բայց ուներ եւ այլ հարց.

– Դու սրանց պիտի ներե՞իր...

– Հազիվ թե,– երկմտելով պատասխանեց դպիրը...– Սակայն իմ պատիժը կարող էր ուրիշ կերպ լինել:

– Օրինակ...– ձայնին խստություն հաղորդելով՝ հարցրեց Վիզենը:

Դպիրը միառպահ մտածմունքի մեջ ընկավ:

– Չգիտեմ... Ինձ մի նեղիր, եղբայր,– նեղսրտեց նա:

– Չեմ նեղում, հանգիստ կաց,– հավաստիացրեց Վիզենը եւ ընկերաբար խփեց դպիրի ուսին:– Գնացի՞նք, ուշադիր եղիր, հարբած ու լկտի ասկյարների դեռ էլի ենք հանդիպելու... Սպասիր...–

Վիզենը սպանված ասկյարներից վերցրեց ինքնաձիգները եւ մի փոքր զննելով՝ մեկը հանձնեց Արմանին, մյուսը պահեց իրեն:

Դպիրն անակնկալի եկավ՝ զենք առաջին անգամ պիտի կրեր, այն էլ այսպիսի պատասխանատու գիշերը, ապա համակերպվելով՝ ինքնաձիգը կախեց ուսից:

– Քոնը «Կալաշնիկով» է, իսկ իմը՝ թուրքական... Ավտոմատը լավ էլ սազում է քեզ,– ընկերոջը ոտից գլուխ թռուցիկ զննելով՝ խնդմնդաց Վիզենը:

Արմանի ինքնապաշտպանական բնազդը մինչեւ «օպերացիայի» ավարտն արթուն մնաց, թեւ առանձին դրվագներում անօգնական տեսք ուներ: Բայց Վիզենը միշտ կողքին էր, եւ դպիրը նրա ներկայությամբ իրեն վստահ էր զգում: Երբեմն նաեւ փորձում էր նախաձեռնող լինել, ինչպես այդ պահին, երբ գրպանից հանեց ազերական համազգեստի տարբերանշանները եւ հրահանգելու պես ասաց.

– Փակցնենք սրանք, պետք կգան:

Այս անգամ ենթարկվողը Վիզենն էր: Նրանք լուռումունջ համազգեստին փակցրին օտար տարբերանշանները եւ համրաքայլ շարժվեցին վեր: Քիչ անց գլխավոր հետախույզը նշան արեց, որ թեքվեն ձախ եւ գնան դեպի բազմաբնակարան շենքերը տանող խճապատ փողոցով: Շուտով նրանք հայտնվեցին հնգահարկ մի շենքի մոտ, որի նեղ բակից վեր՝ տափարակի վրա, խաղահրապարակն էր, ուր կար մի վիթխարի խաղողենի՝ անհույս տերեւաթափի մեջ:

– Տէս, մեր շենքն է,– թեթեւ հուզմունքով շնջաց Վիզենը:– Գնանք խաղահրապարակում մի քիչ նստենք ու հանգստանանք:

Արմանը հետեւեց ընկերոջը, ով, շուրջը զննելով, հուշիկ հասավ խաղողենու տակ եւ մեղավորի պես ծվարեց փայտյա նստարանին: Դպիրը հոգնած նստեց նրա կողքին:

– Ահա մեր նախկին տունը՝ չորրորդ հարկում:– Վիզենը մատնացույց արեց իրենց դիմաց երեւացող կապտաներկ, փակ պատշ-

զամբով բնակարանը:– Էն ժամանակ դեռ բաց էր պատշգամբը... Էնտեղից մի օր քիչ էր մնում ընկնեի, քույրս հագիվ բռնեց... Չորս տարեկան էի, ինձ մի պահ թվացել էր, թե կարող եմ ցատկել ու հասնել էստեղ՝ խաղողենու մոտ... Հայրս է տնկել, իմ ծծնդյան օրվա առթիվ:– Վիզենը թախծոտ նայեց թափով ձգված մշկախաղողի ծառի ոլորուն ճյուղերին, որոնք վերելում տանիք էին կազմել երկաթյա ձողերի վրա, բայց ասես չբավարարվելով՝ մտել են հարեան ծառերի սաղարթների մեջ եւ միախառնվել դրանց ճյուղերին: Խաղողի բերքը ոչ ոք չէր քաղել, եւ հասունացած սեւ ճուֆերը չորացել ու սմքել էին:– Ինչ էլ շատ բերք կա էս տարի... Էդ չորացած մուսկատ խաղողը լրիվ կուտեի, լրիվ,– կարծես համոզելով բացակա մեկին, ասաց Վիզենը, բայց տեղից չչարժվեց: Նա հանգիստ պոկեց մոտիկ ողկույզը, հոտ քաշեց, որ զգա դրա արբեցնող բույրը, եւ սկսեց սմքած հատիկները բերանը տանել:

Դպիրն էլ մի ողկույզ քաղեց եւ ճաշակելով մտորում էր, որ իր ընկերոջ մոտ նախկին խենթությունից (դե, պատշգամբից ուզում էր ցատկել), համենայն դեպս, ինչ-որ բան մնացել է, թե չէ ինչ են անում իրենք այս վայրագ գիշերը զավթած ու բռնաբարվող քաղաքում, ուր թշնամին սանձարձակ ցնծության մեջ է՝ զուրկ հանդուրժումից, բարեգթությունից ու ներումից: Որտեղ դու հիմա ավելորդ ու մահապարտ ես սոսկ, որտեղ փողոցներն օտարանում են քեզնից, եւ ազատ շրջելու իրավունքից զրկված ես այլևս: Բայց չէ՞ որ իրենք կարող էին ետ վերադառնալ բերդամերձ թթայգուց, երբ արդեն լրիվ կատարել էին բուն առաջադրանքը,– պարզել էին, թե որ արահետներով է առավել հարմար թափանցել բերդաքաղաք: Իսկ գլխավոր հետախույզը թթայգում բառ իսկ չասաց ետդարձի մասին, ուրեմն՝ նա այլ մտադրություն կամ ծրագիր ունի, որ դեռես լիովին պարզ չէ իրեն: Բայց «ընկերամեռ» Արմանը չի կարող մանրախնդրություն անել ու թնկթնկալ, թե «պետք է ետ գնալ՝ վտանգավոր է»: Չէ, ինքն այդ տղան չէ, ընկերոջից ետ կանգնել չի կարող, Աստծո աչքին խորթ կթվա իր փոքրոգությունը: Եվ հիմա



դպիրը գոհ է, որ այս լիալուսնոտ ու կրակահերթերով խոցոտվող գիշերը նստած է ընկերոջ կողքին, նրա մանկության բակում, եւ կրկնապատկում է զինակցի մանկաբույր բերկրանքը իրենցից հեռացող քաղաքում:

– Դու Շուշի ես եկել քաղաքին հրաժեշտ տալու, ճիշտ է,– հանկարծ գյուտ արածի պես հարցրեց դպիրը:

Վիգենը միանգամից չպատասխանեց, շարունակեց ինքնասույզ նայել իրենց նախկին պատշգամբին:

– Գուցե...– ի վերջո տխուր արտաբերեց նա:– Չգիտեմ:

Ապա իջեցրեց ուսապարկը, բացեց ու այնտեղ մնացած բրդուճն ու ջրի շշերը հանեց եւ Արմանին տվեց նրա բաժինը: Մի քանի րոպե ընկերները լուռ ու մտասույզ ուտում եւ ջուր էին խմում: Երբ վերջացրին, Վիգենն այն է՝ պատրաստվում էր ոտքի ելնել, բայց կրկին նստեց տեղում՝ ինչ-որ բան հիշելով: Նա ուսապարկից հանեց թիթեղյա երկու մեծավուն պարկուճ, մեկը՝ սեւ, մյուսը՝ կարմիր շերտագծերով:

– Փշովի ներկեր են սրանք՝ սեւ ու կարմիր,– բացատրեց գլխավոր հետախույզը:– Ուզում եմ, որ խաչեր դնենք շենքերի պատերին, թող թուրքերն առավոտյան իմանան, որ մենք եղել ենք էստեղ: Ու հասկանան՝ դեռ կլինենք էստեղ:

– Լավ,– ասաց Արմանը, թեպետ լիովին չհասկացավ, թե իրենց սեւ ու կարմիր խաչերից ինչու պետք է թշնամին եզրակացնի, որ իրենք դեռ կլինեն այստեղ: Դպիրը կարճ մտորեց, որ Վիգենն այլաբանորեն է իր գաղափարը մատուցում, ուստի, զլուխը մի կողմ թեքելով, թեթեւակի ժպտաց նրա՝ նոր հայտնաբերած այդ հատկության վրա:

– Դու ի՞նչ գույնն ես ուզում:

– Կարմիրը,– անվարան պատասխանեց Արմանը:

– Եղավ,– համաձայնեց Վիգենը եւ կարմիր ներկով պարկուճը հանձնեց դպիրին:– Ուրեմն՝ դու կարմիր խաչեր ես դնում մեր սիրուն շինությունների վրա, իսկ ես սեւ խաչերով կպատեմ մնացած

շենքերը, հատկապես նրանք, ուր հիմա կերուխումի են ասկյարները... Գիտեմ՝ մեր գործը բարդացնում ենք, բայց հավատա՛ պետք է լրիվ խաչի տակ առնել բերդաքաղաքը:

– Ուզում ես ասել, որ Շուշին խաչված քաղաք է, թե՛ խաչի քաղաք է...

– Սեւ խաչը կնշանակի, որ զավթիչները կխաչվեն մի օր, իսկ կարմիր խաչը կնշանակի, որ, այո, Շուշին խաչի քաղաք է:

Վիզենի բացատրությունից Արմանը հաճելիորեն զարմացավ. նրա մտքով մինչ այդ չէր անցել, որ ավելի քան աշխարհիկ այդ երիտասարդը կարող է խաչերի մեջ ներդնել այդքան կենաց իմաստներ: Դպիրը պարզ տեսնում էր, թե իր առաջ ինչպես է ժամ առ ժամ արգասավոր դառնում իր զինակցի մտային ու հոգետոր աշխարհը: Իսկ գուցե այդպիսին էլ կար, պարզապես ինքը չէր նկատել կամ զգացել:

– Լավ, թող Աստված մեզ օգնական լինի նաեւ էս գործում, – օրհնեց դպիրը:

Հետախույզները վեր կացան եւ շոայլ լուսնալույսի ներքո անձնատուր եղան իրենց առեղծվածային առաքելությանը: Նրանք, պահպանելով զգոնություն ու զգուշավորություն, իսկ երբեմն նաեւ մոռանալով կամ զանց առնելով դրանք, մանկական ժրությամբ ու չարաճճիությամբ սկսեցին սեւ ու կարմիր խաչեր դնել տների ու շինությունների պատերին, ծառաբներին, կրպակներին, ցանկապատներին ու պատնեշներին: Ընթացքում նրանք խառնեցին սեւ ու կարմիր՝ պայմանավորված նշանակետերը, եւ այլեւս այդ հանգամանքը կարետոր չհամարեցին: Իսկ շուտով նրանց խաչանկարչությունը ռազմաշունչ բնույթ ստացավ. քաղաքի կենտրոնական մասում բավականաչափ ռազմական տեխնիկա կար՝ տանկեր, հրետանի, զենիթային ու «Գրադ» կայանքներ, զրահամեքենաներ, որոնց անձնակազմերը խրախճանքի մեջ էին մերձակա շենքերում, եւ դրանց հսկողությունը թողնված էր հատուկենտ պարեկներին, որոնք նույնպես խմում ու ծխում էին՝ ոտքի վրա կամ զինտեխնի-

կայի վրա նստած: Նրանց մտքով անցնել չէր կարող, որ իրենց քթի տակ երկու հայ երիտասարդ կհանդգնեն մի ցայտուն նշանով փոխել ազերական տանկերի ու մնացյալի «կրոնական պատկանելությունը»,– թշնամական սպառազինության վրա սեւ ու կարմիր նշանները լուսնալույսի տակ ցոլում էին խորհրդապահական առկայծումներով:

«Խաչակրաց արշավանքի» ելած տղաները, մեկ ժամ անց, ներկաթաթախ ու հոգնած հայտնվեցին Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու՝ Կանաչ ժամի մոտ եւ շանթահար կանգ առան. նրանք նախապես գիտեին, որ այդ գողտրիկ եկեղեցին նույնպես ումբահարվել է, սակայն չէին պատկերացնում, որ այն ավերված է այդ աստիճան եւ նման պիղծ դիտավորությամբ: Ոչնչացված էին եկեղեցու գմբեթն ու զանգակատունը, հիմնական հարկաչափից վեր գրեթե ոչինչ չէր մնացել, դեպի մուտք տանող աստիճանները, ներսն ու գավիթը ծանրորեն խճողված էին փլվածքներով, փայտաշեն դրվագազարդ դուռը պոկված-ընկած էր գետնին: Նույնիսկ անփորձ աչքը կնկատեր, որ այդ համեստ ու սիրունատես սրբավայրին թշնամին հարվածել է տասնյակ արկերով: Դպիրը խաչակնքեց եւ ինչ-որ անլսելի բան մրմնջաց: Գլխավոր հետախույզը նույնպես խաչակնքեց, բայց՝ անբառ ու խոժոռ: Միառպահ նրանք լուռ կանգնել՝ ասես հիշատակի տուրք էին մատուցում դեռ երեկ սքանչելի, իսկ հիմա ավերակ տաճարիկին:

– Մի օր կվերականգնենք, դարդ մի անի,– Արմանի ականջին փսփսաց Վիգենը: Ապա նրա ձեռքից վերցրեց կարմիր ներկով պարկուճը եւ մեծ խաչեր նկարեց եկեղեցու կողապատերին: Նա խաչերի ծայրերը կլորություններով պսակեց՝ մի տեսակ հանդիսավոր տեսք տալով նշաններին. Վիգենը այդպես էր վարվում դպրոցական տարիներին, երբ մեկ-մեկ եկեղեցիներ էր պատկերում: Հետո նրան համակեց մոլուցքը. հայիոյելով թշնամու մերը՝ մի շնչով տասնյակ խաչեր նկարեց ժամի շուրջ փռված պուրակի ծառաբներին, եւ երբ պարկուճը դատարկվեց, նետեց ու հեռավոր

դարձավ ընկերոջ մոտ: Վիզենն ուզում էր շունչը տեղը բերել, երբ թեթեւ խշռոց լսվեց եկեղեցու ներսից. նա մոտեցավ մուտքին, ինքնաձիգն առաջ պարզեց եւ մի փոքր ներս անցնելով՝ նայեց խորքը, բայց փլատակներից բացի ոչինչ չտեսավ: Ետքայլ արեց եւ Արմանին նշանացի հասկացրեց, որ անհանգստանալու պատճառ չկա: Ապա ուշքն ակամա բեւեռեց մուտքի աջ պատին տեղ գտած արձանագրության վրա, որ պարզ երեւում էր լուսնալույսի տակ, եւ փորձեց կարդալ: Իսկ դպիրը կռացավ և սկսեց գետնահար դռան վրա ձեռքը քնքշորեն սահեցնել ու մրմնջալ: Վիզենը մի երկու բառ հազիվ հասցրեց կարդալ պատին փորագրվածից, երբ դարձյալ թեթեւակի խշռունի ձայն որսաց եւ գլուխը ձախ շրջեց. նա տեսավ, թե ինչպես մի զինյալ գողունի դուրս եկավ եկեղեցուց եւ ինքնաձիգն առաջ ցցած՝ մոտեցավ դռան վրա խոնարհված Արմանին: Վիզենի ներսում միանգամից զարթնեց նախկին հատուկջոկատայինի բնագրը. մի ուսոյունով հայտնվեց վերահաս ահաբեկչի մոտ, ձախ՝ վիրավոր ոտքով ուժգին հարվածեց նրա ինքնաձիգին, իսկ աջ ձեռքի ձեռնափայտով շեշտակի խոցեց նրան. վերջինս «ախ» արեց եւ շեղված ինքնաձիգից կարճ կրակահերթ արձակելով՝ տապալվեց գետնին:

Դպիրը սարսափից կուչ եկավ, ապա տեսնելով կողքին փռված զինյալին՝ ետ ընկրկեց ու նստեց գետնին:

– Էս ի՞նչ եղավ, Տեր Աստված,– հազիվ կմկմաց նա:

– Էս ասկյարն ուզում էր, նախ, քեզ դժոխք ուղարկել, հետո՝ ինձ,– ձեռնափայտից դուրս ցցված արյունոտ սուսերը ընկածի կրծքին մաքրելով՝ բացատրեց Վիզենը: Նա ճգնում էր հանգիստ խոսել, բայց ձայնի մեջ սողոսկած տագնապը լիովին քողարկել հնարավոր չէր, եւ դա զգաց Արմանը, ով արշավի ընթացքում առաջին անգամ էր տեսնում ընկերոջը վախեցած: Հետո նրան կմխիթարի, որ նա քաջ ու աներեր տղա է, եւ եթե վախեցել է, ապա լոկ իր՝ Արմանի համար: Բայց այդ պահին նման դատողություններ անել չէր կարող՝ ժամանակը չէր, եւ դպիրը միայն անտեղի հարցրեց.

– Դ՞նու ես սպանել... էդ ձեռնափայտով...

– Հա: Սրա մեջ տեսնում ես՝ սուսեր կա, բացվում-փակվում է կոճակով,– արդեն հանգիստ բացատրեց Վիգենը եւ սեղմեց ձեռնափայտի կոճակը. սուսերը ետ՝ իր տեղն ընկավ:– Ես ու վարպետ Բագրատն ենք սարքել, հենց էսպիսի իրավիճակների համար:

– Բայց էս ասկյարը ո՞նց կռահեց, որ մենք ազերի չենք... Էս տարբերանշաններն էլ չօգնեցին, համ...

– Դե, եղբայր, էս գիշերով ի՞նչ տարբերանշաններ. բան է, էլի, ասիր՝ փակցրինք: Էս ասկյարը երեւի եկեղեցու ներսում գանձ էր փնտրում կամ չգիտեմ՝ ինչ նպատակով էր էնտեղ... Նա մեզ տարբերել է անսխալ, նույնիսկ մեր հայերեն շշուկները չլսելով, երբ մենք էս ավերակ եկեղեցու դիմաց խաչակնքում էինք... Էս գիշերով ո՞ր թուրքը նման բան կաներ, թեկուզեւ կատակի համար:

– Ճշմարիտ ես,– դողդոջուն արտաբերեց դպիրը եւ տեղից բարձրանալով՝ մոտեցավ ու փարվեց Վիգենին:– Շնորհակալ եմ, եղբայր, իմ տկար մարմինը փրկեցիր:

– Դե, վերջ տուր, ընկեր, ես իմ գործն եմ անում: Համ էլ Աստված է, չէ՞, մեզ օգնական:

Դպիրը չարձագանքեց, նայեց սպանված ասկյարին ու Վիգենին, ապա քթի տակ ժպտաց:

– Բայց ինչո՞ւ նա միանգամից չկրակեց ինձ վրա:

– Չգիտեմ... երեւի ուրիշ կերպ էր մտածում,– մեկնաբանեց Վիգենը, ապա կասկածանքով տնտղեց սպանված զինյալի գրպանները եւ հանեց մի վկայական:

– Սա ոնց որ թե արաբերեն գրված փաստաթուղթ է:– Նայեց ու տարակուսած տվեց դպիրին:

– Հա, արաբական գիր է,– վկայականին նայելով՝ հաստատեց դպիրը:– Գուցե նա ազարներին միացած էն վարձկաններից էր, որոնց մասին մերոնք խոսում էին պատերազմի ժամանակ:

– Հնարավոր է,– ասաց Վիգենն ու Արմանի ձեռքից վերցրեց օտարազիր փաստաթուղթը:– Ես սա ցույց կտամ ազգային անվտան-

գության ծառայության իմ ծանոթին, թող իրենք պարզեն սրա ով եւ ինչ լինելը:– Ապա գրպանը դրեց սպանվածի վկայականը:– Քեզ հիմա լավ ես զգում, Արման,– հոգատար հարցրեց նա:

– Հա, եղբայր, ինչ է եղել որ...

Երկուսով զուսպ ու կամացուկ ծիծաղեցին:

– Գնանք,– հրահանգեց գլխավորը, բայց վերստին անդրադարձավ վարձկանին:– Սա թող ընկած մնա էստեղ:– Նա ձեռնափայտը սեղմեց սպանվածի որովայնին:– Գուցե ազարները տեսնեն ու հասկանան, որ սրբավայր պղծելը մահացու մեղք է:

– Համամիտ եմ, եղբայր,– ասաց դպիրը եւ մի քայլ առաջացավ, որ մտնի եկեղեցին:

– Սպասիր, պետք չի մտնել: Էստեղից որեւէ բան հնարավոր չէ տանել, ինքդ ես տեսնում ավերածությունը... Ինչ-որ մնացել է՝ թող մնա Աստծու պահպանությանը, համ...

Դպիրը գլխահակ կանգնեց տեղում եւ միանգամից սուզվեց խոր տրտմության մեջ: Հետո Վիգենին ու մտերիմներին կպատմի, որ ինքն այդ բոստիկն վերապրել է աշխարհի թախիծն ու անարդարությունը: Ավերված հարազատ եկեղեցուց նա պիտի հեռանար անմասն ու մերժված, կարծես մեռյալ արյունակցիդ ես թողնում անթաղ ու անհիշատակ: Նա մտքի մեջ տենդագին կրկնում էր. «Տեր Աստված, մի թող մեզ էսպես... մի թող մեզ էսպես...»:

– Մի օր կվերականգնենք, դարդ մի անի, եղբայր, գնանք,– նորից մխիթարեց գլխավոր հետախույզը եւ ընկերոջ թելը բռնելով՝ նրա հետ ուղղվեց դեպի ելքը: Արդեն մթաշունչ փողոցում էին, երբ ուշացած հետաքրքրասիրությամբ հարցրեց.- Ինչո՞ւ է Կանաչ ժամ կոչվում, Արման...

– Մի ժամանակ գմբեթը կանաչ գույնով էր պատված... Ուզում ես՝ ավելին պատմեմ էդ սքանչելի եկեղեցու մասին...

– Չէ, չէ, հետո կպատմես: Հիմա պիտի լուռուժունջ գնանք:

Նրանք այդու դարձան համակ զգոնություն: Կանաչ ժամի փողոցով իջան ներքեւ եւ թեքվեցին ձախ. քիչ հեռվում տեսան կու-

տակված զինվորական մեքենաներ, որոնց կողքին միայն մի զինյալ կար, նա էլ նստել էր մայթի նստարանին ու ծխում էր, Վիզենը կասեր՝ «ուռում» էր: Մեքենաների հարեանությամբ գտնվող շենքերի բակերում ազերիները շարունակում էին աղաղակներով ու հրագենային կրակահերթերով նշել իրենց հաղթանակը: Հետախույզները զգուշորեն մոտեցան բեռնատար «Ուրալ»-ներին ու զրահամեքենաներին, որոնք, ասես հատուկ հրամանով, խառնիխուռն կայանված էին կողքկողքի՝ կիսալուսնի նշանով: Վիզենն Արմանին նշանացի հասկացրեց, որ նա թաքնվի մոտակա բաց դարպասի ետևում, իսկ ինքն անցավ «գրոհի»: ուսապարկից հանեց դաշույնը եւ արագորեն ու հատու շարժումներով սկսեց ճղել մեքենաների անվադողերը: Թեպետ մի փոքր դժվարությամբ, նրան հաջողվեց «մահացու» հարվածներ հասցնել նաեւ ԵՏՔ-ի պինդ ու հաստ անվադողերին: Վիզենն ընդհուպ մոտեցել էր ծխող ասկյարին եւ մի երկվայրկյան նրան էր նայում ցեխաթաթախ բեռնատարի կողքից: Ասկյարը մի պահ գլուխը աջ ու ձախ շրջեց, բայց տարօրինակ ոչինչ չհայտնաբերելով, շարունակեց «ուռել»: Վիզենի մեջ արթնացել էր նախկին հատուկչոկատայինի կիրքը, եւ նա մտմտում էր՝ սպանել ասկյարին ու նոր հեռանալ, թե՛ մարդասիրաբար թողնել ու գնալ... Ի վերջո, վճռեց ասկյարին ճամփել ի Երուսաղեմ, եւ գրպանից արդեն հանել էր խլացուցիչով ատրճանակը, երբ ենթագիտակցորեն ետ նայեց ու տեսավ, որ Արմանը ձեռքի թափահարումով իրեն ետ է կանչում: Գլխավոր հետախույզն ակամա հնազանդվեց ընկերոջ հորդորին եւ վերադարձավ նրա մոտ:

– Պետք չի, եղբայր, մեզ կբացահայտեն, հեռանանք շուտ,– եւ վախեցած, եւ գիտակի պես շնջաց դպիրը:

Վիզենը գլխի շարժումով համաձայնություն տվեց եւ դպիրի թեւը բռնած՝ երկուսով մտան կողքի ամայի բակը:

– Ուրեմն էսպես, ընկեր,– կամացուկ խոսեց Վիզենը,– անցնում ենք մեր «օպերացիայի» վերջին մասին, դա էլ կանենք ու մեր բեռն առած՝ կվերադառնանք Ստեփանակերտ: Պարտադիր չէ, որ դու

մասնակցես նաեւ էս գործողությանը, շատ անձնական գործ է: Դու կարող ես մոտերքում ինչ-որ ապահով տեղ սպասել, մինչեւ կավարտեմ անելիքս: Դե, ինչ կասես:

– Կասեմ, որ ես քեզ հետ եմ, ուր էլ գնաս՝ հետդ եմ, թեկուզ՝ դժոխք,– հաստատական պատասխանեց Արմանը:

Գլխավորն իրեն շոյված զգաց. այսպիսի ուղեկցի հետ կարելի է գնալ ռազմաճակատ, թշնամու թիկունք՝ ամենաբարդ դիվերսիաների, ուր ասես, անգամ՝ «անմեղ մեղանչումների»՝ արագ խորհեց նա:

– Լավ, բայց նախապես ասեմ, որ մի քիչ երկար ճանապարհ պիտի անցնենք ոտքով, կարո՞ղ ես...

– Բա ոնց, ուզո՞ւմ ես՝ քեզ էլ օգնեմ, եթե հոգնես,– նույն վճռականությամբ խոսեց դպիրը:

– Շնորհակալ եմ, ինձ օգնություն պետք չի լինի, միայն թե դու կարողանաս հաղթահարել ճանապարհը,– ասաց Վիգենն ու նույն պահին ուշք դարձրեց ձախ ոտքի ցավին. ոտքը սկսեց նվալ ու ծակծկել, երբ ուժեղ հարվածեց այն արաբ վարձկանի ինքնաձիգին: Երեւի պրոթեզը տեղաշարժվել է՝ մտածեց նա ու կռացավ, շոշափեց ցավող տեղն ու հասկացավ, որ պրոթեզի ամրակապերից մեկը կտրվել է: Բայց դրա վրա կենտրոնանալու ժամանակը չէր, Վիգենը հապճեպ շտկեց պրոթեզը, ամրացրեց՝ ինչքան հնարավոր է եւ ուղղվեց:– Գնացի՞նք,– հրահանգեց նա եւ առաջ ընկավ փողոցն ի վեր: Արմանը տղայական ոգետրությամբ հետեւեց նրան:

Երբ հասան Ղազանչեցոց փողոցի խաչմերուկը, գլխավոր հետախույզն ուշադրություն դարձրեց աջակողմյան կանաչ տարածքում կանգնած սեւ «Տոյոտայի» վրա, որի բաց թափքում ինչ-որ իրեր կային տեղավորված: Չենք է՝ անվրեպ կռահեց Վիգենը եւ մոտեցավ մեքենային, իսկ Արմանին նշան արեց, որ թաքնվի մոտակա հաստաբուն ծառի ետեւում: Համենայն դեպս, համոզվելու համար, նա մի փոքր ետ տարավ մեքենայի թափքի իրերը ծածկող բրեզենտը, ապա շտկեց այն. թափքում երեք գնդացի, փամփշ-



տակալներ ու ինքնաձիգներ կային: Այնուհետեւ նախկին հատուկջոկատայինը, չէ՛, ներկայիս ավտոմեխանիկը, գործեց հմուտ առեւանգողի պես. բացեց մեքենայի դուռը, տեղավորվեց վարորդի նստատեղում եւ, տեսնելով, որ չկա շարժիչի բանալին, կռացավ ու ղեկատակի ինչ-որ լարեր քաշեց ու միացրեց իրար. մեքենան գործի ընկավ: Այդ արկածին ակնապիշ հետետող Արմանը, առանց սպասելու ընկերոջ կանչին, վազելով եկավ ու տեղավորվեց նրա կողքին եւ անսպասելի, իրեն դեռ անձանոթ ուրախությամբ գոչեց.

– Քշիր, եղբայր, շնուտ:– Արմանի աչքերը փայլում էին:

Շարժվեցին: Վիզենը ժպիտախառն հայացքով մերթ տղայացած ընկերոջն էր նայում, մերթ լուսնալույսի տակ պարզ երեւացող խճապատ ու ոլոր ճանապարհին. նրանք դանդաղ ընթանում էին առանց վառ լուսարձակների: Մոտ տասը բոպե անց, լռելյայն գնալուց հետո, Վիզենը մեքենան ձախ թեքեց ու կանգնեցրեց:

– Իջիր, հասանք,– ասաց եւ ուղղակի դուրս թռավ մեքենայից:

Նրա ետեւից աճապարող Արմանը նոր նկատեց, որ գերեզմանատուն են մտել: Վիզենը մոտեցավ ու համբուրեց ուղղաձիգ, կանաչ մարմարյա հուշաքարի վրա պատկերված սիրունիկ կնոջը, ապա քարե ափսեի մեջ խունկ վառեց: Հետո սկսեց մաքրել շիրիմը եւ կամացուկ ու դանդաղ խոսել: Մինչ այդ հուշաքարին իր աջն էր դրել Արմանը, ապա նստել մոտակա քարե նստարանին:

– Մայրիկս է, քաղցկեղից է մահացել, երբ չորս տարեկան էի... Նա ցանկացավ էստեղ հուղարկավորվել, իր պապական գերեզմանատանը: Էստեղ են թաղված նրա հայրն ու մայրը, հորական ծնողները,– եւ ձեռքն աջ կողմ տանելով՝ ավելացրեց,– էնտեղ էլ մյուս հարազատներն են:– Նա բառերը գրեթե հատ-հատ էր արտասանում՝ ասես ընդգծելու իր տեղեկատվության կարեւորությունը:– Ինձ հայրս, քույրերս եւ Մանուշակ տատիկս են մեծացրել՝ Ղուկաս պապի հետ... Շատ էին սիրում ու երես տալիս ինձ... Ես սիրո, փաղաքշանքի պակաս չեմ զգացել, ուղղակի չեմ վայելել ինձ հասանելիք մայրական սիրո ու խնամքի լրիվ բաժինը...

«Դե, նա գրագետ արտահայտվել գիտե»,– ուրախությամբ մտածեց Արմանը: Աչքերը կկոցելով՝ լուսնալույսի տակ կարդաց հուշաքարի վրայի գեղեցկատառ գրությունը՝ *Ասպրամ Մարդյան, 1966-1999*: Ապա աչքի պոչով արձանագրեց, որ Վիգենի մորական գերեզմանատեղին սովորականից ընդարձակ է՝ շրջանակված մետաղյա ցանկապատով: Այստեղ կանգնեցված հուշաքարերը տարբեր էին իրենց ոճով ու տեսակով, եւ ուշագրավ տարբերությունն այն էր, որ հին, քառանիստ ու եզրանախշ գերեզմանաքարերի գագաթին խաչեր կային, իսկ նորերն անխաչ էին՝ սովորական ուղղանկյուն քարեր, երբեմն՝ վերնամասը թեք հատած:

Վիգենը նստեց Արմանի կողքին՝ կիպ հավելով նրան, ասես ակնարկելով ինչ-որ էական ու հրատապ բան: Դպիրը մի փոքր ուշացումով կռահեց ընկերոջ ցանկությունը եւ վեր կացավ ու մոտեցավ հուշաքարին՝ պետք է խոսել: Բայց նա սպասվածից երկար լռեց, աշակերտի պես կարմրել ու քրտնել էր: Իսկապես, դպիրը հանկարծակի մոռացել էր ավետարանական ու ավանդական այն ասացումները, որ սերտած գիտեր Տեր Միսաքի հետ անցկացրած հոգեհանգստյան բազմաթիվ արարողություններից: Մտքից թռել էր անգամ Տերունական աղոթքը: Եվ նա վճռեց խոսել ըստ սրտի ձայնի:

– Թանկագին տիկին Ասպրամ... Այս լուսնյակ գիշերով ձեզ այցի է եկել ձեր կրտսեր զավակը, ձեր որդի Վիգենը... Երեւի կարիք չկա բարձրաձայնելու, թե դուք որքան սիրել ու պաշտել եք նրան ժամանակին... Չէ, Վիգենը անքնությամբ չի տառապում եւ անզուսպ կարոտը չէ, որ նրան ձեր շիրմի մոտ է բերել այսպիսի ուշ ժամի... Հանգամանքներն են ստիպել, տիկին Ասպրամ... Սա սովորական այցելություն չէ... Վիգենը եկել է ձեզ հրաժեշտ տալու... Պիտի խոստովանեմ, որ շատ ծանր ժամանակներ են սկսվել ձեր որդու, նրա ընկեր-ծանոթների, ամենքիս համար... Շուշին՝ ձեր գերդաստանի հայրենի քաղաքը, այսօր հանձնվել է թշնամուն, մեր ոխերիմ հակառակորդը զավթել է մեր հին բերդաքաղաքը...

Չէ, անկեղծորեն կասեմ՝ մենք հանձնեցինք քաղաքը թշնամուն... Ինչո՞ւ... որովհետեւ ինչ-որ սատանա է մտել մեր մեջ, եւ մենք, էդ սատանայի թելադրանքով, չպաշտպանեցինք քաղաքն այնպես, որ թշնամին մոտ չգար, խաղացինք քաղաքի բախտի հետ... Դուք միայն տեսնեիք, թե ինչպես է ողբում Վիգենը Շուշիի կորստյան համար... Չէ որ դա իր մանկության քաղաքն է, շատերիս պարծանքի ու հպարտության քաղաքն էր... Բայց, գիտե՞ք, տիկին Ասպրամ, ձեր որդին ողբում է անլաց ու անծայն, ասպետաբար է կրում իր անասելի վիշտը՝ տոկուն ու անսասան տղամարդու պես: Նա հուսալքված չէ, նրա մեջ այնպիսի հուսադրող կրակ է բոցկտում, որ կարող ես նրա կողքին տաքանալ ու ապահով զգալ անգամ թշնամու ներկայությամբ... Քիչ առաջ նա իմ կյանքն է փրկել... Նա ինձ վստահաբար ասում է, թե կվերականգնենք ավերված Կանաչ ժամը... Ձեր տղան խիզախ, անձնվեր ու վեհ մարդ է... Երկնքում երջանիկ եղեք, տիկին Ասպրամ, որ դուք ծնել եք հենց այդպիսի զավակ: Նա նաեւ շատ զգայուն հոգի ունի... Երբ դուք մահացաք, օրեր անց Վիգենը, այդ չորսամյա մանուկը, ձեր կարոտից խենթացել ու ցանկանում էր ցատկել պատշգամբից:– Դպիրն այդ պահին աչքի պոչով նայեց ընկերոջը՝ տեսնելու, թե իր կռահումն ինչ ազդեցություն է գործում նրա վրա. Վիգենը, որ մինչ այդ գլխահակ լում էր Արմանին, հանկարծ գլուխն ընդոստ վեր բարձրացրեց եւ ականապիշ ու զարմացած նայեց նրան. դպիրը հասկացավ՝ իր հետահայաց պայծառատեսությունը ճիշտ է, եւ շարունակեց խոսքը:– Արտաքուստ չոր ու կոշտ տղա է երեւում Վիգենը, իսկ իրականում այնպիսի նուրբ հոգի ունի, տիկին Ասպրամ... Թողեք ես հայտնեմ ձեզ նրա նվիրական գաղտնիքը. Վիգենը հոգու մինչեւ ամենապստիկ անկյունը սիրահարված է մի չքնաղ աղջկա... նրա անունը Մարիա է: Դեռ հայտնի չէ, թե երբ կլինի հարսանիքը, բայց վստահ եղեք, որ ձեր որդին հրաշալի ընտանիք կկազմի... Ձեր հարսիկը ավանդապահ հայուհի է, գեղեցիկ, հմայիչ, խոնարհ ու...– հապաղեց դպիրը՝ դիպուկ մակդիր փնտրելով:

- Լալիկ,- լրացրեց Վիգենն ու փոթկացրեց:

- Այո, նա նաեւ լալիկ է, բայց ինչպիսի՞նք լալիկ... Ափսոս, որ դուք նրա հարսնությունը չեք տեսնելու, տիկին Ասպրամ... Բայց ձեր հոգին տեսնում եւ զգում է այս ամենը, դուք շարունակում եք ներկա լինել ձեր որդու կյանքում որպէս սքանչելի մայր... Թող Աստված միշտ կենդանի ու պայծառ պահի ձեր հոգին, եւ դուք մշտապես զգաք Վիգենի որդիական անմար սերը... Չգիտեմ երբ, չգիտեմ ինչպէս, բայց ձեր որդին դեռ էլի այցի կգա ձեզ... Տոտեսություն, տիկին Ասպրամ, ցոտեսություն: Աստված թող ի կատար ածի բոլորիս արդար երազանքները: Ամէն:

Վիգենը վեր կացավ եւ հուզախռով գրկեց դպիրին:

- Շնորհակալ եմ, եղբայր: Ապրես:

- Ես էլ եմ շնորհակալ, որ թոյլ տվիր խոսել,- զգացված արձագանքեց Արմանը:

Վիգենը կրկին համբուրեց մոր հուշաքարը, ապա գնաց եւ ձեռքով հպվեց մյուս հարազատների շիրմաքարերին ու վերադարձավ:

- Գնանք,- ասաց նա եւ շարժվեց դեպի մեքենան: Արմանը՝ նրա ետեւից:

Վերադառնում էին՝ դարձյալ անվառ լուսարձակներով, թեպետ արդեն զգացվում էր լույսի պակաս. լուսինը դանդաղ աղոտանում էր: Զառիվարին Վիգենը շարժիչն էլ անջատեց, մեքենան ինքնազոր էր առաջանում. արդեն խոր գիշեր էր՝ ժամը երեքն անց, յուրաքանչյուր աղմուկ կարող էր գրավել արթուն մնացած հատուկենտ պահնորդների ուշադրությունը: Ճանապարհին երկուսն էլ խորասուզված էին մտքերի մեջ, Վիգենը միայն մի անգամ խախտեց լռությունը.

- Լավ քարոզիչ կարող ես լինել:

Արմանը դեմքի հարցականով արձագանքեց:

Երբ հասան Ղազանչեցոց եկեղեցու մոտ, Վիգենը արգելակեց մեքենան.

- Աշտանակը վերցնենք:

- Հա,- աշխույժ պատասխանեց դպիրը եւ փութկոտ դուրս եկավ մեքենայից: Քիչ անց վազքով վերադարձավ՝ թանկագին բեռը ձեռքին:

Հաջորդ կանգառը գորգերի թանգարանի մոտ էր: Այստեղ հետախույզները մեքենայից իջան եւ արդեն շենքի մուտքն էին հատում, երբ նկատեցին, որ երկու զինյալ նստած են նկուղ տանող աստիճաններին եւ կուշտ խոմփացնում են. հավանաբար նրանք պահակության էին կարգված, բայց չէին զսպել իրենց բացված ախորժակը: Խոր քնով անցած զինյալներից սպիրտի ու ծխախոտի սուր հոտ էր փչում: Արմանը բնազդային վախով ներս անցավ, իսկ Վիգենը զգուշորեն մոտեցավ խոմփացնող ասկյարներին, վերցրեց նրանց ինքնաձիգները եւ տեղավորեց մեքենայի թափքում: Ապա Արմանի հետ խորացավ թանգարանում: Քիչ անց նրանք վերադարձան վիշապագորգն առած եւ այն խնամքով տեղավորեցին թափքում:

Վիգենն ուշք դարձրեց, որ բերդաքաղաքի խրախճանային աղաղակները գրեթե լռել էին, կարծես թե վիշապը պատրաստվում էր խոր մրափի. խորհեց, որ դա կարող է օգնել՝ խուսափելու միջադեպերից: «Բայց էս կարգի թշնամուց ամեն ստորություն սպասելի է, անգամ՝ մրափի ժամանակ», - մտաբերեց նա եւ մեքենան մի փոքր հրելով, ցատկեց ներս եւ այն անաղմուկ ու ինքնագլոր վարեց ներքե: Հասան պատկերասրահի մոտ: Այստեղ Վիգենը մենակ գնաց Արմանի առանձնացրած նկարի ետեւից: Վայրկյաններ անց եկավ եւ, գծանկարը դպիրին տալով, ասաց.

- Գեղեցկուհուդ լավ պահիր:

Արմանը ժպտաց եւ հիացած նայելով նկարի գեղանի կնոջը, այն հուշիկ դրեց ծնկներին:

- Դե, էրբ ես ընտանիքդ վերամիավորելու,- անսպասելի հարցրեց Վիգենը:

- Չգիտեմ,- տխուր պատասխանեց դպիրը: Նրա կինը հեռացել էր երկու տարի առաջ՝ իր հետ տանելով երեքամյա աղջկան:

Հետախույզներն անարգել հասան բերդ, մտան բակ եւ մեքենան կանգնեցրին թթայգու մոտ: Նրանք թափքից իջեցրին գորգը, աշտանակն ու նկարը: Ապա բրեզենտաձածկ զինամթերքը տարան ու նետեցին մոտակա խոր խանդակի մեջ, որ հայտնաբերել էր Վիգենը բերդաքաղաք մտնելու ժամանակ: Հինամթերքը ծածկեցին ճյուղերով ու խոտերով՝ որքան կարողացան:

– Հնարավոր է՝ մեզ պետք գա,– բացատրեց Վիգենը: Բայց այն ինքնաձիգները, որ առգրավել էին Ղազանչեցոցի մոտ սպանած ասկյարներից, պահեցին իրենց:

– Գիտե՞ս՝ մենք ուրվականների պես շրջեցինք Շուշիում,– ավարած զենքը պարտակելուց հետո շունչը տեղը բերելով՝ ասաց դպիրը:

– Չէ, մեզ օգնական եղավ Աստված,– հանգիստ առարկեց գլխավոր հետախույզը:

Տղաները պատրաստ էին վերադառնալ եւ, առաջին անգամ ամբողջ արշավի ընթացքում, վիճեցին, բայց՝ ընդամենը մեկ րոպե: Նրանք միանգամից համաձայնության չեկան, թե ճանապարհին ով ինչ պետք է պահի ձեռքին: Արմանն ուզում էր վերցնել աշտանակն ու նկարը միաժամանակ, իսկ ինքնաձիգը տալ Վիգենին. վերջինս համամիտ չէր նրա հետ, պնդում էր, որ Արմանն ինքնաձիգը պահի իր մոտ, իսկ նկարն ու աշտանակը կվերցնի ինքը: Ի վերջո, որոշեցին Արմանին թողնել աշտանակը, իսկ նկարը՝ Վիգենին: Նրանք ուսներին առան վիշապագորգը, եւ երկհոգանոց ծանրաբեռ «թափորը» շարժվեց դեպի Ստեփանակերտ:

Արդեն սկսել էին վայրէջքը, երբ դպիրը զգաց, որ լույսն ավելի նվաղեց. վեր նայելով՝ տեսավ, որ լուսինն անցնում է սեւակնած խոշոր ամպի ետեւը, եւ այդ վայրկյանին երեւում էր լոկ նրա մահիկը: Դա վատ նշան համարեց եւ թաքույց վախով Վիգենին խնդրեց, որ դեպի երկինք նայի: Վիգենը վեր նայեց ու ասաց.

– Շնորհակալ լինենք լուսնին, որ էսքան ժամանակ մեզ լուսավորել է:

Կարճատեւ դադարներ առնելով՝ «թափորն» անփորձանք հասավ Աբ. Աստվածամոր Հովանի տաճար. լուսադեմ էր՝ ցուրտ ու անխոստում, բայց էլեկտրական լույսն արդեն վերականգնված էր թաղամասում: Երբ հետախույզները մտան ապաստարան, տեսան արթոններին ննջող Տեր Միսաքին, նկարիչ Մովսեսին, մանկավարժ Վարազյանին, Մարիային, Քեռուն, գնդապետ Վարդանյանին: Այնտեղ էր նաեւ Վիգենի բանակային մտերիմ ընկեր Խորենը՝ վիրակապված գլխով. նա առաջնագծում էր, եւ վերջին օրերին լուր չկար նրանից: Վիգենը խինդ առավ՝ տեսնելով ընկերոջը, որ մահճակալին կիսապառկած՝ նույնպես ննջում էր: Սեղանին ժենգյալով հաց կար եւ գինի. հասկացան՝ իրենց համար էին պահել: Նրանք լսվ քաղցած էին, բայց չմոտեցան սիրած ուտելիքին, անձպտուն ու հոգնատանջ փլվեցին մահճակալների վրա: Վիգենին արդեն նիրհն էր պարուրում, երբ աղոտ տեսավ, թե՛ նրան թվաց, որ Մարիան արթնացել եւ ժպտալից հայացքը հառել էր իրեն՝ ինչպես սիրահոգի Աստվածամայր:

## Գլուխ 3

# ՄՈՎՍԵՍ: ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

*Եվ մկրտելով մեզ որդեգրեցիր,  
Եվ նկարեցիր ու հորինեցիր պատկերիդ փառքով:*

*Գ.Նարեկացի. «Մատթայան ողբերգության»*

Պատերազմի վերջին գիշերը սաստիկ հրետակոծվել էր Ստեփանակերտը, եւ բազում ավերածությունների մեջ կար մեկը, որ առավել անանձնական խորքով էր վշտացրել Մովսես Մելիքյանին. նրա արվեստանոցը նույնպես տուժել էր, ոչնչացվել էին տասնյակ նկարներ, քանդակներ ու կոլաժներ: Մովսեսը Տեր Միսաքի հետ համոզված պնդում էր ամենքի մոտ, որ արվեստանոցն արկահարվել է հենց վերջին համազարկից. «Թշնամու համար կարելու էր, որ խփեն մերոնց ստեղծարար կետերին... յուղոտ վերջակետ դնելու համար»: Ոչ ոք չէր առարկում այդ պնդմանը, թեեւ հասկանում էին, որ դա սոսկ ենթադրություն է, վարկած, որ ապացուցել չես կարող:

Արվեստանոցի ավերման մասին նկարիչն իմացավ առաջին խաղաղ օրվա երկրորդ կեսին, Սբ. Աստվածամոր Հովանի տաճարում ունկնդրած ժամերգությունից հետո, երբ պատրաստվում էր տուն գնալ՝ մի փոքր իրեն կարգի բերելու. ապաստարանային օրերին նա շատերի պես դարձել էր անփույթ, նույնիսկ անվա օրեր էր անցկացնում, թեեւ կոկետությամբ ու մաքրասիրությամբ երբեք էլ



աչքի չէր ընկել: Եթե անգամ լինես այդպիսին, հազիվ թե պատերազմի օրոք կարողանաս պահպանել վայելույշ տեսք ու հագուկապ. պատերազմը մարդուն դրդում է թափթփվածության ու խառնակության, սեփական արտաքինի հանդեպ՝ արհամարհանքի, ասես մոտ եկած մահը ստիպում է զերծ մնալ ամենայն ավելորդություններից: Մովսեսը չի շտապել դեպի դժբախտության վայր, գնացել է դանդաղ ու մտածկոտ քայլերով՝ ինքն իրեն համոզելով, որ կատարվածն օրինաչափ դեպք է, ուստի կարիք չկա ողբերգություն սարքել այսպիսի արնաշաղախ համապատկերի վրա, ուր գրեթե ամեն քայլափոխի զգացնել են տալիս մարդկային մեծ կորուստների մորմոքները:

Երբ հասավ ավերված արվեստանոցի մոտ, ներս չմտած՝ երկար կանգնեց ու նայեց ջարդված պատուհաններին, դռանը, ներսում պատառոտված ու խեղված ստեղծագործություններին: Մովսեսի՝ աշխարհում ամենասիրելի տարածքը խճողվել էր արկի բեկորների, ապակու կտորտանքի, ներկերի, վրձինների, նկարակալների, դեռ մաքուր ու գունագեղ կտավների թափվածքով: Առաջին միտքը, որ վառվեց նրա գլխում, այն էր, որ այս բռնածին խառնակչությունը նման է մայրամուտ ապրող Բաբելոնի մանրակերտին՝ հայելային արտացոլման մեջ: Եթե այն ժամանակ վեհաշուք մայրաքաղաքը կործանվել էր առավելաբար ներքին բռնությունից ու այլասերումից, ապա իր՝ Մովսեսի աշխարհը կարող է գրողի բաժին դառնալ ե՛ւ ներքին բռնությունից ու այլասերումից, ե՛ւ արտաքին ագրեսիայից: Բայց արդյո՞ք որեւէ համեմատություն կարող է սփոփիչ լինել հիմա... Արկը պայթել էր արվեստանոցի մուտքի մոտ, հարվածի ալիքը, ասես դիտավորությամբ, ուղղվել էր այն նկարների ու կոլաժների կողմը, որ Մովսեսը նախապատրաստում էր երեւանյան անհատական ցուցահանդեսի համար: Իսկ եթե ցուցահանդեսին գործերը տանի հենց այս վիճակում՝ անցավ նրա մտքով, եւ վճռեց, որ դեռ կխորհի այդ գաղափարի վրա...

Մոտ մեկ ժամ նկարիչը կողքից, ասես օտարոտի, դիտում էր

ավերված արվեստանոցը, հետո ներս մտավ եւ կանգնեց ընդարձակ սրահի կենտրոնում: Արվեստանոցը մեկ տարի առաջ էր հիմնովին վերանորոգել, դարձրել արդիական ու հարմարավետ ոչ միայն ստեղծագործելու, այլեւ տարբեր ցուցադրություններ կազմակերպելու, հատկապես՝ ստուդիայի սանուիիերի համար: Մովսեսի մոտ ստեղծագործական հմտություն էին ձեռք բերում չորս սկսնակ նկարչուհիներ, որոնցից երկուսը ուսանում էին տեղի համալսարանի կերպարվեստագիտական բաժնում: Դասերից հետո նրանք գալիս էին պարոն Մովսեսի մոտ՝ մի երկու-երեք ժամով իրապես յուրացնելու գեղանկարչության գաղտնիքները, քանի որ արագ համոզվել էին, որ համալսարանում չեն սովորեցնում այն, ինչ իրենք ակնկալում էին: Չէ, այդ պարապմունքները Մովսեսն անվճար չի անցկացնում, ամսական գումար վերցնում է, բայց համեստ չափով՝ լիովին մատչելի դիմորդների համար, հետո զեղչելով նույնիսկ պայմանավորված փոքր գումարը: Ինքն էլ եկամտի քիչ թե շատ կանոնահոս աղբյուր չունի, միշտ չէ, որ ստանում է արժանի պատվերներ: Սանուիիների հետ նկարիչն առանձնակի հույսեր չի կապում, պարապում է, քանի որ նրանք «գույներ շատ են սիրում», որ կապված մնան արվեստի հետ՝ թեկուզեւ սիրողական մակարդակով: Հայրենի փոքր քաղաքում արվեստային բաբախուն միջավայրը պահպանելու ցանկությամբ Մովսեսը երբեմն փոքրիկ նահանջներ է կատարում, ինչպես՝ անհեռանկար սկսնակներին ժամանակ ու ջանք հատկացնելը, բայց երբեք «կարմիր գծերը» չի հատում: Հիմա նա զգում է, որ ներկայի բիրտ ու ծանր թաթն իրեն կարող է փողոց շարտել՝ այնտեղ օրվա հացի համար տվայտալու... Բայց՝ չէ, իր արվեստանոցի մեջ կուտակված աներեւույթ հզոր լիցքերը թույլ չեն տա, որ հանձնվի բախտի քմահաճույքին: Եվ խառնակ սրահի կենտրոնում նա մի պահ անշարժացավ մոնումենտալ արձանի պես՝ հայացքը ուղղելով փշրված պատուհաններից դուրս՝ դեպի կապտականաչ աշխարհը: «Թեկուզեւ էսպես, միենույն է՝ էստեղ տերը ես եմ»,– իրեն գոտեպնդելով, թե՛ իր ճշմարտություն-

նը շեշտելու ցանկությամբ խորհեց Մովսեսը, ապա մի երկու բույս սեւեռվեց պատից կախված մեծադիր նկարի վրա. այնտեղ իր վաղամեռիկ տղայի պատկերն է՝ կապույտի ու կանաչի մեջ շողացող: Այդ գեղանկարն անվնաս է մնացել, ասես հույսի ողջ բեռը վերցրել է իր վրա՝ ստեղծողին ակնարկելով, թե ինչքան էլ մահը պատվի մեր շուրջը, մենք կենդանի ու անմահ լինելու ավելի մեծ իրավունք ու շանս ունենք: Հետո զարմանքով հայտնաբերեց, որ պատից անվնաս ու անվրդով կախված են նաև այն երկու գեղանկարները, որ մտադիր էր ուղարկել դեկտեմբերին Փարիզում կայանալիք խմբային ցուցահանդեսին: Դեռ ոչ մի բացատրություն չունեի, թե ինչպես է այդ «փարիզցիների» բախտը բերել, նույն պահին լոկ խոհածեց, որ «փարիզցի» բառը ինչ-որ համահունչ է ստացվում փարիսեցիության հետ, բայց այդ հասկացությունները զուգորդելու միտքը հեռու վանեց իրենից:

Արվեստանոցը գտնվում է բազմահարկ շենքի առաջին հարկում եւ իր արտաքին դիզայնով գրավում էր անցորդներին: Այն գրավիչ եղավ նաև թշնամական արևի համար, որ արծակված էր ոչնչացնելու մի կամք, որը ցայսօր դեռ չի հաջողվել ոչ մի չար ուժի. ստեղծարարությունը, Աստծո կամոք, կենսունակ է մշտապես, անգամ պատերազմի ամենաթեժ ժամերին: Մովսեսը խոհածեց նաև, որ եթե ինքը չապավինի նման փիլիսոփայության, ապա կկորցնի դիմակայության իր ողջ պաշարը: Նա նայում էր ժպտացող տղայի նկարին եւ սրտի ցավագին ճմլումով մտածում, որ որդու հետ վայելած երջանիկ կարճատեւ տարիների դիմաց (ընդամենը ութ տարի) իսկապես ոչինչ են իր հետագա բոլոր ձեռքբերումները, որոնց վկան հիմա այս ավեր արվեստանոցն է: Բայց կրկին բարեսիրտ լինելու իսկական պահն էր, եւ Մովսեսը խորհեց. «Բան չկա, տղաս, կվերականգնենք, դու էստեղ դարձյալ կլինես գլխավորը»: Ապա շրջեց գլուխը եւ ուշացումով տեսավ, որ արվեստանոցի մոտ հավաքվել են Տեր Միսաքը, մանկավարժ Սիմոնը, գնդապետ Վարդանյանը, Մարիան, Մովսեսի ազգականներից ու բարեկամ-

ներից ոմանք, արվեստակից ընկերներ, պատկից խանութի տեր Վռամն ու գործակատարը եւ էլի ծանոթ ու անծանոթ մարդիկ:

- Մխիթարանքի խոսք չունեմ,- Մովսեսին մոտենալով՝ ասաց Տեր Միսաքը:- Բայց գիտես՝ Աստված մեծ է, եւ ամեն ինչ կորած չէ:- Տեսնելով արվեստանոցում ընկած ու պատառոտված գործերի մեծ քանակը՝ քահանայի դեմքն ասես մզացավ ու խստացավ կրկնակի.- Ոնց-որ թե էստեղ դեւն է մտել... Դե, չարքն անողոք է հատկապես հոգեւորի հանդեպ, եւ մենք առաջին անգամ չենք դա զգում մեր մաշկի վրա:

- Սատանան էլ է արվեստ սիրում, Տեր Միսաք,- հեզանքով, թե՛ լրջորեն արձագանքեց Մովսեսը:

- Շատ յուրովի է սիրում,- թեթեւ քմծիծաղեց քահանան, ապա ընկերական տոնով ասաց.- եկել ենք քեզ ձեռք մեկնելու, Մովսես եղբայր. նախ, օգնենք՝ կարգի բերես արվեստանոցը, հետո կմտածենք՝ ուրիշ ինչ անել... Որտեղի՞ց սկսենք:

- Չէ, չէ, Տեր Հայր, շնորհակալ եմ, պետք չի, թողնք՝ ինքս ամեն ինչ կարգի բերեմ. սա իմ անելիքն է:

Քահանան շվարեց, թեւեւ ծանոթ էր Մովսեսի կողահաստությա- նը:

- Դու գիտես, որ մենք միշտ պատրաստ ենք քեզ օգնելու... այ- սինքն՝ մեզ օգնելու,- հավաստեց Տեր Միսաքն ու դուրս եկավ ար- վեստանոցից:

Դրսում կանգնածները լսում էին նրանց երկխոսությունը, ուստի նկարչին չանհանգստացրին զուր խոսքերով, քիչ զրուցելուց հետո ցրվեցին:

Մովսեսը միառժամանակ միայնակ մնաց ավերված արվեստա- նոցում. կրկին հայացքով ստուգեց, թե որքան գործեր են փրկվել. «Քիչ չեն մազապուրծները,- հեզնախառն ամփոփեց նկարիչը,- պահպանվածով դեռ կարելի է զորավոր զգալ»: Տեսավ, որ անվնաս է իր սիրելի ճոճաթոռը. պատրաստել էր մոդեռն ոճով՝ անվանման տաքերով ու գունավոր խառը հյուսածոյով: Նստեց ճոճաթոռին՝

վերհիշելու զմայլանքի հին զգացումը, բայց ոչ մի զգայականություն չվերապրեց այդ պահին, ուստի վեր կացավ եւ, ոչնչի ձեռք չտալով, դուրս եկավ: Նա տեսավ, որ արվեստանոցի մոտ կրկին մարդիկ են հավաքվել, նրանց թեթեակի գլուխ տալով՝ շարժվեց դեպի եկեղեցին: Ճանապարհին երկու տասնյակ ժենգյալով հաց գնեց արդեն գործի անցած ժրաջան տիկին Նինայից, ապա վերաբացված «Կապիտալ» սուպերմարկետում իր բեռը հարստացրեց գինու մի քանի շշով եւ հոգեհաց տանողի՞, թե՛ մատաղ մատուցողի ներամփոփվածությամբ հասավ տաճար, երբ արդեն աղջամուղջ էր:

Ապաստարանում «պաշտպանական խորհրդի» անդամների եւ այլոց հետ նկարիչը ամբողջ գիշեր սպասեց Վիգենին ու Արմանին՝ թաքուն հուսալով, որ նրանք իրենց օրինակով կխանդավառեն իրեն ու մյուսներին, եւ ինքը կկարողանա խմբի հետ թափանցել Շուշի՝ փրկելու այնտեղ մնացած բազում մասունքների գոնե մի մասը: Բայց Մովսեսի եւ մյուսների խանդավառությունը սառցահար եղավ, երբ գիշերվա կեսին Տեր Միսաքը զանգ ստացավ ազգային անվտանգության ծառայությունից. մի կոշտ ձայն նրանց խստիվ արգելեց Շուշիի հետ կապված ամեն մի արկածախնդրությունից: Բացատրեցին, որ դա մեծ վտանգի հետ է կապված եւ կարող է խաթարել արդեն ձեռք բերված պայմանավորվածությունները ռուս խաղաղապահների ու ազերիների հետ: Քահանան զանգողին չհայտնեց, որ արդեն բերդաքաղաք են գնացել իրենց տղաները: Չայրացած անջատելով հեռախոսը՝ խոժոռ նայեց շրջապատին՝ փորձելով կռահել, թե ով է իրազեկել անվտանգության ծառայությանն իրենց մտադրության մասին: Բայց խնայեց բոլորին՝ իրեն էլ հետը, ոչինչ չհարցուփորձեց միատեսակ զարմացած մարդկանց, լոկ բարձրաձայն խորհեց, թե գուցե լավը այդ է, գուցե Շուշի թափանցելով՝ կարող են փորձանքի մատնվել եւ պատճառ դառնալ նոր արնահեղության: Տեր Միսաքը ճգնեց իր խոհածումի եւ հրահանգված արգելքի մեջ հեռատեսություն ու իրավացիություն տեսնել, բայց ավելի շուտ նվաստացած ու խաբված զգաց իրեն:

Նույն զգացողությամբ էր համակված Մովսեսը, նա այդ պահին ծոցագրպանից հանեց երկարավուն նոթատետրն ու մատիտը եւ սկսեց նյարդայնորեն ինչ-որ բան խզբզել: Քիչ անց կարծես թե հանգստացավ, խզբզոցով թերթը պատռեց ու դեն նետեց եւ, միառպահ ասես առնչվելով վերին աստվածության հետ, ներշնչված ձեռնամուխ եղավ Մարիային նկարելուն: Անցած քառասունչորս օրերին, չնայած հուժկու եւ անվերջանալի պայթյուններին, որոնցով դրդում էր քաղաքը, Մովսեսը մի շարք մատիտանկարներ էր արել՝ ապաստարանի մարդկանց էր պատկերել կամ նրանց կամեցած տեսարանները: Սակայն, առավելս ենթագիտակցորեն, նա կամենում էր գծանկարել խորհրդավոր ու գեղեցկատես լալիկ աղջկա պատկերը եւ անվերջ վարանում էր, երեւի զգալով, որ դեռեւս դրա ժամանակը չէ: Հիմա եկել է այդ պահը, եւ իր վրա իջած հանկարծահաս խաղաղությամբ ու ներզգայությամբ, ուղղակի մի շնչով պատկերեց Մարիայի դեմքը՝ անրջական ու տրտմության շղարշով, բայց ավելի գեղեցիկ, քան աղջիկն է՝ իր դիմագծերի ներդաշնակությամբ: Նոթատետրից թուղթը պոկեց ու տվեց Մարիային եւ խնդրեց, որ եթե նկարը դուր գա իրեն, ցույց տա նաեւ Վիգենին կամ՝ նվիրի նրան: Մարիան երկար նայել է թղթի վրա սեւով կայծկլտացող իր պատկերին, մտախոհվել ու ժպտացել է՝ ասես տեսնելով իր հոգու կուսական անկյունները, ապա խնամքով թուղթը ծալել է եւ բոլորի աչքի առաջ դրել ծոցի մեջ: Մովսեսը եզրահանգեց, որ իր պատկերածը, թեկուզեւ գերիրական, նուրբ ու սրտահույզ է ստացվել, եւ այն ցնցել, թե՛ առինքնել է աղջկան...

Մովսեսն այդօր զանգել էր Երեւանում գտնվող կնոջը՝ Գայանեին, ճշտելու, թե երբ է վերադառնալու. նա Ստեփանակերտից փութկոտ հեռացել էր պատերազմի հենց առաջին օրը: Վաղուց մանկապարտեզի դաստիարակչուհու աշխատանքը թողած եւ տնային տնտեսուհի դարձած տիկինը նեղսրտած ասել էր, որ ինքը դեռ վախենում է վերադառնալ տուն, պատերազմը նոր է ավարտվել, ու դեռ հայտնի չէ, թե վաղը-մյուս օրը ինչ կլինի. կսպա-

սի, որ իրավիճակը կայունանա՝ նոր կգա: Նա իրենն էր պնդել ամուսնու այն «հանգստացուցիչ»-ից հետո էլ, թե արդեն Արցախում են ռուս խաղաղապահները, եւ կռիվը չի վերսկսվի, լրջորեն անհանգստանալու բան չկա: «Ոչ մեկին մի հավատա, – անառարկելի տոնով արձագանքել է Գայանեն, – միշտ կռվել ենք թուրքերի հետ, այսուհետ էլ կկռվենք»: Բայց կնոջ պատմական այդ դիտարկումը լոկ ծխաքող էր իրական պահվածքի համար. Մովսեսը հիանալի է ճանաչում իր երկրորդ կեսին, ով, իրոք, չափազանց վախկոտ լինելով, բնականաբար, նաեւ եսասեր է ու դժվարություններից խուսանավոր: Դե, ինչ անի, իր կինն է, գետը չի գցելու՝ ժողովրդական մտայնությամբ խորհել է Մովսեսը: Թող Երեւանում մնա ինչքան ուզում է, այնտեղ է նաեւ դստեր ընտանիքը, որ նույնպես վերադառնալու ցանկություն դեռեւս չունի: Կինը գոնե թոռներին կնայի, իսկ աղջիկն ու ամուսինը (փեսային այդպես էլ չսիրեց՝ ճարպիկ ու շահամուլ է) իրենց գործերով կզբաղվեն: Հեռախոսային այդ նույն խոսակցության ընթացքում, ասես իմիջիայլոց, կինն իրեն հորդորել էր գալ Երեւան ու միանալ իրենց. «Կյանքը մի անգամ է տրվում, ինչ կա էդ ավերված ու անիծված քաղաքում»՝ արդեն օտարացող ձայնով ասել էր կինը: Այդ թոպեին Մովսեսն անվրեպ կանխագուշակեց, որ իր ընտանեկան կյանքն այսուհետ ընթանալու է ճոռացող սայլի պես, եւ մշտապես զգացնել են տալու դիսոնանսները:

Նկարիչը հրաշալի գիտե, թե ինչ կա այստեղ՝ իր հարազատ քաղաքում, եւ դա այնպիսի անջնջելի, չէ՛, տարրական իրողություն է, որ դրա մասին բարձրաձայնելը միանգամայն ավելորդ, չէ՛, վիրավորական է համարում: Այստեղ են իր տունը, արվեստանոցը, իր նկարները, սիրելի ու թանկագին մարդիկ, Սբ. Աստվածամոր Հովանի տաճարը, Օղակաձեւ պուրակը, Ազատամարտիկների զբոսայգին եւ փողոցներ ու անկյուններ, ուր քայլել կամ կանգնել է սիրահարված ու ներշնչված, որտեղ զգացել է իր հոգու սլացքը եւ ստեղծելու այն լուսեղեն ձիրքը, որ իրեն պաշտպանում է գրեթե ամենուր, հետզհետե փոթորկվող հոգեւոր այլասերումից: Եվ մի-

թե այդ ամենն ինքը պետք է բացատրի շրջապատի մարդկանց, անգամ՝ կնոջը, ով արդեն երեսուն տարի ապրում է իր հետ, բայց այդպես էլ չդարձավ իր իսկական դաշնակիցը: «Ոչինչ, ես կդիմանամ, թող ինքը մնա իր կնությանը»՝ Գայանեի առթիվ մեծահոգաբար խորհեց Մովսեսը եւ նրան առողջություն մաղթեց, քանզի կինը վերջին տարիներին նաեւ հիվանդոտ էր դարձել:

Իսկ կինը համոզմունք ուներ, թե Մովսեսը կրակի մեջ հայտնված քաղաքում մնացել էր հանուն իր արվեստանոցի ու նկարների, որոնց ստեղծման համար հոգեկան ավյուն ու նյութական շատ միջոցներ էր ներդրել: Գայանեն դատեր ու ընկերուհիների մոտ պատեհ ու անպատեհ կրկնում էր, որ եթե իրենց առանձնատունն ավերվի, Մովսեսի սիրտն առանձնապես չի ցավի, բայց, այ, եթե մի բան պատահի արվեստանոցին ու նկարներին, իրար կխառնի աշխարհը, ուստի մնացել է Ստեփանակերտում, որ գիշեր ու զօր հոգ տանի դրանց: Բայց այդ կարծիքն այնքան հեռու է ճշմարտությունից, դա հաստատելու համար մի երեխայի ուշադիր հայացքն իսկ բավարար կլիներ: Մովսեսն, այո, դեռ մեծ ձգտումներ ունի, արդեն ճանաչված անուն է Հայաստանի եւ էլի որոշ երկրների արվեստասիրական շրջանակներում, տարբեր ուղղություններով պարբերաբար այցելում է փառատոների, սիմպոզիումների ու ցուցահանդեսների: Բայց Մովսես նկարիչը չի տառապում փառատենչությամբ, դա համարում է ունայն մոլություն, ինքը սոսկ ցանկանում է իր ու յուրայինների, քաղաքի, երկրի ու աշխարհի կյանքը, մարդկային երազանքները պատկերել մի այնպիսի սիրով, ուժով, ճշմարտությամբ ու ոճով, որ անկրկնելի լինի՝ նման ինքնաբուխ օրհներգի ու աղոթքի, ներումի ու բացականջության, բալասանի ու թովչանքի, աստղաբույլի ու թռիչքի: Մովսեսն ամենքից լավ գիտե, որ ինքն անկեղծ ու ազնիվ ստեղծարար է, եւ ուրիշ ոչինչ: Հա, նաեւ նվիրյալ տանտեր է, տեսե՛ք՝ ինչ սիրուն, երկհարկանի առանձնատուն է վեր հանել քաղաքի ծայրամասային թաղամասերից մեկում: Ճիշտ է՝ մոռացել է նկուղային ապաստարան եւս կառուցել, չէ՞ որ



իրենց ժանիքներն են շարունակ ցույց տալիս անհաշտ ու նախահարձակ հարեւանները. ազերիների հետ պատերազմը դեռ պետք է ավարտել, հիմա պարզապես հերթական երկար հրադադարն է՝ ըստ Մովսեսի 2020 թվականի նոյեմբերյան դիտարկման:

Նա անչափ հիացել էր Շուշիից բերված վիշապագորգով, իսկ Գառզուի գծանկարի առիթով նկատել էր, որ հիանալի տեխնիկա ունի ֆրանսահայ նկարիչը. ահա այդպիսի մասնագիտական գնահատական Արմանի «գեղեցկուհու» վերաբերյալ: Եվ հազիվ թե իմաստ ունի նկարչին մեղադրել կողմնակալության մեջ:

Հաջորդ երկու օրերին Մովսեսն ինքնասույզ քայլում էր Ստեփանակերտի փողոցներով, նայում հրետակոծված շինություններին, մասնագետի հայացքով զննում ու կշռում վնասների չափը: Բայց վարպետի աչք ունենալ պետք չէ, շարքային դիտորդն անգամ տեսնում է, որ վնասները հսկայական են. թշնամին հատուկ նշանառությամբ բազմակի հարվածել էր հատկապես կենսագործունեության օբյեկտներին՝ էլեկտրական ցանցերին, ջրատար ու գազատար խողովակներին, հիվանդանոցներին ու դպրոցներին: Եվ գրեթե յուրաքանչյուր փողոցում զգալի ավերածություններ կան հատկապես բնակելի շենքերում, հետեւաբար՝ փոքր երկրի փոքր գանձարանը անկարող է լինելու դուրս գալ այդ մեծածավալ փլատակների տակից: Արդյոք կառավարությունը միջոցներ կգտնի՞ ավերածությունները շուտափույթ վերականգնելու համար, արդյոք համազգային համախմբում կլինի՞ այդ հարցում, – ցավ ու տագնապով խորհում էր նկարիչը՝ վերհիշելով, թե առաջին պատերազմից հետո որքան երկար տեւեցին Ստեփանակերտի ու Արցախի այլ բնակավայրերի վերականգնողական աշխատանքները: Չես հերքի՞ գործ շարունակ արվել է այդ ուղղությամբ, բայց կարծես մշտապես ինչ-որ ծանր ու անհաշտ ձեռք ետ էր քաշում վերածնության գնացքը: Նկարչի կենսափորձը, ունեցած տեղեկություններն ու դիտունակությունը թույլ էին տալիս նրան տեսնելու, թե ինչից է շինված այդ ետքարշ ձեռքը, ովքեր են դրա ծպտյալ հովանավորներն ու

շահառուները: Նա միշտ գարշել է նմանատիպ հիմնախնդիրներից, ինքնիրեն ու այլոց համոզել, որ արվեստագետներին պետք չէ ներքաշել ճղճիմ հարցերի մեջ, թող իրավասու մարմինները զբաղվեն խարդախներով ու խաբեբաներով: Բայց եւ գիտակցում էր, որ եթե իրենք՝ ստեղծարարները, լռեն, ապա ավելի կհաբուցեն երկրի տառապանքը իրենց երջանկության աղբյուրի վերածողները: Եվ նա հաճախ բարձրաձայն ահազանգում էր այդ մասին՝ ընկերական շրջապատում, թե հրապարակային ելույթներով, եւ այդպես աչքի փուշ դառնում որոշ բարձրաստիճան իշխանավորների համար: «Թքած, – ասում էր Մովսեսը, – հո նկարելու ձիրքն ինձնից չեն խլելու»: Եվ հիմա նա մտովի, ըմբռնումով ու ընկերաբար հրահանգում էր պետության նոր ղեկավարներին («Բայց նրանք ղեռ պետք է սովորեն ղեկը ճիշտ բռնել») արագացնել վերականգնումը, շուտափույթ մաքրել քաղաքն ավերակներից ու կեղտից, որ պատերազմական արհավիրքից հեռացածները տուն վերադառնան այն հույս ու հավատով, որ իրենք դարձյալ ապրելու են լուսավոր, բարեկարգ ու կոկիկ քաղաքում: Չես կարող մարդկանց մշտապես համոզել, թե հանուն հայրենյաց պետք է անդադար տանել կեցության ծանրությունն ու դառնությունները. նրանք ժամանակակից մարդիկ են՝ բազմաթիվ թելերով կապված աշխարհի ամենատարբեր քաղաքակրթական անկյունների հետ, նրանք ուզում են, իրավունք ունեն եւ արժանի են ապրելու բարեկեցիկ ու անվտանգ երկրում:

Անվտանգություն՝ ահա թե որտեղ է հիմա երկրի աքիլեսյան գարշապարը՝ ցավագնորեն խորհում էր Մովսեսը փողոց առ փողոց անցնելիս: Մինչ այս վերջին պատերազմը գոնե անվտանգ էին ու լիահույս, գուցե միամտության հաշվին՝ համոզված էին, որ թշնամին չի կարող այնպիսի հարված հասցնել, որ ցնցվեն պետության հիմքերը: Կատարվեց հենց անսպասելին, որի համար Մովսեսն ունի իր մեղադրականը՝ որոշակի անուններով ու հանցանշաններով: Ամեն ավեր շենքի մոտ մտովի թե կիսաձայն հայիոյեց ու անիծեց Երեւանի առաջնորդ ամբոխավարներին ու տեղական գործակից-

ներին, որոնք շատ կարճ ժամանակահատվածում պարզապես փոշիացրին մի ամբողջ սերնդի հաղթություն: Ազատարար սերունդն այդ նախորդ տասնամյակներին Հայոց աշխարհը դուրս էր բերել հարյուրամյակների կախյալ ոգու արահետից եւ տեղափոխել Ավետյաց երկիր տանող խճուղի: Նկարիչը կանխազգում էր, որ իր ժողովրդի հետ տեղի է ունեցել մի սահմուկելի պատահար, որի հետեանքները, հնարավոր է, կարող են լինել անշուկելի: «Աստված իմ, հովանի եղիր մեր երկրի բարի ընթացքին»՝ շնջում էր նա անդադար:

Մովսեսը մռայլ ու նյարդային շրջում էր Ստեփանակերտի փողոցներով՝ ինքնզինքը վերգտնելու, կիզիչ խոհերից ձերբազատվելու համար նաեւ, բայց որքան քայլում էր, այնքան հոռի զգացումների ու տեսիլքների մեջ էր խրվում: Մեկեն ինչ-որ օրինաչափություն նկատեց ավերված շինությունների շարքում. «կուցեւոյի» մոտ կանգ առավ հերթական ջարդված դռների առաջ եւ զարմանքով արձանագրեց, որ «արկահարված» հատվածի շուրջն այլ ավերածություններ չկան: Շենքի առաջին հարկում տեղակայված մթերային խանութից աջ ու ահյակ եւ վերելի հարկերում ոչ մի պատուհան ու դուռ վնասված չէր, ասես արկը «մտադիր» էր խոցել միայն խանութի մուտքը: Մինչ այդ նմանատիպ եւս երեք-չորս պատկեր էր տեսել: «Չէ՛, սա արկի գործ չէ,– եզրահանգեց նկարիչը,– սա գող ձեռքի արած է... Դե, Աստված իրենց հետ, գուցե ոմբակոծության օրերին սոված էին մնացել... եւ խանութներ են խուժել ուտելիք հայթայթելու համար»: Բայց տեսավ նաեւ հագուստի կողոպտված սրահ, եւ Մովսեսը խոժոռվեց մինչեւ հոգու խորքը, ստահակներ կոչեց անիրավներին, այդքանը բավարար համարելով՝ շարունակեց «ստուգայցը»: Այդուհետ, սակայն, միտքն առավել էր խոցոտում նրան, անդադար մղում՝ գտնվել համընդհանուր ցավի առթած կրակի մեջ:

Իր հայրենակիցներից շատերի պես դավաճանված ու խաբված էր զգում իրեն՝ երես առ երես հայտնվելով պետության կրած նվաստացուցիչ պարտության դիմաց: Թեկուզեւ աղոտ, նշմարում էր,

թե ինչ ծանրագույն փոխհատուցում է պահանջվելու ամենքից՝ այդ մթին գուրից ելնելու համար: «Չեմ գայթակղվի, չէ, իմ ճանապարհով կքայլեմ,– ինքն իրեն հանգստացնում էր Մովսեսը,– չեմ համալրի քաղաքական ճամբարը, որքան էլ հանգամանքներն ու մարդիկ դողեն, էդ ճամբարում հիմա վխտում են հազար ու մի արկածախնդիրներ ու դուրսպրծուկներ. եթե հանկարծ սխալվեմ ու միանամ էդ ամբոխին, կկորչեմ»: Իր ուղին արվեստն է, որին ի բնե նվիրված է, թեպետ այն շատ ավելի նեղ, տատասկոտ ու անհեռանկար է երեւում, հատկապես հիմա, երբ արդեն կանխատեսում է, որ իր համար սկսվում է աննախադեպ ճգնաժամ՝ արվեստային ու մարդկային տիրույթների ընդգրկմամբ, եւ կարիք է լինելու ժողովել նոր ավյուն, կամք ու արհուրթուն, որպեսզի հաղթահարի սեւ շրջանը եւ վերադառնա հարազատ հուն: Բայց դա՝ ապագայում, այժմ ապրել ու գործել է պետք ըստ օրվա տազնապալի ձայների ու գույների:

Երկու օր անց միայն Մովսեսը նորից արվեստանոց գնաց՝ ձեռքին ցելոֆանե մի մեծ փաթեթ: Պետք է, ի վերջո, ծածկել ջարդված պատուհաններն ու դուռը, մաքրել ու կարգի բերել ներսը: Սակայն արվեստանոց տանող ճանապարհը ոլորուն ու երկար դարձրեց, որ մեկ անգամ եւս տեսնի քաղաքի վերքերն ու անվնաս մնացած հատվածները: Թումանյան փողոցով ցած իջավ, ապա ետ դարձավ ու մտավ հրապարակ, ուր ոտք չէր դրել պատերազմի սկզբից ի վեր: Մի քանի քայլ առաջանալով՝ կանգնեց ու նայեց հրապարակը երիզող շենքերին՝ «Բոլորը ողջ-առողջ են, անվնաս, փառք Աստծո»: Մովսեսն ուրախ էր՝ շրջակայքը տեսնելով իր ամբողջական-անխաթար տեսքի մեջ: Սակայն նրան տարօրինակ թվաց, որ պետական-կառավարական այդ շենքերը, նաեւ՝ դրամատունը, աննշան չափով իսկ չեն հայտնվել թշնամական հրթիռակոծության թիրախում, երբ հակառակորդը ճշգրիտ հարվածներ էր հասցնում իր ընտրած բազմաթիվ օբյեկտների: «Ազերիները երեւի խնայել են դրանք՝ մտածելով, որ շուտով իրենք են էստեղ նստելու»՝ եզրահանգեց նկարիչը: Այնուհանդերձ, մտքի մի սեւ թելակտոր կծկված մնաց

նրա ուղեղի գալարներից մեկում:

Մովսեսը դանդաղ քայլերով մոտեցավ հրապարակի կենտրոնին կից կիսակլոր հարթակին, որն իր սիրելի վայրերից է. այստեղից բացվում է մի գեղահրաշ տեսարան՝ լեռներով ու դաշտերով, գյուղերով ու ճանապարհներով, կապույտ-կանաչ-սև-դարչնագույնով եւ մշուշի մեջ լուծվող հորիզոնով: Տարվա գրեթե բոլոր օրերին հարթակից երեւում է Մռով սարը, որը երկրային թիկնեղ մարգարեի պես բազմած է քիչ հեռվում եւ ասես կանխատեսում է ամենքի գալիքը: Իսկ գարնանային պարզկա առավոտներին, հատկապես ապրիլին, այդտեղից նշմարվում է Կովկասյան լեռնաշղթան իր բարձրակետերով ու խորհրդավոր ուրվագծերով: Մովսեսը բազմիցս է հմայվել այդ տեսարանով, որն իր մեջ արթնացնում էր դեպի ապագա ժամանակներ եւ նոր աշխարհներ ճամփորդելու տրոփուն իղձեր, եւ գրեթե միշտ այդտեղից հեռացել է մի անբացահայտելի թախիժով. երեւի հմայվածությունը միշտ չէ, որ կարող է ներդաշնակվել երազանքի ու մարմնավոր կյանքի հետ: Մովսեսը ցանկացավ վերստին՝ հազարորերորդ անգամ վայելել այդ պատկերը, բայց նրան սպասում էր տխուր անակնկալ: Հարթակին դրված էին մեծ ցուցատախտակներ լուսանկարներով. մոտեցավ, նայեց՝ անհայտ կորած զինվորների դիմապատկերներ են: Հարազատները ստիպված էին դիմել այդ քայլին, որ ամենքի ուշադրությունը բեւեռեն իրենց կորած սիրելիների վրա, որոնք այդպես էլ տուն չեն դարձել ահեղ կռվից հետո. գուցե՞ մեկնումեկն ինչ-որ տեղեկություն ունի նրանց վերաբերյալ... Եվ մոմեր էին վառվում լուսանկարների ներքո, ծաղիկներ էին դրված: Մովսեսը տրտմորեն, մեկ առ մեկ նայեց չվերադարձած զինվորների պատկերներին. երեքին ճանաչեց, բայց, դժբախտաբար, նրանց մասին ոչ մի լուր չունեւ: Նախատրամադրվածությունը իսպառ կորավ, չցանկացավ անգամ թռուցիկ նայել դեպի «իր» հեռուները, շրջվեց ու գնաց արվեստանոց:

Երբ տեղ հասավ, դեռ մինչեւ ներս մտնելը, մուտքի մոտ Մովսեսն իր վեցերորդ զգայարանով կռահեց, որ ինչ-որ մարդիկ

մտել են արվեստանոց, հետաքրքրվել... ինչո՞վ: Հարցը նկարչի համար շատ էական էր. նա անցած օրերին իբր անտերության էր մատնել իր ավեր «սրբություն սրբոցը», մինչդեռ իրականում ուզում էր պարզել, թե մարդիկ այսպիսի խելակորույս ժամանակներում ուշադրություն կդարձնե՞ն, արդյոք, ինչ-որ արկահարված արվեստանոցի, երբ շուրջբոլորը բազում այլ ավերածություններ կան՝ առավել ծավալուն ու կենսական հրատապության: Խոսքը մանր ու «էժանագին» գողերի մասին չէ, որոնք ամենուր են՝ ուշադիր աչքաթող արված ցանկացած իրի նկատմամբ, այլ՝ լրջմիտ, բարեկիրթ ու հոգի ունեցող մարդկանց վերաբերմունքն էր նրան հուզում, ուժքեր ընկել են այրող ցավի մեջ: Արդյո՞ք ցավը թույլ կտա, որ մարդը հմայվի ու ներշնչվի ինչ-որ նկարով, թեկուզեւ ստեղծված լինի հանճարեղ ձեռամբ կամ՝ շարքային շնորհալիի կողմից: Եվ միթե ամենքի համար չէ լուսեղեն ստեղծագործությունը, միթե բոլոր հոգիների սնուցման համար չէ արվեստը,– երկար տարիներ այդ հարցերի մեջ խճճված Մովսեսը սպասել է այն ժամին, երբ լիակատար վստահությամբ կվկայի իր լավատեսական հայտնաբերումները:

Մտավ արվեստանոց, եւ աչքերը կլորացան զարմանքից ու ուրախությունից. սրահի կենտրոնում, աթոռին ինքնասույզ նստած էր Արսենը՝ Արսեն Մամունցը, իր սանն ու արվեստակից երիտասարդ ընկերը: Մովսեսը ձեռքի փաթեթն անաղմուկ մի կողմ դրեց եւ հրճվագին նայեց թանկագին այցելուին, մինչեւ վերջինս նկատեց նրան: Արսենը կտրուկ վեր թռավ տեղից եւ փութկոտ մոտեցավ ու ողջագուրվեց վարպետի հետ:

– Բարեւ, պարոն Մովսես, բարեւ... բարով տեսանք:

– Հազար բարեւ, Արսեն ջան... Ողջ-առողջ ես...

– Հա, իսկ դ՞ո՞ք...

– Ես էլ: Ե՞րբ ես եկել:

– Մի ժամ առաջ... Մի քանի բուպեով մտա խուցս ու շտապեցի

էստեղ: Գիտե՞ի արվեստանոցի հետ պատահածի մասին:

– Բան չկա, շատ ավելի մեծ կորուստներ ունենք... Դե, մի քիչ

պատմիր քո մասին:

Արսենը վերադարձել էր Մարտակերտից, ուր զինվորական ծառայության էր համերկրացիների հետ: Նա զորակոչվել էր պատերազմի սկզբին, բայց, բազմաթիվ զորակոչյալների պես, նրան քառասուն օր՝ մինչևե կռվի ավարտը, պահել են պահեստազորային գնդում: Զինադադարի երրորդ օրը Ստեփանակերտ է վերադարձել: Այստեղ՝ քաղաքի հին երկհարկանի շենքերից մեկում նա մեկ սենյականոց բնակարան՝ «խուց» է վարձում արդեն հինգ տարի: Իր առօրյային է դարձել շատերի պես հիասթափված, ջղային ու ընկճված, բայց չէր օտարել հոգու մեջ թեւածող վաղեմի երազանքները: Արսենը կերպարվեստագիտական բարձրագույն կրթություն է ստացել Երեւանում, գեղանկարչի դիպլոմը ստանալուց հետո այնտեղ դեգերել է մի տարի, ապա ներքին ոգորումներով տեղափոխվել Ստեփանակերտ: Այստեղ միանգամից չի ներգրավվել բուռն գործունեության մեջ, ուստի, պատահական աշխատանքներին զուգահեռ, ցանկացավ շարունակել ուսումնառությունը, այս անգամ՝ Մովսես Մելիքյանի արվեստանոցում: Ազատ ունկնդրի պես հաճախ էր լինում այստեղ՝ իր ուզած օրն ու ժամին, մի բացառիկ հնարավորություն, որ վաստակել էր իր ձիրքով ու մարդկային ինքնատիպ խառնվածքով, շնորհներ, որ չափազանց բարձր է գնահատում Մովսեսը: Աստիճանաբար առաջադիմող երիտասարդ արվեստագետը նկարում էր մի անկյուն քաշված՝ լուռ «ձայնակցելով» իր հերթական «գլուխգործոցը» կերտող վարպետին եւ չչեղելով նրա սանուհիների ուշադրությունը. դե, բարետես երիտասարդ է եւ ամուրի, աղջիկներից էլ լավ է նկարում, ինչպէս կարող է նրանց հետաքրքրասիրությունը չշարժել: Բայց ավելի հաճախ, երբ երկուսով էին մնում, Արսենը վարպետի հետ զրուցում էր մեծ նկարիչների ու նրանց ստեղծագործության մասին՝ մեկտեղ, մեկ առ մեկ «կազմաքանդելով» նրանց արվեստն ու կենսագրությունը: Եվ սրտահաճ ու գողտրիկ դադարներ էին ունենում դեմդիմաց, բաժակները ձեռքներին. նրանց համեստ սեղանը, քիչ շեղումներով,

ավանդաբար զարդարում էին գինին, գարեջուրը, ժենգյալով հացն ու մածունը: Վարպետը նեղսրտում, նաեւ զայրանում էր, երբ երիտասարդ, դեռ կայուն վաստակ չունեցող ընկերն էր խմիչքի եւ ուտելիքի հարցը հոգում, Մովսեսն այդ գործը վերապահում էր իրեն: Բայց չէր առարկում, երբ Արսենը արվեստանոց էր բերում հոր քաշած գինին, որը վարպետի քիմքին խտղտում էր իր աստվածային բույր ու համով: Եվ հոր ժառանգը լինելով՝ Արսենը հիանալի կենացներ էր ճառում: Բայց հիմա վերակողմնորոշվելու ժամանակն է:

– Իմ կռիվը թող այսուհետեւ լինի միայն նկարչությամբ... Ինչ կասեք, վարպետ:

Վարպետն անխառն ժպիտով նայեց սանին՝ չարձակելով փոքրիկ հնչյուն իսկ. ո՞նց է Մովսեսին դուր գալիս Արսենի այդ սլացիկ մտածողությունը: Նա մի անգամ ասել էր երիտասարդ արվեստակցին, որ եթե նրա նկարչությունն էլ դառնա իր խոսքի պես հասուն ու արտահայտիչ, ապա ճակատագիրը նրան հաճելի անակնկալներ շատ կմատուցի՝ հռչակի ու դափնիների տեսքով նաեւ: Արսենը ծիծաղել ու գոչել է ինքնաբուխ. «Դե, կդառնա, մի կասկածեք, ձեզ նման վարպետը թույլ չի տա, որ ինձ նման տղան միջակության վերածվի»: Վարպետը գովեստներ չի շռայլում ոչ ոքի, խորհուրդների մեջ նույնպես զուսպ է: Երբ Արսենը նկարում էր արվեստանոցում, մեկ-մեկ մոտենում էր նրան, նայում խմորվող պատկերին. երբեմն լուռ հեռանում էր, երբեմն հուշում, որ ուրիշ գործ սկսի, բայց ավելի հաճախ թնդում էր. «Դե, քեզ տեսնեմ, Արսեն տղա, առանջ»:

Որ տղան տաղանդ ունի, Մովսեսը տեսել է ամենասկզբից, բայց այդ մասին բարձրաձայն ակնարկ իսկ չի արել՝ մտավախություն ունեւր, որ նա շուտ կշփանա, հատկապես, երբ արդեն ստացել է առաջին երիտասարդական մրցանակները հանրապետական ու համահայկական փառատոներում: Իր կրտսեր արվեստակցին Մովսեսը խրախուսում էր մտերիմ ու ջերմ, գրեթե հայրականի հասնող վերաբերմունքով, ուր խստությունը գրավել էր առաջնա-



կարգ տեղ: «Հա, խելքդ չտաս էդ պատվոգրերին ու դիպլոմներին, հո բյուրոկրատ չես»,– իր սանին սաստել է վարպետը եւ լայնորեն ժպտացել. չէ՛, այս տղայով հիանալ պետք է, սակայն՝ անաղմուկ:

– Ուրեմն այսուհետ նկարչությամբ կմարտնչես... Բոլորիս համար դա ավելի շահեկան կլինի... Բայց երբ նորից պատերազմ բռնկվի...

– Էն ժամանակ նորից զինվորագրվելու եմ, վարպետ, մի կասկածեք,– շիտակորեն անդրադարձել է երիտասարդ նկարիչը:

Արսենի որոշմանը հավանություն տալով՝ Մովսեսը սեւեռվեց արվեստանոցի «ներքին կյանքի» վրա: Նա ուշադրությամբ գննեց սրահը. հատակին փռված վրձինները, ներկերը, նկարակալներն ու փայտե գործերը հավաքված ու խնամքով դրված էին անկյունում, այդտեղ էր հանգրվանել նաեւ մի մաքուր կտավ, որ արկակոծումից ընկած էր հակառակ անկյունում, բայց՝ առանց պատռվածքների: Մնացած ամեն ինչ կարծես թե նախկին վիճակում էր՝ ապակու կտորտանքները, արկի բեկորները, պատռված նկարները, վատմանաթղթերը, ցաքուցրիվ աթոռները: Մի խտրական, բայց բարի ձեռք է անցել արվեստանոցով: Այնուհանդերձ, Մովսեսի սուր աչքը հուշեց անսխալ, որ բացակա գործեր կան:

– Նայիր, Արսեն, երկու նկար պակասում է... տարել են:

– Ո՞ր նկարները,– սեփական ոսկին կորցրածի պես տագնապեց երիտասարդ նկարիչը:

– Ըմմմ... ուրեմն՝ «Սկահակ մաքրող աղջիկը», որ երեւանյան ցուցահանդեսի համար էր եւ... «Մարմարի մեջ երգող ձեռքերը», դա էլ փարիզյան ցուցահանդեսի համար էի նախատեսել, գիտես:

– Հա... այ քեզ գող... Ինչ էլ ճաշակ ունի:

– Նա գող չէ... էդպես մի ասա,– անսպասելի առարկեց Մովսեսը:

– Հապա ղվ է, վարպետ, նա ուղղակի թոցրել է ձեր լավագույն գործերից երկուսը... գուցեե՛ւ՝ ամենալավ գործերը...

Մովսեսը մոտեցավ եւ կկոցուն աչքերով նայեց պատի վրայի

այն դատարկ տեղերին, որ դեռ երեկ ծածկված էին նկարներով:

- Հա, ես էլ էի յուրահատուկ ձեռով վերաբերվում էդ կտավներին... բայց նա գող չէ,- մտածկոտ ասաց Մովսեսը:

- Դե, դուք ուզում եք գողին արդարացնել...

- Չէ, նա... արվեստը հասկացող ու գնահատող մարդ է... շահադիտական ոչինչ չի հետապնդել...- Մովսեսը բառեր փնտրեց իր միտքը ցլուն դարձնելու համար:- Նա փրկել է էդ երկու գործը... էժանագին ու ստից գողերից, նաե՛լ կարիքավոր անցորդներից, որոնք ամեն ինչ, հնարավոր է, խառնեին իրար ու էս բոլորը տանեին ու գրոշներով վաճառեին ինչ-որ մեկին կամ էլ ուղղակի վառարանը գցեին՝ իրենց ցուրտ սենյակները տաքացնելու համար... Արսեն տղա, դու գիտես, չէ՞, որ քաղաքում գազամատակարարումը դեռ չեն վերականգնել, տները տաքացնելու խնդիր կա:

- Հա:

- Ապրես, քաջատեղյակս: Հիմա համամիտ ես ինձ հետ, որ նկարներ տանողը չափազանց բարոյական ու արվեստամեծար մարդ է... Պետք է ուրախանալ, որ էդպիսի մեկը հայտնվում է ես տանում քո լավագույն կտավներից:

- Էդ դեպքում թող բոլորը տաներ, սրանք ինչո՞ւ է թողել... Ձեր ասած «էժանագին գողերն» ու կարիքավոր անցորդները կարող էին մնացածը ոչնչացնել:

- Չէ, եղբայր, նա չի կարող էս ամբողջ բեռը վերցնել իր վրա, նա արել է էնքան, որքան իր ուժն է գորել,- սեփական պայծառատեսությանն ապավինելով՝ ասաց Մովսեսը:

- Բայց ո՞ր է տարել, գիտե՞ք... Դրանք կարող են փչանալ կամ անհետանալ, վարպետ Մովսես: Ո՞վ գիտե, թե որտեղ է պահելու իր թանկ գողոնը էդ... բարոյական արվեստամեծարը... մի խոնավ նկուղում, ավտոտնակում, բակի խորդանոցում, ծակ տանիքի տամկ...- չէր հանգստանում Արսենը:

- Դե, տագնապիդ ազդանշանը անջատիր, Արսեն: Նա էդ նկարները կախելու է իր տան ամենալուսավոր պատից եւ որոշ ժա-

մանակ անց վերադարձնելու է... Այ, կտեսնես... Լավ, հիմա նստիր մի հարմար անկյունում, իսկ ես անցնեմ «շաբաթօրյակի»:

– Չէ, վարպետ, միասին կփայլեցնենք արվեստանոցը: Նման գործերը պետք է ընկերաբար անել, թե չէ Աստծո աչքին գեշ կերես:

Մովսեսը մի պահ տատանվել, ապա համաձայնել է:

Երկուսով ձեռքները քշտեցին եւ մոտ երեք ժամ, ընթացքում հատուկենտ բառեր փոխանակելով, հավաքեցին ու վերադասավորեցին, ավլեցին ու մաքրեցին ընդարձակ արվեստանոցը: Փողոցի մոտակա աղբարկղ նետված թափվածքը կարող էր շատ ավելին լինել, եթե, Արսենի խնդրանքով ու հորդորով, չպահպանեին մի շարք վիրավոր նկարներ, որոնք հնարավոր էր վերականգնել, իսկ եթե մնան այդպիսին էլ, դարձյալ արժեքավոր կլինեին: Հետո ցելֆանով ծածկեցին պատուհաններն ու դռան ապակեջարդ ուղղանկյունները, եւ երբ արդեն իրիկնամուտ էր, խոնջացած բանվորների պես նստեցին մինչպատերազմյան օրերից մնացած մի խնձորի, կոնֆետների եւ գինու թերատ շշի շուրջ: Հազվադեպ էր պատահում, որ գինու շիշը կիսատ թողնեին. գուցե վատ կանխազգացում ունեին, եւ հոռի տրամադրությունը նրանց խանգարել էր խմելու հրաշալի գինին: Բայց նրանց հայացքներն արդեն վաղվան էին հառված, չնայած ողջ զգայարաններով տեսնում էին, որ այդ «վաղը» դեռ անհայտ տեսողությամբ լինելու է անորոշության, կասկածի ու մտավախությունների մի երկար շղթայի հանձնակատարը:

Արսենը լցրեց բաժակները եւ նայեց վարպետին: Իսկ նա սպասում էր, որ կենացը նախկինի պես երիտասարդ արվեստակիցը հիշատակի: Հասկանալով այդ, Արսենը փակվեց իր պատյանի մեջ, նրա դեմքն ասես մթնեց ու անհաղորդ դարձավ, անգամ աչքերում բնավորված բնական փայլը հանկարծակի անհետացավ: Մովսեսն առաջին անգամ էր տեսնում կրտսեր ընկերոջ նման կերպարանափոխությունը: Բաժակը ձեռքին՝ Արսենը մշտապես ցույց էր տալիս իր անսահման կենսախնդությունը, հիմա կարծես թե նրա հակա-

պատկերն է Մովսեսի դիմաց:

– Տղաների կենացը,– տրտմության անհուն խորքերից ի վերջո ասաց երիտասարդ նկարիչը եւ ոտքի ելավ: Կանգնեց նաեւ Մովսեսը, եւ նրանք լուռ պարպեցին բաժակները, ապա աթոռներին կծկվեցին խոցված ոգնիների պես:

Տղաները նահատակված զիվորներն են՝ ավագ թե կրտսեր, նրանք բոլորը՝ շարքային թե սպա, տղաներ են, որ հայրենիքի համար մարտնչել են ու զոհվել: Սալաքարի պես ծանր լռություն իջավ երկուսի կրծքին. նրանք միառժամանակ սուզվեցին իրենց խոշտանգող միաբնույթ խոհաճության մեջ:

– Ինչ ծրագրեր ունես, Արսեն,– ի վերջո խոսեց Մովսեսը՝ մտածելով, որ դա հարկադիր, հերթապահ հարց է:

Արսենը շոռումուռ եկավ տեղում, փնչաց, ապա ուժը վերգտած հովազի պես առաջ մղվեց՝ հստակ տեսնելով ընտրած նշանակետը:

– Ուզում եմ նկարչության մեջ իմ անունը թողնել, վարպետ... Աստված ինձ ողջ թողեց անցած պատերազմում... Ես հո երախտամոռ չեմ, որ ինձ տրված էս հնարավորությունը վատնեմ մանր նպատակների վրա:

– Հա, ճշմարիտ:

Մովսեսը լցրեց բաժակները, բայց տեսավ, որ երկուսն էլ այլևս խմելու ցանկություն չունեն, ուստի գինին ետ՝ շիշը լցրեց, փակեց եւ տարավ դրեց մառանիկում: «Երկրորդ անգամ մեր շիշը թերատ մնաց. չէ՛, ուրիշ ժամանակներ են սկսվում»՝ մտքում արձանագրեց նա եւ թփթփացրեց Արսենի ուսին.

– Դու քո սարերը պիտի բարձրանաս...

– Հա, ալպինիզմի ժամանակներ են մեզ սպասվում, վարպետ:

– Գնանք, ալպինիստ, շուտով մթնելու է: Եկեղեցի մտնենք, հետո տուն կգնանք:

Նախքան դուրս գալը Մովսեսը տանտիրոջ, թե՛ անկոչ հսկիչի պես զննեց ավերման հետքերից ազատված արվեստանոցը. այն,

իրոք, նոր տեսք ու գույն է ստացել, եւ կարծես թելադրում է, որ առաքելությունը խմբագրել է պետք:

– Չէ, առաքելությունը նույնը կմնա, ավելի խստացված կանոններով,– բարձրաձայն առարկեց Մովսեսը իր անհայտ ընդդիմախօսին:

– Ինչ, վարպետ,– նրա խոսքը չընկալելով՝ հարցրեց Արսենը:

– Ասում եմ՝ մեր առաքելությունը նույնը պետք է մնա:

– Հա, վարպետ, դա արեւի լույսի պես պարզ ճշմարտություն է:

– Դե, գնացի՞նք,– ասաց Մովսեսը, հանեց բանալին, որ դուռը կողպի: Նույն պահին մուտքի մոտ հայտնվեցին նրա սանուհիներ ժաննան եւ Գոհարիկը: Նրանք առժամանակ շժմած կանգնել ու նայում էին արվեստանոցի ցելոֆանապատ պատուհաններին: Ժաննայի ձեռքին երեք խոշոր ավվան վարդ կար, բնական, անկրկնելի բոյրով վարդեր:

– Շմտ է վնասվել, պարոն Մովսես,– առանց բարեւի ու «բարով-տեսանքի», մեղավոր ձայնով հարցրին սկսնակ նկարչուհիները՝ իրար կրկնելով:

– Դե, չէ, աղջիկներ, առանձնապես բան չկա: Արսենի հետ հավաք-տեղակ արի՞նք: Առայժմ ցելոֆանապատ արվեստանոց կլինի, մինչեւ նոր ապակիներ տեղադրենք:

Աղջիկներն առանց հրավերի ներս անցան եւ մի երկու րոպեի չափ ուսումնասիրեցին արվեստանոցը: Դա նրանց համար նույնպես հարազատ վայր է, ուր ներխուժած ավերը կարող է գետնահար անել նաեւ նրանց երազանքներում ու հոգիներում աճող ծաղիկները:

Ժաննան հայացքով փնտրեց ու գտավ ճենապակե հին ծաղկամանը, որ պատին ամրացված երկար փայտե դարակի վրայի տեղը կորցրած՝ այժմ հանգրվանել է խորքի պատուհանագոգին. պատի այդ դարակն այլեւս չկար: Ջուր լցրեց, վարդերը տեղավորեց, եւ միանգամից երգող ու բուրող կարմիրով բռնկվեց ծաղկամանը: Այն համակ զգուշությամբ տարավ ու դրեց սեղանի կենտրոնում, մի երկու քայլ ետ գնաց ու տեսավ, թե ինչպես երազային տեսք ու շունչ

առավ ամբողջ սրահը: Ժաննայի տեսիլքն ակներեւ եղավ նաեւ մյուսների համար: Աղջիկներն ինքնագոհ ժպտացին, որ հաջողվեց, թեկուզեւ ժամանակավորապես, վարդիշխանություն հաստատել արվեստանոցում: Ժաննան միաժամանակ հասցրեց նկատել, որ ճենապակե ծաղկամանը վերից վար ճաքել է. «Արկահարումից կրել է հարվածի իր բաժինը»,– եզրակացրեց ուշիմ սանուհին:

– Իսկ ես կարծեցի, թե վարդերն ինձ համար են,– ծաղիկներից աչքը չկտրելով՝ իբր խոռովկանի տեսք առավ Մովսեսը. դա նրա սիրած կատակներից է:

– Չէ, պարոն Մովսես, արվեստանոցի համար են: Շատ ման եկանք քաղաքում, մինչեւ գտանք մեր բարեկամի այգում: Ծաղկավաճառները դեռ կարգին չեն ակտիվացել,– երգող թռչնալի պես գեղգեղաց Գոհարիկը:

– Ապրեք, արվեստանոցի անունից՝ շնորհակալություն:

– Ձեր կիսատ թողած նկարները հիմնականում պահպանվել են, հավաքել ենք այ էնտեղ,– տեղեկացրեց Արսենը՝ մատնացույց անելով հեռավոր պատի տակ դրված մեծ ու բաց գրապահարանը:

Ժաննան ու Գոհարիկը դանդաղ մոտեցան գրապահարանին, նայեցին նկարները, որոնք նրանց աչքին հեռավոր ու խամրած աստղերի պես երեւացին, եւ ծպտուն չհանելով՝ վերադարձան վարպետի ու Արսենի մոտ:

– Կարող ենք շուտով վերսկսել պարապմունքները,– որպես լավ լուր շտապեց հայտնել Մովսեսը:

– Համ,– զարմացան աղջիկները:

– Իհարկե, եթե ցանկանաք... Դե, ասեք՝ ո՞նց եք, օրիորդներ, ամեն ինչ կարգին է ձեր ընտանիքներում,– հարցրեց Մովսեսը՝ մտքում փափագելով, որ տխուր լուրեր չի լսի սանուհիներից: Բայց իրականությունն անողոք է, այն հաշվի չի նստում ոչ մի փափագի ու սպասելիքի հետ:

– Մենք էսօր ենք վերադարձել Երեւանից, պարոն Մովսես,– տեղեկացրեց Գոհարիկը, ով ստուդիայի փոքր խմբի «խոսնական»

է՛ ասում են:– Մեզ լավ են հյուրընկալել էնտեղ, բայց մեկ է՛ շատ դժվար օրեր ենք անցկացրել... Թեկուզ կովից հեռու էինք, մղձավանջի միջով ենք անցել... Ամեն ինչ լավ չի, պարոն Մովսես... Սոֆիկի եղբայրն է զոհվել... դիակը դեռ չեն գտել:

Սոֆիկը ստուդիայի չորս սանուհիներից մեկն է, խմբի ամենա-  
շնորհալին՝ ըստ Արսենի: Վերջինս, լսելով արյունոտ լուրը, շեշտա-  
կի հարցրեց.

– Սոֆիկը որտե՞ղ է հիմա,– եւ ներկաները զգացին, որ Արսենը  
ցնցված է:

– Նա վաղը կվերադառնա Ստեփանակերտ: Պատերազմի օրե-  
րին հարազատների հետ Գյումրիում էր:

– Հարազատների իզական խմբով,– լրացումն էական համա-  
րեց Ժաննան:

Արվեստանոցում վերստին տիրեց փշոտ ու այրող լռություն:

– Երբ եկավ Սոֆիկը, մեզ տեղյակ պահեք, աղջիկներ: Կգնանք  
տեսակցության:

– Լավ, պարոն Մովսես, անպայման,– ընկերուհիների անունից  
պատրաստակամություն հայտնեց Գոհարիկը:

Արվեստանոցից դուրս եկան տխրամած տրամադրությամբ:  
Օրը դեպի իրիկնամուտ էր թեքվել իր սառնությամբ ու տարտամ  
համապատկերով: Նրանք գրեթե անխոս քայլեցին մինչեւ Օղակա-  
ձեւ պուրակ: Երբ պիտի հրաժեշտ տային աղջիկներին, Մովսեսն  
անակնկալ ասաց.

– Եթե Սոֆիկի եղբոր դին դժվարանան գտնել, մենք էլ կգնանք  
որոնումներին մասնակցելու...– Մովսեսն արդեն կանխատեսում էր,  
թե ինչ մարդկային ալեկոծումների մեջ կարող են հայտնվել իրենք  
առաջիկայում:

– Հա, հնարավոր է՛ մենք ավելի արագ գտնենք նրան,– վար-  
պետի միտքն ամրապնդեց Արսենը:

– Տեսնենք,– մտախոհ ասաց Մովսեսը:– Դե, Ժաննա, Գոհա-  
րիկ, լավ պահեք ձեզ եւ կապի մեջ եղեք:

- Լավ, պարոն Մովսես, դուք էլ ձեզ լավ պահեք,- գրեթե միաբերան արձագանքեցին սանուհիները:- Տոնեսություն ձեզ:

- Տոնեսություն, Արսեն, դու էլ քեզ լավ պահիր,- ավագի իրավունքով, թե՛ գաղտնի համակրանքով ասաց ժաննան:

- Տոնեսություն, աղջիկներ,- մի փոքր ուշացած՝ արդեն նրանց ետեւից պատասխանեցին Մովսեսն ու Արսենը: Նրանք մի քանի վայրկյան հայացքով ուղեկցեցին աղջիկներին:

- Ժաննան քեզ համակրում է, գիտե՞ս...- որպես նորություն ասաց Մովսեսը:

- Է... թող համակրի, իր գործն է,- անտարբեր արձագանքեց Արսենը:

Նրանք ուղղվեցին դեպի Սբ. Աստվածամոր Հովանի տաճար: Քայլեցին ինքնամփոփ ու դանդաղ, եւ Մովսեսը ճամփին նորեն իրեն հայր զգաց Արսենի հանդեպ, մի զգացում, որ երբեմն ունենում է հատկապես որդու՝ Գեղամի, Ռուսաստան տեղափոխվելուց հետո: Դա երեք տարի առաջ էր: Մովսեսը երկար փորձեց որդուն համոզել, որ ետ կանգնի տարագրվելուց, սակայն կամակոր ու եսակենտրոն ժառանգը («հիմ է քաշել իր էդ վարքագծով») համառորեն պնդեց, որ իր զավակների ապագայի մասին է մտահոգվում, վերցրեց կնոջն ու երկու երխաներին եւ թըռռ՝ ռուսական խուլ նահանգներից մեկը, իբր այնտեղ ավելի ապահով կապրեն, հեռու՝ արցախյան պատերազմաշունչ գոտուց: Կովի քառասունչորս օրերին Գեղամն ընդամենը մեկ անգամ էր զանգել հորը: Այդ մասին Մովսեսը ոչ ոքի չի ասել, նույնիսկ՝ կնոջն ու աղջկան, տխուր փաստը որպես ամոթալի գաղտնիք ու խոր վիրավորանք պահում է սրտի ամենամուօ անկյունում:

- Հարսնացու դեռ չե՞ս գտել,- երբ հասել էին տուֆապատ տաճարի մատույցները, Արսենին իր պահանջկոտ հայացքն ուղղելով՝ հարցրեց Մովսեսը:

- Էդ ուղղությամբ մտածում եմ, վարպետ:

- Ինչ ես մտածում էդքան երկար... շուտով երեսունդ կլրանա:



– Է, աղջիկները չեն փախչի: Համ էլ աղքատ նկարչի հետ ո՞ր մի խելոքը կուզենա ամուսնանալ:

– Լսիր, ընկեր, ականջիդ օղ արա՛ ընտանիքն ու արվեստը հակոտնյաներ չեն, իրար երբեք չհակադրես: Ընտանիքն էլ մի այլ կարգի արվեստ է, հասկացա՞ր...

– Այո, վարպետ, ճիշտ այդպես,– չգիտես ինչու՛ զգաստ ու զինվորավարի պատասխանեց Արսենը:

– Հանկարծ չլինի, որ քո ազատասիրության ու անհեռատեսության զոհը դառնաս:

– Բայց մենք միշտ ինչ-որ բանի զոհ ենք դառնում, չէ՞...

– Հա, բայց դրա դիմաց փոխհատուցում ենք ստանում, եթե խելացի ձեռով ես զոհաբերվում: Օրինակ, ընտանիքի տեր լինես՝ ժառանգներ կունենաս... գուցե եւ նրանք քեզնից ավելի տաղանդավոր լինեն...

– Որ մեծանան՝ աջ ու ձախ թռնեն... Մեզ լավագույն դեպքում զոյգով ձերություն է սպասվում:

Մովսեսի սիրտը ճմլվեց՝ հիշեց Գեղամին: Բայց նահանջելու մտադրություն չուներ, միայն փոխեց զրույցի մարտավարությունը:

– Իսկ ի՞նչ կասես Սոֆիկի առիթով,– հարցրեց Մովսեսը՝ գտնելով, որ «Ժաննայի հարցը» Արսենի օրակարգում չկա:– Նա քեզ արժանի կին կարող է լինել՝ արվեստիդ գինն իմացող, քեզ համախոհ:

– Սոֆիկը հրաշալի աղջիկ է,– այդքանը խոստովանեց Արսենը:

Արդեն հասել էին եկեղեցու մուտքի մոտ: Ներս մտան, եւ Մովսեսն անմիջապես նկատեց, որ վառվող մոմերի թիվն անհամեմատ ավելացել է, շատ էին նաեւ այցելուները, ինչն օրվա այդ ժամի համար անսովոր է. երեկոյան տաճարը սովորաբար դատարկվում է մարդկանցից, հագենում իր աստվածային խաղաղությամբ:

– Ինչ շատ են այցելուները,– զարմանքը չթաքցնելով եւ ի գիտություն Արսենի՝ ասաց Մովսեսը: Նա այդ իրողությունը մտովի առնչեց տուն վերադարձող համաքաղաքացիների թվաքանակի աճի հետ: Արսենն էլ խորհեց, որ ահագնանում են զոհերի վերաբերյալ

տեղեկությունները, եւ հարազատները նաեւ մոմավառությամբ են արտահայտում իրենց սպասելիքները: Իսկ ամբողջ իրականությունն այդ երկու փաստի միագումարն է, որը դեռ տեսականորեն սթրեսի, ընկճախտի, հուսախաբության ու դատապարտվածության մեջ է դաղելու հազարավոր մարդկանց, այդ թվում՝ վարպետին ու իր աշակերտին:

Աստիճաններով ապաստարան իջնելիս Մովսեսն ասաց.

– Կժանդթանաս մեր «պաշտպանական խորհրդի» հետ, հրաշալի մարդիկ են, նրանց հետ կարելի է եւ մարտի գնալ, եւ «ձախ»:

Արսենը զուսպ ծիծաղեց, ապա ցանկացավ ճշտել.

– Էդ ինչ «պաշտպանական խորհուրդ» է:

– Ինքդ կտեսնես: Մենք ամեն երեկո առանց հրավերի ու պարտադրանքի հավաքվում ենք էստեղ, մեզ համար պատերազմն ավարտված չէ:

Ապաստարանի երկար սեղանի շուրջ նստած զրուցում եւ թեյ էին խմում (մատուցում էր Մարիան) Տեր Միսաքը, պաշտոնաթող գնդապետ Վարդանյանը, մանկավարժ Սիմոն Վարազյանը, Վիգենը եւ նրա ընկեր, վիրավոր Խորենը, դպիր Արմանը, Քեռին՝ իր որդի Տիգրանի հետ, փրկարար ծառայության կապիտան Մուրադ Բեկյանը, Սոֆիկի հայր Սուրենը եւ երկու անձանոթ:

Սեղանի մոտ տեղ գրավելուց առաջ Մովսեսը մոտեցավ Սոֆիկի հորը եւ ամուր ու կարեկցաբար սեղմեց ձեռքը: Ավելորդ համարեց արտաբերել ավանդական «պինդ կաց»-ը, ամեն ինչ առավել քան ակնբախ էր: Հետո Վիգենի ընկեր Խորենի որպիսությամբ հետաքրքրվեց, ում վիրակապված գլուխը եւ դեմքի ճանկովածքներն ու մռայլությունը հստակ հուշում էին կատարված ողբերգության խորությունը:

– Դե, ճնց պիտի լինեմ... պարտված, վիրավոր, խաբված, հուսալքված... Կարող եք ինքներդ շարունակել էդ շարքը,– խոռվահույզ պատասխանել է վիրավոր զինծառայողը:

Մովսեսը պարզ տեսնում էր նվաստացած սերնդի մի շարքա-

յին ներկայացուցչի, որի կյանքը հավանաբար երկար խարանված է մնալու պարտության անարգանքով: Բայց նրանց օգնել է պետք՝ խորհեց նկարիչը, որ շուտ ելնեն կեղեքիչ թմբիրից եւ նորից ճամփա ընկնեն դեպի աներեր ինքնահաստատում: Տեղավորվելով աթոռին եւ Մարիայից իր բաժին թեյը ստանալով՝ Մովսեսը թեքվեց կողքին ընկողմանած Արսենի ականջին եւ խորհրդավոր ձայնով ասաց.

– Մեր «պաշտպանական խորհրդի» էսօրվա նիստը լինելու է ընդլայնված կազմով:– Ապա երիտասարդ ընկերոջը կամացույց ու հակիրճ ներկայացրեց «խորհրդի» անդամներին՝ յուրաքանչյուրի վերաբերյալ մի հիացական խոսք ասելով: Մարիայի կապակցությամբ ասաց.- Մեր հիասքանչ լալիկն է, Վիգենը ոտից գլուխ սիրահարված է նրան:

– Սիրահարվելու տիպ է երեւում,- շնջաց Արսենը:

– Ձե՛նդ,- կրտսեր ընկերոջը մեծավարի սաստեց Մովսեսն ու հայացքը դարձրեց ներկաներին եւ տեսավ, որ գրեթե բոլորն իրեն ու Արսենին են նայում, իսկ Տեր Միսաքը թեթեակի դիմախաղով ինչ-որ բան է ականարկում իրեն. նկարիչն ըմբռնեց անելիքը:

– Հա՛, պարոնայք, մենք նորեկ ունենք՝ իմ արվեստակից ընկեր Արսենը,- ասաց ու ձեռքը տարավ նրա ուսով:– Նա էսօր է վերադարձել Մարտակերտից, էնտեղ ծառայության էր... Ինչպես ասում են՝ սիրեք ու փայփայեք նրան... մյուսների պես: Հա, նա էսօր շատ օգնեց, որ մաքրենք ու հավաքենք արվեստանոցը:

– Բայց մեր օգնությունից հրաժարվում էիր,- նեղացած արձագանքեց մանկավարժ Սիմոնը:

– Դե, ընկեր Սիմոն... համարեցի, որ արվեստի հոգսերը պետք է հոգան արվեստի մարդիկ, ընդամենը: Ես ձեզ բոլորիդ երախտապարտ եմ:

– Իսկ վնասները վերականգնելու համար մեր օգնության կարիքը չկա՛մ, Մովսես,- բարեհոգաբար հարցրեց Տեր Միսաքը:

– Շատ շնորհակալ եմ, Տեր Միսաք, մի անհանգստացե՛ք, ես

ամեն ինչ կվերականգնեն: Դուք էնքան դարդ ու ցավ ունեք, որ չպետք է մի արվեստանոցի բեռ էլ վերցնեք ձեզ վրա: Աստված բռնորիս օգնական:

– Դե, լավ, բարի... Մինչ կանցնենք մեր մյուս մտահոգություններին, թող ուրախալի լուրով սկսենք էսօրվա հավաքը: Խոսիր, սիրելի Քեռի:

Քեռին, նույն ինքը՝ Ռուբեն Բագրատյանը, ոտքի կանգնեց եւ իր գեղեցիկ ու տարածուն ժպիտով վարակեց ներկաներին: Նրա բնական բամբ ձայնն այս անգամ փափուկ ու քնքուշ էր հնչում:

– Հարազատներս, դուք երեւի չեք մոռացել, որ Շուշի հետախուզության գնալու ճանապարհին մեր խիզախ տղաներ Վիգենն ու Արմանը հայտնաբերել էին մի վիրավոր զինվորի՝ գորիսցի Հովհաննես Մանուկյանին... նա կոմայի մեջ էր: Նրան հոսպիտալ էինք տեղափոխել: Էսօր Տիգրանիս հետ,– ասաց Քեռին ու ձեռքը տարավ որդու ուսերով,– գնացինք Հովհաննեսին տեսակցության... եւ տեսանք, որ սպասված հրաշքը կատարվել է՝ նա ուշքի է եկել:

– Հա՛,– բացականչեցին Վիգենն ու Արմանը:

– Մենք երեկ էինք նրան այցի գնացել, դեռ կոմայում էր,– զվարթագին ասաց Վիգենը:

– Հա, էսօր է ուշքի եկել տղան, բժիշկներն ասացին՝ առավոտյան տասնմեկին: Ասացին նաեւ, որ նա երկար բուժում կանցնի, բայց անպայման կապաքինվի: Աստված նրան առողջություն տա:

– Աստված առողջություն տա նրան,– առույգ արձագանքեցին ներկաները:

– Ասում էի, չէ՛, Վիգեն, որ մեր վիրավոր ընկերը կապաքինվի,– նոր հաղորդություն ստացածի հուզմունքով ասաց դպիրը:

– Հա՛, դու հրաշագործ ես, Արման,– գոչեց Վիգենն ու, եղբայրաբար գրկելով նրան, համբուրեց ճակատը:

Բայց ամենից զգացվածն ու տպավորվածը Մարիան էր. նա ուրախությունից ու զարմանքից ձեռքով փակել էր բերանը՝ ավելի ընդգծելով լայնորեն բացված ու շողշողուն խաժ աչքերը: Ապաս-

տարանում շատերը դեռ չգիտեին, որ անցած գիշերները Մարիան Վիգենի ու Արմանի հետ անց էր կացնում հոսպիտալում, մահաթմբիրի մեջ գտնվող զինվորի մոտ: «Սիրուն լալիկը» բռնում էր տարաբախտի մի ձեռքը, Վիգենը՝ մյուս, իսկ Արմանը աղոթում էր, այդպես՝ երեք գիշեր: Այդ ընթացքում նրանց երկու անգամ միացել էր Քեռին:

– Աստված երկար կյանք տա վիրավորին,– բարձրաձայնեց քահանան: Մի քանի վայրկյան հուսո լռություն տիրեց ապաստարանում:– Թող միշտ մեզ ուղեկցեն նման բարի լուրերը,– ավետիսն ամփոփեց Տեր Միսաքը եւ կենտրոնացավ հավաքի բուն թեմաների վրա:– Սիրելիներս, դուք երեւի նկատել եք, որ արդեն Ստեփանակերտ են վերադառնում պատերազմի օրերին Հայաստանի Հանրապետություն եւ այլուր տեղափոխված մեր համաքաղաքացիները, եւ ոչ միայն. այստեղ են գալիս նաեւ հազարավոր տեղահանվածներ Շուշիից, Հադրութի շրջանից եւ սահմանային առանձին բնակավայրերից, որոնք նույնպես հանձնվել են թշնամուն: Հիմա մեր կողքին է Շուշիից տեղահանված Սարո Հարությունյանը, նա մեզ հետո կպատմի իր ապրածի եւ մեզնից ունեցած ակնկալիքների մասին,– ասաց քահանան եւ ձեռքով ցույց տվեց շուշեցի բռնազաղթածին: Ապա առավել մտահոգիչ տոնով հավելեց.– Եվ, պարզվում է՝ կա ավելի ծանր խնդիր. Հայաստանից եւ մեր շրջաններից Ստեփանակերտ են ժամանում բազմաթիվ զոհված, գերեվարված եւ անհայտ կորած զինվորների հարազատներ՝ ծնողներ, եղբայրներ ու քույրեր, զավակներ: Նրանցից մեկը հիմա այստեղ է՝ երեւանցի պարոն Խաչատուր Մարգարյանը: Նա շինարար է, որդուց՝ Վարուժից լուր չունի արդեն երեք շաբաթ: Ոմանք ասում են...– Տեր Միսաքը հազաց, խռպոտված կոկորդը մաքրեց եւ հուզմունքը խեղդելով՝ շարունակեց,– ոմանք ասում են՝ զոհվել է Վարանդայում, ոմանք էլ ասում են, թե գերեվարվել է... Այստեղ է նաեւ իմ հարեւան Սուրեն Բադալյանը, ով նույնպես հայտնվել է մեծ դժբախտության մեջ:

- Նա Սոֆիկի հայրն է,- Արսենին կամացուկ հաղորդեց Մովսեսը:

- Համ,- անսպասելիությունից ծուլ եղավ երիտասարդը: Արսենը շատ տխրեց, որ Սոֆիկի հորն առաջին անգամ հանդիպում է նման իրավիճակում:

Իսկ Տեր Միսաքն անշտապ հրամցնում էր իր շամփրող տեղեկատվությունը:

- Սուրենի որդին՝ Կորյունը, զոհվել է, այդպես են ասում նրա ողջ մնացած ծառայակիցները, բայց տղայի մարմինը դեռ պետք է գտնել եւ...- Տեր Միսաքը լռեց. նա չի կարող ամեն ցավ բարձրաձայնել, դա իր կոչումը չէ: Քահանան մինչեւ վերջերս, հուղարկավորությունները մի կողմ, հիմնականում զբաղված էր ժամերգությամբ ու պատարագով, մկրտությամբ ու օրհնությամբ, քաջալերանքով ու մխիթարությամբ, հիմա ինչպէս քաջալերի ու մխիթարի: Նա սրընթաց խորհեց, որ Աստված իրեն մի նոր առաքելության է մղում, չէ՛, իսկական փորձության, որը կարող է եւ իր ուժերից վեր լինել: Այնուհանդերձ, կորով գտավ իր մեջ ու շարունակեց:- Սիրելիներս, դուք գիտեք, որ մենք ոչ կառավարություն ենք, ոչ էլ պետական կամ նույնիսկ հասարակական կառույց, որ միջոցներ ու մարդիկ ունենանք՝ լծվելու այդօրինակ բարդ խնդիրների կարգավորմանը...

- Ինչ արեց կառավարությունը պատերազմի ժամանակ, որ ինչ անի հիմա,- իր սարկավազը չզսպեց մանկավարժ Սիմոնը: Գլխի շարժումով նրան «ձայնակցեցին» գնդապետ Վարդանյանը, Մովսեսը, Վիգենը, Արմանը, Արսենը:

- Ընկեր Սիմոն, դրա ժամանակը չէ... Հա, մենք պետական կառույց չենք, մենք Հայ եկեղեցու համեստ սպասավորներ ու հետեւորդներ ենք, ընդամենը, շարքային քաղաքացիներ, բայց՝ զգալուն ու սրտացավ մեր երկրի ու հայրենակիցների հանդեպ, ուստի, եթե ինչ-որ բան հաջողվի մեզ անել, դա հնարավոր կլինի հոգով, մտքք եւ մեր այս ձեռքերով,- ասաց քահանան ու ձեռքերն առաջ մեկնեց:- Մենք կարող ենք մեր ուժերի ներածին չափով աջակ-

ցել նրանց, ովքեր պատասխանատու են հիշատակածս ծանրագույն հարցերի համար... Դուք տեսնում եք, որ մեր հավաքին ներկա է նաեւ փրկարար ծառայությունից մեր լավ բարեկամ Մուրադ Բեկյանը, ում բերած հացն ու ջուրը պատերազմի օրերին մեզ համար մանանայի պես էին... Սիրելի Մուրադ, կարո՞ղ եք ասել, թե ինչ է ձեռնարկվում պետության, ձեր գերատեսչության կողմից ահագնացող այդ խնդիրները լուծելու համար, եւ մենք ինչպես կարող ենք աջակցել:

– Հակիրճ հետեւյալը կասեմ, Տեր Հայր,– ուրքի կանգնելով՝ իր պարզաբանումը սկսեց կապիտան Բեկյանը:– Այո, ամբողջ պետությունն ու ժողովուրդն աննախադեպ պրոբլեմների առջեւ են հայտնվել: Նախատեսվում է Շուշիից ու Հաղրուփից բռնագաղթած մարդկանց ժամանակավորապես տեղավորել հյուրանոցներում, հանրակացարաններում, այլեայլ շենքերում, ուր նման հնարավորություն կգտնվի, մինչեւ նրանց բնակության հարցի վերջնական լուծումը: Բայց բոլորիս համար ակնհայտ է, որ առկա ամբողջ ջենքային ռեսուրսը բավարար չէ, որպեսզի բոլոր բռնագաղթածներին տեղավորեն, քանի որ նրանց թիվը բավականին մեծ է... հազարավորներ են: Ուստի կարիք է լինելու մեր քաղաքացիների աջակցության, հատկապես նրանց, ովքեր ունեն ազատ տուն ու բնակարան, եւ էնտեղ կարելի է մարդկանց ժամանակավոր բնակության հնարավորություն տալ: Ահա էս հարցում կարող եք օգտակար լինել. եթե դուք չունեք լրացուցիչ բնակտարածք, կարող եք տեղեկանալ ձեր ընկեր-բարեկամներից, թե ովքեր կարող են օգնություն ցույց տալ անօթեան ու ունեզրկված մեր հայրենակիցներին: Պետությունը, կարծում եմ, օժանդակելու է հյուրընկալողներին:

Մովսեսն ու Արսենն իրար նայեցին եւ ինքնին հասկանալի համաձայնություն կայացնելով՝ խոնարհեցին զլուփները: Նույն շարժումը կրկնեցին մյուս ունկնդիրները:

– Գերեվարվածների վերաբերյալ,– իր «զեկույցը» շարունակեց կապիտան Բեկյանը,– առայժմ ոչինչ չեմ կաող ասել, կարծում եմ՝

մեր ուժային մարմինները կզբաղվեն էդ հարցով: Մեր ծառայությունը լիովին ներգրավվելու է մյուս բարդ գործում. դուք գիտեք, որ շատ զոհվածների աճյուններ մնացել են գրավյալ տարածքներում, հիմա մեր հրատապ խնդիրն է՝ փնտրել ու գտնել տղաների մարմինները, բերել ու հողին հանձնել: Էս պահին ռուս խաղաղապահների միջնորդությամբ բանակցություններ են վարվում հակառակ կողմի հետ՝ թույլտվություն ստանալու նպատակով, որպեսզի մեր որոնողական խումբը մտնի գրավյալ շրջաններ եւ մեր զոհվածների աճյունները հանի էնտեղից...

- Ես կարո՞ղ եմ միանալ ձեզ... Ես ստույգ գիտեմ, թե որտեղ է զոհվել իմ տղան, - անհամբեր ու գրեթե աղերսական ձայնով միջամտեց Խաչատուր Մարգարյանը: - Հենոյիս հետ հեռախոսով խոսել եմ նրա զոհվելուց կես ժամ առաջ. ասաց, որ ես չանհանգստանամ, այնինչ նրանք արդեն շրջափակման մեջ էին ամբողջ դասակով... Վարանդայի հին օդանավակայանի մերձակայքում էին:

- Չգիտեմ, հայրիկ, ես ձեզ ոչինչ չեմ կարող խոստանալ, նման հարցերը ես չեմ որոշում, - ավստասանքով արձագանքեց կապիտանը եւ բուրբ մատով դեպի վեր նշան արեց: - Ես միայն կարծում եմ, որ հնարավոր ու տեղին կլիներ՝ հարազատներին ներգրավել որոնումներում, թեեւ դա շատ ծանր ապրումների տեղիք կտա նրանց: Բազմաթիվ ծնողներ են գրեթե մինչեւ վերջին պահը կապ պահել իրենց որդիների հետ, գիտեն, թե մոտավորապես որտեղ են գտնվել նրանք զոհվելուց առաջ: Զինվորական տեսանկյունից՝ դա լավ փաստ չէ, բայց հիմա օգտակար դեր կարող է խաղալ:

- Իմ տղա Շահենն էլ վերջին անգամ զանգել է Հադրութից, հետո ինձ չհաջողվեց նրա հետ կապվել... Երեք օր հետո իմացանք, որ զոհվել է իր երկու ընկերների հետ, Տող գյուղի մոտ... Ես էլ եմ ուզում միանալ ձեր խմբին, կապիտան, - ասես կրակի միջից հանելով բառերը՝ խնդրեց Սուրենը:

- Մենք էլ ենք ուզում, - բարձրաձայնեց Վիգենը՝ ձեռքը Արմանի ուպին:



- Հա, դուք շատ օգտակար կլինեք,- հավանություն տվեց գնդապետ Վարդանյանը, ով «գերազանց» էր գնահատել տղաների արշավը Շուշի: Բայց եւ ավելացրել էր. «Համա թե ավանտյուրիստներ եք, հա»:

«Ինչ խորն է որդի կորցրած հոր վիշտը, ինչ անպատմելի,- խորհեց Մովսեսը՝ մտախոհ հայացքը դարձնելով մերթ Սուրենին, մերթ Խաչատուրին:- Նրանք նույնիսկ չգիտեն՝ կգտնվեն իրենց որդիների մարմինները, թե...»: Նկարիչը չչարունակեց խոհածումը՝ այն անտանելի էր դառնում: Միայն մտքի մեջ հպանցիկ անդրադարձավ, որ մի օր կփորձի պատկերել այդ վիշտը, բայց համոզված չէր, որ դա իրեն կհաջողվի:

Հեռախոսի զանգ լսվեց՝ կապիտանին էր ուղղված: Նա արագորեն պատասխանեց.

- Այո, լսում եմ... այո, պարոն գնդապետ... հիմա:- Անջատեց հեռախոսն ու հոգնած հայացքով շուրջը նայեց:- Ներեցեք, ես պիտի գնամ, կանչում են... հենց էս հարցերով:- Բեկյանը շարժվեց դեպի ելքը:- Կապի մեջ կլինենք, Տեր Միսաք: Ցտեսություն բոլորիդ, խաղաղություն ձեզ:

- Ցտեսություն, թանկագին կապիտան,- պատասխանեց քահանան: Երբ Բեկյանը հեռացել էր, կամեցավ ավելի խորամուխ լինել օրվա հիմնախնդիրների մեջ, բայց ներքին մի ծայն Տեր Միսաքին կանխեց՝ պետք չէ ծամծմել այն նյութը, որն արյունոտ ու դառնահամ է եւ ինչն այնքան ակնբախորեն տարուբերվում է քո առջեւ: Նա միայն ասաց.- Դե, ավելորդ խոսելու կարիք չկա, կարծում եմ՝ բոլորիդ ամեն ինչ պարզ է: Աստված օգնական:

- Աստված օգնական,- արձագանքեցին ներկաները:

Մովսեսը գիտեր, որ հավաքի բուն թեմաները թեեւ քննարկված-ավարտված են, ապաստարանի մարդիկ դեռ էլի երկար նստելու են՝ փոխկանչի հանգույն զրուցելու առավել մատչելի ու առօրյա բաներից, օրինակ՝ կապի ու էլեկտրականության խափանումներից, ավերակված շինություններից, թանկացող ապրանքներից, վերա-

դարձող հարազատներից՝ այդպես ցանկանալով մի փոքր ցրել Խաչատուրի եւ Սուրենի դառնաղետ մտքերը, նաեւ՝ թաքուն ձգտելով այդկերպ, միառժամանակ, քողարկել օրվա տանջալի ցավերը: Բայց դա նրանց չի հաջողվելու, անմեղ «թատրոնը» շուտով տաղտկացնելու է իրենց, եւ մի կես ժամ անց նրանք նորեն անդրադառնալու են գաղթականներին, գերիներին ու զոհերին, խմբվելու են վշտակիր հայրերի շուրջը եւ նրանց մխիթարելու աշխարհի ամենանորբ ու քնքուշ խոսքերով: Մովսեսն այս մարդկանց արդեն հիանալի ճանաչում է. նրանք քեզ մենակ չեն թողնի, իսկ ինքը մենակ լինելով հանդերձ՝ որպես ստեղծարար անհատ, երբեք էլ միայնակ չի եղել որպես մարդ, առավել եւս հիմա, իր այս վեհասիրտ ընկերների շրջապատում, բայց եւ սենտիմենտալության ծուղակը չէր ուզում ընկնել, դա իր «եղանակը» չէ: Ուստի նպատակահարմար չգտավ ականատեսն ու մասնակիցը մնալ այդ սրտապատառ տեսարանին, վեր կացավ եւ «լավ կացեք» ասելով՝ դուրս եկավ ապաստարանից: Նրան անվարան հետեւեց Արսենը: Աստիճաններով բարձրանում էին, երբ նրանց փութուտ հասավ Վիգենը եւ ծոցագրպանից հանելով մի թուղթ, երախտագին ասաց.

– Վարպետ Մովսես, անչափ շնորհակալ եմ, Մարիային էնպես եք նկարել, ոնց որ ես եմ տեսնում ու պատկերացնում նրան:

– Ապրես, Վիգեն ջան, դու հիանալի ասպետ կլինես Մարիայի համար: Հուսամ՝ մի օր ճերմակ ձիով կգնաս նրան փախցնելու,– իր արած գծանկարին թռուցիկ նայելով՝ կես-կատակ, կես-լուրջ ասաց Մովսեսը:

Վիգենն ու Արսենը համերաշխորեն ծիծաղեցին: Մովսեսը ժպտում էր իր երիտասարդության ինչ-որ հեռավոր կապույտներից: Այդպես երեք տղամարդ անխոս ուխտ կապեցին, որ միահամուռ պաշտպանելու են ազնվական սիրո սլացքն ու փթթումը:

Նախքան տաճարից դուրս գալը Մովսեսը մոտեցավ խորանին եւ մի երկու րոպե հիացական նայեց փռված վիշապագորգին, որ առժամանակ հանգրվանել էր այնտեղ՝ մինչեւ կմիանա փրկված մյուս

գորգերին:

– Նայիր, Արսեն, տես՝ ինչ հրաշալի վիշապագորգ է, Վիգենի ու Արմանի փրկածն է,– սեղմ լուսաբանեց Մովսեսը: Իսկ հետո ճանապարհին մանրամասնորեն ու ոգեշնչված պատմել է, թե ինչպես են հետախույզները Շուշիից Աբ. Ասուվաճամոր Հովանի տաճար հասցրել այդ հին ու թանկագին մասունքը:

Երբ դուրս էին գալիս դեռ մարդաշատ եկեղեցուց, վարպետը նկատեց, որ միջահասակ ու նիհար մի տղամարդ կանգնել է բեմին շատ մոտ եւ ակնդետ նայում է վիշապագորգին: Մովսեսին թվաց, թե զգգված մազերով այդ մարդը, ում հագին խամրած մոխրագույն թիկնոց կար, հենց այն խորհրդավոր «փրկիչն» է, ով իր խառնակված արվեստանոցը մասնակիորեն կարգի է բերել եւ հետը տարել երկու նորաստեղծ գեղանկարները: Բայց դա ընդամենը վարկած էր՝ երեւակայության հանկարծակի խաղ, եւ նկարիչն առանձնակի կարեւորություն չտվեց դրան:

Երկուսն էլ շատ քաղցած էին, օրվա ընթացքում գրեթե ոչինչ չէին կերել, ուստի աճապարանքով մտան առաջին պատահած մթերային խանութը, ուտելիք ու գինի առան:

– Կգիշերես ինձ մոտ,– Արսենին հրահանգի պես ասաց վարպետը, երբ սկսեցին խորանալ դեռեւս չլուսավորվող գիշերային փողոցներով: Մոտ կես ժամ դեռ պիտի քայլեին մինչեւ Մովսեսենց առանձնատունը: Տների պատուհաններից ցոլացող հատուկենտ լույսերն ասես երեւակում էին քաղաքի ռենտգենյան պատկերը, որի վրա թույլ աչքն անգամ կնշմարեր ցավի ու տխրության ուռուցքները: Այդ պատկերը տեսածովում էր նկարիչների հոգիներում, որ հետո արտապատկերվեր նրանց գործերում՝ ինչպես այլաբանորեն ու խորհրդանշաբար, այնպես էլ ուղղակի իմաստով:

Նրանք գրեթե չքնեցին: Ուշացած ընթրիքից հետո երկար խոսեցին ու լռեցին ոչ միայն անմիջականորեն իրենց առնչվող, այլեւ՝ աշխարհի հոգսերից, նախ, բազկաթոռներին նստած, ապա՝ անկողիներում, որ Մովսեսը երկուսի համար բացել էր մեծ հյուրասենյա-

կում: Նա Արսենին տեղ հատկացրեց բազմոցին, իսկ իր համար մի թեթեւ ներքնակ փռեց հատակին. սիրում է քնել կոշտ անկողնում, քանի որ «դա ամրացնում է օրգանիզմը»:

– Գայանեի ականջը կանչի՝ ինչ ուզում, էն էլ անում ենք մեր տանը,– ինքնագոհի ասել է Մովսեսը, ապա հավելել.– առանց կնոջ մնացած տղամարդը միաժամանակ դառնում է նւ ազատ, նւ ճորտ:

Առավելս խոսել է Արսենը, չէ՛, մենախոսել է հաճախ. նա հայտնվել է հենց այն գրուցակցի եւ ունկնդրի կողքին, ում պիտի պատմեր պատերազմական օրերին տեսած ու վերապրած բոլոր այն անցքերը, որ անջնջելի ու խոշոր կնիքի պես դրոշմվել էին իր հիշողության ու զգայության էջերին. դրանք սպասելիքներ ու հիասթափություններ էին, սարսուռ ու ընկրկում, տազնապներ ու ոգեշնչվածություն, խիզախում ու նահանջ, ցավ ու մահ, ցավ ու մահ... Թեեւ նա առաջնագծում այդպես էլ չհայտնվեց, սակայն շատ մոտ էր դրան,– լսում էր մարտական գործողությունների անդադար դղիրդը, արկերի ու հրթիռների անվերջանալի պայթյունները, տեսնում թշնամական ինքնաթիռների եւ անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) մահաբեր թռիչքները: Մի քանի արկ ու հրթիռ ընկել էին նաեւ իրենց տեղակայման մերձակայքում, սակայն, բարեբախտաբար, տուժողներ չեղան: Երբ կարճ դադարներ էին լինում, միեւնույն է, Արսենը շարունակաբար լսում էր այդ չարագույժ որոտներն ու գվվոցը, որ երկար ժամանակ չէին հեռանում իր ունկերից: Ծառայակիցների հետ իրականում պատերազմի մեջ էին, քանի որ գրեթե ամեն ժամ առերեսվում էին մահվան ու ծանր վիրավորումների տասնյակ դեպքերի հետ. առաջնագծից Արսենենց վրանային սանմաս էին բերում զոհված ու խեղված զինվորականների՝ մեծամասամբ շարքային պատանիներ՝ 18-20 տարեկան, որ ժամկետային զինծառայության հրամայականով հայտնվել էին ճակատի առաջնագծում եւ ցուցաբերել անզնազոհ վարք: Ապա նրանց տանում էին ավելի լավ կահավորված հոսպիտալներ՝ Մարտակերտ, Ստեփանակերտ, իսկ այդտեղից մարմիններ էին տեղափոխվում Հայաստանի քա-

ղաքներ: Շատ արյուն տեսավ Արսենը, եւ հիմա արյունը հոսում է իր սրտից. ինչո՞ւ նման դժնատեսիլ տառապանքից ու փորձությունից հետո Արցախն ամբողջապես չի ինքնապահպանվել, ինչպէս եղավ, որ «երեկվա հաղթական սերնդի ժառանգորդները կորցրին հայրենական տարածքներ եւ ազգային ու պետական միասնության արդեն շոշափվող հեռանկարը»՝ ցավագին ճիգով հարցնում էր Արսենը հյուրասենյակի դառը մթության մեջ:

– Մենք շատ դաժան դաս ենք ստացել, Արսեն, պիտի ուշքի գանք, ուժերը ժողվենք ու շարժվենք առաջ,– արձագանքել է Մովսեսը:– Հարկ է հեռատեսություն ու կորով ունենալ, որ ետպատերազմյան էս խոր սինդրոմը հնարավոր լինի հաղթահարել... Լավ, քնի՛ր,– եզրափակել է նա ու շրջվել կողքի՝ հատակի իր անկողնում:

Նա արագ քուն մտավ՝ շատ էր հոգնած, հատկապես՝ հոգեպես ու մտոք: Քնեց նաեւ Արսենը՝ ներքուստ փոքր-ինչ թեթեւացած եւ ապահովության զգացումով, երբ այգաբացին հազիվ մի երկու ժամ էր մնացել: Առանձնատունը սուզվել էր մութ հանգստի մեջ, իսկ թաղամասին ասես պատել էր պիրկ ու կույր անդորրը:

Վաղորդյան աղջամուղջը սկսել էր ցրվել, երբ ավտոմատային կրակահերթեր հնչեցին, սկզբից՝ կարճ, ապա փոքր-ինչ երկար ու համառ: Մովսեսը, որ սովորաբար երեսանց է քնում, արթնացավ ձայներից եւ կիսամերկ ելավ պատշգամբ: Ունկ դրեց՝ աչքը հառած դեպի Շուշիի բարձունքը. իրենց տունն ու թաղամասը գտնվում են բերդաքաղաքից ոչ հեռու՝ ձախ ընկած տափարակում, որտեղից դիմահայաց երեւում են հակառակորդի նոր դրած հենակետերը, իսկ յուրայինների դիրքերը թաղամասի տարածքի շարունակության՝ մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա են: Մովսեսը հասկացավ, որ իրենք մի չհայտարարված, թվացյալ խաղաղությամբ մարտադաշտում են, ուր պետք է ապրել ու դիմակայել: Ակնհայտ էր, որ մոտերքում դիրքավորված ազերիները, թեկուզեւ ոչ թիրախային, շարունակ կրակելու են Ստեփանակերտի, առանձնապես

նրա ծայրամասային թաղամասերի ուղղությամբ, որպեսզի ահաբեկեն մարդկանց, ստիպեն նրանց լքելու իրենց բնօրրանը, երբ պատերազմն ավարտված է համարվում, եւ արդեն գործի էին անցել ռուս խաղաղապահները: Կրկին կրակահերթեր հնչեցին, ապա մի խելոված ու պայթուցիկ լուրջուն իջավ տեղանքի վրա:

– Թուրքերն իրենց հաղթանակից լպիրշացել են... Ես ձեր մերը... Նրանք դեռ շատ են փորձելու նեղություն տալ մեզ,– ցածրածայն մենախոսեց Մովսեսը:– Բայց ոչինչ, կապրենք, էս փորձանքն էլ կանցնենք:

– Վարպետ, ինչ է եղել,– նրան մոտենալով՝ քնաթաթախ հարցրեց Արսենը:

– Ոչինչ, բան չկա, թուրքերն են, մի քիչ օդ կրակեցին ու սսկվեցին:

– Մերոնք պատասխանե՞լ են...

– Ձայներից դատելով՝ հա... Դե, էդքանը, «բարի լույսի» պես մի բան էր,– թեթեւակի քմծիծաղեց Մովսեսը:– Դու գնա քնիր, դեռ շուտ է վեր կենալու համար, գնա մի լավ քնիր ու հանգստացիր,– ասելով՝ երիտասարդ ընկերոջը թեւանցուկ արեց եւ տարավ անկողնու մոտ: Արսենը պառկեց եւ կրկին քուն մտավ: Իսկ ինքը նորից գնաց պատշգամբ եւ դեռ որոշ ժամանակ ունկ դրեց արդեն պարզվող արշալույսի ձայներին:

Բայց անհանգստացնող ոչինչ այլեւս չլսեց: Վերադարձավ հյուրասենյակ, հագնվեց ու իջավ առաջին հարկ, որտեղ խորքի սենյակներից մեկում պահում էր նկարչական պարագաներ: Կինը՝ Գայանեն, ժամանակին ցանկացել էր Մովսեսի «ամբողջ նկարչությունը» տեղափոխել նրա արվեստանոց, հատկապես, որ այն շատ ընդարձակ ու լուսավոր է, իսկ առանձնատունն ամբողջովին վերապահվեր ընտանեկան կարիքներին ու երջանկությանը: Բայց Մովսեսի հետ կարողացավ միայն փոխզիջման հասնել: Տանտերը կնոջը գեղագիտական ուրույն ու զվարթ դասեր է տվել՝ նրան հանգստացնելով, որ տանը կպահի «միայն որոշ պարագաներ՝ անցողիկ

ներշնչանքի դեպքում նկարել հասցնելու համար», որպեսզի սպասվելիք գլոբալգործոցներից չզրկվեն. չէ՞ որ դրանք նաեւ նյութական փոխհատուցում են խոստանում: Այդ մտքի հետ Գայանեն համաձայնել է, բայց եւ պահանջկոտ խնդրել, որ նա տանը ստեղծած նկարների մի անկյունում, թեկուզեւ գաղտնագրված ու աննշմար, զետեղի նաեւ իր անունը: Մովսեսը գլխով է արել. դե, կնոջ քմահաճույքների պատճառով վիճաբանելն անհիմաստ է, պետք է համաձայնության քողի տակ անխուսափ տանել սեփական գիծը, հակառակ դեպքում կտարտղնվես անարժեք բարյացակամության մեջ: Իրականում Մովսեսը տանը պահեց բավականաչափ ներկեր ու վրձիններ, վատման ու սովորական թղթեր, նկարակալ ու կտավ, մատիտներ ու ֆլումաստերներ՝ նկարչական գերիշխանությունն անսասան պահելու ակնարկով: Եվ, իրոք, առանձնատունը եւս տրամադրեց ստեղծագործելու. այստեղ է, օրինակ, ուրվանկարել «Մարմարի մեջ երգող ձեռքերը», որ հետո մեծ ու գունագեղ կտավի է վերածել արվեստանոցում, այն հիմա անհայտ «փրկչի» մոտ է:

Մովսեսը մեծաչափ թուղթ ու մատիտ վերցրեց, պատշգամբի տակի պլաստմասե սեղանն ու աթոռը տեղափոխեց բակ եւ նստեց քիչ առաջվա՝ «կրակահերթային» ապրումը պատկերելու մտադրությամբ: Անցավ մոտ քսան ռոպե, սակայն թղթի վրա մովսեսյան հայտնի ոլորուն գծերը չէին հայտնվում, մատիտն ասես «թուղթուգիր» արածով պապանձվել է: Գնաց եւ ներքնասենյակից հաստիկ ֆլումաստերներ բերեց՝ հուսալով, որ գույները կօգնեն հստակ պատկերացնել մտքում գալարվողը: Բայց մտահղացումը մեկեն չքացավ՝ տեղը զիջելով անմեղ ու հրաշագեղ մի զգայության, եւ նա սկսեց, նախ, դանդաղ, ապա փութաջան պատկերել վաղուց իր հոգին քնքշացնող ապրումը:

Երեւի ուրվանկարի համար երկար ու ինքնամոռաց էր աշխատել. երբ մի անգամ եւս ուշադիր սեւեռվեց նկարածի վրա՝ տեսնելու՝ գործն այդ կետում կարելի է ավարտած համարել, նոր միայն նկատեց (թե՞ զգաց), որ թիկունքին մարդ կա կանգնած: Շրջվեց ու

տեսավ Արսենին, ով լուռ ու կկոցուն աչքերով նայում էր գունավոր պատկերին:

– Ո՞վ է էդ երեխան,– կամացուկ հարցրեց Արսենը:

– Ի՞նչ ասեմ... ես... դու, Գեղամը... Նորայրը... նրանցից մեկնու-մեկը, կամ մեկը, որին առերես չեմ ճանաչում, բայց նրան հազար անգամ տեսել եմ մտքիս մեջ կամ երազում:

Իսկ թղթին պատկերված էր չորս-հինգ տարեկան մորեմերկ մի փոքրիկ մանուկ, որ կայտառորեն վազում էր կարմիր ու կապույտ ծաղկադաշտով:

– Դարձյալ Նորայրին եք պատկերել,– տխուր ու թեթեւ հանդի-մանանքով ասաց Արսենը:– Հանգիստ թողեք նրան, վարպետ:

Նորայրը Մովսեսի վաղամեռիկ որդին է, ով աշխարհից հեռա-ցել է քսանհինգ տարի առաջ:

– Վաղուց ժամանակն է խաղաղվելու եւ տղային ազատ արձա-կելու,– մեծավարի խորհուրդ տվեց երիտասարդ ընկերը:

– Չէ, Նորայրը չէ, միայն նա չէ... երեխա է պարզապես, ինչպես ասում են՝ հավաքական կերպար,– արդարացավ Մովսեսը:

– Լավ, թող ձեր ասածը լինի... Չափազանց գեղեցիկ եք պատ-կերել, պարոն Մովսես: Քաշելի՞ր եք կտավի վրա:

– Երեւի... դեռ չգիտեմ:

– Անպայման փոխադրեք կտավի վրա՝ մեծ եւ ավելի գունեղ: Ես կգնեմ էդ կտավը:

– Արդեն պատվիրում ես,– ծիծաղեց Մովսեսը,– մեծահարուստ...

– Դրա համար ես փող կգտնեմ, մի կասկածեք:

– Չեմ էլ կասկածում, բայց կարծում ես՝ կվաճառեմ քեզ...

– Դե՛...

– «Դե» ու ջան... Լավ, քանի որ նորից ես արթնացել, գնանք նախաճաշենք ու դուրս գանք:

Մովսեսը նկարն առած՝ բարձրացավ վեր՝ իր ետեւից տանելով Արսենին: Երկուսով նախաճաշ պատրաստեցին, կերան ու շարժվե-ցին դեպի քաղաքի կենտրոն: Արդեն աշխատում էին ներքաղաքա-



յին երթուղային ավտոբուսները, բայց գերադասեցին քայլել՝ կրկին տեսնելու քաղաքի ետպատերազմյան դեմքը: Շուտով նրանք հասան կառավարության շենքի մոտ, ուր խմբվել էին բազմաքանակ մարդիկ՝ բռնատեղահանվածներ Շուշիից ու Հադրութից, որոնք կեցության պայմաններ էին պահանջում պետությունից: Նկարիչները զրույցի բռնվեցին տարաբախտ մարդկանց հետ, որ Ստեփանակերտ էին հասել գրեթե ձեռնունայն. նրանց տներն ու գույքն ամբողջովին մնացել էին թշնամուն, շատերը նույնիսկ չէին հասցրել իրենց հետ վերցնել հագուստներն ու թանկարժեք զարդեղենը, ապահով վայր տեղափոխել փոխադրամիջոցները, գյուղատնտեսական տեխնիկան ու ընտանի կենդանիները:

– Բայց ինչո՞ւ... ինչո՞ւ էդքան անպատրաստ, դատարկ եք դուրս եկել ձեր տներից,– տարակուսած իր հարցը կրկնեց Մովսեսը կողքին կանգնած միջահասակ կնոջը:

– Եղբայր, ասում են՝ մենք չէինք հավատում, որ մեր քաղաքներն ու գյուղերը կհանձնեն թշնամուն... մինչև վերջին օրը չհավատացինք,– վերստին, արդեն լացակույմած պարզաբանեց կինը, որի դեմքն ասես վշտի մի կենդանի պատկերանիշ լիներ: Կինը հաղորացի է, իր համերկրացիների մի խմբի հետ երեկ էր վերադարձել Վանաձորից: Նրա փեշից կախվել էին երեք երեխա՝ երկու տղա և մի աղջիկ՝ 5-10 տարեկան:– Թողներս են՝ աղջկաս երեխեքը,– նկատելով Մովսեսի՝ փոքրերին ուղղված մտահոգ հայացքը, բացատրեց կինը:– Աղջիկս Երեանում բուժվում է, պատերազմը սկսվելուց մի շաբաթ առաջ նրան վիրահատել են, մոտ մի ամիս դեռ պիտի պառկի հիվանդանոցում: Ծանր վիրահատություն է տարել... Փեսաս էլ Մարտունիում ծառայության է,– չսպասելով հերթական հարցին՝ հավելեց կինը:

– Իսկ ձեր ամուսինը որտե՞ղ է, մայրիկ,– հարցրեց Արսենը:

– Էստեղ է,– ու կանչեց,– Երվանդ, եկ ստեղ ...

Մինչ կնոտենար Երվանդը, Մովսեսը բռնեց երեխաներից փոքրի՝ տղեկի ձեռքն ու հարցրեց.

- Անունդ ինչ է, պուճուր:
- Ավր:
- Իսկ մեծ եղբորդ անձնը...
- Դավր:
- Քույրիկիդ անձնը...
- Անո:
- Ապրես,- ժպտաց Մովսեսն ու շոյեց տղայի գլուխը:

Արդեն նրանց կողքին էր Երվանդը՝ մազակալած դեմքով, կոշտ ու խոշոր ձեռքերով, ցուրտ եղանակին թեթեւորեն հագնված մի տղամարդ: «Պինդ՝ կոռ տեսակից է»՝ իսկույն «ախտորոշեց» Մովսեսը, բայց եւ զգաց, որ նորեկը նեքուստ ընկճված ու մոլոր է:

- Հինչ ա ըլալ, Սոնա,- աչքերն անհամբեր ուղղելով կնոջն ու անծանոթ մարդկանց՝ հարցրեց ամուսինը:

- Տես՝ հինչ ըն ըսես,- կինը մտախոհ հայացքով ցույց տվեց կողքին կանգնած անծանոթ տղամարդկանց:

- Նախ, ծանոթանանք. ես Մովսեսն եմ, իսկ սա իմ լավագույն ընկերն է՝ Արսենը,- ասաց նկարիչն ու ձեռքը մեկնեց. Երվանդ կոչված տղամարդը պատասխանեց ձեռքսեղմումով, նույնը՝ Արսենի հետ:

- Հայրիկ, դուք բնակվելու տեղ եք փնտրում,- շտապեց բուն հարցին անցնել Արսենը:

- Հա, ժամանակավոր, մինչեւ պետությունը մեզ հարմար տեղ տա...

- Էդ դեպքում գնացի՞նք, եղբայր,- հրահանգչի պես, բայց վստահություն ներշնչող տոնով ասաց Մովսեսը:

- Ո՞ր,- շվարեց Երվանդը եւ հարցական նայեց կնոջը:

- Մեր տուն: Դուք ընտանյոք կտեղավորվեք էնտեղ եւ կմնաք, ինչքան կարիք լինի,- բացատրեց Մովսեսը:- Բոլոր հարմարությունները կան, այգի էլ ունեմ, եթե ուզենաք՝ էնտեղ ժամանակ կացկացնեք:

- Վայ, շատ շնորհակալ ենք, եղբայր ջան,- բացականչեց Սոնան եւ շուռ եկավ ամուսնու կողմը:- Հը, Երվանդ, չգնամք... Մարդը

սրտանց հրավիրում աս:

- Դե, եթե սրտանց աս ասում...- երկմտանքից հետո ի վերջո համաձայնեց ամուսինը:

- Արսեն, մի տաքսի գտիր՝ բեր,- առույգ հրահանգեց Մովսեսը:

Երիտասարդը փութով հեռացավ, եւ մինչ տաքսին կերեւար, Երվանդը հասցրեց մի քանի բառով նշել իրենց կորուստները: Նրանք Հաղորդում էին թողել երկհարկանի մեծ, բարեկարգ ու լի տուն, մերձակայքում՝ անասնաֆերման քառասուն տավարով, բեռնատար «Գազիկն» ու վարուցանքի հսկա «Կիրովեց» տրակտորը, տասը հեկտար «կարդինալ» խաղողի այգին, հացահատիկի դաշտերը... Այստեղ հաղորդեցի տղամարդն ընդհատեց թվարկումը, մտածելով, որ խեղճանալ պետք չէ այլոց աչքին, բայց եւ՝ ինչպէս չպատմես քո եւ ընտանիքիդ բացարձակ ունեզրկումը...

- Արյուն-քրտինքով էինք ստեղծել էդ սաղը... հիմա լրիվ մնաց ընդեդ,- արցունքները չզսպեց Երվանդը:

- Ոչինչ, եղբայր, պատահում է, մի հուսահատվիր, աշխարհը մեծ է. ասում են, չէ՞, Աստված երբ մի տեղից կտրում է, տալիս է մյուս տեղից,- տարաբախտին ժողովրդական մտայնությամբ մխիթարեց Մովսեսը, բայց եւ թերահավատ եղավ ասացվածքի ուժին: Պարտավոր ես ասել, հուսադրել, հակառակ դեպքում ինչպէս հարաբերվես այդօրինակ կացութային մեջ հայտնված մարդկանց հետ՝ արագ խորհեց նկարիչը եւ քաջալերելով իրեն, շարունակեց.- Դուք, մենք, բոլորս խորը ճգնաժամի մեջ ենք... Չինացիները չունեն «ճգնաժամ» բառ հենց էդ իմաստով, նրանց մոտ էդ հասկացությունը արտահայտվում է որպէս «հաղթահարում»... Մենք պիտի հաղթահարենք էս փորձությունը, Երվանդ եղբայր:

- Հա,- տրտում արձագանքեց Երվանդը, եւ նրա դեմքով լույսի մի փոքրիկ շող անցավ, որը չվրիպեց Մովսեսի աչքից: Նա հերթական անգամ համոզվեց, որ հիմա մարդկանց առավելս հույս է պետք՝ առողջ, առարկայական, վստահելի մարդկանց կողմից մատուցվող: «Հույս տվողը պետք է արժանի լինի էդ կոչմանը՝ սահ-

մանեց Մովսեսը:

- Հա, քիչ մնաց մոռանայի. ձեզ պիտի նախազգուշացնեմ, որ մեր թաղամասը մոտ է նոր տեղակայված դիրքերին, կրակոցների ձեներ եք լսելու. դա ձեզ կվախեցնի՞, - հարցրեց նկարիչն ու նայեց երեխաներին:

- Ինձ՝ չէ, - գրեթե միաբերան արձագանքեցին տղա երեխաները: Աղջնակը մի փոքր վախեցած նայեց տատին: Վերջինս շոյեց թոռան գլուխն ու շիտակորեն հարցրեց Մովսեսին.

- Դո՞ւք էլ եք ձեր տանը ապրելու, թե՞ հանձնում եք մեզ ու տեղափոխվեք ուրիշ տեղ:

Մովսեսը մտադիր էր առանձնատան երկու հարկը տրամադրել երկու տեղահանված ընտանիքի, իսկ ինքը տեղափոխվել արվեստանոց: Բայց տեսնելով իրավիճակի նրբությունն ու լրջությունը, մեկեն փոխեց մտադրությունը:

- Չէ, ես էլ եմ ապրելու է՛նտեղ... ձեզ հետ, - վճռական պատասխանեց նա:

- Լավ, էդ դեպքում մենք ի՞նչ ունենք անհանգստանալու... չէ, Երվանդ:

- Հա, Սոնա, - համաձայնեց ամուսինը:

Արագաքայլ մոտեցավ Արսենը:

- Տաքսին սպասում է, - եւ ցույց տվեց քիչ հեռվում կանգնած սպիտակ «Լադան»: Այնտեղից վարորդն ազդանշան տվեց՝ ավելի մոտենալու հնարավորություն չկա:

- Դե, գնացի՞նք, - ասաց Մովսեսն ու առաջ ընկավ՝ փոքր երեխայի ձեռքը բռնած: Մարդ ու կին վերցրին երկու մեծ պայուսակները՝ ամբողջը, ինչ ունեն, եւ անխոս հետեւեցին իրենց բարերարին: Արսենը փորձեց կնոջ ձեռքի պայուսակը տանել, սակայն կինը հրաժարվեց օգնությունից:

- Ապրես, բալաս, դու արդեն մեզ օգնել ես, - բացատրեց կինը, որ, ինչպես երեւում է, վաղուց սովոր է տանելու կյանքի իր բաժին բեռը:

Մեքենայի առջեւում նստեց Մովսեսը՝ երեխայի հետ, ետեւի նստարանին տեղավորվեցին պապն ու տատը երկու թոռներով:

– Դուք գնացեք, վարպետ, ես մնամ էստեղ,– ասաց Արսենը:

– Հա, լավ,– կրտսեր ընկերոջ միտքը կռահեց Մովսեսը, ապա դիմեց վարորդին.– Հայկավան թաղամաս:

Հավաքված բազմությունից մի կին մեկուսացել եւ խոնարհ ու թախծոտ հայացքով հետեւում էր տաքսի նստող մարդկանց: Սիրունատես է, երկարավուն սեւ մազերով, հագին՝ բաց վարդագույն վերարկու, իսկ ձեռքին կանացի կարմրավուն պայուսակ կար: Մեքենան արդեն շրջվել ու հեռանում էր, երբ Մովսեսը նկատեց նրան. «Տեր Աստված, ինչ ծանոթ դեմք է, ո՞վ է նա»՝ մտածեց տենդագին: Մտաբերել չհաջողվեց, եւ իրենց թաղամաս մտնելիս չհամբերեց.

– Սոնա քույրիկ, ո՞վ էր էն վարդագույն վերարկուով կինը, ձեռոնց կողքին կանգնած...

– Վարդագույն վերարկուով,– մի երկվայրկյան մտածեց Սոնան:– Ա՛, մարիամաձորցի ուսուցչուհին է՝ Նվարդը... Ճանաչում եք...

Մովսեսը չպատասխանեց:

– Նրա ամուսինը զոհվել է առաջին պատերազմում... Երեխաներ չունի... Մենակ, անտեր կին է, էլի...– շարունակեց Սոնան:

Այդ տեղեկությունը ցավագին մի տխրությամբ համակեց Մովսեսի հոգին: Տուն հասան, նա հապճեպ տեղավորեց նորելուկ կենվորներին եւ նույն տաքսիով վերադարձավ կառավարության շենքի մոտ. վարդագույն վերարկուով կինն արդեն հեռացել էր: Նկարիչը հարցուփորձեց, սակայն ոչ ոք որոշակի պատասխան չտվեց:

Արսենը դեռ այնտեղ էր, նա մի տարեց զույգի հետ պատրաստվում էր գնալ: Մոտեցավ վարպետին ու տեղեկացրեց.

– Խեղճուկրակ մարդիկ են, տանում եմ իմ «խուցը», յուր կգնանք... Նրանք միայնակ են, երեխաներ ու թոռներ ունեն, բայց վաղուց հեռուներում են:

- Հա, տար, հետո կտեսնվենք,- մտասույզ ասաց Մովսեսը եւ դանդաղաքայլ ուղղվեց դեպի արվեստանոց:

Ճանապարհին վերհիշեց Նվարդի հետ ունեցած ռոմանտիկ ու չքնաղ սերը: 1980-ականներին էր: Այդ գեղեցիկ, կենսախինդ աղջիկը սովորում էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, իսկ ինքը երեւանյան ուսումնառությունից հետո նոր էր վերադարձել հայրենի քաղաք: Ծանոթացան պատահաբար, երբ պիտի գնար Քիրս սարի լանջերը՝ էտյուդների: Փողոցում անսպասելի բացվեց Մովսեսի մեջքից կախ նկարչական արկղը, եւ պիտույքները ցաքուցրիվ եղան գետնի վրա: Դիմացից եկող աղջիկն օգնեց նրան հավաքել վրձիններն ու ներկատուփերը. Նվարդն էր: Սիրահարվեցին ու սիրեցին իրար խենթի պես, ինքնատուր եւ հոգու ամբողջ մաքրությամբ: Բայց երկու տարի անց բաժանվեցին. Նվարդն ավարտել էր ինստիտուտը եւ պիտի անցներ աշխատանքի: Նա համարձակվել եւ Մովսեսին ակնարկել էր, որ ամուսնանալ է պետք: Երիտասարդը խույս է տվել այդ գաղափարից՝ նա դեռ ցանկություն չուներ մտնելու ընտանեկան ուխտի տակ: Նվարդը խռովեց ու վերադարձավ հայրենի գյուղ: Եվ պարզվում է՝ մինչ վերջերս ապրում էր այնտեղ, ուր հիմա թշնամին է:

Մովսեսը հասավ արվեստանոցի մոտ, կանգնեց եւ մտազբաղ նայեց ցելոֆանապատ պատուհաններին ու դռանը. նրան դուր չեկավ աղքատիկ այդ պատկերը: Չանգեց ծանոթ արհեստավորին ու խնդրեց, որ առաջիկա օրերին ապակիներ բերի ու տեղադրի, փողը կտա ժամանակին: Խորհեց՝ թող արվեստանոցն իր տեսքը վերգտնի արագ, այն իր մեջ շատ հույս է պարունակում... «հասկացողների համար»:

Այդպես մի փոքր արդարացնելով իր վարքը, մտավ արվեստանոց եւ փորձեց աշխատել կիսատ մի բնապատկերի վրա՝ կարծելով, թե դա լավ նախավարժանք կլինի նոր նկարներ սկսելուց առաջ: Սակայն տրամադրությունը չբավարարեց, եւ նա կիսապատկեց ճոճաթոռին ու փակեց աչքերը: Շուտով նիրհի մեջ ընկավ եւ

տեսավ «անխուսափելի» մի երազ. զինվորական հագուստով, գլուխը վիրակապած մի տղամարդ մոլորվածի պես մոտենում է իրեն եւ հարցնում, թե որտեղ կարող է լինել Նվարդը: Ինքը թոթվում է ուսերը եւ շարունակում քայլել, բայց տղամարդը շնչասպառ հասնում է իրեն, ծաղկեփունջը տալիս եւ խնդրում, որ այն փոխանցի Նվարդին: Մովսեսը լռելյայն հեռանում է՝ ծաղկեփունջը ձեռքին, որից արյուն ու արցունք էին կաթում միախառն...

Արթնացավ ճնշված սրտով. երազը չէր պատճառը, որ հստակ պատվիրան էր պարունակում, ինքը երազներին չի հավատում, քանի որ «դրանք անօգուտ միջամտություններ են մեր կյանքին՝ մեզ տրված ուղուց շեղելու նպատակով»: Մովսեսը ճնշված էր ուղեղին պինդ կառչած այն մտածումից, որ Նվարդը չմոտեցավ իրեն եւ կրկին հեռացել է խռով ու հուսաբեկ... Ջանգեց Արսենին. նա արդեն գալիս էր արվեստանոց՝ գինին ու ժենգյալով հացն առած: Նստեցին մինչեւ երեկո: Մովսեսը պատմեց Նվարդի մասին. առաջին անգամ էր նա բարձրաձայն արտահայտվում իր երիտասարդական մեծ սիրո մասին: Արսենը լսել-լսել ու մեկնաբանել է.

– Սերը գարնանային զեփյուռի պես գալիս ու հեռանում է անդարձ,– չգիտես ում ձայնակցելով՝ ասել է նա, իսկ գուցե դա հենց իր դիտարկումն է. չէ՞ որ երիտասարդ նկարիչը հասուն ու արտահայտիչ միտք ունի՝ ըստ Մովսեսի:

Նկարիչ ընկերները փոքրիշատե խաղաղված ցրվեցին տները, Արսենը՝ իր «պառավների», Մովսեսը «հաղթության հնգյակի» մոտ: Նրանք այդուհետ նաեւ «նոր ընտանիքների» պատասխանատվության ներքո էին:

## Գլուխ 4

### ԱՃՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԽԱՐԴԱՆՔԸ

*Իսկ մենք, մեր աչքերը դեռ նվաղում են՝  
ունայն օգնություն սպասելով, մեր սպասումների մեջ  
նայում էինք մի ազգի, որը մեզ չէր կարող փրկել:*

*Երեմիայի ողբերք, 4*

Փրկարար ծառայության կապիտան Մուրադ Բեկյանը իր խոսքի տերը եղավ. եկեղեցու սպաստարանում տեղի ունեցած վերջին հավաքից երեք օր անց զանգեց Տեր Միսաքին եւ հայտնեց, որ համաձայնությունը կողմերի միջեւ կայացված է, հաջորդ առավոտ աճյունների որոնողական խումբ է մեկնելու Վարանդայի շրջան, զոհվածների ու անհետ կորածների հարազատներից նույնպես կներգրավեն այդ խմբում, բայց ավտոբուսի տեղերը սահմանափակ են, ուստի քահանայի «թիմից» կարող են տեղ տալ երկու հոգու, ոչ ավելին: Տեր Միսաքը հուսադրող զգացում ապրեց այն մտքից, որ իրենք կարելու ինչ-որ բան կարող են անել այս խառնակ ու դժնդակ ժամանակներում: Իսկույն զանգեց Վիգենին ու Արմանին եւ հարցրեց, թե պատրաստ են վաղը միանալ որոնողներին: Տղաների պատասխանն աներկբա «այո» էր. նրանք վստահեցրին Տեր Միսաքին, որ ամեն ինչ կանեն, որպեսզի իրենց ուղեւորությունն ապարդյուն չանցնի: Տեր Հայրը կասկած չունեւ դրանում: Ապա քիչ խոհաձելով, զանգեց Մովսեսին, թեւեւ անկեղծորեն չէր ուզում, որ արդեն տարիք առնող, բայց մշտապես անհանգիստ այդ մար-



դը նույնպես մասնակիցը դառնար նման հոգեմաշ առաքելության, միաժամանակ իմանալով, թե դա հիմա որքան կարետոր է արվեստագետի համար:

– Ես քեզ միայն տեղեկացնում եմ, Մովսես եղբայր, դու պարտավոր չես գնալ, դա ջահելների գործ է:

– Ջահելը գործ չունի աճյունների հետ, Տեր Միսաք,– հեռախոսի մյուս ծայրից առարկեց նկարիչը եւ շնորհակալություն հայտնեց քահանային իրեն տեղյակ պահելու համար:

Մովսեսը, համենայն դեպս, վաղվա ուղեւորության առիթով խոսեց Արսենի հետ՝ խնդրելով, որ նա իր զինվորական ճտքակոշիկները մի երկու օրով տա իրեն (նրանք նույն համարն են հագնում), ինքն այդ պահին հարմար կոշիկներ չուներ բարդ տեղանքներում տեղաշարժվելու համար: Արսենի հակադարձող առաջարկության շուրջ համաձայնության չեկան հեռախոսային խոսակցության ընթացքում, եւ հարցի ճշտումը թողեցին վաղվան:

Հաջորդ օրվա առավոտյան ժամը ութին մեծ բազմություն էր հավաքվել փրկարար ծառայության դարպասի մոտ. զոհված ու անհետ կորած զինվորների հարազատներից շատերն էին ցանկանում միանալ որոնողներին, բայց ծառայության սպաները նրանց համբերատար պարզաբանում էին, որ կգնան նրանք, ում արդեն նախապես զգուշացրել են, որ ընտրությունը կատարվել է ըստ նպատակահարմարության:

– Ժողովուրդ, մենք էլի ենք նմանատիպ ռեյդեր անելու: Եթե կարիք լինի, հարազատներից էլի ենք ընդգրկելու մեր խմբում... Տղաներից ոչ մեկին չենք թողնելու հանձնված տարածքներում, ժողովուրդ ջան,– չգիտես որերորդ անգամ հուզախոռով ու պահանջկոտ ներկաներին բացատրում էր կապիտան Մուրադ Բեկյանը: Ապա ծառայավայրում մնացող կրտսեր գործընկերներին խնդրում էր, որ հոգ տանեն Հայաստանից ժամանած այն ծնողներին, որոնք դեռ պետք է սպասեն:

Աճյունների որոնողական աշխատանքներին կամավոր մաս-

նակցելու տրամադրվածությամբ այդտեղ էին շտապել Մովսեսը, Արսենը, Վիգենը, դպիր Արմանը, Քեռին՝ իր որդի Տիգրանի հետ: Նրանց քաջալերելու մղումով պարտաճանաչորեն ներկայացել էր ապաստարանի «պաշտպանական խորհրդի» ավագ կորիզը՝ Տեր Միսաք քահանան, գնդապետ Վարդանյանը, մանկավարժ Սիմոն Վարազյանը: Հավաքվել էին տասնյակ «կողմնակի» մարդիկ, որոնցից որեւէ մեկի անմիջական հարազատը զոհված կամ անհետ կորած չէր, բայց ջանում էին ինչ-որ կերպ օգտակար լինել այդ վտանգավոր, սրտակեղեք եւ ամենքին ներքուստ խոցող գործում:

Տեր Միսաքը յուրայինների կողքին ներսուզվել էր դառնագույն խոհերի մեջ՝ միառժամանակ անհաղորդ մնալով շրջապատի իրարանցմանը: Հոգու խորքում կասկածում էր ինքն իրեն, իր քայլերի հեռատեսությանը եւ անխնա հարցնում էր անձայն. «Ինչո՞ւ ես աճապարել էստեղ, թշվառ քահանա... դու ի՞նչ կարող ես անել էս վշտակիր մարդկանց համար... Դու գիտես, թե ինչ խորություն ունի նրանց ցավը...» Ապա փորձում էր ազնիվ բառեր գտնել եւ իմաստավորել իր ներկայությունը. «Դու էստեղ ես, որպեսզի... որպեսզի ի՞նչ,– մտովի կրկին իրեն գանահարում էր քահանան,– որպեսզի օրհնեն աճյուն փնտրողների ճանապարհը, որպեսզի նրանց ասես՝ Տերը ձեզ օգնական, որ դուք գտնեք ձեր որդիների մարմինները, որոնց փայփայելով մեծացրել եք... Ինչո՞ւ ես եկել էստեղ, խելառ քահանա, ինչո՞ւ ես մտնում մղձավանջի էս խառնարանը, մի՞թե դու այսօրինակ դեպքերի համար ես օժվել... Ինչո՞ւ ես ինձ էսպիսի դաժանություն ու տառապանք ցույց տալիս, Աստված իմ...»

Նույն պահին Արսենը ցածրաձայն, բայց վճռական տոնով համոզում էր իր վարպետին, որ նա ետ կանգնի խմբի հետ Վարանդա մեկնելու մտադրությունից: Մովսեսն անդրդվելի տոնով բացատրում էր.

– Ես սուր աչք ունեմ... տարբերում եմ բնական ու արհեստական գույները, շատ օգտակար կլինեմ էստեղ աշնանային տերեւների, չորացած ճյուղերի ու խոտերի մեջ ընկած մարմինները որոնե-

լիս,- եւ հուզված ու շեշտակի նայում էր կրտսեր ընկերոջը, ապա կշտամբում.- Դու ինձ թերագնահատում ես, ընկերս:

- Չէ, վարպետ ջան, ձեզ չեմ թերագնահատում, ինձ ճիշտ հասկացեք, ես ամեն ինչ չէ, որ կարող եմ խոսքերով պարզ արտահայտել... Ասում եմ՝ դա շատ հոգնեցուցիչ ու զգայուն գործ է... մի մոռացեք, որ մեկ-մեկ սրտի նոպաներ եք ունենում: Մնացեք էստեղ, ես կգնամ, ահա Վիգենն ու Արմանն էլ են գալիս, մենք երեքով, բոլորիս անունից,- ցույց տալով Տեր Միսաքին ու մյուս «ապաստարանային» ընկերներին,- կանենք հնարավորն ու անհնարինը:

- Չէ, ես էլ եմ գալիս, առանց ինձ արդյունքը քիչ է լինելու,- համառում էր Մովսեսը:

Արսենի համբերությունը սպառվում էր, նա ճարահատ քաշեց քահանայի թելից եւ աղերսական ձայնով խնդրեց.

- Տեր Հայր, հասկացրեք նրան, որ իր գնալը կարող է ավելի շատ վնասակար լինել, քան օգտակար:

Տեր Միսաքը, զգալով իրեն մի կողմ քաշող ձեռքը, դուրս եկավ այրող մտքերի գուբից եւ շփոթահար արձագանքեց.

- Ինչ եք ասում, երիտասարդ, ինչ է պատահել...

- Խնդրում եմ՝ վարպետ Մովսեսին ասեք, որ չմեկնի որոնողների հետ... դա կարող է մեզ վրա թանկ նստել:

- Ճշմարիտ ես ասում, երիտասարդ,- սթափվեց Տեր Միսաքը եւ շրջվեց Մովսեսի կողմը.- Մովսես, դու չես գնա, ես արգելում եմ... մենք արգելում ենք:

Քահանայի վճռին միացան մանկավարժ Սիմոնը, գնդապետ Վարդանյանը, Վիգենը, Արմանը, Քեռին ու Տիգրանը, որոնք արագ խմբվեցին Մովսեսի ու քահանայի շուրջը:

- Հա, Մովսես, դա քո գործը չէ, դու առանց դրա էլ շատ անելիք ունես: Լսիր Տեր Միսաքի եւ քո սանի խորհուրդը, նույնը մենք ենք պնդում,- բարեհոգաբար պահանջեց Սիմոն Վարազյանը:- Տես, նույնիսկ փորձառու գնդապետը չի գնում, թեւս պատրաստ է:

- Հորս էլ համոզեցի, որ փոխի մտադրությունը. ավագ սերունդը մնում է, գնում ենք երիտասարդներով,- հոր՝ Քեռու թելը բռնած, հայտարարեց Տիգրանը:

- Սա էն պահերից է, որ պիտի լսենք ջահելներին,- ըմբռնուժով ասաց Քեռին:- Թող նրանք գնան ու բերեն մեր տղաներին:

- Ձեզ պիտի ասեմ, որ մերոնցից որոնողական խմբի մեջ կարող են վերցնել միայն երկու հոգու,- իրազեկեց Տեր Միսաքը:

- Ինչո՞ւ երկու,- հանկարծակի վրդովվելով՝ ասաց դպիր Արմանը:- Մենք հիմա առնվազն չորս հոգով կարող ենք գնալ՝ Վիգենը, Արսենը, Տիգրանը, ես:

- Էդ հարցը հիմա վերանայել չենք կարող, ուստի իզուր չքննարկենք,- պարզաբանեց Տեր Միսաքը:- Կապիտան Բեկյանն է հայտնել, որ մերոնցից կարող են ընդգրկել միայն երկու հոգու, էն էլ ընդառաջելով մեր համառ խնդրանքին... Լավ, հիմա եկեք արագ որոշենք, թե ում ենք գործուղում, ժամանակ չկա, բոլորն արդեն տեղավորվել են մեքենաներում, մեզ են սպասում:

Քահանան հայացքն ուղղեց առջեւի ավտոբուսի կողմը եւ տեսավ, որ այնտեղ կողքկողքի նստած՝ տրտմալից իրենց են նայում դժբախտ ծնողներ, երեւանցի Խաչատուր Մարգարյանը եւ հարեւան Սուրեն Բաղալյանը. նրանց թեթեւակի գլխով արեց՝ վերստին ապրելով նույն ծանր զգացումը՝ «ի՞նչ կարող ես ասել նրանց»: Բայց ինքզինքը սթափեցրեց եւ անցավ «գործուղվողների» ընտրությանը: Կարճ քննարկումից հետո, կշռադատելով թեկնածուների թույլ եւ ուժեղ կողմերը, ավագների քվեարկությամբ որոնողական խմբին միանալ թույլատրեցին Վիգենին ու Արսենին: Այդ ընտրությանը հավանություն տվեց կապիտան Բեկյանը: Արմանին ու Տիգրանին բաժին հասավ պատշաճ մխիթարանք առ այն, որ եթե հերթական նմանօրինակ ուղեւորությունը լինի, ապա կմեկնեն նրանք:

- Շատ չտխրես, ախպերս, որ էս անգամ միասին չենք գնում առաջադրանքի,- տեսնելով Արմանի տխրամած դեմքը, նրան թեթեւակի գրկեց եւ մեջքին թփթփացրեց Վիգենը:- Դու մեզ համար

մի կարգին կաղոթես, լավ...

– Լավ,– կամացուկ պատասխանեց Արմանը եւ խռովկան երեխայի պես կախեց գլուխը:

Վիգենն ու Արսենը փութաջանորեն ավտոբուս բարձրացան եւ ձեռքի թափահարումով հրաժեշտ տվին իրենց ճանապարհողներին: Հինգ մեքենայից բաղկացած ավտոշարասյունը շարժվեց՝ երկու ավտոբուս զոհված ու անհետ կորած զինծառայողների հարազատներով եւ փրկարարական երեք միկրոավտոբուս: Դարպասի մոտ կանգնած մարդիկ տրտում ու խոժոռ նայում էին աննախադեպ առաքելության գնացողների ետեւից այնպես, ասես նրանք մահապարտներ են, որոնց չի փրկելու անգամ հետագա երկար կյանքը:

Ավտոշարասյունն արդեն հեռանում էր, երբ հեկիհեւ ճանապարհող բազմությանը հասավ Մարիան: Տեսնելով, որ ուշացել է, բռնեց Տեր Միսաքի թելը, գլուխը հակեց ուսին եւ սկսեց լալ՝ անձայն ու խոշորարցունք: Թե ինչու եւ հատկապես ում համար էր նա այդպես ինքնաբուխ հեծեծում, ստույգ գիտեր Տեր Միսաքը, մյուսները կարող էին միայն յուրովսանն կռահել:

Բազմությունը սկսեց ցրվել: Դանդաղ շարժվեցին նաեւ «ապաստարանցիները»: Մի քանի թույլ լուռ քայլելուց հետո Տեր Միսաքը հայտնեց.

– Երեկ նոր թեմակալ առաջնորդն է զանգել ու պահանջել, որ այլեւս հավաքներ չանցկացնենք տաճարի ապաստարանում:

– Ինչո՞ւ,– զարմացան ընկերակիցները:

– Ասում է՝ եկեղեցին ընկերական-քաղաքական հարցերով հավաքատեղի չէ, անգամ՝ ապաստարանի սահմաններում:

– Դա ի՞նչ պահանջ է... միթե նման մանրախնդրության ժամանակներ են հիմա,– արդեն վրդովվում էր Մովսեսը:

– Ասում է՝ եկեղեցին անջատ է պետությունից, մենք միայն պետք է զբաղվենք հոգեւոր ծառայությամբ:

– Ա՛յ քեզ մանկամիտ,– գոչեց մանկավարժ Սիմոնը:– Մեզ հա-

մար եկեղեցին միշտ եղել է ամեն ինչ եւ ամենքիս հետ, այդ թվում՝ պետության: Ես կգնամ ու նրան կբացատրեմ մեր իրավունքը:

– Պետք չէ, հնարավոր է՝ մենք վիճակն ավելի բարդացնենք: Ուրիշ բան պետք է մտածել,– հուշեց Տեր Միսաքը:

– Էդպես հեշտությամբ զիջե՞նք,– վիրավորված խոսեց գնդապետ Վարդանյանը:– Էսպես ամեն ինչ զիջե՞նք... Կարգուկանոն եկեղեցուց են պահանջում, կարգուկանոն թող, նախ, պետությունից պահանջեն, որ չկարաց պաշտպանել մեր երկրի անվտանգությունն ու ամբողջականությունը:

– Չեմ կարծում՝ թեմակալ առաջնորդի հետ հիմա վեճի բռնվելը կարող է օգուտ տալ: Պետք է ուրիշ բան մտածել,– կրկնեց Տեր Միսաքը:

– Լավ,– կռահելով իրադրության նրբությունը՝ ասաց Մովսեսը,– եկեք այսուհետ հավաքվենք իմ արվեստանոցում:

– Կարելի է,– միառպահ խորհելով՝ արձագանքեց քահանան:

– Երբ ցանկանաք, համեցե՞ք, գլխիս վրա տեղ ունեք... Համ էլ ձեզ նկարչության դասեր կտամ,– իր պատրաստակամությունը կատակախառն առաջարկով համեմեց Մովսեսը:

– Շնորհակալ ենք, վարպետ: Ուրեմն էսօր երեկոյան կհավաքվենք ձեր արվեստանոցում: Տղաները երեւի վերադարձած լինեն, կլսենք նրանց պատմությունները,– «ապաստարանցիների» անունից ասաց քահանան:

– Ձեզ աղուհացով կրիմավորեմ,– եզրափակեց Մովսեսը:

Խումբը բաժանվելուց առաջ միմյանցից տեղեկացավ, որ իրենց բնակարաններում, Մովսեսից ու Արսենից բացի, բռնագաղթածների ընտանիքներ են տեղավորել մանկավարժ Սիմոնը, գնդապետ Վարդանյանը, Վիգենը եւ Արմանը:

– Մեր տնեցիք վերադառնում են վաղը, ես ընդամենը երկսենյականոց բնակարան ունեմ, ցավոք, թե չէ՝ գիտեք...– մեղավոր տոնով ասաց Տեր Միսաքը:

– Դուք մի նեղսրտեք, Տեր Հայր, մեզնից յուրաքանչյուրն անում

է էն, ինչ կարող է,- քահանային գոտեպնդեց մանկավարժ Սիմոնը:

- Հա, շնորհակալ եմ... Էս պահին ամենակարեւորն էն է, որ մենք, բոլոր հայրենակիցներով, իրար միայնակ չթողնենք,- արձագանքեց Տեր Միսաքը:

- Այո, Տեր Հայր,- նրան ձայնակցեց Քեռին:- Մեր ժողովրդի մեջքը հիմա ջարդված է, բայց չպետք է հուսահատության ճիչեր արձակենք: Ատամներ կրճտացնելով էլ մենք նորից ոտքի կանգնելու ուժ եւ կամք պիտի ունենանք:- Բայց Քեռու բասը չափազանց տխուր էր հնչում, ասես նա պարտադրված խոստովանություն էր կատարում:

- Ճշմարիտ ես ասում, ճշմարիտ, Ռուբեն ջան: Աստված թող գործություն տա եւ հովանի լինի մեզ,- հավատապահ քրիստոնյայի բարեխղճությամբ օրհնեց քահանան ու խաչակնքեց.- Ամեն:

- Ամեն,- փողոցում լավեց ասես հոգեւոր ծեսի ելած մարդկանց ձայնը: Անցորդները մի պահ տարակուսած նրանց էին նայում:

- Դե, մինչեւ երեկո: Մենք գնանք վիրավոր զինվորներին տեսության,- ընկերակիցներին հրաժեշտ տվեց Տեր Միսաքը եւ դպիր Արմանի հետ շարժվեց դեպի զինվորական հոսպիտալ, որ արդեն երեւում էր իրենց տեսադաշտում: Նոյեմբերյան ցուրտ ու մռայլ առավոտ էր:

Մինչեւ երեկո արվեստանոցում տքնեց ու քրտնեց Մովսեսը: Նա ուղղակի հարկադրեց իրեն վերսկսել աշխատանքը, որքան էլ դա ժամանակավրեպ թվար: Բայց չէ՞ որ փաստորեն վերսկսել է, չէ՞ որ երեկ ստեղծագործել է՝ պատկերելով ծաղկադաշտում հողանի վազող մանկանը, թեկուզեւ նկարն արվել էր պահի տրտմությունը ցրելու ցանկությամբ: Հետո՞ ինչ, միթե վատ է, որ ստեղծագործությունն օգնում է վանել ծանրացող տխրությունը, դա պարզապես հրաշք է, չէ՞ որ միջոց ու հնար ունես դուրս գալու քեզ խոշտանգող ցավից. «Հա, լավ է, բայց երեւի դա քիչ է ավելի խոր ճգնաժամերից ելնելու համար»: Այդպես փշոտ խոհածում էր եւ գիտակցում միեւնոյն պահին, որ պատերազմի պարտադրած ստեղծագործական դադարի

երկար շարունակությունն իր համար կարող է սուսկալի անկունով վերջանալ: Մովսեսը լավ էր պատկերացնում, թե ով կլիներ ինքը նկարչությունից՝ արվեստից լքված լինելու դեպքում. հա՛ մի իսկական վտարակ յուրայինների մեջ եւ նրանցից դուրս: Ուստի որքան շուտ վերադառնա նկարչություն, այնքան լավ... «այնքան լավ բոլորի համար»՝ համոզում էր, նախ, իրեն, ապա՝ այլոց: Այնուհանդերձ, կասկածը կրկին համակում էր նրան, թե ինչ կարող է անել արվեստը հիմա, երբ շուրջդ համատարած ողբերգություն է՝ ազգային, պետական, հանրային, մարդկային, մի խոսքով՝ բոլոր ասպարեզներում: «Իսկ գուցե սա ինքնախաբեությունն է... էս կտավները, ներկերը, վրձինները, կոլաժները, փայտե աշխատանքները... գուցե էս ամբողջը մեր հորինած պատրանքն է, որ նրա ետեւում թաքնվենք դաժան իրականությունից», – դառնագին խորհում էր նա եւ ինքն իրեն ընդդիմախոսում. «Եթե մարդկային տառապանքը չի հաղթահարվելու արարչական տքնանքով եւ չի պսակվելու հիասքանչ պտուղներով, ուրեմն մարդկային կյանքն, իրոք, ունայնություն է, այն էլ՝ ցավագին ու մոխրացնող»: Հա, ինքը հայտնագործություն չէր կատարում այդ տեսաբանությամբ, պարզապես վերին ճշմարտությունը նա զգում եւ ըմբռնում էր իր աշխարհագացողության, ճակատագրի եւ տառապանքի գնով: Մովսեսը, ասես ինքն իրեն պատժելու համար, մի մեծ կտավ էր քաշել (երկար դադարից հետո միանգամից մեծ կտավ) եւ անցել աշխատանքի՝ առանց էսքիզների ու նախնական մտահղացման, ինչպես սովորաբար անում էր: Նա սկսեց նկարել հախուռն ու ինքնաբուխ, ներքին աչքերը լայնորեն չռած, նկարող աջի զիլ ազատությամբ՝ ասես փորձում էր գույների ու գծերի հորդումի տակ խեղդել մի անտես հրեշի, որ իրեն անողորքաբար հալածում է: Նա գիտե՛ ինչ հրեշ է դա, գիտե՛ ինչպես եւ որտեղից է հաճախ հայտնվում. նրա անունը վայրագություն է՝ բռնություն, որ երբեմն ամենասանձարձակ տեսքով՝ կրակ ու սուր առած, երբեմն փոփոխելով ձեւերը, մտնում է քո քաղաքից, քո տնից, քո հոգուց ու մարմնից ներս եւ քեզ հարկադրում շնչել նրա



դժոխսային օրենքներով: Ո՛նց է գարշում Մովսեսը բռնությունից, իր ազատության դեմ ամենայն ոտնձգությունից, դա թերեւս միակ բանն է, որի հետ անհաշտ է իր բնույթով ու էությամբ. համաձայն է՝ խլես իր մարմինը, բայց ոչ հոգին ու միտքը: Նա ամբողջ ցերեկը հենց դա էր նկարում, նախ, ենթագիտակցորեն, ապա ավելի ու ավելի գիտակցական շողարձակումներով:

Մթնշաղից առաջ քաղց զգաց, նայեց մառանիկն ու սառնարանը, բայց ուտելու պիտանի ոչինչ չգտավ, ուստի դուրս եկավ եւ հարեան խանութից ուտելիք գնեց: Արդեն արվեստանոց էր մտնում՝ մեկեն կարելու բան հիշեց, վերադարձավ խանութ, ուտելիքի քանակն ավելացրեց, նաեւ միրգ ու ըմպելիք առավ, տեղավորեց երկու տոպրակի մեջ եւ խանութպան Վոամին խնդրեց, որ մեքենայով իրեն շտապ տուն տանի ու ետ բերի՝ վճարով: Ճանապարհին, մեքենայի մեջ Մովսեսն առանձնացրեց ուտելիքի մի բաժին ու ըմպելիք, մնացյալ մեծ մասը թողեց տանը հանգրվանած «հադրության հնգյակին»:

Արդեն իրիկնանում էր, երբ նա դարձյալ արվեստանոցում էր: Կերավ իր պատրաստած բրդուճը, խմեց «Ջերմուկի» մի փոքր շիշ, մնացած ուտելիքը կրկին փաթեթավորեց եւ դրեց մառանիկում: Հետո ձեռքն առավ վրձինը: Հապաղեց, նրան թվաց, թե դռան մոտ մեկը ցելոֆանի դժվարաթափանց թաղանթի միջով հետետում է իրեն, ասես մարդկային մի սովեր իրեն լուր էր բերել հեռուներից: Նման զգացողություն ունեցել էր նաեւ ետկեսօրեին, բայց այդ պահին այնքան էր տարված կտավով, որ ուշք չդարձրեց իրեն թեթեւկիորեն գերած տպավորությանը: Այժմ թվացյալ տեսիլքն անտեսել չկամեցավ, գնաց դեպի դուռը, բացեց՝ ոչ ոք չկար: «Գուցե Նվամրդն էր»՝ հանկարծ անցավ մտքով: Ի՛նչ իմանաս, հնարավոր է՝ երեսանց անդրադարձավ եւ կրկին փորձեց նկարել: Այս անգամ նրան պարզապես կանխեցին. ներս մտավ Տեր Միսաքը դպիր Արմանի եւ Մարիայի հետ, ապա հայտնվեցին մյուս «ապաստարանցիները», եւ Մովսեսը հյուրընկալ տանտիրոջ բարեվարքությամբ, գույների ու

գծերի տակ ծանրաբեռ կտավը նկարակալի հետ մի կողմ քաշեց՝ այցելուներին «բարով եկաք» ասելով:

Տեր Միսաքն առաջինը նկատեց Մովսեսի «վերադարձը» նկարչություն. մոտեցավ մի կողմ տարված նկարակալին եւ ուշադիր նայեց.

– Մովսես եղբայր, ինչո՞ւ էսքան աճյուններ կան նկարում... Դուք իրո՞ք համոզված եք, որ ճիշտ կետից եք վերսկսել աշխատանքը,– դիտարկեց քահանան:

– Աճյուններ... բայց ես աճյուններ չեմ նկարել, Տեր Միսաք,– զարմացած արձագանքեց Մովսեսը եւ փութով մոտեցավ նրան: Մյուսները եւս խմբվեցին նկարակալի շուրջ:

– Էս սեւ կլորությունները ծառերի ու պատերի տակ՝ մի՞թե աճյուններ չեն,– փորձեց նկարի փոխաբերությունը ըմբռնել քահանան:

Մովսեսը լուռ ու սեւեռուն նայեց անավարտ նկարին:

– Դրանք կարելի է նաեւ որպես աճյուններ ընկալել, բայց ես դրանք չեմ նկատի ունեցել:

– Հապա ի՞նչ, Մովսես, ես էլ եմ կարծում, որ դրանք աճյուններ են նշանակում,– քահանայի ընկալումն իրենը համարեց նաեւ մանկավարժ Սիմոնը:

– Դրանք... ըմմմ... դրանք հողի տակից ելնող սեւ ամպեր են... որ հետո պիտի ցրվեն...– ոչ այնքան համոզիչ բացատրեց Մովսեսը:– Դե, լավ, եկեք մեզ չտանջենք տխուր պատկերացումներով, առանց էն էլ մի լավ օրի չենք,-- շրջեց նկարը եւ աթոռներ առաջարկեց հյուրերին: Նրանք տեղավորվեցին սեղանի մոտ:

Մարիան իրենց հետ բերած թեյն ու սուրճը պատրաստեց եւ մատուցեց ներկաներին: Նաեւ բացեց շոկոլադի երկու սալիկը եւ դրեց սեղանի կենտրոնում: Տեր Միսաքը գրպանից հանեց թղթի մեջ փաթաթված մասուրի մի քանի հատիկ:

– Ովքեր մասուր են սիրում, թող ավելացնեն,– առաջարկեց քահանան ու երկու հատիկ զցեց իր բաժակի մեջ:– Արմանն է բերել

Շուշիի մոտերքից, երբ Վիգենի հետ բերդաքաղաք հետախուզության էր գնացել:

– Ապրես, Արման,– ասաց գնդապետ Վարդանյանը եւ մի հատիկ մասուր իր բաժակը նետեց:– Դուք փայլուն գործ եք արել Շուշիում: Բայց էլի եմ ասում՝ իսկական ավանտյուրա էր ձեր արածը... Ապրե՛ք:

Արմանը գոհ ժպտաց քթի տակ: Ներս մտավ Քեռին:

– Կներե՞ք՝ ուշացա, Տիգրանին էի ճամփում, նրան Երեւանից շտապ կանչել են իրենց կուսակցության գրասենյակ,– բացատրեց Քեռին ու միացավ սեղանակիցներին: Մարիան նրան եւս թեյ մատուցեց:

– Տղայիդ հետ կապված ինչ-որ հաշիվ կմ, Ռուբեն,– հարցրեց Տեր Միսաքը:

– Ենթադրում եմ, որ Տիգրանը պիտի բացատրություն տա բյուրոյի կուսակիցներին, թե ինչու առանց թույլտվության երեք օր իր ջոկատով մնացել է հանձնված Շուշիում:

– Ա՛... դե ասա Տիգրանին մի լավ գզելու են... եւ հեռացնելու կուսակցությունից,– կանխատեսեց մանկավարժ Սիմոնը:– Սովորաբար էդպես են վարվում անհնազանդների հետ, պատմությունից գիտեմ. ազգային կուսակցությունը շատ խիստ է իր կանոնակարգում:

– Հա,– համաձայնեց Քեռին եւ իրեն սփոփելու պես ավելացրեց. – ոչինչ, դա չի խանգարի, որ Տիգրանը շարունակի գործել բոլորիս օգտին:

Պահը հարմար համարելով՝ Մովսեսը հյուրերին ծանոթացրեց իր որոշ ստեղծագործությունների հետ: Առանձին գործեր էր ի ցույց դնում, բացատրություններ տալիս թանգարանավարի հանգույն: Ի պատասխան մանկավարժ Սիմոնի դիտարկմանը, թե նրա գործերը սովորական նկարների պես չեն ընկալվում, Մովսեսը պարզաբանեց, որ արվեստում ինքնուրույնություն չունենալը նույնն է, թե՛ ինքնասպան լինես ամեն նմանակվող գործի հետ: Գնդապետ Վարդանյանը

նկարչին խնդրեց, որ առանձնացնի ու պահի «Քաղաքի երազը» կոչվող նկարը, հաջորդ ամսվա թոշակը կստանա եւ կգնի այն:

– Եվ ինչքան թոշակ եք ստանում, պարոն գնդապետ,– խնդմնդալով հարցրեց Մովսեսը:

– Հարյուր քսան հազար դրամ... Էս նկարի համար քիչ է...

Մովսեսը կծեց շրթունքը եւ մի կարճ պահ մտածմունքի մեջ ընկավ:

– Էս նկարը միջազգային շուկայում արժե...– նա առկախելով խոսքը՝ խորհեց. «Եթե ասեմ երկու հազար դոլար, նրանք չեն հավատա, կասեն՝ արհեստականորեն թանկացնում է իր գործը», ուստի ապավինեց իրատեսական պահվածքին.– չէ, զուր համեմատություններ չանեմ, միջազգային չափանիշները դեռ մեզ համար չեն, ցավոք... Պարոն գնդապետ, էս նկարը ձերն է էս թուպեից, կարող եք ձեզ հետ տանել: Վճարումը կանեք, երբ ի վիճակի լինեք,– գրեթե պաշտոնական, աճուրդում վաճառված նկարը հայտարարագրելու պես ասաց արվեստագետը:

– Անչափ շնորհակալ եմ, եղբայր,– զգացված արձագանքեց Վարդանյանը եւ ձեռքն առավ նկարը, հմայված նայեց պատկերված քաղաքի «երազին»:- Սա նաեւ իմ երազն ա... Ուրեմն էդ մասին Մովսեսը գիտեր:

Տեր Միսաքը թեւեւ ներկա էր ինքնաբերական կայացած «աճուրդին», անհաղորդ էր ընթացող խոսակցությանը, եւ մտատանջության մեջ ընկղմված՝ կրկին «անջատվել» էր շրջապատից:

– Տեսնես տղաները երբ կգան,– լսելի մրմնջաց նա՝ մյուսներին վերադարձնելով շամփրող իրականություն:

– Հիմա փորձեմ կապվել Վիգենի հետ,– ասաց Արմանն ու ձեռքի հեռախոսով համար հավաքեց:– Կապ չկա:

Մովսեսն էլ իր հերթին զանգեց:

– Արսենի հետ էլ կապ չկա, երեւի հասանելիության տիրույթից դեռ դուրս են:

Բոլորը հավաքվեցին սեղանի շուրջ: Տեր Միսաքը խնդրեց

գնդապետ Վարդանյանին, որ դրվագներ պատմի Շուշիի ազատագրումից, որին մասնակից էր 1992 թվականի մայիսին:

– Մինչեւ տղաները կգան,– իր առաջարկը հիմնավորեց քահանան:

– Բայց նրանք գիտեն, որ մենք էստեղ սպասում ենք,– հարցրեց մանկավարժ Սիմոնը:

– Հա, ես Արսենի հետ մի անգամ էսօր խոսել եմ,– տեղեկացրեց Մովսեսը:

– Լավ, սկսենք,– ասաց Վարդանյանն ու անցավ իր պատմություններին, որոնք ընդմիջարկվում էին Քեռու վերհուշերով. նա նույնպես մասնակցել էր Շուշիի ազատագրական գործողությանը՝ որպես կամավորական:

– Երբ ես Շուշի մտա ու առաջին անգամ տեսա Ղազանչեցոց եկեղեցին, ինձ թվաց, թե մեր բոլոր սրբերն էնտեղ հավաքված՝ մեզ են սպասում,– գիտակցված, թե՛ ենթագիտակցորեն կրկնել է Քեռին ամեն դրվագ պատմելուց հետո:

Անցավ մոտ երկու ժամ, երբ արվեստանոցում հուշիկ հայտնվեցին Վիգենն ու Արսենը իրենց նոր ընկերոջ՝ փրկարար ծառայության սերժանտ Վահան Մարտիրոսյանի հետ: Նրանք հոգնատանջ ու ցավահար դեմքերով էին, աղտոտված համազգեստներով՝ ասես դուրս էին պրծել տղմուտ վիհից: Նրանց կերակրեցին եւ թեյ ու սուրճ հյուրասիրեցին՝ Մովսեսի ու Մարիայի ձեռամբ, որոնց փութաջան ընթերակում էր Արմանը: Ոչ ոք չէր շտապում տղաներին հարցուփորձել: Երբ մի կարգին շունչ առան, առանց խնդրանքի ու հարցումի, ասես անձանտուր լինելով մի տիրական ձայնի, սկսեցին պատմել տեսածի, արածի ու զգացածի մասին՝ հիշատակելով անկարելիոր թվացող բազմաթիվ մանրամասներ ու նրբագծեր: Տղաները նկարագրում էին մի այնպիսի իրականություն, որ անհերքելիորեն կար, բայց որը չպիտի լիներ բանական ու աստվածային եւ ոչ մի օրենքով:

### **Վիզենի պատմածից**

«...Ես լրիվ կենտրոնացել էի աճյուններ գտնելու վրա... Նախանշված գոտին, ուր պիտի որոնումներ անեինք, ինձ անծանոթ էր՝ ավերակ բնակավայր, մացառուտներ, անտառ, դարավանդներ... Ամեն ճիգ անում էի՝ կռահելու, թե որտեղ կարող են ընկած լինել մարմինները... Երբեմն ճիշտ էի դուրս գալիս, բայց ավելի հաճախ սխալվում էի... Գրեթե ողջ օրը աչքերս չռած էի ման գալիս... Տասնյակ մարմիններ գտանք ճանապարհներին՝ ոչնչացված զինտեխնիկայի եւ փոխադրամիջոցների մեջ կամ կողքին... Պարզ էր, որ նրանց խփել են ուղիղ նշանառությամբ, հիմնականում օդից՝ անօդաչու հարվածային սարքերից... Երեւում էր, որ մեր զինվորական առանձին ստորաբաժանումներ դեռ մարտի մեջ չէին մտել... Շատ այրված մարմիններ կային... Նրանք թշնամու համար բաց թիրախ էին դարձել տեղաշարժերի ժամանակ... Թե ինչու եւ ինչպես են հայտնվել նման անպաշտպան, խոցելի վիճակում, չեմ կարող ասել... պետք է բացատրություններ պահանջել հրամանատարությունից... բայց տղաները այլեւս չեն վերակենդանանա:

Ես իմ ուշքը, ինձնից անկախ, ավելի շատ էի սեւեռում մարտական դիրքերի վրա, ուր մերոնք կռվել ու պաշտպանվել են... Ինչ խիզախ զինվորներ էին էդ պատանիները... Նրանց ընկած դիրքից ու կրակած փամփուշտներից կարելի էր եզրակացնել, թե ինչքան ու ինչպես են կռվել... Ոմանք դուրս էին եկել խրամատից ու առաջ շարժվել... հավանաբար հակագրոհի հնարավորություն են տեսել... բայց զոհվել են թշնամու հրետանային զարկերից... Սպանվածների մեծ մասը բեկորային վնասվածքներ ունեին... Վիրավորների մի մասը, որքան կարողացել, կամ որքան իրենց օգնել են, ետ է քաշվել, պատսպարվել ծառերի տակ... երեւի հուսալով օգնություն... Էնտեղ էլ կյանքին հրաժեշտ են տվել... Ինքնասպան եղածներ կային... Իմ կարծիքով՝ անհավասար մարտեր են ընթացել էնտեղ... Նշաններն էդ մասին են խոսում, կենդանի ուժի եւ կրակի հարաբերակցությունը մեր օգտին չէր... Չգիտեմ՝ ինչու էր էդպես...

Աճյուններ դժվարությամբ գտանք հատկապես անտառային մասում, թվում էր՝ էնտեղ շատ պիտի լինեին, ըստ նախնական տեղեկությունների, քանի որ էնտեղ էին ետ քաշվել ոչ միայն վիրավորները, այլև նահանջողները... Խաշամը ծածկել էր տղաների մարմինները... թփերի մեջ էին... դժվար էր նրանց հայտնաբերելը... Ինձ շատ օգնեց իմ ձեռնափայտը, մեխանիկական շարժումներով արագ տնտղում էի կասկածելի տեղերը... Երբեմն ձեռնափայտս ինքնաբերաբար խփվում էր անտեսանելի, քողարկված մարմին, որի կողքով արդեն անցնում էինք...

Թվում էր՝ մի երկու ժամ ականատես լինելով նման դեպքերի, կվարժվես աճյուններին, ավելի հանգիստ կվերաբերվես նրանց... Բայց՝ չէ, ամեն նոր մարմնի հետ ասես մեռնում ու վերակենդանանում ես, ամեն սպանված մարմնի մեջ ասես քո սիրտն է... Աշխարհում ոչ մի ազնիվ հոգի չի կարող անտարբեր անցնել նրանց կողքով... Նրանք մահը չեն խորհրդանշում, որ ինքնին ծանր է, այլ՝ զոհաբերությունը, իրենց երիտասարդությունը, իրենց չափրած եւ մոխրացած կյանքը... Մի տեսակ խելոքանում, իմաստնանում ես յուրային աճյունների կողքին... Եւ զգվում ես ինքդ քեզնից, որ չես կարողացել կանխել էդ ջահել տղերքի կործանումը... ոչնչով չես սատարել նրանց իրենց վերջին թուփերին... Բայց ինքներդ եք հասկանում՝ չի կարելի նման իրավիճակներում անձնատուր լինել քեզ կլանող հույզերին... Ես շատ փորձեցի սառնասիրտ պահել ինձ, որ կարողանամ ավելի արդյունավետ գործել, սակայն դրանք զուր ջանքեր էին... Երեւի վերին ճշմարտությունն էն է, որ պիտի եւ հուզվես, եւ գործես...

Ջանացի, որ չկենտրոնանամ զոհվածների հարազատների ներկայության վրա... բայց նրանց դաժան ցավն ու կսկիծը տեսնում էի անգամ առանց նրանց կողմը նայելու... Մենք որոնումներ էինք անում մի մեծ տարածքում, մեկ-մեկ թվում էր, թե դա անսահման է... Ես փրկարար ծառայության տղաների հետ էի շղթա կազմած որոնում, երբեմն առանձնանում էի եւ անմատչելի թվացող տեղե-

րով անցնում... էդպես երկու մարմին գտա... Փրկարարների հետ հեշտ էր աշխատելը, նրանք հմուտ, պատրաստակամ մարդիկ են, արեցին՝ ինչ իսկապես կարող էին... Վահանը նրանցից մեկն է... ինձնից ջահել է, ափսոս, որ էդ տարիքում միանգամից էդքան աճյուններ տեսավ... Բայց նա քաջ տղա է, հավատում եմ, որ նա հոգեպես չի կոտրվի եւ կշարունակի իր ծառայությունը... Կշարունակի ապրել իսկական տղամարդու պես...»

### ***Արսենի պատմածից***

«...Ինչ սքանչելի... սիրուն տղաներ էին... նրանց հասակը... աչքերը... հայացքը... Շատ քչերի դեմքին սարսափ ու վախ տեսա... մինչեւ վերջին պահն ասես հավատով էին նայում կյանքին... Որքան վեհացրել ու գեղեցկացրել էր նրանց էդ խաբկանքը... Թվում էր՝ բոլորին ճանաչում եմ... արտաքուստ էնքան հարազատ էին երեւում... թեկուզ խեղված, արյունոտված մարմնով... Չէիր ասի, թե հոգին թռել է նրանց մարմնից... թեւեւ անշունչ էին, բայց էնպես կենդանի էին քեզ ներկայանում իրենց տեսքով ու լրված ասելիքով... Նրանք ինձ «պատմեցին», թե ինչ է անձնագոհությունը... սխրանքը... սպասումը... հավատը... տհաճ անակնկալը... հուսախաբությունը... լքվածությունը... ճակատագիրը... Ամեն գտնված աճյունի հետ ես զրուցեցի... շատ բան իմացա նրանցից, որոշ բաներ էլ ես հաղորդեցի նրանց... Նրանք ասես Աստծուց ուղարկված սուրհանդակներ լինեին, որոնք մեզ պիտի հաղորդեին մի կարեւոր պատվիրան ու ավետիս... Չեմ թաքցնի ձեզնից՝ ամեն մի աճյունի համար ես շոյանք, արցունք ունեի... եւ նրանց մխիթարում էի իմ հոգում անսպասելիորեն ծնվող խոսքերով... Եթե հիմա հարցնեք, թե ինչ խոսքեր էին դրանք... վերապատմել չեմ կարող... անկեղծ եմ ասում:

Օգնում էի տեղավորել գտնված աճյունները մեքենաների մեջ... Ես էդ սեւ պարկերի մեջ ասես նրանց բարուրում էի անվարժ հոր նման... Դեռ երեխաներ չունեմ, բայց արդեն գիտեմ, թե ոնց է



պետք նրանց բարուրել... Մի զինվոր կար՝ ուղղակի պատանի... նրա երեսին դեռ մորուս չէր աճել... Ինքնաձիգը պահել էր մարմնի տակ, գլուխը հենել զենքին ու ասես քնով անցել... Վերքերը չէին երեսում... Ես խնդրեցի ընկերներին, որ նրան դեռ ձեռք չտան, սպասեն մի քիչ էլ, գուցե արթնանա... Հարազատներից էդ պահին ոչ ոք չկար նրա կողքին... գուցե նա մենակ է ապրել իր կարճ կյանքը... Աղոթեցի, որ այսուհետ շատ երկար ապրի ամենքիս սրտում, Աստծո կողքին...

Ծնողները... հարազատները... նրանք... խելագարների պես էին... չէ, իսկական դատապարտյալներ, որոնք այդուհետ պիտի կրեն ցավի ու հոգեվկան ծանրագույն պատիժը... չէ, չպիտի թողնեին, որ նրանք մասնակիցը դառնային էդ հոգեսպան տեսարանին... Ծնողներին պիտի հեռու պահել նման վայրերից, նրանք էնտեղ անելիք չունեն... Ես ամեն քայլափոխի նրանց հետ էի... Զսպում էի, որ անտեղի առաջ չնետվեն որոնումների ժամանակ... Փորձում էի հուսադրել, որ գուցե դեռ ողջ են իրենց գավակները... որ ահա, հնարավոր է՝ նրանք դուրս գան ծառերի ետեւից, ելնեն ծածուկ տեղերից... Ո՛վ գիտե, թե բախտը ինչ անակնկալներով կարող է մեզ զարմացնել... Փորձում էի նաեւ իրականությունից չկտրել նրանց... որ սին լավատեսության ու սպասելիքների զոհ չդառնան... Բայց ավելի շատ փորձում էի նրանց ցավի մի պատառիկը վերցնել իմ սրտին...

Ինձ շարունակ թվում էր, թե էդ տարածքում, ուր մեր տղաների աճյուններն էին փռված, անշշուկ դեգերում են ինչ-որ ուրվականներ... Կարծես նրանց տեսնում էի, քիչ էր մնում շոշափեի, բայց վերջին պահին խոյս էին տալիս... Մտածում էի, որ դրանք զոհված տղաների ոգիներն են... նրանց անաղարտ ուրվականները, որ փորձում էին մեզ ինչ-որ կարեւոր լուր փոխանցել... Նրանք կախարդում էին ինձ իրենց անշոշափելիությամբ ու ոգեղենությամբ, իրենց բիբլիական անմատչելիությամբ, ասես ինչ-որ սրբավայրից էին ուղարկվել էնտեղ... Բայց եւ շատ սարսուռ կար էդ տեսիլքի

մեջ... Ինձ թվում էր, թե Աստված ու սատանան միաժամանակ էստեղ ներկա էին... Երբ հեռանում էինք, ուրվականները չբացան, ասես ճուլվեցին տեղանքի ծառ ու խոտի հետ, պահ մտան էստեղ... Երեւի մինչեւ մեր հաջորդ այցը... Ես արդեն ճանաչել էի նրանց իրական մարմինները, որոնք անքողարկելի կախարդանք ունեին իրենց մեջ, ես ակամա հպվում էի նրանց եւ ասես մի քիչ սրբացվել էի...

Մի տարօրինակ բան էլ պիտի ասեմ. աճյունն ու նրա հարազատը իրար հետ «լեզու» են գտնելու, բայց ահա մենք՝ երրորդ կողմը, ինչպէս պիտի հարաբերվենք էդ երկուսի հետ, ի՞նչ լեզվով պիտի խոսենք նրանց հետ, որ ամենքիս համար հասկանալի եւ ընդունելի լինի իրականությունը... եւ ճշմարտությունը... Հայրենիքը գիտի՝ ինչ է զոհաբերությունը, բայց երբ զոհաբերության հետ կորսվում է նաեւ հայրենիքը, թեկուզեւ դրա մի մասը, դու չգիտես, թե մարդկայնության որ էջերից պիտի բառեր շնջաս աճյուններին՝ նրանց հողին հանձնելու պահին... Չգիտեմ, ես պատրաստ չեմ նման փշոտ հարցերի պատասխանել, բայց պատրաստ եմ էդ աճյունների համար խորապես սգալ... եւ հուսալ, որ նրանք մեր հողի եւ մեզ համար անասելի թանկ են... Ես դառը, բայց եւ շատ կարեւոր փորձ ձեռք բերեցի, եթե պետք լինի, դարձյալ կարող եմ գնալ նման «գործուղման»... Բայց հավատացեք Վիգենի խոսքերին. ամեն գտնված աճյունի հետ մեռնում ու վերակենդանանում ես, ամեն սպանված մարմնի մեջ ասես քո սիրտն է դրված... Աշխարհում ոչ մի հոգի չի կարող անտարբեր անցնել նրանց կողքով, նրանք մահը չեն խորհրդանշում, որ ինքնին ծանր է, այլ՝ զոհաբերությունը, իրենց երիտասարդությունը, իրենց չապրած եւ մոխրացած կյանքը...»

### ***Սերժանյո Մարտիրոսյանի պատմածից***

«...Մենք՝ փրկարարներս, կանխատեսում էինք, որ էդ օպերացիան շատ դժվար ա լինելու, որովհետեւ առաջին անգամն էր

նման բան կազմակերպվում... եւ զոհվածների ծնողներն ու հարազատներն էին մեզ հետ... Բայց, կարծես թե, փորձությունն անցանք... Ազերիները մեզ սահմանափակ պայմաններ էին առաջարկել ժամկետի, մասնակիցների եւ տարածքի առումով... Նրանց զինվորականները մեզ հետեւում էին որոշ հեռավորության վրա, բայց եւ մեզ հսկողության տակ էին պահում ռուս խաղաղապահները, որ հանկարծ միջադեպեր չլինեն կողմերի միջեւ... Միջադեպեր չեղան... մենք ինտենսիվ աշխատեցինք, թեւ կարելի էր շատ ավելի մեծ տեղանք «սանրել», եթե մեզ հնարավորություն տային... Բոլորիս համար դժվար էր... գուցե ամենածանրը հենց փրկարարների համար էր, քանի որ մենք պաշտոնապես էինք կրում էր գործի ամբողջ պատասխանատվությունը տեղում... Եթե աճյուններ էինք գտնում... առաջին մեղադրանքը մեզ էր հասնում, թե ինչու են զոհվել տղաները... Եթե ենթադրվող տեղերում աճյուններ չէինք գտնում, ապա էլի մենք ենք, նախ, մեղավոր, որ նրանց չենք հայտնաբերում... Բայց մենք նույն ցավող սրտով ենք կատարել մեր գործը... Վիգենն ու Արսենն արդեն ասացին՝ ամեն գտնված աճյունի հետ մեռնում ու վերակենդանանում էինք բոլորս, ամեն սպանված մարմնի մեջ մեր սիրտն է...

Մենք ազերի զինվորների մարմիններ էլ ենք գտել, փոխանցել ենք նրանց:

Ինչ-որ տեսել ու զգացել եմ, չափազանց ծանր ա, դա, ոնց որ ասում են՝ թշնամուս էլ չէի ցանկանա... Բայց մենք պիտի վերապրենք մեր կենսագրության բոլոր արյունոտ ու ցավոտ կետերը... դրանցով էլ գնանք առաջ... Երեւի դա մեր ճակատագիրն ա...»:

Վերոբերյալ ոչ ամբողջական սղագրումները կատարել է Մովսեսը: Մարիան, որ հավաքներին սովորաբար նստում էր Տեր Միսաքի կողքին, այդ երեկո պատահաբար, թե՛ ինչ-որ աղոտ մղումով հայտնվել էր նկարչի մոտ ու թե՛ւ ակնապիշ հետեւում էր պատմող տղաների, հատկապես Վիգենի շարժումներին, ասքի պոչով

մեկ-մեկ տեսնում էր, որ վարպետ Մովսեսը շարունակ ինչ-որ բան է գրառում, բայց թե որոշակի ինչ՝ պատկերացում չուներ: Մյուս ներկաներին պարզապես թվացել էր, թե նկարիչը էքսիզներ է անում. ո՛չ, այդ անգամ Մովսեսը նկարում էր բառերով, ավելի ստույգ՝ արտանկարում էր, քանզի Վիգենի նախաբան խոսքերից արագ հասկացավ, որ նման անօրինակ ու ինքնահորդ խոստովանություններն անհնար է ամփոփել պատկերների մեջ՝ չափազանց թերի կլինեին, դրանք պետք է խնամքով, մանրամասնորեն միայն վերապատմել՝ ամեն մի պատեհ առիթով:

Աճյուններ որոնողների պատմություններից հետո, երբ իջած շնչախեղդ լռությունը ձգվում էր, Մովսեսն իր երկարավուն նոթատետրը դրեց գրպանը եւ հյուրերին առաջարկեց, որ գիշերեն արվեստանոցում՝ «մի կերպ կտեղավորվեն»: Սակայն բոլորն ուզում էին տուն գնալ եւ հանգիստ առնել իրենց «պրիշակում», հուշեցին, որ լավ հանգստանալ է պետք հատկապես Վիգենին, Արսենին ու Վահանին: Արդեն կեսգիշեր էր:

Մովսեսը տաքսի կանչեց: Մեքենայում տեղավորվեցին ինքը, Տեր Միսաքը, մանկավարժ Սիմոնը եւ Քեռին: Գնդապետ Վարդանյանը բնակվում էր արվեստանոցից ոչ հեռու, ուստի ոտքով ճանապարհ ընկավ տուն: Պատերազմից հետո առաջին անգամ փողոցի լապտերները վառ էին, լուսինը դուրս էր եկել ամպերի ետեւից իր պայծառ կլորությամբ, եւ հենց այդ փոքրիկ երեւոյթներն առիթ եղան, որ երիտասարդները ցանկանային մի քիչ շրջել, թեպետ օդը բավական սառն էր եւ ոչ զբոսանքային: Նրանք մեկտեղ քայլեցին հին ու ներդաշնակ ընկերախմբի պես, թռուցիկ անդրադառնալով քաղաքային անցուղարձին. նրանց լավատեսություն էր ներշնչում, որ ավերածությունների վերականգնումը թափ է առնում, բայց եւ տագնապում էին, որ շատերը կարող են չհամակերպվել նոր իրողությունների հետ եւ արտագաղթել:

Օղակաձեւ պուրակի մոտ ուշ ժամն ու հոգնությունը զգացնել տվեցին, եւ երիտասարդները միմյանց «բարի գիշեր» մաղթելով՝

բաժանվեցին: Ինքնաբերաբար, թե՛ անխոս համաձայնությամբ Վիգենն ու Մարիան մնացին կողքկողքի կանգնած՝ ասես մի հույժ, անհետաձգելի խոսակցություն շարունակելու մտադրությամբ: Առաջին անգամ նրանք երկուսով էին՝ ամայացած, իր լույսերը վերգտնող քաղաքում, եւ Վիգենը, մոռանալով հոգնություն ու տանջանք, իր «սիրուն լալիկին» թաքուցյալ խանդավառությամբ ուղեկցեց տուն՝ նրան առնչելով լուսնյակ գիշերվա հրապույրների եւ իր շողուն զգացողությունների հետ, բայց՝ թեթեւակի նշաններով միայն, առանց թեւատարած շարժումների:

Նորահայտ զույգը մի քանի քայլ էր արել՝ Վիգենը, հոգածու ուղեկցի մտոք, զգուշորեն բռնեց Մարիայի ձեռքը, որ նա «չվախենա գիշերվա հնարավոր տհաճ անակնկալներից», եւ այն իր խոշոր ափի մեջ պահեց մինչեւ բաժանվելը: Ճանապարհին Վիգենը մի քանի անգամ խորհեց, որ «սիրուն լալիկ» տաք ու նրբին ձեռքը նման է փոքրիկ աղավնու, որ թեթեւ դողոցով ծվարել է ապահով բնի մեջ: Նրանք դանդաղաքայլ հատեցին Վերածննդի հրապարակը, իջան Թումանյան փողոցով, թեքվեցին ու հասան Հաղթանակի պուրակ, ապա Ազատամարտիկների պողոտայով բարձրացան վեր՝ բավականությամբ երկարաձգելով իրենց ուղին: Ճանապարհին աղջիկը մի երկու անգամ մատնախոսությամբ ընկերոջն ինչ-որ ասելիք փոխանցեց: Երիտասարդը, որ դեռ նոր էր ջանում սովորել «լալիկ» լեզուն, լիովին չհասկացավ նրա անձայն խոսքերը, միայն մի «հաղորդագրություն» անսխալ ըմբռնեց՝ Մարիան Վիգենին քաջ է համարում:

Թիվ 7 դպրոցի մոտ աղջիկն ուղեկցին պարզ ժեստով հասկացրեց, որ ինքը բնակվում է դիմացի շենքում, հրաժեշտի նշան արեց, որ հեռանա: Վիգենը շուրջը նայեց՝ փողոցը ամայի է, վերելից լուսինն էր շռայլորեն շողում, եւ պահը համարելով սիրո խոստովանության համար իդեալական, փորձեց արտահայտվել, սակայն բառերն անսպասելիորեն խցանվեցին կոկորդում, մի ակնթարթ շփոթվեց, ապա իր ամբողջ գորովով Մարիային քաշեց դեպի իրեն՝

համբուրելու, նրան այդպիսի սիրային ջինջ խոսքեր ասելու հա-  
խուն ցանկությամբ: Աղջիկը բնազդաբար ետ քաշվեց, բայց մի  
անհուն ժպիտ պարզեց ընկերոջը եւ թեթեւասահ օդանույշի, թե՛  
ուրվականի պես վազքով կտրեց փողոցն ու անցավ շենքի բակ:  
«Սիրուն լալիկն» իրեն կատարյալ կնոջ պես էր զգում՝ եւ վախեցած  
էր, եւ երջանիկ:

Վիզենը չհասցրեց պարզել՝ ո՞րն է Մարիայենց մուտքը. շփոթ-  
ված կանգնեց մի քանի րոպե, որպեսզի տեսնի, թե որ բնակարա-  
նի լույսը կվառվի: Բայց դիմացի շենքում նոր լույս չվառվեց, եղած  
վերջին երկուսն էլ քիչ անց հանգան: Տխրեց ու տատամսեց, ապա  
Ազատամարտիկերի պողոտայով ետ դարձավ դեպի ներքե՝ թիվ  
59 շենք, ուր բնակվում էր մոր հետ: Այնտեղ ապաստանել էր նաեւ  
Շուշիից բռնատեղահանված մի կին՝ երկու մանկահասակ աղջիկ-  
ներով:

Երբ հասավ կամրջին, կանգնեց մի պահ ու վերեւ նայեց. «Չէ,  
Ստեփանակերտի լուսինն ուրիշ է... ավելի հարազատ է ու սրտա-  
լի»՝ մտածեց Վիզենը՝ գիշերային երկնքի թագուհուն զուգահեռելով  
Շուշիում վայելած լուսնի հետ, որ «եղբայրաբար» օգնել էր իրենց  
հետախուզության ժամանակ: «Իսկ գուցե եւ նույն լուսինն է»՝ փոր-  
ձեց ավելի արդարամտորեն խորհել, ապա շարունակեց ընթացքը:  
Քայլելիս գյուտ արածի պես արձանագրեց, որ ինքն ու Մարիան  
ապրում են նույն փողոցի տարբեր ծայրերում: Եվ անչափ շոյված ու  
արժեւորված զգաց իրեն, որ երկուսով զբոսնելուց առաջ, գտնվելով  
Օղակաձեւ պուրակի մոտ, Մարիան չի «մատնել», որ ինքը բնակ-  
վում է այդտեղից ընդամենը հարյուր մետր հեռավորության վրա,  
այլ պտտվեց իր հետ մեծ հաճույքով, մինչեւ ասպետն իրեն կհասց-  
ներ տան մոտ՝ «շուրջերկրյա ճանապարհորդությունից» հետո:

Արդեն բարձրանում էր տան աստիճաններով՝ Վիզենը հան-  
կարծ հիշեց, որ ուսապարկում մոռացել է Մարիայի համար բերած՝  
սեզի ճյուղիկներով փոքրիկ փունջը, որ քաղել էր որոնումների՝ ար-  
դեն անցած օրը, հանգստի կարճատեւ դադարին: Ափսոսաց, որ

քիչ առաջ ընծեոված հիանալի պահին այն չի նվիրել աղջկան, բայց եւ դա լավ առիթ համարեց վաղը նրան կրկին հանդիպելու համար: Դուռը բացելուց առաջ ներըմբռնեց, որ իր հոգին շատ երկար է լիանալու Մարիայի հայտնությամբ: «Գուցե իսկական սերը հենց էդպես էլ պիտի լինի՝ արտակարգ ու վերահաս».- մտածեց նա:

## Գլուխ 5

### ՏԵՐ ՄԻՍԱԳ. ԱՆՆԿԱՏ ՓՉՈՂ ԶԵՓՅՈՒՌ

*Դու պիտի նվազեցնես օտարների աղմուկը,  
ինչպես չոր տեղում տաքություն,  
ինչպես ամպի ստվերում եղող տաքություն,  
ահարկունների ճյուղը ցած պիտի բերվի:*

*Եսայու մարգարեությունը, 25*

Տեր Միսաքը մի քանի օր չէր զանգել, ոչ էլ այցելել էր Մովսեսի արվեստանոց: Իսկ նկարիչն ինքնամոռաց զբաղված էր նոր կտավով, այն պետք է հասցնի Փարիզի խմբակային ցուցահանդեսին, որի բացումը նախատեսված էր դեկտեմբերի տասին: «Փարիզյան» նախկին՝ պատրաստ նկարը անհետացել էր, հիմա ինքը նոր գործ է ավարտում, որպեսզի ֆրանսիացի եւ մյուս գործընկերները չմեղադրեն իրեն անպարտաճանաչության մեջ. միշտ հստակ է գործում պայմանավորվածությունների դեպքում, «բացառիկ հատկանիշ արվեստագետների պարագայում»՝ ինչպես կասեր Տեր Միսաքը: Եվ միայն հիմա հիշեց, որ քահանան տարօրինակաբար լրում է: Մովսեսը մի անգամ եւս նայեց նկարին, ուր վերացարկվում է մարտնչող կարմիրն անդորրավետ կապույտի հետ՝ մի պատը փլուզված դղյակի ֆոնին, ցած դրեց վրձինը եւ ներկոտ մատներով հավաքեց հեռախոսահամարը: Քահանայի ընկճված եւ տրտում ձայնը Մովսեսին միանգամից հուշեց, որ նրա հետ ինչ-որ բան է կատարվում:



- Տեր Հայր, հազար բարեւ, ինչպէս եք... մի դար է՝ չեք երեւում,- անհանգստությունը հայտնեց նկարիչն իր սովորական հիպերբոլով:

Քահանան կցկտուր պատճառաբանեց, որ ջերմություն ունի եւ տանը պառկած է, թագավարակ են կասկածում: Քաղաքը պատերազմից հետո է տրվում վիրուսային դրսեկ ճարակին, երբ այն արդեն լայն տարածում ունէր Հայաստանում եւ գրեթէ արար աշխարհում: Տեր Միսաքը զգուշացրեց, որ իրեն այցելել պետք չէ, վաղը-մյուս օրը ոտքի կկանգնի եւ անձամբ կայցելի արվեստանոց, «մյուսներին էլ կկանչի»:

- Ուրեմն ապաքինվեք արագ, Տեր Հայր, թե չէ մեր հոգիները կորբանան, Աստված էլ ձեր տկարությունից իրեն վատ կզգա,- այսպես Մովսեսը կատակախառն ավարտեց խոսակցությունը եւ կարծես թերթեացավ:

Այնուհանդերձ, կասկածը չլքեց նրա սիրտը: Եթե քահանան հիվանդ է, ապա ինքն այդ տեղեկությունը կիմանար անգամ յոթ փակի տակ գտնվող զնդանում. «ապաստարանցիները» միմյանց հանդեպ ուշադիր ու հոգատար են դարձել, եւ մեկի հետ կապված փոքրիշատե էական տեղեկությունն արագորեն փոխանցվում է մյուսներին: Ինչո՞ւ իրեն ոչ ոք անցած օրերին չի հայտնել քահանայի հիվանդության մասին. Մովսեսը դա շատ տարօրինակ համարեց եւ արագ հավաքեց դպիր Արմանի հեռախոսահամարը: Վերջինիս փոխանցած լուրն էլ ավելի տարակուսանքի մատնեց նկարչին: Իսկ Արմանը հայտնեց, որ Տեր Միսաքը հիվանդ չէ, պարզապես անտրամադիր է եւ, արդեն երեք օր, փակվում է ավանդատանը, տուն է գնում ուշ ժամի: Դպիրը չգիտեր՝ իրական պատճառն ինչ է, տաճարի սպասավորների հարցումներին Տեր Միսաքը միակերպ պատասխանում էր, թե «մեղավոր մահկանացուներիս համար սովորական վիճակ է»:

Քահանայի հետ ինչ-որ բան է կատարվում, բայց ինչո՞ւ է նա երեխայաբար ստում իրեն՝ նեղացած խորից Մովսեսը եւ աճա-

պարեց Աբ. Աստվածամոր Հովանի եկեղեցի: Տեր Միսաքի մոտ մտնելուց առաջ նկարիչը կանգ առավ բեմի առջեւ փոված վիշապագորգի մոտ: Մի երկու ընթացքով զնայված նայեց այդ հնաբույր ու չքնաղ «մունետիկին», որ ամենքին անխոս պատմում է իր ու մեր ժամանակի, իր անցած ու մեր կտրելիք ճանապարհների մասին: Սովորականի պես Մովսեսը ձեռքով շոյեց գորգը, նրան ցտեսություն ասաց եւ գնաց ու բացեց ավանդատան դուռը: Տեր Միսաքը միայնակ նստած՝ «Նարեկ» էր կարդում:

– Տեր Միսաք...– երեխային ստի մեջ բռնելու պես, պատասխան չպահանջող հարցականով դիմեց Մովսեսը եւ տեղավորվեց կողքի աթոռին:

Տեր Միսաքը շփոթվեց ու կարմրեց, գլխահակ՝ գրքի մեջ դրեց էջանիշն ու փակեց, ապա հոգնած-հոգնած աչքերով նայեց արվեստագետ ընկերոջը:

– Ներիր, Մովսես, ես չէի ուզում քեզ անհանգստացնել իմ խնդիրներով:

– Ինչ խնդիրներ, Տեր Միսաք, ասեք, որ մենք էլ իմանանք... Հակառակ դեպքում դրանք կարող են ծանրանալ նաեւ մեզ վրա:

Քահանան մի քանի վայրկյան մտախոհ նայեց զրուցակցին, ապա խոստովանեց.

– Թեմակալ նոր առաջնորդը սպառնում է ինձ պատժել:

– Ինչի՞ համար... Ինչ մեղք եք գործել, Տեր Հայր...

– Այն մեղքը, որ շարունակում եմ մարդկանց օգնել... որ հավաքվում ենք ու քննարկում մեզ հուզող հարցեր... որ մասնակցություն ենք ունենում հանրային գործերին...

Մովսեսը ծիծաղեց:

– Տեր Միսաք, ձեր առաջնորդը շատ է ուռճացնում ձեր... արտակեղեցական դերակատարությունը... Ձեր ու մեր մեկտեղ արածն ինչ է... սովորական մարդկային վերաբերմունք դժբախտության ու դժվարության մեջ հայտնված մարդկանց հանդեպ: Ձեմ կարծում, թե նա եկեղեցու համար վտանգավոր է համարում ձեր

մարդասիրական կեցվածքը, այլ որ նա...– Մովսեսը կիսատ թողեց խոսքը, որպեսզի ընտրի ճիշտ բառեր:

– Որ նա ինչ...– անհամբեր հարցրեց քահանան:

– Որ նա վախենում է ձեր հեղինակությունից... ինչպես քաղաքական գործիչներն են վախենում իրենց ուժեղ մրցակիցներից: Ձեր հեղինակությունն աճում է, Տեր Հայր, բոլորիս աչքի առաջ, օրեցօր՝ ճշմարիտ ընթացքով... Նա իր նոր աթոռը երերուն է տեսնում, եւ ուզում է ձեր հեղինակության վրա քար գցել: Գրագ կգամ, որ նրա ականջին փսփսացողներ են եղել ձեր անվան հետ կապված:

– Չգիտեմ... Բայց կամենալու դեպքում էլ չեմ կարող հավակնել նրա տեղին, նման իրավունք ինձ տրված չէ. ես ամուսնացյալ քահանա եմ, ընտանիքատեր, էդպիսիք եկեղեցական աստիճաններով ավելի վեր չեն բարձրանում:

– Գիտեմ: Նա ընդհանարպես ձեր հեղինակությունից է վախենում... թույլ ու նախանձոտ մարդու պահվածք: Իսկ նախանձը մահացու մեղք է համարվում, չէ՞: Ցավալի է, եթե դրանից տառապում է բարձրաստիճան հոգեւորականը:

– Պետք չէ նրան մեղադրել ինչ-որ մեղքի մեջ:

– Լավ, չմեղադրենք... թողնենք «բանադրի» ուրիշներին...

Տեր Միսաքը թեթեւակի ծիծաղով արձագանքեց:

– Դե, ինձ չեն բանադրում, դու էլ քո հերթին մի ուռճացրու:

– Տեր Միսաք, ձեզ սիրում ու հարգում են քաղաքում, իսկ նրան... նրան դեռ շատերն անգամ չեն ճանաչում... Դե, ես նրան վիրավորելու ոչ մի ցանկություն չունեմ, ձեր առաջնորդն է, հարգեք ու ենթարկվեք ինչքան ուզում եք, բայց ես թույլ չեմ տա, որ նա տրորի ձեր անունը, պատիվն ու կերպարը. այդ ամենը մեզ համար շատ թանկ է, Տեր Հայր, դուք մեզ բոլորիս եք խորհրդանշում, ապաստարանի եւ նրանից դուրս գտնվող բազում արժանավոր մարդկանց, որ արցունք արյուն ու ավյուն են տալիս երկրին ու նրա մարդկանց: Թույլ չեմ տա,– արդեն ականա բարձրացած ձայնով կրկնեց Մովսեսը:

- Շնորհակալ եմ, բարեկամս, դու բավականաչափ ոգեւորեցիր ինձ: Բայց միամտաբար ինձնից սուրբ ու կուռք չսարքեք... այ, իսկական պատիժը դա կլինի:

- Մենք ոչ ոքի չենք ասի, որ դուք մեր սուրբն ու կուռքն եք, Տեր Միսաք, շատ գաղտնի կպահենք,- չարաճճիորեն անդրադարձավ Մովսեսը:- Բայց խոստացեք, որ տեղի չեք տա ինչ-որ ճնշումների, որտեղից էլ դրանք լինեն. մենք ձեր թիկունքին ենք:

- Զգացված եմ, եղբայր Մովսես, ես ձեզ հետ ինչո՞ւ պիտի վախենամ...

- Շատ բարի... Բայց, այնուամենայնիվ, ասեք, Տեր Հայր, ձեզ համար ի՞նչ պատիժ էր մտմտում ձեր եպիսկոպոսը:

- Նա քահանաներիս կանչել էր իր մոտ եւ շարք կանգնեցրել զինվորների պես... Գնում-գալիս էր մեր առջեւով՝ ինչպես խստաշունչ հրամանատար,- փոքր-ինչ խորքից իր պարզաբանումը սկսեց Տեր Միսաքը՝ թեթեւակի նմանակելով թեմակալի դիմախաղը:- Երբ մոտեցավ ինձ, մինչ այդ հեռախոսով երկրորդ խոսակցությունն էր ունեցել նույն թեմայով, ջղային հայտարարեց, որ ինձ կարգալուծ անել կտա, ապա մեղմացավ ու ասաց, որ իմ ծառայության վայրը կփոխի. երեւի ուզում էր ասել, որ ինձ կգործուղի գյուղական եկեղեցիներից մեկը... Դե, Աստված նրա հետ, կծառայենք, ուր որ պետք համարեն:

- Կարգալրկյծ... այ քեզ բռնակալ: Թույլ չենք տա, Վեհափառին հենց էսօր մի նամակ կգրենք... բազմաթիվ ստորագրություններով,- հակընդդեմ քայլի մասին շտապեց խոսել Մովսեսը:

- Պետք չէ,- իսկույն կանխեց քահանան,- կարիք չկա մեր տարածայնությունները էջմիածին հասցնել:

- Հո ձեռքներս ծալած չենք նայելու՝ տեսնենք, թե մեր սիրելի քահանային ոնց են հանիրավի պատժում:

- Է թող պատժեն, ոչ աշխարհի վերջը կլինի, ոչ էլ իմ: Անխռով կկրեմ իմ պատիժը: Կարծում եմ՝ թեմակալը կբավարարվի ինձ «աքսորելով», այսինքն՝ որեւէ գյուղ կուղարկի ծառայության:

– Դե, եթե ձեզ հանկարծ, իրոք, գյուղական եկեղեցի ուղարկեն, մենք էլ կգանք ձեզ հետ, Տեր Միսաք, մենակ չեք գնա, ձեր ծխական համայնքի կորիզը կգա ձեզ հետ... Կշնչենք գյուղական մաքուր օդը, կզբաղվենք հողագործությամբ, կապրենք մեր սքանչելի գեղջուկների հետ նրանց հոգս ու ցավով, իսկ ազատ ժամերին, եթե էդպիսիք գտնվեն, կնկարեմ գյուղական հրաշագեղ պատկերներ... Ռոմանտիկա...– փոքր-ինչ շինծու թատերայնությամբ բացականչեց նկարիչը:

– Իդիլիա...– Մովսեսին նմանակեց Տեր Միսաքը:

Լռեցին: Ռոմանտիկայի տրվելուց առաջ, այնուհանդերձ, հարկ էր, թեկուզ մշուշապատ, պատկերացնել այն հետեւանքները, որ կարող են ի հայտ գալ «լքվող վայրում», այսինքն՝ տաճարում եւ քաղաքում: Նկարիչն ու քահանան միմյանց էին նայում՝ խոհաձելով նույն հարցի շուրջ: «Իսկ եթե երկար տեւի Տեր Միսաքի «աքսորը», տաճարում ղվ է տնօրինություն անելու, ինչ իմացությամբ ու հոգով»՝ մտածում էր Մովսեսը: «Իսկ եթե անուշադրության մատնվեն էն բազմաթիվ մարդիկ, որոնց հոգ ենք տանում, ինչ կլինի նրանց վիճակը»՝ տազնապում էր քահանան:

– Տեր Միսաք, արի հնարամիտ գտնվենք էս իրավիճակում եւ հանգուցալուծում տանք... ի փառս բոլոր կողմերի,– մեկեն զվարթ տոնով խոսեց Մովսեսը՝ դեմքին մի խորհրդավոր ժպիտ խաղացնելով:

– Ի փառս,– կամաց ծիծաղեց քահանան:

– Արի նախաձեռնությունը վերցնենք մեր ձեռքը:

– Ինչպէս...

– Դեռ չգիտեմ... պետք է մտածել:

Անաղմուկ ներս մտավ գնդապետ Վարդանյանը, լռին կանգնեց քահանայի ու նկարչի կողքին: Ակներեաբար տխուր ու մտահոգ էր նախկին զինվորականը:

– Պարոն գնդապետ, ինչ-որ բան է պատահել,– իր եւ քահանայի՝ օդում կախված հարցը մեկտեղեց Մովսեսը:

- Եղբորս թոռան մարմինն են գտել...

Քահանան ու նկարիչը, նախ, ծանր հոգոց հանեցին, ապա փորձեցին ցավակցական ու մխիթարանքի բառեր գտնել գնդապետի համար:

- Ցավակցում ենք ձեզ... ցավակցում ենք մեզ... Համբերություն ձեր եղբոր ընտանիքին... համբերություն մեզ,- մրմնջալով՝ լոկ այդքանը կարողացավ ասել քահանան: Նրան կրկնեց Մովսեսը: Ապա Տեր Միսաքը անխոս գրկեց հին ու քաջարի զինվորականին, որ այդ պահին նման էր խոցված ու անպաշտպան եղջերուի: Իսկ Մովսեսն իր թեւերի մեջ առած զինվորականին փսփսաց, որ մեռյալներին ոչ ոք չի փոխարինում, ուղղակի պիտի ծնվեն նոր մարդիկ: Հետո թփթփացրեց նրա մեջքին, որն այնքան ամուր էր դեռ երեկ, իսկ հիմա դարձել է ճկվող ու օրորուն:

Գնդապետը ծանրորեն նստեց աթոռին, նկատելի էր նրա ձեռքերի դողը:

- Տեր Միսաք, վաղը հուղարկավորությունն է... կարճ էք...

- Անպայման, հարազատս,- քահանան չթողեց Վարդանյանն ավարտի խոսքը,- կգանք ու թաղման կարգը կկատարենք, դա մեր սրբազան պարտքն է: Ուրիշ ինչպէս կարող ենք օգնել, գնդապետ... ասեք, հիմա քաշվելու ժամանակը չէ:

- Էլ ի՞նչ օգնություն, Տեր Միսաք, խոխան չկա... մեռած ա...- Վարդանյանը գրպանից թաշկինակ հանեց ու սրբեց արցունքները:- Ինչքան որ անում եք՝ բոլ ա... Շնորհակալ եմ,- լույսն իր ներսում մարածի հանգույն ասաց նա եւ շարժվեց դեպի դուռը: Տեր Միսաքն ու Մովսեսը ուղեկցեցին նրան մինչեւ եկեղեցու գավիթ:

- Ես էլ գնամ, վաղը կտեսնվենք... թաղմանը... Տեսություն, Տեր Միսաք,- առանց քահանայի կողմը նայելու, ինքնաբերաբար ասաց Մովսեսը: Բայց, նախ, ետ գնաց եւ միառպահ բաց դռնից աչքը հառեց խորանի կողմը, ուր վիշապագորգն է, ապա հայացքը սահեցրեց ներսում աղոթող բազմության եւ վառվող մոմերով լի կրակարանների վրայով:- Ես կգտնեմ հանգուցալուծումը... անհոգ

եղեք, Տեր Միսաք,- իրենց արծարծած խնդրին դառնալով՝ վստահեցրեց Մովսեսը եւ մեկ անգամ եւս քահանային հրաժեշտ տվեց ու հեռացավ:

Մոտ հիսուն քայլի վրա՝ առջեւից գնում էր գնդապետը՝ ցավով ու հոգնությամբ լի քայլվածքով: Մովսեսը որոշեց հետետել նրան՝ պահպանելով հեռավորությունը, խորհեց, որ այդպես՝ հեռակա կարգով, դժբախտին հովանի կլինի միառժամանակ, մինչեւ նա կհասնի սգացողների մոտ: Բայց մի քանի բռնակցի անկամտություն թվաց այդ արարքը, ուստի, ինքն իրենից հիասթափված, փոխեց մտադրությունը եւ վճռեց մի քիչ զբոսնել, ապա նոր վերադառնալ արվեստանոց՝ շարունակելու կիսատ՝ «փարիզյան» գործը: Կզբոսնի եւ... կփորձի գտնել Նվարդին՝ մեկեն իր անելիքը վերաճշտեց. գուցե պատահաբար հանդիպի փողոցում, նախկինի պես, երբ տասնամյակներ առաջ նրանք առաջին անգամ կանգնել էին դեմդիմաց:

Մովսեսը քայլում եւ դիտում էր շուրջը կատարվող խմորումները, որ ետպատերազմյան շրջանի անխուսափելի եռքն էին կրում՝ օրեր առաջ տեղի ունեցած աղետի ցցուն անդրադարձներով: Հպանցիկ հայացքն իսկ բավ էր արձանագրելու, որ օրօրի փոխվում է քաղաքի մարդկային նկարագիրն իր ամենաուղիղ իմաստով. ստեփանակերտցիների թվին զգալիորեն ավելանում էին բռնատեղահանվածներ Շուշիից, Հադրութից, Ավետարանցից, Մեծ Թաղերից եւ գրավյալ այլ բնակավայրերից: Գրեթե ամեն քայլափոխի հանդիպում եւ ունեզրկված տուժյալներին, որոնց հեշտ է տարբերել արտաքինապես՝ իրենց թշվառ դեմքերով ու ոչ պատշաճ հագուկապով, ոմանց՝ նաեւ խոսվածքով, հատկապես հադրութցիներին: Նրանք մոլորյալ թռչունների պես ափ էին իջել իրենց համար ոչ բնական վայրում եւ չգիտեին՝ ինչպես պետք է հանգրվանեն նոր բնակատեղիում: Նրանց մեծ մասը քաղաքը վատ գիտեր, ուստի հաճախ էին դիմում անցորդներին՝ ճշտելու իրենց երթուղարձի փողոցները: Նրանք հաճախակի հարցնում էին պետական այն գերատեսչութ-

յունների հասցեները, որոնց վերապահված է զբաղվել այդ տարաբախտների խնդիրներով:

Մի մարդ ու կին մոտեցան Մովսեսին, հարցրին, թե ինչպես գնան սոցապնախարարություն: Նկարիչը բացատրեց, բայց եւ տեղնուտեղն առաջարկեց ուղեկցել նրանց՝ այնքան էլ հեռու չպիտի գնան: Ճանապարհին տեղեկացավ, որ տեղահանված զույգը կորսված Խծաբերդ գյուղից է, բազմանդամ ընտանիքով տեղավորվել են հանրակացարանում. «Շատ նեղվածք է, բայց պիտի դիմանանք, մինչեւ ավելի հարմարավետ պայմաններ ունենանք»: «Երբ կունենան,- մտահոգ մտածում էր Մովսեսը ետդարձին,- կդիմանան նրանք էդ նեղությանը, թե՛ կգաղթեն հեռուները...»: Արտագաղթողների հանդեպ նախկինում խիստ բացասական տրամադրվածություն ուներ նկարիչը, հիմա հազիվ թե կարողանա նրանց հանդիմանել հեռանալու համար. շատ են տուժել, չափազանց անորոշ է վաղվա օրը՝ ինչպէս լավատեսություն ներշնչես տարաբախտներին... Բայց եւ փայփայում է այն հույսը, որ իր հայրենակիցները, համենայն դեպս՝ մեծամասնությունը, ճիշտ ու արդար որոշում կկայացնեն ապագայի վերաբերյալ: «Հայրենիքն ինքնին ամենադրախտն է»՝ ուզում էր համոզել նրանց, բայց նման միտք արտահայտելու համար այդ օրերին չունէր ոչ համարժեք տրամադրություն, ոչ հոգու արիություն: Ինքն էլ դեռ շատ ընկճված էր:

Քայլում եւ մտովի արձանագրում էր, որ ոչ միայն մարդկային, այլեւ ավտոմեքենաների մեծ խճողումներ են առաջանում քաղաքի կենտրոնական փողոցներում. արտաքուստ քաղաքը եռուն ու կենսահորդ էր թվում, իսկ ներքուստ մատնվել էր նեղվածքի ու իրարանցման: Օրվա հացը վաստակելու համար բազմակի շատացել էին նաեւ մանր առեսուր անողները. նրանք գետնին էին դրել մրգի ու բանջարեղենի կարտոնե արկղերը, ոմանք կանաչեղենը կիտել էին ասֆալտին փոված ցելոֆանի վրա: «Քառսը մեր քաղաքում երեւի էս պատկերն ունի», - խորհեց Մովսեսը: Նախկինում միշտ զայրանում էր նման երեւոյթներ տեսնելիս, հիմա խղճահա-



րույթուն էր զգում այդ մարդկանց հանդեպ եւ ցավ, որ քաղաքային կենցաղավարութիւնն առաջադիմելու փոխարեն, պատերազմի հետեանքով, նորից ետ է ընկել վազքուղում ոտքը կոտրած վազորդի պէս: Բայց ժամանակը չէ կենտրոնանալ նման հարցերի վրա՝ սաստեց ինքն իրեն եւ թաքուն երանի տվեց, որ այս մարդիկ դեռ ունակ են մաքառելու, կրկին ուժ ու կորով են գտել՝ շարունակելու ապրել եւ վերակարգավորել իրենց խաթարված կյանքը: Նա մոտեցավ կանաչեղեն վաճառող, արդեն տարիքն առած մի կնոջ եւ իր հին սովորութեամբ հարցուփորձեց:

– Որտեղի՞ց եք, մայրիկ:

– Քարին տակից,– տրտում պատասխանեց կինը:

– Ցավում եմ, ձեր գյուղն էլ է հիմա թշնամու ձեռքին:

– Հա, թաղիմ տրանց,– չանչ արեց կինը:– Ուրանց էլ թաղիմ,– ավելացրեց ու ձեռքով ցույց տվեց վերեւ: Բայց չհանգստացավ կանացի անմեղ անեծքով:– Կըծիկրակը տրանց տըռըծական կենա...– ասաց ու գլուխը կախեց:

Մովսեսը փոթկացրեց կնոջ խոսքի վրա:

– Ո՞ւմ, մայրիկ...

– Նրանց, որ մեր շեները տվին...

Մովսեսը լռեց՝ տա՛մ իր հաջորդ հարցը, թե՛ խնայի նրան: Վճռեց, որ անկեղծորեն արտահայտվող կնոջ հետ պետք է խոսել նույն կերպ:

– Մայրիկ, հիմա Քարին տակը չկա, բա ձեր կանաչեղենը որտեղի՞ց...

– Գնացել՝ Նորագյուղից եմ բերել, նրանք էլ են լավ բանջարեղեն աճեցնում... Բայց աշխարհի ոչ մի կանաչի չի հասնի Քարին տակի կանաչեղենին:

– Հա, մայրիկ, գիտեմ, ես հաճախ էի ձերոնցից առետուր անում,– խոստովանեց Մովսեսը եւ կնոջ առջեւի ամբողջ կանաչեղենը լցրեց գրպանում մշտապես պահվող պոլիէթիլենե մեծ տոպրակի մեջ:

- Ինչ եք անում,- զարմացավ կինը:

- Առնում եմ,- հանգիստ պատասխանեց Մովսեսը, ապա հանեց տասը հազար դրամ եւ խոթեց կնոջ բուռը:- Վերցրեք... ապրեք:

- Շատ ես տալիս, եղբայր, սպասիր,- կինն ուզում էր մանրը վերադարձնել, սակայն Մովսեսը եղբայրաբար նրա ձեռքը ետ վանեց ու հեռացավ: Գնած ապրանքը երթուղային ավտոբուսով տուն հասցրեց, հանձնեց տանը կեցող հաղորդօրհներին, նրանց հետ ճաշեց եւ վերադարձավ արվեստանոց:

«Փարիզյան» կտավի վրա աշխատեց մինչեւ իրիկնամուտ՝ ներսույզ ու կենտրոնացած: Հոգնել էր, սուրճ պատրաստեց եւ նստեց հինգրոպեանոց հանգիստ առնելու: Զանգեց ծանոթ արհեստավորը եւ հայտնեց, որ ապակիները կտրած-պատրաստ են, կարող է բերել ու տեղադրել: Անշուշտ: Արհեստավորին Մովսեսը օգնեց՝ գործը հաջողությամբ ավարտին հասցնելու: Արդեն խորացած գիշեր էր, երբ երկուսով դուրս եկան արվեստանոցից: Գնալուց առաջ ուշադիր նայեց նոր ապակիներ հագած պատուհաններին ու դռանը եւ գոհ մնաց. արվեստանոցը վերածնվել է արտաքնապես, մնում է նորից պատկերազարդել դրսից ու ներսից եւ կախել շերտավոր նոր վարագույրներ, որոնք նույնպես փչացել էին արկակոծումից: Մինչ այդ էլ կվերսկսեն պարապմունքները ստուդիայում, վաղը կզանգի սանուհիներին ու կասի, որ հաջորդ երկուշաբթի կարող են գալ պարապմունքների. հա՛, առաջին ամսվա համար վարձ չի վերցնի:

Մովսեսը կարծես թուփեական բավարարում զգաց, հավելումով վարձատրեց արհեստավորին եւ նրա մեքենայով տուն մեկնեց: Եթե փոխադարձությունն այսպես սահուն գործեր մշտապես եւ ամենուր, ապա մարդկության հոգսերն էսպես սակավ կլինեին՝ խորհելով նա տուն մտավ եւ միացավ կենվորների աղմկոտ խմբին:

Հաջորդ օրը գնդապետ Վարդանյանի եղբոր թոռան հուղարկավորությունն էր: Եղբայրական գերեզմանատանը ներկա էր մեծ

բազմություն, բազմամարդ թաղումները պատերազմից հետո սովորական էին դարձել՝ մարդիկ արդեն քաղաքում են եւ չեն անտեսում ծանոթների վիշտը: Գերեզմանատուն էին եկել բոլոր «ապաստարանցիները», նրանց հետ միաձուլված Արսենը, Վիգենի ընկեր՝ դեռեւս վիրակապված Խորենը, կապիտան Բեկյանն իր այն երկու ծառայակիցների հետ, որոնք գտել էին զինվորի մարմինը Ջրականի շրջանում: Նահատակին հրաժեշտ էին տալիս նաեւ նրա մի քանի զինակից ընկերներ, մի սպա բանակի կենտրոնական շտաբից: Զոհվածը՝ քսան տարեկան, դեռ պատանի, որի դեմքին անդարձ խամրել էին երեկվա թուլջանքն ու կենարար ապրումը: Մովսեսը ներամփոփ լսում էր Տեր Միսաքի՝ ի խորոց սրտի հնչող խոսքը անձնուրացության, խիզախության, հայրենասիրության, նվիրումի ու ճակատագրի մասին, որ Աստված է տնօրինում իր հայեցումով: Նկարիչը լսում ու մտորում էր, որ քահանան ամեն ինչ ճիշտ ու տեղին է ասում, նրա քարոզն ու տառապալից բառերը քաջալերանքի, ապավինիչ խոստովանության ուժ ու հուզականություն ունեն, սակայն ինչպէս պիտի հատուցվի այդ պատանի նահատակի կորուստը, ինչ մխիթարանք ու արդարացում կարելի է գտնել՝ փոքրիշատե հավասարակշռելու այն հուսաբեկությունը, որ պատանու հոգին իր հետ տարել է երկինք, հակազդելու այն վայրագ ցավին, որ մագիլներով կալանել է նրա երիտասարդ ծնողների համակ էությունը: Եվ դա ինչ է՝ երբ զոհվում ես անխնա, իսկ հետո հաջորդում է անագորոյն պարտությունը... Մովսեսը չգիտեր այդ հարցերի անվիճելի պատասխանները, արդեն մի քանի շաբաթ լոկ կանխագգում էր, որ բոլոր տառապյալներին կարելի է նեցուկ լինել միայն անկեղծ ապրումակցմամբ՝ մարդկային բարձրագույն մի շնորհ, որ ամենքին չէ տրված, թեւեւ բնագղաբար նման կերպ վարվում են շատերը:

Քաղաքի Հուշահամալիրի հիմնական տարածքի կողքին առանձին հատված են հատկացրել նոր պատերազմում նահատակվածների համար: Մովսեսը կանգնել էր մի սալաքարի վրա

եւ հայացքով ընդգրկել նորաբաց գերեզմանատունը՝ երկշար շիրմաթմբերով. դրանք մեծավ մասամբ ծածկված էին ծաղիկներով ու ծաղկեպսակներով, բայց եւ նկատելի էին հատուկենտ շիրիմներ, որոնք որբի պես՝ թողքված էին թվում սակավ եւ արդեն թռչնած ծաղիկներով: Մովսեսը խուսափեց նոր մտատանջությունից, մոտեցավ դեռեւս բաց գերեզմանափոսին եւ իր բաժին բուռ հողը ցանեց այնտեղ իջեցված դագաղի վրա, ուր գնդապետ Վարդանյանի երիտասարդ հարազատն է:

Հոգեհացին չգնաց, թեպետ Տեր Միսաքը խնդրեց, որ չքի իրեն: Մովսեսը ծանր է տանում սգո արարողությունները, ուստի ներողություն խնդրեց քահանայից եւ Արսենի հետ ուղեւորվեց արվեստանոց: Այստեղ նրան սպասում էր իսկական անակնկալ. մուտքի մոտ կանգնած էր Նվարդը՝ բարակ ծաղկաշորի մեջ փաթաթված երկու նկարով: Մովսեսը մի պահ քարացավ իր վաղեմի սիրո դիմաց, ապա ողջագուրվեց:

- Նվարդ...

- Մովսես:

Նկարիչը մի քայլ ետ գնաց եւ շփոթահար ժպիտով սկսեց տնտղել Նվարդին. չափեց ոտից գլուխ եւ համեմատեց նրան օրերս տեսած կնոջ եւ անցյալի ջահել ու հրապուրիչ աղջկա հետ: Նվարդը նույն վարդագույն վերարկուով եւ ձեռքի կարմրավուն պայուսակով էր, ինչը նրան հավելյալ կանացիություն էր հաղորդում, բարեկազմ է դարձյալ, պահպանել է հմայքը, չէ՛, դրա մի մասը, դեմքը շղարշված էր թախիժով ու տառապանքով: Մովսեսը մի վայրկյան ջանաց նրա աչքերում գտնել իրեն քաջածանոթ հին կայծկլտումը, բայց՝ ապարդյուն:

- Դե, ներս անցնենք, - իր տանտիրությունը հիշեց, եւ նկարներն առած՝ երեքով մտան արվեստանոց:

- Գուցե ես գնամ...- հասկանալով իրավիճակի նրբությունը՝ Մովսեսին կամացուկ դիմեց Արսենը:

- Ո՛չ, ո՛չ, եղբայրս, մնա, - աղաչելու պես իսկույն արձագան-

քեց Մովսեսը եւ քաշեց ընկերոջ թելից, նրան տարավ նստեցրեց իր «գահ»-ճոճաթողին:– Դու մեզ պետք ես,– թեպետ դեռ չգիտեր Արսենի պիտանիության աստիճանը, պարզապես շփոթահար էր, եւ կրտսեր ընկերոջ ներկայությունը ենթագիտակցորեն հրատապ համարեց:– Նվարդ, ծանոթացիր, ընկերս է՝ Արսենը:

Արսենը մոտեցավ Նվարդին եւ ասպետաբար խոնարհվեց նրա առջեւ: Նորեկ կնոջը դա հնաճ ու զվարճալի թվաց:

– Իսկ ասպետներ դեռ կան էս քաղաքում,– զուսպ ծիծաղեց Նվարդը:

– Իհարկե, տիկին, նրանք միշտ եղել են, կան ու կլինեն,– վստահեցրեց երիտասարդը:

Նվարդը ժպտաց, ապա սկսեց նախկին երկրպագովի, թե՛ փորձառու տեսուչի պես քայլել արվեստանոցում. մեկ ուշադիր, մեկ թռուցիկ դիտում էր նկարներն ու մյուս աշխատանքները, մերթ գլխով անում, մերթ մերժողաբար բերանը թեթեւակի ծամածռում, ապա կիսատ թողնելով ուսումնասիրությունը՝ վերադարձավ նկարիչների մոտ:

– Տեսնում եմ՝ վերսկսել ես նկարել... լավ է,– աշակերտի պատասխանից գոհ ուսուցչի տոնով արձանագրեց Նվարդը:– Նաեւ ապակիներն ես տեղադրել, կարգի բերել արքայությունդ... Հիմա լավ է, հարմարավետ... երեւի շատերը կուզենային ստեղծագործել էստեղ:

– Դե, էդ ամենը հիմա կարելուր չէ, քո մասին պատմիր, Նվարդ՝ ո՞նց ես, ո՞նց ես տեղավորվել, որտե՞ղ...

Նվարդը չլսելու տվեց հին ընկերոջ հարցերը, նստեց աթոռին եւ քննախույզ հայացքով շուրջը նայեց:

– Իսկ օրեր առաջ ինչո՞ւ էիր անտեր թողել արվեստանոցը... Խռովել էիր նրանից, որ հայտնվել է վիրավոր ու խառնափնթոր վիճակում... Փոխանակ իսկույն ձեռք մեկնեիր, չգիտեմ՝ ինչ էիր անում...

– Դե... ուզում էի, որ արվեստանոցը մի քիչ... երկար ապրեր իր ցավը,– արդարանալ փորձեց Մովսեսը:

- Դեռ լավ է, որ նրան չես լքել...- ասաց Նվարդը եւ մտքում կշտամբեց իրեն, որ երկիմաստ է արտահայտվում, ակնարկներով: «Պետք չէ, էսօրվա հոգս ու ցավն էլ բավական է, Նվարդ, հեռու վանիր անցյալը»՝ կարգադրեց իրեն եւ ժպտալից շարունակեց.- Լավ գործեր շատ ես ստեղծել, Մովսես, ապրես: Վախեցա, որ դրանք գրողի բաժին կդառնան... Ասացի՝ գոնե մի երկուսը փրկեմ, եթե հանկարծ կողոպտեն:- Մոտեցավ, իր բերած նկարներից ետ տարավ շորը եւ հմայվածի պես նայեց պատկերներին: Նրան միացան Մովսեսն ու Արսենը:- Գիտե՞ս՝ հատկապես ինչու էս նկարները տարա...

- Ըմմմ... երեւի գիտեիր, որ դրանք նախատեսված են առաջիկա ցուցահանդեսների համար, ուզում էիր խափանել ծրագրերս,- փորձեց կատակի տալ Մովսեսը:- Էս մի նկարը Փարիզ պիտի ուղարկեի, մյուսը՝ Երեւան:

- Իսկապէս,- զարմացավ Նվարդը:

- Այո, տիկին Նվարդ, վարպետ Մովսեսը դեկտեմբերի տասին Փարիզ է հրավիրված, իսկ քսանին պիտի մասնակցի Երեւանյան ցուցադրությանը. էս մեկը անհատական ցուցահանդես է, եթե կամենաք, դուք էլ կարող եք տեսնել,- փութկոտ տեղեկացրեց Արսենը:

- Համ... Կմտածեմ:

- Ես արդեն զանգել եմ Երեւան ու չեղարկել էդ ցուցահանդեսը, Արսեն... Դրա ժամանակը չէ, մարդիկ մեզ չեն հասկանա, ինձ ու կազմակերպիչներին կմեղադրեն թեթեամտության ու եսասիրության մեջ... Դե, ցուցահանդես է, հետո կանենք, աշխարհի վերջը չէ,- իր որոշումը հիմնավորեց Մովսեսը:

- Հա, միշտ էդպես է, վարպետ. երբ ցավից թնդում են մարդկանց սրտերը, արվեստը կորցնում է սրբազան իր տեղը...- հայտնի ասույթը էքսպրոմտով շրջասեց Արսենը՝ գլուխը դժգոհ կախելով:

Մի կարճ պահ խոր լռություն տիրեց արվեստանոցում, ասես

իրենց շունչն են պահել նաեւ նկարները:

– Դու միշտ լավ ճաշակ ես ունեցել, Նվարդ,– տարած ու ետ բերած նկարների հարցը նորեն արծարծեց Մովսեսը,– դու... կողոպտելու համար ընտրել ես լավագույն գործերը:

– Ճիշտ ես, թեեւ պիտի ասեմ, որ էստեղ լավ գործեր շատ կան, գուցե՝ ավելի լավը, քան իմ տարածները... Չգիտեմ ինչու՝ մտածեցի, որ էդ նկարների վրա մի տեսակ ավելի շատ ես գործ արել, կարծես թե ուզում էիր ոմն մեկին կամ ոմանց դուր գալ, ես էլ մտածեցի, որ ուզում էիր ինձ դուր գալ...– այդ պահին Նվարդը մեղավոր ժպտում էր՝ ինչպես մի աստղ, որ սահուն ընկնում է երկնքի անդունդն ի վար՝ ի տես երկրից իրեն հմայված դիտողին,– ահա եւ ողջ գաղտնիքը:

Մովսեսը նայում էր Նվարդին, իրոք, հմայվածի պես, սակայն ոչ որպես նախկին կամ վերածնվող սիրահար, այլ որպես մեկը, ով թանկ է գնահատում ուրիշներով լիաբուռն հիացող մարդու բերկրանքը. իրեն շատ հարազատ է այդ զգացումը, դրանով նախկինում նա զարմացնում էր Նվարդին, իսկ այժմ ինքն է հիանում այդ կնոջ հոգու առինքնող գեղեցկությամբ: Նվարդի մոտ նման վառ հատկանիշ Մովսեսը չէր տեսել իրենց բոցկլտուն երիտասարդության տարիներին: Ժամանակը կարող է բարեփոխել մարդու հոգին, ինչպես եւ՝ այլանդակել:

– Հա, մի քիչ էլ կարգի բերեցի, որ քեզ մղեմ՝ շուտ հավաքես խառնակույտի վերածված արվեստանոցը... Մտքովդ չի՞ անցել, որ դա կարող է ես լինեմ:

– Անկեղծորեն՝ ոչ,– պատասխանեց Մովսեսը:– Մենք Արսենի հետ այլ վարկածներ էինք քննարկում:

– Կարելուր չէ՝ մտածել ես, թե ոչ... Հիմա կարելորն էն է, որ արվեստանոցը վերակենդանացել է... գոնե պահպանված գործերով, չէ՞...

Մովսեսը խուսափեց այդ հարցի մեջ խորամուխ լինելուց, հատկապես հիմա, երբ անձնական խնդիրներն այնպիսի մանրուք են

շուրջդ արեկոծող ողբերգության ու հոգսերի համեմատությամբ: Ուստի ջանաց՝ խութերից զուրկ հունի մեջ պահել զրույցը:

– Ուրեմն դու գիտեիր իմ արվեստանոցի տեղը:

– Եվ ոչ միայն... Ես շատ բան գիտեմ քո մասին,– թեթևակի խորհրդավորությամբ արձագանքեց Նվարդը:

– Իսկ դու որտե՞ղ ես տեղավորվել, Նվարդ,– սրտացավորեն հարցրեց Մովսեսը:

– Ես ձեր քաղաքում եմ հոկտեմբերի կեսերից, երբ սկսեցին ռմբակոծել նաեւ մեր գյուղը... Էնտեղ ապաստարաններ չկան:– Ուզում էի գնալ Երեւան, քրոջս մոտ, ճանապարհին մի քանի բուստով մտա մորաքրոջս տուն ու տեսա, որ նա միայնակ է մնացել. ամուսինը վաղուց մահացած է, հարսը երեխաների հետ Հայաստան էր տեղափոխվել պատերազմի առաջին օրերին (նրանք երեկ վերադարձան), իսկ տղան զորակոչվել էր եւ առաջնագծի գումարտակներից մեկում էր, ամենօրյա կռվի մեջ: Մորաքույրս Ստեփանակերտից չէր ուզում գնալ, ասում էր՝ եթե մի բան պատահի տղայիս, ո՞վ պիտի շուտ հասնի նրան... Ու էդպես մինչեւ կռվի վերջը մնացի նրա կողքին, շենքի նկուղում:

– Իսկ ինչո՞ւ ինձ չես զանգել, Նվարդ, ես էլ էի քաղաքում, գուցե մի բանով օգտակար լինեի քեզ...

– Ինչո՞վ օգտակար լինես... կո՞րվն էիր կանգնեցնելու...

Մովսեսը նեղսրտեց, իրեն անպիտան ու ավելորդ զգաց, բայց թուլություններ ի ցույց դնելու ժամանակը չէր:

– Գոնե քեզ ու մորաքրոջդ կտեղափոխեի մեր ապաստարանը, Աստվածամոր տաճարի ներքնահարկում էինք... Էնպիսի հրաշալի ժողովուրդ էր հավաքվել էնտեղ... Հիմա մենք միմյանցից բաժանվել չենք կարող:

– Մեր ներքնահարկի ժողովուրդն էլ էր լավը, միմյանց հանդեպ շատ հոգատար էինք:

– Կռվի ժամանակ էդպես է,– դիտավորյա՞մ, թե՛ իմիջիայլոց նկատեց Արսենը: Սակայն այդ մտքի վրա սեւեռվել ոչ ոք չցանկացավ:



– Մի բիճա սիրահարվել էր ինձ, ասում էր՝ կռվից հետո տանեմ մեր տուն, ձեռ չեմ տա, լեն ու ազատ ապրիր ուզածիդ պես,– ծիծաղելով իր արկածը պատմեց Նվարդը: Մովսեսը նրա հետ համերաշխաբար ծիծաղեց:

Տեսնելով, որ նախկին սիրահարների զրույցը պայթյունավտանգ չէ եւ միմյանց խնայելու ու սատարելու մղումով է ընթանում, Արսենը մարդկայնության՝ իր համար նոր՝ հաճելի բույր առավ, եւ անշշուկ դուրս եկավ արվեստանոցից: Քիչ անց վերադարձավ մի մեծ տոպրակով, ուր կային շամպայն, գինի, ըմպելիք, խմորեղեն ու ուտելիք: Ամբողջը դրեց սեղանին եւ Մովսեսին ու Նվարդին խոնարհաբար հրավիրեց մոտենալ:

– Պետք է նշել ձեր հանդիպումը, վարպետ Մովսես, տիկին Նվարդ... Նշենք հանուն մարդկայնության, հանուն ձեր սրտի ու խղճի,– ասաց Արսենը, եւ նրա խոսքը ինքնաբուխ կենացի պես էր հնչում արդեն:

Մովսեսն ու Նվարդը նայեցին իրար, ապա կատարյալ համաձայնությամբ նստեցին սեղանի մոտ:

Երեքով մինչեւ երեկո հոգու ու մտքի իսկական խրախճանք արեցին: Արսենը փայլեց պերճախոսության իր ցուլլուն տաղանդով: Զուսպ ու ներփակ թվացող Նվարդը, տղամարդկանցից ետ չմնալով, եւ նուրբ կենացներ հիշատակեց, եւ հոգեշարժ բանաստեղծություններ արտասանեց, հետո կամացուկ երգեց՝ «Թռչեի մտքով տուն...»: Մովսեսը ապշել էր Նվարդի ոչ միայն երգեցիկ-քաղցրիկ ձայնի, այլեւ անանձնական ելեւէջումների վրա: Իսկ մինչ այդ արվեստանոցի մառանիկից սեղան էր հասել գինու կիսատ շիշը եւ վերջնականապես պարավել մյուս շշերից հետո: Արդեն իրիկ-նանում էր, երբ Նվարդը հեռախոսազանգ ստացավ:

– Հա, մորքուր... իհարկե՛ կարող եմ... չէ, գործերս պրծա... գալիս եմ,– խոսեց Նվարդը, ապա դիմեց սեղանակիցներին.- դուք շարունակեք ձեր խրախճանքը, իսկ ես գնամ: Մորքուրին դեղ է պետք, նորից վատ է զգում իրեն, էնքան վատ, որ չի կարողանում

իջնել երրորդ հարկից եւ մոտիկ դեղատնից ուզածը վերցնել... Ես գնամ, Աստված ձեզ պահապան:

– Մենք կուղեկցենք քեզ, Նվարդ... համ էլ գուցե պետք եղանք,– կողքին կանգնելով՝ առաջարկեց Մովսեսը:

– Ո՛հ, ռհ, դուք մնացեք, էստեղ դեռ անելիք ունեք, ես մենակ կգնամ, ինձ չեն փախցնի... ձեր տխուր ու միայնակ քաղաքում:

Այնքան համոզիչ ու անառարկելի տոնով էր խոսում Նվարդը, որ նկարիչ ընկերներին մնում էր միայն կիսաբաց բերաններով հետեւել նրա գործողություններին: Նա արագ հագնվեց, վերցրեց պայուսակը եւ արդեն հեռանում էր՝ աչքին զարնվեց մի գեղանկար, որ աննկատ հայտնվել էր անկյունի պատվանդանի վրա, պատին հենված. Մովսեսն էր դրել այնտեղ, երբ Արսենը, բաժակը ձեռքին, խոսում էր «ընկերության անսահմանության» մասին: Նվարդը դանդաղ մոտեցավ նկարին, մի քանի վայրկյան զննուն հայացքով նայեց, ապա շրջվեց Մովսեսի կողմը մի այնպիսի ժպիտով, որի մեջ ավելի շատ թախիժ ու տառապանք կար, քան հրճվանք ու գոհունակություն:

– Ի վերջո նկարել ես... Շնորհավորում եմ... Դե, ցտեսություն ձեզ, ես թռա...– ասաց եւ այնքան արագ հեռացավ արվեստանոցից, ասես չվահյուր հավք լիներ, որ բաց պատուհան գտնելով՝ սրընթաց թռչում-հեռանում է այն փակ տարածքից, որտեղ հայտնվել էր պատահաբար:

Նկարիչ ընկերները մնացին երկուսով, խրախճանելու տրամադրություն նրանցից ոչ ոք այլեւս չունեք: Արսենը մոտեցավ նորահայտ կտավին, զարմանքով երկար նայեց. հմայիչ աղջկա յուղաներկ դիմանկար էր՝ ազատ ու երգող գույներով: Խորաթափանց աչքը կարող է տեսնել, որ այն լոկ դիմապատկեր չէ, այլ թանկ պատմություն, որի կախարդական լույսերը վառ են մնում քո ապրած բոլոր օրերի ծփանքում:

– Զարմանալի է, որ էս նկարը մինչեւ հիմա չեմ տեսել... Նվարդն է,– հարցրեց Արսենը եւ ինքն էլ անմիջապես պատասխա-

նեց.- դե, իհարկե, Նվարդն է, ուրիշ ո՞վ...

Մովսեսն արդեն նկարի դիմաց էր՝ մտասույզ հայացքով:

- Ես Նվարդին շատ էի նկարում էն ժամանակ, բայց դրանք հիմնականում թղթի կամ կարտոնի վրա արված գծանկարներ էին... Խոստացել էի, որ նրա դիմանկարը կանեմ գունագեղ յուղաներկով, մեծ կտավի վրա, երբ «կտեսնեմ նրա հոգու բոլոր գանձերը»: Չհասցրի, նա հեռացավ ու լռեց... Էս նկարը արել եմ մեր բաժանումից տասը տարի անց, երբ արդեն ամուսնացած էի, եւ ծնվել էին երեխաները:

- Նկարեցիր կարոտով ու անմոռաց սիրով, երբ արդեն խրվել էիր ամուսնական կյանքի ճահճուտը,- խայթելու պես լուսաբանեց Արսենը:

- Դե, հա, դրա նման մի բան... Ո՞ւմ հետ չի պատահում,- փորձեց արդարանալ Մովսեսը:- Կինս՝ Գայանեն, մի քանի անգամ հարցրել է, թե ով է էս ինքնահավան «ծիտիկը». նրան միշտ պատասխանել եմ, որ գեղարվեստական գործ է՝ կոնկրետ նախատիպ չունի... Բայց դե կնոջը նման հարցերում չես խաբի. Գայանեն արվեստանոց գալիս ամեն անգամ էս նկարը վերցնում եւ տանում էր պահեստային սենյակ ու էնտեղ շրջված դնում հին նկարների վերջում: Երբ գնում էր, նկարը տեղափոխում էի սրահի լուսավոր անկյունները... Ի վերջո, նա մի օր ծղրտոցը դրեց, որ եթե էս նկարը չոչնչացնեմ, կհեռանա ինձնից երեխաների հետ... Դե, ինձ մնում էր նկարը թաքցնել... Քսան տարուց ավելի լույսի երես չի տեսել էս խեղճը,- ասելով՝ Մովսեսը շոյեց նկարը:

- Մինչեւ Գայանեի գալը կարող ես հանգիստ կախել պատից:

- Հա,- ասաց Մովսեսն ու ծիծաղեց: Նրան միացավ Արսենը, եւ երկուսով լիաթոք ծիծաղեցին տղամարդկային անմեղ խորամանկության վրա: Խմեցին շամպայնի վերջին բաժակը եւ մի քանի բուրբուռներուով կրեցին ներսուզվեցին իրենց ներաշխարհի թաքստոցները:

Մովսեսն ու Արսենը արվեստանոցից դուրս եկան աղջամուղջին՝ արբած ու գինովցած, սակայն փողոցում միանգամից հանձն-

վեցին օրվա ու ժամանակի ավերախվող տրտմությանը, եւ առավելս լուռ ու անաղմուկ քայլեցին մինչեւ տաճար՝ Տեր Միսաքին տեսակցելու: Բայց ավանդատան եւ երիցտան դռները փակ էին: Եկեղեցու սպասավորներից տեղում էր միայն սարկավագը, ով այցելուներին հայտնեց, որ Տեր Միսաքը երկու ժամ առաջ գործով մեկնել է «Եղնիկներ»՝ Մարտակերտի հյուսիսային շրջանի զորամասերից մեկը. թե երբ կվերադառնա՝ հայտնի չէ:

– Ահա թե ինչ, – մտախոհ արձագանքեց Մովսեսը:

Նախքան տաճարից հեռանալը Արսենի հետ կանգնեց բեմի առջեւ փռված վիշապագորգի մոտ, ապա մոմ վառեցին եւ ելան գիշերացած քաղաքի կիսալուսավոր փողոցները:

Իսկ Տեր Միսաքի հետ ահա թե ինչ էր կատարվել: Գնդապետ Վարդանյանի եղբոր թոռան հիշատակին տրված հոգեհացից հետո քահանան պատրաստվում էր տաճար գնալ, երբ նրան մոտեցավ հայտնի գեներալ Կարո Քեհյանը, ով վերջին պահին էր միացել սգո արարողությանը: Նա Վարդանյանի մարտական կրտսեր ընկերներից է, եւ հազիվ է հաջողել մի երկու ժամով Ստեփանակերտ գալ եւ ցավակցել դժբախտացած ընտանիքին: Տեր Միսաքի որպիսությունը հարցնելուց հետո գեներալն անսպասելի հարցրել է.

– Տեր Հայր, չէի՞ք ցանկանա այցելել մեր ստորաբաժանումները եւ մի քանի օրով շփվել մեր զինծառայողների հետ, գոտեպնդել նրանց ... Պատերազմից հետո նրանք դեռ ընկճված են, թեեւ դիրքեր չենք զիջել: Լավ կլիներ, եթե մենք էնտեղ երես առ երես լսեի՞նք ձեր խոսքը. դուք հիանալի քարոզիչ եք, ձեզ ունկնդրելն օգտակար կարող է լինել մեր զինվորականության համար:

– Խորագույն սիրով, պարոն գեներալ... պատրաստ եմ ծանայելու, – ուրախությունը չթաքցրեց Տեր Միսաքը, միաժամանակ խորհելով, որ գեներալի հրամցրած գաղափարի «սադրիչը» երեւի Մովսեսն է, ով երեկ խոսում էր նախաձեռնությունը վերցնելու մասին: – Դուք գնդերեց չունե՞ք, – «Եղնիկներում» տարվող հոգեւոր ծա-

ռայության մասին իմանալ կամեցավ քահանան:

– Ունեինք, պատերազմի օրերին նա տղաների հետ էր, անվախ ու հայրենասեր մարդ է, բայց հիմա վատառողջ է, նրան երկար բուժվել է պետք... Թոքերի հետ կապված խնդիրներ ունի:

Տեր Միսաքը թոուցիկ գիտեր այդ դեպքի մասին, ուստի իրավիճակը առարկայորեն գնահատելով, պատրաստակամ հարցրեց.

– Երբ կարող եմ անցնել ծառայության, պարոն գեներալ:

– Հենց էսօր... Ես մեկուկես ժամից մեկնում եմ, եթե համաձայն եք, ձեզ կտանեն ինձ հետ, իմ մեքենայով: Շտաբում մի քանի հարցեր ունեն ճշտելու, ավարտեմ ու գնանք:

– Բարի, Աստված մեզ օգնական,- առույգ արձագանքեց Տեր Միսաքը:

Մեկուկես ժամ անց քահանան կազմ-պատրաստ էր: Մինչ այդ նա փութով մտել էր տուն, կնոջն ու երեխաներին տեղեկացրել, որ մի քանի օրով գործուղման է մեկնում մարտակերտյան զորամասեր: Կինը՝ Արշալույսը, նոր թխած կարկանդակներից մի տոպրակ, ներքնաշոր ու հիգիենիկ պարագաներ դրեց ամուսնու ճամփորդական կաշվե համեստ պայուսակում եւ հիշեցրեց, որ ճանապարհին գլխացավի ու ջերմության դեմ դեղեր գնի դեղատնից, տանը դրանցից ոչինչ չի մնացել: Դուրս գալուց առաջ հայր-քահանան երեխաներին պատվիրեց, որ շարունակեն ինքնուրույն պարամունքները, մինչեւ դպրոցում կվերսկսվեն դասերը, ապա աճապարեց եկեղեցի: Հավաքեց սպասարկող անձնակազմին եւ խնդրեց բարեխղճորեն ծառայել իր բացակայության օրերին: Այդուհետ մտավ տաճարի բակում գործող հուշանվերների խանութ, վերցրեց մեծ քանակությամբ խաչեր, հոգեւոր օրացույցներ, պատկերազարդեր, Սուրբ գրքի օրինակներ՝ վաճառողուհու հետ համաձայնության գալով, որ դրանց գումարը կփոխանցի «ռոճիկը ստանալուց հետո»: Դեղերի մասին իսպառ մոռացել էր:

Գեներալի հետ պայմանավորված ժամն էր, քահանան անհամբեր ու ոգեշնչված ետուառաջ էր քայլում տաճարի բակում: Մոտեցող

զինվորական «Պատրիոտ» մեքենան տեսնելով՝ Տեր Միսաքը նոր միայն հիշեց, որ իր մեկնումի մասին պետք է տեղեկացնել թեմակալ առաջնորդին: Հապճեպ հավաքեց նրա հեռախոսահամարը եւ հայտնեց իրեն առաջարկվող ծառայության մասին: Եպիսկոպոսը հեռախոսի մյուս ծայրից քահանային նյարդայնորեն հիշեցրեց, որ նման հարցերը նախապես պարտավոր է համաձայնեցնել իր հետ, «պետք չէ բանակի անունով միավորներ վաստակել իր առաջ»: Տեր Միսաքի ոգետրությունն ընկավ, նա արդեն անտրամադիր տեսք ուներ, երբ գեներալ Քեհյանը կանգնեց կողքին. վերջինիս աչքից չվրիպեց քահանայի մտախոհությունը:

– Ինչ է պատահել, Տեր Միսաք, հո չե՞ք փոխել ձեր որոշումը,– հոնքերը բարձրացնելով՝ հարցրեց գեներալը:

– Օ՛ր ոչ, ոչ... պարզապես մի փոքր խնդիր ունեցա թեմակալ առաջնորդի հետ:

– Ինչ խնդիր:

– Դե... բան չկա, կհարթենք,– պատասխանեց քահանան եւ վճռական քայլերով գնաց ու նստեց գեներալի մեքենան:

Ճանապարհին, համենայն դեպս, Տեր Միսաքը Քեհյանին պատմեց ծագած խնդրի մասին:

– Մի անհանգստացեք, Տեր Հայր, ես կխոսեմ թեմակալ առաջնորդի հետ... Եթե կարիք լինի, կխոսեմ նաեւ կաթողիկոսի հետ,– հանգստություն ներշնչող տոնով ասաց գեներալը:– Կարեւորը, որ էս պահին զինծառայողների համար հոգետր հենակետեր ունենանք:

– Այո, թանկագին գեներալ, խարխլված պետության մեջ չի կարող եկեղեցին առանձին ամուր ու ինքնաբավ լինել:

Ճանապարհին Քեհյանը զբոսավարի պարտականություն էր ստանձնել՝ քահանային պատանեկան խանդավառությամբ պատմում էր հանդիպող բնակավայրերի, լեռների ու ձորերի, անտառների ու դաշտերի, աղբյուրների ու ծաղկատեսակների մասին, որոնցով հարուստ է տեղի բնությունը: Ոլորաններից մեկում նա

կանգնեցրեց մեքենան եւ վարորդին խնդրեց, որ իրեն ու քահանային լուսանկարի Մոռվ սարի ֆոնին:

– Մոռվը հենց էս կետից է երեւում իր իսկական բնավորութեամբ՝ հպարտ, աներեր, գեղեցիկ ու առեղծվածային, քեզ՝ հարազատ ու նվիրված, հենց էնպիսին, ինչպիսին հայն է,– բնաշխարհի իր զգացողությունն այսպես բացատրեց գեներալը, եւ դա շատ դուր եկավ Տեր Միսաքին: Մի քանի րոպե նա չէր կարողանում հայացքը կտրել կախարդիչ սարից, բայց մեկէն թախծի սեւ շղարշով պատվեց նրա դեմքը. տիրականորեն հառնող լեռան ետեւի՝ աջակողմյան ստորոտում իր հայրերի երկիրն է՝ Գյուլիստանը, որ հիմա հակառակորդի վերահսկողության տակ է: Գեներալը նկատեց քահանայի տրամադրության անկումը:

– Տեր Հայր, դարձյալ ձեր խնդիրն եք հիշել... ինչո՞ւ տխրեցիք,– մտերմաբար հարցրեց Քեհյանը:

– Ես էս վայրերում շատ վաղուց չեմ եղել... մեր Գյուլիստանը հիշեցի, պապ ու տատիս... Իմ մանկության ամառներն էնտեղ էի անցկացնում...– ասես տրտմության վիրապից խոսեց քահանան:

– Գուցե մի օր կարողանանք միասին այցելել Գյուլիստան, Տեր Միսաք... ի՞նչ կասեք:

Քահանան գիտի, որ գեներալը սնապարծներից չէ, ծանրակշիռ, քաջ ու բանիմաց հրամանատարի համբավ ունի բանակում ու ժողովրդի մեջ, ուստի նրա խոսքը ընկալեց ոչ թե որպես պահի տակ թելադրված, հավուր պատշաճի մխիթարություն, այլ իրական երազանք, որ պիտի անթեղած պահել հետագա ժամանակների համար: Նա առույգություն զգաց իրեն փոխանցված կենսալից մտածումից եւ շնորհակալություն հայտնեց ուղեկցին, որ այդ պահն ապրելու հնարավորություն է շնորհել իրեն:

«Եղնիկներ» հասան երեկոյան: Գեներալի կարգադրությամբ Տեր Միսաքին զորամասի շտաբում հարմարավետ սենյակ տրամադրեցին, եւ որպես նրա «կոլեգա ու պաշտոնակից» նշանակվեց Քեհյանի տեղակալ՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքնե-

րի պատասխանատու, փոխգնդապետ Դերենիկ Օհանջանյանը: Վերջինս այն մտավորական սպաներից է, որ անուղղելի աշխարհիկ մարդ լինելով՝ երկյուղածություն է ապրում հոգեւորականների հետ շփվելիս: Տեր Միսաքը նրան բացատրեց, որ այդ վարքագիծը վայել է քրիստոնյային, դա նրան ինքնապահպանվելու ավյուն է տալիս: Փոխգնդապետն իրեն ավելի հանգիստ զգաց, եւ քահանային խոստացավ այդ առթիվ մի գեղեցիկ սեղան բացել անտանոի հիասքանչ բացատներից մեկում՝ աղբյուրի մոտ, եւ վերջապես սերտած «Հայր մերը» կարտասանի «թանկագին հյուրի պատվին»:

«Եղնիկներում» Տեր Միսաքին միանշանակ չընդունեցին. սպաներից ոմանք նրա գալուստը համարեցին Քեհյանի հերթապահ «օրիգինալություն» եւ չկարեւորեցին եկվորի դերակատարությունը, սակայն շատերն արագորեն զգացին, որ քահանան իր ներկայությամբ շրջապատում մթնոլորտ է փոխում. մարդիկ իրենց կոշտությունն ակամա թոթափում են ու բարիանում, համակվում քնքուշ զգացումներով, դառնում միասնական հոգի ու մարմին, վերածվում ներզգա անհատի, որ այդու գիտի իր ստույգ առաքելությունը՝ առանց հրամանների ու հարկադրանքի: Այդ վերափոխությունից ամեն անգամ ապշում էր փոխգնդապետ Օհանջանյանը՝ Տեր Միսաքի հետ շրջելով գումարտակից գումարտակ: Զինվորականը մերթ տարակուսանքով, մերթ հիացմունքով էր հետեւում, թե ինչպես է քահանան խաչեր ու հոգեւոր այլ նյութեր բաժանում զինծառայողներին՝ ասես զորեղ ու մոգական մասունքներ էր ընծայաբերում, որ պիտի նրանց զորավիզ լինեն խաղաղ թե մարտաշունչ օրերին: Հոգեւոր խորհրդանիշների հանդեպ թերահավատ փոխգնդապետը քիչ էր մնում հավատար՝ ինքը ներկա է մի ծեսի, որ վաղուց կատարվում է նաեւ իր կյանքի հեռավոր մի անկյունում, որին, սակայն, գիտակից մասնակցություն չունի: «Թող էդպես էլ լինի, վնաս չկա»՝ ինքն իր համար վճռեց փոխգնդապետը եւ անցավ աշխարհիկ օրակարգին:

-Տեր Հայր, էս նույն գործը գրեթե նույնությամբ կատարում էր



մեր գնդերեցը, նա էլ ձեզ պես խաչեր էր բաժանում, նույն գաղափարներն արժարժում, նմանօրինակ քաղվածքներ անում Աստվածաշնչից...

– Ես նաեւ «Նարեկ»-ից եմ մեջբերում,– հավելեց քահանան:

– Այո, այո, բայց, դե, ընդհանուր տոնայնությունն ու ասելիքը նույնն են, սակայն ձեր ելույթներն ուրիշ ներգործություն ունեն... Ես տեսնում եմ, թե մեր զինծառայողներն ինչպես են հիպնոսված...

– Կլանված,– ուղղում էր քահանան:

– ...կլանված ունկնդրում ձեզ, եւ ամենակարեւորը՝ ձեր խոսքերը թափանցում են նրանց սրտերը,– զարմացած խոստովանում էր փոխգնդապետը:

Տեր Միսաքն առաջին անգամ չէր լսում նման հիացական գնահատական իր քարոզների, ընդհանրապես՝ իր արտահայտիչ խոսքի վերաբերյալ: Սակայն, որ նա կարող է նշանակալից ազդեցություն գործել նաեւ մահվան ու կրակի միջով անցած զինվորականների վրա, որոնք ավելին են զգացել ու տեսել, քան ամենախորաթափանց հոգեւորականները՝ իրենց եկեղեցիներում, վանքերում ու տաճարներում, դա իր համար իսկապես անսպասելի էր, չէ՛, ոգեւորիչ էր: Բայց իր ներքին խանդավառությունը ցույց չէր տալիս, համարելով, որ դա սուկ իրեն աղերսվող հարց է, ուստի Դերենիկ Օհանջանյանին կշռադատված պատասխանում էր.

– Նրանք բոլորը քրիստոնյաներ են՝ իրենց արյան մեջ բնավորված դավանանքով, գիտակցում են դա, թե ոչ... Զինվորական համագգեստը չի խանգարում, որ լինես մարդկային ու վեհասիրտ, պարզապես պետք է մարդկանց հետ խոսել անկեղծորեն ու հավատամքով, ի խորոց սրտի, հակառակ դեպքում քո խոսքերը կարկտահատիկների պես կթափվեն ունկնդիրների մերժողական վահանի վրա:

Երեկոները Տեր Միսաքը երկար ու մտերմիկ զրույցներ էր ունենում Քեհյանի հետ: Նրանք առանձնանում էին գեներալական սենյակում, թեյի շուրջ, հմուտ խուզարկուների պես «քրքրում» աշ-

խարհի ու երկրի, Աստծո ու մարդու գաղտնարանները: Քահանան, համենայն դեպս, զգում էր, որ փորձառու մարտական գեներալը հոգու խորքում, շատ ծառայակիցների պես, վիատված ու ընկճված է. բանակի ու պետության պարտությունը չափազանց ծանր էր տանում, թեպետ ինքն այն սակավ հրամանատարներից էր, ով իր զորքով պաշտպանած դիրքերը չէր զիջել մի թզաչափ անգամ: Նա հաղթական գեներալ է, սակայն ընդհանուր պարտության սովերը հետապնդում էր նաեւ նրան՝ քաղցած գազանի պես:

Չորրորդ երեկոն էր, առանձնասենյակում գեներալը, ետուառաջ քայլելով, փորձում էր թաքցնել իր բուն հոգեվիճակը՝ ապարդյուն, անգամ երեխայի աչքից չէր վրիպի նրան համակած հուզախոռվությունը: Տեր Միսաքն ավելին էր տեսնում՝ Քեհյանը բախվել էր ինչ-որ մեծ ու ծանր «խոպի»:

– Բավական վրդովված ու զայրացած եք էսօր, պարոն գեներալ, նոր անախորժություններ են պատահել,– հարցրեց քահանան:

Գեներալը կարծես չլսեց քահանայի հարցը, շարունակում էր քայլել եւ կցկտուր պատմել իր չիրականացած երազանքների ու ճակատագրի քմայքների մասին:

– Ես նա եմ, որ կիսատ է թողել համալսարանական ուսումը Երեւանի տնտեսագիտականում եւ կամավորագրվել Վլադիմիր Բալայանի ջոկատին, Արցախյան առաջին պատերազմի սկզբում... Նա եմ, որ պատերազմի բերումով չի ամուսնացել սիրած աղջկա՝ Մարիետի հետ... Նա եմ, որ հոր թաղմանը ներկա չէր, քանի որ էդ օրը մասնակցում էր Օմարի լեռնանցքի գրավմանը... Նա եմ, որ զինվորական է դարձել իր կամքից անկախ... Նա եմ, որ համեստ ու լռիկ տղա լինելով՝ դարձել եմ կռվարար ու անհաշտ մեկը... Էս շունչանորդիների աչքին...

Գեներալը կտրուկ բարձրացրեց ձայնը վերջին նախադասությունն արտասանելիս. նա ակնհայտ ցասման մեջ էր: Քահանան մոտեցավ, բռնեց թելը եւ կամաց ուղեկցեց նրան դեպի բազկաթոռը: Գեներալը նստեց, խոր շունչ քաշեց եւ մեղավոր հայացքով նայեց

քահանային.

– Համը հանեցի, համ, Տեր Հայր...

– Անհոգ եղեք, ես ձեզ լիովին հասկանում եմ... եւ պաշտպանում:

Երախտագիտության ժպիտ խաղաց գեներալի դեմքին:

– Աստված ձեզ պահապան, Տեր Հայր, հիմա ինձ շատ քչերն են պաշտպանում:

Ներս մտավ ընդունարանի հերթապահ գինվորը՝ թեյի մատուցարանով, որտեղ բազմել էր նաեւ հոնի մուրաբայի մեծ պնակը. շտաբում արդեն բոլորը գիտեին Տեր Միսաքի սիրած ըմպելիքը՝ ուրցով ու մասուրով թեյ՝ հոնի մուրաբայի հետ: Քեհյանն ընկել էր նրա «ջրերը» եւ նորովի էր հայտնաբերում մանր հաճույքների մեծ իմաստը, որտեղ արտացոլվում եւ քո բնատուր, մաքուր զգացողություններով: Բայց այդ երեկո երկուսն էլ օտարոտի էին նայում բաժակներին. եւ գեներալը, եւ քահանան զգում էին, որ թեյախմությունը նախորդ օրերի հաճույքն ու բավականությունը չունի, ասես օդում կախված պայթուցիկներ կան, որ պետք է պարպել կամ՝ հեռանալ լիցքավորված միջավայրից:

Գեներալը, լինելով շեշտակի գրոհների վարպետ, խոսակցությունների ժամանակ եւս չի խուսափում գործի դնել իր ամբողջ «հրետանին», բայց այս անգամ նրա զրուցակիցն իր հյուր հոգեւորականն էր՝ արդեն մտերիմ ու սիրելի մարդ, նաեւ՝ համախոհ ու պաշտպան, որին չի կարելի ներքաշել ցասման տեսարանի մեջ, հատկապես, որ իր խոռովքի սադրիչը բնավ նա չէր: Նրա առաջ լիովին բացվելու կարիք զգաց, եթե անգամ այն պիտի զուգակցվեր այլոց հասցեին հնչող սուր մեղադրանքներով ու հայիոյանքներով, եւ այդ ամենը՝ լեռնցու ահեղ ձայնով, «նախշերի լիակատար ներկայանակով»: Սկզբում, այնուհանդերձ, Քեհյանը փորձեց առավելագույնս մեղմ ու հանգիստ խոսել իրեն պաշարած մտատանջության մասին. թե դա որքանով հաջողվեց, կարող է ասել միայն քահանան, ով հետագայում երդվյալի պես կրկնում էր ամենուր, որ

գեներալ Քեհյանը «նաեւ բացառիկ ինտելիգենտ մարդ է, վարքի ու խոսքի մեջ՝ պարկեշտ ու կիրթ»:

– Տեր Միսաք, սեւ ամպեր են կուտակվում գլխիս,– իր խոստովանանքը պատկերավոր սկսեց գեներալը՝ թեյի բաժակը մի կողմ հրելով:

– Ինչ է պատահել, պարոն Քեհյան,– արդեն տագնապած՝ արծազանքեց քահանան:

– Վերելից էդ կապիտուլյանտներն ինձ ստիպում են, որ զորքերս հետ քաշեմ... Ո՛հ, երբեք, ո՛չ մի դեպքում... Ես չեմ պատկանի նրանց մեծամասնական թայֆային: Չեմ արհամարհի խիղճս ու չեմ ենթարկվի ստոր հրամաններին:

– Գեներալ, բայց ինչո՞ւ են վերելներն էդքան շահագրգռված ձեր զորքի ետքաշումով... Ինչո՞ւ...

– Որ նրանց՝ մեր գլխին բերած կապիտուլյացիան ավելի կատարյալ լինի: Իրենց պարտության թիկնոցն ուզում են նաեւ ինձ հագնել:

– Բայց դա դավաճանություն է,– ինքնաբոլոս գոչեց քահանան եւ ոտքի կանգնեց: Ոտքի կանգնեց նաեւ գեներալը:– Էդ ազատագրած տարածքներն առանց կրակոցի տալ թշնամո՞ւն... Խելագարություն է... դավաճանություն... Այնտեղ մեր տղաները շատ արյուն են թափել... մեր անվտանգությունն ավելի ամուր են դարձրել... Միթե ոչնչի դիմաց հակառակորդին հող են ընծայում...– քահանան բռնեց գլուխը եւ սկսեց նյարդայնորեն քայլել սենյակում:

– Դուք ավելի լավ ստրատեգ ու հայ եք, քան նրանք բոլորը միասին... Հիմա ես ի՞նչ անեմ... չգնամ ու նրանց բոլորի մերը...– գեներալի ձայնն արդեն հասնում էր բարձրակետին, իսկ խոսքը՝ ձեռք բերում բացարձակ անկաշկանդ դրսեւորում, որ սկզբից զուցակցի ականջին անախորժ էր թվում, հետո հնչում էր վերին արդարության ու անկեղծության բոլոր նրբերանգներով: Նա միայն հասցնում էր գեներալի հայիոյանքներին ու մեղադրանքներին արծազանքել՝ «ճշմարիտ, ճշմարիտ»:

Ամիսներ անց Տեր Միսաքը մտերիմներին խորհրդավոր տոնով կասի, որ ինքն ազնիվ ու հաղթական գեներալից շատ բան է սովորել: Բայց հիմա նրան նվաստացումից ու խայտառակությունից փրկել է պետք, որ նրան է պարտադրում ռազմաքաղաքական դեկավարությունը, իսկ թե ինչպես փրկել՝ քահանան չգիտեր. մտովի պրպտում էր իր հոգեւոր ողջ զինանոցը, բայց հույժ պիտանի նյութ չէր գտնում: Ինչ ասի ըմբոստ գեներալին. սփոփի ու զսպվածության կոչ անի, խրախուսի նրան իր ընդվզման մեջ, դրդի հաշտվել պարտվողականների հետ, խորհուրդ տա պաշտոնաթոճի լինել, թե՛ ամեն ինչ մատնի ինքնահոսի եւ սպասի դեպքերի զարգացմանը... Այս տարբերակներից եւ ոչ մեկը հոգեւորականի սրտով չէր: Նա կյանքում առաջին անգամ խորությամբ զգաց ու տեսավ, որ ճշմարտությունն ու արդարությունը մարդուն կարող են խոցելի դարձնել ամենաճակատագրական ձեւով, ու թե որքան տատասկոտ է, իրոք, սրբերի ուղին: Ըմբոստություն ու ընդվզում հանուն վեհ գործի՝ դա սքանչելի է, բայց հրն է լինելու այդ ամենի գինը, ինչ պտուղներ են քաղելու ըմբոստացողն ու նրան սատարողը, եւ մարդիկ, որ մաքուր հավատով են հարաբերվել նրանց: Տեր Միսաքը սրտխառնուքի պես զգաց, որ անկարող է գտնել այն մոգական բառերը, որոնք հուսալի նեցուկ կլինեին գրեթե մահացու իրավիճակում հայտնված գեներալի համար... հենց մահացու. «Իսկ եթե հաշվեհարդար տեսնեն Քեհյանի հետ... չհնազանդվելու համար»: Այդ մտքից, թվաց, մշուշվեց քահանայի գիտակցությունը, եւ նա գունատված նստեց, ո՛չ, ուղղակի փլվեց աթոռին: Նրան օգնության հասավ գեներալը, որ, նախ, մի բաժակ սառը ջուր տվեց, ապա հարցրեց կկոցուն հայացքով.

– Տեր Հայր, իսկ ինչ կասի Տեր Աստված, եթե իմանա իմ կացության մասին... ինչ ելք կառաջարկի...

Քահանան բացեց աչքերը եւ տեսավ, որ գեներալի դեմքին չարածրի ինչ-որ շող է խաղում:

– Դե, Աստված կասի...– խոսքի առույգությունը կամեցավ

վերգտնել Տեր Միսաքը,- կասի... որ գեներալը միանգամայն արդարացի ու ճշմարիտ է... եւ նա պիտի գործի անձնվիրաբար...

- Էդքանը... Իսկ ավելի կոնկրետ:

- Ավելի կոնկրետ Աստված չի արտահայտվում... Մնացածը ձեր որոշելիքն է:

- Չէ, մնացածը կթողնի հրեշտակներին, մի բան էլ նրանք պիտի մեզ ասեն, չէ,- արդեն չարախնդության էր ուզում անցնել գեներալը, բայց վերստին լրջախոհ տեսք ընդունեց:- Լավ, թող իմ որոշելիքը լինի... Ես կմտածեմ, դեռ մի քիչ ժամանակ ունեմ:- Նա ներսուզվեց իր մեջ եւ միառժամանակ նայում էր պատուհանից դուրս, ուր անտառային խավարն էր ծանրորեն նստած, որտեղ ժամանակի ուրուները նոր որջեր են փորում, որ անակնկալի բերեն այդ հողի վրա իրենց կյանքը գրավ դրած մարդկանց:

Գեներալը նախկինում հազար անգամ էր զգացել, թե ինչպես է կրակը վառում մաշկը՝ ուղղակի թե փոխաբերական իմաստով. միշտ էլ սպեղանի կար, ամեն փորձությունից հետո ապաքինվում էր: Հիմա առաջին անգամ զգում է, որ հոգիդ է վառվում մոլեգին կրակով, ողջ էությունդ է հրո թակարդի մեջ, եւ դրա համար շիջող միջոց ու բալասան կարծես թե չկա: Նա մի այթոռ վերցրեց եւ հակառակ դիրքով դրեց քահանայի դիմաց, նստեց ու խոնարհվեց թիկնակին: Շիտակ նայելով դեռ գունատ հոգեւորականին՝ կամացուկ հարցրեց.

- Տեր Հայր, միթե էսպիսի իրավիճակներում չպետք է Աստծուց օգնություն ակնկալենք, գոնե էսպիսի...

- Իհարկե, գեներալ, պետք է ապավինել Աստծուն, նա ամենահաս է, հավատով իրեն նայողին երբեք չի արհամարհում:

- Հավատով իրեն նայողին... Բայց, դե, ես ի՞նչ հավատացյալ եմ որ... Չեմ հիշում, թե վերջին անգամ երբ եմ եկեղեցի մտել ու մոմ վառել... Ուզում եմ, բայց ժամանակս չի ներում... Միշտ վազվ-զուքի մեջ եմ՝ կռիվ լինի, թե խաղաղություն:

- Դուք հրաշալի քրիստոնյա եք, սիրելի Քեիյան, շատ հա-

վատացյալներ կնախանձեին ձեզ. անմնացորդ հայրենասեր եք, փառահեղ զինվորական, անվեհեր եք, ազնիվ, ըմբոստ, ձեր պապական ժառանգությանը լիովին հավատարիմ եք, հեռատես... Աստված սիրում ու պաշտպանում է նման անհատներին, գեներալ, դուք Տիրոջ հովանու տակ եք: Մոմ վառելով ու աղոթելով՝ Աստծո սիրուն չես արժանանա, դա չափազանց քիչ է:

– Ես աղոթել չգիտեմ... Եթե Աստծուց որեւէ ակնկալիք ունենամ, կմտնեմ եկեղեցի եւ ուղղակի կասեմ՝ Տեր Աստված, էս բանը ինձ պետք է, տղամարդու պես արա:

Տեր Միսաքը ծիծաղեց: Ժպիտ հայտնվեց գեներալի դեմքին:

– Դուք շատ-շատ եք անկեղծ, Աստված ձեզ կլսի:

– Ուրեմն՝ Աստված թող լսի ինձ եւ օգնի, որ զորքերս պահեմ գրաված դիրքերում, որ հիմարաբար հետ չքաշվենք՝ թշնամուն թողնելով ռազմավարական կարեւոր տարածքներ: Մեր կենսական շահը թելադրում է, որ մենք հակառակորդին չտանք այն, ինչը մեր անվտանգությունն է երաշխավորում:

– Միթե վերեւներում դա չեն գիտակցում, միթե նրանք բացահայտ գործում են պետական ու ազգային շահերի դեմ,– արդեն զայրանում էր քահանան:

– Վերեւներում աթոռներ են գրավել նազարները... մորթապաշտները, անձնամուկները... խեղկատակները, դուրսպրծուկները, բախտախնդիրները, պոպուլիստներն ու տխմարները... Նրանք եթե անգամ կամենան, չեն կարող հարկ եղածին պես տիրություն անել մեր համազգային շահերին, դրա համար նրանք չունեն համարժեք ոգեկան, հոգեւոր ու մտավոր կոփվածք, զուրկ են հանուն երկրի մաքառելու բարձրագույն բարոյականությունից... Նրանք սովոր են միայն գործարքների, ինտրիգների, առետրի, դավերի ու մանիպուլյացիաների: Նրանք խաղում են մի ողջ ազգի ճակատագրի հետ... սրիկաներ,– կրկին իր ձայնը բարձրացրեց գեներալը եւ զայրույթից ոտքի կանգնեց: Նա շփեց կրծքավանդակը, մի քիչ քայլեց սենյակում, ապա վերադարձավ իր տեղը՝ քահանայի դիմաց:

- Խնայեք ձեր սիրտը, թանկագին գեներալ, դուք մեր երկրին դեռ շատ եք պետք,- խաղաղեցնող տոնով ասաց Տեր Միսաքը:

- Հա-հա, թույլ տվեք մի քիչ ծիծաղել... Նրանց կարճ ու ծուռ արշինով՝ եթե իրենց առաջ, հարսիկի պես, հեզ ու խոնարի չես, ուրեմն պետք չես պետությանը, իսկ պետություն ասելով՝ միայն իրենց են պատկերացնում, ֆրանսիացի էն սնապարծ թագավորի պես: Նրանք էս պահին մտմտում են, թե ոնց ինձ դատապարտեն ըմբոստության համար...

- Իսկ գուցե նրանք ծագում են քեզ պարզապես իրենց համախոհը դարձնել, գուցե ձեզ նման մի ազդու ուժ իրենց կողքին տեսնելու փափանգ ունեն...

- Չէ, իմ ներկայությունը նրանց կողքին միշտ իրենց դեմ տված շիկացած սուր են ընկալելու, ես ճանաչում եմ նրանց: Ո՛նց կուրախանան ինձնից ազատվելով... Բայց իրենց ականջների հետեւը կտեսնեն: Ես թույլ չեմ տա, որ երեսուն տարվա մեր հաղթությունը՝ մի ողջ սերնդի վիթխարի գործ ոչնչություն դարձնեն, որ էս երկիրը վերածեն խղճուկ մի կացարանի: Թույլ չեմ տա: - Վերջին խոսքերը գեներալը արտասանեց անվրդով, ներքին մի այնպիսի հանգստությամբ, որ նրան կասկածելը տհասություն կթվար:

- Համենայն դեպս, վերեւների հետ առճակատումը շատ վտանգավոր կարող է լինել ձեզ համար, սիրելի գեներալ: Մի փոքր զսպվածությունը չէր խանգարի: Մաղաքիա մարգարեն ասել է՝ «Ամեն մարդ ոճիրն իր հանդերձով է ծածկում, զգուշացեք ձեր անձերի համար»:

- Դե, մարգարեն իրավունք ունի էդպես դատելու, իսկ ես... Դուք չեք կարծում, որ ավելի լավ է մեկը վտանգվի, քան հազարավորները. մի զոհը միշտ նախընտրելի է բյուրավորից... Ես տեսնում եմ թշնամու՝ մեր դեմ բացած ահռելի երախը, որ ավելի ու ավելի է մեծանում, քանի որ մենք խեղճացած տեսք ենք ընդունել. նա մեզ բոլորիս կույ կտա՝ թքած ունեալով՝ դու արդամր ես, թե՛ անկամ վախկոտի պես կանգնել ես նրա առաջ եւ գթություն ու հաշտութե-



յուն ես ողորմում նրանից: Եթե թշնամուդ լավ չես ճանաչում, ապա քեզ սպասում են նոր ու ավերիչ դժբախտություններ, որոնք կարող են մեզ բնաջնջման հասցնել: Մենք թուրքի դեմ կռվելու լավ փորձ ունենք, բայց էս անգամ վերելից մեզ լավ ֆոռացրին...

– Ես գիտեմ, որ միշտ գտնվում է մի ձեռն անգամ հզոր ախոյանի դեմ պայքարելու եւ հաջողելու համար: Մոծակը կարող է կծել փղի ականջը ու տապալել նրան: Կորչում է նա, ով չի պայքարում: Մենք էս անգամ էլ կհաղթեինք ու կպահպանեինք մեր անվտանգությունն ու արժանապատվությունը, եթե դա դարձնեինք ազգային սեւեռուն նպատակ, ինչպես նախորդ պատերազմում էր: Աստված մարտնչողին է հովանի լինում:

– Ապրենք, քահանա, դուք ճշմարիտ գաղափարախոս եք, հենց էսօրվա համար: Եթե վերեւերում նման մտայնությունը իշխեր, մենք էս օրը չէինք ընկնի: Իրենց առաջնորդ համարողները սեփական կենդանական վախն ուզում են տարածել ամբողջ ազգի վրա, բայց մենք վախկոտներ չենք, Տեր Միսաք, թող ամեն ոք շրջի գլուխը ու հետ նայի՝ կտեսնի, թե մեր սերունդը քսանհինգ տարի առաջ ինչպես մեծաքանակ թշնամուն ստիպեց հարգել մեր սրբազան իրավունքները. մենք վերականգնեցինք մեր կենսական տարածքները, անկախ ու անվտանգ երկիր դարձանք, մենք վերակենդանացրինք կոմայի մեջ ընկած մեր ոգին:

– Այո, այո, վերջին հազար տարվա ողբ ու ավերից հետո մենք նոր թելեր առանք ու սավառնեցինք, մեր հոգին սկսեց երգել ազատ ու արարող մարդու հրճվանքով:

– Ես կորած ռոմանտիկ չեմ, Տեր Հայր, ինչի մեջ ուզում են մեղադրել ինձ, ես ավելի քան իրատես մարդ եմ, հենվում եմ անցյալի ու ներկայի փաստերի վրա: Հո դժբ էլ չեք կարծում, որ իմ մեջ ավելորդ փառասիրությունն է խոսում՝ ամեն կերպ պահպանել էն բնագծերը, որ մենք պաշտպանել ենք արյան գնով, թեկուզեւ երկիրը կործանվի՝ էդպես են ասում...

– Չէ, չէ, գեներալ, ձեր իրատեսությունը ես շատ թանկ եմ գնա-

հատում, այն նաեւ հեռատեսություն է՝ լայնախոհ հաշվարկ, որ կարող է կանխորոշել մեր տեղը ապագայում:

– Շնորհակալ եմ, Տեր Միսաք, որ ինձ էդքան ճիշտ եք ընկալում: Իմ իսկական մտահոգությունն էն տարածքները չեն, որ հիմա մեր վերահսկողության տակ են, բայց համարում են հակառակորդինը, դրանք կարելի է տալ ու չտալ. ռազմական տեսանկյունից՝ մի քիչ ավել տարածք, մի քիչ պակաս՝ էական չէ:

– Այո, կարելի է փոխած ապրել մեծ տարածքների վրա եւ լինել ցանցառ ամպերի պես, բայց եւ կարելի է ապրել մի բուռ հողի վրա եւ լինել գերխիտ, անանցանելի անտառ:

– Ճիշտ ու պատկերավոր եք ասում, Տեր Միսաք: Հիմա իմ մտահոգությունը ոչ թե ցանցառորեն փոխած տարածքն է, այլ խիտ անտառ ունենալը՝ ձեր բառերով ասած: Ամեն մի գործողություն հղկում է մարդու վարքագիծը, այո՞...

– Ճշմարիտ:

– Ուրեմն մենք պետք է անենք էնպիսի քայլեր, որ ամրապնդի մեր ճկված վարքը: Իմ մտահոգությունը մեր ազգային վարքագիծն է: Ուստի խնդիրն էդ տարածքները հանձնելու իմաստի, բովանդակության մեջ է՝ տալիս եւ որպես ներքուստ ու արտաքուստ ջախջախված մեկը, թե՛ քո իմաստնությունը, ուժն ու մեծահոգությունը դրսեւորելու համար... Կամ՝ մենք էդ տարածքները չենք տալիս մեր ինքնապաշտպանական կարողությունը ցուցադրելու, մարտնչելու մեր ավյունը լրացնելու համար, թե՛ փորձում ենք պահել՝ կողահաստությունից ու կամակորությունից գլուխներս կորցրած...

– Աստված չանի, որ մենք պարտված լինենք նաեւ ներքուստ, դա ուղղելն արդեն չափազանց դժվար կլիներ, գեներալ,– քահանան խոնարհեց գլուխը եւ համբուրեց իր պարանոցից կախ արծաթե խաչը:

– Ծայրեծայր համաձայն եմ ձեզ հետ, Տեր Հայր: Ես իմ գինվորական վարքագծով ջանում եմ բոլորին ցույց տալ, որ մենք ներքուստ ջախջախված չենք, մենք դեռ մեծ ներուժ ունենք վերա-

կանգնելու մեր երկրի անվտանգությունն ու արժանապատվությունը: Կոիվն ավարտված չէ, մենք դեռ կոիվներ ունենք տալու եւ հաղթանակելու: Մեր փոքրաքանակ ազգն իր փոքրիկ հայրենիքի վրա ոգեկան ամրության մեծ պաշար է կուտակել իր անցած ճանապարհին, միթե էսպիսի զինանոց ունեցողը կարող է պարտվել...– գեներալը ետեւից մոտեցավ նստած քահանային, ձեռքերը ընկերաբար դրեց նրա ուսերին եւ խորին տխրությամբ հարցրեց.– Ինչ է տեղի ունեցել մեր պետության, երկրի ու ժողովրդի հետ, Տեր Միսաք, չգիտե՞ք, թե ինչ է տեղի ունեցել...:

Քահանան չշտապեց արձագանքել, թեւ պատասխանը լեզվի ծայրին էր: Նա մի անգամ էլ նայեց պատուհանից անդին խտացած խավարին եւ արտաբերեց այն նույն խոսքերը, որ վերջին օրերին ստիպված էր կրկնել տարբեր մարդկանց մոտ.

– Չար ոգին է հայտնվել մեր երկրում, սատանան է գայթակղեցրել շատերին՝ ահա թե ինչ է տեղի ունեցել:

Գեներալը պտտվեց ու կանգնեց քահանայի դիմաց, ապա երկար ու տրտմալից նայեց նրա աչքերին. երբեք չի եղել սնահավատ, ոչ էլ մի կարգին հավատացյալ եւ չի տարվել գերբնական երեւոյթներով, սակայն Տեր Միսաքի պես նա տեսնում ու զգում էր, որ խելահեղության չափ արտառոց ու այլանդակ բան է կատարվում իր շատ հայրենակիցների հետ՝ ասես նրանց մեծ չափաբաժիններով թմրադեղ են ներարկել, եւ նրանք ակամա օտարվել են իրականությունից ու հայտնվել վերիրական մի ոլորտի մեջ, որտեղ անջատված են սեփական ուղեղները, եւ ինչ-որ միմոս փորձում է բոլորին սովորեցնել նորովի քայլելու, մտածելու եւ խոսելու հմտություններ... Դե, իհարկե, դա սատանայի գործն է, ուրիշ ո՞վ կարող է նման օյինբազություն խաղալ մի ժողովրդի գլխին, որ անկոր ունակություն է ունեցել հազարամյակներ ի վեր անցնելու բյուր անդունդներով ու կրակներով: «Սատանան է, հա, սատանան... չար ոգին է մտել նրանց մարմնի մեջ եւ դարձրել մոլեռանդ, ծղրտան ու կամազուրկ զոմբիներ»: Քեհյանը ցանկացավ բարձրաձայնել իր

սոսկալի տեսիլքի մասին, սակայն վերջին վայրկյանին արգելակեց մտքի ընթացքը՝ զգուշանալով, որ գրուցակիցը, հնարավոր է, իր պահվածքի մեջ կարող է տեսնել փորձառու զինվորականին ոչ վայել մտածելակերպ՝ հեռու սթափ դատողությունից ու վերլուծական ջիղից: Ամեն ոք պետք է իր կենսական տիրույթից դատի կյանքի ու աշխարհի հոլովույթը՝ խորհեց գեներալը:

Նա էլի մի շարք կնճռոտ հարցեր ուներ քահանայի հետ քննելու (նրա վարակիչ անկեղծությունն օգնում էր ավելի քան բաց տեքստով խոսել իր մտատանջությունների մասին), սակայն ներքին ծայնը հուշեց, որ հոգեւորական հյուրը նույնպես՝ իր չափ, գուցե առավել, տառապում է ներկայի մոխրից, մշուշից ու տագնապահույզ ավերախոսությունից, ուստի այդօրվա համար բավական է, հարկ է ընդհատել զրույցը եւ նրան բարի գիշեր մաղթել, նա իր պես, հավանաբար հոգնել է կեղեքիչ հարցեր արժարծելուց: Իսկ պատերազմի օրերին, երբ պատահում էր՝ օրական մարտ էր վարում 18-20 ժամ, ինքն այդքան չէր հոգնում, հիմա կարծես թե մի ծանր տանկ է կանգնել իր կրծքավանդակին եւ տեղապտույտ է տալիս:

– Տեր Միսաք, երեւի ժամանակն է, որ հանգստանաք, ես էլ հանգստի կարիք ունեմ: Ձեզ կուղեկցեմ:

Քահանան ոտքի կանգնեց, սքեմը ձգեց ու շտկեց եւ պատրաստվեց գնալ իր սենյակը, որ գտնվում է, հարեւան շենքում: Մոտենալով դռանը՝ ասաց.

– Էս կարգի զրույցները ինձ համար կարեւոր գործ են, սուրբ պարտականություն, ես դրանից չեմ հոգնում... իրավունք չունեմ հոգնելու:

«Երեւի նման խոսակցություններ վարելն էլ քահանայի կոիվն է՝ որպես հոգեւոր հրամանատար, չի հոգնում»՝ անցավ գեներալի մտքով: Նա դուռը բացեց Տեր Միսաքի առաջ: Հնչեց Քեհյանի հեռախոսի զանգը:

– Այո... ասեք... մի քանի վայրկյան լսելով՝ անջատեց հեռախոսը:– Շտաբից է, նախարարը վաղը ինձ կանչում է իր մոտ...

հերթական «ռազբորկայի», գիտեմ:– Նա հոգոց հանեց, մի պահ հապաղեց շեմին՝ կարծես մտորելով վաղվա իր ասելիքը պաշտպանության նախարարի հետ կայանալիք զրույցում:

– Գիտե՞ք ինչ,– անսպասելի առույգ ձայնով խոսեց քահանան,– եկեք ձեզ համար մի քիչ «Նարեկ» կարդամ, հետո կգնամ... Երկուսիս համար էլ շատ օգտակար կլինի:

– Օհո,– զվարթություն հայտնվեց նաեւ գեներալի ձայնում,– հրաշալի, թող էդպես լինի... Կյանքում ինձ համար դեռ ոչ ոք գիրք չի կարդացել... Մենք բազմազավակ ընտանիք էինք՝ հինգ երեխա, ավագը ես էի, ծնողներս ժամանակ չունեին գիրք կարդալու... Բայց ես հեքիաթներ կարդացել եմ իմ կրտսեր քույրերի ու եղբայրների համար:

Տեր Միսաքը սքեմի ձախ գրպանից հանեց մի փոքրաչափ գիրք՝ «Նարեկը», որ միշտ մոտն է պահում (աջ գրպանում «Նոր կտակարանն» է՝ նույնպես փոքրաչափ հրատարակություն): Հարմար տեղավորվեց աթոռին, իսկ գեներալն ընկողմանեց իր բազկաթոռի մեջ՝ նա ուզում էր մատուցվելիք նյութը ընկալել «ծառայական դիրքից»: Քահանան շատ արագ փնտրեց ու գտավ այն էջը, որով արժեր սկսել նարեկյան ընթերցումը՝ օրվան ու ժամանակին համահունչ: Նրա ձայնը սկզբից խաղաղ ու փաղաքուշ էր, հետզհետե դարձավ հուզումնալից ու կրքոտ.

*...Ոչ այնքան հույսի հանգույցով, որքան սիրո կապով եմ ես  
կապվում նրան,  
Ու ոչ թե տուրքի, այլ այն տվողի կարոտով եմ ես վառվում  
շարունակ:*

*Ոչ թե փառքն է ինձ համար անձկալի,  
Այլ փառավորյալն է համբուրելի,  
Ոչ թե ապրելու կյանքի փափագով,  
Այլ կենարարի հիշատակով եմ տոչորվում ես միշտ:  
Ոչ թե վայելքի տարփանքով եմ ես հեծում ողբաձայն,*

*Այլ այն կազմողի փենչանքով եմ խոր հառաչում սրբանց\*...*

*...Ձեռ կաշկանդված դու օրենքներով, ոչ էլ կանոններով  
շրջափակված.*

*Արգելակված չես նվաստությամբ, ոչ էլ հպարակությամբ  
խոնարհված.*

*Ձեռ պարփակված փոքրությամբ, ոչ էլ սահմաններով չափված.*

*Ձեռ վրիպած բարությունից, ոչ էլ ցասումից այլայլված.*

*Ձեռ սխալված խստությունից, ոչ էլ խոռովությունից վրդովված.*

*Ձեռ դղրդված անգիտությունից, ոչ էլ ողորմությունից փոփոխված.*

*Ձեռ իջել բարձրությունից, ոչ էլ օգնությունից ընկրկած,*

*Ոչ էլ փրկությունից տրակարացած\*\*...*

Քահանան «Նարեկից» կարդաց այլեայլ հատվածներ, որոնք իրենց սրտառուչությամբ ու ջերմությամբ ամբողջովին պարուրեցին գեներալի ուշքն ու հոգին. բոպեներ անց նա աչքերը փակեց՝ ավելի ներամփոփ ունկնդրելու եւ ներընկալելու մատուցվող մարգարեաշունչ բաները, իսկ շուտով նիրհեց՝ ասես եթերային մի մահճում, որտեղ օրոր էին ասում հրեշտականման արարածներ՝ խայտաբղետ բմբուկներով պատված: Տեր Միսաքը նկատեց գեներալի վերահաս քունը, փակեց գիրքը եւ անշշուկ դուրս եկավ առանձնասենյակից: Ընդունարանում հերթապահ զինվորին պատվիրեց, որ հրամանատարին չանհանգաստացնի մի երկու ժամ, իսկ եթե շարունակի քնել, ապա թող արթնացնի, որ անկողին մտնի. գիշերվա ցուրտը թափանցել էր նաեւ գեներալական սենյակ, թեպետ այն տաքացվում էր էլեկտրական ջեռուցիչով:

Քեհյանը ընկերներին հետո կպատմի, որ կյանքում երբեւէ այդպիսի քուն չէր վայելել. մինչեւ առավոտ հանգիստ կիսապառկած

---

\* *Բան ԺԲ*

\*\* *Բան ԽԳ*

էր բազկաթոռին, հերթապահ զինվորը լոկ մի ծածկոց էր փոել նրա վրա՝ չկարողանալով հրամանատարին համոզել, որ պետք է անկողին մտնել: Առաջին անգամ գեներալը գիշերային քուն էր ըմբռշխնել առանց սովորական արթնացումների, որ լինում էին դրսի չնչին աղմուկից, «քուն չմտնող» ծանր խոհերից, վատ երազներից, գիշերամիզությունից... Առավոտյան բանակի շտաբ էր մեկնել առույգ ու զվարթ՝ պատրաստ զգեստներու ցանկացած ընդդիմախոսի:

Հաջորդ օրը Տեր Միսաքը փոխզնդապետ Օհանջանյանի ուղեկցությամբ այցելեց սակրավորների վաշտ. ոչ միայն քաջալերեց նրանց՝ այդ հանդուգն տղաներին, որ հաճախ մահաբեր ականներ էին դնում ու հանում տեղացող կրակի տակ, նայած թե ինչ ընթացք ունի մարտական գործողությունը, այլև ինքը գոտեպնդվեց ոգեփն, երբ իրեն սովորեցրին այդ զենքը տեղադրելու նրբությունները: Քահանան վերցրել էր «անողոք» ականներից մեկը եւ ասել.

– Ահա նա, որ մահ է բերում եւ... խաղաղություն... Իմանայինք, թե սատանան ինչ տեղերով է անցնում, դնեինք նրա ճամփին...

– Սատանի տեղն էլ դուք ասեք, Տեր Հայր, մենք ականը կդնենք,– ծիծաղելով արծազանքել է սակրավորներից մեկը:

Քահանան ու փոխզնդապետն աշխուժացած քայլեցին դեպի գրոհային գումարտակ: Մինչ տեղ կհասնեին, պահեստային շինություններից մեկի մոտ նրանք տեսան երկու հոգու, որ մեծ ու ինքնաշեն ցախավելներով ավլում էին հարակից տարածքը: Տեր Միսաքի ուշադրությունը գրավեց նրանց փոքր-ինչ անփույթ հանդերձանքը եւ չսափրված տեսքը: Նա մի երկվայրկյան կանգնեց եւ մտախոհ նայեց «հավաքարարներին»:

– Կուզեք զրուցել նրանց հետ, Տեր Հայր,– հարցրեց փոխզնդապետը:

– Ովքեր են...

– Ազերի գերիներ:

Քահանան անակնկալի եկավ. նա շատ վաղուց չէր խոսել ոչ մի ադրբեջանցու հետ՝ այն օրից, երբ իրենց հարեանությամբ ապ-

րող Իսմայիլը լքել էր Ստեփանակերտը եւ տեղափոխվել իր ազգակիցների երկիր: Այն ժամանակ տասնչորս տարեկան էր, Իսմայիլն իրեն ընկերավարի էր պահում, բայց Արցախյան շարժման առաջին իսկ օրերից նրա մեջ ասես դեւ արթնացավ՝ խոսում էր հոխորտանքով ու թունոտ, վիրավորելով շրջապատի հայ մարդկանց: Նրան փորձել էին մեղմ ու հանգիստ բացատրել իրական կացությունն ու խաղաղեցնել, բայց՝ անօգուտ, այդպես էլ թույնով ու մաղձով հեռացել էր աղբբեջանցի պատանին, որի հետ Մասիսը՝ ապագա քահանա Տեր Միսաքը, ընկերություն էր անում: Քահանան ակնթարթաբար վերհիշեց այդ պատմությունը եւ վերապրեց նույն ավստանքը, որ նրան համակել էր հեռավոր 1988-ի փետրվարին՝ կապված Իսմայիլի եւ նրա նմանների հետ:

– Գնանք՝ խոսենք... ես մի քիչ դեռ հիշում եմ աղբբեջաներեն:

– Հայերեն կարող եք խոսել նրանց հետ, Տեր Հայր, նրանք գիտեն մեր լեզուն... հետախույզներ են, սովորեցրել են:

– Օհո,– արձագանքեց Տեր Միսաքը՝ մոտենալով գերիներին: Բարեւեց ու հարցրեց.– Ո՞նց եք...

– Ոչինչ, լավ,– պատասխանեց բարձրահասակ աղբբեջանցին, որ նկատելի տափակ քիթ ուներ:

– Մերոնք ծեծ՞ում են ձեզ...

– Ո՛չ, ո՛չ... միայն առաջին օրը...– շտապ արձագանքեցին գերիները:

– Ինչքան ժամանակ է՝ էստեղ եք...

– Մի ամիս...– պատասխանողը նույն բարձրահասակն էր:

– Ուզում եք տ՞ուն վերադառնալ...

Երկուսն էլ գլխով արեցին:

– Կարոտե՞լ եք ձեր երկիրը...

Նորից գլխով արեցին: Քահանան կամացուկ հարցրեց փոխզնդապետին.

– Սրանց ճակատագիրը ո՞նց է վճռվելու...

– Երեւի կփոխանակենք մեր գերիների հետ... Բանակցություն-



ներ են ընթանում:

Քահանան դարձյալ դիմեց ազերիներին.

– Երբ վերադառնաք ձեր երկիր, հաղորդեք բարեկամ-ընկեր-ներին, որ մենք՝ հայերս, ատելություն չունենք ձեր հանդեպ, վրեժ ունենք, բայց ոչ ատելություն, որով դուք եք առաջնորդվում մեր նկատմամբ... Չու-նենք ա-տե-լու-թյուն,– կրկնեց քահանան վան-կատված բառերով,– բայց երբեք թույլ չենք տա, որ դուք պղծեք ու յուրացնեք մեր երկիրը եւ ձեր կամքը թելադրեք մեզ... Արցախի տերերը մենք ենք, էդպես կանխորոշված է Աստծո կողմից, շատ-շատ վաղուց... Բարի վերադարձ ձեր երկիր,– ասաց քահանան եւ, առանց սպասելու նրանց պատասխանին, հեռացավ:

– Լավ մաքրեք,– գերիներին հրամայեց փոխզնդապետը եւ փու-թով հետեւեց Տեր Միսաքին:

– Չե՞ն փախչի... կարծես թե ազատ արձակված լինեն զորամա-սում...– հարցրեց քահանան ուղեկցին:

– Չեն կարող, հսկողության տակ են: Փախչելը նրանց համար շատ վտանգավոր կլինի:

Քիչ անց նրանք գրոհային գումարտակ հասան. սա դիվիզիա-յի այն ստորաբաժանումներից է, որ շարունակ կատաղի մարտե-րի մեջ էր պատերազմի օրերին. ունեցել է կենդանի ուժի զգալի կորուստներ, բայց ոչ մի մարտական առաջադրանք չի ձախողել: «Նրանք մեր արծիվներն են»՝ նախապես ասել էր փոխզնդապետը: Քահանան տեսավ կոփված, սեւացած, կոշտացած ու ներամփոփ տղաների, որոնք ասես անհարմար էին տեղավորվել խաղաղութ-յան մեջ՝ դժոխային մարտերից հետո: Տեր Միսաքն իր ներքին զգայարաններով տեսավ, որ ռազմաշունչ այդ զինծառայողների հոգում պարապի եւ ունայնության քամին է թեւածում, երեւի այն պատճառով, որ փոթորկալից օրերը նրանց չէին հասցրել այն ավիլը, որ նրանց աջ ու ահյակ խոստացել էին մարտերի սկզբում: Նրանք հաղթանակ ու առաջխաղացում էին տենչում, բայց մնացին իրենց նախկին դիրքերում կանգնած, թեպետ այդ օրերին դա իս-

կական նվաճում էր համարվում: Քահանան կռահեց, որ կրակի հեղեղի միջով անցած տղաների հետ չի կարելի խոսել այն բառերով ու մտքերով, որ անցած օրերին հրամցրել էր մյուս ստորաբաժանումներում ունեցած հանդիպումներին: Չէ, Աստծո սիրուն, դրանք պակաս հույժ պիտանի խոսքեր չէին, պարզապես այստեղ բավական չեն սովորական անկեղծությունն ու հոգեւոր բարեբանությունը: Ուստի, իր կանխադրած լիարժեք խոսքի տոնայնությունն ու իմաստային գոհարիկները գտնելու ակնկալությամբ, դանդաղորեն քայլեց զինձառայողների միջով, խաչեր ու ավետարաններ բաժանեց, շոյեց նրանց գլուխները եւ լռելյայն օրհնեց առավել ներամփոփ զինվորներին:

Հետո Օհանջանյանին առաջարկեց, որ զորանցից միասին դուրս գան շարահրապարակ. այդտեղ լույսն առատ էր, օդը՝ մաքուր, պարզկա երկինքը՝ իսկական խոստովանության տրամադրող: Զինձառայողների հետ ելան բաց տարածություն, եւ քահանան զգաց, ի վերջո, որ ինքը պետք է արտահայտվի որպես նրանցից մեկը, որպես իրենց հոգին տեսանող, պետք է մի կողմ թողնել լավ քարոզչի կերպարը եւ դառնալ նրանց երկրորդ «ես»-ը, հակառակ դեպքում իրեն այստեղ շարքային «գլուխ հարդուկող» կհամարեն: Խնդրեց բոլորին, որ ազատորեն կանգնեն, եթե կուզեն՝ շրջապատեն իրեն, ինքն այդպես «ավելի լավ կտրամադրվի եղբայրական երկխոսության»: Զինձառայողները, ասես նախապես պայմանավորված, կիսաշրջան կազմեցին Տեր Միսաքի շուրջը:

– Իմ շատ սիրելի զինձառայողներ, իմ արժիվներ, – մեղմ ձայնով սկսեց քահանան, – ձեզ հետ անցած պատերազմի օրերին կովել եմ նաեւ ես՝ իմ խոսքով, իմ աղոթքներով, իմ տեսիլքներով, քաղաքում ապաստանած մարդկանց նեցուկ կանգնելով, ուրիշի ցավը վերապրելով... Ձեր բոլոր մարտերին ներկա էի... որտեղ դուք էիք մարտնչում, էնտեղ նաեւ ես էի՝ հոգով ու հավատով, իմ երազանքով՝ որպես անտեսանելի մի ուրու, որպես մի ոգի, որի հետ դուք գլուխ դնելու ժամանակ ու հավես չունեիք, բայց աղոտ կերպով

զգում էիք նրա ներկայությունը, որ մեղմ զեփյուռի պես շոյում էր ձեր հոգին ամեն մարտից հետո... Էն քաջ տղաներից յուրաքանչյուրի հետ զոհվել եմ նաեւ ես...- Քահանայի հնչեղ բարիտոնը մեկեն բարձրացավ ու տարածվեց ողջ տեղանքում, ասես ծփանք տվեց մոտակա անտառներով ու լեռներով, ելավ վեր՝ երկինք՝ թափանցելով երկնաբնակների ունկերը, սփռվելով անցյալ ու գալիք օրերի մեջ: Իրականությունը հանկարծակի նոր գունավորում ստացավ, կարծես հեքիաթային մի ոլորտ էր բացվել, ուր ամենքն հստակ տեսնում էին իրենց ամբողջ ներաշխարհը: Եվ այնտեղ լույսերի մեջ կանգնած էր քահանան՝ բաց գլխով եւ աջը՝ կրծքին:– Ես ձեզ հետ մոնչում էի, ձեզ հետ կատաղում ու բորբոքվում, նշանառության տակ էի վերցնում մոտեցող թշնամուն, ամեն դիպուկ կրակոցից ուրախանում էի, ամեն վրիպումից՝ ավստսում... Ես կենաց-մահու պայքարի մեջ էի... Ես չէի կռվում հանուն պարտքի ու ծառայության, ես կռվում էի, քանզի լոկ այդպես կարող էի պահպանել իմ հայրենիքը, իմ տեսակը, իմ գոյության արդարացումը... Ես ձեր արժիվներից մեկն էի, թոչնում էի վեր՝ հիանալու, թե ինչպես եք աներեր կանգնած հողի վրա, ցած էի իջնում, որ տեսնեմ ու լսեմ բոլորիդ սրտի զարկերը... Այ թե առյուծներ էիք, հա՛, ձեզ ոչ մի ախոյան չէր կարող տապալել, ձեզ ոչ մի հրեշ չէր կարող սարսափի մատնել...– Կարճ դադար:– Հայոց երկիրը փոքրացել ու մի բռան չափ է հիմա. նրանով չի կարելի առեւտուր ու գործարք անել, Հայոց երկրին միայն պետք է տրվել ինքնամոռաց սիրահարի պես, պատկանել նրան մեր նախնիների սրբացրած ոգով ու մտայնությամբ, նրան նվիրվել ու ձուլվել է պետք՝ դառնալով նրա անբաժան մասնիկը... Վերջնականապես չվիատվեք ու չբեկվեք պարտությունից, նոր ավյուն տվեք ձեր կույզ եկած սրտերին, նայեք ձեր ներսը եւ կտեսնեք, թե դեռ որքան շատ կորով կա ձեր մեջ: Պարտությունը մենք պետք է վերածենք հաղթանակի, էնպես կռած մի հաղթանակի, որ այլևս անհնար լինի մանրատել ու փոշիացնել... Մեզ նորից պաշարել են հարեւան *ազարները*՝ մեր ժամանակի էդ փղշտացիները. թող

իրենք լսեն իրենց աստծո արդար պատվիրանները. գիտեմ՝ նրանք մի օր ուշքի կգան արարչական ճշմարտության մեջ... Ապագայում մենք համաձայնություն կգտնենք ոսոխի հետ, նա կհարգի մեր հողի վրա հայեղեն ապրելու մեր սուրբ իրավունքը, բայց մինչ այդ պետք է նրան եւ աշխարհին ցույց տալ մեր անզուգական, կենսունակ, անկոտրում կերպարը, որ ունակ է եւ պատրաստ է մշտապես մաքառել իր լուսեղեն գոյության համար եւ արարել վասն մեզ ու հանուրի՝ իր օրրանում, մեր հայրերի երկրում... Ես հավատում եմ իմ երկրին՝ թշնամու, աշխարհի ու Աստծո առաջ, եւ ձեզնից ամեն մեկն է այդպես հավատում... Երանի՛ հայրենիքի ազատության համար մարտնչողներին, քանզի նրանցն են իրենց ժողովրդի սերն ու փառքը...– Տեր Միսաքը մի պահ շուրջը նայեց, հպանցիկ նկատեց իրենց մոտեցող զինձառայողներին ու քաղաքացիական հագուստով մարդկանց. նրանք անաղմուկ համալրում էին ունկնդիրների շարքերը: Նա կրկին անցավ խոսքի մեղմության:– Բայց դուք գերբնական էակներ չեք, դուք միս ու արյունից եք՝ ձեր մարդկային հույզերով ու ապրումներով, ձեր սքանչելի կարոտով ու իղեալներով... Ես նաեւ ձեր վախն էի տեսնում, ձեր անպատմելի հուզումը, երբ լուրեր էին հասնում ճակատի հեռավոր հատվածներից, ուր թշնամին խոյանում էր առաջ... Ափսոս, որ մենք չէինք կարող միաժամանակ կռվել ռազմաճակատի բոլոր հատվածներում, հազար ափսոս, որ ամենուր մեր զինակիցները ի զորու չեղան մարտնչելու այնպես, ինչպես դուք՝ մենք... Այդպես է՝ ամենքը միատեսակ զորություն ու կամք չունեն, բոլորը չէ, ցավոք, որ ունակ են նույն խորությամբ ընկալելու պայքարի ճակատագրական նշանակությունը... Դուք ձեր կռիվը հաղթանակով եք պսակել, ձեր խիղճն ու հոգին մաքուր են երկրի, ժողովրդի ու Աստծո առաջ... Աշխարհում չկա մի ուժ, որ իրավունք ունենա ձեզ մեղադրելու եւ դատապարտելու՝ ինչ էլ դուք խորհեք ու անեք հիմա, դուք այն լավագույն օրինակն եք, թե ինչպես են հայրենիքի ազատության համար կռվում ու հաղթում, եւ թե ինչպես պետք է հետայդու, նույն սրտացավությամբ ու զգաստությո-

յամբ հոգալ երկրի ներկան ու ապագան... Դուք զենքի մարդիկ եք, ձեր զենքը թշնամու դեմ արդար շառաչել է անցած կռվում... Ես ձեզ հետ մոնչում էի՝ «Էդ ո՛ւմ վրա եք զենք ցցել, տմարդներ, վայրագներ ու գազաններ, հայոց պանծալի երկրի վրա՞ եք ուղղել ձեր կեղտոտ դրոնները, սմերչները, ֆոսֆորային ռումբերը... Հայ ազգի հնամենի անոնն եք ուզում պղծել, նրան հրոսամկ եք ուզում դարձնել, նրա հաշվին եք ուզում կայանալ արեւի տակ...»: Եվ Աստծո կողմից օրհնված մեր ցասումը թափվում էր անդադրում ախոյանի վրա... Վրեժի աստված մեզ առաջնորդեց. ընկանք ու ելանք, վառեցինք ու վառվեցինք...– Կարճ դադար:– Հիմա զինադադար է, խաղաղություն... օ՛ ոչ, խաղաղությունը դեռ չի բնավորվել մեր լեռներում ու հովիտներում, զինադադար է, եւ տեսնում ենք, որ այն հղի է նոր բախումներով... Թշնամին խաղաղված չէ վերջնակա նապես, նա մեր հայրենիքն է ուզում ամբողջովին ճանկել եւ մեր արյունն է տենչում... Խաղաղված չենք եւ մենք. մեր հայրենիքի կորսված շրջանները պիտի վերադարձնենք՝ մեր արժանապատվության, բարոյական մեր վեհ նկարագրի հետ: Եվ Աստծուց պահանջելու պես աղերսում եմ, որ ոչ մի զոհ չլինի մեր վերածնության ճանապարհին, թող միակ զոհը ես լինեմ, թող մեզնից չլինեն նոր աճյուններ, մեզ պետք չեն նաեւ նրանց աճյունները, թող ամեն ինչ հաշտությամբ ընթանա, եւ մենք մնանք մեր դավանանքի ու ինքնության տերը...– Քահանան մի փոքր շունչ առավ, ապա շարունակեց.– Ահա այսպիսի խրթին ժամանակներում, տեսնում ենք՝ մեր ոգու ու տեսակի դեմ թշնամաբար տրամադրված տարրեր են ի հայտ եկել նաեւ իշխանական վերեններում... սա մի նոր դժբախտություն է, որի առաջն առնելն այնքան էլ դյուրին չէ... Ինչ պետք է անի հաղթական, արդար հայ ռազմիկը նման իրավիճակում, ինչ գաղափար կարող է սրբացնել նրա վարքը, նրան այնպես ոգեշնչել, որ կարողանա անթերի պաշտպանել հայրենի երկիրը եւ դրսի, եւ ներքին թշնամիներից... Ես բարձրաձայն չեմ հնչեցնի կարծիքս այդ դժվարագույն հարցի վերաբերյալ, այն լոկ իմ կարծիքն է՝ իմ

համոզմունքը, գուցե՝ խիստ անձնական... Որոշիչ խոսքը ձեզ է պատկանում... «Երանի նրանց, որ արդարության քաղցն ու ծարավն ունեն, որովհետև նրանք պիտի հագենան»\*: Դուք այս երկրի միայն աղը չեք, այլե՛ նրա բազուկը, բունն ու աղբյուրը: Թող Աստված ձեզ տա խոհեմություն ու հեռատեսություն, որ ճշմարիտ կեցվածք որդեգրեք այս ճակատագրական պահին... Դուք ունեք հրաշալի հրամանատար՝ գեներալ Քեիյանը, նա ձեզ հետ միայնակ է մնացել իր ու մեր պայքարում... Աղաչանքս է՝ միաբան եղեք նրա հետ, նա մեր ծայնն է, մեր խիղճն ու պատգամը... Ես չեմ քի նրան, դուք չեք քի նրան, չէ՛,– միամտորեն հարցրեց քահանան:

– Ո՛չ...– որոտացին զինվորների ձայները,– մենք գեներալի հետ ենք:

– Ապրե՛ք, ես հիմա առավել քան վստահ եմ, որ մեր երկիրը նորեն կլինի ամբողջական ու ազատ, անկախ ու միացյալ... Բայց նկատի ունեցե՛ք, ինչպես ասել է իմաստուն մի այր՝ այն երկիրը, որը կարող է փրկվել միայն որեւէ հերոսի կողմից, չի կարող երկար այդպես գոյատևել նույնիսկ այդ հերոսի օգնությամբ, ավելին՝ այն արժանի էլ չէ, որ իրեն փրկեն... Հերոսը պետք է հերոսացնի իր ողջ ազգին, այլապես նոր պարտությունը մոտ է: Դուք եք ազգի միջուկը, ես մի կասկածե՛ք՝ Աստված պահապան է ձեզնից յուրաքանչյուրին, դուք Աստծո ընտրյալ ռազմիկներն եք:– Տեր Միսաքը հանեց թաշկինակը եւ սրբեց ճակատի քրտինքը: Ձինվորներն ավելի սեղմվեցին նրա շուրջ, եւ սկսվեց մի անմիջական ու ջերմ զրույց, որ կարող էր ժամեր տևել, եթե փոխգնդապետ Օհանջանյանը քահանայի ականջին չչնջար:

– Տեր Հայր, ձեզ սպասողներ կան:

Տեր Միսաքը, հազար ներողություն խնդրելով զինձառայողներից, դուրս եկավ նրանց օղակումից եւ տեսավ քիչ հեռվում կանգնած ընկերներին՝ Մովսեսն էր, Վիգենը, Արմանը, Մարիան եւ Ար-

---

\* Ավետարան ըստ Մատթեոսի, 5

սենը: Մարիայի ձեռքին դաշտային ծաղիկների մի փոքրիկ փունջ կար, իսկ Վիգենը մարզական համեստ պայուսակով էր: Քահանան ուրախությունից ծափ զարկեց եւ փույթով մոտեցավ յուրայիններին:

– Մեղա քեզ, Տեր Աստված, էս ինչ անակնկալ եք մատուցում,– գոչեց Տեր Միսաքը եւ ողջագուրվեց թանկագին այցելուների հետ:– Ավետիսիւմ եք եկել, թե՛...

Մարիան ծաղկեփունջը տվեց քահանային, ապա գլուխը մի երկվայրկյան դրեց նրա կրծքին եւ թախծալի ժպիտով, ուր կարոտն ու գորովը միախառնվել էին իրար, նայեց սիրելի մարդու դեմքին. այդպես աղջիկն է նայում հարազատ հոր դեմքին, թե՛ սիրող կինն է հայում իր պանծալի ասպետին, որի հետ վիճակված չէ համատեղ երջանկություն,– հայտնի է լոկ Աստծուն:

– Տեր Հայր, նախ, եկել ենք ձեր որպիսությունն իմանալու, որ տեսնենք, թե ինչպես եք ծառայում,– ասաց Մովսեսն ու ծիծաղեց:– Այ թե լավ հրամանատար կլինեիք, հա՛, Տեր Միսաք, մենք լսեցինք ձեր խոսքը, ոգեշնչված ենք:

– Ես՝ նույնպես,– զրուցակիցներին միացավ փոխգնդապետ Օհանջանյանը:– Ես իմ տեղը սիրով կգիջեի Տեր Միսաքին, փայլուն քարոզիչ է: Ձայնագրել եմ նրա ելույթը,– գրպանից հանեց եւ ցույց տվեց ձայնագրիչով հեռախոսը:– Հաճախ կլսեմ ձեր բոցաշունչ խոսքերը, Տեր Հայր... Չինձառայողներից շատերն են ձայնագրել, նաեւ տեսագրել են:

– Բարի, բարի,– գոհունակ արձագանքեց քահանան,– դե, հարազատներս, ասեք, թե ինչ կա-չկա մեր սիրելի քաղաքում:

– Տեր Հայր, բարի լուր ունենք ձեզ ու բոլորիս համար,– աճապարեց խոսել Մովսեսը:– Թեմակալ առաջնորդը, մեր եզրահանգմամբ, այլեւս մտադիր չէ շարունակել ձեր դեմ արշավը, ընդհակառակը, նա հիմա բավականաչափ լավ է տրամադրված եւ անհամբեր սպասում է, թե երբ կվերադառնաք տաճար:

«Երեւի գեներալը խոսել է նրա հետ»՝ արագ անցավ Տեր Միսաքի մտքով:

- Ինքն էդ մասին մեզ հայտնեց. երեկ եկել էր եկեղեցի եւ հարցուփորձ էր անում մեզ, թե ինչպես ենք քահանայի բացակայությամբ կատարում մեր ծառայությունը: Խրախուսեց մեզ եւ հայտնեց, որ Տեր Միսաքի հետ դեռ երկար պիտի ծառայեն Հայ Առաքելական եկեղեցուն, եւ որ Տեր Միսաքը «իր լավագույն քահանան» է, որ նա զարդարում է Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցին,- շուտասելուկով «զեկուցեց» դպիր Արմանը:

- Շնորհակալ եմ բարի լուրի համար... Բայց ինձ համար էստեղ էլ վատ չէ, տեսե՛ք՝ ինչ արծիվների հետ եմ ծառայում,- հպարտորեն ասաց Տեր Միսաքը՝ ցույց տալով դեռ խմբված զիծառայողներին, որոնց թիվն ավելացել էր իր ելույթի ժամանակ:- Իսկ ես պատրաստվում էի գեներալին խնդրել, որ նա երկարաժամկետ ծառայության վերցնի ինձ: Հասկացա, որ կարող եմ օգտակար լինել էս կոված, հաղթանակած եւ... ընկճախտի մեջ հայտնված զինվորներին...Դե, հիմա ես ինչ անեմ,- անկեղծորեն հարցրեց քահանան՝ նայելով մերթ փոխգնդապետին, մերթ ընկերներին:

- Ինքներդ որոշեք, Տեր Հայր, մենք միայն ուրախ կլինենք՝ ձեզ մեր զորամասերում երկար տեսնելով,- պարզերես ասաց Օհանջանյանը:- Մեր զիծառայողները ձեզ լսում եւ հավատում են, նրանք ձեր խոսքից ներշնչվում եւ վերազարթնում են իրենց համակած թմբիրից:

- Իսկ էստեղ Տեր Միսաքին սպասում է մի ամբողջ քաղաք... Գիտե՞ք, թե նա քանի հոգու համար է ապավեն ու հենարան, գիտե՞ք, թե կենաց ինչ լույսեր է նա վառում Ստեփանակերտում,- իր առարկությունը հիմնավորեց Մովսեսը:

- Գիտե՞ք, որ Տեր Միսաքի ջանքերով Աստվածամոր եկեղեցին միայն եկեղեցի չէ, այլ փրկության ասի շատերի համար, հատկապես հիմա, երբ քաղաքը լցված է գաղթականներով... Նրանք մեծաքանակ են, նրանց էս պահին, նյութական աջակցությունից զատ, նաեւ հոգեկան քաջալերանք է պետք, էդ ամենը տալիս է Տեր Միսաքը,- Մովսեսի առարկությունը լրացրեց Արմանը:



– Տեր Միսաքը մի մեծ ծխական համայնքի գլուխ է կանգնած, նա փայլուն ձեռով է կատարում իր պարտականությունները. էդպիսի մարդկանց շատ դժվար է փոխարինող գտնել,– խոսեց Վիգենը:– Ես գիտեմ՝ դուք լավ գնդերեց ունեք, նա բուժվելուց հետո կվերադառնա ծառայության... Կարծում եք՝ Տեր Միսաքը կհամաձայնի, որ իր պատճառով հաղթական գնդերեցը տեղափոխվի ուրիշ... պարտված զորամիավորում...:

Միառպահ բոլորը լռեցին, Վիգենը դիպել էր անչափ նուրբ լարի: Քահանան գլուխը քորեց:

– Լավ, եկեք չվիճենք էստեղ, հատկապես, որ էդ հարցը մենք չենք վճռելու: Գեներալը կգա՝ կքննարկենք նրա հետ, հա՛,– առաջարկեց փոխգնդապետը:

– Այո՛, այո՛, չենք վիճի, մի ճշմարիտ լուծում կգտնենք գեներալի հետ,– համերաշխորեն արձագանքեց Տեր Միսաքը:– Կլսենք բոլոր կողմերին եւ, ինչպես ասում են, դեմոկրատաբար կընտրենք ճիշտ տարբերակը:

– Դեմոկրատաբան՛ր, ժողովրդավարական՛,– հեգնական անդրադարձավ փոխգնդապետը,– տեսանք, թե ուր է մեզ հասցնում էդ դեմոկրատիան, մենք միայն դրա թթուն ենք խմում, ուրիշ ոչինչ:

Այդ կարճատեւ բանավեճի ընթացքում Մարիան դիմախաղով ու թեթեւակի նշմարներով քահանային հուշում էր, որ նա իրենց հետ գնա քաղաք, հերիք է՝ որքան մնաց զորամասում: Իսկ Վիգենը տիրական բռնել էր «սիրուն լալիկի» ձեռքը, եւ այդ թանկ հանգույցը նրանք այլեւս չէին թաքցնում շրջապատից: Տեր Միսաքը նկատեց սիրային բարի տեղաշարժը եւ անչափ ուրախացավ, մտովի օրինեց երիտասարդներին եւ Աստծո բարեհոգությանը հանձնեց:

Նախքան գեներալի ժամանումը Տեր Միսաքն իր հյուրերի հետ շրջեց զորամասի տարածքում եւ տանտիրոջ իմացությամբ որոշ ռազմական տեղեկություններ հաղորդեց՝ «ինչ-որ թույլատրելի է»:

Այնուհետեւ իրենց ֆիզիկական ունակությունները ստուգեցին վարժանքային սարքերի վրա: Պտտածողին փայլեց Վիգենը, ով տասն-

յակ անգամ կատարեց «արեւ» վարժությունը՝ հիացնելով ներկաներին, հատկապես՝ Մարիային: Երբ անցան բուժմասի մոտով, Տեր Միսաքը ներս մտավ եւ ծաղկեփունջը բոլորի անունից նվիրեց սիրունատես բուժքրոջը:

– Պատերազմից հետո ստացած առաջին ծաղիկներն են,– հուզվեց մահ ու արյուն տեսած կինը:

– Թող դրանք խաղաղությամբ բուրեն,– օրհնեց քահանան: Նա մի քանի սրտաբուխ բառ եւս ասաց այդ հաճելի կնոջը, որի հետ զրուցում էր արդեն երկրորդ անգամ: Անմեղ զրույցը նրան հոգեկան մեծ բավականություն պատճառեց՝ գրեթե խանդաղատանքի չափ:

Տեր Միսաքը կրկին միացավ իր «թիմին», որ դանդաղաքայլ դեպի շարահրապարակ էր շարժվում, եւ վերստին խորհեց, որ այս մարդկանց հետ իրեն հրաշալի է զգում, ու թե որքան հոյակապ կլինեք, եթե բոլորով այստեղ միառժամանակ ծառայեին:

– Տեր Միսաք, բուժքրոջը մեզնից թաքուն ինչ էիք ասում,– կատակեց Մովսեսը: Մյուսները ներողամիտ ժպտում էին քահանային: Նա զուսպ ծիծաղեց:

– Դե, ինձ մեղքի մեջ չեք բռնացնի... Բայց հաճելի էր նրա հետ զրուցելը:

Խմբին մոտեցավ փոխգնդապետը եւ բոլորին հրավիրեց ճաշի: Ընդարձակ ու մաքուր զինվորական ճաշարանը տրամադրող էր, հյուրերը մատուցված բորջչն ու փլավը կերան ախորժակով:

– Վարպետ Մովսես, իսկ դուք չէիք ցանկանա մեզ ծառայություն մատուցել,– ճաշի ընթացքում անսպասելի հարցրեց Օհանջանյանը:

– Ինչ ծառայություն, պարոն փոխգնդապետ:

– Դե, ասենք, որմնանկարներ անեիք ճաշարանի պատերին, նաեւ՝ դրսում, լավ պատկերների կարոտ պատեր շատ ունենք,– պարզաբանեց Օհանջանյանը:– Հա, ինչ-որ ասում եմ՝ վճարով կլինի, լավ վճարով, բարեգործություն պետք չէ: Մենք հետո կհպար-

տանանք, որ Մովսես Մելիքյանի գործերից ունենք... Հնարավոր է՝ հենց դրանք էլ լինեն ձեր լավագույն աշխատանքները, ո՛վ գիտե...

– Ո՛վ գիտե,– երկրորդեց Մովսեսը,– համաձայն եմ: Բայց շուտով ձմեռ է, որմնանկարների համար համեմատաբար տաք, բարենպաստ եղանակ է պետք, հարմար է, որ գործը սկսենք... ապրիլից:

– Թող լինի ապրիլից:

– Պայմանավորվեցինք, պարոն փոխգնդապետ: Հա, քիչ մնաց մոռանալի. որմնանկարները կանենք երկուսով՝ Արսենի հետ, նա մեր տաղանդավոր երիտասարդ նկարիչներից է,– ասաց Մովսեսը՝ ձեռքը դնելով երիտասարդ արվեստակցի ուսին:

– Շատ լավ, մինչ այդ դուք կասեք, թե ինչ նյութեր պաշարենք գործի համար:

Գեներալին երկար չսպասեցին: Նա եկավ խոժոռ դեմքով, բայց, տեսնելով հյուրերին, զվարթացավ եւ առույգ տեսք ընդունեց: Առանձնասենյակում թեյ խմեցին եւ կարճ քննարկումից հետո վճռեցին Տեր Միսաքի «կարգավիճակը». նա կվերադառնա Սբ. Աստվածամոր Հովանի եկեղեցի՝ իր ծառայությանը, բայց ամիսը մեկ անգամ, երկու-երեք օրով, կայցելի «Եղնիկներ» եւ նույն ոգով շփումներ կունենա զինծառայողների հետ, մինչեւ գնդերեցը կապաքինվի եւ կանցնի իր գործին: Իսկ որմնանկարների գաղափարով գեներալը սրտանց ուրախացավ, քանի որ՝ «սիրում եմ էդ արվեստը, շատ էի նկարում դպրոցական տարիներին»: Նա պատրաստակամություն հայտնեց՝ ամեն ինչով օժանդակել, որ իմաստալից ու հոյակերտ պատկերներ արվեն զինվորական շինությունների պատերին, որոնք ցույց կտան ոչ միայն ուժ ու կամք, այլև՝ գեղեցկություն ու հոգի:

– Պարոնայք նկարիչներ, մենք ձեզ լավագույնս կվարձատրենք, համարեք, որ դուք ռազմավարական նշանակության պատվեր եք ստացել: Միայն թե, հուսամ՝ դուք ամեն ինչ գեղարվեստական բարձր մակարդակով կանեք: Եվ թող ամենքին պարզ լինի, որ բա-

նակը կանգնած է նաեւ արվեստի թիկունքին:

– Շնորհակալ ենք, պարոն գեներալ,– հուզված արձագանքեց Մովսեսը:– Մենք միշտ ձգտել ենք թիկունք լինել բանակին:

– Շնորհակալ ենք... Մի մեծ որմնանկար, համենայն դեպս, մեր կողմից նվեր կլինի, չէ՞, վարպետ Մովսես,– շտապեց բարոյական հավասարակշռություն գտնել Արսենը:

– Իհարկե, իհարկե:

– Պարոն գեներալ, պատերազմի օրերին ես զորակոչված էի «Եղնիկների» ռեզերվային գունդ, բայց ինձ էդպես էլ բախտ չի վիճակվել մարտերի մասնակցել ձեր հրամանատարությամբ,– անկեղծացավ Արսենը:

Դառը ժպիտ գծագրվեց Քեհյանի դեմքին: Նա մտախոհ նայեց «անհաջողակ» նախկին զորակոչյալին եւ, ըստ Տեր Միսաքի հետագա խոստովանության, հապաղելով՝ չբարձրաձայնեց այն ամբողջ մտածումը, որը տվյալ պահին գալարվում էր նրա գլխում:

– Ճակատագիրը հաճախ մեզնից ավելի ազնիվ է վարվում, երիտասարդ...– տխուր արձագանքել է գեներալը:

Երբ դուրս էին գալիս, Տեր Միսաքը, որ դեռ մտահոգ էր Քեհյանի՝ բանակի շտաբ գնալու առիթով, կամացուկ հարցրեց.

– Պարոն գեներալ, նորություն կամ...

– Դեռ դիմադրում ենք,– եղավ պատասխանը:

– Խնդրում եմ՝ ցատումով ու ատելությամբ չընդդիմանաք, այլ՝ հավատով ու ճշմարտությամբ, նրանք մոլորվածներ են:

Քեհյանը թեթեւակի գլխով արեց, որը, սակայն, քահանայի համար պարզ չէր՝ դա համաձայնության նշան էր, թե՞ իր պատվիրանը պարզապես ընդունեց ի գիտություն:

– Ընդունարանում մի փոքրիկ պայուսակ ենք թողել ձեզ համար, մերոնք են բերել՝ ժենգյալով հաց ու գինի, վայելեք:

– Շնորհակալ եմ... Մինչ նոր հանդիպում, Տեր Միսաք, կսպասեմ մեր նոր երեկոների:

– Աստված մեզ հետ:

Տեր Միսաքն ու ուղեկիցները տեղավորվեցին Վիգենի «Տոյոտայում» եւ ճանապարհ ընկան: Գեներալը տրտմերես նայում էր հեռացող մեքենայի ետեւից: Նա դեռ տեղյակ չէր, որ քահանայի այդօրվա ելույթի ծայնագրությունը ոմն մեկը ուղարկել էր բանակի հրամանատարությանը, թե ով՝ իրեն վաղուց հետաքրքիր չեն նման մանր մատնությունները: Հաջորդ օրերին գեներալին նորովի էին մեղադրում՝ քահանայի խոսքում իբր առկա ենթատեքստի համար, թե իբր, ըստ Քեհյանի, «նրան դրդել եմ, որ զինծառայողներին տրամադրի ուժային փոփոխությունների ռազմաքաղաքական ղեկավարության մեջ»: «Տխմարություն»՝ կրկնում էր Քեհյանը իրեն մեղադրողներին ու նախատողներին, իսկ մտերիմ զրուցակիցներին հեզնաժպիտ բացահայտում էր, որ «սատանան հենց իրենց մեջ է, ոչ թե ենթատեքստում կամ տողատակերում»: Ապա թանձր տրտմությամբ էր ծանրանում նրա դեմքը, եւ լոկ Աստծուն է հայտնի, թե իրականում ինչ կրակների մեջ էր տապակվում հաղթական զինվորականի հոգին: Երկար ամիսներ Տեր Միսաքը գեներալի՝ իր պատճառով սկսված հավելյալ «դատափետման» մասին ոչինչ չգիտեր: Հրամանատարն ամեն կերպ պաշտպանում էր քահանային՝ նրան հեռու պահելով իշխանական որոգայթներից:

## Գլուխ 6

### ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՏՐՈՆԸ

*Եվ այդ ժամը կհնչի:  
Այն արդեն մոտենում է,  
դա սոսկալի վրիժառուլությունն է:  
Վիկտոր Հյուգո*

Շուտով նոյեմբերը կավարտվի, իսկ Մովսեսը դեռ վերջնականապես չէր որոշել՝ մեկնի՞լ Փարիզ, թե՞ ոչ. առջետում դեկտեմբերի 10-ն էր՝ ցուցահանդեսի բացման օրը, որտեղ պետք է ներկայացնի իր գեղանկարներից երկուսը: Հրավիրյալ նկարիչների շարքում նաեւ ինքն է՝ լավ առիթ, որ արցախյան չճանաչված պատվի երկրի արվեստագետը կենդանի ներկայություն ունենա եվրոպական խոշոր ցուցահանդեսին, որի ընտրյալ մասնակիցների ընդհանուր թիվն անցնում էր հարյուրից, իսկ նրանցից միայն քսանին էին հրավիրել Փարիզ: Դե, եթե գնում է, ուրեմն՝ «թող տեսնեն ոչ միայն իմ նկարները, այլեւ՝ ինձ. ես շատ բան կարող եմ գծագրել մեր ու եվրոպական կյանքի ներհակության ու ներդաշնակության մասին: Բարեկեցությունից, խաղաղությունից, նաեւ մեծամտությունից շփացած եվրոպացիներին շիտակ գույներով կպատմեմ, թե ինչ է պատերազմը, մահը, ազատությունը, եղբայրությունը, քրիստոնեկան անեղծ հավատքը, ազգային ու մարդկային արժանապատվությունը...»՝ մեկնելու օգտին խորհում էր Մովսեսը: Բայց իրեն կաշկանդող հանգամանքերն ավելի զորեղ էին կարծես. «Ո՞նց գնամ էս իրավիճակում, երբ աղետի սովերն ընկած է մեր երկրի

ու ժողովրդի վրա... Ո՞նց տարաբախտներին թողնեմ էս պատուհասի մեջ, թեկուզ մեկ շաբթով... Չե՞ն ասի, որ սառնասրտորեն լքում եմ իրենց, թեպետ իմ ներկայությունը փրկարար մխիթարություն չէ նրանց համար... Չե՞ն ասի, որ տաքուկ անկյուններով եմ վազվզում, երբ առջեւում անհայտներով լեցուն ձմեռն է, իսկ շուրջդ հոգեպես ու մարմնապես ցրտահարվող հազարավոր մարդիկ կան... Ախր շատ կարետոր է ամեն մեկի ներկայությունն էս պահին»՝ մտատանջվում էր արվեստագետը: Մինչ նա տենդագին երկմտանքի մեջ էր, հանգուցալուծումը վրա հասավ ինքնաբերաբար. ցուցահանդեսի համակարգողն էլեկտրոնային փոստով նամակ էր գրել Մովսեսին եւ ներողություն հայցելով հայտնել, որ աշխարհում մոլեգնող թագավարակի պատճառով ցուցահանդեսը հետաձգվում է անորոշ ժամանակով, «մինչեւ հաջորդ տարվա բարեպատեհ որեւէ ամիս»: Մովսեսն այդ պահին նստած էր արվեստանոցում, նոթբուքի առջեւ, կարդում էր նամակը եւ քթի տակ մանրիկ ծիծաղում:

– Ներկա պահին՝ ճիշտ լուծում, – բաժրաձայն մենախոսեց նա, ապա թեթեւացած շունչ քաշեց եւ մեկ անգամ եւս հավատաց, որ Աստված գոյություն ունի, եւ Նա հովանի է խղճի ու արդարության ետեւից գնացողներին:

Արդեն կանոնավորել էր իր ռեժիմը՝ վաղ առավոտից գալիս է արվեստանոց եւ աշխատում: Բայց վերգտած աշխատակարգը նրան մեծ դժվարությամբ էր տրվում. ամեն անգամ տնից դուրս գալիս մտահոգ նայում էր կենվորներին եւ հերթական անգամ կարեկցում նրանց, թեպետ շատ բախտակիցների համեմատությամբ նրանք տեղավորված էին առավել հարմարավետ եւ հոգատար տանտիրոջ մոտ: Մովսեսը գրեթե ամեն օր մթերքներ էր առնում «հաղորդյան հնգյակի» համար, իսկ կրտսեր կենվորների՝ Ավոյի ու Դավոյի հետ նկարչություն էր պարապում, երբ իր մեջ դեռ ուժ էր մնում տուն վերադառնալուց հետո: Պարզվեց, որ տիկին Սոնան տնային լավ տնտեսուհի է. նա մաքրություն էր անում երկհարկանի մեծ առանձնատանը, տարատեսակ բանջարեղեն թթու դնում իր

հողի մարդկանց վայել վարպետությամբ եւ ւսիրժեղի ուտելիքներ պատրաստում՝ միշտ լավագույն բաժինը հատկացնելով տանտեր Մովսեսին: Սոնայի ամուսին Երվանդը մի երեկո, երբ երկուսով ընթրում էին, կես-կատակ, կես-լուրջ տանտիրոջն ասաց, որ իր կինը «երբեւէ այդքան ուշադիր չի եղել իր հանդեպ», որքան ուշադրություն հիմա Մովսեսին է հատկացնում. անմեղորեն խանդում էր, սակայն՝ առանց հետեւանքներ հարուցող խանդի: Մովսեսն ամենից շատ կարեկցում էր հենց Երվանդին, բայց ոչ նրա համար, որ զուր մտատանջվում է Սոնայի՝ իր հանդեպ ցուցաբերած սիրալիրության համար (նա այդ անում է ավանդապահորեն ու կանացի բնազդով. գլխավոր պատիվը, նախ, պետք է ընտանիքի գլխավորին մատուցվի, հիմա իրենք ընտանիք են նաեւ տանտիրոջով), այլ՝ որ ամբողջ կյանքում, առավոտից իրիկուն գործին անձնատուր այս մարդը պարապուրդի է մատնվել, եւ հիմա աչքի առաջ թորշոմում ու դժգունում է: Մովսեսի «ախտորոշմամբ»՝ Սոնայի ամուսնու իրական երջանկությունը հենց գործն է, մնացյալ ամեն ինչ աճանցյալ է դրանից: Ճիշտ է՝ Երվանդն ամեն օր Մովսեսի առանձնատան այցում ինչ-որ բանով զբաղվում է՝ ծառերն է էտում, կրկին փխրեցնում ծառատակերը, հեռացնում մոլախոտերը, անգամ, չգիտես որտեղից, ազնվամորու կարճիկ տնկիներ էր բերել ու փողոցին հարող ցանկապատի երկայնքով տնկել, սակայն այդ ամենը ծանրակշիռ գործերի սովոր մարդու համար մանկական խաղ էր: Նա ուզում էր վերստին վերադառնալ իր ընդարձակ հողատարածքներն ու հանձնվել ֆերմային, իր գյուղտեխնիկային ու բերքին, որոնք հիմա են նրա, են մյուսների աչքին անհետացող տեսիլքի են վերածվել: Մովսեսը տագնապում էր, որ պարապությունը Երվանդին կարող է փորձանքի մատնել, ուստի սկսեց հարցուփորձել իր ծանոթներին՝ նրա համար աշխատանք գտնելու հույսով, բայց դեռ լուրջ առաջարկություններ չկային՝ հարիր այդ անխոնջ մշակին:

Մովսեսը «հադրության» խոհերի մեջ էր, երբ, քաղց զգալով, սկսեց մտազբաղ բացել ուտելիքի փաթեթները, որ տիկին Սոնան



էր պատրաստել իր համար: Նա արդեն քանի օր կեսօրահացի տոպրակ էր դնում նկարչի ձեռքին («քաղցած չեն նկարի»), մի հոգատարություն, որ ո՛չ Մովսեսը, ո՛չ Երվանդը նախկինում չէին ճաշակել: Նկարիչը խնդմնդաց քթի տակ, նայեց սեղանին դրված սննդարար ուտելիքին (նրբաբլիթներ, տապակած ձուկ, կանաչեղեն, պանիր, թթու, հաց ու թերթերուկ) եւ ափսոսաց, որ սեղանակից չունի: Հանեց հեռախոսը, որ զանգի Արսենին, բայց իրեն այլ հյուր էր վիճակված: Նույն պահին ներս մտավ մանկավարժ Սիմոն Վարազյանը եւ տեսնելով արդեն պատրաստ հացի սեղանը, մեջտեղ դրեց իր բերած տնական թթի օղու շիշը:

– Էս էլ իմ կողմից, եղբայր,– ընկերաբար ասաց Վարազյանն ու ողջագուրվեց նկարչի հետ:

– Բարով տեսանք, ընկեր Սիմոն,– Մովսեսը այլոց պես թռչակառու մանկավարժին, խորհրդային շրջանից ժառանգած սովորույթով, դիմում էր «ընկեր»-ով:– Ո՞նց ես, առողջությունից հո շատ գանգատներ չունե՞ս...

– Դեռ ոչ, փառք Աստծո: Դե, հաճելի չէ եւ ծերանալը, եւ միաժամանակ հիվանդ լինելը... երկու չարիք՝ մեկտեղ:

– Հա, ճշմարիտ, ուզում եմ քեզ միշտ առողջ տեսնել ու լավատես:

– Առաջինը խոստանում եմ, երկրորդը՝ իմ ուժերից վեր է, հիմա ո՞նց կարելի է լավատես լինել...

Ու սկիզբ առավ առօրեական դարձած մի խոսակցություն, որտեղ հոռետեսությունը միշտ ծանր նժարին է իջնում: Մանկավարժը խնամքով թվարկում էր մտահոգիչ փաստեր, որոնք գրեթե ամենօրյա ռեժիմով պղտորում էին արցախցիների առանց այն էլ խարխլված կյանքը. ակներեւ փխրուն էր հրամցված խաղաղությունը՝ շարունակական կրակոցներ ու սադրանքներ սահմանին, եւ՝ զոհեր, անգամ խաղաղապահների աչքի առաջ: Հակառակորդի հենակետերը ուղղակի ցցվել էին ճանապարհների ու բնակավայրերի հարեանությամբ, Հայաստանի հետ միացնող միջանցքը չու-

ներ նախկին անվտանգությունը, թեեւ ռուսական տասնյակ ուղեկալները տեղակայված են դրա երկայնքով:

Մովսեսն ու Սիմոնը հաց էին ուտում եւ օղի խմում անտրամադիր, վերահաս պարտականություն կատարողի պես: Նկարիչը մեկ-մեկ փորձում էր աշխուժացնել մթնոլորտը եւ հին մանկավարժին մղել փոքր-ինչ լուսավոր խոհերի՝ ապարոյուն, «փորձված շանը քուչի-քուչի չեն անի»: Սիմոնը երրորդ բաժակը խմելուց առաջ Մովսեսին հորդորեց լինել ավելի քան իրատես, իսկ դրա համար պետք է լայն բացված աչքերով նայել շուրջը եւ երկրին առնչվող իրադարձություններին, այլեւ՝ սթափ հայացքով զննել պատմությունը, որ մնում է «անգերազանցելի ուսուցիչ ու հրահանգիչ»։ իր մասնագիտությունն է, ինքը լավ գիտի պատմության արժեքը:

Մովսեսը կանգ առավ նախքան երրորդ բաժակը, նա արդեն հասել էր իր սահմանագծին՝ հավելյալ սպիրտային խմիչք իրեն թույլ չի տալիս, հատկապես՝ թթի օղի, որի թնդությանը կարող են դիմանալ միայն փորձառուները: Եվ մտավախություն ունեւր, որ այդ «առյուծի կաթը» խմելով՝ Սիմոնը կտաքանա վերջնականապես եւ զրուցակցին կխեղդի ամենքին ուղղված մեղադրանքների հեղեղի մեջ, գուցեւ՝ անհարկի աղմկի ու վեճ սարքի. նրա դեմքն արդեն մի փոքր շառագունել էր, ինչը նշանակում էր, որ օղին իր անվրեպ ներգործությունն էր ունենում հուզախոռվ մանկավարժի վրա: Բայց՝ ոչ, Սիմոնը հերթական բաժակը պարպելուց հետո դարձավ առավել լրջախոհ, նրա խոսքն ավելի հավասարակշռվեց, իսկ հայացքը դարձավ սեւեռուն ու խորաթափանց: Մովսեսը չգիտեր, որ կարող է լինել նաեւ նման կերպարանափոխություն:

– Գիտե՞ս ինչ, եղբայր Մովսես, քո էսօրվա նկարչությունը բավարար չէ, որ մարդկանց հասկացնենք էն, ինչ պարտավոր են իրենք իմանալ ու հասկանալ,– ներողամիտ տոնով ասաց մանկավարժը:

– Ի՞նչ նկատի ունես, ընկեր Սիմոն,– անակնկալի եկած արձագանքեց Մովսեսը:

– Պատմությունը սիրում է, որ իր մասին ոչ միայն խոսեն, այլեւ

ցույց տան իր խորքը, իր ներսը, անրջական պատկերը:

– Այսինքն՝ կհնոն ու թատրոնը նկատի ունեք...

– Նաեւ՝ դա... Դե, դու քո նկարներում գրեթե պատմությանը չես անդրադառնում. դա նախասիրության հարց է, քո իրավունքը, բայց կարելի է, չէ, որ կինոյի ու թատրոնի մարդիկ հաճախ պատմական լուրջ թեմաներ արծարծեն՝ ազնիվ ու արդար մեկնաբանությամբ, ոչ թե վերապատկերեն անցյալի դեպքերը...

– Համամիտ եմ:

– Իսկ ինչո՞ւ միշտ սպասել, որ դա ուրիշներն անեն, կարելի է, չէ, նաեւ մեր ունեցած կարողություններով ինչ-որ բան ստեղծել, թեկուզ դա էնքան էլ արհեստավարժ չերեւա:

– Եթե շատ կարեւոր ասելիք կա, անշուշտ:

– Լավ, գլուխդ անտեղի չցավեցնեմ իմ երկար-բարակ նախաբանով, ասեմ, թե կոնկրետ ինչի համար եմ եկել:

– Ուշադիր լսում եմ, ընկեր Սիմոն:

– Դու գիտես, որ կրտսեր աղջիկս՝ Նանեն, սովորում է Երեւանի թատերական ինստիտուտի բեմադրական բաժնում: Նա ավարտական կուրսում է, դիպլոմային աշխատանք պիտի անի: Երեկ զանգել ու հարցնում է, թե լավ ու հետաքրքիր պիեսի տեղ գիտե՞մ... Միանգամից ասացի, որ ձեռնարկի էնպիսի գործ, որը, թեկուզ փոխաբերաբար, ցույց տա էսօրվա մեր ողբերգության ու տառապանքի պատճառները. դա արվեստագետի համար շատ ազնիվ կլիներ, նաեւ՝ այժմեական հնչողությամբ աչքի կընկներ: Նանեն հակադարձեց, թե ներկան ճշմարիտ պատկերելու եւ մեկնաբանելու համար դեռ պետք է ժամանակ անցնի, որ թացն ու չորը կարողանանք զանազանել... Էնքան էլ համաձայն չեմ՝ մենք հիմա էլ լավ տեսնում ենք մեր պարտության պատճառներն ու մեղավորներին... Պնդեցի, որ էսօրվա նախադեպերը կան պատմության մեջ, շատ ջրեր են հոսել էդ օրերից, ուստի հին անցքերից կարելի է լիովին կշռադատված մի լավ գործ ներկայացնել: Նա խնդրեց, որ էդպիսի մի պիես գտնեմ եւ ուղարկեմ իրեն, մի շաբաթվա մեջ:

– Գտա՞ք...

– Իսկ ես չէի էլ փնտրել, այն կար իմ գրապահարանում, արդեն երեսունհինգ տարի: Հիշում ես մեր լուսահոգի գրող Միքայել Ասպարյանին...

– Հա, վաղամեռիկը... Տաղանդավոր էր, ազգային ցավով տառապող:

– Էդ տառապանքից երեւի շուտ գնաց, ութսունհինգ թվին, նույնիսկ մեր Շարժումը չհասցրեց տեսնել... Նա իմ համակուրսեցին էր, մենք շատ մտերիմ էինք: Մեռնելուց երկու ամիս առաջ ինձ է տվել մի պիես եւ խնդրել, որ մոտս պահեմ, մինչեւ բեմադրելու կամ հրատարակելու ժամանակները գան. ես մի տեսակ նրա գրական խորհրդատուն էի... Նանեի գանգից հետո իսկույն հիշեցի ընկերոջս գրվածքը: Առավոտյան կրկին կարդացի. ապշած եմ, որ Միքայելն էդքան շիտակ ու հեռատես է գտնվել իր գրապատմական մեկնությունում. նրա զգայուն անցյալատեսությունը մեզ օգնում է արժանիորեն գնահատել բաղձալին ու չկատարվածը, հենց չկատարվածը՝ մեր գոյապայքարի ընդհանուր համատեքստում: Առաջին հայացքից՝ դա պատմական ռոմանտիկա է, իսկ ես տպավորություն ունեմ, որ պիեսը, արդի եզրաբանությամբ՝ սյուրռեալիստական պատմականության նմուշ է:

– Այսինքն՝ գերիրական պատմություն կամ՝ գերպատմականություն... Հետաքրքիր է:

– Ինչպես կուզես... Ահա էդ պիեսը,– ասաց եւ Մովսեսին մեկնեց մի թղթապանակ:– Խնդրում եմ՝ մինչեւ Նանեին ուղարկելը կարդաս: Գուցե պատմական մեկնություններում անընդունելի ծայրահեղություններ է թույլ տվել Միքայելը, հետմահու նրան մեղադրելու առիթ չտանք:

– Դուք ինձ լուրջ քննադատ եք համարում, ընկեր Սիմոն:

– Դու առողջ կենսահայեցողություն ու խորատեսություն ունես, Մովսես, դու ոչ միայն պայծառ գեղագետ ես, այլեւ՝ հրաշալի հայմարդ, ես հավատում եմ քո հոգեւոր աշխարհին,– անկեղծացավ

նախկին մանկավարժը՝ առանց հաճոյանալու նշոյլի:– Նանեի հետ շնորհակալ կլինենք ճշմարիտ դիտողություններիդ համար:

– Ես էլ եմ շնորհակալ, ընկեր Սիմոն, որ էդքան վստահում ես ինձ: Անպայման կկարդամ:

– Ապրես, Մովսես ջան, վերջացնես՝ զանգիր:– Նա թափով դատարկեց մի բաժակ թթօղի եւս, մի կտոր թթու վարունգ դրեց բերանը եւ շտապեց դուրս:– Տոնեսոյթյուն, եղբայր,– արդեն դռան մոտ, առանց ետ շրջվելու, արտիստիկ գոչեց Վարազյանը:

Մովսեսը չհասցրեց հյուրին ուղեկցել մինչեւ ելքը: Նստած տեղում անհանգիստ շուռումուռ եկավ, ապա բացեց թղթապանակը. ձեռագիր է՝ արդեն խունացող թղթերի վրա: «Խեղճը չի էլ հասցրել մեքենագրության տալ»՝ անցավ մտքով, եւ բարձրաձայն կարդաց խորագիրը.

– «Վրեժի հրեշտակները»:

Թերթեց՝ հարյուր էջ ձեռագիր, բայց վայելչական ձեռագիր, գրեթե գեղարվեստական գծագրությամբ. «Միթե տղամարդը կարող է էսպիսի վայելչագիր ունենալ»՝ զարմացած խորհեց նկարիչը եւ թեթեւակի, բարի խանդ զգաց այդ սքանչելի գրի հեղինակի հանդեպ: Կարդաց առաջին էջը, երկրորդը... Ինքն էլ չզգաց, թե ինչպես հափշտակված ու անընդմեջ ընթերցեց ամբողջ պիեսը: Երբ շրջեց վերջին էջը, գրեթե ամբողջ մարմինը քրտնապատ էր, եւ մրսածությունից խուսափելու համար, վճռական քայլ կատարողի պես, պարպեց դիմացը «տրտմող» թթի օղիով բաժակը. այն երրորդն էր օրվա մեջ՝ իսկական ռեկորդ: Մովսեսը պարուրվել էր մի զգացողությամբ, որը հուսավառության ու գոհունակության, տղամարդկայնության ու ներդաշնակության, հայրենապաշտության ու ինքնասիրության, անվեհերության ու արկածախնդրության խառնուրդ էր, եւ որը հայրական սիրո պես զղղանջում էր իր հոգում՝ Սուրբձննդյան տոնակատարությանը կանչող զանգի հանգույն: Մովսեսը թղթապանակը փակեց ու տեղավորեց տոպրակում, հագնվեց եւ կեսօրահացի սեղանը թողնելով «ընթացքի» մեջ, փու-

թով ելավ դուրս: Մտավ մոտակա տպագրատունը եւ դեռ հստակ չիմանալով՝ ինչու, պատճենահանեց Ասպարյանի պիեսը, մի քանի սիրալիր խոսք նվիրեց իրեն սպասարկած «սեւ աստղով» աղջկան, պատճենը տարավ ու թողեց արվեստանոցում, իսկ բնագիրն առած՝ աճապարեց Սիմոնեց տուն: Տասնհինգ րոպե անց նա «կոլցեւոյի» իննհարկանի շենքերից մեկի հինգերորդ հարկի հարթակին էր: Նախկին մանկավարժը բացեց դուռն ու շեմին տեսավ կարմրատակած Մովսեսին:

– Ինչ է պատահել, Մովսես, – տազնապած հարցրեց Վարազյանը եւ թեւից բռնելով՝ ներս տարավ անկոչ հյուրին:

– Կարդացի, ընկեր Սիմոն: Շատ արժեքավոր գործ է, հոյակապ... Միքայել Ասպարյանը կարելուր պատգամ է թողել: Անհապաղ պիտի բեմադրել, – իր կարծիքը հակիրճ ամփոփեց Մովսեսը եւ թղթապանակով տոպրակը հանձնեց նրան:

– Հա՛... Ինչ փառահեղ բան ասիր, Մովսես, թե չէ ես վատ լուր գուշակեցի: Աստված քեզ երկար կյանք տա: Դե, արի նստիր, թեյ խմենք:

– Չէ, շտապում եմ, տուն պիտի գնամ, իմ կենվորներին բան եմ խոստացել, պիտի տանեմ: Դու էդ պիեսը շտապ ուղարկիր Երեւան եւ Նանեից պահանջիր, որ անպայման բեմադրի: Եթե պետք լինի, նրան կօգնենք, – ասաց ու մտքի ետին շարժով իր համար արձանագրեց, որ Սիմոնը տանը մենակ է, «չէ, միայնակ է...»:

– Շատ լավ, եղբայր, հենց առավոտը կուղարկեմ եւ խոսքերդ հեռախոսով մեկիկ-մեկիկ կփոխանցեմ աղջկաւ:

– Բարի... դե, ցտեսություն, – ասաց Մովսեսն ու մոտեցավ ելքին:

– Սպասիր, – ինչ-որ բան հիշելով՝ գոչեց Սիմոնը, մտավ կողքի սենյակ եւ վերադարձավ մի տոպրակ ձեռքին: – Վերցրու, թթի չամիչ է: Թթի օղուց հետո պետք է թթի չամիչ ուտել, բժիշկ Ղուկասյանն էր ասում, – զվարճացավ նախկին մանկավարժը:

– Հա, Ղուկասյանը նման հարցերի գիտակ էր, – վերցնելով

տոպրակը՝ մի երկվայրկյան, Սիմոնի հետ համահունչ, խնդմնդաց Մովսեսը:– Իսկ ո՞ր են շուշեցի ձեր տնվորները...

– Երեկ տեղափոխվել են մի ազատ բնակարան, վարձով... պետությունն է փոխհատուցելու: Ասացին, որ իրենց համար էդպես ավելի հարմար է, բնակարանում միայն իրենք կլինեն:

– Ուրեմն մենակ ես մնացել:

– Չէ, տղաս էստեղ է, երկուսով ենք: Իսկ կենվորներիդ դեռ քեզ մոտ են:

– Հա, ես նրանց բաց թողնելու դեռ միտք չունեմ,– ասաց ու շտապեց դուրս:

– Դու փառահեղ մարդ ես, Մովսես,– ետեւից կանչեց Սիմոնը:

Աստիճաններով իջնելիս նկարիչը միառպահ մտովի քննեց մանկավարժի կացությունը. «Կինը մահացել է վաղուց... իրավաբան տղայի ու հարսի հետ է ապրում թոռներով... Երեւի հարսը երեխեքի հետ դեռ չի ուզում վերադառնալ Երեւանից... կնոջս պես»: Բայց կնոջ բացակայությունը նրան անգթորեն ճնշող տխրության գլխավոր պատճառը չէր, անձնական իրականությունն այլևս ստորադասված էր այն կյանքին, որ մոայլորեն ավերախավում էր իր շուրջը՝ ասես աննկատ բարձրացող մի ծով, որ կարող է քեզ կլանել, եթե, թեկուզ անվարժ լողորդ, չկառչես որեւէ առարկայից: Մովսեսը մտաբերեց, որ ինքը ձեռքի տակ ունի նման առարկա, այն էլ ոչ մեկը, ուստի չի խեղդվի հորձանքի տակ, ապահովագրված է՝ հանգամանքներին բերմամբ, թե՛ ենթագիտակցական պաշտպանիչ մղումով... Իսկ միթե դա կարելի էր հիմա. նա ինչ-որ անանուն բավականությամբ հիշեց, որ իր հետ այս պահին բնակվում են տեղահանված հաղորդակները՝ այդ հրաշալի մարդիկ, եւ իրենք մխիթարում են միմյանց: Որ հարազատ քաղաքում է իր երիտասարդության հիասքանչ սերը՝ Նվարդը: Որ Աստվածամոր տաճարում կարող է հոգելու ու մարմնական ապաստան գտնել պայծառհոգի Տեր Միսաքի շուքի տակ: Որ գրեթե վերգտել է ստեղծագործական կամքը: Որ Արսենի պես հոգեշնորհ ընկեր ու-

նի, որ... «Հերիք է, ազահ մի եղիր, փառք տուր Աստծուն, որ ապա-  
վինելու էդքան կետեր ունես, եւ կարող ես առանց մեծ կորուստնե-  
րի դուրս գալ էս մթին թունելից: Շատ շատերը չունեն էդ կարգի  
թեկուզեւ մեկ հենարան... հապա ինչպէս են դիմակայում ու գոյա-  
տելում նրանք»՝ կարեկցանքով խորհեց Մովսեսը, երբ արդեն ներս  
էր մտնում լուսավոր եւ ապրանքներով նորեն լեցուն սուպերմար-  
կետը: Մի պահ վարանքով կանգ առավ հրուշակեղենի բաժնում,  
կամենալով վերհիշել, թե ինչ պետք է գնի:

– Հա, երեխեքին գրքեր էի խոստացել,– բարձրաձայն մտաբե-  
րեց նա եւ ներողամիտ ժպիտ պարզեւեց երիտասարդ վաճառողու-  
հուն, որ կողքին կանգնած՝ պատրաստվում էր սպասարկել:

– Իսկ դու գրքեր կարդո՞ւմ ես, օրիորդ,– անսպասելի հարցրեց  
Մովսեսը վաճառողուհուն:

– Գրքեր... չէ՛, ժամանակ չի լինում... ոչ էլ տրամադրություն:  
Բայց առաջ շատ էի կարդում:

– Լավ գրքեր կարդա, կտեսնես, թե ներքուստ որքան ապահով  
ես զգում Ձեզ:

– Շնորհակալ եմ խորհրդի համար, կփորձեմ:

– Ես քեզ լավ գրքեր կարող եմ տալ... հարուստ գրադարան ու-  
նեմ:

– Դե, ձեր հաջորդ այցին էդ գրքերից մի երկուսը բերեք,– սե-  
թեւեթեց ջահել ու սիրունատես վաճառողուհին:

– Պայմանավորվեցինք,– աշխույժ արձագանքեց Մովսեսը:–  
Տոնեսություն, գրասեր օրիորդ:

– Տոնեսություն, պարոն Մելիքյան:

Մովսեսը մի փոքր անակնկալի եկավ, որ անձանոթ աղջիկը ճա-  
նաչեց իրեն: Միշտ էլ հաճելի է, երբ քեզ ճանաչում ու պատվում են,  
բայց երբեմն էլ անհարմարության զգացում ես ունենում, հատկա-  
պես այն ժամանակ, երբ, կնամեճար ու գեղապաշտ լինելով, հմա-  
յիչ աղջիկների հետ հաճոյաբանում ես առանց ետին մտքերի, եւ  
պարզվում է, որ զրուցակիցդ մոտիկ ծանոթներից մեկի բարեկամն



է: «Դե, Աստված իրենց հետ, թող ամենամեծ մեղքը դա լինի»՝ խոհածեց Մովսեսը եւ բարձրացավ դեպի մոտակա գրախանութը, որ «կոյցեւոյից» քիչ վերեւ է գտնվում, մինչեւ ավտոկայան հասնելը: Պատերազմից հետո դեռ ուռք չէր դրել այնտեղ, մի տեսակ մեղավոր զգաց իրեն, որ ուշ է այցելում քաղաքի՝ իր սիրելի վայրերից մեկը: Թեեւ գրախանութը փոքր է, Մովսեսն իրեն այստեղ միշտ էլ ազատ ու յուրային է զգացել, քանի որ «շրջապատված ես գրքերով եւ կարող ես զվարթ գրույցներ ունենալ գրավաճառ Սամվելի հետ», լսել նրա նոր զվարճապատումները:

Երկուսն էլ ուրախ էին միմյանց տեսնելով: Կարճ հարցուպատասխանով արագ հավաստիացան, որ ողջ-առողջ են եւ պատերազմից իրենք ու հարազատները ֆիզիկապէս չեն տուժել:

– Լսել եմ, որ ձեր արվեստանոցին արկ է կպել, պարոն Մովսես... Կարողացմք վերանորոգել, թե՛ ոմանց պես...

Մովսեսը գիտեր այդ տգեղ երեսոյթի մասին, ուստի անմիջապէս կանխեց Սամվելին.

– Չէ՛, ես քաղաքապետարանի հոյսին չեմ մնացել, վերանորոգել եմ իմ ուժերով:

– Լավ է, թե չէ մարդիկ կան, որ ջարդված մի ապակու համար գնում են քաղաքապետարան ու հերթագրվում, որ գան տեղը դնեն:

– Հա, ցավալի է: Թող կառավարությունը խոշոր ավերածությունները վերականգնի, որոնք տերերի ուժերից վեր են, փոքր վնասներն իրենք կարող են վերականգնել: Եթե մարդ իր տան ու օբյեկտի առաջին պահապանը չէ, ուրիշներից իրավունք չունի բան պահանջելու:

– Դե արի ու էդ պարզ ճշմարտությունը անբաններին ու աչքածակներին բացատրիր,– զայրացավ Սամվելը:

Նա, տեսնելով նկարչի հոգնած-մտազբաղ դեմքը, խուսափեց օրվա հուզող հարցերը քննարկելուց, ինչպէս սովորաբար անում էր նախկինում, եւ խոսակցությունը թեքեց ընտանեկան կացութեան

շուրջ, բայց ընթացքում սողանցք գտավ եւ մի երկու զվարճապատում հրամցրեց իր հարգարժան հաճախորդին: Մովսեսին զվարթացրեց Սամվելի հատկապես այս անեկդուտը.

- Երկու ընկեր հանդիպում են, նրանցից մեկն անտրամադիր ու մռայլ էր: Մյուսը հարցնում է՝ «Ինչ է պատահել»: «Ըստ «Կամաստորայի», - պատասխանում է մռայլատես ընկերը, - կնոջ մարմնի վրա կա մի կետ, որին եթե դիպչում ես, սկսում է շան պես հաչել... Մի քանի օր, պարզվում է, ես, չիմանալով, կանում էի կնոջս էդ կետին»:

Մովսեսն էլ փորձեց վերհիշել ինչ-որ զավեշտապատում, սակայն զրուցակցին մատուցելու հետաքրքիր բան չմտաբերեց:

- Լավ, Սամվել եղբայր, ես իմ գնելիքը վերցնեմ ու գնամ:

Մովսեսը գրադարակից հանեց ու վաճառասեղանին դրեց «Հայ հին վիպաշխարհը», «Հայ ժողովրդական հեքիաթների գանձարան», «Դպրոցական հանրագիտարան», «Մեծերի կյանքից» գրքերը, վճարեց եւ պատրաստվեց գնալ: Ապա ինչ-որ բան խորհեց եւ քթի տակ ժպտալով՝ վերցրեց նաեւ «Հայկական խոհանոց» մեծ ու պատկերազարդ գիրքը. «Սա էլ թող նվեր լինի տիկին Սոնային, նա էնքան հոգատար է իմ հանդեպ... Երվանդի խանդը թող մի քիչ ուժեղանա»՝ մտքում զվարճացավ Մովսեսը:

Գրախանութից ելավ լավ տրամադրությամբ, գոհ՝ գնումներից. «Երեխաները կուրախանան»՝ մտածեց նա՝ շարժվելով դեպի ներքաղաքային երթուղայինների կանգառը: Արդեն երեկո էր, բայց քաղաքի անդադրում երթեւեկությունը չէր նվազել, թվում էր՝ արագորեն տեղաշարժվող այդ բազում լույսերը ավետում են նոր կյանքի սկիզբ, իսկ իրականում գիշերային հոծ երթուղարձի մեջ առողջ մոտիվները սակավ էին՝ արյան մեջ պակասած թթվածնի պես: Աշնանավերջի օրը ոչ մի խոստում չունեի ժամանակի մեջ դեգերող մարդկանց, դեռեւս ետպատերազմյան շոկի մեջ՝ նրանք առավելս ապավինել էին սեփական դիմադրողականությանը, ներզգայությանն ու ճակատագրին: Մի քանի րոպե կանգնելով՝ ցուրտ զգաց,

ապա հիշեց, որ ձեռքի տակ եղած դրամական միջոցները վերջանում են, մինչդեռ պետք է էլի որոշ ժամանակահատված հոգ տանել «հաղորդյան հնգյակին», պիտի նաեւ գումար ուղարկել Երեւանում լուրջ կնոջը, ով երեկ զանգել եւ ասում էր, որ աղջկա հաշվին է մնացել: «Բան չկա, Աստված մեծ է, մի տեղից լույս կծագի»՝ իրենց թաղամաս տանող ավտոբուսը նստելիս՝ ինքնագոտեպնդվեց Մովսեսը: Իսկ «լույս» չծագելու դեպքում կգնա ու բանկից կհանի «անձեռնմխելի» դրված ավանդը, որ նախատեսված է «սեւ» ժամանակների համար:

Հաջորդ օրը գրեթե տոնի պես եղավ արվեստանոցում. պարամունքի էին եկել ստուդիայի սանուհիները՝ առաջին պարամունքը պատերազմից հետո, ինչն իսկական արեւային ուրախություն պատճառեց Մովսեսին: Նա իրեն զգում էր նոկաուտ կրած այն բռնցքամարտիկի պես, որ արագ ոտքի է ելել եւ կամենում է մենամարտն ամեն գնով ավարտել հաղթանակով: Կանխատեսում էր, որ հենց այդպես էլ կլինի, սակայն դրա համար մարտնչել է պետք ուժերի գերլարումով, ամբողջ տաղանդով ու հավատով: Կարողանամ... Բայց միթե նրան տրված է այլ ընտրություն:

Մովսեսը սանուհիներին հանձնարարեց նկարել իրենց հոգու մեջ առկայծող ամենանվիրական հույզն ու մտածումը եւ այն հույսը, որ այդ օրերին իրենց սնում էր կենսարար ավիչի պես: Նա երբեւէ այդպիսի ընդհանրական ու վերացական առաջադրանք չէր տվել սաներին, միշտ որոշակի էր հանձնարարություններում. այդօր եւ այդու կանխազգացում ուներ, որ աղետյալները, նախ, պիտի վերալիցքավորվեն ներքուստ, նրանք սեփական ձեռքով պիտի վառեն իրենց ներքին փարոսները, ապա նոր կողմնորոշվեն արտաքին աշխարհի ուղենշաններով: Ամենից շատ անհանգստացած էր Սոֆիկի համար, որի եղբայրն անհետ կորել է պատերազմում, եւ որոնումները դեռեւս ապարդյուն էին: Սեւազգեստ աղջիկը նստել էր նկարակալի առաջ եւ տրտմագին մտմտում էր, թե ինչպես կարող է պատկերել իր ներաշխարհի դժգունած տեղանքը, այնտեղ

ծիկրակող պսպղուն ինչ-որ քարեր թեկուզ:

Եկավ Արսենը, նստեց Սոֆիկի կողքին եւ կամացուկ սկսեց խոսել նրա բացակայության ժամանակ, եղբոր անհետանալու լուրն առնելուց հետո, իր, վարպետ Մովսեսի, աղջկա հոր ապրումների ու տագնապների մասին եւ որպես եզրահանգում շնջաց, որ եթե «սեր չի լինելու այս ամեն ինչում, ապա կորած են մնալու ոչ միայն եղբայրը, այլեւ իրենցից շատերի երազանքներն ու ապագան»: Արսենը ենթագիտակցորեն գործի դրեց իր երեւակայությունն ու պերճախոսությունը, եւ այդ համակրելի աղջկան, որի հանդեպ զգում էր աճող խանդաղատանք ու տաքուկ հետաքրքրություն, հանպատրաստից առաջարկեց ստեղծագործական մի թեստ՝ հոգեբանորեն փոխվել տեղերով, ինքը թող նկարի որպես Արսեն, իսկ վերջինս կնկարի որպես Սոֆիկ: Տարօրինակ այդ գաղափարը դուր եկավ սկսնակ նկարչուհուն, եւ նա շուտով, նախ, մատիտանկարում, ապա եւ ջրաներկ գույներ էր խառնում մեծադիր թղթի վրա գծագրվող էսքիզին: Արսենն էլ գործի կպավ իր նկարակալին, եւ երբ տեսավ, որ Սոֆիկը կլանվել է աշխատանքով, ցած դրեց վրձինը եւ մոտեցավ Մովսեսին, ով աշխատում էր մի նոր, մեծ ու տարակերպար կտավի վրա: Միշտ էլ հիացել է վարպետի ստեղծագործական թափով ու տեսադաշտով, ձգտել հայացքի նման լայնածիրության, սակայն հասկացել է, որ իրեն այլ ձիրք է տրված, եւ ինքը պետք է լողա սեփական ջրերում, ներսուզվի իրեն հասու մոգության մեջ, որ կարող է ոչ պակաս կախարդական ու գրավիչ պատկերների ծննդյան առիթ հանդիսանալ: Այնուհանդերձ, Մովսեսի նկարները նրա համար մնում էին ներշնչանքի հարազատ աղբյուր, եւ որքան էլ նրանից հեռանա իր նկարչական աշխարհով, միեւնոյն է՝ չի կարող ուրանալ, թե արվեստային իր գլխավոր արմատները որտեղից են ձգվում, ոգեղեն ինչ սնունդ է նրան դարձրել ջլապինդ, բայց եւ զգայուն, արարող անհատ՝ ամեն կենաց ցավից զնգացող լարի պես: Ձեռքերը խաչած՝ Արսենը մի երկու րոպե եւս սեւեռուն նայեց գոյավորվող նկարին եւ, ասես թե վերջակետելով ինչ-որ կիսատ

քննարկում, Մովսեսին հանգիստ հայտնեց որոշումը.

– Վարպետ, ես վերադառնում եմ Մարտակերտ:

Թվաց, թե Մովսեսն այնքան է խորասուզված աշխատանքի մեջ, որ չլսեց Արսենին. ոչ, իրականում նա ջանում էր խաղաղեցնել միանգամից իրեն համակած անհանգստությունը:

– Արտակարգ բան է պատահել,– ի վերջո արձագանքեց՝ չնայելով զրուցակցին:

– Մարտակերտի առաջին դպրոցում կերպարվեստի դասատուի աշխատանք են առաջարկում, լրիվ հաստիքով:

– Ուրեմն ինչ-որ բան է պատահել... Իսկ մի երեք-չորս տարի առաջ քեզ նույնիսկ կես հաստիքով չէին տեղավորում:

– Հա... Նախկին դասատուն զոհվել է... տեղը թափուր է մնացել:

Մովսեսն ընդհատեց նկարելն ու շրջվեց Արսենի կողմը, ապա վրձինը թաց շորով մաքրեց եւ դրեց կողքի՝ ներկերով ու վրձիններով ծանրաբեռ սեղանիկին: Մի քանի վայրկյան մտախոհ նայեց երիտասարդ արվեստակցի աչքերի մեջ:

– Երբ ես գնում:

– Վաղը: Դպրոցում դասերը երկու օրից կվերսկսվեն:

– Լավ:– Եւ այդ միակ բառը Մովսեսն այնպես արտաբերեց, ասես հայտարարում էր մի դատավճիռ, որի կայացմանը ինքը չէր մասնակցել, սակայն ունեցել է անուղղակի ներգրավվածություն այն աներեւոյթ նիստին, որտեղ հավանություն են տալիս նմանօրինակ վճիռներին:

– Դե, չեմ թողնի, որ առանց ինձ շատ տխրեք, վարպետ, շուտ-շուտ կգամ... Մեքենա կառնեմ, խնդիր չի լինի:– Արսենը փորձեց մի փոքր զվարթություն հաղորդել դժվարությամբ ընթացող երկխոսությամբ:

– Հա, մեզ մենակ չթողնես,– չլռելու համար արձագանքեց Մովսեսը եւ նայեց Սոֆիկի կողմը. նա գլուխը կախ նկարում էր, իսկ մյուս աղջիկները, պարզվում է, ականջալուր էին իրենց զրույ-

ցին: Մովսեսն ու Արսենը համերաշխորեն ժպտացին կանացի հետաքրքրասիրության վրա, եւ իրենց խոսակցությունը շարունակեցին ավելի ցածրաձայն:

- Ես շուտ-շուտ կգամ, նրան մենակ չեմ թողնի,- իր անելիքը պարզաբանեց Արսենը:

- Ճիշտ կանես, Սոֆիկը հրաշալի աղջիկ է, իսկ այժմ շատ դժբախտ է:

Թվաց՝ Սոֆիկը լսեց իր անունը եւ նկարակալին հակած գլուխը բարձրացնելով՝ նայեց տղամարդկանց կողմը. վիշտը նրա դեմքին դրոշմվել էր անհմուտ արված դաջվածքի պես, որը գուցեւ ջնջվի մոտ ապագայում, եթե...

- Եթե գտնվի եղբայրը, նա նորից կդառնա նախկին կենսախիռն աղջիկը,- վստահ կանխատեսեց Արսենը:

- Եթե գտնվի, այո:- Մովսեսը միառպահ ներսուզվեց խոհերի մեջ, ապա վերստին սթափվեց եւ ուշադիր նայեց Արսենին՝ սպասելով, որ նա նոր մանրամասներ կհայտնի իր մեկնումի հետ կապված, բայց երիտասարդ նկարիչն արդեն հայացքով երկխոսում էր Սոֆիկի հետ, ինչն այդ պահին նրա համար ամենահրատապ անելիքն էր:

Մովսեսը հեռացավ դեպի սրահի հեռավոր անկյունում դրված պահարանը եւ քիչ անց ետ եկավ նկարչական պարագաներով լի մի տոպրակ ձեռքին: Սպասեց, մինչեւ Արսենը կընդհատի իր հեռավար համրախոսությունը Սոֆիկի հետ:

- Ներկեր ու վրձիններ են, վերցրու,- եւ Մովսեսը Արսենին մեկնեց տոպրակը:- Դու այսուհետ ունես երեք գլխավոր գործ՝ դասավանդել, նկարել եւ հաճախակի այցելել Սոֆիկին ու մեզ... մինչեւ կգան նոր ժամանակներ:

- Շնորհակալ եմ, վարպետ,- հուզված արձագանքեց երիտասարդը:- Էդպես էլ կլինի:

- Ապրեն:- Մովսեսը հայրաբար համբուրեց Արսենի ճակատը եւ նրան մեջքից թեթեւակի հրելով՝ նշանացի հասկացրեց, որ գնա Սոֆիկի մոտ:

Երիտասարդը հնազանդ նստեց աղջկա կողքին եւ սկսեց շշուկով խոսել նրա պատկերածի՞, թե՛ այլ հարցի մասին, պարզ չէր: Իսկ Մովսեսը փորձեց վերստին անցնել նկարելուն, բայց մտափոխվեց եւ մոտիկ գրադարակից ձեռքն առավ երեկվա պատճենած թղթածրարը. Միքայել Ասպարյանի պիեսն է՝ իր այրող խոկումներով ու ոգորումի շիտակ ուղերձով: Դանդաղ թերթեց, ապա հեռախոսով, մյուսների համար անխելի, խոսեց մեկի հետ: Կարճ խոսակցությունն ավարտելով՝ պիեսը դրեց մի թերթի մեջ, հագավ երկար ու փափուկ բաճկոնը եւ աճապարեց դուրս: Մինչ այդ նա Արսենին ժեստերով հասկացրեց, որ հետեւի աղջիկների պարապմունքին, ինքը շուտով կվերադառնա:

Մովսեսն արագաքայլ գնաց Թումանյան փողոցում գտնվող մշակույթի պալատ, ուր, դեռ յոթ-ութ տարի առաջ ստեփանակերտյան իր մայր օջախից, բաղձալի սպասումներով «տեղահանված»՝ հանգրվանել է պետական դրամատիկական թատրոնը: Այստեղ նկարիչը հանդիպելու է բեմադրիչ Մարտին Դավթյանին, որի հետ համագործակցում է վաղուց՝ նրա հինգ բեմադրությունների նկարչական ձեւավորողն է եղել: Պալատի ճանապարհին մտովի ամոթանք տվեց բոլոր այն խոստումնազանց պատասխանատուներին, ովքեր թատրոնի վեհաշուք, բայց արդեն խարխլվող հին շենքի արդիական վերակառուցումը ետնապլան են մղել, անորոշության ու նեղվածքի մատնել կենվորի կարգավիճակով գոյատեւող թատերախմբին, որ աննպաստ պայմաններում դանդաղ տարտղնվում է մակերեսայնության, պատեհպաշտության, ձեւախաղի, տնավարության ու մերձթատերական կրքերի մեջ: Մինչդեռ թատրոնը փառավոր անցյալ ունի, մի հնչեղ ու փայլուն բեմ էր, որտեղ հանդես գալը պատիվ էր համարում, օրինակ՝ մեծն Վահրամ Փափազյանը: Նրա խաղացած Օթելլոյի ուրվականը, ասում են՝ դեռ մինչեւ հիմա թախճոտ թափառում է թատրոնի հին շենքի բորբոսնող ու փլուզվող հարկերում: «Եվ անցյալի փառքից կարծես թե ոչինչ չի մնացել»,– ցավով խոհածեց Մովսեսը՝ բացելով պալատի մուտքի դուռը:

Դեմդիմաց հայտնվեց դերասան Սարմեն Եփրեմյանը, ում հետ ընկերական հին հարաբերություններ ունի նկարիչը: Պատերազմից հետո առաջին անգամ էին տեսնվում, ողջագուրվեցին եւ տխուր նայեցին միմյանց:

– Ո՞նց ես, նոր ես եկել,– հարցրեց Մովսեսը:

– Որտեղի՞ց... Ես էստեղից չեմ էլ բացակայել... արդեն կես տարի:

– Հա՛...– զարմացավ նկարիչը եւ կրկին գրկախառնվեց դերասանի հետ:– Ներիր, ես կարծում էի՝ պատերազմի օրերին դու էլ էիր Երեւանում, ձերոնց մոտ...

– Չէ՛, մերոնք նախեառաջ էստեղ եմ: Մեր եւ հարեւան շենքերի նկուղներում խաղում էինք...

Մովսեսը ներքուստ հիացավ այդ մարդու անձնատուր արվեստասիրությամբ ու նվիրումով: Նա մեկն է այն հատուկենտ արվեստագետներից, ով 1970-ականներին գործուղմամբ Ստեփանակերտ էր եկել Երեւանից եւ անխախտ ծուլվել քաղաքին ու տեղի դրամատիկականին: Այստեղ ընտանիք է կազմել արցախուհու հետ, ունի երեք աղջիկ, որոնք ամուսնացել ու չվել են տարբեր ուղղություններով՝ իրենց հետ տանելով... նաեւ մորը: Դերասանը վաղուց մենակ է ապրում եւ միշտ մերժել է երեւանյան թատրոններ տեղափոխվելու առաջարկությունները՝ պատճառաբանելով, որ «հիմարություն է այս քաղաքից հեռանալը»: Մերժել է նաեւ իր մեծ գերդաստանի անդամների հորդորները՝ վերադառնալ ու մոտիկ ապրել իրենց, «Ծերանում ես, ո՞վ պիտի քեզ տիրություն անի»՝ պարբերաբար ասում էին քույրերը: Արդեն վաթսունհինգը բոլորած արտիստը, սակայն, ծերանալու մտադրություն չունի, միշտ կոկիկ հագնված՝ ակտիվ մասնակցում է քաղաքային ու արվեստային կյանքին, պահպանելով թատերական գործի առաջնահերթությունը: Մովսեսը մի քանի րոպե եւս զրուցեց Եփրեմյանի հետ եւ հրաժեշտի փոխարեն ասաց.

– Շուտով կսկսեմ դիմանկարիդ վրա աշխատել:



Երրորդ՝ թատրոնի հարկաբաժին բարձրանալիս նկարիչը խոհածեց, որ մարդու երջանկությունն իր խղճի հետ ներդաշնակ հարաբերությունն է, հոգու անդորրն ու բավականությունը, Սարմենը հենց այդ երջանկությանն է տիրացել Ստեփանակերտում. հեռանա այդտեղից՝ կկորցնի խիղճը եւ հոգու անձնապաստան խաղաղությունը:

Մարտին Դավթյանի առանձնասենյակի դուռը կիսաբաց էր՝ Մովսեսին էր սպասում:

– Կանչիր, մուսա, եւ ես կգամ՝ սեր ու վրեժ կըերգեմ... հիմա,– ողջույնի փոխարեն, թատերայնորեն արտասանեց նկարիչը՝ նստելով ճոճուն, հին ու թավշապատ աթոռին:

– Սեր ու վրեժ... եւ ո՞ր են երգիչները...– տխրածայն արծազանքեց բեմադրիչը: Նա թռչնած տեսք ուներ եւ ակնհայտորեն հեռու էր ստեղծագործական տրամադրվածությունից, սակայն նրան շուտով աշխուժացրեց Մովսեսի սեղմ ու դիպուկ նախաբանը մոռացությունից հանված պիեսի մասին: Բեմադրիչը խոստացավ, որ ուշադրությամբ կկարդա այն եւ կհայտնի իր «առարկայական կարծիքը»:

– Դե, դու գիտես, որ մենք ծանրաշարժ ենք պիեսներ կարդալու հարցում, բայց էս անգամ շատ ժամանակ չեմ ձգի: Վաղը-մյուս օրը կզանգեմ քեզ,– խոստացավ բեմադրիչը եւ հիշեցրեց, որ նոր գործի բեմադրության վերաբերյալ վճռորոշ խոսքը, ցավոք, իրեն չի պատկանում, կա գեղարվեստական խորհուրդ, տնօրինություն, նախարարություն եւ չգիտես էլ ինչ հսկիչ աչքեր:– Նախանձելի չէ պետական թատրոն լինելը, կեղծ տերերը շատ են:

Մարտին Դավթյանը կոնյակ հյուրասիրեց Մովսեսին. խմեցին՝ փառք տալով Աստծուն, որ իրենք դեռ կարող են ապրել հայրենի երկրում եւ ինչ-որ բան ստեղծել: Նկարիչը, որ իր ծանոթների շրջանում հայտնի է առավելապաշտությամբ, մեկեն ընկավ բեմադրիչ գործընկերոջ հովերի տակ եւ աղոթքի պես մրմնջաց, թե ինչ էին անելու, եթե այս կտոր հողն էլ չմնար իրենց, այս ժողովուրդն

էլ չմնար այստեղ, ուրեմն՝ Երկնայինն իրենց կողմն է, Նա այս արնաշաղախ եզերքը պահել է իր հովանու տակ: Բայց «ինչքան կարելի է մնալ Երկնայինի հույսին»:

– Չէ, եղբայր, ինչ էլ գոհանալու ձեռքանք,– իրեն կրկին Մովսես զգաց նկարիչը:– Մենք չպետք է հաշտվենք էս կացության հետ: Եթե մեր երազանքից ետ քաշվենք, կկորչենք իսպառ... թեթեւ հողմի պես:

Մարտինը ուժ չունեցավ հակաճառելու Մովսեսին, քաջ գիտենալով, թե նա որքան համառ է իր տրամաբանության ու պահանջների մեջ, ասաց միայն.

– Թող Տերը լսի խոսքդ, եղբայր:

Մովսեսը թատրոնից ելավ խառը մտքերով՝ նա վաղվա մեջ դեռուս չէր նշմարում ոչ մի հստակ գույն: Հիմա իր ամենամեծ մտահոգությունը մարդկանց տրամադրությունն է՝ որ նրանք լիովին չընկղմվեն հոռետեսության խավար ճահճուտը՝ զրկվելով այնտեղից ելնելու կարողության վերջին հույս-ծվեններից: Պետք է նրանց հուսավառել, դուրս բերել ինքնավստահության ու դիմակայության նոր ուղի,– բայց ինչպէս, ինչ կարող է անել ինքը՝ միայնակ նկարիչը, ով առանց այն էլ պատեպատ է զարկվում իր հնարավորությունների ու ձիրքի բավիղներում, Տեր Միսաքի, մյուս «ապաստարանցիների» պես եւ նրանց հետ անում է բաներ, որ պարտավոր չէ, բայց չանելու դեպքում իսկական մեղք գործած կլիներ, իսկ ինքը սեփական խղճին մեղք չի վերցնի, երբեք:

Ինքնաբերաբար շարժվեց դեպի արվեստանոց, սակայն կես ճամփին կանգ առավ, նայեց արեւոտ երկնքին ու մտորեց մի քանի վայրկյան. այլեւս տրամադրված չէ աշխատանքը շարունակելու, զանգեց Արսենին, որ արվեստանոցում պարապմունքը վերջացնելուց հետո փակի դուռը եւ բանալին հանձնի հարեւան խանութպան Վռամին: Այդպէս հրաժեշտ չի տա երիտասարդ ընկերոջը, որ պատրաստվում է հայրենի քաղաք վերադառնալ: Խուսափում է նման հրաժեշտից, քանզի կմատնի իր ներքին խռովքը, որ պետք

չէ ցույց տալ դժվար առաքելություն ստանձնողին: Մովսեսը ետ դարձավ՝ որոշելով զբոսնել քաղաքում, նայել անցորդներին, մի քիչ զրուցել հանդիպած ծանոթների հետ: Այդ սովորական զբաղմունքը նա իքնալիցքավորում է համարում, նաեւ նախապաշարում ունի, որ կարող է պատահել որեւէ անակնկալ, որն իր օրը գուցեւ դարձնի իմաստալից ու գեղեցիկ...

Մոտենում էր Օղակածեւ պուրակին, եւ դեմից անսպասելի հայտնվեց Նվարդը՝ իր վարդագույն վերարկուի մեջ ամփոփված: Նրա դեմքին կիտված էր խորունկ տխրություն, բայց տեսնելով Մովսեսին՝ դարձավ ժպտերես ու լուսաշաղախ: Երկուսն էլ ցանկացան սրտանց ողջագուրվել, մինչդեռ վերջին վայրկյանին կանգ առան՝ տեսնելով անցորդների՝ իրենց հառած հայացքները. փոքր քաղաքի փողոցն ունի իր ուրույն օրենքները, եւ դրանք զանց առնելը հաճախ կարող է որեւէ աղերս չունենալ ազատության, իրավունքի, քաղաքակրթական առաջադիմության հետ: Մովսեսն ու Նվարդը հիանալի գիտեն այդ իրողությունը՝ դեռ իրենց երիտասարդության շրջանից, ուստի զուսպ կանգնեցին դեմդիմաց՝ միմյանց նայելով վերստին իրար գտած հին ու ջերմագին ընկերների պես:

– Ո՞նց ես, Նվարդ ջան...

Մովսեսը նրան երեքեք «ջան»-ով չէր դիմել՝ դրա մեջ տեսնելով անտեղի սիրաշահություն, ինքն առանց այդ բառ-մասնիկի էլ ունակ է իր բոլոր տաքուկ զգացմունքներն արտահայտել: Տվյալ պահին, չգիտես ինչու, ավելորդ քնքշացավ: Ընկերոջ քաղցրացած խոսելաճր զվարճացրեց Նվարդին, եւ ինքն էլ մտավ խաղի մեջ:

– Լավ, Մովսես ջան, իսկ դո՞ւ...

Մովսեսը ժպտաց Նվարդի չարաճճիությունից, սակայն նրա ձայնի հնչերանգը տրտմաշուք թվաց:

– Ինչ-որ խնդիր ունես, Նվարդ... որեւէ բան է եղել...

– Հիվանդանոցից եմ գալիս, մի քիչ վատառողջ եմ,– անկեղծացավ:

- Հո որեւէ լուրջ բան չկամ...

- Չէ... կանացի դատարկ բան է... կանցնի,- հուզմունքը քողարկելով՝ ստեց Նվարդը: Նա գերադասեց ավելի շուտ ողջ-ողջ այրվել, քան Մովսեսին հայտնել, որ կրծքագեղձի քաղցկեղը տարածվում է մարմնով մեկ: Երկու տարի առաջ հեռացրել էին ձախ կուրծքը, ինչը, սակայն, այդպես էլ չի օգնել՝ հաղթահարելու անողորմ հիվանդությունը:

- Վստամի ես...

Նվարդը մի վայրկյան հապաղեց եւ, արիության ավիշ գտնելով իր ցավատանջ մարմնի մեջ, պատասխանեց.

- Հա... անհոգ եղիր:

Մովսեսն ընկերուհուն առաջարկեց մտնել մոտակա սրճարանը, իսկ հետո կգբոսնեն: Նվարդը հրաժարվեց՝ պատճառաբանելով, որ մորաքույրը սպասում է իրեն, կանհանգստանա ուշանալու դեպքում:

- Չանգիր, ասա, որ ինձ հետ ես... խնդրում եմ,- համառեց Մովսեսը:

Նվարդը կկոցուն նայեց ընկերոջը, մի երկվայրկյան խորհեց, ապա կատարեց նրա խնդրանքը: Մորաքույրը, համենայն դեպս, պատվիրեց Նվարդին, որ շատ չուշանա, խոսելիք ունի հետը: Թույլտվություն ստանալով՝ անմեղորեն ժպտացին միմյանց, ապա մտան «Արագիլ» սրճարանը: Ներկայի թեժ հարցերի շուրջ զրուցելով՝ պիցցա ու խմորեղեն ճաշակեցին, իսկ վերջում՝ սուրճ: Ընթացքում Մովսեսը թռուցիկ հիշեց, որ տիկին Սոնան իր համար, արդեն սովորականի պես, կեսօրահաց էր դրել. «Ոչինչ, չի փչանա, սառնարանում է: Վաղը կուտեմ»՝ հանգստացրեց իրեն:

- Արի պտտվենք մեր սիրելի վայրերով,- առաջարկեց Մովսեսը, երբ արդեն փողոցում էին:

- Բայց դա շատ երկար կտեւի... մենք շատ սիրելի վայրեր ունեինք,- արձագանքեց Նվարդը:- Կհոգնենք, եւ հետո՝ մորքուրին հուսախաբ չեմ ուզում անել:

- Արեւոտ օր է, իսկը՝ ջահելների ման գալու օր...
- Ջահելն էլ մենք ենք...
- Ոչնչով պակաս չենք, հավատացնում եմ: Շուտով ձմեռ է, ո՞վ գիտե, թե երբ էսպիսի պայծառ օր կտեսնենք մեկ էլ:
- Լավ, փոխզիջման գնանք. ընտրենք երկու վայր, էսօրվա համար էդքանը հերիք է:
- Համաձայն եմ. ո՞ր ենք գնում...
- Ըմմմ... նախ, Օղակածեւ պուրակը, ահա՛ քթերիս տակ է, եւ...

- «Տատիկ-Պապիկ»:

- Եղավ,- մեղմ ծիծաղեց Նվարդը:

Նրանք բարձրացան փողոցից քիչ վերեւ գտնվող պուրակը, ուր նախկինում հաճախ էին ժամադրվում: Անխոս գնացին այն անկյունը, որտեղ անմոռաց երեկոներ ու գիշերներ էին անցկացրել գրկախառնություններով, համբույրներով ու խոսատումներով:

- Կարգին վերակառուցել են պուրակը,- շուրջը նայելով՝ ասաց Նվարդը:- Ես էստեղ չեմ եղել արդեն... երեսունհինգ տարի... Շատրվանները շատացել են, նստարանները փոխված են... Պուրակն աչքիս հիմա ավելի ընդարձակ ու գեղեցիկ է երեսում... Ճիշտ եմ նկատում:

- Էն ժամանակ ավելի գեղեցիկ էր... եւ շատ ավելի հաճելի,- արձագանքեց Մովսեսը:- Մենք էստեղ սիրում էինք իրար, իսկ հիմա...

- Հիմա ի՞նչ... հիմա ուրիշները թող սիրեն... սերնդափոխություն է,- մանկավարժի իր կոչմանը հարիր՝ ուսուցողաբար ասաց Նվարդը:

- Սերը կարող է կրկնվել, Նվարդ,- Մովսեսի ձայնն ասես հեռուներից էր գալիս՝ հոգնատանջ ու կարոտաբաղձ:

- Չգիտեմ,- լավեց տրտում պատասխանը:- Բայց ասեմ քեզ միանգամից, Մովսես. ես այլեւս հոգի չունեմ ոչ վերածնված, ոչ նոր սիրո համար:

Մովսեսը լուռ ու երկար նայեց Նվարդի աչքերին ու հասկացավ, որ նա հայտնում է թերեւս իր ամենակարեւոր տեղեկությունը՝ կապված սեփական անձի ու ճակատագրի հետ:

- Ես հրաշքներին հավատում եմ,- համենայն դեպս, իր խոսքն ասաց առավելապաշտ Մովսեսը:

- Հավատը կենարար է, ինքնախաբեությունն է վտանգավոր... Գնանք, նստած շուտ եմ մրտում, գնանք «Տատիկ-Պապիկ»:

Նրանք սկսեցին իջնել կենտրոնական պողոտայով: Մովսեսը հիշեց, որ Նվարդը վատառողջ է, չարժե նրան երկար քայլերթով հոգնեցնել,- հաջորդ սիրելի վայրը մոտ երկու կիլոմետր հեռավորության վրա է: Տաքսի կանգնեցրեց, եւ արագ տեղ հասան:

Շրջապատում ոչ ոք չկար, բացի մի կուզիկ տղամարդուց, ով ավլում էր փակ կրպակների մոտով ձգվող ճեմնուղին: Կուզիկին մի շուն էր հետեւում, որ ստեպ-ստեպ ետ էր նայում, ասես փորձելով ճանաչել նորեկ այցելուներին: Ստորոտի սալահատակին կանգնած՝ նրանք մտասույզ նայում էին կանաչապատ բլրի վրա հառնող տուֆաշեն, երկֆիգուր հսկա քանդակին, որ արցախյան ավանդական պապ ու տատի կիսանդրիների քարե միություն է՝ «Մենք ենք, մեր սարերը» պաշտոնական անվամբ: Իսկ մարդիկ պարզապես «Տատիկ-Պապիկ» են անվանում՝ առավել մտերմիկ ու ընտանեկան: Քանդակը վաղուց որպես ազգային վերածննդի խորհրդանիշ է ծառայում ժողովրդին: Ստեփանակերտի հյուսիսային մուտքի մոտ այն ասես հառնել է հողից՝ ապագայի տեսիլքները կանխորշելու եւ ազգի պատմական ուղին փարոսի պես լուսավորելու համար:

- Աչքիս պապը շատ է տխուր,- փորձեց կատակել Մովսեսը:

- Իսկ իմ աչքին տատն է ավելի տխուր... Սգավոր են,- տխուր արձագանքեց Նվարդը:

- Հա, գնանք մխիթարենք:

Նրանք կորավուն աստիճաններով ելան բլուրն ի վեր, դանդաղ մի երկու պտույտ կատարեցին քանդակի շուրջը, ապա նստեցին նրա ներքո՝ պատվանդան-գետնի բազրիքին: Այստեղից գեղա-

պատկեր տեսարան է բացվում՝ երեւում է քաղաքի Աջափնյակ թաղամասը, քիչ հեռվում Քոասնի գյուղն է, եւ ամբողջ տեսադաշտում՝ անտառներ, բլուրներ ու սարեր, իսկ դիմացդ իշխում է Բովուրհան լեռը: Հապա Քիրսը, այդ վիթխարի գեղեցկուհին, որ տիրաբար բազմել է հորիզոնի հարավարեւելյան կողմում եւ պարզկա օրերին քո առաջ խոյանում է բիբլիական գրավչությամբ: Իսկ հիմա... Նկարիչը նայեց Քիրսին, եւ միանգամից մթագնեց դեմքը. իր հորդուն ներշնչանքի վաղեմի աղբյուր լեռն այժմ թշնամու հսկողության տակ է, գերեվարված է սիրելի լեռը, որի լանջերին, եւ մի անգամ՝ մրրկաշունչ գազաթին, գունագեղ օրեր էր անցկացրել երիտասարդության տարիներին՝ շրջելով ու բազում էտյուդներ անելով այնտեղ:

- Նվարդ, գիտե՞ս՝ Քիրսը հիմա գերված է... Մասիսի պես:

- Հա... Մեր Դիզափայտն էլ:

- Ես ինձ Քիրսի կողմից որբացած եմ զգում:

- Դիմացիր:– Նվարդը ձեռքը դրեց Մովսեսի ուսին, ապա ետ տարավ:– Քո հիմնական «էտյուդանոցն» էստեղ էր, մոռացել ես...

Իրոք, Մովսեսը սկզբնական շրջանում հաճախակի էր նկարում «Պապուտատի» հայացքի ներքո, Նվարդի ներկայությամբ: Հենց այստեղ է առաջին անգամ պատկերել իր նորաբողոք սիրո լուսափթիթ դեմքը, բայց, կարծես թե, ավելորդ ջանադրությունը խանգարել էր, եւ գծանկարը ծիծաղելի էր համարել Նվարդը:

Մովսեսը ցանկացավ մտովի տեղափոխվել անցյալ. գրպանից հանեց երկար նոթատետրը եւ սկսեց մատիտով նկարել, միաժամանակ աչքի տակով նայում էր Նվարդին. նրա կիսադեմը մի ակնթարթ նկարչին թվաց եգիպտական որմնանկարից թռած փարավոնուհու պատկեր, սակայն պատրանքը արագ չքացավ, եւ ակնդետ նայելով ընկերուհուն՝ հասկացավ, որ նա մի կորած կյանքի ուրվանկար է լոկ, եւ հիմա թեթեւակի ջանում է իրական գույներ որսալ:

- Նվարդ, ինչո՞ւ երեխաներ չունեցար...– շարունակելով նկարել՝

նրբաթեմա գրույցի անցավ Մովսեսը:

– Երեւի ես էի պատճառը, – միառպահ լռելուց հետո եւ առանց գրուցակցի կողմը շրջվելու՝ արձագանքեց Նվարդը:– Ես հղիանում ու վիժում էի... Էդպես երեք տարի: Հետո պատերազմը սկսվեց, Հրաչուն գնաց ու զոհվեց:

Մովսեսը նոր իմացավ, որ Նվարդի զոհված ամուսնու անունը Հրաչ էր:

– Սիրում էիր Հրաչոյին...

– Սկզբից՝ չէ, հետո սիրեցի... Հրաչալի տղա էր, ինձ Նվարդիկ էր ասում: Աշխատանքից տուն գալուց ինձ համար միշտ ինչ-որ բան էր բերում... Առնական էր, բայց մի տեսակ ամաչելով էր ինձ հետ սեր անում... Ինձ սիրահարված՝ էդպես էլ գնաց:

– Ինչո՞ւ չամուսնացար նորից... ուզողներ չկային...

– Կային, եւ ոչ մեկը: Բայց սիրտս կոտրված էր լրիվ, չէի ուզում որեւէ մեկի վզին փաթաթվել կեղծ ու ձեւական կնոջ պես:

– Հետո ընկերություն չե՞ս արել որեւէ տղամարդու հետ...

– Չէ՛:

– Մինչեւ հիմա էդ վիճակում ես...

– Հա:

– Կարող էիր Ստեփանակերտ տեղափոխվել կամ՝ Երեւան... գուցե քեզ համար նոր հորիզոն բացվեր:

– Մտածում էի էդ մասին, բայց որոշեցի մնալ գյուղում: Հրաչոյի հիվանդ ծնողներին էի խնամում: Միայնակ մնացած հորս էի նայում:

– Ու էդ անձնագրոհությամբ զրկվել ես քո իսկական կյանքից:

– Ես չգիտեմ՝ որն է իսկական կյանքը:

– Այն միշտ ինչ-որ տեղ մեր կողքին է, – ասաց Մովսեսը եւ ակնթարթաբար դժգոհ մնաց իր երկիմաստ խոսքից:

– Երբ ավելի ստույգ իմանաս տեղը, ինձ էլ տեղյակ պահիր, – նայելով Մովսեսին՝ թեթեւակի ժպտաց Նվարդը:– Մրսում եմ, թեեւ արեւոտ օր է, սառնությունն ավելին է օդում:



- Ձմեռնամուտի շեմին ենք:

- Հա: Գնանք, մրսածությունը հիմա ինձ հակացուցված է:-  
Նվարդը վեր կացավ եւ շտկեց իրեն, հետո կիսաշրջված՝ երկար նայում էր վերելում փռված քաղաքին. այնուհանդերձ, իր վերհուշ-ներից ոչ մի բառ չարտաբերեց. անցյալի հետ նա իր յուրահատուկ հարաբերությունն ուներ:

Մովսեսը զանգեց եւ կրկին հայտնվեց նույն տաքսին: Տասը բու-պե անց Նվարդի մորաքրոջ տան մոտ էին:

- Եթե քեզ ինչ-որ բան պետք լինի... ցանկացած բան, տեղյակ պահիր... ես քո ծառան եմ,- փոքր-ինչ հուզված ասաց Մովսեսը:

- Ընտանիքիդ ծառայիր, խելոք,- նախատեց, թե՛ ներփակ գո-հություն զգաց Նվարդը: Նա ձեռքն անսպասելի սահեցրեց ընկե-րոջ մորուքի վրայով եւ խնդմնդաց:- Երբ միրուքդ լրիվ ճերմակի, ինձ կզանգես, կասես:

- Լավ... շուտով էդ լուրը կստանաս:

- Համ էլ էդ երկարած մազերդ ծամ անելու ժամանակն է,- ասաց ու թեթևակի քաշեց ընկերոջ ալիքածե մազերից:

Մովսեսը կամացուկ ծիծաղեց ընկերուհու չարածճիության վրա, մի հատկանիշ, որի համար ժամանակին խենթանում էր: Հիմա նրա արարքը կարծես թե առավելս մայրական գորով ուներ եւ ոչ թե սի-րող կնոջ: Բայց չկամեցավ խորասույզ լինել նման կսկծալի հար-ցի մեջ, թե՛ չհասցրեց, քանի որ Նվարդն արդեն կանգնել էր շեն-քի շքամուտքին եւ ուր որ է՝ կկորչի տեսադաշտից: Մի ակնթարթ այդ պատկերը Մովսեսի աչքին զուգորդվեց մայրամուտի հետ. ահա վեհաշուք, բոսոր-արնավառ արեւը, որ այլեւս չունի ջերմութ-յուն, միայն՝ աղոտացող լույս, եւ քիչ անց կլուծվի հորիզոնի խտա-ցող մշուշում, եւ դու չես կարող կանխել նրա անհետացումը: Սիրո մայրամուտը նույնքան ողբերգական է, որքան հարազատի կո-րուստը՝ խորհեց Մովսեսը եւ ասես կծկվեց-փոքրացավ ինքն իր մեջ: Նա ձեռքի տարտամ թափահարումով հրաժեշտ տվեց Նվար-դին եւ անբավականության անբացատրելի զգացումով հեռացավ:

Փողոցում խոր շունչ քաշեց, հավաքեց զինքը եւ մտադրվեց գնալ արվեստանոց: Քայլեց մինչեւ հրապարակ եւ միտքը փոխելով՝ շարժվեց դեպի Սբ. Աստվածամոր Հովանի եկեղեցի. Տեր Միսաքին չէր տեսել արդեն երեք օր, «Եղնիկներից» վերադառնալուց ի վեր: Երբ մտավ տաճար, քահանան ավարտում էր երեկոյան ժամերգությունը: Ներսում ժողովուրդ շատ կար եւ կրակարանները լի էին վառվող մոմերով: Տեր Հայրը նկատեց նկարչին, եւ նրան, քարոզը չընդհատելով, աչքունքով հրավիրեց մոտ կանգնել բեմին: Մովսեսը մոտեցավ իր նախընտրած կետին, որտեղից լավ երեւում է դիմացը փռված վիշապագորգը: Նրան մի պահ թվաց, թե հնամենի հյուսվածքը թարմ գույներով է ողողվել, բայց դա իր երեւակայության խաղն էր, տեսիլքը չքացավ, երբ ժամերգությունն ավարտվեց, եւ Տեր Միսաքն արդեն կանգնած էր իր առջեւ:

– Աստված մեզ օգնական: Ինչպէս ես, Մովսես եղբայր:

– Շնորհակալ եմ Աստծուց, Տեր Միսաք, ես դեռ նկարելու կորով ունեմ:

– Ուրախալի է դա լսել: Գնանք:– Տեր Հայրը իր թանկագին հյուրին հրավիրեց երիցտուն: Այստեղ նրան ուրց ու մասուրով թեյ հյուրասիրեց եւ հակիրճ պատմեց անցած օրերի անցուդարձից:

– Թեմակալ առաջնորդը հիմա շատ բարեհամբույր է տրամադրված իմ հանդեպ,– փոքր-ինչ խորհրդավոր տոնով հայտնեց քահանան:– Բայց, անկեղծ ասած, չգիտեմ, թե իրականում ինչ հանգամանք է նրան դրդել, որ էդպես կերպարանափոխվի: Վարկածս էն է, որ գեներալ Քեհյանը լուրջ խոսակցություն է ունեցել նրա հետ:

Մովսեսը եւս չգիտեր՝ գեներալը բարեխոսե՞լ է քահանայի համար, թե՞ ոչ, բայց որ իրենք են թեմակալ առաջնորդի մոտ բարեխոսել հանուն Տեր Միսաքի, հաստատ գիտեր, եւ դա մի հանդիպում էր, որ, երկկողմանի պայմանավորվածությամբ, պետք է գաղտնի մնա քահանայից: Իսկ տեղի էր ունեցել ահա թե՛ ինչ:

Երբ Տեր Միսաքը մեկնել էր «Եղնիկներ», հաջորդ օրը թեմակալ առաջնորդի կեցավայր էր գնացել պատկառելի մի պատվիրակույթ-

յուն՝ ավելի քան երկու տասնյակ մարդ, որոնց թվում՝ Մովսեսը, Արսենը, Վիգենը, Մարիան, դպիր Արմանը, սարկավագ Եփրեմը, մոմավաճառ Արաքսին, գնդապետ Վարդանյանը, մանկավարժ Սիմոնը, երգչուհի Արփենը, նախկին պատգամավոր Արշամ Սանթրյանը, Քեռին, թոշակառու ֆինտեսուչ Սերոբը, խանութպան Վոամը եւ այլք՝ որպես ծխական համայնքի ներկայացուցիչներ: «Ուխտագնացությունը» հապճեպ կյանքի էին կոչել Մովսեսը, մանկավարժ Սիմոնը եւ Քեռին, կազմակերպական հարցերը նրանք սրընթաց կարգավորել էին գրեթե զինվորական ճշտակատարությամբ: Թեմակալ առաջնորդը, նախ, զարմացավ, որ մարդիկ փորձում են միջամտել եկեղեցու ներքին գործերին, ապա տեսնելով, թե հավատավորների ինչպիսի սրտացավ բազմություն է եկել ի պաշտպանություն Տեր Միսաքի, եւ թե ինչպիսի հիմնավորվածությամբ ու կրքոտությամբ են նրան առել իրենց հովանու տակ, հիացավ նրանց մարդկայնությամբ ու շիտակությամբ եւ խոստացավ, որ Տեր Միսաքի «մազին կպնող չի լինի», եւ նա տաճարում կշարունակի քահանայագործել, քանի դեռ ինքը թեմակալ է: «Միայն թե շատ մի բեւեռվեք արտաեկեղեցական խնդիրների վրա... նրան ճամփից մի շեղեք»՝ նախազգուշացրել էր եպիսկոպոսը: Եվ պայմանավորվել էին, որ Տեր Միսաքին չեն հայտնի այս հանդիպման մասին, «թող իր պաշտոնավարման շարունակությունը համարի Աստծո բարեհաճություն»:

– Բռնատեղահանվածների թիվն ավելանում է մեր քաղաքում, Մովսես եղբայր, նրանք Արցախ են վերադառնում պատերազմի ժամանակ Հայաստանի բնակավայրեր տեղափոխվելուց հետո, – այդ օրերի գլխավոր մտահոգությանն անդրադարձավ քահանան՝ մի կողմ վանելով իր անձին վերաբերող հարցը: – Եվ կարիքավորների թիվն է ավելանում: Նրանք հաճախ են գալիս եկեղեցի՝ աջակցության համար, թեւ լավ գիտեն, թե օգնություն որ հաստատություններն են պարտավոր տրամադրել:

– Դե, էդ հաստատություններն անում են ինչ-որ բան, բայց ան-

բավարար է: Եկեղեցին էլ է պարտավոր ձեռք մեկնել, Տեր Հայր,-  
ասաց Մովսեսը, թեև գիտեր, որ իր հիշեցումն անտեղի է:

- Անշուշտ, անշուշտ, չէ որ նույնը ես եմ կրկնում վաղուց... Աղոթ-  
քով կարիքավորների վիճակը չես թեթեացնի, աղոթքը կմխիթարի  
նրանց հոգիները, բայց բնակարան, սնունդ ու աշխատանք չի դառ-  
նա: Ամեն օր զանգում եմ տարբեր մարդկանց, հանդիպում նրանց  
հետ, որ իրենց ունեցած հնարավորությունների մի մասը տրամադ-  
րեն էս տարաբախտներին... Նրանք մեր հայրենակիցներն են, ար-  
յունակիցները, եթե հիմա տիրություն չանենք, հուսալքված կհեռա-  
նան, եւ մենք հերթական անգամ արնաքամ կլինենք:

- Ես էլ կփորձեմ կարողություն ունեցող ինչ-որ մարդկանց հան-  
դիպել, որ չզլանան օգնության հարցում:

- Շատ երախտապարտ կլինեմ քեզ:

- Իսկ եպիսկոպոսը նորից չի՞ դժգոհի, որ շարունակում եք  
եռանդուն գործել եկեղեցու բուն պարտականություններից դուրս:

- Չեմ կարծում, նա հիմա ուրիշ կերպ է նայում էսօրվա իրո-  
ղություններին... Իսկ եթե պետք լինի, հանգամանալի կբացատ-  
րենք, որ մեր արածը նաեւ եկեղեցու պարտքն է: Եթե մարդ մտնում  
է տաճար եւ օգնություն հայցում, նրան մերժելու իրավունք չունենք,  
մերժելն աստվածանարգություն կլինի: Մեր գործը միշտ աջակցելն  
է՝ լինի հոգեւոր, թե նյութական կարգով:

- Իրավացի եք, Տեր Հայր:

- Ավելին ասեմ՝ եթե մեզ չհասկանան... թքած, ով ուզում է լի-  
նի,- կտրուկ, աշխարհիկ վճռական մարդու պես բարձրաձայնեց  
Տեր Միսաքը:

Մովսեսի համար քահանայի նման բռնկումները նորություն չեն,  
բայց այս անգամ նրա մոտ ցայտուն տեսավ ոչ միայն ազնիվ հո-  
գեւորականի, այլեւ պատվարժան մարդու խորատեսությունն ու  
կամքը: Եվ նկարիչն իրեն առավել ուժեղ ու պաշտպանված զգաց:

Հաջորդ օրը նա անդադրում վազքի մեջ էր, ասես պիտի աշ-  
խարհը փրկեր վերահաս աղետից. առանց պայմանավորվելու ու

«դուռթակոցի» հանդիպեց մի քանի ծանոթ գործարարի եւ ընկերությունների տնօրենների հետ, իր եւ Տեր Միսաքի անունից խնդրեց, որ օգնություն տրամադրեն բռնատեղահանվածներին: Կարողություն ունեցող այդ մարդկանց մի մասը պատասխանեց, որ արդեն աջակցություն են հատկացնում, կջանան լրացուցիչ քայլեր եւս անել, իսկ շատերն արդարացան, որ պատերազմի պատճառով լուրջ կորուստներ են կրել, այդ պահին օժանդակություն ցուցաբերել չեն կարող, բայց քանի որ համբավավոր նկարիչ է «բարեհաճել իրենց մոտ», կգնեն նրա նկարներից մեկը, «երեւի նկարիչը եւս օգնության կարիք ունի»: Մովսեսը պարզ տեսավ նրանց փարիսեցիությունը եւ տեղնուտեղը վճռեց կորզել հնարավորը՝ հանուն տարաբախտների, «շնից մազ պոկելն էլ օգուտ է»: Այդպես նա օրվա մեջ վաճառեց հինգ նկար՝ ցածր գներով, ավելին վճարող չկար: Ընդհանուր գումարը կազմեց մեկ միլիոն հարյուր հազար դրամ: Երեկոյան կողմ ամբողջ հասույթն առած՝ մտավ տաճարի երիցտուն:

Մարդկային հոգու վայրիվերումներին քաջածանոթ հոգեւորականը, նախ, անակնկալի եկավ, ապա փառք տվեց Աստծուն, որ նկարիչը հավատարիմ է մնացել իր բնատուր էությանը եւ չի վախեցել քայլել մարդկային վեհության բարձունքներով:

– Մովսես, թվում է, թե քո արարքը սովորական բարեսիրություն է, բայց ներկա պահին, էս մղձավանջի ու իրարանցման մեջ, դու իսկապես հոգեւոր սխրանք ես գործել:

– Դե, լավ, էլի, Տեր Հայր, մի չափազանցրեք, շատերն էդպես կվարվեն, նրանց միայն մի փոքր խթանել է պետք:

– Չբանավիճենք, բայց կասեմ, որ Աստված արժանիորեն է գնահատում քո օժանդակությունը:

– Թող ոչ ոք էլ չգնահատի: Կարելորդ, որ էդ օգնությունը հասնի կարիքավորներին:

– Կարծում եմ՝ իմ ձեռքերի մաքրությանը չես կակածում:

– Ոչ մի կասկած, Տեր Միսաք, ես ձեզ լիովին հավատում ու

վստահում եմ:

- Անչափ երախտապարտ եմ,- քահանան հուզվեց եւ մի երկ-վայրկյան գլուխը խոնարհեց Մովսեսի կրծքին:

- Դե, Տեր Հայր, դուք ձեզ շատ պինդ պիտի պահեք, թող մարդիկ, հատկապես էդ դժբախտները, չտեսնեն, թե դուք ինչպես եք տա-ռապում,- ասաց նկարիչն ու քահանայի ուսը եղբայրաբար գրկե-լով՝ տարավ նստեցրեց իր աթոռին:

Տեր Միսաքի տրտմաշուք դեմքը, սակայն, չես քողարկի ոչ մի բարոյախոսությամբ: Նա առժամանակ ներսուզված մնաց իր մեջ, ապա դարակից թղթերի մի տրցակ հանեց:

- Էստեղ կարիքավոր մարդկանց անուններ են... հարյուր հի-սուն հոգի: Տուցակագրել եմ ըստ ընտանիքների, ժամանակավոր բնակության վայրի: Կազմել եմ առաջին անհրաժեշտության ապ-րանքների ցանկերը... Եղբայր, արի հիմա որոշենք, թե քո տրա-մադրած գումարը ինչպես եւ ում պիտի հատկացնենք:

- Չէ, Տեր Միսաք, խնդրում եմ՝ ինձ հեռու պահեք մանրամաս-ներից, դուք ինքնուրույն էլ լավ գլուխ կհանեք էդ ամենից... ինձ խնայեք:

- Լավ, եղբայր, հասկացա: Բայց հետո տեղյակ կպահեմ, թե ինչ ենք արել:

- Աստծու սիրուն:

Հնչեց Մովսեսի հեռախոսի զանգը, նախքան պատասխանելը նայեց փոքրիկ էկրանին.

- Օհո՛,- թեթեւակի բացականչեց նա եւ միացրեց կապը:- Մարտին, քեզ ուշադիր լսում եմ... Հետո՞... Ըհր... Ինչքան երկար... Ասա... Լավ գաղափար է... միջանկյալ լավ գաղափար... Մեկ շա-բա՞թ... Որտե՞ղ... Արվեստանոցում... հազիվ թե ավելի հարմար տեղ գտնենք... Բարի, կսպասենք... Շնորհակալ եմ, հաջող:

Մովսեսը Տեր Միսաքին պատմեց իրեն հանձնված պիեսի մասին, եւ թե ինչպես է հիմա փորձում այն բեմադրված տեսնել Ստեփանակերտում: Քիչ առաջ թատերական բեմադրիչ Մարտին

Դավթյանը Մովսեսին հեռախոսով հայտնում էր, որ Ասպարյանի պիեսը կարդացել է ու ոգեշնչվել, «ցանկալի կլիներ բեմադրել իրենց՝ դրամատիկականի բեմում, բայց պետք է գործն անցնի երկար քննության միջով, մինչեւ հաստատվի», ինչում կասկածներ ունի: Եվ որպեսզի ինչ-որ կերպ, շուտափույթ ի ցույց հանած լինի այդ դրաման՝ ի բավարարումն շահագրգիռ հանդիսատեսների, Մարտինը խոստացավ պիեսի գլխավոր արարը մի քանի օրում բեմականացնել թատերական ստուդիայի սաների ուժերով եւ ներկայացնել որեւէ հարմար տեղ:

– Հիանալի, հիանալի,– խանդավառվեց Տեր Միսաքը՝ Մովսեսից իմանալով նաեւ, թե ինչ հիմնական ասելիք ունի պիեսը:

– Մի շաբաթ հետո դրամայի գլխավոր արարի ականատեսը կլինենք իմ արվեստանոցում,– հայտնեց նկարիչը:

– Ինձ, համենայն դեպս, մի փոքրիկ զանգով կհիշեցնես ներկայացման օրը եւ ժամը... Էս ծանրաբեռնված գլուխը հիմա ամեն ինչ չէ, որ հիշում է տեղը տեղին,– խնդրանքը հիմնավորեց քահանան՝ ձեռքը դնելով գլխին:

– Անհոգ, Տեր Միսաք, կտեղեկացնեմ:

Մովսեսի համար հաջորդ օրերն անցան ստեղծագործական հորձանքի մեջ, որ հանգեցնում էր նախանձելի ինքնաբավության. նա նկարում էր առավտոից իրիկուն, երբեմն մոռանալով ժամանակին ուտել տիկին Սոնայի պատրաստած համեղ կեսօրահացը: Մի շաբաթվա մեջ նիհարեց յոթ կիլոգրամ, ինչը փոքր-ինչ վայելույ տեսք տվեց նրա թիկնեղ ու փորոզցած կերպարանքին: Այդ օրերի նրա զրուցակիցներն էին, այն էլ՝ կարճատեւորեն, ստուդիայի սանուհիները, որոնք երեք անգամ եկան պարապմունքի, եւ տանը կենող հաղորդեցիները: Արսենն արդեն Մարտակերտում էր, եւ դեռ առաջին այցը չէր կատարել աշխատանքի անցնելուց հետո: Մովսեսը, գործով տարված լինելով հանդերձ, աչքի պոչով հետեւում էր Սոֆիկի պահվածքին եւ փափագում, որ փխրուն օրիորդն արիաբար տանի եղբոր անհետացումը: Պարապմունքների ժամա-

նակ նա մեկ-մեկ քչփչում էր հեռախոսով, եւ Մովսեսն ուզում էր հավատալ, որ Սոֆիկը խոսում է Արսենի հետ՝ ունկնդրում նրա սրտահաճո ու քաջալերիչ խոսքերը:

Շաբաթ օրը նրան զանգեց բեմադրիչ Մարտինը եւ հաղորդեց, որ վաղը կարող են Ասպարյանի պիեսի գլխավոր արարը ներկայացնել. հարցրեց՝ արդյո՞ք արվեստանոցը պատրաստ է ընդունել իրենց:

– Բոլոր նկարներով ու վրձիններով հանդերձ,– վստահեցրեց Մովսեսը:

«Շատ լավ, ուրեմն կլինի վրեժի կիրակի,– հեռախոսի մյուս ծայրից ասաց Մարտինը, ով ասես վերակենդանացել եւ գտել էր իր կորսված ուղին:– Սկիզբը հայտարարենք ժամը երեքին»:

– Հիանալի:

Մովսեսը, նախ, զանգեց մանկավարժ Սիմոնին: Բարեւեց ու միանգամից ասաց.

– Ընկեր Սիմոն, վաղը ժամը երեքին համեցեք արվեստանոց... Ուրախալի անակնկալ ունենք ձեզ համար, եւ շատերի... Չէ, հիմա պետք չէ, վաղը:– Կապի ավարտին ինքն իրեն բարձրախոսեց.– Ուզում էր հենց հիմա վազելով գար... Իմ խենթ մանկավարժ:

Այնուհետեւ զանգեց Տեր Միսաքին ու «ապաստարանցիներին» եւ տասնյակ ծանոթների, վերջիններիս պարզապես տեղեկացնելով, որ կարելուք ու հետաքրքիր միջոցառում ունեն, «հաճելի ու օգտակար կլինեն ձեր ներկայությունը»: Օրվա երկրորդ կեսին սանուհիների հետ սրահն ազատեցին նկարակալներից ու պատվանդաններից՝ դրանք տեղավորելով արվեստանոցի հեռավոր անկյուններում, ապա աղջիկները լվացին հատակը. այսպիսով արվեստանոցում ընդարձակ ու մաքուր մի տարածք առանձնացվեց, ուր կարելի էր ի ցույց հանել ցանկացած հանդես՝ թատերական, երաժշտական թե կերպարվեստային: Սանուհիներին ճամփելուց հետո միայն Մովսեսը հիշեց, որ պետք են նաեւ աթոռներ. որտեղի՞ց բերել, ինչպե՞ս... Դիմեց հարեւան խանութպան Վռամին, ով նմանօրինակ հար-



ցերում բանիմաց ու ճարպիկ մարդու անուն ունի: Վռամը մի պահ մտածեց, ապա զանգեց մեկին: Կարճ խոսելուց հետո խանութպանը նկարչին պարծենկոտաբար տեղեկացրեց.

– Քո հարեանի ձեռից ոչինչ չի պրծնի, պարոն Մելիքյան. վաղը ժամը տասնմեկին հիսուն պլաստամասե աթոռ կլինի էստեղ, հարմար է...

– Հոյականալ, հարեան ջան... Պատկերդ մի օր ղալամով կքաշեմ,– ուրախ արձագանքեց Մովսեսը:

– Դուք միայն ասում եք...

«Ֆորդ» թեթեւ բեռնատարով աթոռները բերեցին պայմանավորված ժամին, Վռամն էլ օգնեց բեռնաթափել ու տեղավորել դրանք: Ամեն ինչ վաղաժամ պատրաստ էր միջոցառման համար: Բեմադրիչ Մարտինն իր սաների հետ արվեստանոց եկավ հանդեսից մեկ ժամ առաջ: Նրանք հավանեցին ներկայացման համար նախատեսված տարածքը, տեղադրեցին սովորաթղթե դեկորները եւ զգեստափոխվեցին: Բեմադրիչը պիեսի նոր պատճենը ձեռքին նստեց «բեմական» հատվածի ծախ անկյունում, փայտե պատվանդանի ետեւը՝ հարկ եղած դեպքում հուշելու եւ ղեկավարելու թատերախաղը:

Ուղիղ ժամը երեքին սրահը լեցուն էր մարդկանցով. պարզվեց՝ աթոռները բավարար չեն, տասնյակ մարդիկ կանգնած սպասում էին՝ դիտելու բեմադրությունը: Առաջին շարքում նստել էին Տեր Միսաքը, Մովսեսը, մանկավարժ Սիմոնը, գնդապետ Վարդանյանը, Քեռին եւ դպիր Արմանը: Քահանայի ուղիղ ետետում տեղավորվել էին Վիգենն ու Մարիան իրենց ընկեր-ընկերուհիների հետ: Տասնյակ ծանոթ դեմքերի միախառնվել էին տասնյակ անծանոթները: Բավական խառը հասարակություն էր հավաքվել, մարդիկ կային գրեթե բոլոր խավերից: Տեր Միսաքի խնդրանքով դահլիճում լուրջություն տիրեց, եւ բեմադրիչը դերասաններին ժեստով հրահանգեց, որ ներկայացումը սկսեն:

*Առաջ է գալիս Տարեգրի դերակապարը՝ մի մաշյան ձեռքին:*

**Տարեգիր** – Ես վարդապետ Հովհանն էմ, հոգեւոր իմ ծառայության հետ մեկտեղ գրառում եմ մեր երկրում կատարվող դեպքերի ու անցքերի համառոտ պատմությունը: Կասեք՝ պարապ գործ է... Չէ, ես բարեխիղճ տարեգիր եմ, շատ ժամանակ ու եռանդ եմ ծախսում անցյալ իրականությունը թղթին հանձնելու համար. այնքան իրարամերժ տեղեկություններ են բերնից բերան անցնում, այնքան կցկտուր ու կամայական գրություններ կան. պետք է կարողանալ այդ ամենից վեր հանել ճշմարտությունը: Ես ինձ ճշմարիտ տարեգիր եմ համարում, թեեւ համեստ կարողություն ունեմ էդ գործի մեջ, մեր երեւելի պատմագիրների ստվերի ստվերն իսկ չարժեմ... Չասեք, թե ծերության շեմին եկել եմ իմ թաքուն գովքն անելու ձեր առաջ, պարծենալու իմ արած-թողածով. չէ՛, ես լուրջ պատճառով եմ ասպարեզ մտել, ասեմ՝ ինչու... Վերջերս մի տեսիլք երեւցավ ինձ. մեր Ամարասի վանքում աղոթում էի, երբ կողքիս հայտնվեց նորաշուք հագնված, վայելույ մի այր, եւ առանց ողջույնի, ասես մեր կիսատ թողած զրույցը շարունակելով՝ ասաց, որ իմ գրած պատմությունը թերի է՝ անկատար, պետք է անհրաժեշտ շտկումներ ու լրացումներ կատարեմ... Եվ ականջիս փսփսաց, թե հատկապես որ անցքերի վրա պիտի բեւեռվեմ, եւ եթե ես ուղղումներ չանեմ, սերունդների անեծքը կձանրանա ինձ ու Արցախի տերերի վրա... Անհետանալուց առաջ տեսիլքի այրը հայտնեց, որ ինքը ապագայից է՝ 20-րդ դարի ութսունական թվականներից, ետ՝ անցյալ է եկել սրբազան առաքելությամբ՝ բացահայտել ու մատենագրության տալ այն պատմությունը, որի համար կոչված ենք այս աշխարհում... Ասում էր, որ իրենց ժամանակներում շատ հրաշքներ են կատարվում, գիտությունն աներեւակայելի առաջադիմել է, անցյալ տեղափոխվելն, օրինակ, համարում էր սովորական մի բան. երանի՛ ես ապրեի էդ ժամանակներում... *(Դադար)* Հիմա 1753 թվականն է, եւ ես կանգնած եմ Շուշիի բերդի մատույցներում. այստեղից պիտի հսկեմ պատմության վերահայտնության ըն-

թացքը: (Շրջվում՝ ետ է նայում) Դե, առանց անցեք, արգո մելիքներ, առանց ձեր մասնակցության Արցախի ներկայիս պատմությունը չի գրվի եւ ոչ մի հնարով:

*Բեմական տարածք են առաջանում Դիզակի, Խաչենի, Զրաբերդի եւ Գյուլիստանի մելիքները:*

**Մելիքներ** – Ողջնյն մեր ժողովրդին:

**Տարեգիր** - Արգո մելիքներ, դուք հայ ռազմիկների, շինականների ու հոգեւորականների հետ կերտում եք Արցախի պատմությունը... եւ ահա ստացել ենք խիստ դժգոհություններ... ապագայից:

**Մելիքներ** – Ապագայից... Ինչ դժգոհություններ...

**Տարեգիր** – Եվ ինչնո միայն ապագայից... Դժգոհ ենք նաեւ մենք՝ հոգեւորականներս, ռազմիկներն ու ռամիկները նույնպես, նրանցից շատ տրտունջներ ենք լսում ամեն օր, նախ, այն պատճառով, որ դուք՝ մելիքներդ, Վարանդայի կենտրոն Ավետարանոցի բերդը չպաշարեցիք էնպես, որ պիղծ հոգի Մելիք-Շահնազար-երկրորդը սատակի էնտեղ իր զինակիցներով ու համախոհներով:

**Դիզակի մելիք** – Հայր սուրբ, մենք ամեն ջանք գործադրեցինք, բայց էդ սրիկան գործակցում է Շուշին զավթած Փանահ խանի հետ, մեր ուժերը չեն հերիքել Մելիք-Շահնազարին ծնկի բերելու: Փանահը նրան օգնում է զորքով ու զենքով:

**Տարեգիր** – Ա՛խ, Դիզակի քաջարի մելիք, միթե ինչ-որ բաշիբոզուկ պետք է խաթարի մեր պատմության պանծալի ընթացքը... Պատկերացնում եք, թե ինչ կլինի մեր երկրի վիճակը, եթե թույլ տանք, որ ստահակների էդ զույգը կենդանի մնա եւ շարունակի գործել իրենց ստոր նպատակներին հետամուտ...

**Դիզակի մելիք** – Չէ, թույլ չենք տա: Մեր Դիզակում բոլորն ատում են Մելիք-Շահնազարին ու Փանահ-խանին, էդ ատելությունից կկոտենք նրանց մահը:

**Տարեգիր** – Իսկ դուք ինչ կասեք, Խաչենի արգո մելիք:

**Խաչենի մելիք** – Խաչենում եւս բոլորը կատաղած են Մելիք-Շահնազարի եւ նրան սատար եկած Փանահի վրա: Ես ընտիր

զորք կհանեն նրանց դեմ:

**Գյուլիստանի մելիք** – Ես էլ: Էս անգամ Մելիք-Շահնազարը մեր ձեռից չի պրծնի: Բոլոր գյուլիստանցիք պատրաստ են զինվորագրվել մեր հողը օտար տարրերից մաքրելու համար: Մի անգամ Փանահը փորձել է Գյուլիստանի սահմաններում բերդ դնել, չթողեցինք, նրա հախիցը եկանք:

**Ջրաբերդի մելիք** – Ջրաբերդում նույնպես գազազած են Մելիք-Շահնազարի վարքից, մեծից փոքր սպասում են, որ օր առաջ նրան ու իր թրքացեղ գործակցին դժոխք ուղարկենք: Բայց մենք շատ կորուստներ ենք ունեցել նախորդ արշավանքին, մեզ ժամանակ է պետք նոր ուժեր ժողովելու համար:

**Տարեգիր** – Իսկ ժամանակը մեր դեմ է գործում, պատվելի մելիքներ, հզորանում են Մելիք-Շահնազարն ու Փանահ-խանը՝ էդ ավազակը, պարսկական արքունիքի նախկին մունետիկ-ջառչին, որին դուք՝ Ջրաբերդի արգո մելիք, ժամանակին հարկահավաք էիք նշանակել ձեր մելիքությունում, փրկել նրան հետապնդող պարսիկ շահի դահիճներից:

**Ջրաբերդի մելիք** – Հա, եղել է նման բան... մեղավոր եմ: Ես չէի պատկերացնում, որ էդ թափառաշրջիկ ջուանշիրցի խաշնարածը կարող է էսպիսի հայատյաց սրիկա դառնալ:

**Գյուլիստանի մելիք** – Եթե մենք ավելի ուշադիր լինեինք, կտեսնեինք, որ նա պարսկական արքունիքի գործակալ է: Դա կարող էինք գլխի ընկնել, երբ նա ոչխարի մի հոտով խանի տիտղոս առավ Թավրիզի շահից:

**Տարեգիր** – Եվ ահա թե ում հետ է գործակցում Մելիք-Շահնազարը. դա ինչպե՞ս կոչենք...

**Մելիքներ** – Դավաճանություն...

**Տարեգիր** – Ճշմարիտ: Եվ միթե Մելիք-Շահնազարի դավաճանական վարքը ձեզ էն աստիճան չի կատաղեցրել, որ դուք քուն ու դադար չունենաք էնքան, քանի դեռ նրա վրեժը չէք լուծել... Միթե դավաճանը կարող է ազատ ապրել մեր ազնվական ու քաջարի երկրում...

**Դիզակի մելիք** – Իրավացի եք, Հայր սուրբ, մենք սկսել ենք հապաղել, դա ինձ էլ դուր չի գալիս. Դիզակում չեն հասկանում, թե ինչու մինչևե հիմա մենք էդ վիժվածքների վերջը չենք տվել:

**Ջրաբերդի մելիք** – Նա ոչ միայն թրքացեղ ավազակի հետ է մեզ դավաճանել, այլևս պղծել է մեր ավանդական, մաքուր նիստուկացը:

**Խաչենի մելիք** – Նրա պղտոր արյունը...

**Տարեգիր** – Պղտոր արյուն... հա, երեւի նկատի ունեք, որ Մելիք-Շահնազարը մայրական կողմից թուրք է:

**Խաչենի մելիք** – Հենց դա, Հայր սուրբ... Նրա պղտոր արյունը մղել է սպանել եղբորն ու...

**Տարեգիր** – ... խորթ եղբորը՝ Հովսեփին, ով հայ ծնողների գավակ էր եւ պատվելի մելիք:

**Խաչենի մելիք** – Հա, կոտորել է եղբոր ընտանիքը, Էդպիսով իր ձեռքը գցել Վարանդայի մելիքությունը:

**Ջրաբերդի մելիք** – Բազմակնություն է իր տանը հաստատել, հարճեր է պահում, այլոց ամուսիններից կին է խլում...

**Դիզակի մելիք** – Մահմեդական սովորոյթներով է ապրում, Փանահին էլ կանչել ու Շուշիի բերդը նվիրել է նրան, եւ հիմա նրանք մեկտեղված՝ ուզում են մեր մեջ նոր պառակտություններ սերմանել, որ բաշխրզուկի հիմնած շինծու խանությունը տարածվի նաեւ մեզ վրա:

**Տարեգիր** – Եվ ղում եք դուք բողոքում... մի խեղճ վարդապետի... Եվ ինչպէս եք կարողանում հանգիստ քնել, արգո մելիքներ: Հիմա գրեմ, որ դուք անհեռատես ու թուլակամ արարածներ եք, եւ ձեզ կարող են մկան ծակը կոխել դավաճան ու թշնամի... *(Բացում է մատյանը եւ հանում գրիչը):*

**Մելիքներ** – Չէ, չէ, Հայր սուրբ, նման բան չգրեք... մենք վախկոտներ չենք:

**Գյուլիստանի մելիք** – Մենք իրոք քուն չունենք, վարդապետ, խիստ տագնապած ենք, որ Արցախի վրա մահացու վտանգ է կախվել:

**Տարեգիր** – Եվ ինչ... եւ ո՞վ է էդ ամենի գլխավոր մեղավորը...

**Մելիքներ** – Մելիք-Շահնազարը:

**Տարեգիր** – Եվ...

**Դիզակի մելիք** – Նրան պիտի շանսատակ անել:

**Տարեգիր** – Էլ ինչո՞ւ եք հապաղում... Հիշեք՝ վրեժի հրեշտակները ձեզ հետ են, նրանք Աստծո բարեհաճությամբ միշտ հովանի են ու քաջալերում են ձեզ: Գնացեք եւ ձեր գործը ավարտին հասցրեք, արգո մելիքներ:

*Մելիքները հանում են սրերը եւ համախումբ հարձակվում Մելիք-Շահնազարի վրա, որ սրվարաթղթե «բերդի» մեջ մեկուսացած՝ նայում էր բեմին ընթացող գործողությանը: Տեղի է ունենում մի կարճ սրամարտ:*

**Մելիք-Շահնազար** (գոռում է) - Փանանհ, օգնիր...

**Դիզակի մելիք** – Չի հասցնի, դավաճան, ան... (Մելիք-Շահնազարը տապալվում է):

**Գյուլիստանի մելիք** – Սատկեց...

**Զրաբերդի մելիք** – Հա:

*Մելիքները խաչակնքում են, սրերը դնում պատյանները եւ վերադառնում Տարեգրի մոտ:*

**Դիզակի մելիք** – Վարդապետ, մեր պարտքը կատարեցինք:

**Տարեգիր** (վերջացնելով գրառումը) - Տեսա, ապրեք, արգո մելիքներ: Սերունդների անեծքը ձեզ վրա չի լինի: Բայց ձեր անունները դեռ լիովին մաքրագործված չեն:

**Խաչենի մելիք** – Պարզ է, պետք է նաեւ Փանահին սատկացնել:

**Տարեգիր** – Հարկավ:

**Դիզակի մելիք** – Գնացինք, այրեր քաջագուն:

*Մելիքները հանում են սրերը եւ հարձակվում «բերդում» դողացող Փանահ խանի վրա. Վերջինս ճողոպրում է, բայց Գյուլիստանի մելիքը հասնում է երեւից եւ «սրախողխող» անում նրան: Մելիքները սրերը դնում են պատյանները եւ վերադառնում Տարեգրի*

մոտ:

**Մեղիքներ** – Վերջացրինք, Հայր սուրբ, Փանահին էլ շանսատակ արինք:

**Տարեգիր** (*գրառումն ավարտելով*) - Լավ, գրեցինք նաեւ այդ մասին: Մնաց մի կարեւոր պարտք:

**Ջրաբերդի մեղիք** – Էլի՛ պարտք ունենք...

**Տարեգիր** – Այո: Մի՞թե դուք չէիք տեսնում, որ Խնձրիստանի տանուտեր Միրզա-բեկը Փանահի հետ գաղտնի դավեր էր նյութում Խաչենի մեղիքի դեմ:

**Խաչենի մեղիք** – Իմ դէմ... Միրզա-բեկը... ավարտեց նաեւ եւ նշանակել տանուտեր, նա ինձ միշտ երախտագիտություն է հայտնում:

**Տարեգիր** – Երեսանց՝ երախտագետ, տակից՝ թշնամի ու դավաճան:

**Մեղիքներ** – Մի՞թե...

**Տարեգիր** – Այո, ոչ մի կասկած էդ դավադիրի հարցում, մենք ունենք անհերքելի ապացույցներ: Գնացե՛ք, արգո մեղիքներ:

*Մեղիքները հանում են սրերը եւ հարձակվում քիչ հեռվում դողացող Միրզա-բեկի վրա:*

**Միրզա-բեկ** (*գոռում է*) - Փանահ-խան... Մեղիք-Շահնագւնր...

**Դիզակի մեղիք** – Կանչիր, կանչիր, դավաճան, սատկած շները չեն վերակենդանանում:

*Մեղիքները «սպանում» են Միրզա-բեկին, խաչակնքում, սրերը դնում պապոյանները եւ վերադառնում Տարեգրի մոտ:*

**Խաչենի մեղիք** – Հայր սուրբ, էդ դավաճանին էլ ուղարկեցինք էն վիժվածքների ետեւից: Շնորհակալ ենք քեզ, որ զգուշացրիր վերահաս վտանգի մասին, թե չէ Խաչենի մեղիքությունը կընկներ դավաճանի ձեռքը, եւ ավերմունքի կենթարկվեր մեր շեն երկիրը:

**Տարեգիր** – Շնորհակալ եմ ձեզ, մեղիքներ, որ չհամակերպվեցիք եւ հաշվեհարդար տեսաք թշնամոց հետ: Ներքին թշնամիները երիցս ահարկու են, դուք հրաշալի գիտեք դա: Աղաչանքս է՝ եր-

բեք չհաշտվեք նրանց գոյության հետ, նրանք մեր երկրի առաջին կործանիչներն են... Ես ահա էսպես էլ գրում եմ իմ մատյանում. «Արցախի մելիքները աներկբա ոչնչացնում են բոլոր թշնամիներին՝ լինի ներսից, թե դրսից»:

**Մելիքներ** – Մենք այսուհետ կապրենք ու կգործենք էդ սուրբ օրենքով, վարդապետ:

*Մելիքները եւ Տարեգիրը հեռանում են «բեմից»:*

Արվեստանոցի սրահ-դահլիճում մի պահ քար լուրջուն տիրեց, առաջինը ծափահարեց ուշացումով եւ աննկատ ներս մտած գեներալ Քեհյանը, ով կանգնել եւ զուսպ հիացմունքով նայում էր «բեմեզրին» խմբված դերակատարներին: Ապա գեներալին միացան Տեր Միսաքը, Մովսեսը, մանկավարժ Սիմոնը եւ նոր՝ մյուսները. սրահում վայրկյաններ անց բռնկվեց ծափահարությունների բուռն ալիք, որ կերպեր յուրաքանչյուր թատերգակ: Հանդիսատեսներին մոտեցան բեմադրիչ Դավթյանը եւ դերակատարները, նրանք մի քանի անգամ խոնարհվեցին իրենց պատվող մարդկանց առաջ: Բեմադրիչը դահլիճից խոսելու իրավունք խնդրեց:

– Պարոնայք եւ տիկնայք, երախտապարտ ենք ձեր ջերմագին ու անկեղծ ծափահարությունների համար, դրանք, նախեւառաջ, ուղղված են վաղամեռիկ հեղինակ Միքայել Ասպարյանին, ով մեզ կտակել է այսպիսի հույժ արժեքավոր դրամա: Մեր երախտագիտությունը հայտնենք նաեւ մանկավարժ Սիմոն Վարազյանին, ով մոռացությունից փրկել է այս պիեսը: Մեր եղբայրական երախտագիտությունը փոխանցենք գեղանկարիչ Մովսես Մելիքյանին, ով վարակեց մեզ այս պիեսով եւ ուղղակի ստիպեց, որ այն բեմ հանենք... Մենք ներկայացրել ենք ստեղծագործության ընդամենը մեկ արարը, հուսամ, որ մոտ ապագայում, որեւէ բեմի վրա դուք կտեսնեք ամբողջական դրաման. այն արժանի է, որ իր մշտական տեղը գրավի թատերական խաղացանկում, հատկապես հիմա, երբ



բոլորս դեռ այնքան տխուր ու խռով ենք...

Բեմադրիչը զգաց, որ երկար խոսելու կարիք չկա, ավելի քան շատ բան է ասված թատերախաղով, բացի դրանից, հանդիսատեսները սկսել էին քչփչալ միմյանց ականջի, իսկ Տեր Միսաքը մոտեցել էր գեներալին եւ ողջագուրվում էր նրա հետ: Բոլորի հայացքներն արդեն նրանց էին հառված: Վայրկյաններ անց քահանան ու գեներալը թեանցուկ դուրս եկան փողոց:

– Տեր Հայր, տաճարում ինձ ասացին, որ դուք էստեղ եք, եկա հրաժեշտ տալու:

– Ի՞նչ է եղել... ՚հր եք գնում...

– Ինձ տեղափոխում են Երեւան: Ծառայությունս էնտեղ պիտի շարունակեմ:

– Այսինքն՝ ձեզ մեղմաբար աքսորում են...

– Հենց էդպես: Բայց ես մնում եմ իմ համոզմունքներին: Հույս ունեմ, որ իրավիճակը կփոխվի, հատկապես, որ էսպիսի մտայնություն է զարթնում մարդկանց մոտ,– ցույց տվեց արվեստանոցի ներսը:– Միայն ափսոս, որ մելիքների իսկական ոգին էսքան ուշացումով է վերակենդանացել... Դե, ոչինչ, լավ է ուշ, քան երբեք՝ ինչպես ասում են:

– Հա, գեներալ, էդ ոգին շատ պահանջված է:

– Իսկ ես երկու կրակի մեջ եմ հայտնվել... Չեմ ուզում արդարանալ, թե զինվորական եմ, ենթարկվում եմ հրամաններին, իբր ի՞նչ կարող եմ անել... Չէ, համարեք, որ Երեւան տեղափոխվելու տակտիկական քայլ է,– խորհրդավոր տոնով ասաց գեներալը:– Տեստություն, Տեր Հայր: Օրհնեք իմ ճանապարհը:

– Օրհնված լինեք, գեներալ,– մրմնջաց Տեր Միսաքը եւ աջը դրեց նրա գլխին:

Քեռայանը սեղմեց քահանայի ձեռքն ու շարժվեց դեպի ավտոմեքենան, բայց երեք-չորս քայլից ետ դարձավ:

– Տեր Միսաք, ես անչափ երախտապարտ եմ ձեզ էն ելույթի համար, որ «Եղնիկներում» եք ունեցել: Ձայնագրությունը հեռախո-

սիս մեջ պահում եմ... Հա, ինչ-որ խոսել ենք էնտեղ՝ ուժի մեջ է մնում, ինձ փոխարինողին պատվիրել եմ՝ լրիվ կատարել մեր պայմանավորվածությունները. հիշեցնեմ...

- Ամիսը մեկ գնալ զորամասերը, զրուցել զինձառայողների հետ, մինչեւ կվերադառնա գնդերեցը, իսկ մեր նկարիչ ընկերները գարնանը կանեն խոստացած որմնանկարները:

- Հիանալի: Հաջողություն ձեզ, Տեր Հայր, Աստված օգնական:- Այս անգամ նա հեռացավ՝ քահանայի հետ գրկախառնվելուց հետո:

- Աստված մեզ հետ,- տրտմաձայն արձագանքեց Տեր Միսաքը:

## ՀԵՏԱՊՆԴՈՂ ՈԳԻՆԵՐ

*...մորմորում է նա  
մութ, աներևույթ, կանչում է - ուր...*

*Եղիշե Չարենց. «Երկիր Նաիրի»*

Եղբոր զինձառայող թոռան հուղարկավորությունից հետո գնդապետ Վարդանյանն ընկճված էր սաստիկ, տնից չէր ելնում հետագա մի քանի օրերին: Նա երկար պառկում էր բազմոցին, մեկ-մեկ միացնում հեռուստացույցը, բայց մի քանի րոպե դիտելուց հետո զայրացած անջատում էր՝ հայիոյելով էկրանին հայտնվող արդարացողներին ու դատապարտողներին. նա գիտի, որ պարտությունը մի ձեռքով չի լինում, այն կյանքի է կոչվում բազմաձեռ կարգով, պարտությանը մասնակից են դառնում տարատեսակ ուժեր, անկախ նրանից՝ դա գիտակցում են իրենք, թե՛ ոչ: Աչքերը փակում էր եւ փորձում կռահել, թե ինչպես են գործի դրվել ազգային խայտառակության մեխանիզմները, որտեղից են խրախուսվել ու սնվել այն արկածախնդիրները, որ հանդգնել են երկիրն ու բանակը տանել պարտության ճանապարհով: Նա իր համար վերլուծություններ ու եզրահանգումներ էր անում, սակայն ամեն անգամ տեսնում էր, որ իր դատողություններն ու հետետությունները թերի են, որոշ կարեւոր մանրամասներ շարունակ սպրդում էին նրա տրամաբանությունից: Եվ կրկին ու կրկին զգում էր, որ անտեսանելի մեկը, կարծես, դիմացը կանգնած՝ «լալոշ-լալոշ» ծաղրում է իրեն, կամ էլ անցնում է իր ետեւը եւ շնագայլի պես գոմոռում, երբեմն էլ

մանրահաչում ու ոռնում: Գնդապետի կինը նկատում էր, թե ինչպես է ամուսինը տանջվում եւ դառնում ինքնամփոփ ու լռակյաց, վախենում էր, որ նրա մոտ կարող է ի հայտ գալ նյարդային կամ հոգեկան խանգարմունք, ուստի մեղմորեն ու փաղաքուշ ձեւով մի առավոտ խնդրեց նրան, որ միասին բժշկի գնան, «ախր հալումաշ կլինես ու ձեռից կգնաս»:

– Չէ, չէ, ոչ մի բժիշկ... Բժիշկն էստեղ անելիք չունի,– կտրական արձագանքել է գնդապետը, բազմոցից վեր կացել եւ մտախոհ նայել պատուհանից դուրս: Մի երկու րոպե լռելուց հետո հավաքել է մանկավարժ Սիմոնի հեռախոսահամարը, ում հետ գրեթե եղբայրացել էր ապաստարանի օրերին: Սիմոնի ազնվությունն ու խորագիտակությունը գրավել էին գնդապետին, բացի դրանից, նրան դուր էր գալիս, որ մանկավարժը հետեւողականություն է հանդես բերում իր համոզմունքներում, անկեղծ ու անմիջական է շփումների մեջ,– ուստի նրա հետ հոժարակամ քննում էր իրեն հուզող «խուճում» հարցերը:

– Բարեւ, վարժապետ ջան... Հա, ոչինչ, դու լավ ես... Կարմնք էսօր հանդիպել... դրսում, մի քիչ կզրուցենք, քանի օր ա՛ չենք տեսնվել...

Գնդապետն ու մանկավարժը պայմանավորվեցին հանդիպել մեկ ժամից, Օղակածեւ պուրակում, որը վաղուց հարմար ու հաճելի հավաքատեղի է քաղաքի բնակիչների, ինչպես եւ եկվորների համար: Նախկին զինվորականի կինն ուրախացավ, որ ամուսինը վերջապես ցանկություն ունի տնից դուրս գալ եւ հանդիպել մարդկանց, ինչը նշանակում է, որ նա վերագտնում է իրեն եւ անցնում սովորական առօրյայի: Մինչդեռ գնդապետն այլ բան էր կարծում՝ որ սովորական առօրյա չի կարող լինել մեկի համար, ով տեսնում եւ զգում է, թե ինչ է կատարվել իրենց հետ, եւ ինչ հետեւանքներով է դա հղի: Բայց այդ ամենը կնոջը բացատրելու կարիք չտեսավ, հագնվեց ու ժամանակից շուտ աճապարեց դեպի հանդիպավայր:

Մանկավարժ Սիմոնը նույնպես շուտ էր եկել. նա կանխազգա-

ցել էր, որ գնդապետը լուրջ խնդրի է բախվել, հակառակ դեպքում դրսում չէին հանդիպի, կիրավիրեր տուն՝ թեյ խմելու, ինչպես արդեն եղել է մի երկու անգամ: Նստեցին լուված շատրվանների հարեանությամբ տեղադրված նստարաններից մեկին:

– Ինչ կա, գնդապետ ջան,– մտահոգ հարցրեց մանկավարժը:

– Ո՞նց ասեմ... ինչ-որ տարօրինակ բան ա կատարվում ինձ հետ...

– Ինչ... հիվանդացել ես...

– Չէ, հո ինչ-որ հիվանդության համար քեզ չէի անհանգստացնելու... Ասես ինչ-որ մի բան հետապնդում ա ինձ...

Մանկավարժը թեթևացած շունչ քաշեց, թեպետ դեռ լիովին վստահ չէր, որ իր հապճեպ ենթադրությունը ճիշտ է:

– Կարո՞ղ ես ասել, թե դա ինչի նման է... մարդ է, կենդանի է... գերբնական արարած է...

– Շակալի նման ա... կանգնում ա դեմս, լալոշ-լալոշ անում, հետո հետեւ ա անցնում՝ հաչում ու ոռնում... լկտիրեն ու ցինիկաբար... Ինչ ես կարծում՝ ես խելագարվում եմ...

Մանկավարժը ծիծաղեց:

– Չէ, ինչ խելագարվել... Դու ավելի լավ վիճակում ես:

– Ինչ...

– Այո, այո. օրինակ՝ ինձ գայլերի ոհմակն է հետապնդում... Այ, հիմա էլ,– մանկավարժը ձայնն իջեցրեց եւ ցույց տվեց մոտակա արձանը,– այ, նրա տակ հիմա խմբված են ինձ հետեւող գայլերը, այսինքն՝ նրանց ոգիները... ուրվականները, բայց ես դրանց բանի տեղ չեմ դնում, արհամարհում եմ, մտովի քրջ եմ անում եւ շարունակում գործիս մնալ:

Գնդապետը մտածեց, որ մանկավարժն իրեն ձեռ է առնում կամ ցանկանում է կատակի տալ իրեն հուզող խնդիրը, որպեսզի «չմտատանջվեմ, հեշտությամբ հաղթահարեմ արտառոց իրավիճակը»: Ցանկացավ գնալ, վեր կացավ, բայց կրկին նստեց տեղում եւ նեղացած երեխայի պես նայեց զրուցակցին:

– Վարդանյան ջան, ճիշտ եմ ասում, կարծում ես՝ կատակո՞ւմ եմ...– աչքերը թարթելով՝ բացատրել փորձեց Վարազյանը:– Ես էլ քո օրին եմ, գուցե՝ ավելի վատ... Էդ ուրվականները նրանց «պատվիրակներն» են, ովքեր մեր երկիրն ու մեզ հասցրել են էս օրին՝ էդ մատնիչ ու արկածախնդիր ստահակները. նրանք ցանկանում են վախեցնել մեզ, գրգռել ու հունից հանել, որ անկամ ու վեհերոտ լինենք, որ չկարողանանք դիմակայել նրանց, նաեւ՝ թշնամուն, որ հաշտվենք էս մղձավանջի հետ, եւ նրանք շարունակեն իշխել մեզ վրա... Սա իմ տեսակետն է, համոզմունքը... կարող ես եւ չհավատալ:– Գնդապետը տարակուսանքով նրան էր նայում:– Բայց իմացիր՝ եթե քեզ հետապնդող ուրվականին չքշես հեռու՝ քո մտքից ու հոգուց դուրս, նա քեզ... կզգի...

Վարդանյանը մտախոհ նայեց Սիմոնին, ապա գլուխը թեքեց քիչ հեռվում խոյացած բրոնզե արձանի կողմը. մի պահ պատկերացրեց, որ այնտեղ, իրոք, դարանել է գայլերի մի ոհմակ եւ սպասում է, թե երբ կհայտնվի մանկավարժը, որպեսզի հոշոտի նրան. այդ պատկերը շատ բան տեսած մարտական գնդապետին սուսկալի թվաց:

– Ես սնահավատ երբեք չեմ եղել, բայց քո ասածներն, իրոք, մտածելու տեղիք են տալիս,– ծանրախոհ արտաբերեց նախկին զինվորականը:

– Ուզո՞ւմ ես՝ արի գնանք Տեր Միսաքի մոտ, նա մեզ երեւի կարողանա օգնել էս հարցում:

– Իսկ եթե երկուսս էլ ծիծաղելի երեւանք քահանայի աչքին...

– Մեր քահանան չի ծիծաղի ցավ ու մտահոգություն ունեցող մարդկանց վրա, հակառակը:

Երկու «ոգեհալածյալները» շարժվեցին դեպի Սք. Աստվածամոր Հովանի եկեղեցի: Երբ տեղ հասան, ականատես եղան, թե ինչպես քահանան տաճարի բակում կանգնած՝ աշխույժ զրուցում է մի խումբ սփյուռքահայերի հետ, որոնք, պարզվում է, առաջիններից էին, որ Արցախ էին եկել ետպատերազմյան օրերին՝ իրենց զորակ-

ցույթունը ցուցաբերելու մտադրությամբ: Գնդապետն ու մանկավարժը խմբին մոտեցան այն պահին, երբ Տեր Միսաքն ասում էր իրեն օղակած մարդկանց.

– Աղոթքն արժեք է ձեռք բերում, երբ աղոթող մարդը նաեւ գործում է՝ ստեղծում, օգնության հասնում...

– Հարկնով, հարկնով,– արձագանքում էին զրուցակիցները:

– Մենք աղոթել ենք ձեզ համար, հիմա եկել ենք օգնելու,– իրենց կեցվածքը որոշակիացրեց ակնոցավոր, կլոր ու կարմրավուն երեսով մի տղամարդ, ով, ի տարբերություն ուղեկիցների, խոսում էր արեւելահայերեն. նա արտաքուստ ծանոթ թվաց մանկավարժ Սիմոնին: Հետո գնդապետին ափսոսանքով կասի, որ «էդ մարդը շառլատանի մեկն է՝ իր ձեռքերն է տաքացնում հայկական տարբեր կազմակերպություններում»: Բայց այդ պահին նման մեկնությունը Վարագյանն անտեղի համարեց, մտքում գոհ եղավ, որ կան մոտ ու հեռու հայրենակիցներ, որոնց ներկայությունն ինքնին սատարում ու զորակցություն է:

– Ով աղոթում եւ բարությամբ է գործում, նա աղոթում եւ գործում է իր ու ամենքի բարօրության համար,– քարոզը շարունակեց Տեր Միսաքը եւ ասես կանչ լսելով՝ շրջվեց ու տեսավ «ապաստարանցի» բարեկամներին:– Դե, Աստված ձեզ հետ, հաջողություն ամենքիդ,– ասաց քահանան հավաքվածներին եւ փութով մոտեցավ նոր այցելուներին: Ողջագուրվեց նրանց հետ:– Բարով եկաք, բարով տեսանք, հարազատներս: Ինձ, նախ, ասեք ձեր որպիսությունը,– հետաքրքրվեց քահանան:

– Դե, ոչինչ, Տեր Միսաք, միայն թե...– չգիտեր՝ խոսքը ինչպես շարունակեր մանկավարժ Սիմոնը:

– Միայն թե... շան օրի ենք, ճիշտը որ ասենք,– փորձեց ավելի որոշակի արտահայտվել գնդապետ Վարդանյանը:

– Ի՞նչ է պատահել,– տագնապեց Տեր Միսաքը,– հո նոր փորձանք չի՞ եղել...– Տեսնելով, որ մանկավարժն ու գնդապետը դժվարանում են խոսել, նրանց երիցտուն հրավիրեց:– Թեյ կխմենք ու

կգրուցենք, բակում կանգնած հո չենք մնա...

- Չէ, Տեր Հայր, ավելի լավ է գրուցենք էստեղ, ներսում մեզ նեղված ենք զգալու, համ էլ պատերն ականջներ ունեն, չէ՛...- իր առարկությունը հիմնավորեց Սիմոնը:

- Հա... Գնանք այ էն նստարանին նստենք,- առաջարկեց գնդապետը եւ շարժվեց մատնանշած ուղղությամբ:

- Լավ, ինչպես ասեք,- համաձայնեց քահանան:

Երեքով հարմար տեղավորվեցին տաճարի բակի նստարաններից մեկին: Քիչ հեռու գիրկընդխառն մի զույգ էր նստած, որ տեսնելով մոտիկ տեղավորվող մարդկանց, այդպես գրկված էլ հեռացավ:

- Տեր Միսաք,- իրենց հուզող հարցը բացապարզել փորձեց մանկավարժ Սիմոնը,- մենք՝ գնդապետը եւ ես, կարծես հալածանքի տակ ենք...

- Ինչ հալածանք... ինչէր եք ասում...

- Դե, գուցե մի քիչ մուգ գույներով եմ ներկայացնում իրավիճակը, բայց... դրա նման մի բան:

- Այսինքն...

- Գնդապետին հետամտում է մի սանձարձակ շնագայլի ուրվական, իսկ ինձ՝ գայլերի ոհմակի... Դե, ես դրան առանձնակի կարեւորություն չեմ տալիս, բայց, այ, Վարդանյանի վրա, որքան տեսնում եմ, էդ շնագայլ-ուրվականը տհաճ ազդեցություն է գործում: Մարդը դրանից ջղագրգիռ ու անտրամադիր է դարձել:- Ապա մանկավարժը համառոտ հավելեց, թե ինքն ինչպես է մեկնաբանում ուրվականների ի հայտ գալը:

Տեր Միսաքը կամացուկ ծիծաղեց: Գնդապետը խոժոռ նայեց մանկավարժին:

- Ասացի, չէ՛, որ մասխարա կդառնանք,- մոայլախոսեց Վարդանյանը:

- Սպասիր, նա իր բուն ասելիքին դեռ չի անցել,- ընկերոջը կանխեց Սիմոնը:

- Ուրեմն՝ ոգիները նաեւ ձեր ետեւից են ընկել... Իսկ ես կար-



ծում էի, թե նրանք ձեզ չեն մոտենա,- հանդարտվելով՝ ասաց քահանան:

- Ձեզ էլ են հետապնդում ոգիները, Տեր Միսաք,- զարմանքից հոնքերը վեր բարձրացնելով՝ հարցրեց մանկավարժը:

- Էն էլ ո՞նց... Գիշեր ու տիվ: Բայց մի տարբերություն կա. ինձ չար ոգիները չեն հետապնդում, այլ՝ բարի:

- Էդ ի՞նչ բարի ոգիներ են, Տեր Միսաք,- կասկածանքով հարցրեց գնդապետը:

- Մեր սրբերի ոգիները... Մաշտոցի, Նարեկացու, Կոմիտասի... Առաջ էլ էին նրանք մեկ-մեկ հայտնվում, բայց հիմա անդադար են շուրջս պտտվում:

- Եվ ի՞նչ են պահանջում քեզնից սուրբ հոգիները,- արդեն համակ հետաքրքրասիրություն էր մանկավարժ Սիմոնը:

- Ուզում են հանգամանալի իմանալ, թե ինչ է կատարվում մեզ հետ... ինչպես եւ ինչու ենք մատնվել էսպիսի թշվառ վիճակի, թե կարող են նորովի օգնել մեզ...

- Եվ դուք նրանց խոստովանում եք մեր կրած տառապանքներն ու մեղքերը...

- Իհարկե, ամենայն մանրամասնությամբ, նույնիսկ գրավոր եմ նրանց պատասխանում... Գրում եւ բարձրաձայն կարդում եմ իմ խոհածումները: Սաղմոսների հանգույն եմ գրում, որ նրանց համար առավել սրտահույզ լինի իմ խոսքը:

- Դուք նաեւ սաղմոսներ գրելով եք զբաղված,- շարունակում էր զարմանալ Սիմոնը:

- Հա, գրում եմ գիշերները, մեր տանը, եկեղեցում դրա համար ժամանակ չի լինում:

- Էդ ոգիները հիմա էստեղ են,- գնդապետին կասկածը չէր լքում:

- Այո, այո,- աշխույժ արձագանքեց քահանան:- Նրանք հիմա կանգնած են այ՛ն էն մարմարակերտ խաչքարի մոտ... Ուզում եք մոտենանք նրանց...

- Շատ կուզենայի,- զվարթագին հարեց մանկավարժը:- Դու էլ

արի, գնդապետ ընկեր: Գուցե նրանց խնդրենք, որ մեզնից հեռու քշեն շնագայլին ու գայլերի ոհմակին...

– Դե ասա ոգեհարցման ենք գնում, էլի,– քմծիծաղ տվեց գնդապետը, բայց հետեւեց խաչքարին մոտեցող քահանային ու մանկավարժին: Երբ արդեն տեղում էին, Տեր Միսաքը հուշիկ դիմեց ուղեկիցներին.

– Ես հիմա մեր սուրբ ոգիներին կխնդրեմ, որ ձեզ հեռու պահեն շառ ու փորձանքից, որ էդ աներես կենդանիների ուրվականներին վերացնեն ձեր զգայության դաշտից: Դուք միայն պիտի հավատաք իմ աղոթքի զորությանն ու ճշմարտացիությանը:

Մանկավարժը գլխով արեց, իսկ գնդապետը լուռ կանգնել էր՝ հայացքով մոտակա պարսպից այն կողմ, որտեղ բանակի գրոհային գունդն էր տեղակայված, եւ ուր մի ժամանակ ծառայել էր: Քահանան ավերին իրար միացրած՝ սկսեց մտովի աղոթել: Անցավ երկու-երեք րոպե: Նախկին զինվորականի համբերությունը սպառվեց, շուռ եկավ եւ մանրաքայլ ուղղվեց դեպի աստիճանները, որ իջնում են առ փողոց: Քահանան ավարտեց աղոթքը եւ տեսավ հեռացող գնդապետին:

– Նա չի հավատում,– ավստասնքով ասաց Տեր Միսաքը,– բայց ես մեր սրբերին բարեխոսեցի, որ ձեզ անհանգստացնող երեւոյթներն առհավետ ջնջեն:

– Անչափ շնորհակալ եմ, Տեր Հայր: Գնդապետին կփոխանցեմ ձեր բարեխոսությունը: Մի նեղացեք նրանից, դեռ վշտի մեջ է, ողջ կյանքն աթեիստ զինվորական է եղել, բայց տեսնում եք՝ ինչքան է դարձի եկել...

– Դեռ կիսատ է էդ դարձը, նրան անգամ շնագայլի ուրվականն է հունից հանում:

– Երեւի նույնը նաեւ ինձ է վերաբերում, գուցե՝ ավելին: Ախր ինձ գայլերի ոհմակն է հետապնդում:

– Դա ուրիշ մեկնություն ունի, սիրելի Սիմոն: Դուք ազգային հոգեկերտվածքով ու մտածելակերպով այր եք, երկիրը կրակի տված

էն մատնիչ ու արկածախնդիր ստահակները սարսափում են ձեզ նման մարդկանցից, ուստի ձեր ետեւից ուղարկում են ոչ թե մեկ գայլի ուրվական, այլ՝ ամբողջ ոհմակի: Հետապնդման մեջ ձեր հայտնվելն անհավատության հետ կապ չունի. ձեր մեջ էնքան աստված կա, որքան իմ մեջ:

– Երախտապարտ եմ ձեզ, Տեր Միսաք, մխիթարական խոսքերի համար: Բայց պարզեք՝ ինչո՞ւ մեր խնդրով Աստծուն չեք դիմել, այլ՝ մեր սրբերի ոգիներին...

– Ես դա արել եմ Աստծո հովանու տակ. Բարձրյալին հաճո է, երբ մենք դիմում ենք նաեւ Նրա հովանավորությունն ու պաշտպանությունը վայելող սրբերին: Առանց Աստծո մենք ոչինչ ենք: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ կլինէր Արցախի, Հայաստանի վիճակն առանց Աստծո...

– Զարհուրելի:

– Իրավիճակն է թելադրում, թե տվյալ պահին ում բարեխոսությանը դիմենք: Մենք քննելու եւ խորհելու բան ունենք, եթե մեզ հետամուտ են այլ դասի ոգիներ:

– Ի՞նչ դասի...

– Դե, ասենք, մեր հին աստվածների ոգիները... Մովսեսի դեպքը հենց էդ բնույթի է:

– Մովսեսին էլ են ոգիներ հետապնդում...

– Էն էլ ինչ ոգիներ,– գրեթե ցնձագին պատասխանեց Տեր Միսաքը բայց եւ իսկույն զգաստացավ, ասես կարող էին իրեն բռնել զանցանքի վրա:– Նրան հետամուտ է հայոց գերագույն աստված Արամազդը՝ գրեթե իր ամբողջ շքախմբով... Էդպես է ասում Մովսեսը:

– Այ թե հետաքրքիր շրջապատում է հայտնվել մեր ընկերը... Տեր Հայր, իսկ ինչ մտահոգվելու բան կա, ինչ է՝ հին աստվածները չե՞ն կարող մեզ օգտակար ծառայություն մատուցել էս տխուր օրերին... Նրանց ոգիների ներկայությունը վտանգավոր է համարում մեր եկեղեցին...

- Ես որ անձամբ դեմ չեմ, ավելին ասեմ՝ կողմ եմ, որ էսօր մեզ զորավիզ լինեն նաեւ մեր հին աստվածները: Մենք հիմա էնպիսի ծանրագույն ժամանակաշրջան ենք ապրում, որ մեր ազգային գոյի, պատմության, ներուժի ամեն մի նշույլ հանուն մեր վերածննդի ու հարատեւության ի սպաս դնելը չափազանց դրվատելի է: Երբ նավը փոթորկի մեջ է հայտնվում, այն փրկելու համար խելացի անձնակազմը՝ նավապետի ղեկավարությամբ, չի նայում, թե իրենցից ով ով է՝ ինչ դավանանք ու ծագում ունի, ինչ կենսագրության ու հակումների տեր է, բոլորը ձեռքձեռքի են տալիս եւ իրենց միացյալ ուժը նվիրաբերում իրենց ու նավի փրկությանը:

- Հրաշալի: Պարզապես մեր քրիստոնյա համայնքն էդ դեպքում կարող է խանդով վերաբերվել հին աստվածների ոգիների վերադարձին, եթե անգամ նրանք ուղեկցում են ընդամենը մեկ անձի:

- Դե, այո, բնական է: Բայց ես չեմ կարծում, որ էս դժնի օրերին կարող է գտնվել մի քրիստոնյա, որ աղմկի մեր հին աստվածների առիթով: Իմ համոզմամբ՝ մենք պետք է կարողանանք հինն ու ներկան էնպես լծորդել, որ ձեռք բերենք նոր ու ազդու կովաններ եւ դրանք ծառայեցնենք հանուրիս բարօրությանը:

- Դուք փայլուն իդեալիստ եք, Տեր Հայր, թույլ տվեք հիանալ ձեր մտահորիզոնով:

- Լավ, լավ, հիանալու նյութ գտաք:

- Ճշմարիտ եմ ասում: Բայց մեր խնդրին դառնանք, Տեր Միսաք. հիմա Մովսեսը իրեն լավ է զգում հին ոգիների շրջապատում...

- Այո, ըստ իրեն, թեւեւ ես կասկածներ ունեմ: Համենայն դեպս, տեղին կլիներ էդ թեմայով մեկ անգամ եւս զրուցել նրա հետ:

- Ես հիմա կզնամ նրա մոտ:

- Բարի, կես ժամից կմիանամ ձեզ: Ինձ մարդիկ են սպասում, ճանապարհեմ ու գամ:

Սիմոն Վարազյանը քայլեց դեպի Մովսեսի արվեստանոցը, որ եկեղեցուց մոտ հինգ հարյուր մետր հեռավորության վրա է:

Քայլում եւ խորհում էր, թե ինչ հարցերով կարող է նկարչից ստանալ ամբողջ ճշմարտությունը նրան հետամտող ուրվականների վերաբերյալ, եւ մեկեւն նախկին ուսուցչին պարուրեց տագնապը. իսկ եթե Մովսեսը փորձության մեջ է այդ ոգիների երեսից, իսկ եթե ահաբեկված է ու խուճապի մատնված... Մանկավարժը, նախ, արագացրեց քայլերը, ապա սկսեց վազել, իսկ թուպներ անց սուրում էր՝ իր անտեսանելի ու անշոշափելի ներքին այրման շարժիչը միացրած: Նա վերջին անգամ այդպես սրընթաց վազել էր տասը տարի առաջ, երբ դպրոցում իրեն լուր հասցրին, որ անդրանիկ թոռանը, ջարդված ոտքով ու կողոսկրով, տեղափոխել են հիվանդանոց. վազել էր... ու քիչ էր մնում ոտքը ջարդեր՝ ընկնելով հիվանդանոցի մուտքի մոտ: Հիմա նման փորձանքից զերծ մնաց, բայց տեղ հասնելով՝ արվեստանոցի դուռը բացեց կարմրատակած ու գրեթե շնչակտուր: Մովսեսը եւ նրա սանուհիները, որ նկարակալների վրա գլխահակ աշխատում էին, միաժամանակ բարձրացրին գլուխները եւ զարմացած նայեցին ներս մտնողին, որ ասես մազապուրծ՝ ապահովություն էր փնտրում պատահական դռներից ներս: Մովսեսը փութաց նրան ընդառաջ:

– Ի՞նչ է եղել, ընկեր Վարագյան, հո կատաղած շներ չեն ընկել հետեւիցդ...

Մանկավարժը դեռ շունչը տեղը բերելու կարիք ուներ. Մովսեսը մի բաժակ ջուր տվեց նրան եւ կրկնեց հարցը՝ ինքն էլ արդեն նկատելի տագնապած:

– Դու լավ ես, Մովսես եղբայր...– ի վերջո խոսեց մանկավարժը:

– Հա, ընկեր Վարագյան, ի՞նչ է եղել որ...– Մովսեսը մանկավարժին թեւանցուկ տարավ ու նստեցրեց մոտակա աթոռին:

– Ասում ես՝ ամեն ինչ կարգին է... Հո քեզ չէ՞ն հետապնդում...

– Ովքեր... թշնամիները...

– Չէ... էդ ոգիները...

Մովսեսը կռահեց նախկին ուսուցչի վախի ու մտատանջության շարժառիթը, եւ մանրիկ ծիծաղեց:

– Տեսնում եմ՝ Տեր Միսաքը քեզ կարգին վախեցրել է... Անհոգ մնա, Վարազյան, ես լավ լեզու եմ գտնում էդ ոգիների հետ:

– Նրանք բարի՞ են... Հո քեզ չե՞ն նեղում իրենց պահանջկոտությամբ ու կոպտությամբ...

– Բարի են, բարի են, մի անհանգստացիր: Բայց, դե, շատ են բծախնդիր... հատկապես կանայք:

– Կանայք...

– Հա, Անահիտ ու Նանե դիցուհիները... դե, նրանց ոգիները: Ինձ մատնացույց են անում մեր իրականության բոլոր գույներն իրենց նրբերանգներով, ինձ վրա առկա սեւ բծերն են մատնանշում, հուշում են, թե ինչպես պետք է ինձ պահեմ հատկապես արտակարգ իրավիճակներում, ասես... հարի՛Ֆ են դաստիարակում: Մի քիչ ինքնասիրությունդ խոցվում է, բայց՝ ոչինչ: Իսկ, այ, Աստղիկ դիցուհին իսկապես աննման է, շատ փափկանկատ, ինձ սիրո էնպիսի խոսքեր է սովորեցնում, որ դրանցով ամենաքմահաճ կնոջը կարելի է խելքահան անել... Օրինակ՝ «Եթե լռես տխուր, /քո երգող սիրտն ու լեզուն կդառնամ... /Իմ ծոցը լի էր աստղերով, իմ սեր, /հիմա լոկ դու ես այնտեղ շողում»... Ահա էդ կարգի բաներ: Իսկ գերագույն Արամազդը, չնայած գոռոզ տեսքին, շիտակ ու լայնախոհ աստծո տպավորություն թողեց ինձ վրա. նա փիլիսոփայորեն է նայում մեր էսօրվա կացությանը, ասում է՝ երբ մենք արելի հետ նորից եղբայրանանք, մեր կյանքը շուտ կգա աշխարհի բոլոր լույսերի կողմը: Նաեւ շարունակ հարցնում է, թե մեզ կոնկրետ ինչ է պետք, որ թոթափենք էս ստորացումն ու անարգանքը, որ կրեցինք մեր սեփական ստահակներից ու թշնամիներից...

– Եվ դու ի՞նչ ես պատասխանում, մեզ առաջնահերթ ի՞նչ է պետք, Մովսես...

– Ամենապարզ բաները՝ ինքնավստահություն ու հավատ մեր իսկ ազգային տեսակի եւ աստվածատուր առաքելության հանդեպ: Արամազդն ինքն է իմ ու ամենքիս աչքը խոթում, որ մենք երես ենք թեքել մեր բուն ոգուց, նա այն համեմատում է ընտանիքի անա-

ռակների կողմից բռնաբարված հարսի հետ. նրա պատիվն ու կերպարանքը սրբել է պետք անարգանքից:

– Խիստ է ասված, բայց՝ տեղին:

– Հին աստվածներն ինձ ասացին նաեւ, որ եթե մեր մայրենին չջարունակի վաղեմի կշռույթով հնչել մեր լեռներում, ապա նրանք կփոթորկվեն մրրկահույզ ծովի պես եւ ամենքիս կխորտակեն քարաժայռերի հեղեղի տակ... Մենք վայրագի բաժին կդառնանք, եթե հայկական ոգին չվերածենք էստեղ իր բոլոր ավիշներով, նախշերով ու գույներով... Մեր դժգունած ու զգզված տեսքը, վախենամ թե հիմա վանում է նույնիսկ մեր ամենաբարեհամբույր աստվածներին:

Արվեստանոց մտավ Տեր Միսաքը՝ լեցուն տոպրակը ձեռքին: Մովսեսն ասեւ վերալիցքավորված՝ առույգ պատանու պես ընդառաջ գնաց քահանային: Ողջագուրվեցին եւ մի պահ միմյանց նայեցին ժպտուն ու խորաթափանց հայացքով:

– Տեսնում եմ՝ մեր սրբերից ողջույններ ես բերել, Տեր Միսաք, – խնդամնդաց Մովսեսը:

– Հա, ողջույններ Աստծուց ու սրբերից, – արծազանքեց հոգեւորականը եւ ձեռքի տոպրակից մի մեծ, մուգ կարմիր խնձոր հանելով՝ մեկնեց նկարչին: – Սա քեզ՝ Թորոս Ռոսլինի ոգուց: – Ապա կարմիր խնձորներ տվեց մանկավարժ Սիմոնին եւ սկսնակ նկարչուհիներին. սրանք պարապմունքը թողած՝ ականապիշ հետեւում էին արվեստանոցում ծավալվող դեպքերին դեռ Վարագյանի գալստյան պահից: Խնձորաբաշխությունն ավարտելով՝ քահանան նստեց մանկավարժի կողքին: Նկարիչը հենվել էր հյուրերից քիչ հեռու դրված սեղանին՝ կանխավայելելով հետաքրքրաշարժ խոսակցություն:

– Տեր Միսաք, մենք Մովսեսի հետ ուզում էինք պարզել, թե ինչ կարող ենք ականկալել մեր բարի ոգիներից... Դե, գիտե՞ք՝ նա շփվում է Արամազդի եւ նրա արքանյակների ուրվականների հետ:

Մովսեսը ծիծաղեց: Մի երկու անգամ հաճույքով կծեց ձեռքի

խնձորը, ապա դարձավ քահանային.

- Ընկեր Վարագյանը գերիրական ձեռով է ընկալում մեր իրավիճակը, դա կարելի՞ է ելակետ համարել մեր հետագա մեկնությունների համար, Տեր Միսաք...

- Կարծում եմ՝ այո, իրականությունն իր բոլոր ձեւերի մեջ արմատապես նույնն է, չի կարելի մի երեսը վեր կամ ցած դասել մյուսից:

- Հա, իրավացի է Տեր Հայրը,- շտապեց քահանայի խոսքը կնքել մանկավարժը:- Մենք մեր կյանքն իր բոլոր շերտերի մեջ դիտարկելու պարտականություն ունենք:

- Էդ դեպքում ես էլ ոգիներին պահանջներ դնելու իրավունք ունեմ, չէ... Իմ իրականությունն ու պահանջատիրությունը նրանցի հետ զուգակցելը նույնպես կարելի է, չէ...

Տեր Միսաքն ու Սիմոնը մտածմունքի մեջ ընկան. երկուսի համար էլ հարցը խրթին էր: Նախ քահանան անդրադարձավ Մովսեսի հարցմանը:

- Ես ինձ ոգեգետ չեմ համարում, քրիստոնյա հոգեւորական եմ եւ շարքային հայ մարդ եւ էդ միասնական դիտակետից կասեմ, որ ոգիներին լրացուցիչ դերակատարում ու պատասխանատվություն վերապահելը կարող է բացասական հետեւանքների հանգեցնել:

- Ինչո՞ւ,- հանգիստ հարցրեց Մովսեսը:

Քահանան նորից մտասուզվեց:

- Չգիտեմ... պարզապես էդպես եմ կանխազգում:

- Իսկ դուք ի՞նչ կասեք, ընկեր Վարագյան:

- Ես կարծում եմ, որ եթե ոգիներն, իրոք, բարի են, ապա չպետք է զայրանան, երբ նրանց կեցվածքին քննադատաբար, պահանջկոտ հայացքով նայենք: Ինչ ակնկալիք նրանք ունեն մեզնից, նույնը կարող ենք մենք ակնկալել նրանցից:

- Հիանալի,- գոչեց Մովսեսը:- Սիմոն Վարագյանը բարձրաձայնեց այն, ինչ ես էի լուռումունջ մտածում: Մեր հին աստվածների ոգիներին անցած մի քանի օրը ականջ էի դնում ամենայն ու-



շաղրությանը ու հարգանքով, չէ՛ ականաճանքով, բայց հետո սկսեցի ինքս հարցեր ուղղել նրանց, եւ ահա երեկվանից բանավեճի մեջ եմք:

– Դու քննադատաբար ես խոսում նրանց հետ, Մովսես,– անհամբեր հարցրեց քահանան:

– Այո, բայց պահպանելով պատշաճության սահմանները: Օրինակ, նրանց հեզաբարո հարցնում եմ, թե՛ «ինչո՞ւ եք մեզ հազվադեպ այցելում, մենք կարոտ ենք նաեւ ձեր ներկայությանը: Մի՞թե ծայրահեղ կացության մեջ պիտի հայտնվենք, որ բարեհաճեք տեսակցել մեզ»:

– Եվ ի՞նչ են պատասխանում նրանք,– հարցաքննությունը շարունակեց մանկավարժ Սիմոնը:

– Դե, սովորաբար բոլորը սպասում են, թե, նախ, ինչ կասի Արամազդը, հետո ձայնակցում են նրան: Բայց ես տպավորություն ստացա, որ նրանք էլ ձայնակցումը պարտադրված չեն անում, իրոք, նույն կերպ են խորհում, ինչպես իրենց գերագույն աստվածը: Շատ ներդաշնակ թիմ է... Հա, Արամազդն ասում է... այսինքն՝ նրա ոգին, որ սպասում են, թե երբ իրենց կկանչեն, որպեսզի մեզ այցելեն, իրենք չեն ուզում անկոչ հյուրի պես խցկվել մեր կյանքի մեջ: Հրավերի են սպասում: Էս անգամ բացառություն են արել, քանզի տեսան, թե մենք ինչ դաժան փորձության ենք ենթարկվել:

– Իսկ դու ինչպե՞ս արձագանքեցիր,– չէր համբերում քահանան:

– Ասացի՛ ծնողները չպիտի սպասեն զավակների հրավերին, որպեսզի գնան նրանց տեսակցության: Զավակների լավ ու վատ օրերը պիտի հավասարապես հետաքրքրեն ծնողներին:

– Նրանք ի՞նչ ասացին:

– Հատկապես դիցուհիներին դա դուր չեկավ: Նրանց կանացի ինքնասիրությունն առավել խոցվեց, երբ ես ավելացրի, որ եթե իրենք մեր կողքին լինեին, ապա չարիքը մեր տուն չէր մտնի:

– Հետո՞,– իր հերթին հարցրեց մանկավարժը:

– Խոժոռվեցին ու գնացին:

- Դու բավականաչափ պահանջկոտ ես խոսել նրանց հետ, Մովսես,- նկարչի պահվածքն արձանագրեց Վարագյանը:- Երեւի էնքան են վիրավորվել քո կշտամբանքից, որ երկար ժամանակ հագիվ թե երեւան մեր կողմերում:

Մովսեսը նայեց դռան կողմը, ապա հայացքը պտտեցրեց արվեստանոցով: Մտախոհ ու մտասույզ՝ մի քանի վայրկյան բեւեռվեց ինչ-որ կետի, բայց մեկեն գոհունակ ժպիտ հայտնվեց նրա դեմքին:

- Չէ, ահա նրանք վերադարձել են նորից: Երեխեքի պես են՝ խռովում-գնում են, հետո փոշմանած հետ գալիս:

- Որտեղ են, ինչ են անում,- աշխուժորեն հետաքրքրվեց Տեր Միսաքը՝ վեր կենալով տեղից եւ նայելով այն կողմ, ուր հառված էր նկարչի հայացքը: Ոտքի կանգնեց նաեւ մանկավարժը, բայց նա Մովսեսին էր նայում՝ այն հանդիսականի պես, որ ջանում է ընկալել *շոունենի* նորահնար համարները:

- Նրանք հիմա կանգնած են կոլաժների մոտ, նայում եւ ինչ-որ բան են իրար հետ քննարկում:

- Երեւի կերպարվեստի էդ ժանրը նրանց ծանոթ չէ,- մանկավարժական ներըմբռնմամբ արձագանքեց Սիմոնը:

- Հնարավոր է: Մենք իրար հետ մինչեւ հիմա ժամանակ չենք գտել խոսելու արվեստի մասին:

- Հա, հետաքրքիր կլիներ իմանալ, օրինակ, թե նրանք ինչ են մտածում ձեր նկարների մասին,- վերստին աշխուժացավ քահանան:

- Իսկ գուցե նրանք լավ քննադատներ են... ղվ գիտե,- արձագանքեց նկարիչը:

- Կարող ես մոտենալ եւ մեր կողմից ջերմագին ողջույններ փոխանցել նրանց,- հետաքրքրվեց մանկավարժը:

- Կարելի է:

Մովսեսը գնաց սրահի այն անկյունը, ուր կոլաժներն են տեղադրված: Նա մի երկու բոլակ կանգնեց այնտեղ՝ հաղորդակցվելով հին աստվածների ոգիների հետ. համենայն դեպս, այդպես

թվաց քահանային ու մանկավարժին: Երբ նկարիչը վերադարձավ, Վարազյանը աճապարեց նկատել.

– Բայց դու խոնարհ զավակի պես էիր կանգնած նրանց մոտ, Մովսես... ապրես:

– Դե, ինչպե՞ս ընդունեցին մեր ողջույները,– չհամբերեց քահանան:

– Նրանք ի սրտե ուրախացան, որ իրենց ողջունում են քրիստոնյա հոգեւորականն ու վաստակաշատ մանկավարժը: Հին աստվածներն էլ իրենց ողջույներն են փոխանցել ձեզ, նաեւ խոստացան, որ առաջիկայում կհանդիպեն մեզ եւ մեր այն ընկերների հետ, ովքեր կհավատան իրենց ներկայությանն ու բարեհաճությանը: Հիմա նրանք ուզում են հեռանալ,– Մովսեսը նայեց կոլաժների կողմը:

– Ասացի՞ն՝ ուր են գնում,– հետաքրքրվեց Վարազյանը:

– Հա: Ասում են, որ իրենք չափազանց մտահոգ են հայկական ոգու ներկայիս վիճակով, այն գունատ ու հիվանդոտ է երեւում նրանց աչքին, համարում են, որ նման ոգին հազիվ թե դիմանա տարածաշրջանային ու համաշխարհային ներկա լարվածությանը. «Գնանք երկրով մեկ թարմ ոգի ներարկենք ազգի մեջ»՝ ասել է Արամազդը: Բայց Անահիտ եւ Նանե դիցուհիները մնում են Արցախում:

– Հատուկ առաքելությո՞ւն ունեն էստեղ...

– Կարծես թե... Նրանք իրենց մնալը պատճառաբանեցին նրանով, որ հայոց մայր ոգին դեռ մի քանի տասնամյակ պետք է բնավորված մնա մեր լեռնաշխարհում:

– Ուրեմն մեր ցեղային մայր ոգին դեռ կմնա մեզ հետ ու մեր կողքին: Բռավր,– գոչեց մանկավարժը:– Մեր հին աստվածները իմաստուն են, նրանք շատ մեծ ծառայություն կմատուցեն մեզ:

– Հա, բայց դա չի նշանակում, թե մենք մեր անելիքները պիտի թողնենք նրանց,– զգաստացնող տոնով հայտարարեց Մովսեսը:

– Ճշմարիտ ես ասում, եղբայր,– համաձայնեց Տեր Միսաքը,–

հիմա տեղին կլինի ասել. Աստծունը՝ Աստծուն, մարդունը՝ մարդուն: Թող աստվածներն իրենց գործն անեն, իսկ մենք անենք մերը: Հենց էսպես էլ նորից կզորանանք:

– Երկու ձեռքով կողմ եմ: Ուրեմն՝ միառժամանակ հանգիստ թողնենք մեզ օգնության եկած բարի ոգիներին եւ անցնենք մեր հոգսերին: Եկեք հիմա մտածենք, թե ինչպես օգնենք գնդապետ Վարդանյանին:

Մովսեսի սանուհիները վերջապես շուռ եկան եւ կրկին հակվեցին նկարակալների վրա. նրանք վերոբերյալ «ոգետեսական» քննարկման ընթացքում ունկ էին դնում այդ պատկառելի այրերի անլուրջ թվացող խոսակցությանը եւ իրար ականջի փսփսում, թե «պարոն Մովսեսն ընկել է էդ խփնված քահանայի ու ցանցառ մանկավարժի ջրերը եւ նրանց պես սկսել է ցնդաբանել»: Ակնհայտ էր, որ սանուհիները ո՛չ հոգեպես, ո՛չ մտքը պատրաստ չէին ընկալելու հայեցումներն առ այն անշոշափելի աշխարհը, որի գոյությունը նրանք կարող են պատկերացնել միայն հեքիաթներում, այլ խոսքով՝ այդ ամենը նրանց աչքին երեւում էր իբրեւ ֆանտաստիկ ֆիլմի սցենարի մի դրվագ: Մովսեսը հպանցիկ նկատում էր սանուհիների՝ իրենց ուղղած զարմացական հայացքները, սակայն կարելուորություն չէր տալիս, եւ ընդհանրապես, նրանց մտապատկերում առաջացած գծագրվածքի ձեւույթն այդ պահին չէր հուզում նկարչին, նրա խոկումներն այլ ուլորտում էին: Լսելով գնդապետի վերաբերյալ մտահոգությունը, գերբնական իրականությունից արագ անցում կատարեց դեպի առօրեական դաշտ.

- Իսկ ի՞նչ է եղել Վարդանյանին...
- Դե, նրան էլ է ոգի հետապնդում, ջղային ու ընկճված է դարձել,– պարզաբանեց մանկավարժը:
- Որովհետեւ չար ոգի է՝ ինչ-որ ցինիկ ու ծամաձուռ շնագայլի ուրվական,– հստակեցրեց Տեր Միսաքը:
- Շնագայլի ուրվակմնն է նրան անհանգստացնում...
- Հա: Վարագյանի հետ փորձեցինք նրան ազատել էդ գլխա-

ցավանքից, բայց գնդապետը չհամբերեց, թողեց ու նեղացած հեռացավ:

– Նա չի հավատում մեր էս «ոգեգիտությանը»,– մանրամասնեց մանկավարժը:

– Եկեք գնանք նրա մոտ, փորձենք ավանդական ձեռով հանգստացնել,– առաջարկեց Մովսեսը:

– Հա, հենց դա էի ուզում ասել,– իսկույն արձագանքեց քահանան:

– Գնանք, գնանք, մեր ընկերը արտառոց վիճակում է հայտնվել: Նա կարող է թշնամու մի ամբողջ զորքի դեմ կռվել, բայց անզորանում է ինչ-որ խղճուկ ուրվականի առաջ,– ընկերական վճռին վերջնական հիմնավորում տվեց նախկին ուսուցիչը եւ շարժվեց դեպի ելքը:

– Աղջիկներ, էսօրվա պարապմունքն ավարտենք,– բարձրաձայն հայտարարեց Մովսեսը՝ մոտենալով սանուհիներին:– Հաջորդ դասին դուք կնկարեք ձեր ոգին, այն ներքին ուժը, որ ձեզ առաջ է մղում եւ պաշտպանում ձեր «եսը»: Մտածեք էդ մասին մինչեւ վաղը: Իսկ էսօրվա ձեր նկարները կնայեմ ու կքննարկենք վաղվա ձեր նկարածի հետ: Ցտեսություն, աղջիկներ:

– Ցտեսություն, պարոն Մովսես,– արձագանքեցին սանուհիները:

Նրանք հագնվեցին ու անշտապ դուրս եկան արվեստանոցից՝ ճանապարհին խեթ-խեթ նայելով մուտքի մոտ զրուցող քահանային ու մանկավարժին: Մովսեսն էլ հագնվեց, ապա պահարանից մի շիշ օղի հանեց, դրեց բաճկոնի գրպանը, դուռը կողպեց եւ ընկերներին միացավ այն պահին, երբ Տեր Միսաքն ուշացած հարցնում էր մանկավարժին.

– Իսկ ինչ եղան ձեր գայլերը, ընկեր Վարագյան, նրանք դեռ հետապնդում են...

– Չէ, Տեր Հայր, ձեր աղոթքի ազդեցությամբ չքվել են, այլեւս չեն երեւում: Շնորհակալ եմ: Եթե կարող եք, ինձ մոտ բարի ոգի-

ներ ուղարկեք,- ծիծաղելով ասաց նախկին ուսուցիչը:

- Ընկեր Սիմոն... Դուք էլ էիք հետապնդման տակ ու ձեն չէիք հանում,- տարակուսեց նկարիչը:

- Հա, երբ հասա արվեստանոց, հետեւիցս ընկած գոմոացող ոհմակը շուռ եկավ ու կորավ:

- Հա՛,- կասկածանքով հարցրեց Մովսեսը՝ նայելով քահանային: Վերջինս գլխով ցույց տվեց մանկավարժի կողմը:

- Թող ինքը հաստատի կամ հերքի:

- Հաստատում եմ,- անվարան հայտարարեց Վարազյանը:- Երբ սրտով հավատում ես, ամեն չարիքի դեմն էլ կարելի է առնել:

- Բարի, բարի: Դե, գնացինք,- ասաց Տեր Միսաքն ու առաջ ընկավ:

Երեքով շարժվեցին դեպի Վարդանյանենց տուն: Քաղաքապետարանի մոտով անցնելիս ականատես եղան մի տգեղ տեսարանի. մուտքի մոտ պարենային եւ առաջին անհրաժեշտության պարագաներ էին բաժանում կարիքավորներին, հերթը երկար ու աղմկոտ էր, ոմանք բարձրաձայն վիճում էին միմյանցից առաջ ընկնելու պատճառով, բայց արտառոցն այն էր, որ օգնություն էին ուզում ստանալ նաեւ մարդիկ, երբ իրենք են պարտավոր աջակցել այլոց՝ ունեւոր ու ապահով ընտանիքների անդամներ լինելով: Սրանց թիվն առանձնապես մեծ չէր՝ հինգ-վեց հոգի՝ հարյուրանոց բազմությունում, բայց իրենց չնչին ներկայությամբ իսկ արատավորում էին օգնության սուրբ ձեռնարկը: Հայաստանից եւ Սփյուռքից տեղ հասնող օժանդակությունը դժվարությամբ էր կյանքի կոչվում ետպատերազմյան՝ խեղված ու խառնակ երկրամասում:

- Ինչ պիղծ մարդիկ կան էստեղ... Ինչպիսի՞ ամոթ,- չհամբերեց Տեր Միսաքը եւ վճռական քայլ արեց, որ մոտենա՝ սաստելու ընչաքաղցներին, սակայն Մովսեսը ետ պահեց նրան:

- Տեր Հայր, պետք չէ, մեծ իրարանցում կսկսվի: Ձեր երեսին են մուր նետելու էդ որկրամուլները: Հետո էլ՝ տուժելու են հենց կարիքավոր մարդիկ. օգնությունը դադարեցնելու են, որ նոր ցուցակներ

կազմեն եւ ինչ՝ կարիքավորը ժամանակին չի ստանալու օգնութիւն:

– Մովսեսը ճիշտ է, Տեր Միսաք, հիմա Աստված էլ իջնի, էդ ասքածակներին հերթից չի կարող հեռացնել... Գնանք,– հորդորեց մանկավարժ Սիմոնը:

Եռյակը շարունակեց ճանապարհը՝ տեսածից ճնշված ու մոայլված: Երբ անցնում էին Օղակածեւ պուրակով, տեսան մի խումբ տարեց մարդկանց, որոնք նստարաններին տեղավորված՝ անկիրք զրուցում էին իրենց ցավ ու դարդից: Նախկին ուսուցիչը նկատեց հին գործընկերներից երկուսին՝ անկյունային նստարանին առանձնացած, ասես կյանքից ու աշխարհից խռով:

– Օ՛, ընկեր Մելքումյան, ընկեր Մեժլումյան, հարգանքներիս հավաստիքը: Ո՞նց եք, սիրելիներս,– Վարազյանը մեկեն ուրախ տեսք առած՝ ողջագուրվեց նրանց հետ:

Քահանան ու նկարիչն առաջ անցան, բայց լսելի էր, թե ինչպես է Սիմոնը ջանում ոգեշնչել նախկին գործընկերներին, որոնք վիատ ու հոռի տրամադրության մեջ էին: Կարծես թե դա նրան արագ հաջողվեց, քանզի շուտով միացավ Տեր Միսաքին ու Մովսեսին՝ հերթական մենամարտը շահած մարտիկի պես:

– Գիտե՞ք՝ էդ մարդիկ ապրում են միայն իրենց փոքր թռչակով, ոչ մի այլ աջակցություն չեն ստանում ուրիշ տեղերից՝ ոչ զավակներից, ոչ բարեկամներից, ոչ էլ ինչ-որ հիմնադրամներից ու կազմակերպություններից: Բայց չեն տրտնջում, նրանք չափազանց հուսահատված են մեր էս ընդհանուր կացությունից, վախենում են, որ մեր երկիրը կորցնենք... Ես նրանց հակադարձեցի, որ նման բան երբեք չի լինի, եւ թվարկեցի իմ ծանրակշիռ փաստարկները:

– Եվ ընդունեցին փաստարկներդ,– հարցրեց Մովսեսը:

– Այո՛, եւ շնորհակալ եղան, որ մեր քաղաքում նման մտածելակերպով մարդիկ կան:

– Նրանց էլ պետք է օգնություն հասցնել, մեղք են էդ մարդիկ, երեւի կիսաքաղց են ապրում,– մտահոգվեց Տեր Միսաքը:

– Եթե ես նրանց ասեի, որ էն ա՛ Վերելում օգնություն են բաժանում, գնացեք դուք էլ ստացեք, կնեղանան ինձնից, հպարտությունը թույլ չի տա, որ խեղճացած կանգնեն ու ձեռք պարզեն ուրիշի:– Վարագյանը ցանկացավ էլի ինչ-որ մեծապատիվ բան ավելացնել նախկին գործընկերների վերաբերյալ, սակայն գերադասեց մնալ իրատեսության ու կարեկցության սահմաններում:– Այո, Տեր Միսաք, նրանց օգնել է պետք: Նրանց կրթած սերունդը շահել է նախորդ պատերազմը եւ մեզ ազատության ու ազգային միասնության դրոշի տակ պահել... ավելի քան քսանհինգ տարի:

– Տեր Միսաք, ձեր ցուցակներում նրանց համար տեղ գտեք, խնդրում եմ: Մենք էլ կփորձենք ինչ-որ բան ձեռնարկել,– հավելեց Մովսեսը:

– Անշուշտ,– կարճեց քահանան:

Թումանյան փողոցով իջնելու պահին նրանք տեսան ռազմական հսկա քարշակների մի շարասյուն, որ վերանորոգման էր տեղափոխում վնասված տանկեր ու զրահամեքենաներ: Ականատեսների համար պարզ էր, որ դրանք կրակի են մատնվել անցած պատերազմին: Արդյոք մարտական հաջող գործողությունների ընթացքում է «վիրավորվել» այդ զինտեխնիկան, թե՛ շարքից դուրս է եկել դեռ մարտադաշտ չմտած՝ նման հարց կայծակեց Մովսեսի գլխում, երբ նա, ընկերների հետ, դառը հայացքով հետելում էր այդ չարագուշակ երթին: Ծանր քարշակների խուլ դղրդյունը մի ժամանակ տղամարդկանց բաս երգչախմբի պես էր հնչում նկարչի ականջին՝ ներդաշնակ ու մեղեդային, երբ առույզ երթուդարձ էին անում քաղաքի ռազմական օբյեկտներից դեպի հեռավոր զորամասեր, հիմա դրանց ձայնն ասես անդրաշխարհի թափանցած մի գվվոց է՝ իսկական *ողբ-երգություն*, որ անբառ պատմում է մեծ կորուստների մասին:

– Ի՞նչ եք կարծում, նորոգելուց հետո էդ տեխնիկան նույն մարտունակությունն է ունենալու,– ուղեկիցներին ողջախոհ մտորումների հուն ներքաշելու ցանկությամբ հարցրեց քահանան:



– Կարծում եմ՝ այո,– անմիջապես արծագանքեց մանկավարժը:– Գուցե թե մի երկու բան էլ նորոգող վարպետներն ավելացնեն դրանց հզորությանը:

– Չգիտեմ, նայած՝ ինչն է վնասված, ինչքան...– իր կարծիքը բարձրաձայնեց Մովսեսը:– Բայց ավելի լավ կլիներ, եթե մենք նոր սպառազինություն ձեռք բերեինք՝ արդիական ու հզոր... ունենալինք ամեն ինչ:

– Հա, նույնիսկ միջուկային ռումբ,– արագախոսեց մանկավարժը:

– Բանը թող դրան չհասնի: Մեզ պետք է էնքան ու էնպիսի զենք, որ թշնամու մտքով երբեւէ չանցնի հարձակվել մեզ վրա, ստիպված լինի ընդունել մեր ազատությունն ու անկախությունը:

– Թող Աստծո կամոք իրականանա ձեր բաղձանքը, Մովսես եղբայր,– օրհնության պես ասաց Տեր Միսաքը:– Բայց ինչ եք կարծում՝ մենք չենք կարող վարել էդ տանկերն ու զրահամեքենաները, եթե պետք լինի... Դե, նախօրոք սովորելուց հետո: Շամո ենք անպիտան էդ գործի համար...

– Կարող ենք, կարող ենք, ումից ենք պակաս,– հաստատական պատասխանեց մանկավարժ Սիմոնը:– Ես, օրինակ, լավ տանկիստ կլինեմ, թող միայն սովորեցնեն մի քիչ, Տեր Միսաք, դուք էլ... Դուք ձեր սքեմով տանկի մեջ ավելի ազդու կերեաք:

– Մովսեսին էլ կվերցնենք մեր անձնակազմի մեջ,– արծագանքեց քահանան, եւ նա ու մանկավարժը զուսպ ծիծաղեցին իրենց մոզոնած «տանկային ֆանտազիայի» վրա:

– Դե, եթե բանակը մեր հույսին է մնացել, ուրեմն հաղթանակն ապահովված է,– հեգնեց Մովսեսը: Բայց ուղեկիցներին թվաց, թե նկարչի արծագանքը երկձայն ու անհստակ է: Իսկ այդ պահին հստակություն չկար իրենց կյանքի եւ ոչ մի թրթիռի մեջ, բոլորը դեռ անորոշության ու կասկածի խոր գուբի մեջ էին, որտեղից ելք էին փնտրում: Տեր Միսաքը հաճախ էր կրկնում այդ օրերին՝ «որտեղ փնտրտուք, այնտեղ փրկություն»:

Այդպես զրուցելով ու խորհելով՝ նրանք հասան Վարդանյանենց շենքի մոտ: Վարազյանն ուղեկիցներին խնդրեց սպասել ներքեում, իսկ ինքը կբարձրանա եւ կզգուշացնի տանտիրոջը «պատվիրակության» այցի մասին, որպեսզի նա եւ կինն անակնկալի չգան. ո՞վ գիտե՛ «մեկ էլ տեսար՝ նրանց արյան ճնշումը բարձրացավ»: Վարազյանի գնալուց թոպեներ անց երրորդ հարկի պատուհաններից մեկի փեղկը բացվեց ու երեսաց գնդապետի գլուխը:

– Էդ ի՞նչի եք կանգնել, եկե՛ք,– կշտամբալից ձայնով հրահանգեց Վարդանյանը:

Տեր Միսաքն ու Մովսեսը հնազանդ բարձրացան վերեւ: Երբ ներս մտան, գնդապետի կինն արդեն հացի պատրաստություն էր տեսնում: Մովսեսը սեղանին դրեց բերած թթօղին, բայց եւ զգուշացրեց, որ իրենք չեն ճաշի, մի բաժակ թեյ կխմեն ու կգնան:

– Այո՛, այո՛, տիկին Վեներա, նեղություն մի քաշեք, մենք մի քիչ կզրուցենք ձեր թանկագին ամուսնու հետ եւ կգնանք մեր բանին,– իր հերթին նախազգուշացրեց Տեր Միսաքը:

– Դե, վերջ տվեք, տղաներ, հաց էլ կուտեք, թեյ ու սուրճ էլ կխմեք, նոր՝ ուր ուզում եք գնացեք: Ես շատ ուրախ եմ, որ դուք բարեհաճել եք մեր տուն:– Տանտիրուհու անկեղծությունը կասկած չէր հարուցում:

– Ասում են, չէ՛, անկոչ հյուրը շնից էլ բեթար ա,– առակախոսեց Սիմոնը:

– Չէ՛, չէ՛, էդպիսի բաներ մի ասեք, ընկեր Վարազյան, լվացվեք ու նստեք, մենք լավ ուտելիք ունենք, իսկական ժամին եք եկել:

– Տիկնոջս խոսքն օրենք ա մեր տանը, իմացմք,– հյուրերին թաքուն աչքով անելով՝ հայտարարեց գնդապետը:– Հապա փորձեք չենթարկվել՝ ձեզ կփակի շենքի նկուղում, է՛նտեղ մեր *կուրախտն* ա:

– Էլի քո գնդապետությունն ինձ վրա՞ բռնեց,– ամուսնուն թեթև կշտամբանքով արձագանքեց տիկին Վեներան: Նա հապճեպ սեղանը լցնում էր տարբեր ուտեստներով ու սպասքով, եւ նրա պատրաստակամությունն ու փորձառությունն աչք էին շոյում:

Տանտիրուհին զուտ քաղաքավարական պահվածք չէր դրսևորում, այլ իսկապես ուրախ էր, որ ամուսնուն հյուր էին եկել նրա ապաստարանային ընկերները. նրանց մասին գնդապետը հասցրել էր շատ բան պատմել Երեանից օրեր առաջ վերադարձած կնոջը:

Տիկին Վեներան նույնպես նախկին մանկավարժ է՝ ռուսաց լեզվի ու գրականության մասնագետ, եւ լավ մասնագետ է՝ ըստ Սիմոն Վարագյանի սանդղակի: Նրա հետ միառժամանակ դասավանդել է տասերորդ դպրոցում, սակայն հետո թողել է մանկավարժությունը եւ հաստիքավորվել կառավարության աշխատակազմում, այժմ թոշակառու ամուսնու առողջությանն է հետեւում: Թեպետեւ կարճ է տեւել համատեղ աշխատանքը նույն կրթօջախում, ընդամենը մեկ տարի, երկու մանկավարժներն էլ շարունակել են միմյանց հանդեպ պահպանել գործընկերային անկեղծ հարգանքը: Պատահական հանդիպումներից մեկի ժամանակ Վարագյանը հարցրել էր նախկին գործընկերուհուն, թե ինչու է հեռացել դպրոցից, չէ՞ որ նա մանկավարժությունն իսկապես սիրում էր: «Հա, բայց հիմա իմ բերած ռուսերենը չէ, որ *ակտուալ* պետք է մեր երեխաներին, նրանք առանց իմ դասավանդման էլ ինքնուրույն ռուսերեն կսովորեն: Հայեցի դաստիարակությունն է պետք ուժեղացնել, իսկ ես, ցավոք, էդ գործին ծառայելու կարողություններ չունեմ»՝ ավստասանքով պատասխանել է նախկին ուսուցչուհին:

– Տիկին Վեներան իրավունք ունի մեզ պատժելու. իսկապես՝ ինչ է նշանակում առանց նախապես զգուշացնելու ուրիշի տուն ներխուժել եւ միանգամից նստել սեղանի շուրջ. էն էլ ինչպիսի այցելուներ՝ լավ ախորժակով երեք քաղցած տղամարդ,– նախկին գործընկերուհուն պաշտպանելու ցանկությամբ շտապեց արտահայտվել Սիմոնը, բայց նրա խոսքն առավելս կատակի պես հնչեց, ինչը զվարթացրեց տանտիրուհուն:

– Անհոգ եղեք, ընկեր Վարագյան, տանը ինչ կա՝ դնում եմ սեղանին, կշտացաք՝ լավ, չկշտացաք՝ կգնաք ուրիշ սեղան փնտրեք,– աշխույժ արձագանքեց տիկին Վեներան եւ շտապեց խոհանոց:

Քիչ անց նա ետ եկավ կուրկուտով լի մի մեծ ափսեով, այն տեղավորեց սեղանի կենտրոնում եւ խնդրելու պես՝ կանացիորեն հրահանգեց.

– Դե, անցեք գործի, տղաներ: Ես էլ ձեզ հետ մի բաժակ կխմեմ, գուցե Ավետիքի տրամադրությունը բացվի,– ասաց տանտիկինն ու տեղավորվեց ամուսնու կողքին: Մյուսները եւս նստեցին սեղանի շուրջ:– Երբ ես մեկ-մեկ խմում եմ, նա երեխայի պես զվարճանում է, բայց եթե հանկարծ կատակով ասեմ, թե երկրորդ բաժակն էլ լից, ականջս քաշում եւ սեղանից ինձ հեռացնում է:– Ներկաները ծիծաղեցին:– Հա, կուրկուտը սագի մտով է, Ավետի հորեղբոր տղան է երեկ ուղարկել գյուղից: Անուշ արեք, մի քաշվեք:

– Սպասիր, Վեներա քույրիկ,– կնոջ ձեռքը բռնեց գնդապետը,– նախ մեր սեղանը թող օրինի Տեր Միսաքը:

– Վայ, կներեք, լրիվ մոռացել էի... Էհ, կարգին քրիստոնյա չդարձա,– մեղայական եկավ տանտիկինը:

– Մի նեղսրտեք, տիկին Վեներա, երբեմն մեր տանը ես էլ եմ մոռանում հացից առաջ աղոթել, հատկապես, երբ շատ քաղցած եմ լինում,– տանտիրուհուն մխիթարեց քահանան՝ ոտքի կանգնելով: Նա, նախ, ոգեց «Հայր մեր»-ը, ապա հավելեց.– Պարոն գնդապետ, թող Աստծո կամոք եւ ամենքիս ցանկությամբ այսուհետ ձեր օջախում միայն ուրախ սեղաններ բացվեն: Իմացեք, հարազատս, ոչ մի սատանա, չարք ու ուրվական այսուհետ չի երեւա ձեր շրջակայքում, մենք կկանխենք դա:– Քահանան աչքերի թարթումով ինչոր ակնարկ հղեց գնդապետին, վերջինս ըմբռնեց, որ ինքն այդու ապահովագրված է արտառոց ու զագրելի տեսիլքներից եւ կարող է իրենից վանել չարագույժ մտքերը, ապավինել կենսունակ գաղափարների: Հասկացավ, որ ինքը «դուրս գրվող» ապրանք չէ, դեռ ի զորու է խաղալ պահանջված դեր, թեկուզեւ այն լինի երկրորդ պլանի: Նա սկսեց խորթակով ուտել՝ օրինակ ծառայելով հյուրերին:

Նրանք տանտերերին հրաժեշտ տվեցին լավ տրամադրությամբ: Եվ ասես վերակենդանացել էր Վարդանյանը, արդեն կա-

տակներ էր անում եւ ակնարկում առաջիկա նոր հյուրասիրությունների մասին: Փողոցում մանկավարժ Սիմոնը, «ի դեպի» կարգով, տեղեկացրեց Մովսեսին.

– Եղբայր, նկարդ կախված է Վարդանյանենց ննջարանում, պատահաբար տեսա բաց դռնից, երեւի իր համար ցանկալի է այն աչքի առաջ ունենալ նախքան քնելը. «Քաղաքի երազը» գուցե լավ երազներ է պարգետում նրան ու տիկնոջը...

– Անուշ երազներ նրանց,– հանգիստ արձագանքեց նկարիչը:

– Ի դեպ. քեզ արդեն վճարել է նկարի համար...

– Դեռ ոչ, բայց դա հիմա կարելու է,– մանկավարժի ընկերական հետաքրքրասիրությունն այդքանով կարճեց Մովսեսը:

Հաջորդ օրը գնդապետը աճապարեց Ազատամարտի վետերանների միություն. այստեղ վաղուց չէր եղել, ընդհանրապես պարապ հավաքների սիրահար չէ: Բայց հիմա կարծում է, որ այդ կառույցը ներկայում եւ այդու չափազանց հրատապ դերակատարում կարող է ստանձնել, ուստի գնաց իր խոհերով կիսվելու նախկին զինակիցների հետ եւ հրամցնելու իր մեջ հասունացած գաղափարը:

Գեղեցիկ շենքի ներսում առավելս սգո մթնոլորտ էր իշխում, հատուկենտ մարդիկ կային այնտեղ, որ խոսում էին ցածրաձայն ու անկամ, բարձրաստիճան նախկին սպաներից դեռ ոչ ոք չկար: Սպասեց, մինչեւ եկան պաշտոնաթող գեներալներից երեքը, ապա մի քանի գնդապետներ եւ այլ սպաներ: Նրանք հավաքվեցին ընդհանուր սրահում, ուր եւ Ավետիք Վարդանյանը ներկայացրեց իր խոկումները՝ սկզբից փոքր-ինչ դողդոջուն ձայնով, ապա մարտաշունչ զինվորականի պես:

– Մեզ բոլորիս՝ պաշտոնաթողներիս, մեկ-երկու սիմվոլիկ բացառությամբ, մեկուսացրել էին պատերազմի ժամանակ, եւ հետեւանքները գիտեք... Պիտի պատերազմը վարելին նրանք, ովքեր ունեն դրա փորձառությունն ու պատրաստակամությունը: Իսկ ու խակ հրամանատարներով միայն պարտություն կարող ես գրան-

ցել մարտադաշտում: Մեզ գողավարի մուրեցրել ա ռազմաքաղաքական ղեկավարությունը, նրանք խղճուկ... քստմնելի վարք դրսեւորեցին: Եվ էդ ամենը՝ մեր թողտվությամբ... Մենք չպետք ա հաշտվեինք նման իրավիճակի հետ, երբ պատերազմի առաջին իսկ օրերին տեսանք, թե ինչ արտառոց բաներ են տեղի ունենում ռազմաճակատում... Գոնե հիմա ուղղենք մեր սխալները, եթե չուղղենք, վերջնական կկործանենք մեր երկիրը: Էշը որ էշ ա, մի անգամ ա ցեխի մեջ ընկնում: Մեր կողը ղիվ պիտի քաշի... Առաջարկում եմ ստեղծել մի անկախ հանձնաժողով, որ հետաքննի պարտության բուն պատճառները բոլոր պարամետրերով՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, բարոյական եւ այլն, ապա ձեւավորել մի աշխատունակ խումբ, որ ամենօրյա շփումներ ունենա մարդկանց հետ՝ քաղաքներում ու գյուղերում, մեծ ու փոքրի հետ, բարձրացնի նրանց մարդկային, ազգային-դիմադրողական ոգին, եւ ժողովրդին նախապատրաստի վերջնական հաղթության:

Գնդապետի ելույթից հետո կիզիչ լռություն իջավ սրահում: Նախկին զինվորականները, բոլորն էլ մարտական երկար ուղի անցած, գլուխկախ խորհում էին, թե ինչպես պետք է «դիրքավորվեն» գնդապետի առաջարկությանը հանդիման: Առաջինն արձագանքեց գեներալ Տեր-Գրիգորյանը:

– Էդ ինչի եք տապ արել, պարոնայք զինակիցներ, մտածում եք՝ Վարդանյանի ասածների մեջ ճեղք ու սխալ գտնեք... Բայց նրա ասածները բացարձակ ճշմարտություն են. չէք տեսնում՝ հարամը եկել մեր հալալը տարել ա... Ինչ է՝ մեր թասիբը շան առմջ ենք զցել... Էնպես որ, ով համաձայն չէ գնդապետի առաջարկությանը, թող միանգամից թողնի ու հեռանա էս շենքից, ավելորդ վեճի մեջ չմտնի՝ լրիվ խայտառակելով իրեն:

Սրահից անձպտուն հեռացան մի գնդապետ ու մի մայր: Մյուսները ձգվեցին տեղներում՝ զգալով ու պատկերացնելով, որ իրենց սպասում են մարտնչելու նոր ճակատներ՝ բարդ ու վտանգավոր: Իսկ մեծ վտանգներ լինում են նաեւ ներսից, բայց դրա առիթով

մտահոգվելն այլևս ակնառու երկչոտություն կլիներ, ուստի ներկա պաշտոնաթող գեներալներն ու սպաներն անմիջապես անցան կազմակերպական հարցերին:

Տեսնելով սրահում խմորվող գործնական մթնոլորտը՝ գնդապետ Վարդանյանը ներքուստ գոհ մնաց եւ խորհեց լավատեսություն, որ բախտն այլևս երես չի թեքի իրենից ու հարազատներից, ընկերներից ու զինակիցներից, իր քաղաքից ու հայրենիքից: Մի ակնթարթ երեւակայեց, թե ինչպես են Ստեփանակերտի երկնքում թեւածում արծիվների ու աղավնիների հսկայական երամներ՝ մերթ միախառնվելով իրար, մերթ առանձնանալով ու ուղղանկյուն շարայուններ կազմելով: Նույն օրվա երեկոյան կողմ Սբ. Աստվածամոր Հովանի տաճարում մասնակցեց ժամերգությանը, որից հետո Տեր Միսաքին պատմեց Ազատամարտի վետերանների միությունում տեղի ունեցածի մասին:

– Մեր Տեր Աստվածը, մեր բոլոր աստվածներն էլ զորակոչի մեջ կլինեն էս մաքառման ժամանակ, նրանց ոգիները մեզ կսատարեն, որ մշտապես լինենք լիարյուն մարդ-արարած, ազգ ու երկիր՝ մեր դավանանքով, հավատամքով... Որ մեր հետագա կյանքը լինի առանց արնաթաթախ աճյունների ու աղետների: Թող Աստված խաղաղություն պարգևի ամենքին:

Տեր Միսաքին ոգետրել էր գնդապետի բերած նորությունը, դրա մեջ նա տեսավ ոչ միայն իր հայրենակիցների նորացված կամարտահայտությունը, այլև նախախնամության հզոր նշանը՝ այն խոստումնալից ու հուսավառ էր երեւում: Իր բարձր տրամադրությունը ցանկացավ որեւէ կերպ մարմնավորել գնդապետի մոտ, ուստի մեկեն ասաց.

– Ես սաղմոսներ եմ գրում, կուզե՞ք կարդամ ձեզ համար...

– Դե... հա, Տեր Միսաք, եթե ուզում եք,– անակնկալի եկած՝ պատասխանեց Վարդանյանը, թեեւ շատ աղոտ իմացություն ուներ սաղմոսների վերաբերյալ:

– Լավ... Բայց սպասեք, ինչո՞ւ միայն ձեզ համար: Հավաքվենք

Մովսեսի մոտ, կանչենք մեր մյուս ընկերներին, թող նրանք էլ լսեն. ինչ կասեք, պարոն գնդապետ...

– Թող ձեր ուզածով լինի, Տեր Հայր:

Քահանան հեռախոսով կարճ խոսակցություններ ունեցավ, նախ, Մովսեսի, ապա մանկավարժ Սիմոնի, Քեռու, Վիգենի ու Մարիայի հետ, ապա իր ընթերցման մասին տեղեկացրեց դպիր Արմանին, տաճարի վարդապետին, արեղային ու այլոց: Մեկ ժամ անց Մովսեսի արվեստանոցում մոտ երկու տասնյակ մարդ էր հավաքվել: Դա քահանայի՝ սեփական գրվածքների հրապարակային անդրանիկ ընթերցումն էր, ըստ էության՝ նրա առաջին գրական երեկոն:

Տեր Միսաքն իր սաղմոսները կարդաց նոթատետրից, որոշ հատվածներ անգիր արտասանեց՝ ներշնչված, հոգու զնգուն ծայնալարերով:

*Հայրենիքն իմ վեմն է, իմ անառիկ բերդն ու ազատարարն իմ, նա իմ Աստվածն է, իմ զորությունը, իմ վահանն ու սուրը, նա իմ փրկության դեղամիջոցն է, ես նրան եմ վստահելու իմ կյանքի բոլոր օրերում, ինչպես վստահում եմ Բարձրյալին: Իմ սեր ու հավատով Հայրենիքը վերածվում է սրբազան Դրախտի. լոկ Աստծուն է հասու Դրախտ-Եդեմի գինը արարման, նրա վեհապետիլ դերը երկրի վրա.- Դրախտն օազիս է մշտաժամա՝ բոլոր վառվոտն հոգիների համար, բայց եւ հավերժորեն անբիծ խաղաղության կարոտ ունի նա, քանզի աստվածատուր իր կոչումից անկախ՝ հա՛ գրգռում է սատանային, մատնում նրան մի նոր սատանայության:– Դրախտում սիրում են խրախճանել նաեւ ամենայն դեւ ու չարք, ամենայն կենդանի, որ այնտեղ հաճախ մուտք են գործում իբրեւ մարդագո եւ դուրս ներվում որպես ասպատակիչ:*

*Մենք ոչինչ ենք Աստծո օրենքից դուրս, Դրախտը Աստծո պարծանքն է վերին, խնդությունը նրա, անօտարելին,– երբ կոտորում ես Նրա մի ոստը թեկուզ, ուրեմն՝ խոցում ես արարիչ Աստծուն եւ նրա*



ցասումն ես քառապարկում,- ձեր հոգիներին փրկություն չի լինի, ձեր մարմիններին՝ առավելս:

Աշխարհը լի է դրախտապայտերով, եւ ամեն մեկը՝ անզուգական կերպովածք, բայց սքանչելին, անփոխարինելին ու անկրկնելին, հարկավ, հայրենի դրախտն է, որ Աստված շնորհում է ըստ քո էության ու երազանքի: Օտարի համար կանխատեսված չէ մուտք ուրիշ դրախտ – թող ամենքը ստեղծեն դրախտը սեփական:- Մենք մեր դրախտի հպատակներն ենք, խոր անձկությամբ ենք հեփտում նրա ելեւջումների:- Դրախտը կերպովում է որպես Հայրենիք՝ ազնվազարմ զավակներին ընծայվելու համար:- Դրախտը չեն լքում, Դրախտից չեն փախչում, այն չեն հանձնում ոչ մի ախոյանի, Դրախտը միակ տեղն է փիեզերքում, հանուն որի մեռնելը կարգ է սրբազան: Բայց երանելին՝ որ քո Եդեմը պաշտպանես կրծքով եւ կենդանի մնաս հանուն նրա կուռ մշտագոյության:

Ամենաիրականը հայրենի Դրախտն է, որ մերթընդմերթ, ավանդ, անպաշտպան է մնում սեւ հոգիների վրառների առաջ,- բյուր քարեր են նետվում նրա վրա, ատելության անթիվ նետ ու արկեր: Մեկ-մեկ անհետնում են Դրախտի մուտքը հսկող հրե թրով հրեշտակները – չես դատի նրանց, երբ ինքդ անհոգ վայելում ես կյանքը եդեմական:- Սոսկալի է տեսնել ավերվող Դրախտը, նրանից արծակվող ամեհի էներգիան, որ, նախ, մոխրացնում է հոգեղեն բուրգերը, սեւ խաչեր թողնում հորիզոններին,- դրախտաբնակաները փոխվում են մռայլ ուրվականների եւ անկամ տրվում զուր ու անհասցե դեգերումների:- Սատանա է նա, ով հրոսակների ու օտարի հեփ լծված՝ բացում է Դրախտի դարպասները եւ բաց թողնում այնտեղ դիվահարներին:

Եդեմը խորշում է իր տականքներից՝ մատնիչներից ու դատաւիքներից, շեղվածներից ու ուրացողներից, բայց եւ չի վանում

նրանց իր գրկից:– Հայրենիք, զգուշացիր անառակ որդիներից, անառակ հայրերից երիցս զգուշացիր, նրանք առավել սպառնալից են, քան թշնամիք քո՝ երդվյալ ու անքուն,– սրանց դեմ մարտնչել դու լավ գիտես, սակայն սեփական չարագործներիդ չգիտես ինչպես խարազանել, որ նրանք այդու մարմնիդ չգալարվեն իժերի պես,– նրանց հանդուրժում ես տերունական վարքով:

Հայրենիքը միակ Դրախտն է իրական, մնացյալ ամեն ինչ պատրանք է ու միՖ: Հայրերի երկրում մաքրագործվում է գեղեցկությունն արար աշխարհի.- ահա հովիտներդ՝ պերճանքի գույներով, սարահարթերդ, ուր սավառնում են տենչանքիդ արծիվները: Իսկ լեռներդ հսկա դեկորների պես դրված են ամուր կրծքավանդակիդ՝ որպես գալիքի պատգամաբերներ. նրանք միշտ կլինեն նվիրակները քո՝ թեկուզե առանց վկայագրի:– Քո Եդեմից դուրս ոչինչ մի փնտրիր, օտար եզերքը բուրում է միայն պաղ օտարությամբ: Հայրենի Դրախտի մի չոր շյուղն անգամ թանկ ու բերկրալի է, քան օտար հողի մի ողջ անտառ:

Ողջ անհունում քեզ մի Եդեմ է տրված՝ ուրույն չափերով, պահպանիր նրա ամեն մի թիզը՝ ինչ ձեռն ու գույն էլ ունենա այն: Պաշտիր Դրախտիդ անունն ու ոգին, եթե անգամ քեզ քառապեն հետո: Նրա դաշտերում ու սրտերում մարդկանց աճում է հրաշք Վարդը երկնային, եւ երկրային բուրյան ծաղիկներն են փթթում: Պաշտպանիր Դրախտդ հին ու նորակերպ վայրագներից, եթե նրանք քո դռները հասնեն թեկուզե կարմիր գորգեր փռելով:– Հայրենիքը չի կորսվում թշնամու ձեռամբ, Նա իր որդիների մեղսագործությամբ է դառնում կորուսյալ: Սոսկ արկերը չեն այդպես որոտում – մեր մեծ մեղքերի ռումբերն են պայթում մեր իսկ հողի վրա, եւ ընթացքով մի դղրդուն ու մութ՝ պետությունը կորչում է Երկրի պատկերում, Երկիրը լուծվում է Հայրենիքի մեջ, եւ Հայրենիքը հույլ տարտղնվում է արդեն օտարվող բնաշխարհում:

Դու ինձ սեր ու հույս պարգևեցիր եւ ազատ ապրելու անսասան կամք,- Հայրենիք, աշխարհի բոլոր բարիքները ես ստանում եմ քեզնից ու Աստուծոց,- դուք եք իմ միացյալ Դրախտն ավետյաց, ես իմ երջանկության բոլոր պտուղներն այդտեղ եմ քաղում: Ես ահ չունեմ բնավ, ես չեմ վարանում. եթե չարերն ու թշնամիները մոտենան ինձ, սիրտս չի վախենա, եթե իմ դեմ մեկտեղ պատերազմեն բոլոր վայրագները, ես նրանց կտապալեմ իմ զորությամբ, որ ինձ տալիս են Հայրենիքն ու Աստված: Իմ գլուխը միշտ բացճակատ բարձր է իմ շուրջ դեգերող թշնամիներից, քանզի իմ թիկունքին Հայրենիքն է կանգնած. Նա իր ժողովրդին զորություն ու փառք է պարգևելու, նա իր ժողովրդին օրհնելու է վսեմ խաղաղությամբ:

Երբ Տեր Միսաքն ավարտեց ընթերցումը, ծափահարություններ հնչեցին, բայց նա իսկույն կանխեց դրանք:

- Ծափահարությունների համար չեմ գրել էս տողերը, այլ սրտի մեջ լուծելու համար,- հանգիստ ասաց է քահանան: Բայց սաստիկ հուզվեց, երբ նրան մոտեցավ գնդապետը եւ գրկախառնվելուց հետո ասաց.

- Տեր Հայր, ես քո ասածներից որոշ բաներ չհասկացա, իմ գրական հայերենը թույլ ա, կներեք, բայց ես էնքան էներգիա ստացա ձեր ծայնից ու արտասանությունից, որ ասելու չէ... Ինձ էդ էներգիան շատ-շատ օգնելու ա իմ հետագա ծառայության ընթացքում:

Քահանան կամացուկ արձագանքեց.

- Վարդանյան եղբայր, եթե կա մի անվիճելի կրոն, ապա դա հայրենիքն է, ինձ էդ հայրենակրոնությունն է խթանում, որ ես կարողանամ լինել մեր աստվածների հետ:

Միեւնույն պահին մանկավարժ Սիմոնը հարցնում էր Մովսեսին.

- Գնդապետը նորից ծառայությամն է անցնում...

- Չգիտեմ: Իսկ ինչո՞ւ ոչ...

Նրանք դեռ չգիտեին, թե ինչ է նախածեռնել Վարդանյանը:

Հետագա երեք օրերն արտասովոր հագեցած ու հուզումնա-

լից էին ոչ միայն գնդապետի համար. նա իր փոքրիկ խմբի մեջ ներգրավել էր նաեւ մանկավարժ Վարազյանին, ով ուղեւորությունների ընթացքում պատմական ու արդի կարեւոր տեղեկություններ էր հրամցնում պաշտոնաթող, այժմ կամավոր գործի անցած զինվորականներին: Ավետիք Վարդանյանի հետ էին փոխգնդապետներ Դավիթ Զանիկյանը եւ Սարգիս Կարապետյանը: Վերջինիս հնացող «Մերսեդեսով» նրանք շրջագայում էին Արցախի արեւելյան կողմի բնակավայրերով, շփվում մարդկանց հետ եւ շոշափում նրանց տրամադրությունները: Եվ նոր շունչ ու ոգի էին ներարկում պատերազմի արհավիրքից կույզ եկած ու հուսաբեկված մարդկանց ներաշխարհը: Չափազանց դժվարին առաքելություն էր՝ վիրաբույժի, հոգեբանի ու ոսկերչի հմտություն պահանջող:

– Մենք չենք կարող պարտված ու խաբված մարդուն միանգամից ասել, թե վեր կաց ու նորից կովիր,– իրենց առաջին ուղեւորության սկզբում, երբ քաղաքից հազիվ էին հեռացել, իր մշակած «մարտավարությունն» ուղեկիցներին բացապարզել է գնդապետ Վարդանյանը:– Մենք ասում ենք, որ պետք է ուժերը վերականգնել, հետո միտվել էդ ուղղությամբ. եթե՝ ոչ, մեզ հասցված հերթական հարվածը մահացու ա լինելու... Մենք մեր հայրենակիցներին պիտի ասենք նաեւ, թե իրենք ինչ գենետիկ կողեր են կրում իրենց արյան մեջ. էս հարցում մեզ լավ օգնություն ցույց կտա ընկեր Վարազյանը:

– Այո՛, այո՛,– հաստատեց մանկավարժը,– մերոնցից ոչ բոլորը գիտեն, թե իրենք ինչ ոգու կրողներ են եւ ինչ նախնիների ժառանգորդներ: Նրանց աչքի առաջ հարկ է բացել իրենց իսկ բուն ինքնությունն ու էությունը:

«Քարոզիչների» խումբը շրջագայեց Շոշում, Խաչմաչում, Սարուշենում, Կարմիր շուկայում, Հերիերում, Սոսում եւ էլի մի քանի գյուղերում: Տեղի բնակիչները սկզբում խոժոռ ու թերահավատորեն էին նայում իրենց այցելած զինվորականներին ու մանկավարժին, նրանց մեջ տեսնում հերթական արկածախնդիրներին, բայց

երբ զրոյցը երկարում ու լիովին անկեղծանում էր, նրանք, ի դեմս համբավավոր նախկին սպաների, տեսնում էին իրենց ազնվական կերպարը, իրենց ոգին ու երազանքները, եւ վերածնության զգացում էր ծագում նրանց մէջ: Իսկ զինվորականներն ու մանկավարժը տեսնում էին, որ այս սերունդը նախորդների պես ունակ է նոր ու վճռական մարտեր շահելու, եւ ոչ միայն ռազմական դաշտում:

Ամենուր նրանց հյուրասիրության էին հրավիրում, բայց «քարոզիչները», որպես կանոն, խոյս էին տալիս եւ բավարարվում իրենց հետ վերցրած համեստ ուտելիքով: <Երեւրում, սակայն, նրանք տեղի տվեցին նախկին հողագործ Գուրգեն ապու համառ հորդորներին եւ մտան նրա «Ֆազենդան», ինչպես սեփական մեծ հողատարածքը, երկհարկանի տնով հանդերձ, կոչում էր տերը: Նա կլինէր մոտ ութսուն տարեկան, սակայն ժիր ու առույգ էր տարիքի համեմատ, արտաքուստ ազդու՝ իր թավ բեղերով ու բաս ծայնով, նրա մազերի դեռ կեսն էր ճերմակել: Գուրգեն ապան տունն մտնելուն պես կնոջն ու հարսին կարգադրեց շտապ սեղան բացել եւ կանչել որդուն ու թոռներին:

– Շուտ ըրեք, թա չէ մամայա լաց ինիլու, հան,– կատակով, թե՛ լուրջ սաստեց տնեցիներին իր մայրենի բարբառով:

Մինչ հացի կնստեին, տանտերը հյուրերին պատմում էր, թե երկու տղաների հետ ինչպես է կովել Թաղավարդ գյուղի մատուցներում, եւ թե ինչպիսի անհասկանալի հանգամանքներում են զիջել իրենց որոշ դիրքեր:

– Մեզ ասալ ըն՝ յետ կացեք... Գյուղում չընք, թա հուվերք ըն մեզ էդ կարգի ախմախ հրամաններ տվողները... Օզում ըմ տրանց կըլխընեն ջարդիլ,– հանգիստ, բայց իրականում սպառնալից տոնով հարցրել է Գուրգեն ապան:

Այդօրինակ հարցեր շատ էին տալիս այցելու զինվորականներին, նրանք էլ անփոփոխ պատասխանում էին, որ հիմա ուզում են ունենալ այնպիսի բանակ, որ ապահովագրված լինի քաղաքական խարդավանքներից եւ հմտորեն ու անձնվիրաբար կատարի

իր պաշտպանական առաքելությունը:

– Տա հի՛ր աս իննան,– անհամբեր հարցրել է Գուրգենն ասպան:

– Կախված աս մեզնից... երբ կարգին ուզենք,– պատասխանել է գնդապետ Վարդանյանը:

Երբ արդեն եկել էին որդին ու չորս թռռները՝ երեք տղա ու մի աղջիկ, Գուրգենն ասպան նրանց կանգնեցրել է սենյակի կենտրոնում եւ հյուրերին ասել.

– Իմ բանակը ուրանք ըն... Հիբը ստեղծիք ծերը, կասիք, վեր միանանք ծեգ:

Մանկավարժ Սիմոնը վաղուց սովորություն ուներ՝ կարետոր խոսքերն ու կարծիքները «հրապարակել» հացից առաջ կամ հետո, որ իր ասածը մեղմասացության, կեղծավորության կամ հավուրպատշաճության տպավորություն չթողնի, այլ արժեւորվի՝ որպես անկեղծ արտահայտություն: Գուրգենն ասյու «բանակի» հայտնվելուց հետո մանկավարժը տեղնուտեղը կրկնել է պատերազմի օրերին հայտնաբերած իր, թերեւս, ամենամեծ ճշմարտությունը.

– Գիտե՛ք՝ ամենքիս թվում է, թե մենք՝ մահկանացուներս, շատ ենք «եսասեր», իբր մեր քայլերն առավելապես կապված են անձնական շարժառիթների հետ, իբր մենք էնքան ինքնուրույն ու անկախ ենք, որ կարող ենք անձնապաշտ մարդու կամակորոջամբ փակվել մեր պատյանի մեջ եւ մեկուսի՝ մեր բախտի թելը մանել... Ոչ, դա անհնար է. եթե մարդ հոգեկան շեղում չունի, նա, անկախ իրենից, բազմապիսի ավիշներով կապված է իր շրջապատի, ժողովրդի ու երկրի հետ՝ լինելով նրա մի մկանն ու ջիղը, նա միշտ ապրում եւ գործում է էդ ամենի հոգեւոր դաշտում եւ իր յուրաքանչյուր նշանակալից շարժում, գիտակցաբար թե անգիտակցաբար, կատարում է հայրենի հովերի ներքո:

– Դժբախտաբար, երբեմն ընդդիմանալով դրանց,– հավելել է փոխգնդապետ Դավիթ Զանիկյանը:

– Դժբախտաբար, այո,– համաձայնել է Սիմոն Վարագյանը:

Երրորդ օրվա ավարտին, երբ «քարոզիչները» լավ տրամադ-

րությամբ վերադառնում էին Սոսից, գնդապետը հեռախոսազանգ ստացավ:

– Հավ... Հոյակապ... Հա, նոր ժամանակաշրջանը հեռու չի... Ինչ... Ինչո՞ւ... Ո՞վ ա հրամայել... Ես դրա մերը...– Գնդապետը նորից հայիոյեց՝ այս անգամ ավելի թունդ ու որոշակի, եւ անջատեց հեռախոսը:

– Ինչ է պատահել,– վատ բան կանխագգալով՝ անմիջապես հարցրեց Սիմոն Վարազյանը:

– Տեր-Գրիգորյանն ա... ասում ա՝ հրամայել են դադարեցնել մեր այցելությունները:

– Ովքե՞ր են հրամայել,– գրեթե միաբերան հարցրին ուղեկիցները:

– Վերեւներից... Կանգնեցրու մեքենան, Սարգիս,– նվաղած ձայնով հրահանգեց գնդապետը:– Դուրս գանք՝ մաքուր օդ շնչենք:

Վարդանյանը գրեթե շնչահեղձ էր լինում: Կարապետյանը հապճեպ ջուր հրամցրեց. գնդապետը շփից կումեր արեց՝ կուլ տալով երկու դեղահաբ, եւ նկատելիորեն տեղը բերեց շնչառությունը: Բոլորը լարված հայացքով նրան էին նայում, մանկավարժը բռնել էր ընկերոջ թեւը:

– Բան չկա, կանցնի,– շիշը Սարգսին վերադարձնելով՝ ուղեկիցներին հանգստացրեց Վարդանյանը:

Մի քանի րոպե «քարոզիչների» քառյակը լուռ ու մտախոհ կանգնել էր դեպի Շոշ գյուղ իջնող խճուղու ոլորաններից մեկի եզրին: Հայացքներն ակամա հառել էին Շուշի բերդաքաղաքի կողմը, որը բարձրադիր ոլորանից երեւում էր ինչպես դիմացդ դրված բնապատկեր՝ շատ թաղամասերի փողոցներն ու տները աչքի առջեւ են, եւ դրանք հիմա հառնում էին քո դեմ մշուշից նոր ելած անձանոթ բնակավայրի պես: Այնտեղ ծանոթ ու հարազատ շատ պատկերներ կան, ինչպես, օրինակ Սբ. Ղազանչեցոց եկեղեցին, որ շարունակում է անցորդներին ի տես խոյացած մնալ արդեն օտարվող քաղաքում՝ իր վիրավոր գմբեթով ու արծաթափայլ շողարձակումով: Սակայն առավել նսեմացուցիչը փողփողացող ազերական կանաչ դրոշներն

ու հենակետերն էին, որոնք ուղղակի աչքիդ մեջ ցցվելով՝ ուզում էին խափանել քո ընթացքը. դրանք հիմա տնկված են ճանապարհամերձ հատվածներում, եւ քիչ է մնում քսվեն անցնող մարդկանց ու ավտոմեքենաներին, որպեսզի նրանց փոխանցեն իրենց ետին ցանկությունները: Շուշիի ազատագրության համար ժամանակին իրենց երիտասարդությունը կրակի տակ դրած մարտիկները երբեւէ չէին կարող երեակայել, որ իրենց արդար վաստակը կարող է այսպես ընծայաբերվել թշնամուն՝ հանուն մուօ նպատակների: Այդ մարտիկներից երեքը մանկավարժ Վարազյանի կողքին այժմ կանգնել են ինքնասույզ ու մռայլ՝ տենդագին խորհելով, թե իրենց ցասումը երբ է կրկին ժայթքելու, որ անարատ լույսով դարձյալ ողողվի տառապանքով պահպանվող երկիրը:

– Գիտե՞ք, եթե նման հրամաններ արձակողների հարցը չլուծենք, մենք շուտով Ղազանչեցոցը չենք տեսնի նույնիսկ էս կետից: Իսկ հետո, լավագույն դեպքում, պիտի քայլենք մեր շուրջը ծածանվող կանաչ դրոշների տակ պազաձ... Կամ կքայլենք հեռու տեղերում... կամ ընդհանրապես չենք քայլի,– իր մռայլ կանխատեսումներն արեց գնդապետ Վարդանյանը:

Ինքնաձիգների կրակահերթեր լավեցին Շուշիի արեւելյան ստորոտում տեղակայված ազերական հենակետից, որ երեւում էր անզեն աչքով: Բոլորն ակամա նայեցին այդ կողմը: Մանկավարժ Սիմոնը լարվածությունից մեկեն պրկվեց, իսկ աջ դիմային նյարդը սկսեց ցնցվել, ինչը նշանակում էր, որ նա վերստին ցասման ու անզորության «մրրկայնության» մեջ է հայտնվել:

–Թուրքերի հերթական սադրանքն է... Մխիթարաշենի ուղղությամբ են խփում,– դիտարկեց փոխգնդապետ Զանիկյանը:– Տեսնենք՝ մերոնք կպատասխանե՞ն...

Քիչ անց լավեցին նոր կրակոցներ, այս անգամ՝ ձախ գտնվող բլրի ետեւից:

– Հա, մերոնք պատասխանեցին,– վստահ ասաց փոխգնդապետ Կարապետյանը:



– Եթե մենք լռենք, ուրեմն մեռած ենք,– նկատեց Վարդանյանը:  
– Իսկ եթե էդ ազարները սկսեն մեզ վրա կրակել, մենք ինչ պիտի անենք... ձեռքներիս ոչ զենք կա, ոչ բան,– նեղսրտած անդրադարձավ մանկավարժը:

– Մի անհանգստացեք, ընկեր Վարազյան, զենք էլ ունենք, բան էլ,– արձագանքեց Ջանիկյանը՝ հայացքն ուղղելով ավտոմեքենայի բեռնախցիկի կողմը:

– Հա, եթե իմանան, թե մենք ովքեր ենք իրականում, կկրակեն մեզ վրա, էն էլ ճիշդ կկրակեն... Լավ, քանի դեռ թիրախ չենք դարձել, գնանք,– հրահանգեց Վարդանյանն ու նստեց ավտոմեքենան: Մյուսները հետեւեցին նրան:

Առաջ էին շարժվում անխոս ու մտասույզ: Հետո գնդապետը ծխախոտ վառեց՝ ներողություն խնդրելով ուղեկիցներից եւ կիսաբացելով իր կողքի դռան պատուհանիկը: Միմյոն Վարազյանը դեռ ապաստարանային օրերից գիտեր, որ Վարդանյանն այլոց ներկայությամբ չի ծխում, եւ եթե հիմա նիկոտինային ծխին է ապավինել, ուրեմն՝ խռովահույզ ապրումների մեջ է: Ետեւի նստատեղից մանկավարժը հետեւում էր առջեւում տեղավորված գնդապետին, փորձում որսալ նրա ինքնազգացողության շարժերը, քանի որ «արյան բարձր ճնշումից տառապող մարդու նկատմամբ պետք է չափազանց ուշադիր լինել»: Մի քանի անգամ ծուխը ներս քաշելուց հետո գնդապետը հայացքը հառեց աջ կողմի վրա նշմարվող Ստեփանակերտին, որի հատուկենտ լույսերը նոր-նոր էին վառվել խտացող աղջամուղջում: «Նրա մոտ նոր գաղափար է հղանում»՝ փորձեց լավատեսորեն խոհածել Վարազյանը...

Երբ մեքենան մտնում էր քաղաք, գնդապետին մի պահ թվաց, թե Շուշիից ոնգածայն ուրվականներ են իջել եւ հետամտում են իրենց: Ետ նայեց, բայց հայացքը շեշտակի դեմ առավ մանկավարժի զարմացած աչքերին, եւ ներողամիտ ժպիտով ուղղվեց ու մտածեց, որ կռվել պետք է ոչ թե անգո ուրվականների, այլ մարտնչող տմարդների դեմ: Երկրի եւ աշխարհի որ ծագում էլ նրանք լինեն:

## Գլուխ 8

### ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄՈՒԺ

*...Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր,  
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ...*

*Վահան Տերյան*

Մովսեսի վարքագիծը շարունակում էր անխաթար մնալ տրամաբանության ու արդարամտության տիրույթում, այնուհանդերձ, նա իրեն անուղղակի մեղավոր էր զգում ընտանեկան նոր կացության համար. պատերազմից հետո կինը դեռեւս Երեւանում էր՝ աղջկա ընտանիքի հետ, եւ նշաններ չէին երեւում, որ առաջիկայում տուն կվերադառնա: Մինչդեռ նկարիչ ամուսինը ոտից գլուխ խորասուզված էր Ստեփանակերտի ալեկոծ առօրյայում եւ, կարծես թէ, այդպիսով ակնարկում էր, որ ընտանեկան նորագո իրավիճակի առնչությամբ ինքն առարկություններ չունի: Մինչդեռ Մովսեսի բուն հոգեվիճակն ամենեւին էլ նման եզրահանգման տեղիք չէր տալիս. նա անկեղծորեն չէր ուզում հավատալ, որ իր ու կնոջ միջեւ լռելյայն համաձայնություն է կայանում, իբր իրենք կարող են ապրել նաեւ այդպես՝ իրարից հեռու եւ անհաղորդ միմյանց հույզերին: Նա կնոջ շեշտված եսասիրությունը սեփական ծախողումն էր համարում, քանի որ «չի կարողացել անցած տասնամյակներին էնպես ներազդել կողակցի վրա, որ նա միաձույլ լինի իր հետ կյանքի առանցքային հարցերում»: Այդ տրտմալից խոհածումը ներքուստ վառում էր, բայց եւ, միաժամանակ, մտածում էր, որ ինքն այնքան մեծահոգի է, որ կարող է զոհաբերությունների գնալ հանուն կնոջ

ու հարազատների: Բայց արդյոք առողջ ու դրվատելի զոհաբերություն է դա, արդյոք ամուսնական ու տղամարդկային թուլություն չէ իր պահվածքը, հատկապես հիմա, երբ քո շուրջ կյանքը մրրկած է, եւ յուրաքանչյուրի դիրքավորվածությունն իր բնույթով ներգործում է ընդհանուր կացության վրա... Որքան ժամանակակից, նույնքան եւ ավանդապահ է Մովսեսը, ինչը նրան, երբեմն, մարդկային կեցվածքի երկվության է մղում, ինչպես հիմա՝ կնոջ հետ կապված այս թնջուկում: Նա վատ էր զգում եւ այն պատճառով, որ արդեն երկու ամիս է՝ չէր տեսել աղջկան ու թոռներին, որոնց նախկինում հանդիպում էր գրեթե ամեն օր՝ արվեստանոցից տուն գնալու ճանապարհին, եւ նրանց համար պատրաստ էր տալ հոգին, անգամ՝ արվեստանոցը, եթե դրա կարիքը լիներ:

Եվ ահա դեկտեմբերյան մի երեկո, երբ տանը միայնակ ընթրում էր (հադրուփցի կենվորները երկու օր առաջ էին տեղափոխվել առանձին վարձու բնակարան, որի վճարը պետք է պետությունը հոգա), Մովսեսը փորձեց ինքնասփոփվել, որ իրեն համակող տխուր մտածումները ծնվում են միայնությունից. այ, եթե այդ պահին կողքին լինեին, ասենք՝ Նվարդը կամ Արսենը, Տեր Միսաքը, «հադրության հնգյակը», կամ նրանք բոլորը միասին, ապա ինքը չէր տրվի նման սենտիմենտալության: Վերցրեց հեռախոսը, որ զանգի Նվարդին, բայց իսկույնեւեթ միտքը փոխեց, դուրս եկավ պատշգամբ եւ նայեց Շուշիի բարձունքի կողմը: Սեւ լուսություն էր կախված այնտեղ՝ ասես ահռելի զոնդ, որից ամեն վայրկյան կարող էին դուրս թռնել այլանդակ ճիվաղներ... Թքած նրանց վրա, ինչպես հայտնվեն, նույն կերպ էլ կչքվեն՝ հանգստացրեց իրեն նկարիչը եւ խոկումներն առօրեական տազնապների հունից տեղափոխեց անձնական դաշտ. միտքը դարձյալ սկսեց դեգերել բացակա հարազատների ետքից: Գլուխ բարձրացրեց ամենամեծ անհանգստությունը՝ Գեղամը, ում տեւական լուսությունը ձաղկում էր Մովսեսի հոգին: «Դե, եթե կրտսերն անհասկացող է, մեծը պետք է օրինակ ծառայի»՝ մտածեց նա՝ գրեթե պատրաստ զանգելու տղային: Բայց

վախեցավ չտիրապետել հուզմունքին եւ հեռվից-հեռու ցույց տալ իր անչափելի վիրավորվածությունը. չի կարելի, ինքը հո հիշաչար ու փոքրոգի ծնող չէ: Մի երկու բոպե եւս հայացքով տնտղելով մոտակա բարձունքի վրա կիտված դավադիր մուօը, մտախոհ մտավ սենյակ եւ նստեց համակարգչի առջեւ: Բացեց էլեկտրոնային փոստը եւ սկսեց հատ-հատ տկտկոցով գրաշարել.

*«Սիրելի որդիս Գեղամ*

*Քեզ նամակ գրելու հազար ու մի պատճառ կա, բայց հիմա էդ բոլոր պատճառներն ուզում եմ մի կողմ դնել եւ պատկերացնել, որ դու հիմա կողքիս ես, եւ ես քեզ հեպ գրուցում եմ առաջվա պես, երբ դու մեկ-մեկ գալիս կիսապառկում էիր արվեստանոցի ճոճաթոռին եւ իբր իմիջայլոց պատմում քո ծրագրերի, երազանքների ու մտահոգությունների մասին: Քո հպարտությունը թույլ չէր տալիս, որ դու բարձրաձայն եւ ուղղակի ինձնից կարծիք ու խորհուրդ հարցնեիր, չգիտեմ ինչու էն համոզմանն էիր, որ նկարիչներս կյանքի հարցերում թույլ ու անհմուտ մարդիկ ենք, թե իբր մենք չգիտենք կենսական ուղիներով շարժվելու արգասավոր ձեւերը: Այնուհանդերձ, խոսում էիր քեզ համար (նաեւ ինձ համար) կարելոր հարցերի մասին եւ ինձնից ակնկալում խորհուրդ, կարծիք ու քաջալերանք, բայց ակնկալում էիր թաքուն ու անխոս: Ես դիպմամբ հաճախ լռում էի, որպեսզի քեզ ստիպեմ, որ ինձ հեպ մինչեւ վերջ անկեղծ լինես եւ ազատորեն խոսես քեզ հուզող ու հետաքրքրող ամեն ինչի մասին: Բայց դու քողարկված ու մշուշապապ էիր ինձ ներկայանում, վախենում էիր բաց հոգով երեւալ իմ աչքին: Երեւի կարծում էիր, թե քո իրական կերպարը կարող է ինձ հասկանալի եւ ընդունելի չլինել, մտածում էիր, որ ես ճիշտ չեմ ընկալի քո տեսակը: Դու չափազանց սխալ էիր դատում, որդիս, եթե էս աշխարհում կա մի մարդ, որ ճանաչում եւ գնահատում է քեզ, էդ ես եմ, տղաս: Ես լավ գիտեմ քո սեւ ու սպիտակ գծերը, քաջատեղյակ եմ քո մրմունքներին ու մղումներին: Չկարծես, թե ես քեզ թույլ ու մորթապաշտ եմ համարում, չմտածես, թե դու իմ արյանը խորթ ծնունդ ես: Ո՛չ, որդիս, դու*

իմ անդրանիկ զավակն ես, իմ առաջին մեծ ուրախությունն ու գանձը, եւ ինչ կերպավորում էլ դու ունենաս, ես քեզ չեմ կարող զարել հարազատության ու ծնողական սիրո խոր ապրումից:

Ես գիտեմ, թե որքան ես տառապել Սրբեփանակերպող լքելու որոշումը կայացնելիս, գիտեմ, թե բարոյական ինչ ագրեսիայի տակ էիր կնոջդ ու մորդ կողմից: Ներիր, որ քեզ չպաշտպանեցի քո իրական էությանը հավատարիմ մնալու հարցում: Ներիր, որ լռեցի, երբ հայտնեցիր, որ ընտանյոք գաղթում եք: Ես կարող էի քեզ ու քո հոգին պաշտպանել, ես կարող էի քեզ ցույց տալ ավելի պայծառ ու ապահով ճանապարհ, բայց... իմ արհուրթունքը նույնպես չհերիքեց: Գուցե նրա համար չհերիքեց, որ վախենում էի, թե հանկարծ կծաղրես իմ «ռոմանտիկան», որի համար հաճախ ինձ մեղադրում էիր՝ իբր կյանքից կտրված եմ ես: Ներիր, տղաս, մենք երկուստեք մեղք ենք գործել, եւ գիտեմ, որ քո հեռանալով, ավելի շատ դու էիր ցավում, քան ես... Բայց դու, Գեղամ տղա, անգամ իմ կարծիքը չհարցրիր՝ տեղին քայլ է դա, թե՞ ոչ... Ինձ ընդամենը տեղեկացրիր ձեր մեկնելու օրը: Դու գիտես, թե ինչ ցավ է հոր համար՝ հեռու թողնել միակ որդուն... Դու գիտես, թե ինչ հարված է պապի համար՝ զրկված լինել թոռնիկներին հաճախ տեսնելու հնարավորությունից... Դու մեծ պատիժ ես սահմանել ինձ համար, եւ եթե համարում ես, որ դա արդար պատիժ է, ապա ես այն անմոռնջ կկրեմ իմ հեփազա բոլոր օրերին:

Հա, բայց ես էս ամենի համար չէի ուզում քեզ նամակ գրել, որդիս, քեզ նախատելու եւ մեղադրելու մտադրություն ու սիրտ չունեմ: Իմ մեղադրանքներն ու նախատիհները հիմա ուրիշ հասցեատերեր ունեն: Երբ մի օր գաս, մանրամասնորեն կխոսենք էդ թեմայով. գիտեմ՝ քեզ համար միեւնույն չէ, թե ինչ հոգս ու ցավի մեջ ենք խճճված: Քո հոգին հաստատ տանջվում է՝ իմանալով, թե որքան դժվար է հիմա Սրբեփանակերպում, ամբողջ Արցախում ու Հայաստանում: Բայց դու ամաչում ես էդ մասին հարցնել ինձ, ուրիշներից ես հեփաքթրվում: Ասեմ, որ պատերազմից հետո ամեն-

քիս կյանքն է բարդացել, բայց մենք ամենից առաջ յուրայինների սիրո եւ մխիթարության կարիքն ենք զգում ու ներկայությունը: Մեծ կորուստներ ունենք, փղաս, բայց դու շափ մի փխրիր, կվերականգնենք մեր ուժերը:

Ներիր, պիտի ասեմ, որ զոհվել է քո համադասարանցի ընկեր Մարտունը, որի հետը շափ մտերիմ էիր: Նրա մարմինն ընդամենը երեկ էին գտել, էսօր էլ հողին հանձնեցինք: Շափ չլացես, քո անունից ծաղկեպսակ եմ տարել Մարտունի շիրմին: Ձեր դասարանից շափերը ներկա էին թաղմանը:

Ասեմ, որ ձեր դպրոցը նույնպես վնասվել է ոմբակոծումից, դեռ պարզ չէ, թե երբ վերանորոգումը կսկսեն: Հիմա շինվերականգնողական լիքը գործեր կան մեզ մոտ, սակայն շինարարական ուժերի պակասությունը զգացնել է փայխա: Եթե էստեղ լինեիր, քո շինընկերությունը շափ պատվերներ կստանար:

Գուցե տեղյակ չես, ասեմ, որ Դադի վանքը մնացել է ազերիների հանձնված Քարվաճառի շրջանում: Նախքան ճանապարհի փակվելը Տեր Միսաքի, ուսուցիչ Վարազյանի եւ ուրիշ ընկերների հետ, մեր վարձած միկրոավտոբուսով գնացել էինք եւ... հրաժեշտ տվել մեր սիրելի վանքին: Ես էնտեղ հիշեցի, թե դու ոնց էիր մոմը վառել. քեզ՝ յոթամյա փղայիդ, դա հաջողվեց մի փոքր դժվարությամբ, նախ, ցուցամատդ վառեցիր անզգուշորեն: Չես մոռացել, չե՞, դու Դադի վանքում ես մկրտվել, առաջին պատերազմից անմիջապես հետո, երբ արդեն կարող էինք ազատորեն ելումուտ անել Քարվաճառի շրջան: Հիմա վանքը ռուս խաղաղապահների հսկողության տակ է, տեղի հոգեւորականները մնացել եւ շարունակում են իրենց ծառայությունը. անձնվեր է նրանց արարքը, չե՞ որ ռուսական հսկիչ ջոկից էն կողմ ազերիներն են, վանականների գլխին լուրջ վրանգ կա կախված: Բայց Աստված նրանց հետ է: Դադի վանք գնալը հիմա բավականին դժվարացել է, պետք է ներգրավվել մեկնողների հատուկ խմբի մեջ, թույլտվություն ստանալ: Սակայն ամենացավալին դա չէ, որի մասին ուզում եմ գրել:

Ամենացավալին էն էր, ինչ տեսանք էդ շրջանում մեր այցելության օրը. մարդիկ վառում էին իրենց կառուցած ու վերաշինած տներն ու շենք-շինությունները, որ թշնամուն չմնան ու չծառայեն նրան. մի քանի օր անց էդ ամբողջը պիտի հանձնվեր ազերիներին: Մինչեւ հիմա աչքերիս մեջ մրմռում է էն ծուխը, որ դուրս էր գալիս տերերի ձեռքով հրկիզված տներից: Երանի քեզ, որդիս, որ դու աչքովդ չես տեսել էդ սարսռալի տեսարանը...

Պիտի ասեմ նաեւ, որ մի չպայթած մեծ արկ կար ընկած մեր տնից քիչ վերեւ. սակրավորները երեկ նոր-նոր վնասագերծել են: Ես մտածում եմ, որ էդ արկը չի պայթել քո աղոթքների շնորհիվ, էն աղոթքների, որ դու պատերազմի ժամանակ ամեն օր Աստուծուն էիր հղում մեր ապահովության համար: Թե չէ եթե էդ արկը պայթեր, մեր տունը ցրիվ կգար: Եվ նոր զոհեր կլինեին:

Ո՞նց ես, որդիս, ո՞նց են անցնում օրերդ ռուսական էդ կորած գյուղաքաղաքում: Պատվերներ ունես, ապահովված է ընտանիքդ: Եթե փողի կարիք ունես, ասա՝ ուղարկեմ, չքաշվես, անպայման իմաց տուր. բոլորը չէ, որ օտար միջավայրում կարողանում են հարմարվել եւ տուն պահել:

Մեղավորությամբ ու տագնապով մի մտածիր մեր մասին: Մենք ապրում ենք մեզ վիճակված կյանքը, պարզապես մեր սրտում ու մտքում տխրությունը հիմա բազմապատկվել է: Բայց ոչինչ, դա էլ կանցնի, տխրությունը հավերժ չէ: Սուր տագնապներն էլ կանցնեն: Հա, երեւի քեզ հետաքրքրում է՝ ասեմ, որ պատերազմի օրերին շար չեմ վախեցել, հիմա էլ մեծ վախեր չունեմ: Ինձ ամենից շար վախեցնում է քո լռությունը: Ինձ թվում է՝ դու էնքան հեռու ես մեզ-նից, էնքան կտրված ու առանձնացած, որ քեզ մոտենալն ու տեսնելն աներեւակայելի բան է դարձել: Թվում է՝ մի այլ՝ անմարչելի աշխարհում ես հիմա: Կարծես մի ողջ հավիտենություն է անցել քո գնալուց հետո, մինչդեռ ընդամենը քսանհինգ տարի առաջ ես հեռացել անմեղ գառան պես...

Մովսեսը կանգ առավ վերջին բառերը գրելուց հետո՝ զգալով,

որ խոսքն արդեն ուղղում է ոչ թե ավագ որդի Գեղամին, այլ վաղամեռիկ, կրտսեր որդի Նորայրին: «Եվ միթե նրանք արդեն նույն հոգին չեն»՝ կսկծալի խոհածեց նկարիչը, բայց եւ արագորեն այդ միտքը հեռու վանեց: Նա տարտամորեն ջնջեց վերջին նախադասությունը եւ փոքր-ինչ մտածելուց հետո ավարտին հասցրեց նամակն այսպիսի տողերով.

*Ներիր, եթե մի աննշան իսկ դառնություն պատճառեցի քեզ իմ նամակով: Ես պարզապես ցանկացա մի քանի թույլ անկեղծ լինել քեզ հետ, երբ հիմա փանը մենակ եմ, եւ կողքիս ոչ ոք չկա՝ հետը մի երկու հատիկ բառ փոխանակելու: Միայնությունը մեծ պատիժ է, թող այն երբեւէ քեզ չտրվի: Երեւի շուտով մայրդ ու Կարինեի ընտանիքը վերադառնան Երեւանից, էդ ժամանակ արդեն ես ինձ ավելի պինդ ու պաշտպանված կզգամ:*

*Ես շար եմ կարողում քեզ, որդիս, կարողում եմ բալիկներիդ՝ իմ սիրասուն թոռնիկներին՝ Հովոյին ու Լալային, շար-շար պաշխկներ արա նրանց իմ կողմից:*

*Հայրիկ»:*

Կարդաց գրածը եւ գրեթե ոչինչ չփոխելով՝ ուղարկեց: Նույն պահին էլ ցավագնորեն խորհեց, որ նամակով որդուն երկար լռելու նոր առիթ է տալիս: «Իսկ գուցե անմիջապես պատասխանի՞ ջերմ խոսքերով... Գուցե կյանքը նրան արդեն լուրջ դամ է տվել...»: Ստամոքսում այրոց զգաց, սառնարանից հանեց «Ջերմուկի» շիշը եւ գլխին քաշեց: Կարծես հովացավ ներսը: Արդեն փոքր-ինչ խաղաղված՝ զանգեց ծանոթ տաքսիստին.

– Բարի իրիկուն, Վաղո... Լամվ ես... Շան օրի... Վաղը ռեյս ունեն Երեւան... Շատ լավ, ինձ էլ վերցրու... Առավոտ որքան շուտ շարժվենք, էնքան լավ... Պայմանավորվեցինք:

Մովսեսն իրեն վերադարձրեց ընտանիքի պատասխանատու հոր դերը եւ որոշեց մի երկու օրով գնալ Երեւան. կտեսնի դստեր ընտանիքն իր աննման թոռներով, կնոջը գումար կթողնի, արվեստակից ընկերներին կհանդիպի ու ետ կգա: Կնոջն ու դստերն էլ



չի պարտադրի, որ իր հետ վերադառնան Ստեփանակերտ. «Թող իրենք վճռեն, ես ոչինչ չեմ պնդի»:

Սառը-եղյամապատ առավոտ էր, երբ Մովսեսը ծանոթ տաք-սիստի «Օպել»-ով ուղեւորվեց Երեւան: Պատերազմից հետո առաջին անգամ պիտի անցներ Քաշաթաղի շրջանով, որ հայտնի է «Լաչինի միջանցք» անունով. այն Արցախը շաղկապում է մայր Հայաստանի հետ՝ ստեղծելով միասնական հայրենիքի ու երկրի երեւոյթ: Հենց այդ հատվածում էին խիտ տեղավորվել ռուս խաղաղապահները՝ ութ ուղեկալ մոտ ութսուն կիլոմետրի վրա: Ամենատհաճը երկրորդ ուղեկալում էր՝ Շուշիի խաչմերուկին, որտեղ ռուսների կողքին, ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա, հենակետ էին դրել նաեւ ազերիները. նրանք հայտնվել էին մայրուղու հենց կողքին՝ իրենց թշնամական հայացքներով: Ցանկացած պահի ազերի զինվորականները կարող են սադրանք հրահրել երթեւեկողների նկատմամբ՝ չքաշվելով խաղաղապահներից: Նրանք լավ գիտեն խարդախելու եւ այլոց մեղքի մեջ ներքաշելու արհեստը: Մինչ այդ օրը Մովսեսը ծանոթներից լսել էր, թե ինչպես են ազերի պարեկները գոռգոռում կամ քար նետում հայկական ավտոմեքենաների ետքից. մի խոսքով՝ պայթյունավտանգ խաչմերուկ է: Երբ հասան այդտեղ, ռուս զինվորականները հրահանգեցին մեքենան միառժամանակ կանգնեցնել ճանապարհի աջակողմյա եզրին. քիչ անց պարզ դարձավ, թե ինչու:

– Թուրքերի ավտոշարասյուն են բաց թողնում, էն ա, տեսեք, – բացատրեց վարորդ Վաղոն:

Տաքսի մեքենայում Մովսեսից բացի եւս ուղեւորներ կային՝ միջին տարիքի երկու կին, որոնք գրեթե միաբերան բացականչեցին.

– Վսյ, ձեզ թաղեմ... էս ինչ եք լցվել Շուշի...

Վարորդը պատմեց, որ բերդաքաղաքը գրավելուց հետո ազերիները մեծամասշտաբ վերակառուցողական աշխատանքներ են սկսել, ամեն օր երկար շարասյուներով հսկայական քանակությամբ շինանյութ են տեղափոխում Շուշիի տարբեր թաղամասեր:

Բեռնատարները մինչ տեղ հասնելն անցնում են արցախյան ճանապարհներով, եւ նրանց ուղեկցում են ռուս խաղաղապահները: Հիմա նման շարասյուներից մեկը ետ է վերադառնում բեռնաթափվելուց հետո:

– Այսինքն՝ նրանք արագորեն անցել են Շուշին թրքացնելու գործին, – մտախոհ անդրադարձավ Մովսեսը:

– Հա, եղբայր, վախենամ, թե Ղազանչեցոցն ու Կանաչ ժամն էլ հիմնահատակ քանդեն, – կանխատեսեց վարորդը:

– Թաղեմ դրանց...- կրկին անիծեցին ուղետոր կանայք:

Մովսեսը մեքենայի պատուհանից նայում էր քիչ հեռվում կանգնած ազերի զինվորականներին եւ մտովի արձանագրում, որ նրանք դեռեւս նախահարձակ վիճակում են եւ կարծես թե սպասում են հրամանի կամ առիթի, որ կրկին գրոհեն՝ այս անգամ դեպի Ստեփանակերտ եւ նրանից անդին: Եվ ո՞վ պետք է կասեցնի նրանց, ինչպէս պետք է նրանց ետ շարտել դեպի իրենց ելման դիրքերը՝ մինչեւ ազերական հարթ ամայությունները, որպեսզի Շուշիում եւ նրա շուրջ փռված տարածքներում կրկին թագավորեն անդորրն ու ստեղծարարությունը: Իր ներքնատեսությամբ՝ նոր իրականությունը չափազանց կեղծ ու խախտու է, եւ այն ենթակա է փլուզման... տեսանելի ապագայում: Բայց արդյո՞ք բավարար է ներքնատեսորեն արձանագրածը՝ տենդագին խոհածում էր Մովսեսը, չէ՞ որ հիմա ամեն ինչ վճռվում է զենքով, ասել է թե՛ ոչ մի բնական ու արդար կանոն կարող է չգործել:

Հաջորդ ուղեկալում եւս գրեթե նույն պատկերն էր՝ անձնագրերի եւ բեռնախցիկի ստուգում խաղաղապահների կողմից, ձեւական մեկ-երկու հարց զենք կամ թմրանյութ պահելու վերաբերյալ, եւ ազերական զինվորականների ագրեսիվ ներկայություն չնչին հեռավորության վրա:

– Փառք Աստծո, որ թուրքերը չեն մասնակցում անձնագրերի ու բեռների ստուգմանը, – համարյա մխիթարանքի պես հնչեցին վարորդի խոսքերը, երբ արդեն հեռանում էին Շուշիի երկրորդ խաչ-

մերուկից: Նա ուղեւորների ուշադրությունը սեւեռեց ճախ կողմի վրա՝ դեպի մոտակա անտառը, որտեղով նոր ճանապարհ էին կառուցում ազերիները:– Շուտով նրանք առանձին ճանապարհ կբացեն Հադրութով եւ կարիք չեն ունենա Շուշի հասնելու համար ռուսների ուղեկցությամբ անցնել մեր տարածքով:

Մովսեսն իր մեջ լուվեց մերժվածի պես: Հերթական ուղեկալներում խաղաղապահներին լուռումունջ ցույց էր տալիս անձնագիրը եւ ինքնաբերաբար նրանց մատնում իր մտախոհությունը: Եվ սաստիկ մոայլվեց, երբ անակնկալ նկատեց, որ ավելի քան նվազ է դեպի Արցախ երթեւեկող ավտոմեքենաների թիվը, երբ պիտի լիներ ճիշտ հակառակը. խեղանդամված, արնաշաղախ երկրին շատ է պետք ազգակիցների սրտացավ ու անմիջական վերաբերմունքը... Ճնշվեց ու խոր ինքնամիոփվեց այդ փաստից, միառժամանակ կորցրեց ուղեկիցների ու վարորդի հետ զրուցելու ցանկությունը: Այնուհանդերձ, երբ մոտենում էին Գորիսին, ցանկացավ խոսակցության բռնվել խաղաղապահների հետ՝ նրանցից ճշտելու մի երկու թեժ հարց, սակայն արագորեն մտափոխվեց. «Ինչ պիտի ասեն էս ջահել զինվորները... Նրանք ինչ գիտեն մեծ քաղաքականության կեղտերից...» Նա իրեն սեփական տնից օտարվածի պես էր զգում, տուն, որտեղ հիմա այլոք են հսկում քո երթուղարձը: Թեպետեւ խոցված էր իր ազգային ու մարդկային արժանապատվությունը, Մովսեսը հոգու խորքում գոհություն էր հայտնում Աստծուն, որ ճակատագրական պահին այստեղ են մուտք գործել ռուս խաղաղապահները եւ կանխել հետագա արնահեղությունը:

– Ինչ եք կարծում, Մովսես եղբայր, ռուսներն ինչքան կմնան էստեղ,– երբ Աղավնոյի ուղեկալում էին, հարցրեց վարորդը:

– Չգիտեմ, դժվար է կանխագուշակել: Ամեն ինչ կախված է նրանից, թե ամբողջ աշխարհում ինչ իրավիճակ կլինի... Ռուսների գործն ամբողջ աշխարհի հետ է: Նրանք իրենց համար անելիք են տեսնում բազմաթիվ տարածաշրջաններում:

– Այսինքն՝ եթե նրանց համար շատ կարեւոր ճակատ բացվի մի

ուրիշ տեղ, զորքն էստեղից կհանեն ու կտանեն էնտեղ...

- Հա, հենց էդպես: Դրան մենք միշտ պատրաստ պիտի լինենք: Աշխարհը հիմա մի խլթխլթացող կաթսա է, չգիտես, թե որ տարածաշրջանում վաղը կբռնկվի նոր հակամարտություն... Անկախ ամեն ինչից, մենք հիմա պիտի առավելագույնս ազնիվ գտնվենք ու խոստովանենք, որ ռուսները մեզ համար հնարավորություն ապահովեցին, որպեսզի վերականգնենք մեր ուժերը, ապաքինվենք վերքերից եւ նորից լծվենք մեր պայքարին:

Ուղետոր կանայք ուշադիր լսում էին Մովսեսի դատողությունները: Նրանցից մեկը, որ ավելի կրթված ու ընկալունակ էր երեւում, արձագանքեց.

- Որեւէ մեկը պարտավոր չէ մեզ միշտ օգնել, ռուսները կանեն էնքան, որքան իրենց պետք լինի: Մենք մեր ուժերը պիտի համախմբենք, ոչ թե էսպես ցաքուցրիվ անենք վերջին հիմարի պես...

- Իմ որդին էլ է էդպես մտածում,- խոսեց մյուս կինը:- Նա հիմա երեւանի հոսպիտալում վիրավոր պառկած է, երեկ զանգել ու ասում էր, որ խաղաղապահների վրա շատ հույս չդնեք, նրանք գալիս ու գնում են, էդ մենք պիտի մեր հարցերը լուծենք:

Մովսեսը նոր իմացավ, որ իր ուղեկիցներից մեկը վիրավոր զինվորի մայր է եւ քրոջ հետ գնում է որդուն տեսության: Ափսոսաց, որ շուտ չի ծանոթացել ուղեկից կանանց հետ, վատ տրամադրությունը խանգարեց, որ նրան պաշարել էր ուղեւորության սկզբին, Շուշիի մոտ: Զինվորի մայրը պատմեց, թե որդին որտեղ է կռվել ու ինչպես է Վարանդայում ընկերների հետ ընկել ԱԹՍների հարվածի տակ. տասը հոգուց ողջ են մնացել հինգը: Մովսեսը կնոջը խոստացավ, որ կգնա նրա տղային տեսության:

- Նեղություն չքաշեք, եղբայր, շնորհակալ ենք,- զգացված ասաց վիրավոր զինվորի մայրը,- թույլ չեն տալիս հոսպիտալ մտնել:- Նա ձեռքի հեռախոսի մեջ ցույց տվեց որդու լուսանկարները՝ մենակ, ընկերների հետ, գնդացիորդ ուսին եւ վիրավոր: Սիրունատես ու ներքին առնականությամբ լի տղա էր երեւում:

Գորիսի արեւմտյան բարձունքի աղբյուրի մոտ կարճատեւ հանգստի դադար առան: Սրճարանում Մովսեսը ուղեկից կանանց ու վարորդին սուրճ ու թխվածք հյուրասիրեց, հետո գնաց սեւքար, եռանկյունակերպ հուշարձանին մերձակա այն կետը, որտեղից գոգավորության մեջ հարմարավետ տեղավորված քաղաքը երեւում էր ինչպես առջեւ փռված մի հսկայական վիշապագորգ, եւ թվում էր՝ ուր որ է այն կալիքվի աներեւոյթ կախարդական մասի թեթեակի շարժմամբ: Մովսեսը տարիներ ի վեր սովորություն ուներ երեւանյան ուղեւորություններին կանգնել այստեղ եւ զմայլվել չքնաղ տեսարանով, բայց խթանիչը սոսկ պատկերի գրավչությունը չէր. ժամանակին նա այստեղ զմայլանք էր ապրում վաղամեռիկ որդու հետ, երբ նրան պարբերաբար Երեւան էր տանում՝ բուժման հերթական կուրսն անցնելու: Ջանքերն ապարոյցուն անցան, բժիշկներն անգոր եղան փրկելու տղային, նրա հիվանդությունը գաղտնի սկսել էր զարգանալ դեռ առաջին պատերազմի օրերին, երբ հարազատների ու հարեւանների հետ, ռմբահարումների ժամանակ, ապաստանում էր շենքի նկուղում: Մովսեսը վաղուց մենակ է կանգնում այստեղ՝ ինքնասույզ ու մեկուսի, բայց միշտ զգում է, որ որդին իր հետ է, եւ ինքը, թիկունքին կանգնած, շոյում է գլուխը եւ առնում նրա մաշկից եկող հրաշալի բույրը:

Վարորդի եւ ուղեկից կանանց հետ զրուցելով ու նիրհելով, նկարիչը Երեւան հասավ երեկոյան կողմ: Ծայրամասային թաղամասերից մեկում նա մեքենայից իջավ մի համեստ սուպերմարկետի դիմաց: Թոռների համար խաղալիքներ, նկարչական պարագաներ, քաղցրավենիք ու միրգ գնեց եւ տոպրակներով ծանրաբեռ՝ բարձրացավ կողքի շենքի առաջին մուտքի չորրորդ հարկ: Դուռը բացեց աղջիկը՝ Կարինեն:

– Վայ, պապան...- բացականչեց եւ ամուր փաթաթվեց հորը: Հետո մոտ երկու բոպե, բաց դռան շեմին, աղջիկը լացում էր ու ծիծաղում, ապա միայն հեկեկում էր, ասես գտել էր մահվան գուբից փրկված ծնողին:

Ի վերջո, Մովսեսը ներս մտավ, եւ «անկոչ հյուրին» իրենց գիրկն առան նաեւ կինն ու երկու թոռները: Երբեւէ իրեն այդքան հախտուն ու հուզումնալից չէին դիմավորել տնեցիք, որտեղից էլ վերադառնար՝ հեռավոր արտասահմանից, ուր պարբերաբար մեկնում էր իր արվեստային գործերով, թե մոտիկ գյուղերից, որտեղ սովորաբար գնում էր թարմանալու եւ էտյուդներ անելու: Մովսեսը նախքան կլվացվեր ու կտեղավորվեր բազմոցին, սրընթաց խորհեց, որ հարազատների ներկա դիտանկյունից իր գտնվելու վայրն ու ժամանակը հավանաբար այնքան դժոխային էին երեւում, որ այնտեղից ողջ դուրս գալն իսկական հրաշքի պէս էր թվում նրանց: «Իսկ գուցե նրանք ճիշտ են արձանագրում իրողությունը, ավելի ճիշտ, քան էնտեղ գտնվողներս... Բայց իրո՞ք հեռվից ամեն ինչ ավելի հստակ է երեւում...»:

Կինը՝ Գայանեն էլ արտասվեց, սակայն՝ զուսպ ու կաշկանդված. գուցե նա շատ ավելի հույզ ու տառապանք ուներ իր մեջ ամբարած, քան դուստրը, սակայն ցուցադրում էր պատշաճը, հավանաբար ամուսնուն անտեղի չհուզելու համար: Կինը թարմ սանրվածքով էր, հավանաբար անցյալ կամ այդ օրն էր գեղեցկության սրահում եղել. եթե կեղծավոր լիներ, կասեր, որ սիրտը նախազգացել է ամուսնու գալուստը, դրա համար սիրուն հարդարվել է: Բայց Գայանեն նման դերասանությամբ օժտված չէ, նույնիսկ հոգում առկա շատ գույներ ի ցույց չի դնում, բավական խնայողաբար է վերաբերվում իր ներաշխարհի «գույքին»: Նա գիտի, թե իրեն ինչպէս պետք է պահի, որպեսզի լինի ամբողջական ու չճամծմված: Այնուհանդերձ, Մովսեսը նկատեց, որ կինը նիհարած ու գունատ է:

– Հո հիվանդ չե՞ս, Գայանե...

– Չէ, ուղղակի ծանր օրեր քաշեցինք: Շատ էինք հուզվում մեզ մոտ կատարվող դեպքերի պատճառով:

– Ինչ եկել ենք, մամայի ախորժակը փակվել ու չի բացվում,– լրացրեց աղջիկը:

Մովսեսը մտաբերեց, թե ինչպէս էր Գայանեն դողացնում ու

ատամները կափկափում պատերազմի առաջին օրը, երբ սկսվեց ռմբակոծումը եւ դեռ աղջկա ընտանիքի հետ դուրս չէր եկել ուժգին կրակի տակ հայտնված քաղաքից: Նույնիսկ դիտողություն արեց նրան, որ իրեն արցախցու պես չի պահում, ասես պատերազմ չի տեսել երբեք: «Ինչ անեմ, ինձնից անկախ է ստացվում...»՝ խեղճացած պատասխանել է խուճապի ու դողի մեջ սփրթնող կինը: Նրա վախը սկսվել էր առաջին պատերազմի ամիսներին, երբ հղի էր երկրորդ երեխայով, իմա՝ դստերով: Այն ժամանակ Մովսեսը կնոջն ու փոքրիկ տղային բավականին ուշացումով էր ուղարկել Երեւան, չգիտեր, որ պատերազմը կարող է տարիներով ձգձգվել, եւ քաղաքը երկար պիտի մնար ռմբահարումների թիրախ: Աստծուն մինչ օրս փառք է տալիս, որ դուստրը ծնվել է ողջ ու առողջ, առանց ֆիզիկական ու նյարդային շեղումների: Մինչդեռ միշտ կասկած ունեւր, որ Կարինեն կարող էր կրել պատերազմական ազդեցության հետքերը, գուցե մոր պես լինեւր սաստիկ վախեցող՝ յուրաքանչյուր սուր ու բարձր ձայնից:

– Դու ո՞նց ես, Կարինե ջան, դու էլ մամայի պես շատ ես վախեցել...

– Դե, հա, պապ, վախենում էի, բայց ոչ մամայի չափ:

– Վախենում եմք բոլորս, բայց չպետք է թույլ տանք, որ վախը մեզ կուլ տա,– անդրադարձավ Մովսեսն ու ցանկացավ զարգացնել «վախի տեսությունը», սակայն միտքը փոխեց եւ անցավ թոռնիկներին, նրանց հետ վերսկսելով վաղուց ընդհատված նկարչական պարապմունքները: Հատկապես փոքր թոռը՝ չորսամյա Արեգը, նկարել սիրում է, իսկ վեցամյա Մարիամը նկարում է լոկ պապիկի հորդորով, առանց խանդավառության: Սակայն այդ օրը երկու թոռներն էլ բավականաչափ ոգեւորված էին պապի գալստյամբ, եւ մոտ մեկ ժամվա ընթացքում գունեղ պատկերներ գծեցին նկարչական տետրի վեցական էջի վրա՝ փոքրերի համար ստեղծագործական ռեկորդ:

– Հա, եթե արագ նկարչության մրցույթներ լինեն, դուք կարող

եք հաղթել,- մեկ անգամ ես նայելով թոռնիկների նկարածները, գովեց Մովսեսը:

Եկավ փեսան, եւ բոլորը նստեցին բացված սեղանի շուրջ: Մովսեսը վաղուց ընտանեկան ընթրիք չէր ճաշակել, նրան թվաց, թե վերստին բնական ու հարազատ միջավայրում է, սակայն աչք ածելով օտար սենյակը, տրվեց այն զգացողությանը, որ իրենք կարճատեւ ընդմիջման են մի երկարատեւ հետապնդման մեջ, որն իսկական ավարտ կարող է ունենալ միայն Ստեփանակերտում, իր առանձնատանը:

Հաջորդ օրը կնոջ ու թոռների հետ Մովսեսը դուրս եկավ քաղաք զբոսնելու. երեխաներն անցած երկու ամսվա ընթացքում իրենց թաղամասի խաղահրապարակներից բացի որեւէ այլ տեղ չէին գնացել, չգիտեին՝ ինչ կա Երեւանի մյուս փողոցներում, որոնց մի մասն իրենց պատշգամբից հաճախ երեւում էր մշուշված ու անխոստում:

- Ոչ ես, ոչ Կարինեն տրամադրություն չունեինք երեխեքի հետ հեռու տեղեր գնալու, Միքոն էլ ժամանակ չունի նման բաներով զբաղվելու, առավոտից իրիկուն վազվզում է,- բացատրեց կինը:

Միքոն՝ Միքայելը, Կարինեի ամուսինն է, որին Մովսեսը չի սիրում նրա շահադիտության եւ սեփական ընտանիքից դուրս այլ հոգսեր ընդունելու անկարողության, թե՛ չկամեցողության պատճառով: Առետրաֆինանսական ճարպիկ գործարքներ կատարող փեսան յուրաքանչյուր իրավիճակում ելք է գտնում սեփական հարմարավետությունը կարգավորելու համար, ինչպես եղավ պատերազմի առաջին օրը, երբ ընտանիքը, ծնողներին ու քրոջը վերցրեց եւ իր կիսաբեռնատար «Ֆորդով» շուտափույթ հասցրեց Երեւան: Նա հաշվառված էր պահեստազորում եւ պարտավոր էր վերադառնալ ու սպասել զորակոչի, սակայն ինչ-ինչ պատճառաբանություններ գտավ եւ մնաց մայրաքաղաքում: Ծնողներին ու քրոջը տեղավորեց Ջեյթունի հանրակացարանում, իսկ իրենց համար առանձին բնակարան վարձեց Աջափնյակում, եւ հիմա Մովսեսը չգիտի՝ փե-



սան օգտագործեց հարմար պահին ու առանձնացավ ծնողներից, թե՛ դա հարկադրված քայլ էր: Այդ մասին նրա հետ խոսելու ցանկություն չունեցավ երեկ, երբ ընթրիքից հետո իրար մոտ էին նստել եւ փորձում էին, կովի հետեւանքներից բացի, զրույցի՝ երկուստեք հետաքրքիր թեմա գտնել: չստացվեց: Փեսային նա իր ներքին մատչանում գրանցել էր որպես դասալիք, ուստի աշնանային դժնի օրերին նրա հետ իր հեռակա հարաբերությունը կառուցում էր, ինչպես կվերաբերվեին խեղճին ու դատվածին: Սակայն պատերազմից հետո այլ կերպ սկսեց հարաբերվել Միքոյին՝ տեսնելով արնահեղ ու անհասկանալի կովի անսպասելի մեծ ողբերգությունը, երբ հազարավոր երիտասարդներ զոհվեցին անպատրաստ, անկամ, ասես թատերայնացված պատերազմում: «Իսկ եթե ճշմարիտն ի՞նքն էր... իսկ եթե նա կանխատեսում էր էդ ծրագրված ողբերգությունը՝ շանթվածի պես մտածում էր նկարիչը եւ ինքնիրեն հանգստացնում. «Չէ... միթե ամեն ինչ էդքան սատանայական էր էն օրերին... Չէ»: Բայց գիտեր, թե որքան ահասարսուռ է իրականությունը:

Միքոն հիմա ողջ է եւ ընտանիքին տիրություն է անում, ուստի Մովսեսն այլեւս մտադիր չէ դատավորի դեր ստանձնել եւ բարոյապես դատափետել նրան, ով, գուցե, ներքուստ իրեն մեղադրում է եւ ինքն էլ դժգոհ է ակամա ձեւավորված իր «կարգավիճակից»: Իսկ ի՞նչ խորհի մեծ զավակի՝ Գեղամի առիթով, ով արդեն քանի տարի Ռուսաստանում է, պատերազմի օրերին եւ այդու ընդամենը մեկ անգամ է զանգել հորը, իսկ մորն ու քրոջը՝ երկու: Եվ ոչ մի օգնություն չէր ուղարկել նրանց, ինչպես դա արել են հազարավոր հայ տարագիրներ Ռուսաստանից եւ այլ երկրներից՝ կրակի մեջ հայտնված իրենց հարազատների նկատմամբ ցուցաբերելով սրտացավ վերաբերմունք: Հիշեց երկու օր առաջ տղային գրած նամակը եւ... ունայնություն զգաց: «Թող յուրաքանչյուրն ինքնուրույն պատասխան տա իր խղճի, երկրի ու Աստծո առաջ»՝ խոհածեց նա եւ իր համար փակված համարեց այդ տխուր թեման:

Մովսեսը կամեցավ կնոջն ու թոռնիկներին տանել Երեւանի

կենտրոն, ապա նրանց հետ շրջել այն տեղերով, որոնք իր ուսանողության շրջանի սիրելի վայրերն էին: Բայց խորհեց, որ նման երթուղին հազիվ թե հետաքրքրի կնոջն ու երեխաներին, որոնց համար ժամանցի այլ ձեւերն ու տեղերն են նախընտրելի, ինչպես կենդանաբանական այգին, խոշոր սուպերմարկետների խաղաարահները, խանութները, մանկական սրճարանները: Այնուհանդերձ, վճռեց, նախ, հարազատների հետ քայլել Հյուսիսային պողոտայով, շրջել Կարապի լճի մերձակայքում, ապա նոր կորոշեն՝ ուր գնալ:

Եղանակը ցուրտ ու ամպամած էր, զբոսանքի չտրամադրող, սակայն Մովսեսն աշխույժ խոսքուզրույցով ջանք թափեց, որ իր թանկագին ուղեկիցները լավ զգան եւ հետաքրքրությամբ հետեւեն իր պարզաբանումներին, որ կատարում էր գեղեցիկ ու հոյաշեն տարբեր կառույցների, շենքերի ու ստորգետնյա անցումների վերաբերյալ: Թեպետեւ լիովին խորասուզվել էր զբոսավարի պարտականության մեջ, նա ենթագիտակցորեն ինչ-որ տհաճ զգացում էր ապրում՝ նայելով տիրող երթուղարձին. առերեսույթ մարդիկ իրենց սովորական հոգսերի մեջ էին, խաչմերուկներում խցանումներ ու կուտակումներ կային, փողոցային առետուրը նախկինի պես անվերահսկելիորեն տարածված էր, իրենց մանր վաստակին էին ծաղկավաճառները, դիմանկարիչները, երաժիշտները, մուրացկանները: Մինչդեռ նա, չգիտես ինչու, իր հուզաշխարհից երեւակայում էր, թե հայոց կենտրոն հանդիսացող քաղաքը պետք է ուրվականային տեսք առած լիներ՝ արտացոլելով մեկ ամիս առաջ տեղի ունեցած արնահեղության անդրադարձները: Կյանքն իր օրենքներն ունի, գիտի, դրանք չեն փոխվում ամենաաղետալի իրադարձություններից հետո անգամ, այնուամենայնիվ, Մովսեսը տրտմորեն խոհածեց, որ մայրաքաղաքն ասես չի վերապրել եւ չի զգում երկրի գլխով անցած արհավիրքը: Մի ակնթարթ նրան թվաց, թե ամբողջ քաղաքը մութով է պատված՝ հեռու բուն իրականությունից, եւ մշուշվեցին նաեւ իր աչքերը, եւ կարծես թե տեղաշարժվելու բոլոր կողմնորոշիչներն անհետացան: Նա տեղում

անշարժացավ՝ փակ աչքերով ու գլխահակ:

– Քեզ ինչ եղավ, Մովսես,– վախեցած հարցրեց կինը: Թոռ-նիկները նույնպես տագնապած նայեցին պապին:

– Ոչինչ, հիմա կանցնի,– փոքր-ինչ ուշացումով արձագանքեց Մովսեսը եւ աչքերը բացեց:

– Գլխապտոհյտ ունես... գնանք այ էն նստարանին նստենք,– կատարվածը հասկանալ ջանաց Գայանեն:

– Չէ, չէ, մտքերի մեջ ընկա... Դե, բալիկներ, շարունակենք մեր էքսկուրսիան,– փորձեց դերի մեջ մտնել նկարիչը: Բայց նրա տրամադրությունն այլևս փչացած էր. այդուհետ շատ ճիգ գործադրեց, որ հարազատները չնկատեն ներսում կրկնակի խտացած ցավն ու ափսոսանքը:

Օպերայի բակը նրան ներկայացավ առավել հուսադրող պատկերով. այստեղ շատ դրոշներ կային, սեղաններ եւ խմբված մարդիկ, ինչը նշանակում էր, որ տեղի է ունենում ինչ-որ հանրային շարժում: Մովսեսը հեռուստացույցից ու համացանցից տեղյակ էր այս՝ Ազատության հրապարակում սկիզբ առած հանրահավաքների մասին, որ նախաձեռնում էին հայրենասիրական ուժերը՝ փորձելով հեռացնել օրվա իշխանություններին, որոնք դարձել են երկրի պարտության խորհրդանիշը: «Կապիտուլյանտներին» գահընկեց անելն այնքան օրախնդիր էր, որ Մովսեսն անբացատրելի զարմանք ու խորշանք էր ապրում այն մարդկանց վարքուբարքից, ովքեր ճգնում էին ամեն գնով պաշտպանել հայրենիքի մի մասը թշնամուն մատնած եւ երկիրը ջախջախման եզրին հասցրած ափկար ու օտարահաճո կառավարիչներին: Հանրային նման վարքագիծն իսկապես հավասարազոր էր դավաճանության, եւ այդ իրողությունն այլ ձեւակերպումներով ներկայացնելը Մովսեսը, շատերի պես, համարում էր հանցանքը կոծկելու եւ արատավոր իրավիճակից դուրս պրծնելու լկտի ու դատապարտելի փորձ: Նկարչի աչքից չվրիպեց, որ հրապարակում տեղ-տեղ խմբված մարդիկ սովորականից ավելի մտահոգ ու մռայլ են, այնտեղ թրեւող նույնիսկ փողո-

ցային շների աչքերը չափազանց թախճոտ երեւացին: Բայց եւ վերհիշեց, որ մինչ այդ փողոցներում իրեն հանդիպած անցորդները եւս առավելաբար տխուր ու ինքնամփոփ հայացքներով էին, թեպետեւ դժվար էր որոշել, թե որն է նրանց մտատանջության առանցքային դրդապատճառը: Պատերազմը շատ շատերին է վշտացնում ու անհանգստացնում, սակայն յուրաքանչյուրն իր առաջնորդիչ մտավախություններն ու շարժառիթներն ունի: Մովսեսը, ելնելով իրական պատկերից, կարող էր միայն մոտավոր դատողություններ անել, թե մարդկանց առաջնահերթությունների սեփական ցանկում ինչ տեղ են զբաղեցում, օրինակ, ազգն ու հայրենիքը, տվյալ պահին՝ ամենապահանջված «արտեֆակտները», ըստ նկարչի համոզմունքի. նա փաստերի համադրմամբ, ներքնատեսորեն ու հեռազնա հաշվարկներ էր անում եւ... անհունորեն տրտմում ստացած արդյունքներից:

Նկարիչը թռուցիկ զրույցի բռնվեց հրապարակի մարդկանց հետ՝ իր տեսակից էին, հոգեւոր ու գաղափարական իր շաղախից: Մեկն երազեց, որ նրանց թիվն անգերազանցելիորեն այնքան մեծ լիներ, այնքան համախումբ, որ ամբողջ երկրում անվիճելիորեն նրանք գերակայեին, որ այդուհետ ներքին ու արտաքին ոչ մի սպառնալիք չկարողանար սասանել հայրենի երկիրը: Իր փափագածն առերեսույթ քաղաքական ձեւվածք ուներ, բայց ներքուստ հոգեւոր ու մշակութային էր, քանզի նա խորապես զգացել ու հասկացել է՝ երկու մահառատ պատերազմներ վերապրելով. քաղաքականությունն առանց ներազգային վառ գույների ենթակա է դրդալից ձախողման: Կանգնելով հրապարակում ծփացող դրոշների ներքո, նա հավատաց, որ մի օր, այս հինավուրց հողի վրա հաստատվելու է հայկական զիլ խաղաղությունը՝ իր հայրենական միացյալ կալվածքներով, եւ դա չի լինելու ընդդեմ որեւէ մեկի. չէ՛, կամեցավ հավատալ դրան, քանզի իր երեւակայածն արդար ու աստվածահաճո երազանք է: Մովսեսն իրեն մի պահ պատանի զգաց, ով ինքնամոռաց սիրահարի պես վազում է սիրեցյալի

ետեւից, եւ ուր որ է ահա ամուր բռնելու է նրա ճերմակ քղանցքից...

Տեղեկացավ, որ երեկոյան ժամը վեցին կկայանա հերթական հանրահավաքը. իսկույն վճռեց, որ կմասնակցի եւ ներսից կտեսնի, թե ինչպես է «հայրենասեր ամբոխը խելագարվում»: Եվ կանի իր առարկայական եզրահանգումները, որ դրանք Ստեփանակերտում փոխանցի Տեր Միսաքին, Վարազյանին, Վարդանյանին, մյուս ընկերներին:

«Հին Էրիվան» ռեստորանում ճաշեցին ու հետաքրքրված դիտեցին ներսի հնաոճ կահավորանքը, ապա Հյուսիսային պողոտայի ստորգետնյա խաղասրահում անցկացրած ժամանցից, մանկական խանութում գնումներ անելուց հետո Մովսեսը կնոջն ու թոռներին տարավ տուն: Շտապում էր ետ գնալ Ազատության հրապարակ եւ այնտեղ, մեկ անգամ թեկուզ, մասնիկը դառնալ «մոնչացող մայրաքաղաքային լեգեոնի»: Ձանգեց արվեստակից ընկերներից չորսին՝ առաջարկելով միասին գնալ հանրահավաքի. երկուսը հրաժարվեցին՝ չթաքցնելով իրենց համախոհությունը պարտված իշխանություններին եւ, բնականաբար, անհամաձայնությունը նրանց հեռացնել կամեցողների հետ: Ափսոսանք, խղճահարություն ու արհամարհանք զգաց այդ երկու մոլորյալների հանդեպ, սակայն չվիճեց հետները, խորհելով, որ նրանք արժանի չեն իր հիմնավորումները լսելու: Մյուս երկուսի՝ ճանաչված կերպարվեստագետներ Հենրիկ Բադալյանի եւ Սիփան Ղազարյանի հետ հանդիպեց պայմանավորված ժամին ու տեղում:

Անցած տարիներին նրանց եւ հանրահավաքի չեկած արվեստակից ընկերներին Մովսեսը մի քանի անգամ հյուրընկալել էր իր տանը, պատեցրել Արցախի շրջաններով, կազմակերպել նրանց ցուցահանդեսը քաղաքային պատկերասրահում: Բայց պատերազմի օրերին նրանցից լոկ Հենրիկն էր մի անգամ զանգել եւ հետաքրքրվել իր որպիսությամբ ու Ստեփանակերտի դրությամբ: Նրբազգաց լինելով՝ Մովսեսն ընկերական անտարբերությունից վիրավորվել էր, սակայն հանդիպման ժամանակ գերծ մնաց ման-

րախնդրությունից եւ նրանց հետ ողջագուրվեց, ինչպես հին ու բարի ժամանակներում: Ներկա պահին նա անձնական վիրավորանքները չնչին բան համարեց տեղ գտած վիթխարի ողբերգության ֆոնին: Համենայն դեպս, արվեստակից ընկերներն ի սրտե ուրախ էին՝ տեսնելով Մովսեսին, ով «ողջ-առողջ դուրս է պրծել կրակի երախից» եւ հիմա Երեւանում փորձում է քաջալերել մտատանջվող արվեստակիցներին: Մինչեւ հանրահավաքը մի բաժակ սուրճ խմեցին «Մեղեդի» սրճարանում եւ միմյանց ընտանեկան ու ստեղծագործական կացությանը տեղեկացան: Սիփանը պարծեցավ, որ անցած հոկտեմբերին, այսինքն՝ երբ մոլեգնում էր պատերազմը, երկշաբաթյա ցուցահանդեսի է մասնակցել Վիեննայում, դրամական մրցանակի արժանացել, վաճառել նկարներից մի քանիսը. նա թեւածում էր իր արվեստային աշխարհում եւ դժվարությամբ էր խորանում ներկայի մտահոգությունների մեջ: Հենրիկն ավելի զգայուն վարքագիծ էր դրսեւորում իր շուրջը եւ հայրենի շրջաններում կատարվող ցավագին երեւոյթների հանդեպ, հարցեր էր տեղում Մովսեսի գլխին՝ ի մասնավորի կրկնելով, թե ինչպէս եղավ, որ երկիրը հայտնվեց նման խայտառակ վիճակում: Մովսեսը պատասխանում էր հակիրճ.

– Տեղի է ունեցել մեծ դավաճանություն:

Հենրիկը գլխով էր անում, իսկ Սիփանն ինքն իրեն կարոտաբաղձում էր.

– Վիեննայում խաղաղ էր... Էնտեղ իրենց հարցերը նրանք վաղուց են լուծել:

Նկարիչների սեղանին մոտեցավ բարձրահասակ ու բեղերով մի մարդ եւ ջերմորեն բարեւեց, նախ, Հենրիկին, ապա Մովսեսին ու Սիփանին:

– Մովսես ջան, ծանոթացիր, իմ լավ բարեկամ ու ընկեր Վազգեն Սիսակյանն է,– նորեկին ներկայացրեց Հենրիկը, հետո կամացուկ ավելացրեց. – ԱՍԱԼԱ-ի հին զինվորներից է... Վազգեն ջան, արցախցի իմ արվեստակից ընկերն է՝ տաղանդավոր նկարիչ եւ

առավել տաղանդավոր հայ Մովսես Մելիքյանը:

Վերջինս պատանու պես շիկնեց գովեստից:

– Չափը պահիր, Հենրիկ:

– Ես քեզ անչնի եմ սիրում, Մովսես ջան:

Վազգենն ու Մովսեսը իրար ձեռք սեղմեցին: Նորեկն անկեղծ հետաքրքրություն ցուցաբերեց արցախցի արվեստագետի նկատմամբ, մի քանի րոպե նստեց կողքին՝ հարցուփորձ անելով նրա գործերի եւ Արցախում տիրող իրավիճակի մասին: Ապա նայելով ժամացույցին՝ վեր կացավ:

– Կներեք, պարոն Մովսես, հիմա ձեզ հետ երկար զրուցելու հնարավորություն չունեմ, կարելուր հանդիպման եմ, պիտի երթամ... Առաջիկայում Ստեփանակերտ պիտի գամ, էստեղ ձեզ կհանդիպեմ եւ մի լավ ծանրութթեւ կանենք մեր հոգսերն ու անելիքները:

Սիսակյանը նկարիչներին ցտեսություն ասելով՝ արագաքայլ հեռացավ: Մովսեսը փոքր-ինչ երկար նայեց նրա ետեւից՝ այդ վայրկյաններին մեկեն հիշելով Քեռուն, ով անցած երկու ամիսներին այդպես հանկարծակի ու առեղծվածային ձեւով հայտնվում ու անհետանում էր: «Իսկ գուցե Սիսակյանը նույն Քեռին է... պարզապես նոր կերպարանքով»՝ անցավ Մովսեսի մտքով, բայց այդ մտածումն արագորեն վանեց ուղեղից՝ իրեն մեղադրելով ավելորդ-ֆանտաստիկ մտավարժանքների մեջ:

Հանրահավաքը սկսվեց: Մովսեսն ուշադիր լսում էր հռետորներին՝ մտովի գոհ մնալով նրանց լեզվի ճարտարության եւ իշխանության դեմ սրությամբ սեւեռվելու կարողությունից: Նրանք խոսում էին հայրենիքի փրկության, ազգապահ ուժերի համախմբման եւ դավաճաններին անարգանքի սյունին գամելու մասին: Ամեն ինչ տրամաբանական ու տեղին էր՝ Մովսեսի ընկալմամբ: Բայց շուտով սկսեց ձանձրանալ ու խոժոռվել՝ կանխազգալով, որ իրենց մտադրությունների մեջ անկեղծ ու պատրաստակամ այդ մարդիկ, չգիտակցված ձեւով, համախոհ ու ունկնդիր հսկայական բազմությանը

ենթարկում են հայեցողական դերակատարության՝ մի զանգվածա-  
յին հիպնոսի, որ կարող է բթացնել ամենայն գործնականություն:  
«Միթե պարզ ու ակնհայտ բաների մասին պետք է էսքան ճառել»՝  
հանրահավաքի կեսին մտախոհվեց Մովսեսը եւ ընկերներին հրա-  
ժեշտ տալով՝ շտապեց տուն: Նա տագնապով կանխատեսեց, որ  
այդօրինակ հանրահավաքները, պահանջված լինելով հանդերձ,  
կարող են խեղանդամել ազգի իրական ոգին եւ նրան դարձնել  
«անաշխատունակ»:

Տունդարձի դեռ սկզբին էր՝ հիշեց, որ Հենրիկը պիտի լրացուցիչ  
տեղեկություն հայտնեի արվեստակիցներից մեկի՝ Դերո Քոչինյանի  
վերաբերյալ, ում տղան անհետ կորել էր պատերազմում, Ջրականի  
սահմաններին, երբ առաջ էր շարժվել ծառայակիցների հետ՝ կար-  
ծելով, թե ամբողջ գումարտակն է անցել հակագրոհի: Հենրիկը  
հեռախոսով տեղեկությունը կիսատ էր թողել. «Հետո կասեմ ինչն  
ինչոց է... շատ տխուր պատմություն է»: Հանդիպման ժամանակ  
նա մոռացավ ամբողջացնել այդ պատմությունը, թե՛ չցանկացավ՝  
ավելորդ հոյգերից իրեն զերծ պահելու համար... Մովսեսը մի պահ  
երկմտեց, ապա արագորեն փոխեց ընթացքի ուղղությունը եւ աճա-  
պարեց Դերոյի արվեստանոց, որ «Ռոսիա» կինոթատրոնի մերձա-  
կայքում է. նախկինում նա մի երկու անգամ եղել էր այդտեղ, հիացել  
իրենից հինգ տարով մեծ արվեստակցի տաղանդով ու աշխատասի-  
րությամբ: Ճանապարհին մի շիշ օղի գնեց ու խնամքով տեղավորեց  
բաճկոնի տակ, եւ երբ բացում էր կիսանկուղային, բայց ընդարձակ  
տարածք զբաղեցնող արվեստանոցի դուռը, միանգամից զգաց, որ  
ոչ թե արվեստային սրահ, այլ սգո տուն է մտնում, ուր վշտին ու անո-  
րոշությանը գումարվել էին անկարգությունը, թափթփվածությունը եւ  
սպիրտի ու ծխախոտի միախառն ծանր հոտը: Դերոն պառկած էր  
իր սարքած մեծ ու հնաոճ թախտին, որի շուրջ դատարկ շշեր էին եւ  
երկու լեցուն մոխրաման: «Իրեն խմելուն ու ծխելուն է տվել... Խեղճ  
մարդ»՝ անցավ Մովսեսի մտքով: Չցանկացավ տուրք տալ նրա հար-  
բեցողությանը, բերած շիշն աննկատ դրեց պատին հենված մի խո-



շոր ու գունեղ կտավի ետեւում:

Դերոն դժվարությամբ նստեց եւ այդպես նստած էլ ողջագուրվեց իրեն վշտակցության խոսքեր մրմնջացող, հեռեկ արվեստակցի հետ:

– Շնորհակալ եմ, որ եկար... Մերոնցից շատերը մինչեւ հիմա աչքիս չեն երեւացել,– խոլ դառնությամբ ասաց նա: Ապա այցելուի խնդրանքով պատմեց իրեն բաժին հասած դժբախտության մասին:

Այն, ինչ լսեց Մովսեսը, դժվար վերապատմելի է. այնքան ավստասանք, զայրույթ, վիատություն, հիասթափություն ու տառապանք կար կատարվածի մեջ, որ, թվում էր, այդ ամենը չափազանց շատ է մարդկային մի հոգու կողմից դիմագրավելու համար: Սակայն, պարզվում է, հոգու զորությունը բավականաչափ մեծ է: Լսածից Մովսեսը հետո կնոջը պատմել է լոկ այն, որ Դերոյի կրտսեր որդու՝ Սեթի մարմինը գտել են պատերազմի ավարտից երեք շաբաթ անց, բայց այն գրեթե լիովին վառված ու անճանաչելի էր, ուստի դատագենետիկական փորձաքննության կարիք էր եղել, որ հաստատվի զոհվածի ինքնությունը: ԴՆԹ-ով նույնականացված մարմինը, սակայն, Դերոն եւ կինը իրենց որդունը չեն համարել, եւ հրաժարվում են հուղարկավորել հրամցվող մասունքները:

– Ինչո՞ւ,– ցնցված հարցրել է Գայանեն:

– Նրանք դեռ հույս ունեն, որ դա իրենց տղան չէ, փորձաքննությունը իբր սխալ է արվել... Կարծում են՝ նա դեռ ողջ է... սպասում են նրա հայտնությանը...

Երթուղային ավտոբուսում նստած՝ Մովսեսի աչքերը կրկին մշուշվեցին, այս անգամ ավելի երկար, եւ նա իջավ ոչ հարկավոր կանգառում: Ուրքով մոտ մեկ կիլոմետր ետ եկավ եւ դստեր բնակարան մտավ գերհոգնած, ավելի ստույգ՝ հիասթափված ու նեղսրտած: Նա փլվեց բազմոցին, ապա հավաքելով զինքը՝ թեւերի տակ առավ թոռնիկներին եւ սկսեց պատմել իր իսկ հանկարծաստեղծած հեքիաթը հավատարիմ ոգիների, չար զինյալների, կանաչախիտ ու հրաշագեղ երկրի եւ նրանց զարմանալի բնակիչների

մասին, որոնք չեն սիրում պարտվել, եւ արեւի լույսին ու ջերմութեանն արժանանալու համար նրանց միշտ պետք է գալիս մի նոր արարվածք:

– Էդ երկրի մարդիկ չար ոգիներից իրենց կարող են պաշտպանել նույնիսկ մի գեղեցիկ նկարով,– այդպես էր Մովսեսը եզրափակել իր հեքիաթասացությունը:

Հաջորդ օրվա առավոտյան նա մեկնեց Ստեփանակերտ: Կնոջն ու դստերը մխիթարեց, որ Նոր տարվա նախօրեին նորից կգա, հիմա պետք է շտապ վերադառնա անհետաձգելի գործերով: «Իսկ գուցե Նոր տարին հենց Ստեփանակերտում էլ դիմավորենք, հը՞...»՝ հարցն առկախ թողնելով, Մովսեսը դուրս էր եկել:

Օրվա երկրորդ կեսին արդեն հայրենի քաղաքում էր: Աճապարեց Տեր Միսաքի մոտ: Քահանայի հարցին, թե ինչ կա հայոց մայրաքաղաքում, Մովսեսն ասել էր.

– Տեր Հայր, էնտեղ մհիժ է, մհիժ... Ամեն ինչ դարձյալ էստեղ է վճովելու:

## Գլուխ 9

### ՈՒՆՏԻ ԱՐՁԱՆԻ ՇՈՂՔԸ

*Եվ ո՞վ կարող է ավանդել մեզ արդ  
Անցած օրերի փառքերը հպարտ...*

*Ջորջ Գորդոն Բայրոն*

Պատերազմի ավարտից հետո Ռուբեն Բագրատյանը՝ Քեռին, հայտնվեց իր կյանքի ամենախոր ողբերգության ճիրաններում. երկրի ռազմական պարտությունը մեծ վիհով բաժանել էր նրա ներկան անցյալից: Քեռու սրտից օրեր շարունակ արյուն էր կաթում, հոգին ճմլված ու տրորված էր, միտքը՝ պղտորված, թափոններով ու հեղեղումով խառնակված գետի պես: Մորմոքում ու պատեպատ էր զարկվում, խուլ ոռնում հանց վիրավոր ու վանդակված հովազ: Սկսեց վախենալ պարտադրված խաղաղ ներկայից. նրա հետ հաշտվելու, նրա մեջ ապրելու տրամադրություն ու եռանդ չէր գտնում, սակայն շուտով ըմբռնեց, որ ինքը չի կարող դառնալ նաեւ ետպատերազմյան ժամանակի պարտության մասնակիցն ու մեղավորներից մեկը, ուստի մեծ ճիգեր գործադրեց, որ մարդկանց ներկայանա հուսավառիչ ու լավին տրամադրող նախկին կերպարով: Բայց որքան դժվար էր դա տրվում նրան, որքան կորով էր պահանջվում նույնական կերպարը վերալիցքավորելու համար: Նա մերթընդմերթ ընկնում էր մտահափշտակությունների մեջ՝ ինչպես մղձավանջային երազում, կարծես պետք էր քիչ էլ դիմանալ, որ երազը ցնդի, եւ վերստին անցնի հին ու բարեհուստ կյանքին... Բայց սարսափազդու երազների կրկնության վերջը չէր երեւում, եւ Քեռին

եզրակացրեց, որ ինքը հոգեբանական ծանր ճգնաժամի մեջ է, եւ իրեն չէր խանգարի մասնագիտական խորհրդատվությունը: Այդ խորհելով՝ նա, սակայն, հակառակ մտատանջության մեջ ընկավ. «Միթե իրեն հենց դա է պակասում՝ էդ հոգեթերապիան, միթե իր կենսափորձն ունեցող մարդը իրավունք ունի էսպես խեղճանալու ներքին տվայտանքների մեջ... Դե, հավաքիր քեզ, Ռուբեն տղա»՝ մի հերթական անքուն գիշեր հրահանգեց իրեն եւ... քուն մտավ: Հաջորդ առավոտ իր համար վերջնականորեն արձանագրեց, որ հրաշքներ չեն լինելու, նախկին կյանքն ու իրականությունը հիմա դաժանորեն օտարված են իրենից, եւ հարկ է «վերաբեռնավորվել» նոր ժամանակների համար՝ պահպանելով բնատուր էությունը: Դա գրեթե նույնն է՝ ինչ նոր ծրագիր ստեղծելը հին համակարգչի համար, որի հնարավորությունները թեւ սահմանափակ են, բայց առաջնային գործառույթներն անխափան է կատարում:

Քեռին ըմբռնեց նաեւ, որ պետք է մի կարճ ժամանակով ետ շրջվել՝ անցյալից վերցնելու այն էականն ու թանկը, որ կարող են իրեն սատարել հետագա ժամանակներում, իսկ դրանք պատկերանում էին մթին ու ծանրագորշ գույներով: Ինքնապավինման ներուժը նրա համար կարող էր դառնալ այն անվնաս խթանիչը, որ հին մարտիկին եւ ներկայիս ընկճահար մարդուն դուրս կբերեր փոքրիշատե լուսավոր արահետ:

...Պապը Ռուբենիկին մի հեքիաթ էր պատմել դեպի լեռնային երկրամաս հեռացած իշխանի մասին: Հեքիաթն անջնջելիորեն տպավորվել էր տղայի հիշողության մեջ, իր լսած ու կարդացած պատմություններից ամենից շատ սիրում էր հենց դա, ասես այն տեղի էր ունեցել իր հետ, բայց մի ուրիշ կյանքում: Իսկ պապական հեքիաթն ասում էր, որ հին-հին դարերում մի հայ իշխան էր ապրում Մասսի արեւմտյան մատուցներում: Նա յոթ եղբայրներից կրտսերն էր՝ Աբով անունով: Մյուսների պես խիզախ ու նվիրյալ ազնվայր էր եւ շատ էր սիրում, երբ յոթ եղբայրներով որսի գնալուց հետո երեկոյան խնջույքի էին հավաքվում իրենց հայրական

կալվածքում, եւ հյուրասիրության էին կանչում մոտակա գյուղերի բոլոր քաջ տղամարդկանց: Եղբայրներն ուխտ ունեին կնքած՝ լինել հար միասին ու միաբան բոլոր դժվար ու խաղաղ ժամանակներում, եւ որպէս իրենց ուխտի վկայագիր՝ մարմարյա մի խոշոր սպիտակ բեկորի վրա արձանագրել էին «Եղբայրություն եւ միաբանություն. Ջորունիներ» բառերը եւ տեղադրել իրենց կալվածքներին հայող բարձր բլրի վրա: Արձանն ուխտատեղի դարձավ տեղաբնակների եւ մոտ ու հեռավոր վայրերի բնակիչների համար, այդտեղ էին իրենց ընկերական ու եղբայրական երդումն առնում ջահել համերկրացիները՝ իրենց ձեռքերը դնելով մարմարի մոզական գրության վրա: Սլացիկ քարը երեւում էր հեռուներից, նրա հայացքի ու օրհնության տակ էին Ջորունի եղբայրները եւ այլք հովիտներով սլանում տարբեր վայրեր՝ արքունական ու իշխանական հանձնառությամբ կամ էլ արշավում էին անձնական մղումներով՝ հեռավոր հորիզոնների կանչին ունկնդիր: Եղբայրներն ասում էին, եւ նրանց խոսքին շատերն էին հավատում, որ գիշերներն ուխտի արձանը շողարձակում է, օգնում, որ հեշտ կողմնորոշվեն վերադարձի ժամանակ, երբ մութը փռվում է իրենց ճանապարհին... Բայց վրա հասան պառակտման վշտալի ժամանակները. արքային դուր չէր գալիս եղբայրների միությունը, նրանց միասնական ուժից վախենում էր, ուստի սկսեց որոգայթներ լարել նրանց միասնության դաշտում: Մեկից հողակտորներ էր խլում, մյուսին նվիրում արքունական պաշտոն, երրորդին ամուսնացնում էր իր աղջկա հետ, իսկ ոմանց քամահրում էր, իրար նշավակող զրախոսություններ հորինում ու տարածում թագավորությունով մեկ: Եղբայրների միաբանությունը շուտով սասանվեց ու լուծարվեց, անգամ դեպք եղավ, երբ նրանց երկու միջնեկները միմյանց դեմ սուր հանեցին, բայց, բարեբախտաբար, վերջին պահին խելացի զինակիրները կանխեցին հրահրված մենամարտը: Կրտսեր եղբայր Աբովը անչափ վշտացավ հարազատ եղբայրների միջեւ ծագած գժտություններից, նա հասկանում էր, թե ով է դրանց նախածեռնողն ու խթանողը,

սակայն ուժը չէր զորում, որ դատաստան տեսնի իրենց եղբայրական միաբանությունը լլկող, նախանձոտ ու փոքրոգի արքայի հետ: Նա հաճախ էր գիշերները միայնակ բարձրանում ուխտի արձանի մոտ, հեկեկում եղբայրներին պարտադրված դժբախտության պատճառով եւ Աստծուց աղերսում, որ մի հնար շնորհի, որպեսզի իրենք վերստին միաբանվեն եւ երջանիկ ապրեն նախկինի պես: Բայց անցնում է ժամանակը, իսկ ցավագին կացությունը հաղթահարելու հնար ու միջոց գտնել չէր լինում, ընդհակառակը, եղբայրների միջեւ գոյացած ատելության խանդակներն ավելի էին խորանում: Եվ մի օր Աբովը վճռեց լքել հայրական կալվածքը. նա մի մեծ թափոր կազմեց՝ ձիերով, ջորիներով ու էշերով, եւ ընտանյոք, ազգակիցների ու բարեկամների մի մասի, ընկեր-զինակիցների, համակիրների ու նրանց հարազատների եւ այլ կողմնակիցների հետ, հատուկ պատրաստած սայլին բարձելով եղբայրական ուխտի հսկա արձանը, հեռացավ երկրի արեւելից կողմերում սփռված լեռնային շրջանները, ուր կուսական անտառներ ու աղբյուրներ շատ կային, եւ մարդ հազվադեպ էր մտնում այդ խորհրդավոր աշխարհը վախենալով, որ այնտեղի ոգիները իրենց մահով կպսակեն...

Պապի հեքիաթից Ռուբենը մինչ օրս այդքանն է հիշում. պատմությունը շարունակություն ուներ, բայց տղայի հիշողությունը կանգ էր առել «կուսական անտառների, լեռների ու աղբյուրների» վրա, եւ հետագա պատումը ոչ մի կերպ չէր վերականգնվում նրա մտապատկերում: Այդքանն էլ բավարար էր, որ խորհրդապաշտությամբ ու սիրով լցվեր Աբովի գտած նոր հայրենիքի հանդեպ եւ այն փնտրի երեւակայությամբ ու հավատամքով: Երբ մեծացավ, Ռուբենը հանգեց այն մտքին, որ խռովյալ իշխանի բնակեցրած նոր՝ կուսական երկրամասն Արցախն է, թեպետ դա ապացուցելու համար անվիճելի կռվաններ չուներ, չունի եւ մինչ օրս, միայն ոգու նմանությունն է նրան համոզմունք ներշնչում, որ Աբովի պես այրը կընտրեր հենց Արցախը. երկիր, որ երբեմն խռովում ու ինքնամփոփվում է աշխարհից: Երեւակայեց, որ ինքն իշխանի նորըն-

ծա ժառանգորդներից է, ով ճակատագրի բերմամբ լույս աշխարհ է եկել Արարատյան դաշտավայրում: Ու երբ արդեն հասուն այր էր եւ Արցախ էր մեկնում, նա մշտապես, մտքի մի ճառագայթով, փնտրում էր Աբովի հետքերը, իսկ ավելի շուտ՝ նրա բերած եւ ինչոր տեղ կանգնեցրած ուխտի վերծիգ արձանը: Նա հավատացած է, որ կ'այդ արձանը, եւ մի օր կհայտնաբերվի: Երբ իր հեքիաթային ակնկալիքի մասին պատերազմական մի հերթական անհանգիստ գիշեր պատմել է ապաստարանում, մանկավարժ Սիմոնն արձագանքել է.

– Թող խաղաղություն լինի, փոքրիկ արշավախմբով կուսումնասիրենք «զոր» արմատով տեղավայրերը... Կարծում եմ՝ էդ արձանը գտնելու ճիշտ ձեւը դա է:

– Էդ որ ամեն հեքիաթի ետեւից վազենք, ո՞ր կհասնենք, բալա ջան,– դժգոհ անդրադարձել է գնդապետ Վարդանյանը:

– Չէ՛, ուխտի արձանի շողքը մի օր տեսնելու ենք մեր ճանապարհին,– համոզված ասել է Քեռին:

Իսկ նախախնամությունն, իրոք, բարեհաճ է գտնվել Ռուբեն Բագրատյանի հանդեպ. նա ժառանգել է իր զարմի լավագույն գծերի թերեւս կարելու մասը՝ տոկուն է, բարեսիրտ, պրպտուն ու լավատես, հատկանիշներ, որոնցով նա փայլում է կյանքի այն հարթակներում, ուր ոտք է դնում եւ ձեռնարկում հերթական գործը: Բայց եւ անհանգիստ ու անհամբեր է, երկար «պեծի» չի տալիս որեւէ ասպարեզում, շարունակ փոխում է զբաղմունքի բնույթն ու ձեւերը, ասես փնտրելով միակ ցանկալին, որի մասին դեռեւս աղոտ պատկերացում ունի: Երեւանի պետական համալսարանի մեխանիկական մաթեմատիկայի ֆակուլտետի դիպլոմ է ստացել, ապա հետազոտական ինստիտուտներից մեկում կես տարի աշխատել մասնագիտությամբ: Հասկանալով, որ «իրենից գիտնական չի լինի», անցել է գործունեության «պարտիզանական» տարբերակին. մերթ պետական ծառայող էր, մերթ շինարարությունում բրիգադիր ու աշխղեկ, մերթ մետաղյա իրերի սեփական արտադրամասն

էր բանեցնում, մերթ մատակարար էր այլումինի գործարանում... Կարծես թե վերջ չէին լինելու տեղից տեղ թռչկոտումներին,– իսկական ազատ թռչուն էր, որ դեռ չէր գտել իր իսկական երկինքը: Բայց եկավ 1988-ի փետրվարը, եւ նա սթափվեց իրեն համակած «գոյութենական հիպնոսից»։ Կյանքը, երկիրն ու աշխարհը միանգամից երեւակվեցին այլ տեսք ու բովանդակությամբ: Սկիզբ էր առել Արցախյան ազատագրական շարժումը, որի մրրկաշունչ ավերախոսությանը նա տրվեց անձնվեր նավագի պես: Երեւանում տեղի ունեցած առաջին հանրահավաքին Ռուբենը, սակայն, մասնակցեց՝ ասես տոնախմբության, իսկ օրվա վերջում զգաց, որ ինքը հայտնվել է փոթորկի մեջ... Նրան, շատերի պես, թվում էր, որ եթե հրապարակում ավելի բարձր գոռա «Միացում», «Արցախը Հայաստան է» եւ այլ նմանօրինակ կարգախոսներ, ապա ազգային երազանքը կիրականանա, երբ խորհրդային կենտրոնական իշխանությունների եւ հարեւան թշնամի հանրապետության վարքագիծն արդեն հուշում էր, որ ազգային խնդիրները լուծելի չեն հանրահավաքներով, կարգախոսներով ու պատմաքաղաքական փաստարկումներով: Այնուհանդերձ, Ռուբենը դարձավ հանրահավաքային շարժման առաջամարտիկներից մեկը. ամեն կերպ աջակցում էր, որ հոծ բազմություններ հավաքվեն հրապարակներում, ցուցարարների անվտանգությունն էր ապահովում, ընկերների հետ կարգավորում էր տարատեսակ տեխնիկական հարցեր: Հաճախ էր բացակայում աշխատանքից, երբեմն՝ զրկվում ռոճիկից, բայց նրան այլեւս ետ քաշող ուժ չկար, ընդհակառակը, բոլոր կենսական ուժերը նրան դեպի հրապարակներն էին մղում: Հանրահավաքներից մեկում էլ ծանոթացավ խանդավառ մի էակի՝ հմայիչ ու անմիջական խառնվածքի տեր Թամարի հետ, ով երկու ամիս անց դարձավ իր կյանքի ընկերուհին: Նրանց պսակադրությունը կայացավ հենց հրապարակում, հերթական մեծ հանրահավաքի ժամանակ: Ռուբենի եւ Թամարի օրինակին հետեւեցին ուրիշ զույգեր, եւ մի պահ շատերին թվում էր, թե ցույցերն ու երթերն առավելս խթանում են



պասակադրությունները, քան ազգային միասնությունը:

Որքան էլ անտրամաբանական թվար, Բագրատյանը չդարձավ երեւելի ազգային-հասարակական գործիչ, գերադասեց մնալ «շարժիչի» համեստ օղակներից մեկը: Մինչդեռ բոլոր հանգամանքները նպաստավոր էին, որ նա հայտնվեր բեմերին եւ իր թավառնական ծայնով ու խելացի դատողություններով արժանանար հանրության գովասանքին ու ճանաչմանը. ներքին «արգելակը» նրան ետ էր պահում այդ գայթակղիչ հեռանկարից: Նա ընդհանրապես զերծ մնաց իր կեցվածքին ու գործունեությանն ավելորդ գույներ խառնելու մտքից. հրաժարվեց ընդգրկվել Շարժման կազմկոմիտեներում եւ ընդհատակյա գործող ազգային կուսակցական կառույցներում՝ մերժելով առաջնորդ ակտիվիստների հրավերներն ու առաջարկությունները: Նրանք ազնիվ ու հայրենաշունչ գաղափարներով էին համագործակցության կոչում, բայց խուսափում էր, ինքն էլ ստույգ չիմանալով ազատ ու անկախ գործելու նախապաշարումի բուն դրդապատճառները. արյո՞ւնն էր նրա այդ վարքագծի «կնքահայրը», ոգի՞ն, կենսափոփոքը, դաստիարակությունը, թե՛ մարդկային խառնվածքի անծանոթ մի հատկություն, որ, դեռեւս չգիտեր՝ իրեն պաշտպանելու, թե՛ փորձանքի է մատնելու... Երկրագործի ընտանիքում ծնված ու հասակ առած երիտասարդի ներաշխարհում գուցեւ հոգեբանական բարդույթներ էին առկա, բայց հիմա՝ տասնամյակներ անց, նա կարող է անվարան պնդել, որ ինքը զտարյուն ու լիարժեք է հենց նմանատիպ «բարդույթների» թրթիռներով, քանզի դրանք օգնում են հավատարիմ մնալ իր էությանը:

Ռուբեն Բագրատյանը 1992-ի հունվարին Արցախյան առաջին պատերազմ էր մեկնել կամավորական երեսուն հոգանոց ջոկատով, որ ի մարտ էր մղվում ռոմանտիկ պատկերացումներով ու հավատով: Իսկ ջոկատն առավելաբար ոգեպես էր զինված. նրա կազմում, իր առաջարկությամբ, ընդգրկվել էին այդ օրերի աշխատավայրի՝ բաշխիչ էլեկտրացանցի երիտասարդ մոնտաժողները եւ ուսանողական ու դպրոցական ընկերներ: «Ռուբենյան կամավոր-

րականները» շուտով միացել էին Բեկորի՝ Աշոտ Ղուլյանի վաշտին եւ, զոհերով ու վիրավորներով, ուսուսի կռվել արցախցի մարտիկների հետ մինչեւ 1993-ի դեկտեմբերը: Այդ ամիս Մարտակերտի մերձակայքում Ռուբենը սրունքներից ու ազդրերից բեկորային ծանր վիրավորում է ստացել եւ տեղափոխվել Երեւան՝ բուժվելու: Մինչ կապաքինվեր ու մարտադաշտ կվերադառնար, պատերազմն ավարտվեց՝ հաղթական ու ոգետորիչ արդյունքներով: Տխրեց, որ հազարավոր նահատակներ չվայելեցին մեծ գրկանքներով ձեռք բերած խաղաղությունը, որ չկային իր տասնյակ մարտական ընկերները, չկար անկրկնելի Բեկորը, որին սիրեց եղբոր պես, եւ որ չէր մասնակցել վերջին մարտերին: Ուրախ էր, որ, ի վերջո, անդորր է հայրենիքում, եւ ազգային միասնությանը կարծես թե ոչինչ այլեւս չի կարող սպառնալ:

Ռուբենն այդու ուներ կյանքի իր հիմնական օրենքը, որի առաջին հոդվածն է՝ միշտ գտնվել այնտեղ, որտեղ բախտորոշ դեպքեր են տեղի ունենում ժողովրդի ու հայրենիքի հետ: 2016-ի ապրիլի սկզբին եւս նա Արցախում էր, երբ չորս օր շարունակ կատաղի մարտեր էին ծավալվել հարավարեւելյան սահմանին, եւ մեծ վտանգ կար, որ կբռնկվի մեծամասշտաբ պատերազմ: Այն ժամանակ արագորեն հրադադար կնքվեց, եւ Ռուբենը մտովի խաղաղվեց՝ հայկական երկու հանրապետությունների զինական ու քաղաքական միացյալ ուժերը լիովին բավարար էին սանձելու թշնամու ոտնձգությունները: Երբ երկու շաբաթ անց տուն վերադարձավ, կինը՝ Թամարը, արդեն հոգեվարքի մեջ էր. երկար տարիներ այդ անկոտորում ու հուսատու կինը մաքառում էր սպիտակարյունության դեմ, բայց ավյունն արդեն սպառվել էր: Ռուբենը հասցրեց կնոջը պատմել, թե ինչ է տեսել Արցախում, պատերազմական քառօրյայի ընթացքում եւ հետագա օրերին, ոգեշնչեց սիրելի կողակցին եւ համոզիչ տոնով «իրագեկեց», որ հաջորդ կյանքում եւս կհանդիպեն մեծ հանրահավաքում, եւ իրենց անդրաշխարհային պսակադրությունը դարձյալ կկայանա հրապարակում: Ռուբենը, ով իր պա-

հանջով միայնակ էր հրաժեշտ տվել մահամերձ կնոջը, հետո երկու որդիներին ու դստերը պատմել է, որ «Թամար մայրիկը աչքերը փակել է ժպիտով ու հանգիստ հոգով»:

2020-ի սեպտեմբերի վերջին նա կրկին Արցախում էր: Սակայն արդեն վաթսունհինգին հարող եւ ֆիզիկապես ծանրացած տղամարդը չէր կարող կարելուր ծառայություն տանել վերսկսված ամեհի պատերազմում, ուստի մերժում էին առաջնագծի զորամասեր մտնելու առթիվ նրա դիմումները: Ապա ազատամարտիկի իր նախկին հարուստ փորձը վկայակոչելով՝ Բագրատյանն ուզում էր գոնե զինվորի տեղ գրավել այն ջոկատում, որ գլխավորում էր որդին՝ Տիգրանը... Բայց, հիշում ես, չէ՞, թանկագին ընթերցող, նա երեք օր անց «վտարվեց» ջոկատից որդու պահանջով. «Տուն գնա՛ թոռնիկներով զբաղվիր, թող մարդիկ չկարծեն, թե Տիգրանը հայրիկի բալա է»: Իսկ Ռուբենին հեռու չես քշի այն վայրից, ուր հայրենական ու ազգային հարցեր են վճռվում: Ուստի որդու ջոկատից հեռանալուց մի քանի օր անց նա անդամակցեց նորաստեղծ աշխարհագրին, ստացավ փափագած զենքը եւ ներգրավվեց պաշտպանական ծանր գործողություններում: Հերթապահում էին Շուշի տանող ճանապարհներին ու արահետներին, ռազմավարական առանձին դիրքերում երբեմն փոխարինում էին բանակային ստորաբաժանումներին: Բայց նրան զարմացնում, ապա զայրացնում էին զորային անկազմակերպ ու անհասկանալի տեղաշարժերը, թափթփվածությունը պաշտպանական միջոցառումներում: Նրան սկսեց թվալ, թե իրենք՝ աշխարհագրայինները, աջակցում են ոչ թե կանոնավոր ու մարտունակ բանակի, այլ անկազմակերպ ջոկատների, որոնք ավելի շատ դեգերող ուրվականներ էին հիշեցնում...

Վատ կանխազգացումը Ռուբենին հանգիստ չէր տալիս արդեն հոկտեմբերի կեսերից. նա իրեն անփույթ բեմադրված ներկայացման երկրորդական դերակատար էր զգում, թվում էր՝ ընդգրկված է մի մռայլ տեսիլախաղում, ուր բոլորն արյուն ու հոգի պիտի տան

անտեսանելի հրեշին: Բայց այդ մասին չէր բարձրաձայնում, տագնապները թաքցնում էր զինակիցներից եւ շարունակում ոգետրել նրանց, հույս ներշնչել, որ կկարողանան թշնամու հախիցը գալ: Մինչեւ զինադադարի օրն իր վարքագիծը չփոխեց, չփոխեց անգամ այն բանից հետո, երբ զինվորականների մեղքով, հոկտեմբերի վերջին հինգ աշխարհագորայիններով շրջափակման մեջ էին ընկել Սարգսաշեն գյուղի ստորին ձորակում. մոտ երկու օր այդտեղ ծպտված մնալուց հետո նրանց հաջողվել է դուրս պրծնել օղակումից: Զինակիցները՝ այդ տարեց ու խիզախ մարդիկ, խիստ էին զայրացել տեղանքը վերահսկող բանակային հրամանատարների վրա, անգամ ընդհարում էր սպասվում նրանց հետ, բայց Ռուբենը կանխեց գժտությունը համերաշխության հորդորներով: Սաստիկ տագնապում էր իրենց փշաքաղող սպառնալիքից՝ որ ռազմական անհաջողություններն ու ծախողումները հանկարծ կարող են ներքին հաշվեհարդարների հանգեցնել յուրայինների շարքերում: Նա շատ լեզու, միտք ու հոգի շռայլեց, որ նման միջադեպեր չլինեն: «Պատերազմից հետո ամեն ինչ կպարզենք»՝ իրեն ու այլոց հանգստացնում էր Ռուբենը: Եկավ մի պահ, եւ նա հասկացավ, որ ինքը կռվում է երկու ճակատով՝ բացահայտ թշնամու եւ ներքին հիասթափության ու զայրույթի դեմ՝ ի դեմս բազմաթիվ պատասխանատուների: Դա ծանր ու հոգեմաշ կռիվ էր, որի համեմատությամբ ֆիզիկական զրկանքները լիցքային վարժություն էին հիշեցնում:

Անագորույն քառասուն օր ապրեց պատերազմի ընթացքում, երբ ավյուն գրեթե չէր մնում ներաշխարհիդ մեջ տեղ հատկացնելու սիրո, մտերմության ու հարազատության ելելէջումներին: Այնուհանդերձ, Ռուբենը հնար ու ժամանակ էր գտնում գիշերները մեկ-մեկ այցելելու Սբ. Աստվածամոր Հովանի եկեղեցի եւ ապաստարանում զրուցելու իր նոր ծանոթների հետ, բայց առավելս տաճար էր գնում՝ առնչվելու Տեր Միսաքի եւ նկարիչ Մովսեսի հետ: Նա այդ մարդկանց մեջ ասես հայտնաբերել էր իր նմանակներին, նրանց հետ իրեն մի եռամիասնություն էր զգում, որի ակունքները կարկա-

չում են հեռավոր ու սրբազան անցյալներում: Հատկապես նրանց հետ էր Ռուբենն իրեն զգում լիարժեք անհատ, նրանց հետ էր կիսում պատերազմական տագնապները: Շրջափակումից դուրս գալուց հետո, նույն օրվա երեկոյան եկել, Տեր Միսաքին ու Մովսեսին ասել էր.

– Ինձ թվում է... Ինչ-որ սատանա է ընկել մեր ետեւից... Նա մեզ ջլատում է ներսից եւ ստիպում թշնամուն տալ իր ուզածը:

– Ինչ-որ ուժի ազդեցության տակ եք ձեզ զգում, Ռուբեն, – զգույշ հարցրել է քահանան:

– Ներսիս ձայնը ոռնում է... Դա նշանակում է, որ մեծ վտանգ կա մոտերքում: Ես էդպես եմ կռահում սատանայի ներկայությունը, – բացատրել է Բագրատյանը:

Մովսեսը զննուն նայել էր Քեռու դեմքին ու նշմարել, որ նրա երկարած մորուքի տակ մաշկը թրթռում է հուզումից, ընդհանրապես՝ նա գունատվել, կնճռոտվել ու նիհարել էր, կարծես նենգաբարո հիվանդություն է բնավորվել նրա մարմնում, – խճողված էր նրա կենդանի դիմանկարը, սակայն նկարիչն արտաքին նշանները մի այլ քննարկման հետաձգեց:

– Մեր պատերազմը կարծես թե ուզում են մեր ձեռքից խլել, – տազնապահար նկատել է նկարիչը եւ հարցրել. – Քեռի, ինչո՞ւ չես ուզում, որ մենք էլ աշխարհագորին միանանք, մի՞թե չենք կարող օգտակար լինել...

– Էստեղ դուք աստժո պես եք մեր մարդկանց համար, իսկ պատերազմում կլինեք թնդանոթի միս:

– Լավ, հիմա ասեք, թանկագին Ռուբեն, սա բոլորի՞ն պատերազմն է, թե՞ ոմանց, – անհանգստանում էր Տեր Միսաքը:

Բագրատյանը գլուխկախ խորհել է՝ ընտրելով ճիշտ բառեր դժվար պատասխանի համար:

– Երբ պառակտված ենք, համընդհանուր պատերազմ լինել չի կարող, – ի վերջո ասել է նա:

Չինադադարից անցել էր մեկ ամիս, սակայն Բագրատյանի

մոտ Երեւան վերադառնալու իրական մտադրություն չէր ձեւավորվում: Տիգրան որդին օրումեջ զանգում ու հարցնում էր, թե երբ է տուն դառնալու, «բոլորը կարոտել են իրեն, հատկապես՝ թոռնիկները»: Ռուբենն էլ դասը սերտած աշակերտի պես կրկնում էր, թե ուղարկված հերթական օգնությունն էլ ստանա ու բաշխի՝ նոր կվերադառնա: Այդ օգնությունները նրա իսկական տարերքն էին դարձել վերջին քսան տարիներին, բարեգործական հնարավորություններ նրան ուղղակի ընծայվում էին. Ռուբենը վաղուց, միանգամից մի քանի ընկերությունների համար, հաշվապահություն ու հաշվետարություն էր անում մաթեմատիկոսի իր որակավորումով, բանիմաց ու ազնիվ մասնագետին բարձր էին գնահատում, եւ արժանիորեն ընդառաջում նրա բարեսիրական ձեռնարկումներում: Չէ, նա սուրբ չէ, բայց լիովին վստահելի ու անշահախնդիր է, ինչը բազմիցս է ապացուցել, հակառակ դեպքում այդքան երկար տարիներ նա չէր պահպանի լավ բարերարի ու գործընկերոջ համբավը:

Դեռեւս ենթագիտակցորեն հասկանում էր, որ տունդարձի ձգձգումը կապ չունի իր կազմակերպած օգնությունների հետ, այդ գործը նույն հաջողությամբ կարող էր կյանքի կոչել նաեւ Երեւանից: Նա կռահում էր, որ սպասում է ներքին եղանակի պարզմանը, զգում էր, որ կենսական ինչ-որ գաղափար է հասունանում ներսում, ինչպես քարքարոտ հողն ընկած դիմացկուն սերմնահատիկ, որ, միեւնույն է՝ ծիլ է արձակելու, թեկուզե՛լ ուշացումով, թեկուզե՛լ նվաղուն ու դողդոջ: Այդ թեմայով որդու հետ չէր ուզում խորհրդակցել, նրան անհարկի ու վաղաժամ մտահոգություն չպատճառելու ցանկությամբ, թեպետ հստակ գիտեր, որ Տիգրանը երբեք խոչընդոտ չի լինելու իր ճանապարհին, իր ազնվական ժառանգն է՝ հարգելու է հոր ամեն մի քայլը, պաշտպանելու է իր վճիռները, եթե անգամ պահանջվի կրակի մեջ նետվել... Եվ, իրոք, եկել էր վճիռներ կայացնելու օրը...

Առավոտ էր: Նոր էր զարթնել հերթական խաթարված քնից: Ծխեց ու լվացվեց, ապա մտազբաղ զննեց աղքատիկ կացարա-

նը, որ ժամանակավորապես վարձել էր քաղաքի հին՝ «խրուշչովկա» շենքերից մեկում, պատերազմից հետո: Որոշել էր մեկ ամիս մնալ այդտեղ, հետո կմտածեր հաջորդիվ անելիքները: Մտաբերեց, որ լրացել է կացարանային մեկ ամիսը, եւ հիմա հարկ է կողմնորոշվելու: Սուրճ պատրաստեց, խմեց՝ նորից ծխելով ու խոհածելով: Պատուհանից նայեց դուրս. փողոցով մարդիկ էին անցնում կապոցներով ու մոայլ հայացքներով. հասկացավ՝ փախստականներ են: Թեեւ աշխույժ երթեւեկություն կար, զգաց, որ մարդիկ ու մեքենաներն առավելս միայնություն ու անորոշություն են ցուցանում, քան միասնական ու կանխատեսելի կյանք: Այդ զգացողությունից սարսուռ անցավ նրա մարմնով: Բայց վերգտավ ֆիզիկական ու հոգեկան արիությունը եւ... որոշեց մնալ Արցախում՝ մշտական բնակչի եւ համեստ քաղաքացու պես:

Դեկտեմբերի տասի այդ օրը նա վերածնվածի զգացումներով էր քայլում Ստեփանակերտի փողոցներում: Մտովի ներողություն էր հայցում քաղաքի ավերված շինություններից, վշտահար ու կարիքավոր մարդկանց իր զորակցությունն էր խոստանում, մուրացկաններին առատորեն ողորմություն էր բաշխում: Նա մի պահ երեւակայեց, որ առանց իրեն այս քաղաքն ու երկիրն ուշքի չեն գա, եւ ինքը ճակատագրական առաքելություն ունի այստեղ: Ազատամարտիկների պուրակում տեղավորվեց մի ազատ նստարանի եւ զանգեց որդուն:

- Տիգրան ջան, ես մնում եմ Ստեփանակերտում:
- Դեռ ինչքան ժամանակ կմնաս...
- Մինչեւ մեռնելս: Ուզում եմ էստեղ էլ թաղվել:
- Ինչ...
- Հա, չնեղանաս, ուզում եմ էստեղ մշտական բնակվել:
- Մշտական...
- Առանց ինձ էս երկիրն ավելի տխուր կլինի, որդի ջան...

Տիգրանը հասկացավ հոր միտքը, մի փոքր լռելուց հետո անջատել է հեռախոսը:

Ռուբենը իրար ետեւից մի քանի ծխախոտ վառեց. ծուխն ազա-  
հորեն կուլ էր տալիս եւ քուլաների հետ դուրս հանում ներսում կու-  
տակված հոռի զգացողությունների անտեսանելի փաթիլները: Մի  
փոքր թեթեւացավ, տեսողությունը հստակվեց. նա շուրջն էր նա-  
յում առաջին անգամ պուրակ այցելողի զարմանքով: Ուշ դարձրեց  
տարօրինակ ծառատեսակներին, որոնցով նախկինում հիանում էր  
այստեղ գտնվելով: Հետո հայացքն ուղղեց դիմացը բացվող ընդար-  
ձակ տեսարանին, ուր լեռներն ու հորիզոնը բանակցում էին մշուշի  
մեջ, եւ գոհունակորեն խոհածեց, որ մշտապես մնալով Ստեփա-  
նակերտում, ինքն այդպես՝ ակամա «ամուսնանում» է իր վշտահա-  
լած ու այրիացած երկրի հետ, որին չի կարելի մենակ թողնել աջ ու  
ախյակից ցցվող ճիվաղների ու խարդախների դեմ: Խորհեց եւ դեմ  
առավ նոր մտածումի՝ շատ ավելի երկրային ու զգայելի. «Իսկ եթե  
իրո՞ք ամուսնանամ... Լուսահոգի Թամարը դեմ չէր լինի... հավա-  
նություն կտար... նա ինձ լավ էր ճանաչում»: Ողջ մարմինն ակն-  
թարթորեն տաքությամբ բռնկվեց ու քրտնեց, դողի ալիք անցավ  
մաշկի տակով: Խուճապահար եղավ, պատանու պես խրտնեց ու  
սրսփաց վերահաս զգացումից. Երազիկը... Իսկապես երազային՝  
գեղանի ու աստղոտ կինը, զոհված մարտական ընկերոջ՝ Վանոյի  
այրին, ով իր ցավի ու կանացի մեծության մեջ սրբորեն կատարում  
է ընտանիքի մոր պարտքը. կրթել ու մեծացրել է երեք զավակնե-  
րին ու հիմա մենակ է տանը: Երկու որդիներն իրենց ընտանիք-  
ներով առանձին են ապրում, իսկ աղջիկն ամուսնացել ու տեղա-  
փոխվել է Մարտունի, ուր ամուսինը զինվորական ծառայության է:  
Որդիները մորն առաջարկում են՝ իրենց հետ ապրել նոր ու ընդար-  
ձակ բնակարանում, բայց Երազիկն իրեն լավ է զգում հին տանը,  
եւ մերժում է նրանց խնդրանքը:

Ռուբենը հաճախ էր Վանոյի ընտանիքին օգնության ձեռք մեկ-  
նում՝ նահատակված մյուս ընկերների ընտանիքներին համահավա-  
սար, չակնկալելով երախտագիտական ոչ մի խոսք. առանց այն էլ  
նրա օգնությունը ստացած բոլոր տուժյալները գրեթե սրբացնում



էին նրան, ընդունում եղբոր, հոր կամ Քեռու տեղ: Ռուբենը բոլորին նայում էր նույն հոգատար աչքով: Բայց, ինչպես միշտ, յուրայինների ու հարազատների մեջ լինում է ամենասիրելին, նրա համար դա Երազիկն է՝ ոչ միայն իր կանացի հմայքի, մայրական վեհության ու բարոյական գեղեցկության համար, այլև, որ իր ճանաչած այրիների մեջ ամենատոկունն ու ամենաողջամիտն է. երբեմն տրտունջ չէր լսել նրա շուրթերից, Երազիկը երբեք չի չարացել իրեն բաժին հասած կյանքից: Գուցե, որ Վանոյին սիրել է ամբողջ հոգով, գուցե՝ այդ սերը բավարար է եղել, որ նա անայլայլ անցնի իր տառապալից ուղին... Ռուբենը լավ գիտի, թե որքան դժվար է համակրելի ու առաքինի այրի կնոջ համար մաքուր ապրելը երկդիմի ու այլասերվող միջավայրում: Իսկ գուցե ինքն իրավունք ունի մոտենալ նրան եւ առաջարկել այն ամենաթանկը, որ ունի հիմա՝ իր էությունը, հավատարմությունը, կենսասիրությունն ու տոհմասիրությունը, հավատը, իր հեքիաթը ուխտի արձանի մասին...

Ռուբենը երկու օր խփնվածի պես պտտվեց քաղաքում, նոր միտքը նրան գերել էր խենթանալու չափ, սակայն ձգտում էր մնալ ողջամտության սահմաններում, կամենում էր վերջնական վճռին հանգել հավասարակշիռ հոգեվիճակում, ուստի ներքին հանդարտություն ձեռք բերելու ցանկությամբ երկար քայլում էր իր կացարանից ու տաճարից հեռու գտնվող փողոցներում. այդպես ավելի դյուրին էր պարզելու իր մեջ հասունացող զգացման ու գաղափարի կշիռն ու ուժը: Կարող էր Երազիկին հանդիպել տաճարում, ուր նա հաճախ է լինում՝ օգնելու Տեր Միսաքի նախածեռնած բարեգործությունների բաշխմանը: Նույնիսկ տուն կարող էր գնալ միանգամից, Երազիկն ամենայն հարգանքով իրեն կրնդուներ ընտանեկան հարկի տակ եւ կխոսեր նրա հետ իր «խելառ» գաղափարի մասին: Կարող էր անգամ գնալ նրա որդիների մոտ եւ խոստովանել մտքինը. նրանք նույնպես Ռուբենին սիրում ու մեծարում են, եւ դժվարություն չէր լինի՝ նրան ընդունել որպես երկրորդ հոր, որի հանդեպ վերաբերմունքն առանց նոր կարգավիճակի էլ հայրակա-

նի պես է: Բայց հախտուն վերեւ ելած երազանքի մարմնավորումը Ռուբենը սկսեց ավելի հեռվից. ներքին ծայնը հուշեց, որ ինքը, նախեսառաջ, ոչ թե «շահառուի» հավանության ու պաշտպանության կարիք ունի, այլ՝ հոգեւոր-բարոյական հենարանի:

Դեկտեմբերի 13-ի առավոտյան նա աճապարեց Սբ. Աստվածամոր Հովանի տաճար՝ հանդիպելու Տեր Միսաքի հետ: Քահանան պատրաստվում էր ժամերգության:

– Տեր Միսաք, նախապես հազար ներողություն եմ խնդրում, եթե իմ միտքը ձեզ դուր չգա, եւ հավանություն չտաք մտադրություններիս... Թողություն կտաք իմ էդ մեղքին էլ,– ողջագուրվելուց հետո արագորեն բուն նյութին է դարձել Քեռին:

– Ինչ է պատահել, Ռուբեն եղբայր,– տագնապեց Տեր Միսաքը:

Բագրատյանը մեղավոր երեխայի պես բռնեց քահանայի ձեռքը եւ կամաց, որ եկեղեցու պատերն անգամ չլսեն, ասաց.

– Ուզում եմ մշտական բնակվել Ստեփանակերտում եւ... ամուսնանալ Երազիկի հետ... Հո մեծ մեղք գործած չեմ լինի...

Ասես արեւ շողաց քահանայի դեմքին:

– Մեղք... չէ, ինչ մեղք, Ռուբեն եղբայր, լրիվ հակառակը: Ինչ ուրախալի լուր բերիր մեզ, եղբայր,– ասաց ու նորից գրկախառնվեց:

– Իրո՞ք...

– Իհարկե: Արցախում վերաբնակվել եւ ամուսնանալ՝ համարիւր սրբագործություն է, օրինյալ արարք, հատկապես... նման տառապանքով ձեռք բերածը... Դու եւ Երազիկն արժանի եք նոր երջանկության... մեր քաղաքում: Վստահ եմ՝ դուք իրար կերջանկացնեք: Արդեն խոսել ես հետը...

– Չէ, Տեր Հայր, սկզբից ուզում էի ձեր կարծիքն իմանալ: Նույնիսկ չգիտեմ՝ կհամաձայնի...

– Հըմ...– մտածմունքի մեջ ընկավ քահանան:– Էնպես պիտի անենք, որ նա չհրաժարվի էդ պայծառ գաղափարից:

– Ո՞նց...

– Դեռ չգիտեմ: Ինչպես մեր ընկեր Մովսեսն է ասում՝ պետք է նախաձեռնությունը վերցնենք մեր ձեռքը... Լավ, հիմա ես գնամ ժամերգության, իսկ դու մինչեւ մեր ընդհանուր եզրակացության գալը... թաքուն սիրահար տղայի պես փորձիր շփվել Երազիկի հետ:

– Եղավ, Տեր Հայր,– պարտաճանաչ սանի պես արձագանքեց Քեռին:

Նա միառժամանակ ունկնդրեց ժամերգությունը, ապա ելավ դուրս: Սառնաշունչ օր էր: Շրջապատի փողոցային աղմուկը խլացված էր հասնում նրա լսողությանը: Սկսեց տենդագին ծխել, ինչը նշանակում էր, որ դարձյալ սեւեռուն մտածմունքի մեջ է: Նաեւ՝ շփոթահար է: Եկեղեցու շուրջ երկար ետ ու առաջ անելուց հետո որոշեց գնալ Մովսեսի մոտ: Նույն պահին ժամերգությունն ավարտվեց եւ ներկաները անաղմուկ լցվեցին բակ: Նրանց մեջ էր Երազիկը, որ կարգապահ հավատացյալ չէր, սակայն մեկ-մեկ կարիք էր ունենում լսելու Տեր Միսաքի քարոզներն ու կանանց երգչախմբի հոգեպարար երգեցողությունը: Երազիկն առաջինը նկատեց Ռուբենին եւ ժպտերես մոտեցավ նրան:

– Լավ է, որ հանդիպեցի ձեզ, Ռուբեն եղբայր. էգուց չէ մյուս օրը թոռնիկիս ծնունդն է, Մանվելի աղջկա: Կգաք, հրավիրում ենք, երեկոյան յոթին: Չեք մոռանա, չէ՛...

– Չէ, չէ, ինչ ես ասում, Երազիկ քոյրիկ, անպայման կգամ,– ապա կատակի տվեց.– հիմիկվանից սկսում եմ թոռնիկիդ ծննդյան օրվա հանդեսը:

Երազիկը ծիծաղեց:

– Դե, լավ, ցտեսություն: Մինչ հանդիպում Մանվելենց տանը:

– Ցտեսություն, Երազիկ ջան:

Ռուբենը երկար նայեց հեռացող այրուն, որ իրեն այնքան մոտ եւ միառժամանակ այնքան հեռու է ներկայանում: Նա իրենից փոքր է մոտ տասը տարով, եւ առ օրս իր հետ խոսում է դուք-ով: Հարազատների պես են, առավելա՛ եղբոր ու քրոջ հարաբերութե-

յամբ. Ինչպէս պետք է այդ «տաք սառույցը» ջարդել եւ վերափոխել նոր փոխհարաբերությունների... Այդ պահին դա Քեռուն դժվարութեի հարց էր թվում:

Տաք ու սառն մտածումներով Ռուբենը հասավ Մովսեսի արվեստանոց: Նկարիչը հյուրին ուրախությամբ ընդունեց: Թեեւ պարպամունքի էր սանուհիների հետ, նրան թեւանցուկ՝ առանձնացավ հյուրաանկյունում եւ սկսեց հարցուփորձել նրա որպիսությունից ու առօրյայից: Որպեսզի շատ ժամանակ չխլի ընկերոջից, Քեռին հակիրճ պատմեց իր մտադրությունների մասին:

– Արդեն եղել եմ Տեր Միսաքի մոտ, քո կարծիքն ու խորհուրդը նույնպես շատ կարելուք են ինձ համար, Մովսես ջան,– լիովին անկեղծացավ նա:

Նկարիչը լայնաժպիտ գրկեց ընկերոջը.

– Եղբայր Քեռի, պիտի ասեմ՝ հանճարեղ ես մտածել: Ես քեզ թեւ ու թիկունք կլինեմ, դու միայն էդպիսի հոյակապ նպատակներ դիր քո առջեւ: Կարող ես մինչեւ նոր տուն գտնելը բնակվել ինձ մոտ, էս պահին ես մենակ եմ, ուրախ կլինեմ քո ընկերակցությունից:

– Շնորհակալ եմ, եղբայրս, տեսնենք...

– Ինչ վերաբերում է ամուսնությանը... ասեմ՝ ընտիր զույգ կլինեք Երազիկի հետ: Նա հրաշալի կին ու մարդ-արարած է, քո անմիջական հովանու տակ իրեն շատ լավ կզգա:

Պայծառ ժպիտ խաղաց Քեռու դեմքին: Մովսեսն առաջարկեց գործել սրընթաց ու անակնկալ, որ «հակառակորդը» ուշքի գալու ժամանակ ու հնար չունենա:

– Ո՞նց,– անօգնական հարցրեց Քեռին:

Նկարիչը մի փոքր խորհելուց հետո պարզեց միտքը.

– Հենց էսօր երեկոյան կգնանք Երազիկեցն տուն եւ կխնդրես նրա ձեռքը, մենք տեղնուտեղը հավանություն կտանք: Կընդունի առաջարկությունդ, նահանջելու տեղ չի ունենա: Մեր ներկայությունը նրան վստահություն կներշնչի:

- Հւ...

- Կանխագագումն քո գաղափարի օգտին է խոսում: Դե, ինչ, համաձայն ես...

- Համաձայն եմ,- արձագանքեց Քեդին՝ մտածելով, որ կյանքը ստիպում է երբեմն գնալ նաեւ այս կարգի արկածախնդրության: Եթե անգամ այն տապալվի, իրեն նսեմացած չի զգա՝ անում է սրտից բխած քայլ:

Մովսեսը զանգեց քահանային: Ողջույնից հետո իսկույն անցավ բուն նյութին:

- Տեր Միսաք, սկսում ենք «Քեդի եւ Երագիկ» օպերացիան... Պատրաստ եղիր, երեկոյան կողմ կգանք քո ետեւից... Առայժմ,- ապա դարձավ Ռուբենին:- Հիմա կարող ես գնալ ու քեզ կարգի բերել ջահել փեսացուի պես: Հա, էդ զինվորական հագուստով չգաս, սիրուն կոստյում կհագնես... հետդ բերել ես...

- Հա, բայց կգնամ ու նորը կգնեմ... խնամախոսական կոստյում:

- Հւ... խնամախոսություն... հարսնախոսություն... Գիտես՝ մերոնք խնամախոսությանը նաեւ «հա ու չէ» են ասում՝ ավելի պարզ ու կոնկրետ. այսինքն՝ գնում են հարսին ու ծնողներին հարցնում՝ եկել ենք ձեր աղջիկը ուզելու, համաձայն եք. նրանք ասում են՝ հա կամ չէ... Դե, սովորաբար նախապես պայմանավորված են լինում երկու կողմերը, ուստի էդ արարողությանը կատակով նաեւ «հա-ի գնալ» են ասում:

- Հւ...- պատկերացրեց Քեդին:

Մովսեսը եւս պատկերացրեց, եւ երկուսով սրտանց ծիծաղեցին:

- Դե, ես գնամ պատրաստվեմ,- ծիծաղի արցունքներն աչքերից մաքրելով՝ ասաց Քեդին:

- Հա, չմոռանամ. մեզ հետ կտանենք գինի եւ ժենգյալով հաց:

- Ծաղկեփունջ պետք չէ...

Մովսեսը միառպահ խորհեց:

- Ծաղկեփնջեր հետո կտաս, հիմա իմ ներքին ձայնն ասում է,

որ էսօր ձեռնպահ մնանք քնարական ատրիբուտներից: Բայց,– դարձյալ կարճատեւ մտածմունքի մեջ ընկաւ,– ես, համենայն դեպս, մի նվեր կպատրաստեմ... Երագիկի գծանկարը կանեմ, իսկ դու կնվիրես նրան ու կասես, որ ինքդ ես պատվիրել:

– Շատ լավ: Բայց հիշողությամբ հաջողելու ես նրա դիմանկարը...

– Հւ: Երագիկը հիշարժան դեմք ունի. նա կամ իմ մտապատկերում:

– Հւ...

– Հւ... Դե, խանդիր, ընկեր:

Երկուսով լիաթոք ծիծաղեցին:

Երեկոյան ժամը յոթին Տեր Միսաքը, Մովսեսը եւ Քեռին, դիմանկարն առած եւ գինու ու ժենգյալով հացի տոպրակով՝ կանգնել էին Երագիկի բնակարանի շէմին: Տանտիրուհին ապշած էր թանկագին հյուրերի անակնկալ այցից: Ուրախ ու շփոթահար՝ նրանց ներս հրավիրեց, ակամա ուշք դարձնելով Քեռու արտաքինին, որ հարդարված մազերով՝ ջահելավարի շողում էր մոխրագույն նոր կոստյումի մեջ:

Թե ինչպես անցավ հարսնախոսությունը, ճշտորեն հնարավոր չէ պատմել, քանի որ այն, ըստ ներկաների, նման է եղել բազմիմաստ ու տարաշերտ դեպքի, եւ հավաքույթի մասնակիցներից յուրաքանչյուրն ստացել էր իր տեսլականն ու եզրակացությունը: Տեր Միսաքը տունդարձի ճանապարհին համոզված հայտարարել էր, որ Քեռին ու Երագիկը շուտով միավորվելու են եւ ապրելու Ստեփանակերտի... թե որ փողոցում ու բնակարանում, այստեղ նա կախման կետեր էր դրել: Երագիկը պնդել էր՝ անկախ նրանից, թե ինչպես կդասավորվի իր հետագա կյանքը, երկսենյականոց հին բնակարանը չի լքելու, քանի որ դա նահատակ ամուսնու՝ Վանոյի, դժվարությամբ ձեռք բերած տունն է, եւ իրենք այդտեղ յոթ հրաշալի տարիներ են անցկացրել: Ռուբենը մտածում էր, թե այնտեղ բնակվելով՝ որքան կկորցնի իր տղամարդկային արժանապատվությունից, արդյո՞ք տնփեսայի կարգավիճակը շատ չի նեղելու

իրեն... Բայց եւ խորհում էր, որ իր զգացումներն այս հողի ու կնոջ հանդեպ այնքան խորն են, որ իր համար դժվարություն չի լինելու հաղթահարել կենցաղային հոգեբանության բոլոր խութերը:

– Հարսնախոսությունը կունենա շարունակություն եւ կավարտվի երկու կողմերի «հա»-ով,– ասել է Մովսեսը հաջորդ օրն իրեն այցելած Քեռուն: Սակայն այդ հեռանկարը չի ոգետրել փեսացուին, քիչ մտորելուց հետո նա անսպասելի խոստովանել է.

– Իսկ գուցե ուրիշ կի՞ն գտնեմ... ով ավելի ազատ ու անկաշկանդ կլինի: Գիտե՞ս, Մովսես եղբայր, հայ տղամարդու հոգով եմ ասում՝ ես Երազիկենց տանը բնակվելով՝ պիտի մշտապես գտնվեմ Վանոյի ուրվականի կողքին, այն միշտ ներկա է իր հարկի տակ, ես համոզված եմ դրանում: Եվ հետո՝ չարժե Երազիկի առաքինի կերպարը աղարտել իմ ամուսնությամբ, որքան էլ էդ ամուսնությունն ազնիվ ու մաքուր ատաղձով լինի:

Մովսեսը երկար ու մտախոհ նայել է Քեռուն, ապա հանգիստ ասել.

– Ուրեմն՝ ուրիշ կին... Թող լինի ուրիշ կին՝ ավելի ազատ ու անկաշկանդ:

– Հա՛,– առույգ արծազանքել է Քեռին:

Եվ ծիծաղել են տղամարդկային անխառն ուրախությամբ:

Բայց Մովսեսն ուներ ծիծաղելու այլ պատճառ եւս՝ ծնողական մի պատմություն, որ մտաբերեց այդ պահին եւ Քեռուն պատմեց զվարճալի բոլոր մանրամասներով, ասես որդիական հարգանքն ու բարեսրտությունը նրան ստիպում էին այդպես՝ նորովի թարմացնել ծնողների հիշատակը:

– Հերս դոչաղ մարդ էր,– խնդմնդալով ու հպարտորեն վերհիշել էր նկարիչը:– Արդեն յոթանասունութ տարեկան էր, բայց եռանդուն ու կրակոտ տղամարդու պես էր իրեն զգում: Մերս նրանից փոքր էր հինգ տարով, բայց ժամանակից շուտ էր ծերացել, վաղաժամ թառամել էր խեղճ մերս արեւի տակ ընկած վարդի պես... Թեպետ հերս ամեն ինչ անում էր, որ նա էլ իրեն ջահել ու կրակոտ զգար: Բայց բնությունն այլ մատերիա էր նախատեսել մորս համար: Մի օր

նա զանգել ու լացակումած խնդրել է, որ այցի գնամ... Ծնողներս ճարտար գյուղում էին ապրում, ես հաճախ էի գնում նրանց տեսակցության, նրանք էդ առումով ինձ միշտ գոհություն էին հայտնում... Մորս զանգը ինձ անհանգստացրեց, չէ՛, վախեցրեց. չլինի՞ վատ բան է պատահել... Ընկերոջս անմիջապես զանգեցի, ես նա իր մեքենայով մի ժամից ինձ գյուղ հասցրեց: Թե ինչ պատմեց մերս՝ խնդա ու խնդա... Ասաց՝ հերդ օր ու արեւ չի տալիս ինձ, «գյուղում չըմ, թա էդ կինձահարըն հինչ ա օգում էս չորացած ջանաս»: Միանգամից հասկացա՝ բանն ինչումն է:– Այստեղ Մովսեսը Քեռուն պարզաբանեց ծնողների ամուսնական հարաբերությունների որոշ նրբություններ եւ շարունակեց:– Խոսեցի հորս հետ, խնդրեցի, որ մամային հանգիստ թողնի, արդեն ժամանակն է: «Հինչին ժամանակն ա,– հերսոտեց հերս,– ես պինդ տղամարդ ըմ, ես կընգա նըհետ հալամ էրկան պիտի ինիմ»: Հերս խռոված դուրս եկավ տնից ու վերադարձավ երեկոյան: Էդ ընթացքում զանգեցի Մարտունիում բնակվող փոքր եղբորս, նա էլ շտապ եկավ, եւ խելքիտելքի տվինք, թե ինչպես օգնենք մեր ծնողներին... Մի քանի տարբերակներ քննարկելուց հետո որոշեցինք... կին գտնել մեր հոր համար... «ձախ» կին, որի հետ հերս կկարողանար իր սեռական կարիքները հոգալ... տնից-տեղից հեռու: Մեր միջավայրում դա դժվար խնդիր էր, բայց ոչ անլուծելի:– Հետո Մովսեսը զավեշտախառն դրվագներով պատմեց, թե ինչպես փոքր եղբոր հետ ընկել էին հարեան գյուղերը եւ կին փնտրել իրենց դոչաղ հոր համար:– Էդ կնոջը ի վերջո գտանք մոտիկ մի գյուղում. որբեւայրի, միայնակ կին էր, կարմրաթուշիկ ու աչքաբաց. չգիտեմ՝ նա հիմա ի՞նչ է, թե՛ ոչ... Խոսեցինք հետը ու պայմանավորվեցինք: Դե, մենք նրան փող խոստացանք... ամսականով, բայց երեք ամիս անց էլ փող չվերցրեց, պարզաբանեց, որ հորս հետ արդեն սրտանց է կապված... Հերս երկու-երեք օրը մեկ ձիով գնում էր իր սիրուհուն այցի եւ գոհ վերադառնում... Մինչեւ մեռնելը գնում-գալիս էր, էդպես՝ հինգ տարի:

– Մերդ գիտե՞ր էդ մասին,– հետաքրքրվեց Քեռին:



– Հա, ես ու եղբայրս նրան մեր «հանցավոր ձեռնարկի» մասին տեղեկացրինք հենց ամենասկզբում, նաեւ խնդրեցինք, որ մեր հոր հետ չկռվի էդ հաշվով: Մերս մտածել-մտածել ու ասել էր. «Էհ, մին ա, նա ինձ ա սիրում»: Ծնողներս նույն տարում մահացան:

– Աստված նրանց հոգին լուսավորի, սիրով միացել են, սիրով էլ գնացել,– եզրակացրեց Քեռին:– Երեւի ամենատուժյալը հորդ սիրուիին էր... նա երկրորդ անգամ է որբեւայրի դարձել:

– Հա,– մեղավոր տոնով արձագանքեց Մովսեսը, եւ երկուսով դարձյալ խնդմնդացին:– Էնպես որ, Քեռի եղբայր, ես կին գտնելու որոշ փորձառություն ունեմ, դարդ մի անի, կգտնենք:

Գիշերը Քեռին ցուրտ կացարանի անկողնում երկար շուռումուռ եկավ քուն մտնելուց առաջ: Նա արդեն տեսնում էր իր ապագան Ստեփանակերտում... եւ խոր հուզմունք ապրում գալիք պատկերներից: Սակայն զգում էր, որ պակասող գծեր ու ֆիգուրներ կան վաղվա պաստառին... Ինչ գծեր, ինչ ֆիգուրներ... Արդեն կեսգիշեր էր, դարձյալ ծխախոտ վառեց եւ նստեց անկողնում: Ծխեց ու զանգեց Ռուսաստանում բնակություն հաստատած երեք հին ընկերներին, տեղեկացրեց իր ծրագրերի մասին:

– Դուք էլ եկեք... դուք էդտեղ կորած եք... էստեղ կգտնեք ձեզ,– հորդորեց նրանց:

Երկուսը՝ Դերոն ու Վաչեն, ուրախացան Ռուբենի առաջարկությունից, պատասխանեցին, որ շուտով իրենց կանանց հետ կլինեն Ստեփանակերտում, թող իրենց համար բնակարան վարձի: Իսկ երրորդը՝ Մանուկը, ծանրումեծ պատասխանել էր.

– Ես էդտեղ հերոսանալու բան չունեմ,– եւ խորհուրդ է տվել Ռուբենին՝ չտրվել ռոմանտիկայի:

Ռուբենն առանց բարի գիշեր մաղթելու «ռուսաստանացած» ընկերոջը, անջատել է հեռախոսն ու ինքնիրեն ասել.

– Ի՞նչ ռոմանտիկա... Այսուհետ պիտի ապրենք մեր իսկական կյանքով:

Որոշեց վաղը զանգել նաեւ Երեւանի ընկերներին:

## Գլուխ 10

### ՔՈ ԱՐՅԱՆ ԵՐԿԻՐԸ

*Երանի քեզ, երկիր, երբ քո թագավորն  
ազնվազարմ է, եւ քո իշխանները ժամանակին են  
ուտում՝ ուժի եւ ոչ թե գինովության համար:*

*Գիրք Ժողովողի, 10*

Պատմության թռչակառու ուսուցիչ Սիմոն Վարազյանը կրքոտ սեր ունի իր մասնագիտության հանդեպ: Նա հախտուն ուսումնասիրություններ է կատարում վաղ երիտասարդության տարիներից ի վեր, բայց գիտական լայն ասպարեզ մտնելու նպատակ երբեւէ չի հետապնդել: Նրա գլխավոր հետաքրքրությունն իր ժողովրդի ու երկրի պատմությունն է, հատկապես այն անհատներն ու ժամանակաշրջանները, որոնցից բխել են ճակատագրական ու բեկումնային իրադարձություններ, որոնք, սակայն, առ օրս ներկայացվում են կցկտուր փաստագրությամբ եւ թռուցիկ ու մակերեսային մեկնություններով: Նա արագ է եզրահանգել, որ «յուրյանց կենսագրությունը» առավելս մթին է, քան՝ լուսաբանված, եւ այդ իրողությունը կամայականության ու կարճամտության հետեւանք է համարում: Ինքնուրույն սովորել է պարսկերեն ու, որոշ չափով, արաբերեն, եւ լեզվափմացության պաշարով կարողանում է պեղել ու հայտնաբերել նոր տեղեկություններ, դրանք մեկնել իր նախընտրած տեսության լույսի ներքո: Թեպետ մեկ-մեկ հողվածներ էր հրապարակում տարբեր պարբերականներում, գերազանցապես մնում էր որպես ինքնաբավ փաստահավաք-կուտակիչ՝ ազգային ու

անհատական վարքի, բնույթի ու տեսակի, ծագումնաբանության ու կապերի վերաբերյալ ժողոված տարատեսակ արձանագրումներով: Նրա թղթապանակները տարեցտարի ավելանում են, կարեւոր ու հետաքրքրաշարժ բացահայտումների մասին պատմում է գործընկերներին ու մտերիմներին, այնուհանդերձ, շատ շատերին դեռեւս անհայտ է մնում այն հսկայական տեղեկույթը, որ խնամքով ամփոփվում է ժրաջան ուսուցչի եւ ուսումնասիրողի ձեռամբ: Իսկ Սիմոն Վարագյանի հավաքագրած նյութերն ուշագրավ ու հրատապ են հենց իրենց «սուբյեկտիվիզմով», խնդիրը նրա պատմագիտական կրեդոյի մեջ է. մանկավարժ-պատմագետը, նախկին ու ներկա բազմաթիվ հետազոտողների պես, կիսում է այն համոզմունքը, որ պատմության թափանիվն առաջ են շարժում անհատները եւ ոչ թե զանգվածները, «սրանք անհատների ետեւից գնացողներ են, որոնց կարելի է մոլորեցնելով անդունդ գլորել»: Նա առաջ է տանում իր փորձարարական-անհատապաշտական պատմագիտությունը՝ հավակնություն չունենալով այն դարձնել ճանաչելի ու գնահատելի: Վարագյանի տեսաբանությամբ՝ անհատը գործում է ազգային-քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ կրոնամշակութային խթանիչների ուժականությամբ, որոնցից յուրաքանչյուրը փոփոխական առաջնահերթություն է ձեռք բերում՝ համաձայն իրավիճակի ու շահախնդրության: Նա ինքնամոռաց կենտրոնացել է անհատի կարեւորագույն հատկանիշներից մեկի՝ ազգային պատկանելության վրա՝ լիակատար համոզված, որ մարդու ցեղային արյունը մեծապես կանխորոշում է նրա վարքն ու կենսագրությունը: Գիտի, որ ինքը հայտնագործություն չի անում, անձի գենետիկ արյունաբանությունը վաղուց մարդկության ու գիտության ուշադրության կենտրոնում է, իր նոր օրինակներով նույնպես պնդում է, որ արյան կանչով կարելի է սարեր շուռ տալ: Իր կողմից հրամցվող թերեւս գլխավոր նորությունը վերաբերում է անհատների այն ցանկերին, որոնք իրենց ծագումնաբանական խառը երանգներով խճողել են հայրենի պատմությունը, երկիրը ներքաշել նոր աղետների

մեջ: Սիմոն Վարազյանի թղթերում հիշատակվում են բազմաթիվ «պատեհապաշտ խառնածինների ու օտարածինների» անուններ, որոնք ամենատարբեր ժամանակահատվածներում երեւելի դիրքեր էին զբաղեցրել երկրի կառավարման վերնահարկերում, եւ առավելս բացասական դեր խաղացել: Նա ուղղակի ապշում է, թե ինչպես են նրանք այդքան վեր բարձրացել կառավարչական հիերարխիայով, եւ թե ինչպես են «ազգային ջոջերը» հանդուրժել, անգամ խթանել նրանց վերելքը, երբ ակնհայտ էր, որ այդ անձինք լոկ չարիք կարող էին բերել ժողովրդի ու երկրի գլխին:

1988-ին ալիքված Արցախյան շարժման առաջին իսկ ամիսներին պատմաբան ուսուցիչը նոր ու ամբողջական ցուցակներ կազմեց նորահայտ առաջնորդների ու ակտիվիստների վերաբերյալ, որպեսզի լիովին համոզված լինի, որ ամբիոնները դրոդացնող անձինք հանկարծ ժողովրդական լայն զանգվածներին չմոլորեցնեն եւ ծուղակը չզգեն: Ուսումնասիրեց եւ մանրամասն գրառեց, թե ինչ ծագումնաբանություն ունի նրանցից յուրաքանչյուրը, որն է նրա տոհմաձառը, ինչ տիպի մարդկանց հետ է շաղկապված ամուսնական, ընկեր-քավորական կամ այլ հանգույցներով, կարճ՝ «ինչ գունավորում ու բաղադրություն ունի նրա արյունը»: Առանձնապես մտահոգվելու բան չգտավ, ցանկերում ներառված գրեթե բոլոր անձանց տոհմաբանությունը եւ գործող կենդանի կապերը «ցանկալիի եւ թույլատրելիի» սահմաններում էին, բայց երեւանյան առանձին առաջնորդների կապակցությամբ մտահոգության որոշ կետեր գտավ: Այն ժամանակ նա իր ցուցակները որեւէ մեկին ցույց չտվեց, միայն բանավոր գրույցներում, մտերիմ առանձին մարդկանց եւ Շարժման մի քանի ակտիվիստի տեղեկացրեց իր բացահայտումների մասին. վերջիններս ըմբռնումով ընդունեցին Վարազյանի տեղեկատվությունը եւ հավաստիացրին, որ «հիմա բոլորը ժողովրդի սեւեռուն ուշադրության ներքո են, ոչ ոք չի կարող շեղվել ազգային նպատակներից»:

2000 թվականից հետո Վարազյանը ձեռնպահ մնաց ասպա-

րեզ մտած անհատների տոհմաբանական ուսումնասիրություններից, դրանք կրկին կարելի էր տեղ գրավեցին նրա առօրյայում, երբ Երեւանում իշխանության եկան նոր ուժեր: Եվ «կարմիրով» հագեցան նրա ցուցակները, բայց դրանք դեռ ճշտելու կարիք կար: Իսկ 2020-ի աշնանային պատերազմից հետո նա իր տեղը գտնել չէր կարողանում. սկսեց մեղադրել իրեն, որ անհրաժեշտ ջանք չի թափել՝ կանխելու նորահայտ անմաքուր կառավարիչների դավադրությունը՝ նրանց վերաբերյալ իր հավաքագրած տեղեկատվությունը չի փոխանցել իրավասու մարմիններին եւ չի հանրայնացրել այն: Բայց արդյո՞ք այդ քայլերից հետո կփոխվեր իրավիճակը հոգուտ երկրի՝ դառնությամբ խոհաճում էր մանկավարժը՝ չգտնելով հստակ պատասխան: Նրա անհանգստությունն ավելի սաստկացավ, երբ դուստրը՝ Նանեն, զանգեց Երեւանից եւ հայտնեց, որ ուղարկած պիեսը չեն թույլատրում բեմադրության, «առայժմ չեն թույլատրում... հետո կերեւա՛ ինչ անել»՝ ասել է աղջիկը եւ խնդրել, որ նոր պիես գտնի: «Նանեն իր ուզած պիեսը կգտնի, ես պիտի զբաղվեմ իմ գործով»՝ վճռել է Վարազյանը եւ գրապահարանի վերին դարակից հանել վերջին թղթապանակը, որ վերաբերում է ներկայում գործող բարձրաստիճան եւ կից պաշտոնյաների տոհմաբանությանն ու ընկերական-ազգակցական կապերին: Մինչեւ խոր գիշեր դրանք խմբագրեց վերջերս հայթայթած նոր տեղեկություններով, եւ կարճատեւ քուն մտնելուց առաջ խորհեց, թե ինչ առաջարկությամբ պետք է հանդես գա: Կանխատեսում էր, որ իր պայքարը կարող է հողմաղացների դեմ կռվի վերածվել, սակայն կասկած չուներ, որ պայքարել պետք է, ինչքան էլ այն անհեռանկար թվա, նա «յուրացրած դասը պարտավոր է փոխանցել հատկապես երկրի թիկնապահներին»:

Սիմոն Վարազյանը նման թիկնապահ էր համարում իր նախկին աշակերտ Գեորգ Համբարձումյանին, ով տվյալ պահին ազգային անվտանգության ծառայության տնօրենն էր: Գեորգին դասավանդել է երկու տարի, եւ նրան հիշում է որպես հետաքրքրասեր

աշակերտի: Առավոտյան տնից դուրս գալուց առաջ մի պահ կամեցավ զանգել նրան եւ տեսակցություն խնդրել, բայց միտքը փոխեց եւ որոշեց Գետորգի հիմնարկ գնալ առանց նախազգուշացնելու. նաեւ այդպէս կճշտի, թե նախկին սանն ինչպէս է արձագանքում ուսուցչի հանկարծակի հայտնությանը՝ եւտ կուղարկի, հանդիպելու նպատակահարմար օր ու ժամ պայմանավորվելով, թէ՛ անմիջապէս կընդունի...

Վարագյանը խնամքով ածիլվեց, հագավ իր լավագույն կոստյումը՝ մուգ ու թեթեւակի պսպղուն թելիկներով, որ գնել էր թոշակի անցնելու տարում, կապեց կարմրաշերտավոր փողկապը, դրեց բաց դարչնագույն ցիլինդր գլխարկը եւ չկոճկած մոխրավուն թիկնոցով ճանապարհվեց ԱԱԾ շենք: Նա ձեռքն էր առել թղթապանակը, քայլում եւ կանխատեսում էր, թե դրա պարունակությամբ ինչպէս է զարմացնելու արդեն փորձառու անվտանգային ղեկավարին, բայց եւ իրեն սթափեցնում էր, թե ինչ կշտամբանքների է արժանանալու սանի կողմից «էս դժվարին օրերին խրթին հարցեր արծարծելու համար»: «Թքած, թող ինձ թեկուզ ռասիստ ու ֆաշիստ անվանեն, ես մտահոգ եմ իմ ազգի ու երկրի վաղվա համար, եւ պարտքս ու իրավունքս է՝ դիմել քայլերի, եթե դրանք նույնիսկ ծայրահեղական ու արտառոց թվան»: այդպիսի ինքնապաշտպանական խոկուններով էլ հասավ քաջաճանոթ՝ բաց դեղնավուն շենք, հերթապահ սպային ներկայացավ եւ հայտնեց գալստյան նպատակը:

- Պարոն Համբարձումյանին հաղորդեք, որ հանդիպել ուզում եմ հենց հիմա, - իր խնդրանքը կրկնեց Վարագյանը:

Անցավ մոտ հինգ րոպե, սկսեց նյարդայնանալ, բայց հավաքեց զինքը եւ վճռեց քիչ էլ սպասել համբերությամբ ու հանգիստ. եթե ուղիղ պատասխան չեղավ, կհեռանա: Արդեն մտովի հստակեցրել էր հետագա անելիքը, երբ մոտեցավ հերթապահ սպան եւ մանկավարժին ուղեկցեց վերելի հարկ: Նրանք մտան տնօրենի ընդունարան, որտեղ եւ հայտնեցին, որ երկու րոպեից պարոն Համբարձումյանը կընդունի իրեն: Թիկնոցն ու գլխարկը հանեց ու

կախեց հյուրերի համար նախատեսված զգեստապահարանում եւ նստեց բազմոցին: Հազիվ էր աչք ածել ընդունարանը եւ «ավելորդ» համարել ընդունարանի ծառայողի քննախույզ հայացքը, երբ տնօրենի առանձնասենյակի դուռը բացվեց եւ շեմին երեւաց Գեորգ Համբարձումյանը:

– Թանկագին ընկեր Վարագյան,– զուսպ հիացմունքով բացականչեց նա եւ ողջագուրվեց ուսուցչի հետ:– Ներս գնանք,– բարեհամբույր հրահանգեց եւ նրան թեւանցուկ՝ անհետացան առանձնասենյակի դռան ետեւում:

Տնօրենը տեղավորվեց Վարագյանի դիմաց, փոքրիկ սեղանիկի մոտ՝ հեռու իր բազկաթոռից, մինչ այդ ընդունարանի հերթապահին պատվիրելով երկու բաժակ թեյ:

– Լավ ես, Գեորգ տղա,– իր բուն ասելիքին անցնելուց առաջ հետաքրքրվեց ուսուցիչը:

– Դե, ինչ լավ, ընկեր Վարագյան, հիմա լավ մարդ կամ,– եղավ սովորական պատասխանը:

– Դու պինդ կաց, դու շատ գործ ունես անելու, անչափ կարեւոր գործեր,– փոքր-ինչ խորհրդավոր ձայնով անդրադարձավ Վարագյանը:– Լավ, ժամանակդ չխլեմ, առանց էն էլ գիտեմ, որ էս ժամի գործերդ հետաձգել ես՝ ինձ ընդունելու համար. շնորհակալ եմ:

– Դե, ինչպէս կարող էի ձեզ չընդունել, եւ հետո՝ եթե հասել եք էստեղ, նշանակում է շատ կարեւոր բան կա, ճիշտ եմ...

– Այո, Գեորգ ջան: Հիմա գործից խոսեմ... Ահա վերցրու էս թղթապանակը եւ ծանոթացիր՝ ուշադիր ու մանրամասն, իմ գնալուց հետո:– Տնօրենն արդեն բացում էր թղթապանակը:– Էդտեղ մարդկանց անուններ են, որոնց տոհմաբանությունը տնտղել եմ մինչեւ յոթը պորտը. նրանք չպետք է գրավեն կառավարական բարձր պաշտոններ:

– Ինչո՞ւ,– հարցրեց Համբարձումյանը՝ թղթապանակը մի կողմ դնելով:

- Նրանք խառը արյուն ունեն:
- Իսկ եթե լավ պաշտոնյաներ են, ո՞նց վարվենք...
- Որքան էլ լավ պաշտոնյաներ լինեն, նրանց արյան կանչն ավելի զորավոր է, բախտորոշ իրավիճակներում գործելու են ի շահ մյուս կողմի:
- Հասկացա՞ ինչ եք ասում, նույնիսկ համամիտ եմ: Բայց դա աղմուկի տեղիք կտա, եթե նման կերպ վարվենք, մեզ կմեղադրեն այլատյացության ու ռասիզմի մեջ...
- Ես շատ եմ ուսումնասիրել էդ պրոբլեմը, ուրիշների փորձին տեղյակ եմ: Մենք առաջինը չենք լինի:
- Հա, հիմա կհիշատակեք հրեաների օրինակը:
- Այո, նրանք ազգի ու պետության գլխավոր առաջնորդներին ընտրում են միայն իրենց ազգաստեղծ տասներկու ցեղերի շառավիղներից, միայն, արդեն քանի՞ հազար տարի...
- Հըմ... նրանք հին ավանդույթներով են շարժվում:
- Դրա համար էլ կենսունակ ու մարտունակ ազգ են: Իսկ ղվ է խանգարում, որ մենք էլ նույնատիպ մեր ավանդույթներն ունենանք, թեկուզ բավական ուշացումով, ումի՞ց պիտի վախենանք...
- Դե, մեզ կմեղադրեն ուրիշ պետություններ... միջազգային կազմակերպություններ...
- Ի՞նչ, էդ օտար ու անտարբեր կառույցները, երբ մի սրտացավ խոսք անգամ չասացին պատերազմի օրերին, երբ ազերիները վայրագություններ էին անում մեր ազգի ու երկրի դեմ... Ինչո՞ւ պետք է մենք հաշվետու լինենք նրանց, երբ նրանք թքած ունեն մեր մաքառումի, մեր արդարության ու տանջանքի վրա... Եվ հետո, Գետրոզ ջան, եթե մեր ինքնապաշտպանական պահանջները նման քայլեր են ենթադրում, իսկ ես համոզված եմ, որ ենթադրում են, պետք անհապաղ կատարենք էդ քայլերը, առանց նայելու, թե օտարներն ինչպես կարձագանքեն:
- Դե...
- Էս ժողովրդի ու երկրի պատասխանատուն մենք ենք, ոչ թե



նրանք, մենք պետք է հոգանք մեր ազգային կարիքները եւ միջոցների մեջ երբեմն խտրություն չպետք է դնենք. սա էն դեպքերից է, երբ նպատակն արդարացնում է միջոցները:

– Բարի,– արձագանքեց տնօրենն ու ժպտաց զրուցակցին:– Դուք մեզ ուղղակի հիշեցնում եք, որ մենք ազգային ծառայություն ենք, ազգային...

– Այո, Գեորգ ջան, նմանօրինակ հարցերով ուրիշ ում կարող ենք դիմել...

– Լավ, ընկեր Վարազյան, ես կմտածեմ, թե ինչպես կարգավորենք էս խնդիրը,– ասաց տնօրենն ու ձեռքը տարավ թղթապանակին:

Ներս մտավ ընդունարանի հերթապահը եւ թեյ մատուցեց:

– Օրենք կամ որոշում ընդունեք, եթե հարմար եք գտնում՝ գաղտնի կարգ սահմանեք, որ օտարաշունչ անձինք ոչ մի կերպ մուտք չունենան իշխանության վերին օղակները:– Վարազյանը կում արեց թեյից եւ վառելով շրթունքները՝ բաժակը դրեց տեղը:– Ո՛վ ասաց, թե նրանք մեր երկրում պետք է նաեւ իրավունք ունենան բարձրաստիճան կառավարիչներ լինելու... Մեր երկրում լիքը ասպարեզներ կան գործելու, թող զբաղվեն՝ ինչքան ուզում են, թող իրենց էթնիկ կերպը պահեն, բայց ազգային կարեւորագույն աստիճաններին չպետք է մոտ գան: Էդպես վարվում են բոլոր խելացի երկրներում:

– Էստեղ շմտ անուններ կան,– հարցրեց Համբարձումյանը՝ մատով տկտկացնելով թղթապանակի վրա:

– Դե, կան... Մտահոգիչ է հատկապես երեւանյան իշխանական էլիտան:

– Կարծում ես՝ մեր ձեռքը կհասնի էստեղ...

– Իսկ դուք փորձեք, չէ՞ որ մենք մի մարմին ենք, այն չպետք է վերջնականապես ախտահարվի: Ուսումնասիրեք այլոց փորձը, ձեր սեփական գաղափարները ներդրեք: Եթե ազգի արյունն ու ոգին մաքուր չեղան, ազգը կտարրալուծվի ու կվերանա: Սա հայերի եր-

կիրն է, սա մեր արյան երկիրն է, մենք ընդամենը մեր երկիրն ենք ուզում պաշտպանել ու պահպանել, մենք ուրիշների դեմ չենք գործում, մենք կանխում ենք ուրիշների ոտնձգությունները մեր դեմ:

– Անշուշտ, մենք ինքնապահպանվելու ե՛մ իրավունքն ունենք, ե՛մ պարտականությունը:

– Մենք մեր հողի վրա պիտի ապրենք ազատ ու վստահ, առանց վախի ու բարդությունների, առանց մաշեցնող սպասման, թե ահա կարող են ծագել նոր հանգամանքեր եւ մեզ կրկին ներքաշել մութ ծուղակների մեջ՝ կասկածի տակ դնելով մեր ինքնակազոյությունը:– Մանկավարժը հանեց թաշկինակը եւ սրբեց ճակատի վրա կուտակված քրտինքը:– Ես կասկած չունեմ, որ վաղը ողջ հայկական աշխարհը համակված կլինի մի մտքով՝ սթափվել, ձեռք բերել ներքին հավասարակշռություն, թոթափել հուսալքությունն ու հոռետեսությունը, ուժ կուտակել, սրբազան ցասումի սերմեր ցանել աճող սերնդի հոգում, նոր զենքեր կոել եւ դաստիարակել մարդկանց, ստեղծել ժողովրդից անբաժան բանակ, գիտությանը, մշակույթին ու եկեղեցուն օգնության կանչել... Եվ մի գեղեցիկ օր հայոց երկիրը ոտքի կկանգնի մեկ մարդու պես՝ ապահովելու իր խաղաղությունն ու պատիվը: Միթե կարծում ես, թե սրանք ինքնահնար մտքեր են... ճշ, նման գաղափարներով շատ այլ պատվարժան ժողովուրդներ են առաջնորդվել, երբ մեզ նման գահավիժել են ստորացուցիչ կացության մեջ: Եվ հասել են վերածնության:

– Ուզում եմ հավատալ, որ ձեր գաղափարները կպաշտպանի մեր հայրենակիցների մեծամասնությունը:

– Բայց ինչ-որ առաջարկում եմ ձեզ, ամենեւին էլ բավարար չէ, դուք մշակեք լրացուցիչ նոր ու խիստ պահանջներ էնպես, որ ապագային նկարագիր ու նկրտումներ ունեցող որեւէ մեկը տեղ չգրավի իշխանության վերին էշելոններում, նման բան պարզապես անհնարին լինի: Նախքան համազգային ընտրություններին մասնակցելը կամ պետական բարձր պաշտոնի նշանակվելը նրանք պետք է անցնեն... Էսպես ասեմ՝ «ազգային բյուրեղի» լաբորատոր

րիայով. ում թեստը դրական եղավ, թող նա էլ վերին օղակներում գործելու իրավունք ձեռք բերի: Թե չէ տեսնում եք, թե ինչպիսի արարածներ են բռնել հայոց աշխարհի դեկը եւ ուր են քշում:

– Հա, մեր ընտրական համակարգը վերանայման կարիք ունի: Մենք սկսել ենք կապկել եվրոպական մոդելները եւ կրակն ենք ընկել:

– Երիցս իրավացի ես, բարեկամս: Հայաստանը՝ մեր միասնական հայոց երկիրը, յուրահատուկ է եւ բնույթով, եւ պատմությամբ, ուստի նրա կենսունակությունն ապահովող բոլոր մեխանիզմները նույնպես պետք է լինեն յուրահատուկ: Եթե մենք ուշքի չգանք ու չարժեւորենք մեզ, ապա գալիք պատմաբանները մեր մասին ընդամենը հեքիաթանման պատմություններ են անելու... մոտավորապես էսպես՝ «Եղել է, չի եղել մի սահմանային չճանաչված երկիր»...

Տնօրենը մի պահ խոժոռվեց ուսուցչի կանխատեսման վրա:

– Էդպես չի լինի, ընկեր Վարազյան: Մեր ժողովուրդը քանի կա, կունենա իր երկիրը:

– Գեւորգ ջան, ժողովրդին հեշտ է խաբելը, ժողովուրդը հեշտությամբ է հրապուրվում ամբոխավարներով, մանիպուլյատորներով, ծաղրածուներով ու խելագարներով, էդ ամենը շատերի համար իսկական թամաշա է: Մարդկանց մեծամասնությունը պատասխանատվություն չի կրում ազգային պետության համար: Մարդկանց պետք չէ մեղադրել, նրանց մոտ ի ծնե շատ է անձնական շահախնդրությունը. ազգային պատասխանատվությունը, նախեւառաջ, պետական պատկան մարմինների հոգան է:

– Ուզում եք ասել, որ մենք պետք է ծայրահեղ քայլերի դիմենք:

– Մենք ծայրահեղ իրավիճակում գտնվող ազգ ու երկիր ենք՝ դարեր ի վեր, ուստի մեր կենսագործունեությունը պետք է մեր շուրջ մոլեգնող ծայրահեղություններին համարժեք լինի, որ մեր միասնական երկիրը ներսից ու դրսից լինի պինդ ու ուժեղ՝ հստակ ուղենշաններով: Մենք պետք է լինենք լուսավոր-ազգայնական երկիր, ուրիշ ճանապարհ մեզ տրված չէ:

– Շատ լավ, ընկեր Վարազյան, դուք մեզ գործելու նոր ուղղություն ցույց տվիք,– ասաց տնօրենն ու վեր կացավ:– Ես իմ ուժերի ներածին չափով ամեն ինչ կանեմ, որ մենք ունենանք ազգային ինքնապահպանության մեր ուրույն կարգը:

– Սրտատրոփ կսպասեմ դրա կիրառմանը,– առույգ արծազանքեց ուսուցիչը եւ նույնպես վեր կացավ:– Մենք նվազագույնը պիտի անենք էնքան, որ մեր հետնորդները մեզ հիշեն որպես նորմալ, հայրենասեր մարդկանց... Ի դեպ, Համբարձումյան ջան. Մելիք-Շահնազարին մեր ժողովուրդը որպես ինչ է հիշում, գիտես...

– Որպես դավաճանի:

– Այո. ժողովրդի հիշողությունը նման հարցերում անսխալ ու մշտավառ է լինում:– Մանկավարժի հայացքը սովորականից ավելի լրջացավ:– Գետորգ, ինչ ես կարծում՝ հնարավոր է, որ երեւանյան իշխանավորներն ուրանան Արցախը եւ մեզ թուրքերի դեմ մենակ թողնեն...

– Աստված չանի, բայց եւ ամեն ինչ հնարավոր է... Մտահոգիչ շատ նշաններ կան... Իսկ ինչ է ասում պատմությունը, ընկեր Վարազյան, հայկական իշխող կենտրոնը մեզ հաճախ է անտերության մատնել...

Մանկավարժն ասես անցավ ինքնասույզ աշխատակարգի. նրա դեմքը կնճռոտվեց եւ մուգ երանգ ստացավ, ինչը նշանակում է, որ նրա միտքը, համակարգչային որոնողական ծրագրի պես, սրընթաց պտտվում է անցյալի բավիղներով. այն, ի վերջո, բեռնավորված ետ վերադարձավ:

– Դժբախտաբար, այո,– տխրալի ձայնով «պատմության երեսը բացեց» Վարազյանը:– Մենք հաճախ ենք միայնակ մնացել մեր գոյապայքարում: Ստիպված մեր նախնիք ինքնապաշտպանական ուժեղ բնազդ են ձեռք բերել եւ այն փոխանցել հետնորդներին, որ չկործանվենք եւ միշտ լինենք հայկական աշխարհի հետ: Բայց դրանք երկար քննելու հարցեր են... Դե, ես գնամ, քեզ լավ պահիր, Գետորգ տղա, դու մեզ էնքան պետք ես:

Վարագյանը գրկախառնվեց սանի հետ եւ շարժվեց դեպի ելքը:

– Թեյը չխմեցիք, ընկեր Վարագյան:

– Մի ուրիշ անգամ, պարոն Համբարձումյան:

– Լավ, առաջիկայում ձեզ մեր տուն կհրավիրեմ, ավելի երկար ու հանգամանալի կգրուցենք:

– Սիրով կընդունեմ հրավերդ: Խնդրո՞ւնու գինին՝ ինձնից:

Տնօրենը մանկավարժին ուղեկցեց մինչեւ միջանցք: Հրաժեշտի ձեռքսեղմումից առաջ հարցրեց.

– Ընկեր Վարագյան, չե՞ք ծանձրանում թոշակառուի կարգավիճակում...

– Երեք տարի է՝ շատերին թվում է, թե ես պարապ-սարապ թրեում եմ անբան թոշակառուի պես... Չէ, ես պարապ չեմ լինում, Համբարձումյան. աշակերտներից ովքեր դիմում են՝ պարապում եմ հետները, ընկերներով հավաքվում ենք եւ ինչ-որ օգտակար բան ձեռնարկում, պատմագիտությամբ եմ զբաղվում... Հիմա էնքան բան կա անելու՝ առանց հաստիքավորվելու, որպես կամավորական... Էս ընկած երկիրը բարձրացնել է պետք:

– Նոր թեմաներով եք պատմագիտական ուսումնասիրություններ կատարում, թե՛ նախկին հունի մեջ եք:– Հանդիմանանք ու պահանջկոտություն կար տնօրենի հարցում:

– Նույն ճանապարհով եմ գնում, բայց եւ ուրիշ արահետներ են հիմա ինձ գրավում, Գեորգ ջան: Պետք է էնքան ու էնպես պատմել, որ ոչ միայն մեր բոլոր հայրենակիցները, այլեւ ողջ աշխարհը իմանա, թե որքան է տառապել հայ մարդը էս հողի վրա:

Տնօրենը հաստատական շարժումով հավանություն տվեց Վարագյանի դիտարկմանը:

– Իսկ եթե մանկավարժական բնույթի կարելու աշխատանք առաջարկեն ձեզ, կհամաձայնե՞իք... Հիմնականում դաստիարակչական բնույթի. դուք տեսնում եք, թե պատերազմից հետո որքան աշխատանք պետք է տանել նոր սերնդի հետ, որ արագ հաղթահարեն հոռետեսությունն ու ընկճվածությունը, որ...

– Հասկացա, եթե էդ կարգի գործ առաջարկեն, անպայման կհամաձայնեմ, առանց ոռճիկի էլ կաշխատեմ:

– Շատ լավ: Կրթության եւ պաշտպանության նախարարությունները մի համատեղ ծրագիր են մշակում, երբ մոտենա իրականացման փուլը, կխնդրեմ, որ ձեզ էլ ընդգրկեն հիմնական թիմում:

– Հիանալի... Մինչ նոր հանդիպում, բարեկամս:

– Տոտեսություն, ընկեր Վարագյան:

Այցելուին մոտեցավ քիչ հեռվում սպասող հերթապահ սպան եւ նրան սիրալիր հրավիրեց դեպի ելքը: Երկու քայլից մանկավարժը ետ դարձավ եւ կամացուկ դիմեց դեռ տեղում կանգնած տնօրենին:

– Գետրգ ջան, մոռացա հարցնել. օրեր առաջ գնդապետ Վարդանյանի եւ ուրիշ նախկին սպաների հետ մի նախաձեռնություն էինք իրագործում գյուղերում, մեզ արգելեցին շարունակել, դու չգիտես, թե ով արգելեց եւ ինչու...

– Գիտեմ, բայց էդ մասին հետո կխոսենք, հիմա ժամանակը չէ,– ասաց տնօրենն ու նայեց ժամացույցին:

– Բարի, հաջողություն ձեզ, պարոն Համբարձումյան,– արդեն բարձր ձայնով ասաց ուսուցիչն ու հեռացավ:

Նա իջավ աստիճաններով, ուղեկցող սպային շնորհակալություն ու ցոտեսություն ասաց եւ հայտնվեց փողոցում: Դիմացը վեհաշուք հառնում էր Սք. Աստվածամոր Հովանի եկեղեցին: Ինքնաբերաբար շարժվեց դեպի տաճար, սակայն ինչ-որ բան մտաբերելով՝ փողոցի մեջտեղում կանգ առավ, ապա ետ դարձավ: Այս ու այն կողմ նայեց՝ փնտրելով ուզածը: Կողմնորոշվեց եւ հնարավորինս արագաքայլ ուղղվեց դեպի աջակողմյա խաչմերուկը, հետո թեքվեց ձախ եւ քիչ անց մտավ նորակառույց շենքի առաջին հարկում տեղավորված պետական հիմնարկներից մեկը, ուր եւ գտավ փնտրածը. հանգստացավ ու ելավ դուրս:

Մանկավարժ Վարագյանն ադենոմայով տառապում է արդեն տասը տարի, դրա հետեւանքով առաջացած հաճախամիզությունը նրան անհարմարություններ է պատճառում ամենատարբեր ու

ամենաանսպասելի իրավիճակներում, պետք է կարողանալ դիմակայել այդ «մարտահրավերին» եւ օրակարգն այնպես դասավորել, որ չխայտառակվես մարդկանց մոտ: Ուր էլ գնում է, նախապես ճշտում է, թե որտեղ կարող է հոգալ վերահաս կարիքը: Առայժմ դա հաջողվում է բազմափորձ մարդուն, բայց եւ գիտի, որ տիպիկ անակնկալներից ապահովագրված չէ: Քիչ առաջ՝ իր սանի հետ կայացած հանդիպման ժամանակ, առաջին իսկ րոպեից սկսած, նա հերթական «անհերթ» կարիքն էր զգացել, որն ավելորդ հուզմունքից կամ հաճախացող մրսածությունից էր հավանաբար եւ կրկնակի նյարդայնացնում էր նրան: Սակայն աշակերտից ամաչեց՝ «դուրս գնալ» նրա իմացությամբ, թեպետ ներելի է նմանօրինակ պահանջներ ունենալ այդ տարիքում: Նա ասպետաբար դիմացավ մինչեւ զրոյցի ավարտը եւ կուտակված հեղուկից ազատվեց, ինչպես տեսաք, սանի աչքից հեռու:

Ուսուցիչ Սիմոնը բավարարվածության զգացումով նայեց ամպերից նոր ազատված դեկտեմբերյան արեւին եւ քայլեց դեպի եկեղեցի՝ հանդիպելու Տեր Միսաքին: Երեկ երեկոյան քահանան հեռախոսով խնդրել էր, որ եթե ժամանակ գտնի, այցելի իրեն: Մանկավարժը հանգիստ քայլում եւ մեկ-մեկ վեր էր նայում՝ հուսալով, որ ձմեռվա անկիրք արելը գոնե մի քիչ կտաքացնի ջերմության կարոտ իր մարմինը: Թեպետ լավ հասկանում էր, որ մրսում է ոչ թե մարմինը, այլ հոգին, եւ այն ջերմացնելու համար արեւն առանձնապես պիտանի չէ, հատկապես ձմեռային արելը:

Սիմոն Վարագյանը ներս մտավ եւ զարմանքով տեսավ, որ երիցտունն առավելս պահեստի է նման, քան եկեղեցական տարածքի. տասնյակ տոպրակներ ու պարկեր դարսված էին երկար պատի տակ, իսկ երկու կին առանձնացնում ու տեսակավորում էին պարենն ու տարբեր պարագաներ:

– Հապա փորձիր գուշակել, թե էս օգնությունն ով է կազմակերպել... Ո՛վ կսպասեր,– մանկավարժի հետ ողջագուրվելուց հետո զվարթաձայն խոսեց քահանան:

- Թույլ տուր մի վայրկյան մտածեմ... ըմմմ, գեներալ Քեիյանը...
- Ոչ:
- Քեռի՛ն...
- Ոչ:
- Ուրեմն... թեմակալ առաջնորդը...
- Ապրեք, Վարազյան, ճիշտ եք: Անսպասելի է, չէ՛...
- Իրոք, նա դեմ էր, որ դուք էս կարգի հարցերի մեջ խորամուխ

լինեք:

- Այո, բայց կյանքն իրենն է թելադրում, հիմա նա հաստատ այլ կերպ է մտածում:– Տույց տալով բարեսիրական ապրանքները, գոհությամբ ասաց.- թեմակալ առաջնորդի միջնորդությամբ ու խնդրանքով Երեւանից են ուղարկել: Երեկ նա զանգել ու ասում էր, որ էլի օգնություններ կգան, միայն թե՛ «էնպես արա, որ հենց կարիքավորները ստանան»: Հիմա մենք կարիքավորների ցուցակները ճշտում ու լրացնում ենք: Ուզում եմ, որ էս անգամ օգնություն տրամադրենք նաեւ թոշակառու մանկավարժներին, նրանց, որ մնացել են միայն թոշակի հույսին: Ես չեմ մոռացել ձեր էն երկու գործընկերներին, որոնց հանդիպեցինք Վարդանյանենց տուն գնալիս, Օղակաձեւ պուրակում:

- Հա, Մելքումյանն ու Մեծլումյանը: Նրանք միայնակ մարդիկ են:

- Մովսեսին խոսք եմ տվել օգնել նրանց: Դուք երեւի նրանց հասցեները գիտեք, նաեւ ուրիշ մանկավարժների անուններ ու հասցեներ ասեք, որոնք նույնպես օգնության կարիք ունեն:

- Շատ լավ, Տեր Հայր, մի թուղթ տվեք:

Վարազյանը ստացավ թուղթը եւ ծոցագրպանից հանելով որդու նվիրած հուշանվեր-գրիչը՝ առանձնացավ սեղանի մի ծայրում: Իսկ քահանան միացավ սենյակում աշխատող կանանց եւ սկսեց նրանց հետ տեսակավորել ապրանքները եւ նոր տոպրակաբաժիններ առանձնացնել: Որոշ ժամանակ անց Վարազյանն ավարտեց նշումները եւ թուղթն առաձ՛ մոտեցավ քահանային:



– Տեր Հայր, ահա անունները՝ հասցեներով, ում որ հիշեցի: Էս ցուցակը թերի է, կան կարիքավոր տասնյակ ուրիշ մարդիկ տարբեր դպրոցներից: Երեւի արժե դիմել կրթության քաղաքային բաժին՝ բոլոր կարիքավորների անունները ստանալու համար:

– Լավ, շնորհակալ եմ,– արձագանքեց Տեր Միսաքը, թռուցիկ աչքի անցկացնելով Վարազյանի գրառածը:– Էսօր ձեր նշած մարդկանց կուղարկենք օգնությունը, ահա էս մեծ տոպրակներից, մյուսներին կանդրադառնանք հետո, երբ կունենանք ամբողջական ցանկը:

– Շատ շնորհակալ եմ, Տեր Հայր: Գործընկերներս կրկնակի կուրախանան՝ իմանալով, որ իրենց սատարում է եկեղեցին, եւ հատկապես՝ դուք:

– Տա Աստված, որ մեր երկրում այսուհետ որեւէ մեկն էսպիսի օգնության կարիք չզգա, բոլորն էլ ապրեն ապահովության ու խաղաղության մեջ:

– Տա Աստված,– արձագանքեցին մանկավարժ Սիմոնն ու ներկա երկու կանայք:

Վարազյանը պատրաստվեց գնալ, սակայն տեսնելով, թե դեռ որքան շատ աշխատանք կա անելու այստեղ, ասաց.

– Ձեզ օգնեմ, Տեր Հայր, ազատ ժամանակ ունեմ, միայն երեկոյան կողմ սպասվում է մի կարետոր ու հետաքրքիր այցելություն,– փոքր-ինչ խորհրդավորություն հաղորդելով ձայնին՝ հայտնեց մանկավարժը:

– Ո՛չ, ո՛չ, օգնել պետք չէ, դուք արդեն արեցիք ձեր մեծ օգնությունը, շուտով կգան մեր ծառայողները, եւ ամեն ինչ արագ կավարտենք:– Տեր Միսաքն ակնհայտորեն զգացված էր նախկին ուսուցչի պատրաստակամությունից:– Իսկ ՚հր պիտի գնաք, սիրելի Վարազյան... եթե գաղտնիք չէ:

– Ի՛նչ գաղտնիք, արդեն Ստեփանակերտի կեսը գիտե. մի քանի ժամից պիտի ծննդաբերի քրոջս աղջիկը, էդպես են ասում բժիշկները. նաեւ ասում են, որ զոյգ է բերելու մեր Գոհարիկը: Պիտի

գնամ ծննդատուն, որ հարազատներով դիմավորենք փոքրիկներին:

- Հրանշք,- ինքնաբուխ գոչեց Տեր Միսաքը:- Տերը թող նորածիններին առողջություն ու երկար կյանք պարգևի:

- Բայց չշտապենք, Տեր Հայր, նրանք դեռ պիտի ծնվեն, այ դրանից հետո նրանց կօրհնեք ու կմկրտեք:

- Միշտ պատրաստ եմ, եղբայր Սիմոն: Ո՛ր էր թե միայն նման գործերով զբաղվեի... Դե, դուք գնացեք, չի իմացվի, մեկ էլ տեսար փոքրիկները շտապեցին եւ ժամանակից շուտ աշխարհ եկան... Հիմիկվա սերունդը շատ անհամբեր է:

- Հւմ,- անակնկալի եկավ Վարազյանը,- էդ մասին նույնիսկ չէի մտածել: Դե, լավ, ձեզ հաջողություն, ես գնամ:

- Աստված պահապան, սիրելի ուսուցիչ,- նրա ետեւից բարձրաձայնեց Տեր Միսաքը:

Սիմոն Վարազյանը տաճարից դուրս եկավ լավ տրամադրությամբ: Որոշեց տուն գնալ, ճաշել, հագուստը փոխել եւ նոր գնալ ծննդատուն: Զանգեց քրոջը՝ իմանալու իրավիճակը, սակայն պատասխան չեղավ. «Երեւի փողոցում է՝ չի լոււմ»: Արդեն մոտենում էր Օղակաձեւ պուրակին՝ կանգ առավ. «Բայց ինչո՞ւ հագուստս փոխեմ... էսպես լավ հագնված էլ կգնամ, թող էնտեղ բոլորն իմանան, որ մեր փոքրիկների ծնունդն իսկական տոն է ինձ համար»՝ խոհածեց ու ետ դարձավ՝ ուղղություն վերցնելով դեպի ծննդատուն: Նորահայտ կանխազգացումը շտապեցնում էր նրան: Բայց քաղցած էր, ուստի ճանապարհին մի երկու բլիթ ու բուլկի գնեց եւ աննկատ ծամելով՝ տեղ հասավ: Ծննդարանի մուտքի մոտ էին Գոհարիկի եւ ամուսնու գրեթե բոլոր մերձավոր հարազատները, ավելի քան երեսուն հոգի, այդ թվում՝ որդին, որ աշխատանքը թողած՝ աճապարել էր այստեղ: Մեծ ու փոքր՝ ժպտալից դիմավորեցին գերդաստանի ամենաուայալին ու նահապետին: Քոյրը համբուրեց եղբորն ու ասաց.

- Սիմոն եղբայրս որ էստեղ է, ամեն ինչ լավ է լինելու:

- Հա, անհոգ կացեք, հիմա փոքրիկներին կասեմ, որ առանց չարություն անելու լույս աշխարհ գան,- կատակեց Վարազյանը, ապա դիմեց որդուն.- Վահմագ, էդ որ էստեղ ես, ինչի՞ ինձ էլ տեղ-յակ չես պահում...

- Դե, պապ, չուզեցի քեզ իրար խառնել, դու կարելու գործով տեղ էիր գնացել, չէ՞:- Հայրը գլխով արեց:- Ո՞նց անցավ, Համբարձումյանն ընդունեց քեզ...

- Իհարկե՞, հպարտ արձագանքեց Սիմոնը: Ապա մոտեցավ քրոջ փեսային՝ զինձառայող Մերուժանին:- Փեսա ջան, Գոհարիկի հետ արդեն որոշե՞լ եք փոքրիկների անունները:

- Հա, քեռի Սիմոն, Վրույր եւ Վարուժան:

- Նրանք տղաներ են...

- Հա՛:

- Որտեղի՞ց գիտես...

- Դե, քեռի Սիմոն, հիմա ամեն ինչ նախօրոք հնարավոր է իմանալ, բժշկությունը զարգանում է:

- Ա՛յ քեզ բան, իսկ ես կարծում էի՝ դեռ հայտնի չէ փոքրիկների սեռը:

- Հայտնի է:

- Հետաքրքրությունն էդպես կորչում է... Բայց, դե, հիմա դա կարելու չէ: Սպասենք պստիկների հաջող ծննդին:

- Գոհարիկը շատ էր ուզում, որ ծննդաբերի Ստեփանակերտում: Կռվից հետո ես ու մերս ասինք, որ մնա Երեւանում, ծննդաբերի, նոր վերադառնա, հատկապես, որ զույգ է, կարող են բարդություններ ծագել: Բայց նա իրենը պնդեց, ասում է, որ մեր բժիշկներին լրիվ վստահում է:

- Լավ է, լավ է,- կրկնեց Վարազյանը՝ մտովի երախտապարտ լինելով քրոջ աղջկան:

Քիչ անց դուրս եկավ մի ժպտերես բուժքույր եւ ավետեց, որ «փոքրիկներն ուրախությամբ լույս աշխարհ են եկել, նրանց բոլոր տվյալները նորմալ են»: Ապա հավելեց.

- Նրանք պատերազմից հետո մեզ մոտ ծնված առաջին երկվորյակներն են:

- Ուռն,- գոչեցին ներկա երեխաները:

Նորածինների հայրը, նախ, բուժքրոջն իր լիաբուռն շնորհակալությունը հայտնեց, հետո արագորեն բացեց շամպայնի շշերը, եղբոր օգնությամբ լցրեց միանգամյա օգտագործման բաժակները եւ բաժանեց ներկաներին: Իսկ քույրը բացել էր շոկոլադի մեծ տուփը:

- Աստված մեր Վրույրին ու Վարուժանին առողջություն, երջանիկ ու խաղաղ երկար կյանք պարգևի,- օրհնեց Սիմոն Վարազյանը եւ թափով խմեց շամպայնը, թեպետ այն երբեք իր սիրած խմիչքը չէր եղել:

Նա մի ժամի չափ էլ մնաց ծննդարանի մոտ, սրտալի գրուցեց հարազատների ու բարեկամների հետ, ապա որդու մեքենայով տուն գնաց: Բնակարանի դուռը բացել ու ներս էր մտնում, երբ պատկից հարեանը՝ միջահասակ ու նիհարիկ մի կին, ով սպասում էր իր գալստյանը, կանչեց կիսաբաց դռնից.

- Ընկեր Վարազյան, սպասեք, ձեզ համար բան են բերել,- ասաց ու նրան հանձնեց մի մեծ ցելոֆանե տոպրակ:- Տանը չէիք, խնդրեցին՝ ձեզ տամ:

- Հա, ապրես, Էմմա քույրիկ,- ասաց մանկավարժը եւ մեքենայաբար նրա ձեռքից վերցրեց ու միջանցքում դրեց ծանր տոպրակը:- Լավ էք, երեխեքը ղնց են...

- Ոչինչ, յուր ենք գնում: Դուք լավ եղեք,- հանգիստ արձագանքեց հարեանուհին ու ետ՝ մտավ տուն:

Վարազյանը հանեց թիկնոցն ու գլխարկը, մազերը սանրեց հայելու առջեւ եւ արդեն մտնում էր ննջասենյակ՝ ետ եկավ ու աչքը հառեց իրեն փոխանցված կապտասպիտակ տոպրակին. Տեր Միսաքի ուղարկածն էր:

- Տեր Հայր, էս ինչի՞ եք ինձ էլ օգնություն ուղարկել,- ինքն իրեն խոսեց մանկավարժը եւ արագորեն զանգեց քահանային՝ նույն հարցը ուղղելով նրան:- Ա՛, լավ, հասկացա, ես էլ կարծեցի, թե իմ

փոքրիկ ծառայությունն եք գնահատել, իսկի կարիք չկա... Միշտ պատրաստ եմ ձեզ անհատույց օգնել... Պարզ է, պարզ է, ես գիտեմ՝ ինչ անել... Դե լավ, վաղը կգնամ կրթության քաղաքային բաժին եւ կարիքավորների ամբողջական ցուցակը կվերցնեմ նրանցից:

Տեր Միսաքը Վարազյանին բացատրեց, որ այդ քայլը պնդել են իրենց օգնող այն երկու կանայք, որոնց տեսել էր երիցտանը, «նրանց երեխաներին դասավանդել եք, էդ կանայք ասացին, որ դուք էլ օգնության կարիք ունեք... ահա էդքան բան»:

– Բարի, բարի,– դարձյալ մենախոսեց մանկավարժը, մի քանի վայրկյան մտորեց, ապա տոպրակն առած՝ դուրս եկավ եւ սեղմեց հարեան բնակարանի դռան զանգը: Հայտնվեց քիչ առաջվա նիհարիկ կինը:

– Մի փոքրիկ շփոթմունք է եղել, էմմա քույրիկ, ներող եղեք... էս օգնությունը ձեզ համար են ուղարկել, ինձ պարզապես խնդրել են, որ ձեզ փոխանցեմ իմ ձեռքով, Սք. Աստվածամոր Հովանի եկեղեցու եւ Տեր Միսաքի անունից... էդքանը, վերցրեք,– իր սուտը ճշմարտության վերածելով՝ ասաց Վարազյանը եւ հարեանուհուն հանձնեց «բարիկենդանը»:

– Վայ, ինչ եք ասում, ընկեր Վարազյան, շատ շնորհակալ եմ: Աստված պահի ձեզ էլ, եկեղեցուն էլ, Տեր Միսաքին էլ,– հուզված արձագանքեց հարեանուհին եւ տոպրակը վերցրեց:– Ներս անցեք, սուրճ կխմեք:

– Ապրես, էմմա քույրիկ, մի ուրիշ անգամ, հիմա շատ հոգնած եմ:

Վարազյանը մտավ տուն՝ հոգեպես բավարարված ու գոհ, որ... «ձիով» քայլ է կատարել: Հարեանուհին իսկապես աջակցության կարիք ունի. ամուսինը կորցրած բանվորուհի այդ կինն է հիմնականում հոգ տանում աղջկա ընտանիքին, որն այդպես էլ տարիներով չի կայանում ամուսնական տարաբնույթ գժտությունների պատճառով: Երեք թոռներն ավելի շատ տատի տանն են ապ-

րում՝ իրենց մոր հետ, ով հաճախ անգործ է մնում իր անհամշտ, թե՛ թափթփված բնավորության պատճառով: Իսկ փեսայի մասին ավելորդ է խոսել, «նա միշտ պատճառ է փնտրում, որ խույս տա հայրական պարտականություններից... Խմող ու անաշա քաշող մարդուց ինչ սպասես»:

Այդ տեղեկությունները Վարազյանին է հաղորդել տիկին Էմման. նա մի երկու տարի առաջ, երեւի չիմանալով, թե ում առաջ բացի նորից ուժգնորեն մորմոքված սիրտը, շաքարավազ փոխառելու պատրվակով մտել էր Վարազյանենց բնակարան եւ երկար ու կնավարի զրուցել նրա հետ, հետո գնացել՝ այդպես էլ չտանելով շաքարավազը: Մանկավարժը մտապահել է հարեւանուհու խոսքը՝ «բախտն ինձ նմաններին սիրում է ծեծել»: Իսկ ինչպէս է ճակատագիրը սիրում վարվել Վարազյանի նման մարդկանց հետ,– այդ մասին նա դեռեւս որոշակի չգիտե, միայն հասկացել է, որ տուժում է հատկապես անգործության կամ մոլության մատնված հոգին, եւ եթե չես կարեկցում ու չես բանում, ապա Աստված երես է թեքում քեզնից, եւ չարքն իր ճանկերը խրում է կյանքիդ մեջ:

## ԱՆՁԱՅՆ ՍԻՐՈ ՌԻԹՄԵՐԸ

*Ինձ քո սրտի վրա կնիքի պես, քո բազկի վրա  
կնիքի պես դիր, քանի որ սերը մահվան պես զորավոր  
ու խանդը գերեզմանի պես դաժան է:*

*Երգ երգոց, 7*

Դեկտեմբերը սկսվեց ցրտաշունչ օրերով, սակայն Վիգենի եւ Մարիայի հոգում արդեն այնքան ջերմություն էր կուտակվել, որ բնավ չէին զգում սառնամանիքոտ ցերեկներն ու գիշերները, եւ ամեն օր՝ ամենատարբեր ժամերի, հանդիպում էին՝ թեթեւ հագնված ու աստղոտ տրամադրությամբ: Նրանց երիտասարդ արյունը երակներում եռ էր գալիս գարնանային հորդահոս ջրերի պես, անխոս երգում էին ոչ միայն հոգիները, այլեւ իրենց պիրկ ու ճկուն մարմինները: Վիգենը արծիվ էր զգում իրեն, իսկ Մարիան անձայն ղունդունացող մի աղավնի էր, որին, սակայն, չէր կարող մոտենալ ոչ մի գիշանգղ ու չարք, իր պահապան արծիվն այլեւս կողքին էր՝ պատրաստ նրան տանելու ճակատագրի բոլոր ծերպերով ու բավիղներով: Նրանք ժամադրվում էին քաղաքի տարբեր անկյուններում, Վիգենն այնպես էր կազմակերպում իրենց զբոսանքները, որ Մարիան վերջապես ճանաչի Ստեփանակերտն ամբողջությամբ. թաղամասեր ու փողոցներ կային, ուր մինչ այդ «սիրուն լալիկը» ոտք չէր դրել: Աղջիկը զարմանում էր, որ հայրենի քաղաքում նման գողտրիկ տեղեր կան, եւ լիասիրտ գոհություն էր հայտնում Վիգենին այդ վայրերը տանելու համար: Սիրահարները,

սակայն, Ստեփանակերտով չէին բավարարվում, Վիգենը իր սպիտակ «Տոյոտայով» Մարիային մի քանի անգամ պտտեցրել էր քաղաքի մերձակա բնակավայրերով. աղջիկը գյուղական պատկերների մեջ շատ գմայլանք ու խաղաղավետություն հայտնաբերեց, իսկ երբ մտել էին Խնածախի եկեղեցին, պարզ մատնախոսությամբ Վիգենին բացատրեց, որ հոգին ասես սավառնում է յոթերորդ երկնքից էլ վեր, եւ ուր որ է Աստված կխոսի իր հետ: Երբ դուրս եկան բակ, երիտասարդը դեռ հոգեգմայլանքի մեջ գտնվող ընկերուհուն ասաց.

– Մարիա, չգիտեմ՝ Աստված կխոսի քո հոգու հետ, թե՛ ոչ, բայց ես վաղուց եմ փորձում հաղորդակցվել նրա հետ, եւ հիմա քեզ պարզ ու շիտակ ասում եմ՝ ես սիրում եմ քեզ, իմ սիրուն լալիկ, – ասաց ու ձեռնափերի մեջ առավ նրա դեմքը:

Այդ խոսքերը Մարիան կարող էր ընկալել նաեւ փակ աչքերով, առանց նայելու Վիգենի շրթունքների բացխուփին: Թեեւ անսպասելի չէր ընկերոջ խոստովանությունը (նրա բոլոր շարժումներից միայն սեր ու քնքշանք էին ծորում), աղջիկը, այնուհանդերձ, անակնկալի եկավ այդքան սրտաբուխ ասված խոսքերից, մի ակնթարթ շառագունած կախեց գլուխը, ապա Վիգենի աչքերի մեջ նայեց մի այնպիսի խորագնին հայացքով, ասես այնտեղ փնտրում էր իր իսկական կերպարը, իր տագնապները խլացնող ուժը եւ գալիք կյանքի բոլոր հարցականների ճշմարիտ պատասխանները. այդքան շատ բան էր փնտրում Մարիան Վիգենի ջինջ աչքերում: Իսկ երիտասարդն աղջկան ժպտում էր այնպես ջերմ ու սրտառույց, որ նա մեղք համարեց իր մեղմ, բայց եւ պահանջկոտ նայվածքը, եւ Վիգենին ընծայեց իր կյանքի թերեւս ամենագեղեցիկ ու ամենաարեալային ժպիտը: Արծիվն իրեն բավարարված զգաց Աղավնու անձայն-գեղահունչ ղունդունից, եւ նրան թելի տակ առած՝ միառժամանակ կանգնեց խուլ ալեբախվող ժամանակի ծանր շնչի տակ. «Կդիմանանք, կծաղկենք»՝ խորհեց Վիգենը եւ ընկերուհուն թեամնցուկ տարավ ու նստեցրեց մեքենան: Այստեղ էլ Արծիվն առաջին



անգամ համբուրեց Աղավնուն. երկար, երգեցիկ համբույր էր, որի նախօրինակը մինչ այդ չէր վայելել նրանցից ոչ ոք: Երկուսն էլ կույս էին իրենց անզուգական սիրո մեջ:

Հետո նայում էին միմյանց աչքերի մեջ՝ ասես վերգտել են իրար անհիշելի բաժանումից հետո: Մարիայի հոգին երգում էր սիրելի էջերի հանգույն, երգում էր նաեւ Վիգենի հոգին՝ երբեմն կցկտոր ու ինքնահնար, բայց ներդաշնակ ընկերուհու՝ միայն իրեն հասու ձայնին.

*«Մարիա – Քո բերանի համբույրներով համբուրիր ինձ, քանի որ քո սերը մեղրից անուշ է:*

*Վիգեն – Քո շուրթերը քաղցր ու բուրավետ են: Քո խաժ աչքերը գեղեցիկ են, իմ սեր, հրաշք ես դու, աղավնու հայացքով աղջիկ:*

*Մարիա – Ինչպես ընկուզենին է այգու մեջ, այդպես իմ սիրեցյալն է երիտասարդ փղամարդկանց մեջ: Նրա հովանու տակ կապրեմ երջանիկ, նրա սերը կապրեցնի ինձ իմ բոլոր օրերում:*

*Վիգեն – Ինչպես վարդն է մացառների մեջ, այդպես իմ սիրելին է մեր երկրի բոլոր աղջիկների մեջ:*

*Մարիա – Նրա ձախ ձեռքը պարանոցիս վրա է, իսկ աջ ձեռքն ամուր գրկում է ինձ: Ես գիտեմ, թե նա ինչպես է շնչում, գիտեմ՝ ինչպես է զարկում նրա սիրտն իմ սիրով:*

*Վիգեն – Ո՛վ իմ աղավնի, թող հմայվեմ քո սքանչելի ու պայծառ երեսով... Մի թաքնվիր ինձնից, ուր էլ ծվարես՝ կգտնեմ քեզ:*

*Մարիա – Դու իմ խիզախ սիրելին ես, դու իմ քաջ ասպետն ես, քո զորությանը ոչ ոք չի հասնի:*

*Վիգեն – Լեզվիդ տակ շոկոլատ ու կաթ կա, մաշկիցդ ու շորերիցդ հաճելի բույր է գալիս:*

*Մարիա – Ես պինդ կբռնեմ իմ սիրածի ձեռքը, ես նրան բաց չեմ թողնի անգամ մահից հետո:*

*Վիգեն – Միանգամայն խոհուն ու գեղեցիկ ես, իմ սեր, վրադ ոչ մի բիծ ու արապ չկա:*

*Մարիա – Թող երազեմ քո գրկում, հանգստանամ քո շվաքում,*

հեղու թող քո ոտերը լվամ, աղոթեմ քեզ համար:

Վիզեն – Քեզ համար իմ սիրտը միշտ արթուն է, իմ աղավնի: Ես քո տաք ու փափուկ բույնն եմ, միթե երջանկություն կա մի այլ բնի մեջ...

Մարիա – Չխանդես ինձ, չխանդես երբեք, քանի որ խանդը գերեզմանի պես դաժան է:

Վիզեն – Ես քեզ կսիրեմ հավատարիմ ու կրակոտ սասպերի պես, եւ եղբոր պես կփայփայեմ քեզ: Դու իմ գաղտնաբառն ես, քեզնով են բացվում իմ կյանքի էջերը:

Մարիա – Իմ սիրեցյալը հազարավորների մեջ գերազանցն է, նա ինձ մենակ չի թողնի. որքան վեհատեսիլ, որքան գրավիչ է նա իր սիրո մեջ:

Վիզեն – Իմ աղավնին, իմ կատարյալ միակն է. իր քնքշանքով զորացնում է նա ինձ: Արի գնանք դաշտերը, գիշերը ծառերի տակ անցկացնենք:

Մարիա – Մի օր քո սերը իմ բերանում լեզու կդնի, եւ քո սիրուն լալիկը խոսուն հարս կլինի քեզ համար»:

Համբույրից ու անձայն երգից հետո Վիզենը հոգու պրկումով ձգտեց հավատալ, որ Մարիան փոխադարձաբար սիրում է իրեն, եւ այն մի պարզեւ է, որ տրվում է միայն բացառիկ դեպքերում, արտակարգ քաջագործության համար: Եվ նա իրեն զգաց այն մարտիկի պես, որ հրետակոծության տակ անցել է թշնամու թիկունքը եւ այնտեղից ազատել ու տուն բերել տմարդորեն գերեվարված արքայադստերը: Նախկին հատուկ ջոկատայինն իրեն վարձատրված էր զգում, եւ նա մեքենան քշեց Խնածախից ու Ստեփանակերտից հեռու:

Արդեն երեկո էր, սառը մութը ոչ մի հաճելի բան չէր խոստանում ճամփորդներին: Վիզենը վառեց մեքենայի սրահի լույսերը եւ միացրեց ջեռուցիչը: Քիչ անց մեքենայում հաճելի մթնոլորտ էր տիրում: Մոտ կես ժամ նրանք լեռնային անտառապատ ոլորաններով ճանապարհ էին կտրում դեպի վեր, եւ Մարիայի անխոս հարց-

մանը, թե ուր են գնում, ընկերը միայն ժպտում էր եւ ասում, որ քիչ էլ համբերի, շուտով կհասնեն: Բարձրադիր շրջադարձերից մեկին կանգ առան, Վիգենը Մարիային մեքենայից դուրս կանչեց եւ ցույց տվեց ներքեւում փոված լուսաշաղախ քաղաքը. գիշերային Ստեփանակերտը նման բարձունքից Մարիան առաջին անգամ էր տեսնում: Նախ ապշեց, որ այսպիսի տեսարան կա հայրենի տարածքում, որին ինքը անգիտակ էր, ապա նրան համակեց մանկական հիացմունքը, եւ նա ակամա մի բարալիկ հնչյուն արձակեց, որ Վիգենին տարօրինակ թվալով հանդերձ, ուրախություն պատճառեց. իր լալիկը, համենայն դեպս, ձայնիվ է նաեւ, սոսկ լռությամբ չէ հագեցած: Մարիան հիանում էր լուսացույքերի մեջ ասես իրեն պրպտող քաղաքով, իսկ Վիգենը, ընկերուհու ետեւում կանգնած, նայում էր հարավային՝ Ստեփանակերտի սարահարթից վեր գտնվող բարձունքին, ուր հատուկենտ լույսեր էին վառվում. Շուշին է՝ գերված բերդաքաղաքը: Նա մտաբերեց, թե ինչպես էին ինքն ու Արմանը շաբաթներ առաջ սեւ ու կարմիր խաչեր թողնում այնտեղ. «Բայց ինչքան կդիմանան անտեր խաչերը, ինչ կարող են փոխել բերդաքաղաքի մթնած ճակատագրում»՝ տխուր խորհեց Վիգենը: Մարիային բառ չասաց իրենց տեսադաշտում ծիկրակող օտար լույսերի մասին: Մեկեն մարմնում դող զգաց վերահաս դառնությունից ու հուսաբեկությունից, եւ նա բնագրական շարժմամբ ամուր գրկեց խոսուն լռության մեջ կայտառացած «սիրուն լալիկին»: Գիշերային գեղեցիկ տեսարանի ֆոնին սիրահարները մեկ անգամ եւս համբուրվեցին եւ աշխույժ տրամադրությամբ շարունակեցին ճամփան: Տասնհինգ րոպե անց նրանք Ննգի գյուղում էին. այստեղ է Վիգենի պապական տունը, ուր ոտք չէր դրել տարուց ավելի: Մի պահ կարոտով ու մեղավորության զգացումով նայեց հին, արդեն խարխուլվող երկհարկանի առանձնատանը, ուր ոչ ոք այլեւս չէր բնակվում, եւ սիրտը ճնվեց: Տունն ասես ավելի շատ իր բնակիչների բացակայությունից էր խամրում ու ծերանում, քան սլացող ժամանակից: Վիգենին թվաց, թե մի ամբողջ դարաշրջան ուղղակի չքվում է իր

կյանքից, իսկ ինքը հեռավոր դիտորդ է եւ ոչինչ չի ձեռնարկում մայրամուտը գոնե երկարաձգելու համար:

- Հայրս էստեղ է ծնվել ու մեծացել մինչեւ Ստեփանակերտ տեղափոխվելը: Պապս ու տատս չկան... նրանց հոգիները երկնքում են, յոթ տարի առաջ են մահացել, մի շաբաթվա տարբերությամբ,- մեքենայի լապտերներով լուսավորված բակում Մարիային պատմում էր Վիգենը:- Ես հաճախ էի լինում էստեղ, դպրոցական արձակուրդների մեծ մասը, եղբորս ու քրոջս հետ, էստեղ էինք անցկացնում: Հետո սկսեցինք ավելի ուշ-ուշ գալ:

Երկհարկանի տան երկար պատշգամբի պատուհանների ապակիների մի մասը ջարդված էր. Վիգենը նոր միայն հիշեց, որ պատերազմի ժամանակ հրետակոծվել էր նաեւ հայրական գյուղը, եւ չէր կռահել, որ կարող էր վնասված լինել պապի կառուցած տունը. այն մի ժամանակ գյուղի ամենահարմարավետ ու ամենագեղեցիկ տան համարումն ուներ: Անցած դարի հիսունական թվականներին նա քարե ընդարձակ բաղնիք էր կառուցել կցաշենքի ձեով՝ իսկական հեղափոխություն գյուղական ավանդական նիստուկացում: Պապը հյուսն էր, եւ իր ոսկե ձեռքերը լավագույնս ոսկեջրել էր հենց իր «դոլակի» կառուցման ժամանակ՝ բազմաթիվ փայտե զարդանախշեր տեղադրելով պատուհանների ու դռների դրանդիների վրա: Անգամ կիսախավարում փայլկտում էր այդ ձեռաշեն գեղեցկությունը, թեպետ արդեն գունաթափվել ու հնության խորքն էր սուզվում: Մարիան ժեստերով Վիգենին հասկացրեց, որ նախազարդված տունը շատ գեղեցիկ է:

- Հա, եւ դու կլինես էս տան ամենագրավիչ զարդը,- փորձեց իր անակնկալ միտքը փոխանցել Մարիային. նա ժպտաց ու կրկին հիացած նայեց կիսալույսերով ողողված տանը, եւ Վիգենը վստահ չէր, որ իր խոսքը ճիշտ է ընկալել ընկերուհին:- Եթե խաղաղություն լինի, եկող տարի կվերանորոգեմ,- ավելի շատ ինքն իրեն խոստացավ նա, երբ արդեն միացնում էր տան էլեկտրականությունը:

Վիզենը վառեց բակի մեծ լապտերը, անջատեց մեքենայի լուսարձակները եւ բարձրացավ երկրորդ հարկ. այստեղ եւս լույսերը միացրեց, իջավ եւ Մարիային ուղեկցեց վեր: Չորս մեծ սենյակ, ուր պահպանվում է նախկին գույքը: Մարիան զարմացած նայում էր հին զգեստապահարաններին ու մահճակալներին, հայացքով զննում որմնախորշ դարակները, փայտե հին թախտը, սեղաններն ու աթոռները: Նա ավելի երկար կանգնեց մի մեծ սնդուկի մոտ, որի նշանակությանն առանձնապես ծանոթ չէր:

– Տատիս մեծ սնդուկն է, մեկն էլ ներքնահարկում կա, ավելի փոքրը: Էստեղ շատ բան կարելի է գտնել,– բացատրեց Վիզենը եւ վերցնելով որմնախորշում պահված բանալին, բացեց կողպված սնդուկը:– Կարող ես ուսումնասիրել պարունակությունը: Դու զբաղվիր դրանով, իսկ ես գնամ ու վառարանը բերեմ:

«Ինչո՞ւ, չէ՞ որ շուտով քաղաք ենք վերադառնալու»՝ մատնախոսությամբ հարցրեց Մարիան:

– Չէ, քույրիկս, էս գիշեր կմնանք էստեղ,– պարզաբանեց Վիզենը:– Մի՛ վախեցիր, դու կքնես առանձին, մահճակալների պակաս չկա: Առավոտը քաղաք կվերադառնաս նոր Մարիա դարձած... Հավատա՛մ ինձ:

Մարիան մի փոքր դողացրեց՝ ցրտի՞ց, թե՞ սպասվող ժամերից... Վիզենը հավելեց.

– Վառարանը վառեմ, քեզ համար տաք ու հաճելի կլինի:

Աղջիկը երկմտում էր. նրա հայացքը մի պահ հեռուները թռավ, ապա մտածկոտ նայեց Վիզենին ու խնդրեց՝ զանգի ընկերուհուն եւ զգուշացնի, որ... «անսպասելի հյուրընկալվել է Ննգի գյուղում եւ գիշերը կմնա այնտեղ»: Վիզենը տառի ճշտությամբ կատարեց Մարիայի ցանկությունը եւ պատրաստվում էր գնալ վառարանի ետեւից՝ օրիորդը թեւից քաշեց. գրեթե աղերսալից հայացքով խնդրեց, որ զանգի նաեւ Տեր Միսաքին եւ թույլտվություն ստանա երկուսի համար: Վիզենի դեմքին մշուշ իջավ. նրա մեջ խամոզը խուլ ճայթեց, թե՞ մի այլ անձանոթ զգացում, բայց որ Մարիայի խնդրան-

քից իրեն նեղսրտած զգաց, անկասկած էր:

- Ինչո՞ւ,- առավելագույն զսպվածությամբ հարցրեց Վիգենը:-  
Մենք հասուն մարդիկ ենք, ժամանակակից, ինչո՞ւ թույլտվություն  
ստանանք ուրիշներից:

Մարիան անդդովելի էր, պնդեց իր խնդրանք-պահանջը:  
Վիգենը զանգեց:

Քահանան խոսում էր խռպոտ ձայնով՝ մրսածություն ուներ, սա-  
կայն ի պատասխան իր որպիսությանը վերաբերող հարցին, ար-  
ձագանքեց, որ նման տկարությունների վրա պետք չէ ուշ դարձ-  
նել, ավելի մեծ ցավեր կան մեր շուրջ: Լսելով Վիգենի ու Մարիայի՝  
Ննգիում գիշերելու թույլտվության խնդրանքը, Տեր Միսաքը մի  
պահ շփոթված լռեց, ապա հնարավորինս զվարթ ձայնով ասաց,  
որ՝ «եթե դա բարի կամքով է, ապա ողջունում եմ, գիշերեք  
սրտանց, բայց որ երկուսդ էլ այդուհետ գոհ ու երջանիկ լինեք»:  
Աստված ձեզ պահապան՝ վերջում ավելացրել է քահանան:

- Տեր Միսաք, անհոգ եղեք, Մարիան հուսալի ձեռքերում է,-  
աներկբա վստահեցրեց Վիգենը:

Տեր Միսաքի թույլտվությունից Մարիան գոհ ժպտում էր արդա-  
րացված մեղադրյալի պես, որին հենց նոր սպառնում էր ամոթալի  
պատիժ: Նրա դեմքն ավելի լուսավոր դարձավ, երբ կարդաց ըն-  
կերուհու՝ հապճեպ ուղարկած հեռախոսային հաղորդագրությունը:  
Իսկ Վիգենի երեսից մտահոգության ու կասկածի մշուշը դեռ չէր  
չքացել: Բայց տեսնելով Մարիայի՝ իրեն հառած շողուն հայացքը,  
վանեց մտատանջությունը եւ շտապ իջավ ներքնահարկ: Աստի-  
ճաններով իջնելիս մտքի մի ծայրով, համենայն դեպս, փաստեց իր  
համար, որ ինքը մտնում է «արտակարգ ռեժիմով» կյանքի շրջա-  
փուլ, եւ պետք է միշտ պատրաստ լինել անակնկալ խրթին իրա-  
վիճակները խելամտորեն հաղթահարելու համար: Պատկերացրեց,  
որ իրեն սպասում է խոչընդոտավազք մարաթոնյան երկարութ-  
յամբ, բայց վախ ու տագնապ չզգաց, այլ միայն՝ ներքին ուժերի  
լարում եւ վճռականություն:

Ներքնահարկում մաքրեց թիթեղյա վառարանն ու ծխախողովակները եւ տարավ տեղադրեց վերեւի մեծ սենյակում, ապա գնաց փայտ բերելու: Պատրաստի վառելափայտ, պարզվեց, չկար, ուստի ստիպված էր բակի խորքում կիտված չոր ճյուղերից վառելիք առանձնացնել ցաքհատով: Երբ կտրտված փայտի մի մեծ կույտ առած մտավ սենյակ, զարմանքից քար կտրեց. Մարիան հագել էր հնաոճ, զմրուխտագույն, ժանյակավոր, մետաքսյա մի զգեստ եւ հիացած իրեն գննում էր կոմոդի հայելու առջեւ: Նա ետ շրջվեց ու տեսավ Վիգենին, որ իրեն էր նայում խոշորացած ու պսպղուն աչքերով, եւ անձայն ծիծաղեց աղջկական վճիտ ուրախությամբ: Վիգենը փայտակտորները դրեց վառարանի առաջ եւ կանգնեց ընկերուհու թիկունքում:

– Բայց քեզ սազում է... Դու գեղեցկությամբ ես փայլում,– զվարթագին խոսեց Վիգենը:– Իմ Նազելի տատի նման ես... իսկապես:

Եվ պատմեց, որ շորը տատի հարսանեկան զգեստն է, նա խնամքով պահել ու հագել էր իրենց հարսանիքի ամեն տարեդարձի, մինչեւ 1971 թվականը, երբ մահացավ փոքր աղջիկը՝ կրակից անզգուշաբար բռնկվելով:

Վիգենը ետեւից գրկեց Մարիային եւ երանությամբ նայեց հայելու մեջ արտացոլված զույգին: Մարիան ժպտում էր մի աստղի պես, որ կարծես նոր է հայտնվել մթնոլորտ երկնակամարի նորահայտ բացվածքում. նա գլուխը հենեց ընկերոջ կրծքին, ասես ցանկանալով իր լույսը փոխանցել նրան:

– Դե ասա, թե ով է աշխարհի ամենագեղեցիկ ու ամենահրաշալի զույգը,– հարցրեց Վիգենը: Մարիան ձեռքը դրեց, նախ, ընկերոջ, ապա իր կրծքին՝ մենք:

– Ապրեն, իսկ հիմա ասա, թե ինչը կարող է բաժանել մեզ:

Մարիան սկզբից չհասկացավ հարցը, Վիգենը դեռեւս հմուտ չէր մատնախոսության մեջ, սակայն ի վերջո նրան հաջողվեց ընկերուհուն հասցնել ասելիքը:

«Ոչինչ մեզ չի բաժանի,– բացատրեց Մարիան,– միայն մահը»,–

եւ ժպիտը վերացավ նրա դեմքից:

– Լավ, մենք տխուր թեմաներից չենք խոսի, նայենք միշտ առաջ, համ, Մարիա...

Արդեն տրտմած ընկերուհին գլխով արեց եւ նորից ժպտաց՝ երեւի միայն լալիկներին բնորոշ առդժվածային ու հմայիչ նայվածքով: Մարիան ցանկացավ մետաքսե զգեստը հանել եւ տեղավորել սնդուկում, բայց Վիգենը կանխեց նրան, խնդրեց, որ հագին պահի՝ մինչեւ կքնեն: Աղջիկը հեզորեն համաձայնեց, մի անգամ էլ նայեց իրեն հայելու մեջ, պտտվեց եւ կանգնեց Վիգենի կողքին. «Միասին վառենք վառարանը»՝ բացատրեց Մարիան:

– Լամվ,– ուրախ արձագանքեց ընկերը:

Նրանք փայտակտորները հերթով տեղավորեցին վառարանի մեջ, Վիգենը շտկեց դրանց դիրքը, ապա թուղթ վառելով՝ դրեց բարակ ու չոր ճյուղիկների տակ. կրակը արագ բռնկվեց, եւ շուտով սենյակը լցվեց այրվող փայտի հաճելի բույրով ու ջերմությամբ: Քաղաքում ծնված ու մեծացած Մարիան առաջին անգամ էր վայելում գյուղական տան տաք բուրմունքը:

«Եթե տունը դրախտ է, երեւի սա է, չէ»՝ հրճվալից հարցրեց Մարիան:

– Հա, քույրիկս, բայց էդ դրախտը պահող է պետք,– արձագանքեց Վիգենը:

Երկուսն էլ վաղուց քաղցած էին: Վիգենը Մարիային պատվիրեց՝ մի քիչ զբաղվել սենյակի մաքրությամբ, ամենուր փոշին փովել էր տիրաբար, իսկ ինքն ուտելիքի ետեւից շտապեց մոտակայքում գտնվող խանութը: Բայց այն փակ էր. նայեց ժամացույցին՝ արդեն տասն անց կես էր, գյուղում երեկոյան այդ ժամին առեւտուր անող սովորաբար չի լինում: Նա մի երկու բոպե կանգնեց փակ խանութի դիմաց՝ մտածելով, թե ինչպես լուծի հացի խնդիրը: Եվ կարծես գտավ ելքը. մոտեցավ փողոցային լապտերի տակ կանաչին տվող դարպասին ու կանչեց.

– Զորիկ...



Տան լույսը վառ էր եւ ձայներ էին հասնում ներսից: Վիզենը երկրորդ անգամ կանչեց՝ ավելի բարձր ու պահանջկոտ: Պատշգամբի պատուհանը բացվեց եւ տղամարդու հուժկու մի ձայն որոտաց.

– Ո՞վ ա...

– Ես եմ, Վիզենը... ձեր վերեւի հարեւան Հովհաննեսի թոռը, Գառնիկի տղան...

– Հա, եկա:

Քիչ անց դարպասը բացեց մոտ քառասուն տարեկան մի ջլապինդ տղամարդ՝ Ջորիկը: Նա ձեռքով բարեւեց ու զարմացած նայեց անկոչ հյուրին:

– Վիզեն... էս ի՞նչ ա պատահել գիշերվա կեսին...

Վիզենը ներողություն խնդրեց ուշ ժամի անհանգստացնելու համար եւ հակիրճ պարզաբանեց իրավիճակը:

– Երկու հոգու համար մի քիչ ուտելիք... Պարտքի տակ չեմ մնա: Ջորիկը քահ-քահ ծիծաղեց:

– Պարտքի տակ չեմ մնա... Բա ճնց, Մարկոս աղա,– խնդմնդաց, ապա լրջացավ.- Ամոթ քեզ, Վիզեն տղա, ինչի՞ մասին ես խոսում... Գնա ընկերուհուդ վերցրու՝ արի մեր տուն, մենք նոր ենք իրիկնահացը վերջացրել, բայց գիտեմ՝ դեռ կարգին ուտելիք կա... Գնա ու շուտ եկեք, Վարդուհուն կասեմ, որ սեղանը արագ պատրաստի:

– Չէ՛, Ջորիկ ախպեր, հարմար չէ ուշ ժամի հյուր գալը, համ էլ երեխաներ կան ձեր տանը, դատարկ ձեռով չեմ կարող մտնել: Շատ շնորհակալ եմ: Հասկացիր՝ հարմար չէ մեր գալը:

– Լավ, հասկացա, մի նեղրտիր, հիմա,– ասաց Ջորիկն ու փութով ետ գնաց տուն: Մի քանի րոպե անց վերադարձավ լիքը տոպրակով:

– Վերցրո՛ւ, անուշ արեք:

– Զգացված եմ անչափ, մեծ ախպեր, Աստված պահապան քեզ ու ընտանիքիդ:

– Թող Աստված ձեզ էլ պահապան լինի, երիտասարդներ...– Ու երգեց կամաց.- «Եկ այս գիշեր արթուն մնանք մինչեւ լույս»,– եւ

ընդհատեց երգը.- Հա, մի շիշ թթի օղի էլ եմ դրել, իմ քաշածն ա՛ մաքուր, թունդ: Բայց նայիր՝ ընկերուհուդ չխմացնես...

Վիզենը ծիծաղեց եւ բարի գիշեր մաղթելով՝ աճապարեց պապական տուն, ուր Մարիային գտավ տանտիկինային եռուզեռի մեջ: Նա մի հնաճ գոգնոց կապած՝ փալասը ձեռքին մաքրում էր հին աթոռները: Պատկերը զվարճալի թվաց Վիզենին. մի պահ կանգնել եւ քթի տակ խնդմնդալով հետետում էր, թե ինչպես է Մարիան ջանադրաբար փոշին հեռացնում աթոռների նստատեղերի հակառակ երեսից: Վիզենը շուրջը նայեց՝ այլեւս փոշի չէր երեսում, Մարիան գործել էր արագ ու մաքուր:

- Ապրեն, աղջիկս, հիմա գոգնոցդ հանիր, ձեռքերդ լվա, արի միասին սեղան բացենք,- ասաց Վիզենը եւ ձեռքի տոպրակը դրեց աթոռին:- Բայց ջուր չունենք, գրողը տանի, ոնց մոռացա բերել:

Մարիան արձագանքեց. «Ջուր էս գիշերվա կեսին որտեղի՞ց բերես»: Վիզենը հիշեց, որ բակ մտնող ջրատար խողովակը փչացել էր դեռ երկու տարի առաջ, եւ ինքը ժամանակ չի գտնում նորոգելու. չէ՛, պարզապես ծուլանում է:

- Աղբյուրից կբերեմ: Դու հանգստացիր, սենյակն արդեն մաքրությունից փայլում է: Վառարանը մի երկու կտոր փայտ գցիր, ես շուտով կգամ:

Վիզենն իջավ ներքնատուն, վերցրեց պլաստիկե մի ջրաման ու ցինկե հին կուժը եւ շտապեց դուրս: Գրեթե վազքով հասավ աղբյուր, հասցնելով վայելել տեղացող մանրափաթիլ ձյունը, որ նոր էր սկսել տեղալ: Այդուհանդերձ, դա կաղ մարդու վազք էր, որ ջանում էր ձիգ ու առնական երեւալ: Վիզենն ակամա նման վարքագիծ էր դրսեւորում այն պահերին, որ անց էր կացնում Մարիայի կողքին կամ հանուն նրա: Նա ձյունախառն այդ գիշեր դուրս էր եկել առանց իր «մարտական» ձեռնափայտի, նույնիսկ չզգալով դրա բացակայությունը: Միայն մի վայրկյան, երբ արդեն աղբյուրի մոտ էր, ձեռքի բնագրային մի շարժում արեց, նկատելով ոտքի տակի ցեխակոլով փալասը՝ ուզում էր հեռացնել, իսկ ձեռնափայ-

տը չկար: «Հըմ»՝ մտացրիվ արտաբերեց նա եւ աղբյուրի ծորակից թափվող ինքնահոս ջրով ողողեց ջրամանները, ապա լցրեց: Նույն փութկոտությամբ ետ դարձավ, թեպետ զգալի բեռնավորված էր: Ճանապարհին մի շիկավուն ու երկարականջ շուն հետեւեց իրեն մինչեւ պապական տան դարպասը, եւ երբ ներս էր մտել, կենդանին սկսեց հաչել: «Երեւի քաղցած է... մեզ նման»՝ անցավ Վիգենի մտքով: Կուժը սենյակ տարավ, իսկ դռան մոտ թողած պլաստիկ տարայից ջուր լցրեց պատշգամբի հեռավոր անկյունում տեղադրված լվացարանի կախովի՝ բարակ ու երկար «պտուկով» ամանի մեջ եւ կանչեց.

– Մարիան, արի լվացվիր:

Եվ իսկույն մտաբերեց՝ ղում ես կանչում... Մի երկվայրկյան մտախոհ կանգնեց, ապա աճապարանոք գնաց ներս եւ Մարիայի ձեռքը բռնած՝ եկավ լվացարանի մոտ:

– Թաթիկներդ լվա, ջանիկս,– ասաց Վիգենը եւ վերցրեց Մարիայի ձեռքերն ու լվաց: Ապա լվացվեց ինքը: Դա բավականին զվարճացրեց օրիորդին, եւ քանի որ մոռացել էին սրբիչ բերել, Մարիան բարձրացրեց գոգնոցը եւ մատուցեց Վիգենին, հետո ինքը սրբվեց:

Ջորիկն իր կնոջ հետ առատ ուտելիք էր դրել զույգի համար: Վիգենն ու Մարիան սեղանին դրեցին թոնրի երկու հաց, մի մեծ կտոր տնական պանիր, մի բանկա մածուն, կանաչեղեն, եփած «դրոշի» լոբի, երշիկ, թթու վարունգ ու լոլիկ, խնձորներ եւ ձմեռային երկու խոշոր տանձ: Վերջում թթի օղին «խոյացավ» սեղանին: Վիգենը սպասքապահարանից հանեց երկու ըմպանակ, մի ոտքի վրա վեր ձգված այն հին ըմպանակներից, որ մոդայիկ էին անցած դարի վաթսունական-յոթանասնական թվականներին:

– Կխմե՞ս ինձ հետ,– չարածճի տոնով հարցրեց Վիգենը:

«Չէ, չէ, ես օղի չեմ խմում»:

– Ընդամենը մի բաժակ, բացառության կարգով... Էսպիսի օր առաջին անգամ ենք անցկացնում, նշենք... Ոչ ոքի չեմ ասի, որ

ինձ հետ խմել ես,– համոզում ու խնդրում էր Վիգենը:

«Չէ, չեմ խմի, մի ստիպիր»՝ կտրական էր Մարիան:

– Չեմ ստիպում, խնդրում եմ... Ներիր, եթե ուզածս քո սրտով չէ:

«Հա, ուզածդ իմ սրտով չէ: Ինքդ խմիր»:

– Լավ:

Վիգենը, համենայն դեպս, լցրեց երկու ըմպանակը, եւ Մարիային խնդրեց, որ միայն զարկի. աղջիկը դրան համաձայն էր:

– Քո կենացը, Մարիա:

«Մեր կենացը»՝ եղավ Մարիայի անխոս արձագանքը: Նա իր բաժակը ցած դրեց ու նայեց, թե ինչպես է ընկերն ըմպում թթի օղին: Թունդ խմիչքից Վիգենի դեմքը թեթեւակի կնճռոտվեց, նա մի կտոր թթու լոլիկ տարավ բերանը, ինչն անմիջապես հաճելի հանգստությամբ ողողեց երեսը:

Սիրահարները կուշտ ընթրեցին: Ոչ միայն երկարաձգված քաղցը, այլեւ գյուղական անարատ սնունդը տրամադրեց, որ նրանք գրեթե իսպառ, բացառությամբ երջիկի, «ոչնչացնեն» նույնիսկ կանաչեղենի վերջին տերեւիկները, չնայած ուշ ժամին ու հոգնածությամբ: Վիգենին հաճելիորեն զարմացրեց Մարիայի լավ ախորժակը, եւ խմեց երկրորդ բաժակ օղին ու ավելի աշխուժացավ: Նա նոր փայտակտորներ գցեց վառարանը եւ ընկերուհուն բազմանշանակ հասկացրեց, որ երկար ու բովանդակալից գիշեր է սպասվում իրենց, թեւ այդ պահին չգիտեր, թե ինչպես պիտի հագեցնեն ձմեռային առաջին օրվա գիշերը: Իրենց համատեղ առաջին գիշերը:

Օրակարգն ինքնաբերաբար թելադրեց Մարիան: Սեղանը հավաքելուց հետո պայուսակից մի գիրք հանեց եւ տվեց Վիգենին՝ խնդրելով, որ նա բարձրաձայն կարդա. Վահան Տերյանի հատորյակն էր, որ վերջին շրջանում հաճախ էր վերընթերցում սիրո հովերով ներշնչված, բայց եւ ի ծնե թախճոտ ու մելանխոլիկ աղջիկը: Վիգենը անակնկալի եկավ, քանի որ նրա մտքում արդեն պտտվում էր Մարիայի հետ սիրաբանական ինչ-որ անմեղ խաղեր անելու գաղափարը եւ մի կարճ պահ մտորում էր, թե ինչպես դրանք անց-

կացնի վայելուչ ու հետաքրքիր, մինչեւ այն կարմիր գիծը, որ չի հատի, եթե անգամ կիրքը ծվատի իրեն. նրա համար չափազանց թանկ է Մարիայի կանացի արժանապատվությունը:

Վիգենը երբեք էլ գրասեր չի եղել, դպրոցական տարիներից հետո չի կարդացել ոչ մի գիրք, բանաստեղծություններ՝ առավել եւս, միայն համացանցում աչքի էր անցկացնում կարճ հոդվածներ ու լուրեր՝ հիմնականում իր երկրի ներկային առնչվող, այդպես ետ չմնալով ընթացիկ՝ լարված ու տագնապալից կյանքի իրազեկվածությունից: Նա աղոտ հիշում է միայն, որ յոթերորդ թե ութերորդ դասարանում մի շարք էրոտիկ էջեր է կարդացել ինչ-որ հաստափոր գրքից, որ իրեն է տվել համադասարանցի աչքաբաց տղաներից մեկը: Հետո այդ գիրքը շուկով փոխանցել էր կողքին նստող Սիրանույշին եւ զգուշացրել, որ դասընկերուհիներին ցույց չտա, թաքուն կարդա ու վերադարձնի: Տասն օրն անց ամբողջ դասարանը կարդացել էր այդ գրքի՝ հատկապես մատիտով նշված հատվածները: Դատելիք փորձել էր պարզել «խուլիզաններին», բայց զուր, նման դեպքերում մատնություն չի լինում՝ բոլորի սրտով էր:

Վիգենը դանդաղ թերթում էր ձեռքին հայտնված ժողովածուն, փորձում մտքի մեջ արագորեն վարժվել կոկիկ տողերին, որ ընթերցանության ժամանակ ընկերուհու աչքին վերջին անգրագետի պես չերեւար: Մարիան հուշեց, որ նա ընթերցի էջանշաններով առանձնացված բանաստեղծությունները: Վիգենը իսկույն հաշվեց՝ դրանք տասնյակի են հասնում. «Ոչինչ, շատ չեմ չարչարվի»՝ խորհեց նա եւ, կոկորդը մաքրելով, սկսեց կարդալ, սկզբից՝ դանդաղ, հատ-հատ արտասանելով բառերը, ապա ընկավ հունի մեջ, ինքն էլ անակնկալի գալով իր պարզ ու սահուն ընթերցանությունից. նման բան իրենից հաստատ չէր սպասում: Վիգենին ծանոթ էր Տերյանի անունը, դպրոցում անցել են նրան նվիրված դասընթացը, բայց քնքուշ ու թախծալի այդ բանաստեղծությունները, որ տոգորված են մաքուր ու ցավագին սիրով, նա կարդում էր առաջին անգամ, հայտնաբերում մի նոր զգայական աշխարհ, որ իր առաջ

սկսեց ծփալ Մարիայի անաղարտ ցանկությամբ:

*Քո հայացքը մոզական  
Բորբոքում է քաղցր դող,-  
Պարուրիք ինձ կուսական  
Հուզումներով քո դյուխող:  
Ինձ փաթաթվիր որպես ամպ՝  
Մութ աչքերըդ մեղմ փակիր,  
Ժպտա՛ կրքուր բերկրությամբ,  
Անցավ կյանքըս խորփակիր...  
Արյունոտիք շուրթերն իմ,  
Սիրտս խայթիր՝ ծիծաղիր.  
Թող աչքերս հեզ մեռնին,  
Կյանքս մարիր ու փախիր\*...*

Վիզենը կանգ չառավ Մարիայի նշած բանաստեղծություններն ընթերցելով, շարունակեց կարդալ նոր քերթվածներ եւ գիրքը մի կողմ դրեց լոկ այն ժամանակ, երբ տեսավ, որ «սիրուն լալիկը» աչքերը փակել ու նիհիում էր. աղջկա համար հոգնեցուցիչ էր ուշի-ուշով ու երկարորեն հետեւել մարդու շրթունքների շարժմանը՝ դրանց իմաստը ճշգրիտ ընկալելու համար, նույնիսկ եթե դրանք իր սիրելի մարդու շրթունքներն են: Վիզենը վառարանին մոտ գտնվող նախշակիր սնարով երկաթյա մահճակալին բացեց անկողինը, Մարիային գրկեց ու տարավ տեղավորեց այնտեղ՝ հանելով կիսաճտքավոր կոշիկները, իսկ զմրուխտագույն մետաքսե զգեստը թողեց հագին: Ինքը պառկեց սենյակի հեռավոր պատի տակ դրված մահճակալին՝ նախապես անջատելով պատշգամբի ու սենյակի լույսերը: Վառ մնաց միայն բակի լապտերը:

Առավոտյան առաջինը Մարիան աչքերը բացեց, որ սովոր է

---

\* Վ. Տերյանի «Ցանկություն» բանաստեղծությունը

վաղ արթնանալ. նայեց ձեռքի ժամացույցին եւ իսկույն նստեց տեղում, ապա սենյակի պատուհանից դուրս նայեց՝ լույսը բացվել էր: «Քնով եմ անցել»՝ խորհեց աղջիկը եւ մի անգամ էլ նայեց ժամացույցին՝ ութն անց տասնհինգ րոպե: Նա թռուցիկ գննեց աղոտ սենյակը, աչքը մի պահ սեւեռեց վառարանին եւ դրա մոտ դրված զույգ աթոռներին, որ կողք կողքի՝ ասես երկխոսել են ամբողջ գիշեր: Նկատեց հագի հին հարսանեկան զգեստը, քթի տակ թեթեւակի խնդմնդաց, հանեց հարսնաշորն ու տեղավորեց սնդուկում: Կապտավուն փափուկ վերնազգեստը հագնելով՝ մոտեցավ ու նայեց Վիգենին, որ թեթեւակի խոնփացնում էր անկողնում: Մարիան քնած ընկերոջը ժպտաց իր համար դեռեւս անծանոթ գորովով, ապա դուրս եկավ պատշգամբ, լվացվեց ու ետ եկավ: Նա վառարանի մեջ փայտ դրեց եւ մի երկու փորձից վառեց: Քիչ հետո ճարճատեցին թթենու փայտի չոր կտորները, եւ սենյակն արագորեն տաքացավ: Վիգենը թեթեւ ձայներից, թե՛ սենյակը պարուրող տաքությունից արթնացավ. մի քիչ ճմլկոտեց տեղում, ապա նոր հիշելով, թե որտեղ է գտնվում, թափով նստեց եւ զարմացած նայեց Մարիային.

– Ողջոյն... Իսկ ես քեզ երագում էի տեսնում,– ասաց նա՝ իր կլոր աչքերը աղջկան հառած: Մարիան ժպտաց ի պատասխան:– Կարծում էի՝ հիմա երազը կանցնի, ու ես քեզ չեմ տեսնի կողքիս:

Մարիան հասկացրեց, որ վեր կենա, լվացվի, որպեսզի ժամանակին քաղաք մեկնեն, ինքն աշխատանքի է:

– Հա, հիմա,– արձագանքեց Վիգենը: Արագ վրան քաշեց տաբատն ու սվիտերը, դրսում լվացվեց ու եկավ:– Հիմա նախաճաշիկ կանենք ու կգնանք, հա՛, ջանիկա...

Մարիան գլխով արեց, հետո՝ տարուբերեց. նա արդեն մի թեյնիկ ջուր էր դրել վառարանին, բայց թեյի համար տանը ուտեստ չկար:

– Հասկացա, մենք քաղցրեղեն չունենք թեյի համար,– ասաց Վիգենն ու մի պահ մտորեց: Ապա իջավ ներքնահարկ ու ետ եկավ

մի բանկա ձեռքին, որի մեջ քարացած մեղր կար:– Երեք տարվա մեղր է, անհւշ... Ինձ մի թեյագոգալն էլ հերիք է, իսկ քեզ,– հարցրեց Վիգենը:

«Ինձ էլ»:

– Հայրս էստեղ՝ տնամերձում մեղվափեթակներ էր պահում, երեք տարի առաջ որ մահացավ, բոլոր փեթակները... գնացին հորս հետեւից... Ես չհասցրի սովորել մեղուներ խնամելը:

«Ծոյլ»՝ նշանացի արձագանքեց Մարիան:

– Չէ, անկեղծ, ուզում էի սովորել, բայց էդ ժամանակ դեռ բանակում ծառայության էի:

«Ախ, ներիր»:

Նրանք թեյ խմեցին եւ որոշ թոպեներ մերձիմոտո նստեցին թեժացած վառարանի կողքին, ասես ուզում էին շատ ջերմություն վերցնել իրենց հետ քաղաք տանելու համար: Ապա Մարիան հավաքեց սեղանը, լվաց բաժակներն ու տեղավորեց պահարանում: Վիգենը գործի գցեց մեքենան, որ շարժիչը նախապես տաքանա, ու վերադարձավ: Մարիան արդեն հավաքում էր ընկերոջ անկողինը: Երիտասարդը մոտեցավ աղջկան՝ քնքշանքով գրկելու խորին ցանկությամբ, բայց երկմտեց մի քայլի վրա ու ետ գնաց. «Երեւի չարժե ամեն առիթ օգտագործել ու սիրո ցույցեր անել»՝ իրեն զսպելով, խոհածեց Վիգենը: Վերցրեց դեռ սեղանին գտնվող Տեղյանի հատորյակը, մտքում կարդաց երկու բանաստեղծություն, ապա իր գործն ավարտած Մարիային առաջարկեց, որ նստի իր մոտ եւ լսի մի քանի ընթերցում եւս, մինչեւ վառարանի կրակը կհանդարտվի:

«Չէ, սպասիր,– հասկացրեց Մարիան եւ պայուսակից հանեց Հին կտակարանը:– Կարդա այլ էստեղից»:

Վիգենը վերցրեց գիրքն ու նայեց բացված էջին, միառպահ աչքերը վարժեցրեց նոր գրաշարվածքին, ապա սկսեց բարձրաձայն ընթերցել: Շուտով նկատեց, որ Մարիան հիմա այլ ուշադրությամբ է հետեւում իրեն՝ ավելի ներհուն ու խանդաղատագին, քան կար երեկ՝ բանաստեղծությունների ընթերցանության ժամին, երբ նրա



աչքերը երջանիկ ու թախճանույշ շողում էին: Մոտ հինգ րոպե կարդաց, եւ Վիգենին շարունակ թվում էր, թե ինքը մի ժամանակ ասել էր այդ խոսքերն իր սիրելիին, իսկ թե որտեղից գիտեր այդ ամբողջ երգասացությունը, անվերժանելի առեղծված մնաց. «Շուրթերիցդ խորիսխի մեղր է կաթում, ո՛վ իմ հարս...»՝ միթե այս խոսքերը երեկ չէր ասել Մարիային՝ կարդում ու զարմանում էր Վիգենը:

Վառարանն արդեն հանգում-խաղաղվում էր: Մարիան Վիգենի ձեռքից զգուշորեն առավ գիրքը եւ Տերյանի հատորյակի հետ դրեց պայուսակի մեջ, ապա հագնվեցին ու ելան դուրս: Վերջին պահին Վիգենը բաճկոնի գրպանը խոթեց սեղանին մնացած փաթեթիկը: Երբ բացեց տան երկաթյա դարպասը, տեսավ՝ գիշերվա շիկավուն շունը քիչ հեռու կանգնած՝ սպասում է իրեն. նա այդ հանդիպումը կանխազգում էր, ուստի չզարմանալով՝ հանեց փաթեթիկը, ցելոֆանն ու թուղթը ետ տարավ եւ միջի երշիկը նետեց շանը:

– Զորիկը կհասկանա ու կների... Իմ ու Մարիայի անունից վայելիր, շիկ:

Կենդանին հափռեց ուտելիքը եւ, գրեթե առանց ծամելու, կուլ տվեց, հետո նստեց ետեւի թաթերին եւ աչքերը պլշեց, թե ինչպես է մեքենան դուրս գալիս ծանոթ բակից, եւ ինչպես է ճոհնչով փակվում դարպասը: Սպիտակ «Տոյոտան» շարժվեց Ստեփանակերտի ուղղությամբ: Շունը մի երկու րոպե վազեց մեքենայի ետեւից՝ որպես երախտագիտության ցույց, ապա կտրուկ ետ դարձավ եւ կորավ շրջադարձից այն կողմ, ուր արթնանում էր գյուղը ձմռան եւ նոր օրվա մշուշներին ընդառաջ:

Ճանապարհը ծյունոտ էր, տեղ-տեղ անտեսանելի մերկասառույց կար: Վիգենը մեքենան վարում էր առավելագույն զգուշությամբ, այնպես, որ վախ չզգար Մարիան: Սակայն զառիվար ոլորաններից մեկում մերկասառույցն «իր դավադիր խոսքն ասաց». դանդաղ վայրընթացով իջնող մեքենան մեկեն սղղաց ու կանգնեց ճանապարհի անպաշտպան եզրագծին, որից անդին ընկած է ձորի պես խոր լանջափոսը՝ խոշոր քարաբեկորներով: Մարիան իր բա-

րալիկ ձայնով ճչաց, ապա վախեցած նայեց ուղեկցին:

- Մի վախեցիր, ամեն ինչ լավ է,- ընկերուհուն փորձեց հանգստացնել Վիգենը,- միայն մի քիչ սղղացինք:- Նա ձեռքը դրեց աղջկա ուսին:- Մի վախեցիր, խնդրում եմ:- Բայց Մարիան դողում էր գունատված դեմքով, ատամները թեթեալի կափկափում էին:- Ամեն ինչ անցավ... էլ չենք սղղա:- Վիգենն անջատեց մեքենայի շարժիչը, մի անգամ եւս ծախ նայեց, որտեղ վտանգավոր ծորակն է, եւ մտքում գոհ մնաց, որ սպառնալիքն իր ողջ սաստկությամբ երեւում է հենց վարորդի կողմից, թե չէ Մարիայի վախը բազմապատիկ կլիներ: Բայց եւ զայրանալու առիթ ուներ.- Թյո՛ր, ես ձեր մերը... սատկել եք արգելապատնեշներ դնել:- Զայրույթն ուղղված էր ճանապարհաշինարարներին, որոնց կիսատ-պոսատ աշխատանքը վաղուց դժգոհություն է հարուցում վարորդների մոտ: Կրկին նայեց Մարիային եւ մի փոքր տագնապեց՝ աղջիկը դեռ գունատ էր: Նա բացեց ջրի պլաստիկե շիշը, որ միշտ մեքենայում պահում է, եւ մեկնեց ընկերուհուն.- Խմիր:- Մարիան մի երկու կում արեց եւ շիշը ետ տվեց Վիգենին, ապա հասկացրեց, որ արդեն լավ է զգում իրեն, եւ կարող են շարժվել:- Չէ, սպասիր, դեմքդ ջրով ողողիր, նոր գնանք,- եւ շիշը կրկին մեկնեց ընկերուհուն:

«Պետք չէ»:

- Պետք է,- պնդեց Վիգենը, բայց տեսնելով համառող ընկերուհուն, իջավ մեքենայից, դուռը բացեց ու խնդրեց, որ նա դուրս գա, ապա սիրելիի ձեռքը բռնած՝ իջեցրեց ցած: Հետո ասի մեջ ջուր լցնելով՝ շփեց Մարիայի երեսին: Եվ այդ ամենը Վիգենն այնքան արագ ու վարժ կատարեց, որ աղջիկը չհասցրեց խուսանալել:

Միառպահ Մարիան կանգնել ու նայում էր հեռուն, ուր ձյունապատ լեռնաշղթան էր, իսկ ավելի մոտ՝ ներքեւում, Ստեփանակերտը: Վիգենը նույնպես հայացքը հառեց սքանչելի բնապատկերին եւ ոգեշնչում զգաց: Նա խոր շունչ քաշեց, ապա աչքի տակով հետեւեց ընկերուհու «վերազարթնումին»: Քիչ անց Մարիան խաղաղված ու ներհուն տեսք առավ՝ ջրի շփումից, թե՛ աչքի դեմ ան-

ձայն երգող հրաշագեղ տեսարանից՝ Վիգենի համար պարզ չէր: Կարելու էր՝ որ ընկերուհին արդեն առույգ ու հանգիստ է, եւ քիչ առաջվա վախն այլեւս տեղ չունէր նրա ոչ մի զգայարանում: Ուրեմն՝ հանգիստ է եւ ասպետը:

Մարիան մատնացույց արեց դիմահայաց գտնվող բարձր սարը, որ գլխավորն է լեռնապարի մեջ:

– Մռակածն է, իսկ աջ կողմի վրա՝ Մոռվը... մշուշոտ է՝ լավ չի երեւում,– բացատրեց Վիգենը:

Աղջիկը ժպտերես նայեց ընկերոջը:

«Մռակածը քեզ նման է»՝ մատնախոսեց նա:

– Օ՛, ինչպիսի հաճոյախոսություն... Շնորհակալ եմ, ջանիկս, ինձ սարի հետ համեմատեցիր:

«Քեզ շատ վախեցրի»՝ թեման փոխեց աղջիկը մեղավոր հայացքով:

– Չէ, սիրուն լալիկ, էդ ես վախեցրի քեզ: Ների՛ր:

Վիգենը գործի զցեց մեքենան եւ ավելի դանդաղ ու զգույշ շարունակեց վարընթացը: Շուտով հասան Քոասնի գյուղ, ճանապարհի ասֆալտն այլեւս բաց ու չոր էր: Բոպեներ անց Աջափնյակ թաղամասում էին, որ Ստեփանակերտից կտրված ու մի փոքր հեռու է: Երբ «կոլցելոյին» էին մոտենում, լուսացույցի կարմիրի տակ կանգ առան, եւ Մարիան Վիգենին հասկացրեց.

«Ես գոհ... ուրախ եմ ուղեւորությունից»:

– Ես էլ,– արձագանքեց Վիգենը:

«Ես նոր մարդ եմ դարձել... քո շնորհիվ»:

Վիգենը բավականությամբ մի ակնթարթ երեակայեց, թե ինքը մի բարի կախարդ է, եւ իր զորությունն արդեն ճանաչում են նաեւ այլք: Բայց այդ միտքը նրան մեծամիտ ու անպիտան թվաց, ուստի արձագանքեց անկեղծության համեստ նոտայով.

– Դու էլ ինձ ես վերափոխել,– ասաց առանց Մարիայի կողմը նայելու, քանի որ չէր ուզում մատնել հուզմունքը, բացի դրանից, արդեն լուսացույցի կանաչն էր վառվում, եւ իրենք առաջ էին շարժ-

վում. քաղաքում բուռն երթեւեկություն էր, պետք չէ ուշադրությունը շեղել, ոլորանի միջադեպը Վիգենին լրացուցիչ զգոնության էր կոչում:

Սպիտակ «Տոյոտան» կանգ առավ եռահարկ վարդագույն շենքի դիմաց, այդտեղ է տեղավորված խուլուհամրերի ընկերության գրասենյակը, ուր Մարիան հրահանգիչ է աշխատում արդեն երկու տարի: Աղջիկն ուղղակի թռավ մեքենայից, ձեռքը թափահարեց եւ աճապարեց շենք տանող աստիճաններն ի վեր: Մուտքի մոտ ետ շրջվեց եւ գեղեցիկ ժեստով մի անգամ եւս հրաժեշտ տվեց ընկերոջը: Վիգենը հասցրեց նկատել, որ Մարիայի դեմքն այնպիսի լույսով էր ողողված, որ կարող է ծագել միայն երջանկությունից: Իսկ եթե Մարիան երջանիկ է, ուրեմն ինքը կրկնակի է երջանիկ: Գուցե հենց դա է մարդու վերածնունդը՝ խորհեց նա:

Արհեստանոց գնալուց առաջ Վիգենը տուն մտավ, մայրիկից ներողություն խնդրեց, որ երեկ խոստացած կարտոֆիլն ու չոր սոխը հիմա է բերում եւ շտապեց դուրս՝ արդեն աստիճաններից նրան հավաստիացնելով, որ նախաճաշել է:

Վարպետ Բագրատը կրտսեր գործընկերոջը դիմավորեց մտազբաղ տեսքով.

– Հին ավտոներ ներմուծելը մի օր իսկական փորձանք ա դառնալու մեր գլխին, Վիգեն տղա: Տեն՝ էս երկու օրն ինչքան փչացած մեքենա են բերել մեզ մոտ. բոլորն էլ շտապեցնում են՝ սարքի հա սարքի, ծանոթ-անծանոթ. նայի՛ր...

Վիգենը թուուցիկ հայացք նետեց արհեստանոցի մոտ կիտված տասնյակ ավտոմեքենաներին եւ հանգիստ ասաց.

– Աստծո ուղարկածն է, վարպետ Բագրատ, Աստծո օգնությամբ էլ բոլորը կվերանորոգենք՝ ժամանակին ու որակով...հը՛...

– Հը՛,– երկրորդեց վարպետը՝ տարակուսելով, թե ինչու այս տղան օրավուր հավատացյալի պես է խոսում, «մի օր խելքը թոցնելու է»:

Իսկ Վիգենը կարծում էր, որ ինքը երբեւէ այսքան աշխատու-

նակ, խելահաս, կշռադատված ու լրջմիտ չէր եղել, բայց եւ հստակ չէր հասկանում, թե այս ինչ տարօրինակ ու լուսավառ խենթութեամբ է համակված՝ սիրո՞ւց, թե՛ անորոշության ու անհայտության վախը հաղթահարելու՝ ձեռք բերած ուժից...

Սիրո իմաստուն խենթությունը Վիգենին, իրոք, եռանդ ու տոկունություն էր տալիս: Նրա հետագա օրերն անցան լարված աշխատանքի եւ Մարիայի հետ սրտառուչ հանդիպումների բավականութեամբ: Երիտասարդ սիրահարները ժամադրվում էին հիմնականում երեկոյան, երկուսն էլ ցերեկները զբաղված էին գործով: Սակայն Վիգենը մեկ-մեկ խախտում էր ձեւավորվող ավանդույթը եւ ծաղիկների մի գողտրիկ փունջ, շոկոլադի ընտիր սալիկ ու քացրավենիք կամ ինչ-որ փոքրիկ հուշանվեր առած՝ մեկեւն հայտնվում էր ընկերուհու աշխատավայրի մոտ, հեռախոսային հաղորդագրությամբ տեղեկացնում իր գալիստյան մասին. եւ այդպես մի կարճ պահ տեսակցում են իրար սիրային օրակարգից դուրս: Մարիային շատ էին հուզում ընկերոջ այդ անակնկալ այցերը, առավելս հենց այդ րոպեներին էր տեսնում Վիգենի հոգու անարատ գեղեցկությունն ու սիրո ամբողջ հմայքը, որ իր կյանքի կենսահյույթը պիտի դառնան գալիք ժամանակներում՝ ըստ աղջկական անմեղ պատկերացումների: Նման տեսակցություններից մեկի ժամանակ էլ, Ննգի կատարած ուղեորությունից տասն օր անց, Վիգենը բռնեց Մարիայի ձեռքը եւ կես-ժպիտ, կես-լուրջ դեմքով հայտարարեց.

– Էս քանի օրը ուզում եմ գալ... ձեռքդ խնդրել:

«Ի՞նչ»:– Թեպետ դա Մարիայի համար այնքան էլ անսպասելի միտք չէր, դողաց ու ցնցվեց, գրեթե լացակուրմած տեսք ստացավ:

– Հա, էլի, ուզում ենք գալ քեզ նշանել ու... տանել միանգամից մեր տուն:

«Ի՞նչ»:

– Դե, գիտես, հիմա ինչ ժամանակներ են... հարսանիք չենք կարող անել, մեր շուրջը ցավ ու վիշտ է... Մի համեստ սեղան կպատրաստենք ձեր տանը... լրիվ իմ ծախսերով: Կգանք, ձեռքդ

կխնդրեմ ու կհամբուրեմ, դու էլ կասես՝ ես իմ ասպետի հետ պատ-  
րաստ եմ գնալ՝ ուր նա կամենա:

Մարիայի դեմքին ժպիտ շողաց, նա տեսավ, թե Վիգենն ինչ-  
պես է ուզում այդ դժվարին խնդիրը թեթեւ ու անկաշկանդ դարձ-  
նել:

– Հա, քեզ համար հարսանեկան նոր զգեստ կբերեմ, բայց  
երաժշտություն չի լինելու... չենք պարելու: Կգանք մի փոքր  
խմբով... Շատ չենք կեղտոտի ձեր բնակարանը: Հետո մեր տանը  
սեղան կբացենք:

Մարիայի դեմքը մտահոգությամբ պարուրվեց:

«Ախր մեր բնակարանը նման արարողության համար պիտանի  
չէ... վաղուց ենթակա է նորոգման... Չեմ ուզում՝ ձերոնք տեսնեն  
էդ ծեփաթափ առաստաղն ու պատերը»:

Վիգենը դեռ չէր եղել Մարիայենց բնակարանում եւ չգիտեր՝  
այնտեղ ինչ վիճակ է տիրում: Նրան տխրեցրեց ընկերուհու հաղոր-  
դածը, բայց իսկույն զգաստացավ եւ իրավիճակը հարթող մարդու  
իմացությամբ հայտարարեց.

– Ոչ մի խնդիր, Մարիա, դարդ չանես, ուրիշ տեղ կանենք մեր  
նշանդրեք-հարսանիքը:

«Որտե՞ղ»:

– Դեռ չգիտեմ... մի հարմար ու դուրեկան տեղ կգտնենք: Գոհ  
կմնաս:

«Համ»:

– Երդվում եմ:

Մարիան արդեն Վիգենին էր նայում լուսաշող հայացքով:

«Լավ... Բայց հարսանեկան նոր շոր պետք չէ գնել, տատիդ էն  
զգեստը կբերես, դա կհագնեմ, ինձ շատ է դուր եկել»:

– Չէ, քոյրիկս, մեզ ի՞նչ կասեն մարդիկ... Հո գնչուններ չենք:

«Ոչ ոք ոչինչ չի ասի, էդ հարցում գլխավոր կողմը ես եմ: Եթե  
հարսանիք չկա, ուրեմն չպետք է լինի նաեւ նոր հարսանեկան  
զգեստ: Էսօր էլ կգնաս ու կբերես, կլվանամ ու կհարդուկեմ, տա-

տիղ զգեստը շատ ավելի թարմ ու գեղեցիկ կերեա... Ինքն էլ գոհ կմնա»:

– Իրոք էդպես ես ուզում, թե՛ ուզում ես ինձ նեղություն տված չլինել...

«Էդպես եմ ուզում... սրտանց»:

Վիգենը Մարիային նայեց խառը հայացքով, որտեղ հնարավոր էր գտնել գոհության ու փոխըմբռնման բոլոր նրբերանգները, ուր եւ տրտմության մշուշ կար՝ որ իր սիրելին չի վայելելու հարսանյաց հանդեսի բերկրանքը՝ ողբերգական ժամանակների թելադրանքով. «Սա էլ նրա ու իմ բախտն է... Աստծո կամոք»՝ խորհեց Վիգենը:

– Դե, ուրեմն, ամսի քսանի երեկոյան կանենք մեր սուսիկ-փուսիկ հարսանիքը: Լավ...

Մարիան մի երկվայրկյան մտածեց:

«Սպասիր, նախ, խոսիր Տեր Միսաքի հետ»:

– Բա ճնց, ես հենց հիմա վազում եմ նրա մոտ:

«Չէ, լուրջ եմ ասում... դու մի տեսակ խանդով ես նայում, երբ խոսում եմ Տեր Միսաքի մասին»:

Երիտասարդն արիություն ունեցավ բարեհոգաբար ծիծաղելու ընկերուհու դիտողության վրա: Վիգենն արդեն բավականաչափ յուրացրել էր համրերի ձեռնախոսությունը,– Մարիան հարմար պահերի պարապում էր նրա հետ,– եւ եթե անգամ աղջիկը մի երկու շարժում պակաս աներ, միեւնույն է՝ հստակ կիմանար, թե ինչ էր ցանկանում իրեն ասել քահանայի կապակցությամբ: Բայց սերը, լուսավոր խենթությունից բացի, նաեւ իմաստնություն է շնորհում մարդուն՝ Վիգենն արդեն զգացել ու ըմբռնել էր դա:

– Ես էլ եմ լուրջ ասում, ջանիկս, ես մտադիր էի քո համաձայնությունից հետո անմիջապես գնալ Տեր Միսաքի մոտ. առանց նրա օրհնության մենք անիծված կլինենք:

«Ճիշտ ես, սիրելի ընկեր»:

Վիգենը վերջապես բաց թողեց Մարիայի ձեռքը, ժպիտով ցուցություն ասաց նրան եւ աճապարեց Սբ. Աստվածամոր Հովանի

տաճար: Նա Տեր Միսաքին գտավ երիցտանը՝ ինչ-որ թղթերով տարված:

– Օրհնեցեք, Տեր Հայր,– վայելուչ տոնով ասաց Վիգենն ու առաջացավ դեպի քահանան:

– Աստված օգնական, որդիս,– արձագանքեց Տեր Միսաքը՝ տեղից վեր կենալով. նա ձեռքը դրեց երիտասարդի գլխին եւ հրավիրեց նստել, ինքն էլ տեղավորվեց կողքին:– Դե, Վիգեն տղա, ո՞նց ես, ի՞նչ կա-չկա...

– Տեր Հայր, որոշել եմ Մարիային տանել մեր տուն՝ որպես հարս... վերջնական:

– Հրաշալի,– միանգամից ուրախացավ քահանան:– Ինչո՞վ ծանայեմ ձեզ...

– Նախ, ուզում ենք ստանալ ձեր թույլտվությունն ու օրհնությունը:

– Դուք օրհնված եք Աստծուց: Իմ թույլտվությունն էլ կա ու կա, դեռ էն գլխից, երբ ապաստարանում սկսեցիր սիրահետել Մարիային: Դու հիանալի ամուսին կլինես նրա համար,– ասաց քահանան իր հայրական ժպիտով:

– Շնորհակալ ենք, Տեր Հայր... Մի նուրբ խնդիր էլ կա:

– Ասա՛:

– Մարիայենց բնակարանը կիսավեր վիճակում է, նա չի ուզում, որ մեր նշանդրեքը անցկացնենք էնտեղ. ի՞նչ խորհուրդ կտաք՝ որտե՞ղ կազմակերպենք, որ...

– Հասկացա,– իսկույն արձագանքեց քահանան եւ մի պահ մտաձմունքի մեջ ընկավ:– Համենայն դեպս, կարծում եմ՝ պետք չէ հանդիսությունների սրահ, սրճարան ու ռեստորան վարձել, դրա ժամանակը չէ... սպասիր:

Քահանան զանգեց Մովսեսին եւ խորհրդակցեց նրա հետ: Վիգենը լսեց, թե ինչպես է նկարիչը հեռախոսի մյուս ծայրից ոգեւորված ու բարձրաձայն ասում. «Էս պահին ամենահարմարը իմ արվեստանոցն է...»



– Լավ, եղբայր Մովսես, հիմա Վիզենի հետ գանք համաձայնության:– Տեր Միսաքն անջատեց հեռախոսը եւ մի երկվայրկյան սեւեռուն նայեց երիտասարդին:– Հը, ինչ կասես, Վիզեն, չընդունենք Մովսեսի առաջարկությունը... Նրա արվեստանոցն, իրոք, հիանալի տեղ է նաեւ նշանդրեքի համար:

– Հա, իրոք... Համաձայն եմ:

– Ուրեմն՝ ամսի...

– Դեկտեմբերի քսանին, երեկոյան վեցին:

– Բարի. դեկտեմբերի քսանին, երեկոյան ժամը վեցին հավաքվում ենք քո եւ Մարիայի նշանդրեք-հարսանիքին:

– Կգաք ձեր տիկնոջ հետ:

– Բա ո՞նց...

– Հա, մի հարց էլ, Տեր Հայր. նախքան երեկոն, ցանկալի է, որ էդ օրը ցերեկով գանք եկեղեցի՝ ձեր օրհնանքը ստանալու:

– Իհարկե՞,– զվարթ արծագանքեց քահանան եւ գրասեղանից վերցրեց նոթատետրը: Վերջին էջն աչքի անցկացնելով՝ ասաց.– դուք կգաք... ժամը երեքին, հարմար է...

– Հա, Տեր Հայր:

– Ես դեկտեմբերի քսանին... կեսօրին սգո արարողություն պիտի վարեմ... Անընդհատ նոր աճյուններ են գտնում... Խեղճ տղաներ,– ծանր հոգոց հանեց Տեր Միսաքը:

Վիզենը բռնեց սեղանին հանգչող քահանայի ձեռքը եւ որպես քաջալերանք՝ սեղմեց եւ միառժամանակ պահեց իր կոշտ ափի մեջ: Տեր Միսաքը պատուհանից դուրս էր նայում երախտագիտության աղոտ ժպիտով. պետք չէ, որ իր տանջանքի ու հուզմունքի խորքերը տեսնի երիտասարդ ընկերը:

Որքան էլ տրտմության շուքը զգացվում էր, դեկտեմբերի քսանի երեկոն արվեստանոցում անցավ ոգեշունչ մթնոլորտում: Մովսեսը տանտեր հոր պես ջանք չխնայեց, որ ներկաներն իրենց զգան որպես կարեւոր ու գեղեցիկ արարողության լիարժեք մասնակից-

ներ. հարեւան խանութպան Վռամի, սանուհիների եւ օգնության եկած երկու կանանց հետ տեղադրեցին սեղաններն ու աթոռները, սպասքեղենն ու անձեռոցիկները: Հետո եկան Վիգենի բարեկամները, եւ նրանց բերած սննդարար ու հարգի ուտելիքը (բացառությամբ ավանդական խորովածի, այն ավելորդ տոնականություն էր հաղորդելու արարողությանը), խմիչքն ու ըմպելիքը պատշաճորեն դասավորեցին սեղանների վրա: Միջոցառումից երկու ժամ առաջ հայտնվեց Արսենը եւ սահուն միացավ պակադրությունը սպասարկող անձնակազմին. նա առաջին անգամ էր այցելում արվեստանոց՝ Մարտակերտում աշխատանքի անցնելուց հետո: Արսենը եկել էր «պատահաբար», իրականում Սոֆիկն էր նրան տեղեկացրել, որ «հետաքրքիր նշանդրեք է սպասվում», այդպես ականազայթակղել ու քաղաք էր բերել արդեն երկու շաբաթ չբեռացող իր երկրպագուին: Բայց եւ երիտասարդ նկարիչն էր ուզում անակնկալ մատուցել Սոֆիկին ու Մովսեսին, նաեւ՝ Վիգենին, որի հետ հասցրել էր ընկերանալ, եւ իր հետ որպես հարսանեկան նվեր էր բերել մի հրաշալի յուղաներկ կտավ, որ օրեր առաջ էր նկարել Մարտակերտում: Պակադրության սրահն ընդհանրապես հաճելի ու տրամադրող էր. ներկաները շրջապատված էին բազմաթիվ ուշագրավ նկարներով, քանդակներով ու կոլաժներով, իսկը՝ հանդես էր պատկերասրահի մեջ: Իսկ նորապսակների համար առանձնացված ծաղկազարդ սեղանի ետեւի պատին փակցված էր մի խոշոր գունանկար՝ տղամարդու եւ կնոջ երջանիկ գրկախառնություն պատկերող, որ Մովսեսն ստեղծել էր մի շնչով, իբրեւ միջոցառման ձեւավորում եւ հաճելի խրախուսանք՝ երիտասարդներին: Մի պահ Արսենն ու Սոֆիկը մեկտեղ նայում էին այդ գունանկարն ու քթի տակ քչփչում, դա նկատելով՝ Մովսեսը մոտեցավ եւ փոքր-ինչ խորհրդավորություն հաղորդելով խոսքին, հայտարարեց.

– Ովքեր կարողանան էդպես գրկախառնվել ու ամուսնանալ՝ մի ոսկե մատանի իմ կողմից:

– Մենք կաշխատենք հիշել ձեր խոստումը, վարպետ,– իր ու

Սոֆիկի անունից աշխույժ արձագանքեց Արսենը:

Թեպետ փոքր ու անաղմուկ արարողություն էին ծրագրել, երեկույթին ներկայացել էր մի լավ բազմություն՝ երկու տասնյակից ավելի բարեկամ-ընկերներ Վիգենի կողմից՝ մոր գլխավորությամբ, եւ մի համեստ խումբ Մարիայի կողմից՝ քեռու եւ մորաքրոջ ընտանիքները, ընկերուհի Մարգոն, աշխատավայրից երեք հոգի, հարեանուհին: Հարսիկի ավագ մորաքույրը Երեանից չէր ժամանել վատթարացած առողջությամբ, թե՛ վախի պատճառով՝ Մարիան էլ որոշակի չգիտեր: Համենայն դեպս, չեկած մորաքրոջը չէր մեղադրում, հասկանում էր, որ ցրտող ձմռանը ճափորդելը հեշտ չէ, հատկապես, որ պիտի անցնես երկար ու հոգնեցուցիչ, հիմնականում լեռնային եւ ոչ անվտանգ ճանապարհ, նաեւ՝ հսկիչ ուղեկալների միջով: Եթե անգամ բացակայեին ներկայացած բարեկամները, Մարիան իրեն խոցված ու արհամարհված չէր զգա, քանի որ այստեղ էին իր ու Վիգենի համար թանկագին դարձած մարդիկ, որոնք նստել էին նույն սեղանի շուրջ՝ նորապսակներին հարող հանձնախմբի անդամների, չէ՛, զգոն թիկնապահների պես. նրանք են՝ «ապաստարանցիներ» Տեր Միսաքը, Մովսեսը, մանկավարժ Սիմոնը, գնդապետ Վարդանյանը, Քեռին, նաեւ՝ Արսենը Սոֆիկի հետ. այս վերջին համալրումը եղավ Մովսեսի առաջարկությամբ եւ Տեր Միսաքի օրհնությամբ:

Ժամը վեցին արվեստանոց մտան Վիգենն ու Մարիան՝ թեւանցուկ ու զուսպ. նրանց ուղեկցում էր Արմանը՝ կնոջ հետ: Սրահում լռություն տիրեց, եւ բոլորը տրտում-հիացական հայացքները հանեցին նորապսակների վրա: Մարիան Վիգենի Նազելի տատի զնրութատագույն մետաքսե զգեստով էր, իսկ փեսացուն հագել էր սեւ կոստյում եւ սպիտակ վերնաշապիկ: Հարսանեկան ոչ մի պիտույք չկար նրանց վրա, թեպետ կարելի էր, օրինակ, պսակ դնել Մարիայի գլխին, ինչպես ցանկանում էր Վիգենը, բայց հարսիկը հրաժարվեց. «Մեր պսակադրության տասերորդ տարեդարձին պսակ էլ կդնեմ, նոր շոր էլ կհագնեմ, եթե խաղաղություն լինի...»՝

իր երգեցիկ մատները խաղացնելով՝ ասել էր Մարիան: Այնուհանդերձ, կանացի սեթեւեթանքն ու չարաճճիությունը նրա մեջ գլուխ բարձրացրին, եւ նա եկեղեցում Տեր Միսաքի օրհնությունը ստանալուց հետո, պսակադրությունից ընդամենը մեկուկես ժամ առաջ, Վիգենի հետ ձեռք ձեռքի վազել էր մոտակա գեղեցկության սրահը եւ իր երկարավուն մազերը կտրել *կանե* սանրվածքի ոճով: Այդպես նա շատ ավելի թարմ ու հրապուրիչ տեսք էր ստացել՝ հարուցելով փեսացուի հիացմունքն ու վերացական խանդը: Ծնողներից զուրկ, խլության ու համրության ծուղակում հայտնված քսանամյա աղջիկն այդ քայլով ձգտել էր որբի ու խղճահարվածի պես չերեւալ, այլ մեկը, ով կարող է ինքնուրույն տնօրինել իր բախտը, էությունը, հոգին ու արտաքինը: Զույգն, անտարակույս, բավականին գրավիչ ու յուրատիպ էր՝ նրանք դիտվում, աչք էին շոյում: Սակայն նորապսակների հանդիսավորությունը ոչ այնքան արտաքին հմայքի ու փոխլրացման մեջ էր, որքան՝ ներքին բովանդակության, որի հուզիչ իմաստը հիանալի գիտեին հրավիրյալները: «Գեղեցիկ, աննման զույգ է»՝ Արսենի ականջին փսփսաց Սոֆիկը, ում լավ տրամադրվածությունը բարի նշան համարեց երիտասարդ նկարիչը. Սոֆիկի եղբոր աճյունը դեռեւս չէին գտել, եւ աղջիկը ընկճված ու տխուր էր, սակայն ուժ էր գտնում տեսնելու եւ գնահատելու աչքի առաջ հանկարծակի ալիքվող գեղեցիկն ու վսեմը: Կար եւս մի ուշագրավ հանգամանք. պսակադրության քավորն Արմանն էր, ինչպես եւ նրան խոստացել էր Վիգենը Շուշի հետախուզության գնալու ճանապարհին, եւ շատերն առաջին անգամ էին դպիրին տեսնում քաղաքացիական հագուստով. մուգ վանդակավոր կոստյումի մեջ եւ փողկապով նա, իրոք, վայելչատես էր, ինչը զարմացնում էր հատկապես նրա նորադարձ կնոջը, ով ստեպ-ստեպ կողակցին էր նայում գլուտ արածի պես: Դպիրն իր քավորական բարձրության վրա է գտնվել՝ նա հարսին նվիրել է ոսկե ապարանջան, որ խոստացել էր Վիգենին հետախուզության օրը: Բայց այն գնել է պարտքով. «Ամեն ինչ շուտով կկարգավորվի, ես գումարներ կվաստակեմ,

Աստված մեծ է, ինձ կօգնի»՝ ասել է նա պարտատիրոջը՝ հորեղբոր որդուն: Պարտքի մասին տեղյակ չէր Արմանի կինը, ով մեկ օր առաջ էր երեքամյա դստեր հետ փոշմանած վերադարձել ամուսնու մոտ, որից հեռացել էր երկու տարի առաջ եւ հանգրվանել Էջմիածին քաղաքում: Եկել եւ միանգամից քավորկնոջ պատվավոր պարտականություն էր ստանձնել:

Պսակադրության սեղանապետը Տեր Միսաքն էր. ողջ երեկոն անցավ նրա գեղեցիկ բարիտոնի ներքո: Նա ելույթ էր ունենում վերաստաժավորված հանդիսավարի պես՝ գործի նետելով իր ամբողջ տաղանդն ու ավյունը, ասես դրանից էր կախված ամենքի հետագա ճակատագիրը: Քահանան տեղին, իմաստալից ու բազմախորհուրդ կենացներ էր հիշատակում, ասմունքում, շարական ու Կոմիտաս երգում. առանց նվագախմբի ու երաժշտության հավաքույթը նա վերածել էր գեղարվեստական մի փայլուն հանդեսի, որին ականատես լինելն անկեղծ բավականություն կարող էր պատճառել սգավորին ու երջանիկին, վիրավորին ու առողջին, հավատավորին ու անհավատին, անտարբերին ու հմայվածին, մեծին ու փոքրին: Նրա խոսքը համակ օրհնություն ու օվսաննա էր, որ լիաբուռն բաժին էր հասնում ոչ միայն նորապսակներին, այլև մյուս ներկաներին, անգամ՝ բացականերին:

– Մի հավատացեք մահվանը, հավատացեք կյանքին ու Աստծուն,– իր կենացներից մեկում իմաստաբանել է Տեր Միսաքը:– Մի վարժվեք պարտությանը, հետամուտ եղեք հաղթանակին ու վերածնությանը: Մի ընկճվեք դժբախտությունից, երջանկության նոր ուղիներ բացեք: Մի հանդուրժեք տմարդներին ու խաչփուլներին, պատվեք բարեսիրտ ու արարող մարդկանց: Մի հանդուրժեք զավթիչներին ու մատնիչներին, պանծացրեք նվիրյալներին ու հերոսներին: Մի հաշտվեք անկումների հետ, ձեզ նոր թռիչքներով խանդավառեք: Մի թաղվեք մաղձի ու ատելության մեջ, ձեր սիրո երկիրը կառուցեք... Երբ սերն է շարժվում առաջ, պատերազմը նահանջում է, վիատներն առույգանում են, ընկածները՝ ելնում... Ապրեք ձեր

սիրելիների ու ձեր երկրի անունը կանչելով...

Եվ Վիգենին ու Մարիային մեկ անգամ ես հիշեցրեց, որ սերն ամենահիասքանչ երգն է աշխարհի, եւ այն պետք է երգել գիշեր ու տիվ, կյանքի ու ժամանակի յուրաքանչյուր պարույրում:

– Ես իմ սիրեցյալին եմ, եւ իմ սիրեցյալն իմն է... Նա իմ պարտեզի մեջ է իր դեմքը ցողում,– այսպես է նաեւ երգասել քահանան, մի երգ, որին արդեն ծանոթ էին նորապսակները: Երբ լսեցին այդ խոսքերը, նրանք միմյանց նայեցին սիրո լազուր հայացքով եւ ներշնչված ձայնակցեցին Տեր Հորը, բայց՝ անծպտուն, մտքի ծաղկազարդ դաշտերում վազվզող սիրահարների պես.

*«– Ինձ քո սրտի վրա, քո բազկի վրա կնիքի պես դիր...»*

– *Որքան գեղեցիկ եւ որքան քաղցր ես դու, իմ սեր, բերկրանքի համար ես դու...»*

Եվ կար մի դրվագ, որ այլ նախշերով ու հույզերով զարդարեց երեկոն. պերճախոսեց, քաղցրախոսեց Քեռին՝ ի ցույց հանելով եղբայրական ու հայրական վառ զգացումներ: Բայց այդ ամենը չբավարարեց նրան՝ խոսեց ու... պարեց մենակ, առանց երգ ու երաժշտության, պարեց սեր ու նվիրում, տառապանք ու միայնություն, պարեց անկում ու վերելք, պայքար ու հաղթություն, պարեց իր ու շատերի կյանքը: Դա շարժուն մարմնի թատրոն էր, որտեղ ամենքի ցավն ու ոգորումը կար: Երբ հոգնեց վերջապես, հեւալով ասաց.

– Էս արնաթաթախ երկրի վրա պիղծ է ամեն ուրախություն, եթե այն չի պսակվելու սիրով ու ընտանիքով, եղբայրությամբ ու միաբանությամբ, հավատով ու հավատարմությամբ...– ասաց ու անձայն արտասվեց: Քեռու փխրուն ու զգոն հոգին այդ պահին սլանում էր նվիրական բոլոր բաղձանքների ետքից:

Հանդիսությունն ավարտվեց գիշերվա կեսին: Նախ, հեռացան նորապսակները՝ քավորի ու քավորկնոջ հետ, ապա եւ՝ մյուսները: Կանանց ու տղամարդկանց մի խումբ, ներառյալ քահանայի տիկինը, արագ հավաքեցին սեղաններն ու լվացին ամանեղենը: Նրանք շուտով նույնպես գնացին՝ մնացյալ գործը թողնելով վաղվան: Ար-

վեստանոցի սրահում մնացին Տեր Միսաքն ու Մովսեսը: Քահանան բավականաչափ հոգնել էր երկար հանդիսավարությունից, սակայն խանդավառությունը տեղն էր: Նա թթի օղի լցրեց իր եւ Մովսեսի համար:

– Մովսես եղբայր, կրկին քո կենացը, հիմա ասում եմ առանձին, ընկերաբար ու եղբայրաբար. դու ես էս հավաքույթի իրական կնքահայրն ու հովանին, գուցե... մասամբ եւ ես, բայց քո զորակցությունն ունի հենց էն համն ու հոտը, որ փափագում ենք վայելել բոլորս... Աստված մեզ պահապան:

– Թույլ տուր՝ ձեր կենացը խմեմ, Տեր Միսաք. առանց ձեր ներկայության ես մի թեւանի ծիծեռնակ կլինեի լոկ:

Մովսեսն ավելին չասաց, թեպետ կարող էր եւ, իրոք, շատ ասելիք ուներ Տեր Միսաքին, բայց փոխադարձ գովքով տարվելն անտեղի համարեց, որքան էլ այն լիներ արդար, հիմնավոր ու աստվածահաճո: Նրանք պարպեցին թթօղու բաժակները եւ թթու կաղամբի կտորով մեղմեցին վառվող կոկորդները: Հետո դուրս եկան փողոց: Մովսեսը դուռը կողպեց, բայց արվեստանոցի ներսի լույսերը թողեց վառ, նաեւ պատուհանների շերտավարագույրները թողեց բարձրացված.

– Էհ, թող էս գիշեր արվեստանոցն արթուն մնա մինչեւ լույս... Համ էլ տեսնողը թող տեսնի, որ կյանքը մեռած չէ մեր քաղաքում:

Տեր Միսաքն ու Մովսեսը քայլեցին մինչեւ Աբ. Աստվածամոր Հովանի տաճար՝ ճանապարհին նկատելով, որ քաղաքի անհանգիստ երթուղարձը չէր մարել այդ ուշ ժամին: Նրանք տաճարի բակում կանգ առան եւ, ասես նախապես պայմանավորված, միաժամանակ նայեցին վեր. ձմեռային գիշերվա երկինքը սառն ու պարզ էր՝ սակավաստղ ու անլուսին: Մովսեսին վատ կանխագագում պարուրեց, բայց այն վերագրեց սնահավատությանը, ուստի հանգիստ ասաց.

– Աչքիս աստղերը պակասել են երկնքում, Տեր Հայր:

– Հա... Պիտի պակասը լրացնենք մեր ու Աստծո օգնությամբ:– Քահանան մի քանի վայրկյան եւս գննեց անհունի խորքերը, ապա

հայացքը վերեւներից վար բերեց եւ ուղղեց տաճարի կողմը. նա միառուպահ սեւեռովեց լամպերի ու լապտերների դեղնավուն լույսերի տակ կարմրին տվող մեծաշուք շինության վրա եւ, գաղտնիքը բացահայտել ցանկացողի տրամադրությամբ, շրջվեց զրուցակցի կողմը:– Տաճարին նայիր, Մովսես, եկեղեցին լուսավորող լամպերը սովորականից աղոտ են ցոլում, իսկ տուֆի մեջ սեւն ավելի է ընդգծվում, կարծես «առաջին ջութակը» հիմա նա է պատերին...

Նկարիչը զարմացական հաստատեց քահանայի դիտարկումը:

– Հա, ճիշտ եք, լույսերը գունատ են, սեւն էլ շատացել է կարմրավուն տուֆի սալիկներին... Չգիտեի, որ էդքան դիտունակ եք, Տեր Միսաք:

– Դա ժամանակավոր երեւոյթ է, եղբայր Մովսես, չանհանգստանաս, շուտով ամեն ինչ կփոխվի, եւ լույսերը դարձյալ վառ ու ազատ կցոլան, իսկ տուֆի սեւը մեծամասամբ կփակվի քարի մեջ:

– Իրո՞ք,– թերահավատորեն արծագանքեց Մովսեսը:

– Այո, չկասկածես, եղբայր: Մեր տաճարն ունի մի զարմանալի-գերազանց հատկություն, որի մասին գիտենք միայն ես եւ դպիր Արմանը. ի դեպ, էդ տղայի հոգին շատ սուր աչքեր ունի... Ուրեմն, մեր տաճարը, հիմնարկեքի օրից, իր պատերի մեջ ու խորանում մաքուր-ընտիր շողեր է պահուստավորում էն լուսափնջերից, որ իրեն են ընծայում հավատավորները, եւ նրանք, որոնց ոգեկոչում են իր գմբեթի տակ: Տաճարն ասես լինի մի կուտակիչ-պահուստավորող, որ լույս է ամբարում սեւ, դժվարին ժամանակների համար, որպեսզի անձեռնմխելի պաշարի պես կուտակած էդ ազնվական ցուլքերը կրկին բաշխի ամենքին, երբ դրա կարիքը լինի, որպեսզի ոգու եւ լույսի քաղց չտարածվի... Ուրիշ կերպ ասեմ՝ նա ունի լուսաճաճանչների իր պահուց գորքը, որ ծառայության է անցնում մթին ու մռայլ օրերին: Էդ լույսը շատ զորեղ է, ցրվում է մեր քաղաքով ու երկրով մեկ, եւ երկրացիներին ու կերտվածքներին լիցքավորում նոր պայծառությամբ, գծերով ու կամքով... Ես էդ երեւոյթը նկատել եմ 2016-ի ապրիլին, երբ մեր սահմաններին բռնկված չորսօր-



յա կռվից հետո տաճարի պահուց զորքը արագորեն լուսավառել էր մոռայած բյուր հոգիներ:

– Իսկ ինչո՞ւ տաճարը մինչ օրս ծառայության չի կոչել էդ... ձեր ասած՝ պահուց զորքը... Բավական օրեր են անցել պատերազմից հետո... մոռայլ ժամանակները ձգվում են դեռ,– անհամբեր նկատեց նկարիչը:

Տեր Միսաքը մոտեցավ եւ աջ ձեռքը դրեց տաճարի մուտքի եզրապատին, ապա ակնջը դրեց՝ ասես ստուգելու պատի շնչառությունը: Հետո ետ քաշվեց այնքան, որ կարողանա տեսնել եկեղեցու գմբեթը. քահանան ակնդետ վեր նայեց մի քանի վայրկյան, ապա վստահ ծայնով ասաց.

– Տաճարն իր պահուց լույսերն արձակում է, դրանք հիմա ուղղված են երկրի հեռավոր ու վիրավոր վայրերին: Երկիրը ստանում է այն, ինչ պահ էր տվել տաճարին:

– Ուզում եք ասել, որ ճակատագրական պահերին երկիրը ոգեպետ խտանում-ամփոփվում է տաճարում...

– Դո՞ւ ասացիր, եւ ես միանում եմ ձեր հայեցումին... Եթե հանկարծ պահուստային լուսազորը սպառվի՝ դեռ չամոքած մխացող բոլոր վերքերը, ապա տաճար-երկիրը «մարտադաշտ» կուղարկի ձեզ, ինձ, մանկավարժ Սիմոնին, գնդապետ Վարդանյանին, Վիգենին, Մարիային, մյուսներին...

– Բայց մի՞թե մենք զորակոչված չենք...

– Էդպես էլ կա, եղբայր, մենք զորակոչված ենք, բայց ավելին անելու կարիք է լինում երբեմն... Տա Աստված, որ էդ կարիքն առանձնապես չզգացվի:– Քահանան ծանր հոգոց հանեց, ապա վերստին անդրադարձավ լուսաճառագմանը:– Էդ արձակվող լուսափնջերից տաճարը դեռ բաժին չի հանում իր շրջապատին, դրա ժամանակն էլ շուտով կգա, եւ ամեն բան կցուլա պայծառության մեջ՝ մեր բաղձանքի, կամքի, տների ու բնակավայրերի հետ: Չէք հավատում...

Մովսեսն անչափ ցանկացավ հավատալ քահանայի պայծառա-

տեսությանը, որ հիշեցնում էր առասպելի ու ֆանտաստիկայի մի ներհյուս բանվածք: Եվ ակնթարթորեն խորհեց, որ մարդ ապրում եւ փթթում է իր երեւակայության՝ ֆանտազիաների ուժով ու գեղեցկությամբ, նաեւ երկիրն է այդ օրենքով գոյում ու զորանում: Որքան էլ ժամանակները լինեն դժնդակ ու անխոստում:

2020 թվականի դեկտեմբերի քսանն էր, պատերազմի ավարտից քառասուն օր անց:

նոյեմբեր, 2021 – ապրիլ, 2022

# ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

## Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ծնվել է 1961թ. հուլիսի 5-ին, Արցախի Մարտունու շրջանի Մոս գյուղում:

1978-ին ոսկե մեդալով ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

Երեսնում ստացել է բարձրագույն տեխնիկական կրթություն: Զուգահեռաբար, հասարակական հիմունքներով, ձեռք է բերել լրագրողական որակավորում: 1984-ից զբաղվում է բացառապես գրական, լրատվական եւ հրատարակչական գործունեությամբ:

Խմբագրական պատասխանատու պաշտոններ է վարել Արցախի հանրային ռադիոյում, ՊԲ «Մարտիկ» եւ «Ակունք» թերթերում: «Ազատություն» ռադիոկայանի ներկայացուցիչն էր Ստեփանակերտում 2000-2005թթ.: ԱՀ կառավարությունում 2008-2015թթ. ղեկավարել է հասարակայնության հետ կապերի վարչությունը:

1998-ին հիմնադրել եւ տնօրինում է «Ոգի-Նաիրի» գեղարվեստի կենտրոնը (Ստեփանակերտ): «Գեղարմ» գրական-թարգմանական հանդեսի հիմնադիր-խմբագիրն է:

Բանաստեղծական 18, թատերագրական եւ լրագրագիտական մեկական գրքի, բազմաթիվ էսսեների եւ հրապարակախոսական հոդվածների հեղինակ է:

Հ.Ալեքսանյանի ստեղծագործությունները թարգմանաբար լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, պարսկերեն, ֆրանսերեն, գերմաներեն, սերբերեն, չինարեն, ուկրաիներեն, բուլղարերեն, իսպաներեն, ռումիներեն եւ լեհերեն:

Ծավալուն թարգմանություններ է կատարել համաշխարհային պոեզիայի մի շարք հեղինակներից: Նախաձեռնել է պոեզիայի դեկորային-թատերական ցուցահանդեսներ:

Հայաստանի գրողների միության՝ Դ. Վարուժանի անվան մրցանակի(1996) դափնեկիր է: Արժանացել է հանրապետական ու միջազգային գրական այլ մրցանակների:

Մասնակցել է Ստրուգայի (Մակեդոնիա), Պոզնանի եւ Վարշավայի (Լեհաստան), Երեւանի (Հայաստան), Ստեփանակերտի (Արցախ), Ցինհայի եւ Չենդուի (Չինաստան), Մեդելինի (Կոլումբիա) պոեզիայի միջազգային փառատոներին եւ թարգմանչական հեղինակավոր մի շարք համաժողովների Միակվայում եւ Պեկինում:

Իրագործում է հրատարակչական նախագծեր:

Բանասիրական գիտությունների թեկնածու 1:

Ապրում է Ստեփանակերտում եւ Երեւանում:

#### **Հ. Ալեքսանյանի հրատարակած հեղինակային գրքերը**

«Կենսադաշտ» – 1989, Երեւան

«Ամառն Ամարասում» – մանկական, 1990, Երեւան

«Խրախճանք» – 1991, Ստեփանակերտ

«Վարդի խոռվություն» – 1994, Ստեփանակերտ

«Անկման սիմետրիան» – 1996, Երեւան

«Խորանարդներ նորին գերազանցությամբ» – 1997, Ստեփանակերտ

«Եզրային ասացումներ» – 1998, Թեհրան

«Լիալուսնի սարկոֆագ» – 2000, Բեյրութ

«Պայմանաասքեր haM ինտերգրքից» – 2003, Ստեփանակերտ

«Բանի բարիտոնը: Երկրի բարիտոնը» – 2007, Ստեփանակերտ

«Որպես մի դարձող Բանազավր» – 2011, Ստեփանակերտ

«Չճանաչված երկրի լրատվությունը» – 2011, Ստեփանակերտ

«...Շառաչը Մայրաշխարհի» – 2012, Ստեփանակերտ

«Չի տեղավորվում թախիծս ոչ մի երկնքում» – (հայերեն–

անգլերեն երկլեզվյա ժողովածու) – 2012, Ստեփանակերտ

«Երկինք Նաիրի» – 2013, Ստեփանակերտ

«Ոգու մատրիցա. շաղկապներ ասացման հուններից» –

2014, Ստեփանակերտ

«Ոսկրե երկնքի տակ» – 2017, Ստեփանակերտ

«Խոսքազավրի երկիրը» (ռուսերեն, Страна Словозавра) –

2019, Միակվա

«Հայկական էլեգիաներ» (սերբերեն, Armenske Elegije) –  
2020, Սարաեւո  
«Թատերախաղեր» – 2021, Ստեփանակերտ

### **Թարգմանական գրքեր**

Իոսիֆ ԲՐՈՂՄԿԻ. «Տեղատարափի շայունը» (Ն.Աթաբեկյանի,  
Ա.Եփրեմյանի, Շ.Մկրտչյանի հետ համահեղինակությամբ) –  
2011, Ստեփանակերտ  
«Սիրիուսի սրնգահարները» (Ն.Գումիլյով, Վ.Խլեբնիկով,  
Վ.Խոդասեիչ) – 2012, Ստեփանակերտ  
Հենրիխ ՍԱՊԳԻՐ. «Զուգահեռ մարդը» – 2014, Ստեփանակերտ  
Ռուս կոնցեպտուալ պոեզիա (Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,  
Լ.Ռուբինշտեյն) – 2014, Ստեփանակերտ  
Կամուրջների խռովությունը. Մետամետաֆորիստներ  
(Կ.Կեդրով, Ե.Կացյուբա, Ա.Պարշչիկով, Ա.Երյոմենկո,  
Ի.Ժդանով) – 2015, Ստեփանակերտ  
Արդի ռուսական վերլիբո (անթոլոգիա, 22 հեղինակ) –  
2015, Ստեփանակերտ  
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա, 21 հեղինակ) –  
2016, Ստեփանակերտ  
Զժու Ցգի-յան. «Երազ ծովի մասին» – 2016, Ստեփանակերտ

*Հեղինակի հասցեն.*

*Ստեփանակերտ, Հեքիմյան փ. փուն 18, բն.31  
Երևան, 0022, Ավան-Առինջ, 2-րդ միկրո, շ.1/11, բն.7  
Հեռախոս. +374 97252323, +37494 259161  
Էլ.հասցե. hrantalex@rambler.ru*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
Գլուխ 1.....	9
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԶՈՂԵՐԻ ՊԵՍ .....	9
Գլուխ 2.....	30
ԿԱՐՄԻՐ ՈՒ ՍԵՎ ԽԱՉԵՐԻ ՔԱՂԱՔԸ .....	30
Գլուխ 3 .....	72
ՄՈՎՍԵՍ: ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ .....	72
Գլուխ 4 .....	120
ԱՃՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԽԱՐԴԱՆՔԸ.....	120
Գլուխ 5 .....	144
ՏԵՐ ՄԻՍԱՔ. ԱՆՆԿԱՏ ՓՉՈՂ ԶԵՓՅՈՒՌԸ.....	144
Գլուխ 6 .....	198
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՏՐՈՆԸ .....	198
Գլուխ 7 .....	243
ՀԵՏԱՊՆԴՈՂ ՈԳԻՆԵՐ .....	243
Գլուխ 8 .....	282
ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄՈՒԺ .....	282
Գլուխ 9 .....	307
ՈՒԽՏԻ ԱՐՁԱՆԻ ՇՈՂՔԸ.....	307
Գլուխ 10.....	330
ՔՈ ԱՐՅԱՆ ԵՐԿԻՐԸ.....	330
Գլուխ 11.....	351
ԱՆՁԱՅՆ ՍԻՐՈ ՌԻԹՄԵՐԸ .....	351
ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ.....	387

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ՏԱՃԱՐԻ ՊԵՇՈՒՅ ԶՈՐՔԸ

Վեպ

Հրատ. խմբագիր՝

Էջաղրումը՝

Սրբագրիչ՝

Կազմի ձևավորումը՝

Հեղինակի լուսանկարը՝

Գ. Հովհաննիսյան

Ն. Գևորգյանի

Թ. Մաթևոսյան

Ա. Օհանջանյանի

Գ. Ղազարյանի

Չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 24.5 մամուլ:

Տպագրված է

**ԷՂԻԹ  
ՊՐԻՆՏ**  
հրատարակչություն



Թումանյան 12, 3,  
(37410) 52 08 48  
56 08 41  
info@editprint.am

